910.4(38)
R-35

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

# ԿՐՏԱՆԵՐՈՅՆ ԸՆԴՔԲԱՆԵԱՅ

## ՅԵԼԼԵԴԵ

ՀԱՏՈՐ Ե·

# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
# ԿՐՏՍԵՐՈՅՆ ՄԵԾԱՐԱՍԵԱՅ
## ՅԵԼԼԱՊԱ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱԹՈՒԹԵՄԲ

Ի Յ. Յ. ՊԱՐԹԵԼՅՄԵԱՅ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. ԵՂՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ
1846. ՌՄՊԼ

Հայկական Սովետային Հանրապետության Ազգային Գրադարան
Հայ Հանրային Գրադարան
Հ.Ս.Հ.Հ. Ազգային Գրադարան
7/XI. 1922

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

# ԿՐՏՍԵՐՈՅՆ ԸՆԴՐԲԱՍԵՐԱՅ

## ՅԵՂՅԷԴԵ

## ԳԼՈՒԽ ԿԱ·

Դիոնեսեայ արքային սիրակուսացւոյ 'ի Կորնթոս
երթ · և արուեստիւք Տիմոլէոնի ։

Զ.ԱՄՍ մեռասան արտաքոյ դեգերեալ, 'ի դառնալն մերում՝ ասա Յ.Թէնս՝ նոր հին թուէր մեզ քաղաքն ։ Բազումք 'ի ծանօթից և 'ի բարեկամաց մերոց վախճանեալ էին · կորուսեալ էին ազգատոհմք, և այլք ընդ նոցա փոխանակեալ ։ Որպէս օտարս ընդունէին զմեզ 'ի տունս, ուր յառաջագոյն յաճախէաքն · ամենայն ուրեք նոյն էր թատր, այլ թատրերգուք այլք ։

Հնչէր բեմն հանապազ 'ի բոլոր ձարտարախօսաց զՊիլիպպեայ · կէսք զահի հարեալ էին 'ի ձառից նոցա, այլք արհամարհէին զայս [1] ։

1 Դեմոսթ · յլ· վերպ հրեշտ · էջ 332 ։

Դեմոսթենէս առաքեցաւ 'ի Պակեդոնիա՝ լուծմն առնել ուխտին խաղաղութեան, ամբաստանեալ զԼաքինէս կաշառաբեկ 'ի Փիլիպպէայ։ Լաքինեայ զՀանդարտութիւն նախնի Ճարտարախօսացն յանձին բերելով՝ չյաճախէր 'ի հրապարակախօսէն զշարժուածս, գոչեաց Դեմոսթենէս. Ո՞ 'ի բեմբասացութեան, այլ 'ի պատգամաւորէն պարտ է ամփոփել զձեռս ընդ հանդերձիւք։ Հաճոյ թուեցաւ այս բան, այլ չեղեն ինչ արդասիք ամբաստանութեանն։

Իսկ ես անպարապ առ ժամանակ մի 'ի հարցուածոց՝ զորս մատուցանէին մեզ զաշխարհէն եգիպտացւոց և զՊարսից, ապա դարձեալ ձեռն արկի 'ի խոշ և 'ի խնդիր ըստ առաջնոց հետազօտութեանցն իմոց։ Ի միումաւուրց յանցանել ընդ հրապարակն՝ տեսի բազմութիւն համբաւատենչից, որ շրջէին երթևեկեին աղմկեալք, և ոչ կարէին զառաւելութիւն զարմացման իւրեանց յայտ առնել։ Ասատուցեալ 'ի մի ոք 'ի նոցանէ, ասեմ. Օ՞ինչ զրոյցք իցեն։ Լ՝ նա ասէ. Օ՞ինչ այլ. Դիոնեսիոս 'ի Կորնթոս։ Ասեմ. Դիոնեսիո՞ս, և ո՞ր այն։ Ասէ. Թագաւորն ամբակուսացւոց հզօրն և ահարկու։ Տիմոթեայ ընկեցեալ զնա յաթոռոյ, և բարձեալ 'ի նաւ մի պատերազմիկ, արդ ևս նաւն 'ի Կորնթոս է[2]։

[1] Դեմոսթ. յդ. վերպ հրբ. էջ 332։

[2] Պլուտ. 'ի Տիմոլ. հատ. 1. էջ 242։ Յուստին. գիրք ԻԱ. գլ. 5։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 464։

Հասեալ կայ անդ Թագաւորն * առանց Թիկնապահաց, առանց բարեկամաց և ազգականաց. զամենայն ինչ կորուսեալ, բաց 'ի յիշատակէ Թագաւորութեանն։

Լուս հաւատարմացոյց ինձ վաղ զհամբաւն Լուսիաղոս, զոր գտի 'ի տան Պողոդորայ։ Լուս էր Լուսիաղոս կոմնԹացի, ընդ որում բարեկամութիւն լեալ էր ինձ, և նմա երբեմն ընդ Պփոնեսեայ. և հանդերձեալ էր նա յետ ամաց ինչ դառնալ 'ի ԿոմնԹոս, և ես խորհուրդ կալայ գնալ ընդ նմա, և նկատել զմի 'ի նորանշան երևութից բախտին։

Հասեալք 'ի ԿոմնԹոս, տեսաք առ դրան պանդոկի միոջ կացեալ զայր մի գուեհիկ ' պատառատուն հանդերձիւ, որում պանդոկապանն տայր յողորմութիւն զմնացորդ գինւոյն յաւելեալ յապակեակն, իսկ նա առնոյր զայն, և ծիծաղելով լռեցուցանէր զկատականս անհեԹեԹս խառնագնացից ոմանց կանանց, և զուարճաբանութեամբ զբօսացուցանէր զխուժանն խռնեալ զիւրև [2]։

Լուսիաղոս պատճառանօք ինչ ինջոյց զիս 'ի կառայ, և յորդորեր չԹողուլ զայրն։ Օ՛հետ չգաք նմա 'ի տեղի մի, ուր կրԹեին կանայք երգեցիկք 'ի հանդէս պարու առաջիկայ տօնիցն. և տայր նա կրկնել նոցա զիւրաքանչիւր անկ,

* Ն. Ռ. 343 ամաք։ 2 Պլուտ. 'ի Ցիմոլ. հատ. 1.
1 Յուստին. գիրք ԻԱ. գլ 2։ էջ 242։

ուղղէր զՁայն նոցա, և պայքարէր ընդ նոսա յա-
րուեստաբար երա ժշտել զմնասունս ինչ երգոյն [1]։
ՀՈՐԱՌ ասպա առ իւղեփեաց ոմն, առ որում տե-
սաք նախ զիմաստասէրն Դիոգենէս և զԷրիս-
տոքսեն երաժիշտ *, որք աւուրքք ինչ յառաջ
հասեալ էին 'ի Կորնթոս։ Դիոգենեայ մեր-
ձեալ յայրն անծանօթ, ասէ. Ձէիր դու արժա-
նի բախտին զոր կրես։ Այլ նա ասէ. Կարեկցիս
ուրեմն ընդ վիշտս իմ, շնորհ ունիմ քեզ։ Դիո-
գենէս ասէ. Այս ընդ վիշտս քո կարեկից լինի-
ցիմ. խաբիս, դերի վատ. արժան էր քեզ կեալ
և մեռանել որպէս զՀայր քո յարհաւիրս բռնա-
ւորութեան. և դժպհի է ինձ տեսանել զքեզ
'ի քաղաքի, ուր դեռ ևս մարթի է քեզ առանց
զարհուրանաց 'ի բերկրանս ինչ վայելել [2]։
Իսկ ես ապշեալ, ասեմ ցուղեկիցն իմ. Այ-
բիաղէ, սա իցէ ապա արքայն Աիրակուսայ։ Այլ
նա ասէ. Այո ինքն է, բայց չանսայէ զնս. աչք
նորա նուաղեալ են 'ի բազում արբեցութենէ [3]։
Այլ լուիցուք զզրուցատրութիւն նոցա։ Այլ համ-
բեր Դիոնեսիոս բանիցն Դիոգենեայ ոչ ինչ
նուազ իմաստութեամբ քան հեզութեամբ։ Այլ
Արիստոքսենեայ հարցեալ զնա՝ թէ ընդէր դար-
ձուցեր զերեսս քո 'ի Պղատոնէ, ասէ. Ամե-

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հտ. 1. էջ 242։

* Սա այն իցէ արդեաք, որոյ պահի Ճառ Նորա զերաժշտու-թենէ, յեռեալ 'ի Ծաղկա-քաղ Մէնիբոմեայ։

2 Պլուտ. անդ, էջ 243։

3 Արիստոտ. և Թէոպոմպ. առ Աթէն. գիրք ժ. էջ 239։ Յուսաին. գիրք ԻԱ. գլ. 2։

Ցայն չարիք շուրջ պատեալ կան զբռնաւորաւ, այլ դժնդակագոյն 'ի նոցանէ այն է՝ և բարեկամց նորա ծածկել 'ի նմանէ զՀնազանդութիւն։ Լուայ նոցա, և 'ի բաց արարի զՊղատոն. և զինչ էլք իրացն եղէն. Թագաւոր 'ի Սիրակուսա երբեմն գոլով, արդ վարժապետեմ 'ի Կորինթոս [1]։ Որում և մեք իսկ բազում անգամ ակնատես եղաք, զի կացեալ 'ի կիցս Ճանապարհաց՝ մեկնէր մանկտուց զնախակրթական վարժս քերականութեան [2]։

Ի նոյն տեսիլ որ ածն զիս 'ի Կորինթոս՝ զիմեալ զօրհանապազ բազմութեան օտարաց, կէսք յերեսաց Թշուառութեան Թագաւորին 'ի գութ շարժէին [3], և բազումք այնոքիկ էին, որոց սիրտք պարարէին բերկրանաք ընդ տեսիլն՝ զոր ցանկալի էս դէպք իրաց ժամանակին գործէին։ Բանզի մինչ Փիլիպպոս դեռ էս ահա ընդ լծով զՅոյնս արկանէր, նոքա զքէն վրիժու արքային մակեդոնացւոց 'ի Թագաւորն Սիրակուսայ յագեցուցանէին։ Իսպառական օրինակն բռնաւորին յեղակարծում յամենալից կորանն կործանելոյ, եղև ընդ հուպ միակ սփոփումն գոռոզ հասարակապետականացն. զոր և յետ ամաց ինչ սպարտացիք առ սպառնալիսն Փիլիպպեայ զբերեցին հա-

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հտ. 1. էջ 243։
2 Կիկերո. տուսկուլ. գիրք Գ. գլ. 12. հտ. 2. էջ 310։ Յուստին. գիրք ԻԱ. գլ. 5։ Ղուկիան. յոլ. երազ. գլ. 23. հտ. 2. էջ 737։ Վաղ. Մաքս. գիրք Զ. գլ. 9։
3 Պլուտ. անդ, էջ 242։

կիրճ և ազգու պատասխանի. Դիոնեսիոս 'ի Կորնեոս[1]։

Դէպ եղև մեզ բազում անգամ խօսակից լինել ընդ Դիոնեսեայ, և համարձակ խոստովանեալ նա զյանցանսն, թերևս զի և համարձակ գործեալ էր զնոսին։ Յհարց զնա Յովրիաղոս զմեծարանացն զոր ընդունէր 'ի Ավրակուսս, և նա ասէ. Ամբոխ իմաստակաց և գրքերթողաց յարքունիս իմում ունէի, իբր ոչ եթէ համարեալ ինչ զնոսա, այլ զի յաճախէր ինձ նոքօք համբաւ[2]։ Դանիկք իմ 'ի նուաղել աչաց իմոց, ինքեանք իբր թէ բնաւ իսկ կոյրք եղեն։ Օ՛ի ոչ ևս տեսանէին ինչ առաջի իմ, և 'ի հանդիպել միմեանց՝ ընդհարկանէին. և յընթրիս հարկ էր ինձ ուղղել զձեռս նոցա, զի այսր անդր զսեղանսն սխալակէին[3]։ Յովրիաղոս ասէ. Ոչ ոչ սրտմտէիր ընդ վատ շողումն։ Դիոնեսիոս ասէ. Սրտմտէի երբեմն, այլ քաղցր է ներել։

Յայսմ վայրի մի 'ի կորնթացւոց՝ որ զուարճալի ցանկայր երևել, և կասկած գողութեան էր զնանել, եկն եկաց առ սեան դրանն. և իբր թէ 'ի ցոյց ինչ՝ զի ոչ կրէր դաշոյն ընդ հանդերձիւն, թօթափէր ստէպ զհանդերձսն ըստ սովորութեան մատուցելոց առ բռնաւորս։ Ասում թա-

1 Դեմեար. փաղեր. յղ. պերճախօս. գլ. 7։

2 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 176։

3 Թէոպոմպ. առ Ալթէն. գիրք ժ. էջ 439։ Պլուտ. յղ. մարդահաճ. հտ. 2. էջ 53։

զաւորն ասէ. Լաղ ցոյց յԵլանեէն քում՝ աստի առաւել՝ի ձահ պատահէ՝։

Յետ սակաւ միոյ եմուտ այլ ոմն ժիտ և ձանձրացուցիչ. և Գիմնեսիոս դաշն ձայնիւ հառաչելով ասէ ցմեզ. Լրանի՞ որ՝ի մանկութենէ կրթին՝ի համբերութիւն՝։

Լաւ հանապազորդ կրեր այսպիսի անարգանս, ինքնին իսկ տալով այնոցիկ պատճառս. քանզի ցնցոտիս զգեցեալ, անցուցանէր զաւուրս իւր՝ի գինետունս և՝ի փողոցս ընդ գեհիկս՝ որ խրախճանակիցք էին նմա։ Լրեւէին զեռ ևս՝ի նմա բարք առ՝ի նուաստութիւնս հակամէտք՝ զոր՝ի բնութենէն ընկալեալ էր, և իմաստք ազնուականք՝ զոր յառաջին կենացն ստացեալ. զի խօսէր իբրև զիմաստուն, և գործէր իբրև զյիմար։ Ել կարէի խելամուտ լինել կենաց նորա, և մի ոմն՝ի սիրակուսացւոց անտի՝ որոյ քաջ հասու լեալ էր խորհրդոյն՝ ասէ ցիս. Ել միայն միտք նորա տկար և թեթև չկարէն՝ի չափուն կալ՝ի թշուառութեան և՝ի յաջողութեան, այլ և զի գիտէ՝ թէ բռնաւոր անկեալ իսկ յաթոռոյ արքանէ կասկածանս և արհաւիրս յազատ մարդիկ։ Լրդ եթէ փոխանակ յարհամարհանսն կալոյ՝ անենչան վարէր կեանս, կասկածէին զհանդարտութենէ նորա կորնթացիք ձեռնտուք ապստամբութեանն Սիկիլիոյ. վասն որոյ երկուցեալ թէ

1 Եղիան. զան. պատմ. Տիմոլ. հտ. 1. էջ 243։ դիւք Դ. գլ. 18։ Պլուտ. ի՝ 2 Սոտր. Ճառ. 110. էջ 582։

գուցէ երկիւղալի լեցի նոցա, արհամարհանօք նոցա պարսպէ զանձն յատելութենէ նոցին[1]։

Եւ արդարև յամենեցունց 'ի Պղնթոս արհամարհեր, մինչ էի ես անդ. և ապա զբռվանդակ իսկ Եղեսդայ յինքն ձգեաց զարհամարհանս։ Օ՛ի առ թշուառութեանն թէ առ խելայեղութեան, ոչ գիտեմ, եմուտ 'ի դաս քրմաց Կիբեղեայ, և շրջէր ընդ նոսա 'ի քաղաքս և յաւանս՝ տաւիղ 'ի ձեռին, երգելով և պարելով զպատկերաւ դիցուհւոյն, և ձեռն 'ի մոյր դանդաց կարկառելով[2]։

Մինչև յամենթալից տեսարանն էրևեալ, հրաման առեալ էր նորա մերկնել 'ի Պղնթոսէ և ուղևորել Եղեսդայ։ Թագաւորն մանկեղենացեալ ընկալաւ զնա փառօք. և յառաջնումն նուագդի խօսելոյ նոցա ընդ միմեանս՝ եհարց զնա, և ասէ. Պնդէր եղև քեզ կորուսանել զթագաւորութիւնդ, զոր հայր քո ընդ այնչափ բազում ժամանակս պահեաց։ Պիտեսիոս ասէ. Օ՛ի զիշխանութիւն նորա միայն ժառանգեցի, և ոչ ըզբաստ[3]։ Եւ 'ի կորնթացւոյ ուսումնէ յառաջագոյն զնոյն հարցեալ, ասէ. Ի զահակալել հօր իմոյ՝ սիրակուսացիք տաղտկացեալ էին 'ի ռամկապետութենէ, իսկ յընկենուլն զիս յաթոռոյ՝

1 Յուսաբն. գիրք ԻԱ. գլ. 5։ Պլուտ. 'ի Ցիմոլ. հա. 1. էջ 242։

2 Եղիան. զան. պատմ. գիրք Թ. գլ. 8։ Ատէն. գիրք ժԲ. գլ. 11. էջ 541։

3 Եղիան. անդ. գիրք ժԲ. գլ. 60։

տաղտկացեալ 'ի բռնաւորութենէ [1]։ Ի միում աւուրց 'ի սեղան արքային մակեդոնացւոց բանք լինէին զքերթութեանց երիցոյն Պիսնեսեայ, և ասէ ցնա Փիլիպպոս. Որպէս զտանէր հայր քո պարապ 'ի յօրինել զբազմութիւն այնչափ քերթուածոցն։ Եւ նա ասէ. Որպէս զու և ես զտանեմք պարապ 'ի զինեալսս [2]։

Երկիցս մղեալ յախտիցն զահավիժեցաւ 'ի թշուառութիւն, և յերկաքանչիւրումն իսկ նուազ զի կացցոյ բախտ նորա ընդդէմ նորին զմի յեւրեւելագոյն արանց ժամանակին. նախ զՊիսոն, և ապա զՏիմոլէոն։ Զերկրորդէս զայսմանէ ժամ է արդ ասել. և պատմեցից որ ինչ 'ի յետինսն դեգերելոյ խնդ Անգլադա լուայ զնմանէ։

Որպէս յառաջ ասացաք, Տիմոլէոն յետ ըստանութեան եղբօրն մեկնեցաւ առ ժամանակ մի 'ի Կորնթոսէ, հրաժարեալ 'ի սպառ 'ի յանձանձանաց իրաց աշխարհին։ Եւ եկաց նա զամն իբր քսան 'ի կամակար աքսորանսն [3]. իսկ իբրև սիրակուսացիք ոչ ևս հանդուրժեալ ընդ բռնաւորաց, կարգային յօգնութիւն զկորնթացիս յորոց բնիկքն են, խորհուրդ կալան կորնթացիք զօրաժողով լինել. և 'ի խնդրել զոք զօրավար, հարևանցի ինն լսելի եղև ձայն՝ զՏիմոլէոն կայցուցանել. և ամենեքին միաբարբառ զնա անուա-

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 243։
էջ 176։
2 Նոյն 'ի Տիմոլ. հտ. 1.
3 Նոյն անդ, էջ 238։

նեցին՝։ Մինաստանութիւնն երբեմն լեալ գնանեկ չէ եւ էր վնռեալ, և դատաւորք՝ ի նա ինքն զվնիոն ապատան արարին. ասեն. Տիմոկեան՝ ըստ ելից իրացն յոր երթաս՝ ի Սիկիլիա՝ գիտացուցուք, եղբայրասպանն լեալ իցէ քո թէ սպանող բռնաւորի[2]։

Ել ուստեք գոյր յոյս սիրակուսացւոց. քանզի Իկետաս առաջնորդ լեռնատացւոց, յորոց իբրեղբեալ էր նոցա զօրս՝ ի Թիկունս, խորհէր ծառայեցուցանել գնոսա. և կալեալ զՍիրակուսա, պաշարեալ պահէր զՎիսանեսիոս՝ ի միջնաբերդն։ Նաւատորմն կալբեդոնացւոց երթեւեկէր մերձ անդր, խափանել զկոնթացւոցն։ Նա՝ ի նեբքս՝ ի կղզոյն քաղաքք Յունաց՝ ի գժնդակ փոքոց խրատեալ, կասկածէին զամենեցունց որ յօգնութիւն նոցա փութային[3]։

Նու արար Տիմոկեան տասամբ պատերազմիկ նաւաք, և ջոկատիւ միով փոքու զօրաց[4]. և անխափան՝ ի կալբեդոնական նաւատորմն զգուշութենէ, եհաս Յոտալիա. և վաղ ընդ փոյթ չոգաւ՝ ի Տաւրոմենիոն քաղաք՝ ի Սիկիլիա։ Ընդ Տաւրոմենիոն և ընդ Սիրակուսա է Մղրանոն քաղաք, որոյ բնակիչքն երկպառակեալ՝ կէսք զՄկետաս և կէսք զՏիմոկեան կոչեցեալ էին յօգ-

[1] Պլուտ. ՝ի Տիմոկ. հտ. 1. էջ 237։

[2] Նոյն անդ, էջ 238։ Դիոդ. դեպք ժ.Զ. էջ 459։

[3] Պլուտ. անդ, էջ 241։ Դիոդ. անդ, էջ 461։

[4] Պլուտ. անդ, հտ. 1. էջ 239։ Դիոդ. անդ, էջ 462։

նութիւն։ Դիմէն անդր երկաքանչիւր 'ի միասին, Լիկետաս հինգ հազար զօրաք, և Տիմոթէոս հազար երկերիւրովք։ Արեսուն սասպարիչսա 'ի բացեայ յԱ՝զբանոսէ ազգ եղև Տիմոթէայ՝ թէ Լիկետաս հասեալ զօրաք պաշարէր զքաղաքն։ և անասպարեաց անկաւ 'ի վերայ նոցն այնու կարգաւ և սաստկութեամբ, մինչև թողուլ նոցա անդիմանարտ զքանակն և զաղին և գերի բազում։

Յանկարծակի յաղթութեամբն այսուիկ շըքջեցան խորհուրդք ամենեցուն, և կերպարանափոխ եղեն իրք։ Եւ այնպէս երագ յեղափոխութիւնս այս լեալ, զի յետ յիսուն աւուր հասանելոյ Տիմոթէոսի 'ի Ակիլլա՝ ազգք բնակեալք 'ի կղզւոջ անդ եկեալք զմիմեանսք առնէին 'ի նիզակակցութիւն նորա, և բանաւորք զզօրս իւրեանց 'ի նա յաւելուին։ Եւ Դիոնեսիոս ինքնին անձնատուր լեալ նմա՝ ետ 'ի ձեռս նորա զմիջնաբերդն Սիրակուսայ, հանդերձ գանձիւքն և զօրքք զոր անդր ժողովեալ էր։

Ոչ մնդրապատում կամիմ առնել զկրս գերապանծ արշաւանիս. այլ ասեմ՝ զի Տիմոթէոս 'ի մնդկութեան զիսոհականութիւն ալեաց եբեր 'ի պատերազմունս, և 'ի ծերութեան զեռանդն և զժրութիւն առոյգ հասակին[1]. այլ ասեմ դարձեալ՝ զի եցոյց նա յանձին զանենայն հանդար և զանենայն քաջութիւն մեծի զօրավարի. զի

[1] Պլուտ. 'ի Տիմոթ. հտ. Ի.Զ. էջ 263։
1. էջ 241 և 243։ Դիոդ. գիրք. 2 Պլուտ. անդ. էջ 237։

փոքու զնդաս զօրաց ազատեաց զԱիկիլնա 'ի բռնաւորաց՝ որ հարստահարէին զնա, և պահ-պանեաց յահաւորազոյն և զօրութենէ՝ որ կա-մէրն նուաձել զնա. զի վեց հազար արամբք զանակ եօթանասուն հազար զօրաց կարքեղո-նացւոց 'ի փախուստ դարձոյց՝. զի առաջար-կութիւնք խորհրդոց նորա այնու իմաստութիւն երկնեալ էին, որ իշխեաց զոգցես իմն բախտին, և զպատահարս հնազանդեցոյց։

Բայլ փառք Տիմուրեայ ոչ եթէ 'ի յաջորդու-թիւն երագ և անընդհատ յաղթութեանցս հաստատին, զորս նա բախտին համարէր արդա-սիս, և որովք յանձախէր զպայծառութիւն հայ-բենեացն[2], այլ 'ի յաղթութիւնս արժանաւորա-գոյնս շնորհակալութեան մարդկան։

Կեաբ 'ի բնակչաց Աիկիլնոյ բազմախողխող երկաթոյն լեալ էին ձարակ, այլք բազմութիւն յոյժ փախուցեալք 'ի հարստահարութենէ բռնաւորաց՝ ցրուեալ էին Այլաղա, 'ի կղզիս եգեան ծովուն և 'ի ծովեզերս Պոնտոս։ Պոնտա-ցիք 'ի նոյն եռանդն նախանձու զօրավարին իւ-րեանց վառեալ, յորդորեցին զնս 'ի ձեռն հրեշտա-կաց դառնալ 'ի հայրենիս, տուեալ նոցա նուա-և առաջնորդս և զօրս 'ի զգուշութիւն, և 'ի հասանել նոցա 'ի Աիկիլնա՝ երկիրս 'ի վիճակ։ Դարձեալ և քարոզք 'ի գիմաց նոցա յայտ ա-

1 Պլուտ. 'ի Տիմուր. հա. էջ 471։
1. էջ 248։ Դիոդ. գիրք ԺԴ. 2 Պլուտ. անդ, էջ 250։

բարին յաշխարհաժողով տօնս խաղս Լլլաղայ ազատ և ինքնիշխան զԱիրակուսա և զբոլանդակ իսկ զԱիկիլիա[1]։

Ի բարբառ ազատութեանն որ հնչեաց և ընդ Խտալիա առ հատարակ, վեց բիւրք մարդկան դարձան 'ի Աիրակուսա. կէսք առ 'ի ժառանգել զկարդ քաղաքացւոյ, այլք առ 'ի սփռել 'ի միջերկրայս կղզւոյն[2]։

Բաղում յեղափոխութիւնք արդ ևս լեալ էին կարգի պետութեանն[3], և օրէնք անկեալ 'ի զօրութենէ։ Օ օրէնս զայսոսիկ յաւուրս պեղպտնեասական մարտին արք խնամտանք 'ի մի վայր ժողովեալ բռնանդակեցին. և գլուխ ժողովոյն էր Գոմոկղ, որում կանգնեցաւ իսկ մեհեան՝ զոր երկրին Գոմոնեսիոս կոչանեաց։ Բդ խիստ օրէնդրին արգելեալ էր սպառնալեօք մահու, մի ումեք երկեալ զինուք 'ի հրապարակի։ Յետ սակաւ ժամանակի թշնամիք յարձակին շուրջ 'ի Աիրակուսա. և նորա սուսերք 'ի ձեռին ելեալ 'ի տանէ, և լուեալ զի աղմուկ խռովութեան յարուցեալ էր 'ի հրապարակի, դիմէ անդր։ Ա՛ի ոմն յամբոխէն աղաղակէ. Օ՛ի զոգծեա, զու սաղդիկ լուծանեա զօրէնս քո։ Նա նորա զսուրն 'ի կող իւր ձգեալ, ասէ. զոգջիր մանաւանդ, զի

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հա. էջ 247։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 472։

2 Պլուտ. անդ։ Դիոդ. անդ, էջ 473. գիրք ԺԹ. էջ 652։

3 Աբիստոտ. յՀ. հա. գիրք Ե. գլ. 4. հա. 2. էջ 390։

զօրէնս իմ հաստատեմ՝[1]։

Զրէնք նորա հաստատէին զկարգ ռամկապետութեան. այլ առ 'ի բառնալոյ զյոռութիւնս նորա, խստիւ դատապարտէին զամենայն ազգի ազգի անիրաւութիւնս. և առ 'ի չթողուլ ինչ 'ի կամս դատաւորաց, սահմանէին որքան է հնար՝ զվնիռ ամենայն ազգի ազգի վիճից և զպատիժ ամենայն յանցանաց։ Սակայն ոչ միայն վաղեմի բարբառ նոցա, այլ և հակիրճ ճշգութիւն սահմանք բացայայտութեան։ Ցիսոլէոն այց արար նոցա խորհրդակցութեամբ Կեփաղեայ և Դիոնեսեայ կորնթացւոց, զորս առ իւր հրաւիրեալ էր[2]։ Զրէնք որ առ իւրաքանչիւր ոք պատկանին, վերստին հաստատեցան մեկնութեամբք՝ որ սահմանեն զնմանստս նոցա. իսկ որք 'ի կարգ պետութեանն պատկանին՝ նորոգեցան, սանձահարելով զհամարձակութիւն ժողովրդեան՝ առանց բառնալոյ զազատութիւն նոցա։ Լաւ առ ապահովելոյ նոցա 'ի սպառ զվայելս ազատութեան, յորդորեաց զնոսա Ցիսոլէոն 'ի կործանել զամենայն դղեակս՝ որ էին սպառէնք բռնաւորաց[3]։

Կարքեդոնականն մեծազօր պետութիւն հարկեցաւ խնդրել խաղաղութիւն 'ի սիրակուսացւոց, հարստահարողք Սիկիլիոյ մի ըստ միոջէ

[1] Դիոդ. գիրք ԺԴ. էջ 262։ գիրք ԺԶ. էջ 473։
[2] Պլուտ. 'ի Ցիսոլ. հա. 1. էջ 248։ Դիոդ. անդ. էջ 263։
[3] Դեպոս. 'ի Ցիսոլ. գլ. 3։

կործանեցան, քաղաքք յառաջին պայծառու-
թիւն վերստին դարձան, դաշտք 'ի հունձս ծաղ-
կեցան, բարգաւաճեաց վաճառաշահ, և ամե-
նայն ուրեք պատկեր միաբանութեան և բարե-
բաստութեան. ահաւասիկ բարեբարութիւնք՝
զոր Տիմոթէոս 'ի գեղեցիկ զաւառն սիւռեաց՝,
ահաւասիկ և արդիւնքն՝ զոր ինքն ժողովեաց։

Կամակոր 'ի սոսկական յառաջին կեանս իւր
դարձեալ, յաւելոյր օր ըստ օրէ 'ի մեծարանս։
Վերակուսացիք բռնադատեցին զնա, և ետուն
նմա ապարանս 'ի քաղաքին, և շուրջ զքաղաքաւն
ամնարանոց զուարճալի, ուր անցուցանէր զաւուրս
իւր խաղաղութեամբ ընդ կնոջ իւրում և ընդ
որդիս, անդր զնոսա 'ի Կոստանդոսէ ածեալ։ Ընդ
յաճախեին նմա հարկք մեծարանաց և շնորհա-
կալութեան յազգաց, որք երկրորդ հիմնադիր
իւրեանց զնա համարէին։ Զամենայն դաշինս
և զամենայն կարգս որ 'ի Միկիլիս հաստատեին՝
'ի մեծոց և 'ի հեռուստ անդր առ նա ածէին,
հարցանել զիմաստութիւն նորա. և ոչ ինչ ա-
ռանց հաւանութեան նորա գործէր[3]։

Այցին 'ի ծերութեան աչք նորա[1]. և սիրա-
կուսացիք առաւել քան զնա տրտմեալք ընդ
վիշտս նորա, յաւելին 'ի խնամն նորա։ Զոտարս՝
որ գային առ նոսա՝ ածէին առ նա, և ասէին.
Ահաւասիկ բարեբարին մեր և հայր, որ քան

1 Դիոգ. գիրք Ա.Զ. էջ 473։ 1. էջ 253։
2 Պլուտարք. 'ի Տիմոթ. հա. 3 Նեպոս, 'ի Տիմոթ. դլ. 4։

զպայծառ յաղթանակն որ մեայր նոսա 'ի Լու-
բընթաս, և քան զփառս զոր առաջի կայր նոսա
սատանայ Լուցադա, ընտրեաց կեալ ընդ մանն-
կունս իւր[1]։ Իսկ Տիմոթէոս 'ի լուր զսովորութեանցն
որ յաձախեին նոսա՝ ոչ ամաչէր զանձն, այլ
ասէր եւթ. Զոհանամ զդիս, զոր 'ի փրկել
զՄեկիկիա՝ հաճեցան առնուլ զիս պաշտօնեայ
բարեբարութեան իւրեանց[2]։

Սիրակուսացւոյն ընդ նոսա սէր յայտնագոյն
եւ երևէր, 'ի յուզել կարեւոր ինչ խնդրոց 'ի
հանախումբ ժողովս։ Հրեշտակք հրաւիրեին
զնա անդր. և յերևել նորա 'ի քաղաքին հե-
ծեալ 'ի կառս, ամենայն ժողովուրդն ողջունէր զնա
'ի ձայն աղաղակի։ և նա փոխադարձէր զողջոյն։
Լա 'ի դադարել աղմկին ցնծութեան և սիրոյ,
տեղեկանայր նա իրաց խորհրդոյն. և ընդ կար-
ծիս նորա ամենեքեան միաբանեին։ Լա 'ի դառ-
նալն իւրում անցանէր դարձեալ ընդ քաղաքա-
մէջս, և նոյն աղաղակք ցնծութեան հնչէին ըն-
հետ նորա մինչև անտես լինէր յաչաց[3]։

Շնորհակալութեան սիրակուսացւոց և ոչ
անդ զկայ առեալ, սահմանեցին զոր ծննդեան
նորա 'ի տօնս տարեկանաց, և 'ի կոչնութացս
անտի խնդրել յայսմհետէ զօրավար յամենայն
պատերազմունս ընդդէմ օտար ազգաց[4]։ Լա 'ի

1 Պլուտ. 'ի Ցիմոթ. հա. 1. էջ 254։
2 Նեպոս. 'ի Տիմոթ. գլ. 4։
3 Պլուտ. անդ։
4 Նոյն անդ։ Նեպոս, անդ, գլ. 5։

մահուն նորա սուգ հասարակաց մեծարանօք և եթէ յիշատակի նորա սիրելի։ Յամ ետուն բնակչաց մերձաւոր քաղաքաց հասանելոյ 'ի Աբրակուսա 'ի հանդէս յուղարկաւորութեանն. և պատանիք ընտրեալք վիճակաւ 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերին զդի նորա տարածեալ 'ի մեծաշուք մահճի։ Այլ զհետ գնային անթիւ բազմութիւն արանց և կանանց ծաղկապակք և պայծառազգեացք, հնչեցուցանելով զոգս յանուն և 'ի ներբող Տիմոթեայ. այլ ողբք նոցա և արտասուք հաւատարիմ ևս վկայք էին գորովոյ և սգոյ նոցա։

Այ իբրև եդաւ զիսին նորա 'ի փայտակոյտ անպէտ, քարոզ մեծաձայն զմիտս զայս կարդայ. Տիմոթեայ, փոխանակ զի եղջ զբնաւորս, եբեկ զխուժադուժս, կանգնեցաց 'ի կործանմանէ քաղաքս բազումս և մեծամեծս, և ետ օրէնս սիկիղեացւոց, սահմանեն սիրակուսացիք երկեբիւր մնաս 'ի յուղարկաւորութիւն, և պատուել ամի ամի զյիշատակ նորա երաժշտական, երիվարական և ընթշական մրցութեամբք'։

Այլք 'ի զօրավարաց պայծառազգոյն ևս յաղթութեամբք եղեն երևելիք, այլ ոչ ոք հանդոյն սմին մեծամեծս գործեաց։ Զեռն էարկ 'ի պատերազմ առ 'ի յարդարել զբարեբաստութիւն Սիկիղեայ. և յեղ գործոյն ոչ այլ խմիք ցանկացաւ, բայց սիրելի գոլոյ։

1 Պլուտ. 'ի Տիմոթ. հա. 1. էջ 256։



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
С.С.Р.Հ.
7/XI 1922
Ս. ՍՅՈՒՆԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Մեծարոյ և սիրելի արար զիշխանութիւն, մինչ բերելն զայն յանձին. իսկ իբրև հրաժարեաց յայնմանէ, մեծարէր և սիրէր զայն առաւել քան զայլս 'ի քաղաքացոց։ Նորտարախօսք երկու իշխեցին երբեմն ամբաստան լինել զնմանէ 'ի մէջ ատենի ժողովոյ, իբր թէ անիրաւեալ էր նորա յիշխանութիւնն զոր կալաւ. և ցածոյց նա զամբոխն յարուցեալ 'ի վերայ իւր, ասելով. Ա՛ռ առ այլ ինչ խրախուսեցի յայնչափ աշխատութիւնս և 'ի վտանգս, բայց զի մնարթ իցէ յետին քաղաքացւոյն վրէժխնդիր լինել օրինաց, և յայտնել համարձակ զոր խորհին։

Մինաղոր կալաւ նա իշխանութիւն 'ի վերայ արտից, զի էր հեզ և ցածուն, անկեղծ և անտենչիկ իւրոյ օգտին, և մանաւանդ արդարութեամբն ծայրացեալ։ Այսքան առաքինութիւնք զէնրնկէց առնէին զընկճեալս 'ի պայծառութենէ արութենանց նորա և 'ի գերակայ հանձարոյն։ Այս յայտնի արար Տիմոլէոն, զի որ յետ սպասս մեծամեծս մատուցանելոյ ազգի՝ թողցէ զնա յիւր կամս, պաշտեսցի 'ի նմանէ։

։ Պլուտ. 'ի Տիմոլ. հտ. 1. էջ 253։ Նեպոս 'ի Տիմոլ. գլ. 5։

# ԳԼ. ԱԼԻՍ ԿԼ.

Ի նոյն մատենադարանն Եւկղիդեայ բնագիրն և բնագրաւորմամբ հմտութեանց Հառաջ, և վասն խմանալեաց։

Ի հասան ելն իմում՝ ի Կորնթոս՝ չոգայ դարձեալ՝ ի տուն Եւկղիդեայ, զի չև ևս անցեալ էր իմ ընդ մտն ինչ մատենադարանի նորա. և գտի անդ ընդ նմա զԱ՚ետոն և զՆ՚ինաքսարքոս։ Ա՚ետոն էր յԱ՚ղրագանդ քաղաքէ Ալեկսանդրիոյ, և յաղգէ գերահռչակն Հ՚մնեդոկղի. իսկ Ն՚ինաքսարքոս յԱ՚ղբերայ քաղաքէ որ՝ ի Թրակիա, ՝ի վարժարանէն Պ՚ետմոկրիտեայ։ Հ՚րկաքանչիւր անդ մատեան՝ ի ձեռին թուէին ընկղմեալ՝ ի տեսութիւնս մտաց՝ ի խորս։

Հ՚ս եցոյց ինձ Հ՚ւկղիդէս զիրս ինչ զկենդանեաց և զանկոց և զհանածոյից, և ասէ ցիս. Ո՚ն ինձ զայսցանէ յոլով մատեանք. զի ախորժակք իսկապէս բնապատում և բնաքնին գիտութեաց, ոչ բաղում ամբ են զի մտին առ մեզ։ Իբր ոչ եթէ չիցեն լեալ՝ ի սկզբանէ հետէ արք բազումք հանճարեղք պարապեալք՝ ի խոյզ և՝ ի խնդիր բնութեան. զի ցուցի իսկ քեզ երբեմն զգիրս նոցա, և յիշիցես ապաքէն զՀառս քրմին Պ՚ետմետրեայ՝ յորում զկերպարանս գիտութեան նոցա համառօտիւ ետ *։ Ա՚ւր՝ ի միտ առեր, զի

* Գացեն զայն խնդրողք՝ ի Ա. գլուխ գրոցս։

նոքա զպատՀաուս իրաց Հետազօտէին քան զաբ-
դասիս, զնիւթ էիցս քան թէ զտեսակ՝։

Սակրատ՝ի կենցաղոգտութիւն զվարժս խնամ-
տասիրութեան ուղղեաց, և աշակերտք նորա
ըստ օրինակի վարդապետին իւրեանց՝ զիշերա-
ջան տքնութեամբ պարապեցին յուսումն բնու-
թեան մարդոյ՝։ Լոկ այլոց էիցս ուսումն խափա-
նեալ կայր ընդ ամն ոչ ինչ ընդհատ՝ի հարիւ-
րոց. և վերստին արդ յաւուրս մեր նորոգեալ
զարգանայ առաւելագոյն զիտութեամբք և խնամ-
տութեամբ։ Պարաքէն յուզին և այժմ խնդիրք
Հանրականք՝ յորս պատակտեցան նախնի խնամ-
տասէրք, այլ արդիք ջանան յարգասեացն՝ի
պատՀաուս և՝ի ծանօթից յանծանօթս՝ի վեր
ընթանալ՝։ Զմին իրի և առաւելագոյն մտա-
գիւրութեամբ՝ի քնին իւրաքանչիւրոց յէիցս
պարապեն, սկսեալ Հաւաքել զարդիւնս իրաց և
բաղդատել զնոսա ընդ միմեանս։

Այսալ ինն մեծ խափանէր երբեմն զզարգա-
ցումն գիտութեանն. զի անփոյթ արարին Հինք
բացատրել զէութիւն մարմնոց իւրաքանչիւր՝,
և սահմանել զնշանակութիւն բառիցն որովք

[1] Աբիստոտ. յՊ. բն. ը-
սելեաց, գիրք Բ. գլ. 2. Հտ.
1. էջ 329։ Նոյն, յՊ. մասանց
Հոգւոյ, գիրք Ա. գլ. 1.
1. էջ 967։

[2] Նոյն յՊ. մասանց Հոգ.
Հտ. 1. էջ 971։

[3] Նոյն անդ, էջ 967։ Նոյն
յՊ. բն. լսելեաց, գիրք Ա.
գլ. 1. էջ 315։

[4] Նոյն, յՊ. բն. լսելեաց,
գիրք Բ. գլ. 2. էջ 329։

վարէին։ Յաւ պակասութիւն փութոյ նոցա յա-
ճախեաց տակաւ զճանճրութիւն, մինչև բնաղջն-
նութեան անտես լինել 'ի սպառ 'ի ժամանակի՝
յորում մնակացութիւն սահմանացն սկսանէր. որ
հանդիպի յաւուրս Յոկրատայ[1]։

Յայն բան Նաքսարքոս և Պետոն մնտեան
առ մեզ. առաջինն ասէ. Մի թէ ոչ Դեմոկրի-
տոս սահմանս ճշգրիտս ետ։ Յաւ երկրորդն յա-
ւել. Մի թէ ոչ Յանեղոկղ պարապեաց 'ի բա-
ցատրել զէութիւն մարմնոց։ Յաւկղնդէս ասէ.
Պարապեաց, այո, առաւել քան զայլս յիմաս-
տասիրաց. այլ ոչ որքան արժանն էր[2]։ Յաւ ջերմն
անդ վիճաբանութիւն եղև, Յաւկղնդեայ պնդա-
գոյնս ջատագովելով զվարդապետութիւն բարե-
կամին իւրոյ Քրիստոտելի, և Նաքսարքեայ 'և
Պետոնի զհամաշխարհայնոցն իւրեանց։ Մբաս-
տանէին զՔրիստոտել, զի այլայլեր 'ի գիրս իւր
զվարդապետութիւնս նախնեաց՝ առ 'ի յաղթո-
ղագոյնս եղծանել զնոսա[3]։ Պետոնի և ոչ անդ
զկայ առեալ, պնդէր՝ զի որ ինչ զախտարակաց
և յաղագս քաղաքականին և բարոյականին աւան-
դեցին Քրիստոտել, Պղատոն և Յոկրատ ինքնին
գլխովին, զրեթէ զամենայն 'ի կիր առին 'ի մա-
տենից պիւթագորականացն իտալացւոց և սիկի-

[1] Արիստոտ. յղ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 1. էջ 971։ Նոյն բնաբանց. գիրք Ա. գլ. 6. հտ. 2. էջ 848։

[2] Նոյն յղ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 1. հտ. 1. էջ 970։

[3] Պորփիւր վարք Պիւթագոր. յօդ. 53. էջ 49։ Պրուքք. պատմ. խմստասս. գիրք Բ. գլ. 1. էջ 464։

լեսցուց։ Օ՛ի՛ բարեբախտ զաւառսն Յայնոսիկ, ասէ, ծնաւ ստոյգն իմաստասիրութիւն. և Պլիթագորայ բարեբարութեանն է պարգև՝։

Արքինեալ անդրէն Լուկղիդեայ ասէ. Ինձ յոյժ մեծարոյ է Պլիթագոր. այլ զի նա ինքն և այլք յիմաստասիրաց գրաւեցին իւրեանց լուելեայն զմեծութիւնս եգիպտացւոց և զարևելեայց և զընտաւ ամենայն ազգաց՝ զորս մեք խուժադուժս կոչեմք[2], չիցէ՞ և մեզ օրէն փոխել զնոսն Յունական։ Երեսցուք ապա միմեանց զիւրաքանչիւր գողօնս. աղէ տուք և բարեկամին իմում զիրաւունսն՝ որ անկ են նմա։ Ուեալ է իմ՝ ասելոյ նորա յաՀախ, զի պարտ է ուղղութիւն անաչառ դատաւորի քննել զկարծիս[3]. և եթէ իւր յօրինուեցաստի խոտորեալ իցէ, դատապարտելի է։ Ել ամենայն ուրեք անուանէ նա զմատենագիրս՝ յորոց ինչ՝ ի կիր առնու, զի զամենեցուն միանգամայն առնէ զեկուցումն՝. իսկ յեղծանէն զբանս նոցա՝ անուանէ զնոսա յաՀախ, զի հրաչակաւ անուան նոցա մարթէր հաւատարիմ լինել մարդուութեանցն զորս հեղեալ։

Արիստոտել յինքն գրաւեաց զաւանդս գիտութեանց՝ գանձեալս՝ ի ձերոց և՝ ի մերոցս ջանից. և յառելեալ զնոսա ջանիւքն իւրովք,

1 Պորփիւր վարք Պլիթագորի. յօդ. 53. էջ 49։ Ընտնիմ. առ. փոստայ, էջ 1316։

2 Տատիան. Ճառ առ Յոյնս, էջ 2։ Կղեմ. աղեքս. յաՀախ. խաչ. գիրք Ա. էջ 355։

3 Արիստոտ. յղ. երկնից. գիրք Ա գլ. 10. հա. 1. էջ 446։ Հ՝նցն. յղ. յիշատ. գիրք ժ. գլ. 10. հա. 2. էջ 144։

և աւանդելով զնոսա յեռնոց՝ կանգնեսցէ արձան գերապանծ, ոչ 'ի մնափառութիւն միոյ ուրուք 'ի վարժարանաց՝ այլ 'ի փառս ամենեցուն առ հասարակ։

Սկիզբն բարեկամութեան մերոյ եղև յԱյգեմիա, և ամբ հարստեցին զզօդն. և յորմէ հետէ մեկնեցաւ նա յԱթենայ, ոչ դադարեմք 'ի գրելոյ առ միմեանս։ Բազդ դուք, որք 'ի հրատարակելոյ դուք նաբեայ մատենիցն և եթ առնուք դատել զմատենագրէն, 'ի միտ առեալ զայնատարր առաքարկութիւնս մտաց նորա, և ապա թէ իշխէք՝ ամբաստան լերուք զնմանէ մոլորութիւնս և սխալանս։

Ինութիւնն, համր առ բազմապոյնս 'ի մարդկանէ, վաղ սկիզբն արար խօսելոյ ընդ նմա՝ ընտրեալ զնա իւր մտերիմ և թարգման։ Զողում ասել, զի բարեբաստագոյն աջողութեանց հանձարոյ 'ի ծնէ վիճակեալ՝ արագ արագ յասպարիզի գիտութեանց և արուեստից յառաջադիմեաց, և զի անդստին 'ի մանկութենէ ուղղածուծ առնէր նա զմատեանս իմաստասիրաց, սթափէր 'ի գիրս քերթողաց, և յինքն ժողովեալ ամբարէր զգիտութիւնս զամենայն կողմանց երկրի և զժամանակաց'. զի գովութիւնքս այսոքիկ չիցեն աւելի քան զայլոց առագաց արանց գովութիւնս։ Այլ զսեփականն նմին ասացից, զախորժական և զհանձար հետազօտութեան,

1 Ամեն. վարք Արիստոս։

զաւգմահրաշ ժրութիւնն լծորդեալ ընդ յա-
մնոր երկայնմտութեան 'ի խուզարկութիւնս,
զխորագնին տեսութիւնն և զնորասքանչ արա-
գամտութիւն՝ որ 'ի քթթել ակամ յելս իրացն
հասանել, ազգմամբ իմն քան թէ խոկմամբ բա-
զում ուրեք մտաց նորա ներգործելով. և դար-
ձեալ զխելամուտ լինել նորա, զի որ ինչ բնու-
թիւն և արուեստ յանդիմանն առնեն աչաց մե-
ծոց՝ կազմեն կարգ իմն իրաց անսահման, որ զմի-
մեանց շղթայօրէն ունին, յոլովք 'ի նոցունց հա-
մանմանք՝ որ դժուարաւ ընտրին 'ի միմեանց,
այլք այլանմանք՝ որ հարկաւ որոշին։ Ամենն իրի
խորհեցաւ ապահովել զյառաջխաղացութիւն
իւր տարակուսանաց[1], և լուսաւորել զայն յաճա-
խաւոր սահմանաց և բաժանմանցն և ստորաբա-
ժանմանցն, և մի յարձակել 'ի նեղբս 'ի կայեան
ճշմարտութեան՝ մինչև քաջ զենեալ զշրջապատ
ամրոցն։

Զդ նա զայս ունի կարգ 'ի գործ առաջար-
կութեանն, յոր ոչ այլ ումեք բաց 'ի նմանէ իշ-
խելի էր ձեռնարկել. զընապատում ճառիցն նո-
րա ասեմ, զհանրականաց և զմասնականաց։
Վանզի նախ զմեծամեծացն առնու ճառել զան-
գուածոց, և զսկզբանէ և զյաւիտենականու-
թենէ աշխարհի, զպատճառաց, զմասանց և զե-
ութենէ գոյիցս[2], զընդունէ և զառ միմեանս ազգ-

[1] Արիստոտ. բնազանց. գիրք Ա և Բ. հա. 1. էջ 315։ գիրք Գ. գլ. 1. հա. 2. էջ 858։
[2] Նոյն, բնազանց. հա. 2. էջ 838։ Նոյն յշ. բն. լսելեաց,

մանեկ տարերց, և զբաղկացութիւնեկ և զլուծ-
մանեկ մարմնոյ[1]։ Նոցա 'ի ներքս ածեալ յուզես-
ցին խնդիրք և յաղագս անսահմանին և շարժ-
մանն և դատարկութեան և տեղւոյ և ժամանա-
կի[2]։

Յուցցէ նա, է ինչ՝ զոր բովանդակ, և Է զոր
ըստ մասին, որ ինչ ենն և որ ներգործին յերկինս
և 'ի ծոց և յերեսս երկրի. յերկինս զարփային
երևութիւնս[3], զտարակայութիւն և զ ըմբակայ-
ութիւն մոլորակաց, զզինչ ինչն աստեղաց և զպա-
ղունակայն յորս նոքա բեւեռեալ կան. 'ի ծոց
երկրի զհանածոյս, զհրահալս[4], զստանութիս
ահագինս՝ որ դղորդեն զերկրագունդս[5]. և յե-
ղեսս երկրի զծովս, զգետս[6], զբոյսս[7], և զկեն-
դանիս[8]։

Լուսնի անբաւ պիտոյք են և պարտք մար-
դոյ, ըստ ամենայն մասանցն նկատեսցի նա անդ։
Նոդամանկնութիւն մարդկեղէն մարմնոյ[9], էու-
թիւն և զօրութիւնք հոգւոյ նորա[10], պատճառք

1 Արիստոտ. յզ. ծննդ. և տպական. հտ. 1. էջ 493։ Դիոգ. լայերտ. գիրք Ե. յօդ. 25։

2 Արիստոտ. յզ. բն. լը-սելեաց, գիրք Գ. և այլուր։

3 Նոյն, Նշանք օդ. հտ. 1. էջ 528։

4 Նոյն. յզ. երկնից, գիրք Բ. հտ. 1. էջ 452։ Նոյն աստեղաբաշխ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ե. յօդ. 26։

5 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Գ. գլ. 6. հտ. 1. էջ 583։

6 Նոյն անդ, գիրք Բ. գլ. 8. էջ 566։

7 Նոյն անդ, գլ. 2. էջ 551։

8 Դիոգ. լայերտ. գիրք Ե. յօդ. 25։

9 Արիստոտ. կենդանեաց։ Դիոգ. լայերտ. անդ։

10 Արիստոտ. յզ. հոգ. հտ. 1. էջ 616։ Նոյն, յզ. յիշող. հտ. 1. էջ 678։

և՝ գործարանք զգայութեանց[1], կանոնք ուղղչք ներգործութեանց մտաց կարի իսկ նրբից[2], և գաղտնածածուկ շարժմանց սրտի օրէնք, կարգք պետութեանց, գիտութիւնք և արուեստք, այս ամենայն որ ինչ ցանկալի 'ի գիտութիւն բովանդակեսցի անդ. և պատմիչն 'ի հմտութիւնս անցելոց դարուց յաւելցէ զնուրն, և ըստ օրինակի յոլովից այլոց իմաստասիրաց՝ զբնաբանութիւն բարոյականին յարմարեալ 'ի խրատ, գիտնականին զմեզ յարդարեսցէ առ 'ի գործել բարեբաստագոյնս։

Հաւասիկ առաջարկութիւն խորհրդոցն Աքիստոտելի, որքան եղև ինձ հնար հասու լինել այնմ 'ի խօսից և 'ի թղթոց նորա. այլ չգիտեմ եթէ կարիցէ՞ ըստ առաջարկութեանն զոր ցուցի, կատարել զգիրսն։ Սեմ. Այս ընդէր ոչ։ Այս ուղղեցս ասէ. Օրի է ինչ, որ փորձոյ իրացն կարօտի տեղեկութեան։ Զանց ելանելոյ 'ի սենեկէն, ուր ժողովեաց մատեանս յոլովս և ցանկալիս[3], մնալ թէ նման Ճառել զբաղում իրաց. այլ առ 'ի գրել զպատմութիւն և զբարս ազգի ազգի կենդանեաց՝ որ սփռեալ են ընդ ամենայն երեսս երկրի, քանի՞ երկար և տաժանաւոր հետազօտութեանց չիցեն պէտք։ Այլ խոչք խրախուսեն

[1] Արիստոտ. յդ. զգայարան. հտ. 1. էջ 662։

[2] Դիոգ. Լայերտ. գիրք Ե. յդ. 23։

[3] Սարաք. գիրք ԺԳ. էջ 608։ Աւլ. Գելլ. գիրք Գ. գլ. 17։

զարիութիւն նորա · բաց 'ի բազմապատկիկ նիւ-
թոց բանից, որ առձեռն պատրաստ կան նմա,
յուսայ և ոչ վայրապար 'ի ձեռնտուութիւն Փի-
լիպպէայ՝ առ որում զարժանին եգիտ շնորհս[1],
և Աղեքսանդրի՝ զոր հանդերձեալ դաստիարա-
կել։ Զի՞նչ ՀՀմարիտ իցէ զոր պատմեն՝ թէ ե-
ռանդն մեծ յախորժակս գիտութեանց բերէ
արքայորդին[2], յուսալի է զի 'ի գահակալելն ի-
րում զիւրեսցէ վարժապետին զյաջողութիւն ի-
րացն[3]։

Զ՚ին ինչ Զ՚ուկղնդեայ վախճանեալ զբանն,
խօսել կալաւ Զ՚նաքսարքոս և ասէ · Զ՚արթէր
ինձ զնոյն առաջարկութիւն, զոր դու Զ՚քիստո-
տելի սեփականես, ընծայել Զ՚Դեմոկրիտեայ։
Զ՚հաւասիկ են աստ անթիւ մատեանք զրեալք
'ի նմանէ յաղագս բնութեան և ազգի ազգի մա-
սանց տիեզերացս, յաղագս կենդանեաց և տընկոց,
յաղագս հոգւոյս մերոյ և զգայութեանց և պարտուց
և առաքինութեանց, յաղագս բըժշկութեան,
անդամաղնութեան, մշակութեան, տրամաբանութեան,
երկրաչափութեան, աստեղաբաշխութեան,
աշխարհագրութեան, և յաղագս երաժշտութեան և բանաստեղծութեան[4]։ Զ՚ռեմ զհրաշազան տիպս կերպա-

1 Աբ. Գեղ. գիրք Թ. գլ. 3։ Ամմոն. վարք Արիստոտ։ Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 19։

2 Պլուտ. յզ. զորութեան Աղեքս. հտ. 2. էջ 327, 328։

3 Պլին. գիրք Ը. գլ. 16. հտ. 1. էջ 443։

4 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 46։ Փաբրիկ. մատենագ. Յուն. հտ. 1. էջ 803։

բանայ զանից նորա, որ սիրեն զնորին և 'ի
ձառս իմանալեայ իսկ իրայ՝։ Կարծիք հասա-
բակայ գեր 'ի վերոյ բնաւից դասեն զնա բնա-
բանից, զոր յաւելին զարդասիս 'ի պատճառս։
Օարմացումն 'ի մատեանս նորա զորձեն իրք
անակնկալք կուռ զհետ միմեանց 'ի վերայ հա-
սեալ, և ուրեք ուրեք 'ի ձև քաջայանդուգն, և
յաձախ ևս քաջավայելուչ ձևով։ Դու ինքնին
գիտես, զի նա զ[1] եւկիպպեայ վարդապետին
իւրոյ զհետ երթեալ՝ զորոյ կատարեաց զաղանդն[2],
եղ զդատարկութիւն և զանհատս և զերթևեկ
նիւթոյ. և զի զլուսին համարեցաւ երկիր ծած-
կեալ բնակչօք[3], և զծիր կաթին բաղմութիւն
մանուանց աստեղաց[4]. և զի դարձեալ զամենայն
զգայմունս մեր ամիրոփեաց 'ի շշուփումն[5], և
ժիտեաց 'ի սպառ՝ թէ զոյնք և այլ զգալի որակք
'ի մարմնոս տարբանայցեն[6]։

Կէսք 'ի տեսութեանց աստի առաջարկեալ
էին 'ի խնդիր[7], այլ նա ընկալաւ և ընդարձա-
կեաց զայնոսիկ. զայլս իւրովի երկնեաց. զորոց ա-
պաշայք դատեացին՝ թէ քաջութիւնք իցեն հան-

1 Կիկերո. յղ. ձարտ. գիրք Ա. գլ. 11. հտ. 1. էջ 141։
2 Պրուքքէ. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 1187։
3 Պլուտ. յղ. խաղաղ. իմաստասս. գիրք Բ. գլ. 25. հտ. 2. էջ 891։
4 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա՝ գլ. 8. հտ. 1. էջ 538։ Պլուտ. անդ, էջ 893։
5 Արիստոտ. յղ. զդայար. գլ. 4. հտ. 1. էջ 669։
6 Նոյն յղ. հոգ. գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ 649։ Սէքս. Եմպիրիկ. ընդդէմ տրամաբ. գիրք Է. էջ 399։
7 Արիստոտ. յղ. զդայար. անդ։

Հարոյ եթէ ցնորք մնայ. թերևս և զթերին լցցէն, զոր նա գուշակել ոչ կարաց։ Եթէ օրէն ի ցէ ինձ կասկած նախանձու բերել զիմաստասիրացդ ձերոց, ասեմ՝ զի 'ի գիրս իւրեանց հնարին Պղատոն 'ի լռել զանուն նորա, և Արիստոտել յընդդիմաբանել նմա ամենայն ուրեք։

Իսկ Եկղեդեայ ընդդէմ թշնամանացն բողոք բարձեալ, անդրէն առաջին վէճքն 'ի նեղքս անկան. մերթ ոսոխ ընդ ոսոխի մեռնամարտէր, և մերթ մին ընդդէմ երկուց։ Եւ լաւ արդ թողեալ անդր զվիճաբանութիւնս նոցա, և զիմաստս և եթ բանից նոցա առեալ, համառօտեցից ասա զվարդապետութիւնս Արիստոտելի և զԵմպեդոկղի յաղագս լինելութեան և տեսչութեան տիեզերացս. զի զԼեմոկրիտեայն այլուր վերագրեցի*։

Կէսք յիմաստասիրաց, ասէ Եկղեդէս, համարեցան զաշխարհս միանջենաւոր, այլք ժամանակեայ, և այլք եղծական և անդրէն ստեղծական՝ սահմանեալ ժամանակաւ։ Իսկ Արիստոտել համարի զսա միտակաց 'ի սկզբանէ և մինչև 'ի սպառ։ Կրկնեալ անդրէն Թեոնի, ասէ. Գլեբեա ինձ թէ զանս քո խոսանեմ. և յառաջ իսկ քան զԱրիստոտել բազէք 'ի պիւթագորականացս մերոց, ընդ որս և Եկեղոս լուկանացի, յաւիտենական զաշխարհս ասացին։ Եկղեդէս ասէ.

* Ի Լ· գլուխ գրոցս։
1 Արիստոտ· յՀ· քն· ԼԲ· սելեաց, գիրք Ը· գլ· 1· հատ· 1· էջ 409։ Դոյն, յՀ· երկնից, գիրք Ա· գլ· 10· էջ 447։
2 Ոկեան· Լուկան· գլ· 2։

Հնարտիւ այդ այդպէս է, բայց Քրիստոսէ զօրացոյց զկարծիս զայս հաստատութեամբ նորոց ցուցակութեանց։ Այսոսիկ եւեթ ասացից՝ զորս 'ի շարժմանէ առնու ապացոյցս, զի ասէ. Թէ էր երբեմն յորժամ ոչ էր շարժումն, ապա 'ի սկզբանէ տպաւորեցաւ 'ի նախագոյ էակս՝ որ 'ի յաւիտենից գոյին կամ ապա ստեղծան։ Թէ ապա ստեղծան, հարկ էր առ 'ի գոյ ածել զնոսա՝ զոլ յառաջագոյն շարժման նախ քան զվարկուցեալն մեր առաջին շարժումն։ Իսկ եթէ 'ի յաւիտենից էին, հարկ է թէ մինչեւ շարժեալ՝ 'ի հանգստեան կային. արդ զի Հանգիստ չէ մարթ այլազգ ածել զմտաւ, բայց որպէս ըզդադարումն շարժման՝ որոյ է պակասութիւն՝, ապա շարժումն 'ի յաւիտենից էր։

Դարձեալ եւ այլք զնիւթ մշտակաց համարին, եւ զաշխարհս սկսեալ. քանզի ասեն՝ թէ մասունքն նիւթոյ խառն 'ի խուռն օգտեալ երթեւեկէին 'ի համապարփակ վիհն մինչեւ կազմեցան 'ի մարմին։ Այլ շարժումն նոցա ըստ օրինաց էր թէ հակառակ օրինաց բնութեան[2]. զի եւ չկք իսկ այլ շարժումն։ Իթէ ըստ օրինաց բնութեան, ապա մշտակաց էր աշխարհս. իսկ եթէ հակառակ այսոցիկ, չմարթէր երբէք աշխարհիս գալ 'ի գոյութիւն։ Այլ 'ի շարժել մասանց նիւթոյն

[1] Արիստոտ. յղ. բն. լբ. սեղեաց. գիրք Ը. գլ. 1. հտ. 1. էջ 408։

[2] Նոյն յղ. երկնից. գիրք Գ. գլ. 2. հտ. 1. էջ 475։

բստ օրինաց բնութեան, անդստին 'ի յաւիտե-
նից իւրովն առնուին զկազմածն՝ զոր ունին արդ.
իսկ 'ի շարժել հակառակ նոցին, չմարթէր եր-
բեք առնուլ նոցա կազմած. զի շարժումն հակա-
ռակ բնութեան՝ բաժանել և քակտել, և ոչ թէ
զոգել և կազմել[1]։ Այլ զիարդ իսկ խառն 'ի խուռն
շարժման մարթ էր կազմել զոյացութիւնս այս-
պիսիս, որպէս զոսկերս, զմարմին, և զայլ մա-
սունս մարմնոց մերոց[2]։

Տեսանեմք ամենայն ուրեք կարգս ինն շար-
ժիչ զօրութեանց, որոց 'ի միմեանս ազդեցու-
թեանքն յառաջ գան անդադար պատճառք և
արգասիք։ Զրինակ ինն, ցուպ զքար շարժէ,
բազուկ զցուպն, և կամք զբազուկն, այլովքն
հանդերձ։ Արդ զի յաջորդութեան զօրութեցս
այսոցիկ չմարթի վարել յանհունս[3], ապա դա-
դարէ 'ի շարժիչս կամ մնատանդ 'ի մի օր շար-
ժիչ մշտակաց 'ի յաւիտենից, որ է հարկաւոր
էն[4], առաջինն և գերագոյն էից, ինքն իսկ աս-
տուած։ Անփոփոխելին, իմացականն, անբաժա-
նելին և անքանակն, որ նստին 'ի վերս քան զը-
պարուհնակ աշխարհիս, և ինքն իւր տեսութիւնն
է երանելի[5]։

[1] Արիստոտ. յղ. երկնից, գիրք Ա. գլ. 2. հա. 1. էջ 433։

[2] Նոյն անդ, գիրք Գ. գլ. 2. էջ 475։

[3] Նոյն յղ. բն. լսելեաց, գիրք Ը. գլ. 5. հա. 1. էջ 415։

[4] Նոյն անդ, գիրք Դ. գլ. 8. էջ 882։

[5] Նոյն, բնազանց. գիրք Ժ. գլ. 9. հա. 2. էջ 1004։ Նոյն, յղ. բարոյ. գիրք Ժ. գլ. 8։

Լ,ՔԱՆԶԻ զօրութիւն նորա միշտ է ներգործական, հաղորդէ անընդհատ և հաղորդեացէ շարժումն յառաջին շարժումն՝, ի պարունակին ասեմ երկնից՝ յոր բնաւեալ կան անխաղաց աստեղք. և անդատին՝ ի յաւիտենից հաղորդեաց զայն։ Զի որ զօրութիւն կաշկանդել զբազուկ նորա կարէր կամ կարասցէ. առ ինչ յայսմ և ոչ յայնմ ժամանակի սկսանել էր շարժման, և առ իմէ դադարել նման երբէք[2]։

Լակ առաջին շարժումն հաղորդէ զշարժումն իւր՝ ի ստորնագոյն պարունակս, հոլովելով զնոսա հանապազօր յարևելից յարևմուտս։ Լայց իւրաքանչիւր՝ ի նոցանէ է և այլ շարժումն կամ շարժմունք բազմապատիկք, որ ուղղին՝ ի մէջտաղաց յանսիւթ էից[3]։

Շարժիչքս այսոքիկ երկրորդականք արբանեակք են առաջնոյ շարժողին[4], զորէն իւն՝ ի բանակի սպայք ընդ զօրավարաւ[5]։ Լէ նոր ինչ է այս վարդապետութիւն. զի աստուած, ըստ հնոյն աւանդութեան, բովանդակէ զտիեզերս հանայն։ Լոր թէպէտ և անՀոմնի առասպելեօք աւանդութիւնն այն այլայլեալ, սակայն բերէ

1 Արիստոտ. բնազանց. գիրք ԺԴ.. գլ. 6. էջ 999։ Նոյն, յղ. բն. լսելեաց, գիրք Ը. գլ. 15։

2 Նոյն յղ. բն. լսելեաց, գիրք Ը. գլ. 1. էջ 409 և 410։

3 Նոյն, բնազանց. գիրք ԺԴ.. գլ. 8. հա. 2. էջ 1002։

4 Նոյն, յղ. ծննդ. գիրք Բ. գլ. 10. հա. 7. էջ 525։

5 Նոյն, բնազանց. գիրք ԺԴ. գլ. 10. հա. 2. էջ 1004։

զՀետս Ձչմարտութեան [1]։

Բուսոյին շարժումն շարժեալ անդստին յաղդմանէ առաջնոյ շարժողին, որոյ ազդումն միշտ է պարզ և միշտ նոյն, չկրէ երբէք փոփոխումն, և չիք 'ի նմա երբէք ծնունդ և ապականութիւն [2]։ Յայսմ հաստատումն և 'ի խաղաղ անփոփոխութեան նորա փայլէ նկարագիր անմահութեան։

Օ՝նոյն է ասել և զտտորնագոյն պարունակաց· բայց այլակերպութիւն շարժմանց նոցա գործէ 'ի վերայ երկրի և յենթալուսնեայ գաւառն յեղմունս հանապազ, որպէս զապականութիւն և զվերստին գոյացումն մարմնոց [3]։

Եւ յետ այսորիկ ջանացեալ Եւկղիդեայ ցուցանել զկցորդութիւն արգասեացս այսոցիկ ընդ պատՃառսն զորս յառաջ եբեր, յաւել և ասէ·

Վերազանցութիւն և գեղեցկութիւն տիեզերացս են 'ի կարգն՝ որ զնոսա մշտնջենաւորէն [4]· և կարգս այս երևելի ևս է յերկինս քան 'ի վերայ երկրի [5], և 'ի կարգ անդր 'ի նոյն բերին առ հասարակ ամ էակք՝ որ անմիջնորդ և որ միջնորդաւ։ Եւ զոր օրինակ 'ի բարեկարգեալ տան [6] ազատք և ստրուկք և զրաստք գործակից լինին 'ի պահպանութի հասարակաց առաւել կամ նուազ

1 Արիստոտ. բնազանց. գիրք ԺԴ· գլ· 8· հա· 2· էջ 1003։
2 Նոյն, ծննդ· գիրք Բ· գլ· 10· հա· 7· էջ 524։
3 Նոյն անդ, էջ 525։
4 Նոյն, բնազանց· գիրք ԺԴ· գլ· 10· հա· 2· էջ 1004։
5 Նոյն, յղ· մասանց հոգ· գիրք Ա· գլ· 1· հա· 1· էջ 970։
6 Նոյն, բնազանց· անդ, էջ 1005։

նախանձու և զօրութիւն ըստ առաւել կամ նուազ մերձաւորութեանն 'ի տանուտէրն, այսպէս և 'ի տիեզերական յօրինուած էիցս՝ ամենեցուն Հիգն բերի 'ի պահպանութիւն բոլորին, առաւելագոյն փութով և բարեկարգութեամբ յերկինս՝ ուր զօրութիւն առաջնոյ շարժողին ազդողագոյն է, և դանդաղագոյնս և անկարգ յենթալուսնեայս՝ որ հեռագոյն են յերեսաց նորա[1]։

Ի բերմանէ աստի էիցս առ հատարակ 'ի մի ուշ նպատակի յայտ է, զի բնութեանն չիք ինչ ստեղծեալ անպիտան, այլ և զլաւագոյնն 'ի կարելեաց առնէ միշտ, և զի ամենայն գործոց նորա է կէտ առաջադրեալ[2]։

Յայն բան գուշեցին հիւրքն երկոքին միաբարբառ. Լաւ ընդէր իցէ 'ի դիտաւորական ընթանալ պատճառս, և ուստի՞ գիտիցես թէ բնութիւն զպատշաճագոյնն էից իւրաքանչիւր սահմանիցէ։ Ինձրևէ յանդգ, և իցէ՞ թէ յարգասաւորութիւն նոցին անձրևիցէ. ամենևին ոչ. այլ զի գոլորշիք ձգեալք 'ի վեր 'ի ճառագայթից արեգական, և թանձրացեալք անդրէն 'ի ցրտոյ, ծանրանան խտութեամբ, և անկանին յերկիր։ Դիպաց են արգասիք առնեցուցանել նոցա յանդաստանս զցորեան, և ապականել զբարդս որայից 'ի կալ։ Դիպաց դարձեալ արգասիք, զի կէսք

1 Արիստոտ. յղ. ծննդ. գիրք Ա. գլ. 1. էջ 970։ Բ. գլ. 10. հտ. 1. էջ 524։ 2 Նոյն, յղ. բն. լսելեաց, Նոյն յղ. մասանց հոգ. գիրք գիրք Բ. գլ. 8. հտ. 1. էջ 336։

յատամանց մերոց կրծողականք են և կէսք ծամ-
քողականք [1]։ Այ յաւել Արիստոն. Ի սկզբանէ
արարածոց յորժամ դէպք կերպարանէին զկէն-
դանիս, կազմէին զլուխս անիրանունս [2]. ապա
'ի վեր երևեցան մարդիկ ցլագլուխք, և ցուլք
մարդադէմք [3]։ Այսոցիկ վկայէ աւանդութիւն,
որ յետ անկերպարան նիւթոյն յարդ և 'ի կեր-
պարանս գալոյ, 'ինքեանք ածէ զհսկայսն և զբազ-
մանձեռն և զմիականի մարդիկ [4]։ Որոնք ազգքն
այնոքիկ առ թերութեան ինչ կազմածոյ, և այլք
եկին 'ի զոյ։ Այդ փոխանակ ասելոյ զի յետ-
նոցս այսոցիկ կատարելագոյն էր կազմած, հա-
մեմատութիւն իմն ստեղծին մնոք ընդ ազգմա-
նըս նոցա և ընդ կարծեցեալ կէտ նպատակին
նոցա։

Այ կզիդէս ասէ. Ոչ զք 'ի հնոց իմաստասի-
բաց օրէն համարեցաւ արարիչ իրաց ասել զդէպս
կամ զբախտ։ Այնուանքս այսոքիկ տարտամք ցու-
ցանեն զպատահարս և էթ անակնկալս, և զարբ-
գասիս պատճառաց հեռաւորաց կամ զչև և գի-
տելեաց [5]։ Դէպք և բախտ ոչ ինչ տիրապէս իւ-
բովի գործեն. և թէպէտ ըստ բարբառոյ ոամ-

1 Արիստոտ. յդ. բն. ը. սեալեաց, գլուք Բ. գլ. 8. հտ. 1. էջ 336։

2 Եմպեդ. առ. Արիստոտ. յդ. հոգ. գլուք Գ. գլ. 7. հտ. 1. էջ 654։ Նոյն, յդ. երկ. նից, գլուք Գ. գլ. 2. հտ. 1. էջ 476։

3 Արիստոտ. յդ. բն. ը. սեալեաց, անդ։ Եղնան. կենդանաբ. գլուք ԺԴ. գլ. 29։

4 Հոմեր. Եսիոդ։ Էսքիլ. առ. Պարսք. գլուք Ա. էջ 43. գլուք Է. էջ 299։

5 Արիստոտ. անդ. գլ. 5. էջ 333։

կին՝ պատահական պատճառս զնոսա կոչեմք, սակայն ոչ ինչ նուազ խոստովանիմք այնու զառաջին պատճառան զիմացականութիւն և զբնութիւն [1]։

Իսաքսարքոս ասէ. Զոր ինքնին զիտես, զի բազում իմաստք են բառիս բնութեան. և յոր դէմ իմանայցես զայն։ Յուկղիդէս ասէ. Մնութիւն իմն ինձ աստանօր զարարիչ շարժման՝ ինքնագոյ 'ի տարերս, 'ի հուր 'ի ջուր յօդս և 'ի հող [2]։ Զգոյն նորա անյեղլի յերկինս, իսկ յենթալուսնեայս խափանեալ ստէպ 'ի խոչից։ Որինակ իմն. հրոյ յատուկ է ամբառնալ 'ի վեր, այլ զօրութիւն օտար մղէ զնա յաձախ 'ի վայր [3]։ Զ այն որոյ ուր զենթալուսնեայ գաւառէս իցեն բանք, ոչ միայն արարիչ շարժման է բնութիւն, այլ նոյն և դադարման և փոփոխութեան ըստ դիպուածոյ արարիչ [4]։

Յանդիման առնէ նա մեզ յեղմունս անխափանս և կարգաւորս, և արգասիս անայլայլելս կամ մանաւանդ միշտ նոյնս։ Լոգոզ ինձ յայսոսիկ և ելեթ զկայ առնուլ. և իշխիցես պատահարս ըզսոսա ասել։ Լռեմ զհրաշալի կարգաւորութիւնն որ 'ի վերնական պարունակսն փայլեալ. այլ դու ըստ դիպուածոյ ինչ համարիցես զանձրևս միշտ

[1] Արիստոտ. յղ. բն. լբ. սեղեաց. գիրք Բ. գլ. 6. էջ 335։

[2] Նոյն անդ. գլ. 1. էջ 327. գիրք Դ. գլ. 1. էջ 339։

[3] Նոյն, յղ. ծննդ. գիրք Բ. գլ. 6. հտ. 1. էջ 521։

[4] Նոյն, յղ. բն. լսելեաց, գիրք Բ. գլ. 1. հտ. 1. էջ 327։

անխափան յաճախագոյնս 'ի ձմերայնի տեղա-
ցեալ քան յամարայնի, և զտօթ սաստիկ յամա-
րայնի քան 'ի ձմերան [1]։ Հայեաց 'ի բոյսս, և
առաւել ևս 'ի կենդանիս, յորս բնութեանն
տիպք յայտնագոյն դրոշմեալ կան։ Զի թէ-
պէտ և անխորհրդաբար և առանց ընտրութեան
գործիցեն կենդանիք, սակայն այնպէս պատշա-
ճեալ են գործք նոցա, զի զսարդից և զմրջմանց
խնդիր եղև թէ իմացականութեամբ թերևս ի-
ցեն ճոխացեալ։ Արդ ծիծռան դիտաւորութիւն
զբոյնն կազմելով, և սարդի զոստայն անկանե-
լով, և անկոց տերևովք զպտուղն պատսպարե-
լով, և արմատոց նոցա ոչ 'ի վեր՝ այլ 'ի խորս երկ-
րի արձակելով առ 'ի ծծել զհիւթն ստաձիչ, ոչ
'ի միտ առնուս զդիտաւորական պատճառս բա-
ցայայտագոյն յարգասիս յայսոսիկ երևեալ՝ որ
միշտ նովին միով օրինակաւ յառաջ գան [2]։
Զի զոր օրինակ արուեստ, է ուրեք՝ զի խո-
տորի 'ի նպատակէն, ևս և 'ի խորհրդաբարն
գործել. և է ուրեք՝ զի և յանխորհրդաբարն
գործել հասանէ անդր. սակայն ոչ երբեք այնու
յուշոյ նպատակին ասի վերջացեալ. զնոյն է ա-
սել և զբնութենէ։ Ուրեք պատահէն նմա խոչք,
և հրեշք 'ի սխալանաց զօրութեան նորա 'ի վեր
երևին [3]. և այլուր դարձեալ էից անընդունակա-

1 Արիստոտ. յդ. բն. ը. սելեաց. գիրք Բ. գլ. 8. էջ 336 և 337։
2 Նոյն անդ։
3 Նոյն անդ, էջ 337։

նաց ընտրութեան նկրտելով յարգասիս, ինքն ուղղէ զնոսա 'ի կէտն առաջադրեալ։ Այլ որ այն կէտն իցէ, բայց մշտնջենաւորութիւն տեսա-կաց. և որ կարևորագոյն բարի տեսակացն, բայց գոյութիւն նոցա և պահպանութիւն[1]։

Մինչդեռ Արկղիդէս բացատրէր զնմանատ Ա-բիստոտելի, Անաքսարքոս և Մետոն որպային 'ի բերանոյ նորա բանս՝ առ 'ի շրջել զայնոսիկ ընդ-դէմ նորա։

Դու, ասէն, խոստովանիս զմի աստուած, զնոյն և առաջին շարժիչ՝ որոյ ազդումն ինքնին իւրովի 'ի սկզբանէ յաւիտենից ունի զկարգ յեր-կինս. այլ անդիտանաս որչափ ինչ զօրութիւն նորա ազդիցէ յերկիր։ Ասիպէալ հաւանեցար նախ, զի երկինք և բնութիւն հրամանի նորա կան[2]. և ապա ամիսիսեցեր զբանս քո, թէ ա-մենայն շարժմունք յեղանակաւ էին ներգործին 'ի նմանէ[3], և թէ ինքն Ռոմ պատճառք և սկիզբն ամենայնի[4], և զի դարձեալ երեք ունել նմա ինսամ զմարդկայնոց իրաց[5]. և ապա յաւելեր՝ թէ ոչ է մարթ նմա այլ ինչ բաց յանձնէ նկատել ընդ տիեզերս, և զի ոճիրք և անկարգութիւնք պիղծ են առաջի աչաց նորա[6], և թէ չէ մարթ նմանել-

1 Արիստոտ. յղ. Ծննդ. գիրք Բ. գլ. 10. հա. 1. էջ 525։

2 Նոյն, բնազանց. գիրք ԺԴ. գլ. 7. հա. 2. էջ 1000։

3 Նոյն, յղ. Ծննդ. անդ։

4 Նոյն, բնազանց. գիրք Ա. գլ. 2. հա. 2. էջ 841։

5 Նոյն, յղ. սոփոր. գիրք Ժ. գլ. 9. հա. 2. էջ 140։

6 Նոյն, բնազանց. գիրք ԺԴ. գլ. 9. հա. 2. էջ 1004։

նել պատճառք յաջողութեան չարաց և թշուառութեան բարեաց՝։ Լաւ առ ինչ են քեզ տարակուսանքդ, հիմարզանա՛ քո ամիտիս, ասա հաստատակ։ Այլ թէ խնամակալութիւն նորա յանձանձիցէ զմարդիկ։

Լուկղիդէս ասէ. Զ՚յո ամենևին, այլ որպէս տանուտէր զյետին ստրուկս իւր՝։ Զի որպէս տանուտէր՝ի պահպանութիւն տանն, և ոչ յոգուտ իւրաքանչիւրոցն որ՝ի նմա՝ սահմանեալ զօրէնս, և օրէնքն հաստատուն կան՝ թէպէտ և յաձախ իւրաքանչիւրոք խոտորիցի յայնցանէ, և գժտութիւնք նոցա և յոռութիւնք ընդակիցք բնութեան նոցա անտես առնին, և եթէ հիւանդութիւն ծախէ զնոսա կամ թէ՝ի միմեանց սատակիցին, այլք վաղվաղակի յաջորդեն՝ի տեղի նոցա, այսպէս և յանձուկ անկեանս յայսմիկ աշխարհի՝ ուր մարդիկ վտարանդի կան՝ պահի հաստատուն առ՝ի կամաց գերաբուն էին տպաւորեալ ընդհանուր ազգումն։ Ալ ըդոլմունք զոր երկրպագունտս այս կրէ, և չարիքս որ խոշտանգեն զմարդիկ, չխափանեն երբէք զշարժումն տիեզերաց. երկիրս կայ, և յաջորդեն զհետ միմեանց ազգք, և կատարի առաջնոյ շարժողին դիտաւորութիւն մեծ[3]։

Լաւ յաւելեալ՝ի բանս իւր, ասէ. Հերեցէք

[1] Արիստոտ. աւագ բարոյ. գիրք Բ. գլ. 8. հա. 2. էջ 185։

[2] Նոյն, բնազանց. գիրք ԺԴ. գլ. 10. հա. 2. էջ 1005։

[3] Նոյն, յղ. ծննդ. գիրք Բ. գլ. 10. հա. 1. էջ 525։

ինձ եթէ ոչ մանրամասնաբար եւս զիրացս Ճա-
ռիցեմ. զի չեւ եւս Աբրիստոտելի զիմաստիրս զայս
լուծեալ է, և ոչ թերեւս լուծցէ. զի նա՝ի բնա-
բանականն առաւել պարապէ քան յաստուա-
ծաբանական խնդիրս՝։ Ընդ իսկ եթէ կա-
բացի՞ հաւաստեաւ զիմաստս նորա բացատրել.
քանզի պատմութիւն վարդապետութեան՝ ո-
րում՝ի սուղ զրուցատրութիւնս որ տեղեկացեալ
իցէ առանց միահետ կարդի և կցորդութեան,
նման է զրեթէ միշտ մատենից խանգարելոց յան-
հմտութէ և յանփոյթ առնելոց ընդօրինակողաց։

Եւ իբրև լուեաց Եւկղիդէս, խօսել կալաւ
Մետոն և ասէ. Եմպեդոկլ պայծառացոյց զՀայ-
րենիսն օրինաւք իւրովք[2], և զիմաստասիրութիւն
մատենիւքն։ Վերթուած նորա յաղագս բնու-
թեան և այլ տաղաւորութիւնք լի են գեղեց-
կութեամբք, զորս Հոմերոս ոչ արդեաք՝ի բաց
մերժէր յիւրայնոցն[3]։ Այլ ոչ ժխտեմ զի այլա-
բանութիւնք նորա, թէպէտ և քաջավայելուչք,
ստանանեն ՀՃգրտութեն իմաստիցն, և ուրեք ուրեք
արկանեն քօղ չքեղ՝ի վերայ գործոց բնութեան[4]։
Իսկ՝ի վարդապետութիւնսն զհետ երթայ Պիւ-
թագորայ, ոչ զաչացու հնազանդութեամբ զօ-
րականի, այլ ազնուական յանդգնութեամբ զօ-
րագլխի, և ինքնիշխանութեամբ առն՝ որ ընտրի-

[1] Պրոկլ. ՝ի Տիմ. էջ 90։
[2] Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 66։
[3] Նոյն անդ, յօդ. 57։
[4] Աբրիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 3. հտ. 1. էջ 555։

ցէ կալ իբրև զմի 'ի բազմից յաղատ քաղաքի քան թագաւորել 'ի վերայ ստրկաց[1]։ Այլ թէ պէտ և զհրաշալի արգասեաց բնութեան առաւելապէս Ճառէ, այլ ոչ ինչ նուազ և զառաջին պատՃառաց զկարծիս իւր յայտ առնէ։

Յաշխարհի աստ, որ գոյն ինչ մասն է բոլորի, և անդր քան զնա չիք շարժումն և ոչ կեանք, երկուս զանազանութիւնք պատՃառս. ներգործական՝ որ է աստուած, և կրաւորական՝ որ է նիւթն[2]։

Աստուած, ծայր իմացականութեան և աղբիւր Ճշմարտութեան, մնաց ևեթ է ըմբռնելի[3]։ Իսկ նիւթն ոչ այլ ինչ էր՝ բայց ժողով մասանց նրբից համասեռից բոլորակաց անշարժից, երկու ինչ ունելով էական յատկութիւնս, զոր կոչեմք սեր և ատելութիւն, մին սահմանեալ առ 'ի յօգել զմասունսն և միսն առ 'ի բաժանել զայնոսիկ[4]։ Աբդ առ 'ի կազմել զաշխարհ, ետ աստուած ներգործութիւն երկոցունց շարժիչ զօրութեանցս՝ որ մինչև ցայնժամ արգելեալ կային։ Յուզեցան անդէն, և յարհաւիրս սիրոյ և ատելութեան մասանեցաւ վիհն համապարփակ. 'ի ծոց նորա վեր 'ի վայր դղրդեալ, ուղիք հիւղեայց սաստիկք թաւալէին՝ ընդ միմեանս բաղխեալք և խորտակեալք. և մասնկունք համայնեղք մերթ

1 Փաստեթ. և Արիստոտ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 63։

2 Պլուտարք. պատմ. իմաստասս. հտ. 1. էջ 1112։

3 Ոնատ. առ Սատրբ. ծաղկաբաղբնարան. էջ 1 և 4։

4 Արիստոտ. յԼ. բն. լուսելեաց, գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 322։

առ միմեանս ձգեալք, և մերթ մղեալք յետս յետոյ ապա յօդեցան ընդ միմեանս, և կազմեցին զչորեսին տարերս [1]. որոց դարձեալ ընդ միմեանս մարտնչելով, զանկերպարան բնութիւնս և զիրեսս 'ի գոյ ածին [2]. և նոցին ապա յաջորդեաց կարգ մարմնոց, որոց կատարելագոյն գոյր կազմած։

Այսպէս 'ի համապարփակ վիճէն ելին տիեզերքս, այսպէս և դարձցին անդրէն 'ի նոյն. զի ամենայնի, որ ինչ յօդեալն է, սկիզբն՝ մէջ և կատարած է։ Ամենայն ինչ շարժի և գոյ ցորչափ սեր 'ի բազմոց մի ինչ գործէ, և ատելութիւն 'ի միոջէ բազում ինչ [3]. ամենայն ինչ դադարէ և լուծանի, յորժամ երկոքին սոքա հակառակ պատճառք ոչ ևս 'ի կշիռ հաւասարութեան կան։ Ա երադարձս այս շարժման 'ի հանգիստ, և գոյութեան մարմնոց 'ի լուծումն, սահմանեալ ժամանակաւ յաջորդեն [4]։ Գովք և խնացութիւնք յերկինս [5], հոգիք մանկանցք 'ի կենդանիս և 'ի բոյսս, և հոգի համատիւռ ընդ տիեզերս [6], ներգործեն ամենայն ուրեք շարժումն և կենդանութիւն։ Ա-

1 Պլուտարք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 1115։ Մոշեմ 'ի Քուռավորթ, գլ. 1. յօդ. 13. հտ. 1. էջ 24։

2 Արիստոտ. յդ. բն. լսելեաց գիրք Բ. գլ. 8. հտ. 1. էջ 336։

3 Նոյն անդ. գիրք Ը. գլ. 1. էջ 408։

4 Նոյն անդ. գիրք Ա. գլ. 5. հտ. 1. էջ 319. գիրք Ը. գլ. 1։ Նոյն, յդ. երկնից, գիրք Ա. գլ. 10. էջ 447։

5 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 32։ Պլուտ. յդ. խաղաղ. խմաստաս. գիրք Ա. գլ. 8։

6 Պրուքք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 1113։

մացութիւնքս այսոքիկ, որք 'ի գերամաքուր և յամենանուրբ հրոյ էութենէ ունին զգոյութիւն, արքանեկէն գերաբուն էին որպէս պար երաժշտաց ընդ պարագլխաւ, և զորք ընդ զորավարաւ[1]։ Այս քանզի անդստին 'ի գերաբուն էէն սերին, աստուածային զոյացութիւնս կոչեն զնոսա պիտաղորեանք. նմին իրի և յաՀախեալ էն առ նոսա իմաստքս այսոքիկ՝ աստուածս ոմանս ասել զիմաստունս[2], և թէ աստուած միտք և հոգի տիեզերաց է[3], և թէ ընդմտանէ 'ի նիւթն, և միայեալ ընդ նմա՝ կենդանացուցանէ զնա[4]։ Այլ մի առցես ասել իմաստասիրել՝ թէ աստուածեղէն բնութիւնն յանՀունս բաժանիցի. աստուած է միութիւն ինքնին զլիսովին, Հաղորդի՝ այլ չբաժանի երբէք։

Ի բարձրագոյն կայս երկնից բազմի. պաշտօնեայք կանայ նորա դիք ստորնագոյնք իշխեն աստեղաց, և իմացութիւնք երկրի և որ զսովաւ անընդմէջ պատի վայր։ Ի պարունակսն մերձաւորս կայից ուր նայն բնակէ, ամենայն ինչ բարւոք է և ըստ կարգի, զի կատարելագոյնք յէից զանթոռով նորա զետեղ առեալ կան, և հը-

1 Ընտտ. առ Սոսք. Ծաղ. կաքաղ բնաբան. գիրք Ա. էջ 4։ Պղատ. առ Սոսք. անդ, էջ 1։

2 Պիւթագ. ոսկ. տաղ. տող 3։ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 62։

3 Ընտտ. անդ։

4 Կիկերո. յղ. բն. գից, գիրք Ա. գլ. 11. հտ. 2. էջ 405։ Նոյն, յղ. Ծերութեան, գիրք ԻԱ. հտ. 3. էջ 319։

նազանդին անդիմադարձք բաշխից Ձակատագրին, օրինացն սահմանելոյ 'ի նմանէ [1]։ Խառնակութիւն 'ի միջատահման վայրս 'ի ներքս սըպրդի, և յաղթէ 'ի սպառ չարն բարւոյն [2] յենթալուսնեայ գաւառն, զի անդր 'ի վայր քամեցան մթութ և աղբղբուկ ամենայն գոյացութեանց՝ զորս յաձախ ընդ միմեանս բաղխմունք ատելութեան և սիրոյ ոչ կարացին ածել 'ի կատարելութիւն [3]։ Ընդ ջրք գլխաւոր պատճառք ազդեն 'ի գործս մեր. աստուած, կամք մեր, Ձակատագիրն և բախտ։ Աստուած, զի ինամակալ մեր է [4]. կամք մեր, զի խորհիմք նախ քան զգործել. և Ձակատագիրն և բախտ, զի բազում այն է՝ զի առաջարկութիւնք մեր խափանին յարկածից, որ պատահեն ըստ օրինացն սահմանելոյ և կամ հակառակ նոցին յերևմանն։

Երկու են հոգիք 'ի մեզ. մին զգայական, թանձր, ապականացու, կորնչելի, խառնեալ 'ի չորից տարերաց. միւսն իմացական, անլուծանելի, 'ի նոյն ինքն աստուածութենէ սերեալ [5]։ Երկրորդէս ևՀԹ զայսմանէ ասացից. սա ընտանեգոյն զօրիւ կցորդէ զմեզ ընդ դիս, ընդ իմանալիս, ընդ կենդանիս, ընդ բոյս, և ընդ ամենայն էակս՝ որոց հոգիք համաբունք ընդ մե-

1 Պրուքք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 1084։
2 Ոկեալ. Լուկան. գլ. 2։
3 Անոնիմ. առ Փոտայ, էջ 1316։
4 Դիոդ. լայերտ. գիրք Ը. յօդ. 27։ Ամեն. առ Պրուքք. հտ. 1. էջ 1115։
5 Պրուքք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 1117։

բումն իցեն՝։ Յոսեպէս բնութիւնն հոգևոր և կենդանի միակ կազմէ աղգատոհմ, որոյ գլուխ ինքն աստուած է։

Ի կցորդութիւն այսր յենու վարդապետութիւն մարմնափոխութեանէ զոր յեգիպտացւոց անտի ընկալաք[2]. յոր ոմանք այլ և այլ փոփոխմունս մուծին մեղմնկանս, և Լանեղոկդ օրէն համարեցաւ յաւելուլ յայն զկեղծիս՝ որք զարդարեն զքերթութիւն։

Յամ վարդապետութեանէ զհետ գայ անկումն[3] և պատուհաս և վերստին կանգնումն հոգւոց։ Սահմանեալ է նոցա թիւ[4], և յերանելի կեանս են Ճակատագրեալ՝ի մի ուրեք՝ի մեղրակաց. այլ՝ի յանցանելն, տարագրեալ աքսորին յերկիր։ Այս դատապարտեալք՝ի զգենուլ զնիւթ թանձր՝ մարմնոց՝ի մարմնս փոխին անդադար, կրելով զամենայն տառապանս՝ որ աղգի աղգի կենացն կցորդին, և ոչ բերեն հանդուրժել նորոյ պայմանին՝ եղկելիք յիշատակաւ նախնի փառացն[5]։ Այս՝ի խորտակել մահուն զշղթայս որ կապեն զնոսա ընդ նիւթոյ, մի յիմանալեաց երկնաբնակաց առեալ ածէ զնոսա՝ի դժոխս, և մատնէ առ ժամանակ մի ժանտիցն կատաղեաց զպղծեալսն

1 Պրուքք. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 1118։
2 Երոդոտ. գիրք Բ. գլ. 123։
3 Պրուքք. անդ. էջ 1091։ Մոշեմ՝ի Քուավզրթ, գլ. 1. էջ 64։
4 Պրուքք. անդ, էջ 1092։
5 Պլուտ. յղ. աքսոր. էջ 2. էջ 607։ Ստոբ. Ծաղկաքաղ բնաբան. էջ 112։

դժնդակ անօրէնութեամբք[1]. իսկ զկնացեալսն 'ի Ճանապարհս արդարութեան ածէ յաստեղս։ Լ.յլ բազում այն է՝ զի վՃիռք դիցն անդարձք մնանեն զերկաքանչիւրսն 'ի փոքձս խիստս։ Լ.քսոր նոցա և նժգեհութիւն տեւէ զամն բիւրաւորս[2], և ոչ վՃարի մինչև ոչ արժանի լիցին բարւոք կենցաղավարութեամբ միանալոյ անդրէն ընդ արարչին իւրեանց, և յեղանակաւ իմն հաղորդս լինելոյ փառաց աստուածութեան նորա[3]։

Լ.ս այսպէս նկարագրէ Լ.մպեդոկլ զտանջանսն, իբր իւր իսկ կրեալ։ Լ.րևեցայ, ասէ, նախ 'ի կերպարանս պատանւոյ, ապա օրիորդի, և ապա բուսոյ և թռչնոյ և ձկան[4]։ Լ.ս միւսՄ 'ի չուռցս յայսցանէ թափառեալ շրջէի առ ժամանակ մի իբրև զխուՃապս թեթեւս ընդ սին եթեր. և ապա հոսեալ անկայ 'ի ծով, և անդրէն վարեցայ յերկիր, և անտի մղեալ յարեգակն, և անդուստ դարձեալ 'ի մրրիկս օդոց ընկեցայ[5]։ Հայրհաւիրս այլոց և ինձ բնաւ ամենայն տարերքս մերժէին զիս, որպէս զստրուկ փախուցեալ յերեսաց տեառն իւրոյ[6]։

Լ.ս վախՃանեալ զբանս իւրՄ Էտոնի, յաւէ՛ զի

1 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 31։ Պրուքք. պատմ. խմաստաս. էջ 1092։

2 Երոդոտ. գիրք Բ. գլ. 123։ Եմպեդ. առ Պլուտ. յղ. աքսոր. հտ. 2. էջ 607։

3 Եբսեկդ. ոսկ. տաղ Պրուքք. անդ, էջ 1094։

4 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 77։ Ծաղկաքաղ. գիրք Ա. էջ 127։

5 Եմպեդոկլ. յղ. զգուշ. յօտարին ընչ. հտ. 2. էջ 830։

6 Նոյն, առ Պլուտ. յղ. աքսոր. հտ. 2. էջ 607։

ըստ առաւելագոյն մասին նոցն էր վարդապետու-
թիւնն այն ընդ պիւթագորեանցն, բայց միայն
զի Լամպեդոկղ նախ ուսոյց զեղծումն և զդար-
ձեալ ստեղծումն աշխարհի, և զչորեսին տարերս
բաղկացուս՝, և զրդիչս նոցին զսէր և զատե-
լութիւն։

Յայնժամ Պնաքսարքոս ծիծաղելով ասէ ցիս.
Յերուսի ուրեմն ասաց Պռեմկրիտոս զՀնմարտու-
թիւն վտարանդի ընկեցիկ լեալ՝ի գուբ անդնդա-
խոր[2]։ Լա՛ւ ես ասեմ. Հաւատա ինձ զի յապուշ
լինէր Հնմարտութիւն՝ եթէ զայր յերկիր, և
մանաւանդ՝ եթէ յՀլաղագ եկաւորէր։ Լա՛ւ Լակ-
զիդէս ասէ. Խուսափէր արդեօք անդէն՝ի բաց,
զի մոլորութիւն զնա հասանիցէ։

Մինչև ցայս վայր յաղագս լինելութեան աշ-
խարհի. բայց և յետ լինելութեանն նորա պայ-
մանն և որ ինչ՝ի նմա ցարդ փոփոխմունք զտանին
լեալ, ոչ ինչ նուազ յուզեցին հերձուածս։ Լնդ
ժամանակս բաղումս թաղեալ եկաց նա՝ի ջուրս
ծովու, ասէր Պնաքսարքոս. և Հառագայթից
արեգական սպառեալ զմնան ինչ՝ի ջուրցն, ե-
բևեցաւ երկիր[3]. և սիկն, որ յերեսս երկրի էր
մնծեալ, եռացեալ անդստին՝ի տապոյ արեգա-
կան՝ի վեր երևեցոյց զաղգի ազգի կենդանիս

1 Արիստոտ. բնագանց. գիրք Բ. գլ. 1. հտ. 1. էջ 549։ Անաքս. առ Պլուտ. գիրք Ա. գլ. 4. հտ. 2. էջ 845։
2 Կիկերոն. ինգ. ակադ. գիրք Ա. գլ. 12. հտ. 2. էջ 75։
3 Արիստոտ. Ներանիք օդ. յդ. խաղաղ. խնստաս. գիրք Գ. հտ. 2. էջ 896։

և զտունկս։ Օ՛սոյն զայս յայտնապէս և արդ տեսանեմք Յ՚զիպտոս. զի սիկն, մնացեալ յոզողմանէ Յ՚ելոսի յերեսս անդաստանաց, ՝ի գոյ ածէ ժիժմանկս անբաւ՝։ Իսկ ես ասեմ. Յրկբայելի ինձ իրդ. պատմեցաւ և ինձ այդ ՝ի Մոնբայիդ, այլ ես չկարացի ստուգել։ Յ՚ակղեղէս ասէ. Մ՚այլ մեզ ոչ ինչ ընդ այդ է երկբայելի, որ զսերունդ ձկանց ոմանց համարիմք ՝ի կաւոյ և ևեթ և յաւազոյ ծովու[2]։

Յ՚ս յառաջ ածեալ Մ՚նաքսարքեայ զբանսն, ասէ. Պ՚առագայթք արեգական, որպէս ասացի, ընդ բազմահոլով դարս նուազեցին զբազմութիւն ջուրցն որ ծածկէին զերկիր։ Մ՚րդ զի նոցն պատճառք կան և մնան, եկեսցէ ժամանակ՝ զի ցամաքեսցի ծով՝ ի սպառ[3]։ Յ՚ակղեղէս ասէ. Մ՚ՐՀիմ զ՚ասովպայ առասպելսն ընել, զոր նաւավարին իւրում՝ պատմեաց. Վ՚արիբդիս, ասէ, երկիցս երաց զորկորն ահագին, և երկիցս ջուրքն որ ծածկէին զերկիր՝ խուժեցին յորովայն նորա։ Յ՚առաջնումն նուազի լերինք ՝ի վեր երևեցան, յերկրորդումն կղզիք, և յերրորդումն սպառեսցի ծով՝։ ՈՀեր մարթի Պ՚ետմակրիտեայ անգիտանալ, զի թէպէտ և գոլորշի անբաւ ՝ի տապոյ արեգական ձգեալ ցնդի, այլ հուպ ընդ հուպ լուծեալ

1 Դիոդ. գիրք Ա. էջ 7 և 8։
2 Արիստոտ. կենդանաբ. գիրք Զ. գլ. 15. հտ. 1. էջ 871։
3 Դեմոկր. առ Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 3. հտ. 1. էջ 554։
4 Նոցն անդ։

յանձրև՝ անկանի դարձեալ յերկիր, և արագ արագ երթեալ հատուցանել ծովու զկորուսեալն[1]։ Նշանաբարբոս ասէ. Ոչ ապաքէն դաշտք, ծածանեալք արդ 'ի հունձս, երբեմն թաղեալ կային ընդ ալեօք. արդ եթէ ոչ նուազեալ էին ջուրք, ոչ արդեօք տեղն տային 'ի վայրացս։ Լակղեդէս ասէ. Լ՝ ուրեք զի երկիր ծովու, և է՝ ուր ծով երկրի յաղթեաց[2]։

Լա մինչդեռ Նշանաբարբոս կամէր 'ի վերայ բանիցն պնդել, յառաջեալ ասեմ զԼակղեդէս. Բայժմ 'ի միտ առնում՝ թէ ընդէր 'ի լերինս ուրեք և 'ի ծոց երկրի զտանին աղգ աղգ խղուանջնաց ծովու, և 'ի քարահատս Ամիրակուսայ ձկունք վիմատառեալք[3]։ Յամր և սահմանեալ զնացք են ծովու, և ծածկէ հետ զհետէ զամենայն գաւառս երկրի. ապաքէն գայցէ ժամանակ, զի և զԹէնս և զԱկեդեմն և զեւս մեծամեծ քաղաքս Լալադայ ծածկեսցէ։ Զիցէ արդեօք գուշակութիւնս այս ախորժելի աղգաց՝ յանմահութիւն համբաւոյ իւրեանց յուսացելոց. սակայն զքանչելահրաշ փոփոխմունս երկնային մարմնոցն յուշ ածէ, զորոց պատմէին ինձ քուրմք Եգիպտացւոց։ Լա ո՞ զիտէ զժամանակ փոփոխմանց ծովու թէ ցո՞ր վայր տեւեսցէ։

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 3. հա. 2. էջ 552։

2 Նոյն անդ, գիրք Ա. գլ. 14. էջ 546 և 548։

3 Գսենոփ. առ Որոգին. խնաստաս. գլ. 14. հա. 1. էջ 893։

Լուկղեդէս ասէ. Մոլոս Նաբարսիս, հան-դարտեաց։ Օրով և ցամաքք հանգոյն երկուց սե-տուԹեանց են ըստ մերումն բանի, որք ոչ տե-ղափոխին՝ այլ զսահմանակալ անձուկ ինչ և ևԹ վայրաց ստէպ վիճին զԺառանգուԹենէ։ Զի ծով մերԹ բռնադատի ամիսոփել զսահմանս իւր յաճախուԹեամբ տղմոյն և աւազոյ՝ զորս գետք ածեալ կուտեն 'ի ծոց նորա, և մերԹ ընդար-ձակէ զնոսա բաղխմամբ ալեացն և եկամուտ օգ-նականուԹեամբք։ Զհա յԱկամանտիա և 'ի դաշ-տին Լոլոնի և մերձ յԱփեսոս և 'ի Միլետոս ԹուՄքք կազմեալք 'ի բերանս գետոց ընդարձա-կեցին զցամաք։

Յաւելի և ասեմ. Յանցանել իմում՝ առ մէջ-տեան ծովակաւն պատմեցաւ ինձ, զի 'ի տղմոյն զոր Տանայիս օր ըստ օրէ ԹողուՄ 'ի նա՝ այնքան ամբարձեալ է յատակ ընդ-ին, մինչև անգնաց լի-նել մեծամեծ նաւաց՝ որ յառաջ քան զամ ինչ գային անդր 'ի վաճառականուԹիւն[2]։ Լուկղե-դէս ասէ. Լ ինչ յայտնագոյն օրինակ. մնան Լգիպտոսի ձգեալ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ 'ի ծո-վէ մինչև ցԱրաբայիդ զործած է և պարգև Լե-զոսի։ Զի 'ի վաղնջուց ժամանակս տարածանէր անդ ծոց գրեԹէ ըստ ուղղուԹեան ծոցոյ Կար-

[1] Երոդոտ. գիրք Բ. գլ. 10։ Սարաբ. գիրք Ա. էջ 58. գիրք ԺԳ. էջ 595 և 598։ Դիոդ. գիրք Ա. էջ 37։

[2] Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 14. հա. 1. էջ 549։ Պոլիբ. գիրք Դ. էջ 308։

միր ծովուն[1]. և եղից զայն Լեղոս ամ ըստ ամէ թողեալ անդ զսիեն խաւ 'ի խաւ։ Լաւ հաւաստիք իրացն ոչ միայն աւանդութիւնք եգիպտացւոց, և հանգամանք երկրին, և խղճունջնաց ծովայնոց գիւղք 'ի լերինս՝ որ կան 'ի վերոյ քան զԱՀեմիիս[2]*, այլ և զի ըստ հաւաստի զնութեան՝ յատակ երկրին եգիպտացւոց, թէպէտ և արդ ամբարձեալ, չև ևս հաւասարէ բարձրութեան մերձակայ դաւառաց։ Զի Աեսոստր, Լեքաւով, Դարեհ, և այլք 'ի թագաւորաց գուն գործեցին ձոր հատանել և կցորդել զԼեղոս ընդ Կարմիր ծովուն. այլ ապա գիտացին զի ծովն Կարմիր բարձր էր քան զերկիրն եգիպտացւոց[3]։

Զինչդեռ տեղի տայ 'ի մտանէ տերութեանն՝ թողով զեղերս սահմանաց իւրոց 'ի յափշտակութիւն, ընդ զտոյժն յափշտակութեամբք՝ յինքն զսահմանս երկրի երբէք երբէք գրաւեալ։ Զիզն նորա հանապազորդ բանայ յեղակարծումն անցս ընդ երկիր, զոր զանխուն խրամատէ. նա ար-

[1] Երոդոտ. գիրք Բ. գլ. 11։ Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 14. էջ 548։ Սորաբ. գիրք Ա. էջ 50։ Դիոդ. գիրք Գ. էջ 144։

[2] Երոդոտ. գիրք Բ. գլ. 12։

* Նախնիք զմեծ ինչ մասն աշխարհին եգիպտացւոց հաստատէին գործեալ 'ի Նեղոս գետոյ. այլ արդեաց զայսմանէ երկսաւակ են կարծիք։ (Տես Պոչար 'ի արբազան աշխարհագր. գիրք Դ. գլ. 24։ Ֆիլերէ յիշատ. բանաս. կանաւ. հտ. 16. էջ 333։ Պրիւս ուզնորուն յակունս Նեղոսի, գիրք Զ. հտ. 6. գլ. 16։)

[3] Երոդոտ. գիրք Բ. գլ. 158։ Արիստոտ. անդ։ Դիոդ. գիրք Ա. էջ 29։

դեօք զՄիկիլիա Յոտալիոյ բաժանեաց[1], և զԼ.ը-
բիա 'ի Լիսիոյ[2], և զբազմութիւն կղզեաց 'ի
մերձակայ ցամաքէ. և զառաջ լայնածաւալք, 'ի
խուժել յանկարծակի ալեաց նորա, ընկլան։
Յեղափոխութիւնքս այսոքիկ ահագինք ոչ ստորա-
զրեցան 'ի վիպագրաց մերոց, զի վեպք զխուն
ինչ վայրկեան կենաց մարդկան սովոր են բո-
վանդակել, այլ Թողին ուրեք ուրեք հետս ան-
ջնջելիս 'ի յիշատակ ազգաց։

Լրթ 'ի Սամոթրակէ, և ուսցիս՝ զի ջուրք
եւքսինեանն Պոնտոսի արգելեալք 'ի խորշ մի
շրջափակ, և յորդեալ անդադար 'ի ջուրց Լուրո-
պայ և Ասիոյ, բացին զանցս Սոսփորի և Լլեսս-
պոնտեայ. և հոսեալ սաստկապէս յԱգեան
ծով, ընդարձակեցին զսահմանս նորա ընդ ծով-
եզերս շուրջանակի։ Ցօնք սահմանեալք 'ի կը-
ղզեզոնն վկայեն ցարդ արկածիցն՝ որ 'ի վերայ
նախնի բնակչացն հասեալ կային, և բարերարու-
թեան դիցն՝ որ զնոսա պահեցին անվնասք[3]։ Ասնց
ընդ դիցաբանութիւն. ոչ ապաքէն Հերակղէս,
այն՝ զորոյ զնահատակութիւնսն հաճոյ թուե-
ցաւ ընդ մեծագործութիւնս բնութեանն խառնել,
բաժանելովն զԱրոպէ յԱփրիկէ՝ ցուցանէ զի
ատլանդականն ծով աւերեալ զնեզուցն որ կցոր-

[1] Եսբիոյ. առ Սարաբ. գիրք Զ. էջ 258։ Յիշատ. բանաս. կաճառ. հա. 37. էջ 66։

[2] Սարաբ. գիրք Ա. էջ 60։

[3] Դիոդ. գիրք Ե. էջ 322։

դէր զերկոսին ցամաքն, ծաւալեցաւ 'ի ծովն նեբբին'։

Դարձեալ և այլ ևս պատճառք զդժնդակ և զնորանշան արգասիսն յաճախեցին։ Լցդը քան զկիրճն, զոր արդ ասացի, գոյր ըստ հին աւանդութեանց կղզի մեծ հաւասար Լբիոյ և Լիբիկեայ. և 'ի սասանութենէ երկրի ընկլուզաւ հանդերձ թշուառ բնակչօքն յանդնդախոր վիհս ատլանդական ծովուն[2]։ Լա հեղեղք խսկ անձրևաբերք քանի՛ գաւառս ոչ ընկղմեցին. և հողմք բռնաշունչք քանի՛ անդաստանս ոչ ծածկեցին ընդ աւազակոյտ լերամբք։ Ողբ և ջուր և հուր թուին նիզակակցեալ ընդդէմ երկրի. սակայն այս ամենայն ահագին արկածք, որ սպառնան աշխարհի համակործան մեծաղուտ աւերած, հազիւ 'ի գոյզն ինչ մասն երկրիս երգիծանէն՝ որ ոչ ինչ աւելի է քան զկէտ մի առաջի տիեզերաց[3]։

Լյսպէս ծով և ցամաք աշխարհակալութեան օրինօք զսահմանս միմեանց հատանէն 'ի տոյժս թշուառ մահացուաց։ Ալ ինչ նուազ քան զնոսա և ջուրք գործեն փոփոխմունս 'ի վերայ երեսաց երկրի 'ի գնացս իւրեանց և 'ի դանդաղամած կայս։ Ամոլեալ անդր զգետս՝ որք է զի առատու-

1 Պղատ. առ Սորաբ. էջ 25։ Նոյն, 'ի Կրիտ. էջ 122։ գիրք Ա. էջ 49։ Պլին. գիրք Գ. գլ. 1. հա. 1. էջ 135։

2 Պղատ. 'ի Տիմ. հա. 3. գիրք Ա. գլ. 14. հա. 1. էջ 548։

3 Արիստոտ. Նշանք օդ.

թիւն և է զի խուժան աւերանաց զերծուն զաշ-
խարհաւ, ահա նոյն և մի գաւառ մերթ ողողա-
նի յորդութեամբ ջուրց, մերթ հալիւ զլիու-
թիւն բաւականին ունի, և մերթ չքաւորի 'ի
սպառ անջրդի։ Յաւուրս տրոմական պատերազմին
մերձ Մ.գոս Ճախճախուտ էր երկիրն, և մշակք
անդ սակաւք. իսկ Մ'իկէնք, քանզի չէ ևս սպա-
ռեալ էին երկրին տարերք աճեցականք, բազ-
մահունձք էին և բազմամարդք։ Ընդ դարս ութ
ջերմութեան արեգական ծծեալ զառաջնոյն զա-
ւելորդ խոնաւութիւն և զերկրորդին զկարևորն,
զանդաստանս Մ'իկենաց արար ամուլս, և զՄ.-
գոսին արդասաւորս[1]։

Որ ինչ աստ բնութիւնն մասնաբար գործեաց,
զնոյն ընդհանուր 'ի վերայ ամենայն երեսաց եր-
կրի գործէ։ Կապտէ հանապազ 'ի ձեռն տապոյ
արեգական զհիւթ պարարտութեանն որա. այլ
որպէս զի մի սպառեսցի այն, ածէ ընդ ժամա-
նակս ժամանակս զՍրհեղեղս՝ որք իբրև զձմե-
ռունս կարևորս ընուն 'ի սուղ ժամանակի զտոյժս,
զոր գաւառք ունին կրեն ընդ բազմահոլով դարս[2]։
Մ.յսոցիկ և ժամանակագրութիւնք մեր վկայ-
են, յորս տեսանեմք զմարդիկ, զի փախու-
ցեալք աներկեպայապէս 'ի նաւաբեկութենէ հա-
մազգեացն՝ ամրանան 'ի բարձունս[3], թումբա

[1] Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 14. հա. 1. էջ 547։

[2] Նոյն անդ, էջ 548։

[3] Նոյն անդ, էջ 547։ Պլ-
դաս. առ. Սարաք. գիրք ԺԳ. էջ 592։

կառուցանէն, և հորդէն գնացս ջուրց ծովացեալոց 'ի դաշտս։ Բ. յսպէս 'ի վանինջուց ժամանակս մի 'ի թագաւորացն սպարտացւոց ժողովեաց 'ի ձոր զջուրս որ ծածկէին զ[illegible]ակունքս, և գետաՀետեաց զ[illegible]ուրոտաս[1]։

Հորոց 'ի դէպ է խմաստասիրել, զի և Դեղոս և Ցանայիս և այլ ամենայն գետք առ Հասարակ՝ որ մշանջենաւորքն կարծին, լինէք էին 'ի սկզբանէ լցեալք յարկածից հեղեղաց 'ի դաշտս անբերս. և Ճարտարութեամբ մարդկան կամ յայլ ինչ պատՃառաց ստիպեալք, բացին 'ի գնացս իւրեանց շաւիղ ընդ երկիր[2]։ Բ. զի դարձեալ թողին զձորս իւրեանց 'ի ստիպել գնոսա այլոց արկածից ողողանել զվայրս, որ արդ ցամաք են և անապատք։ Օ. ի այսպէս ըստ Արիստոտելի, բաշխէ բնութիւն զջուրս ընդ այլ և այլ գաւառս երկրի։

Բ. ՈՒր գնոսա գանձեալ պահիցէ մինչև յերևան ածեալ, և ուր ակունք աղբերաց և գետոց զետեղեալ կայցեն։ Կէսք ջրամբարս լայնատարածս ասեն փորեալ բնութեան 'ի ծոց երկրի, և զի անդր բազմութեան ջուրց երկնից շաւեմարանեալ՝ անտի հոսիցեն առաւել կամ նուազ յորդութեամբ և հանապազորդութեամբ ըստ ընդունարանացն համեմատութեան[3]։ Իսկ

[1] Պաւսան. գիրք Գ. գլ. 1. հլ 204։ գիրք Ա. գլ. 14. հտ. 1. հլ 549։

[2] Արիստոտ. Ծանոթ. օգ.

[3] Նոյն անդ. գլ. 13. հլ 544.

այլք է հակառակն. Լ՝ որ լայնատարը բաւեսցէ վայր բովանդակել զբազմութիւն ջրոցն, զոր գետք յաղթաջուրք 'ի միում ևեթ տարաջ յորդեալ բերեն։ Լցեն արդեաք և զուրք ընդ երկրաբնդունարանք յաւելուածոյ անձրևայ. այլ զի այսոքիկ ոչ բաւեն 'ի հանապարդարդ բղխումն աղբերաց և գետոց, ապա յամենայն ժամանակի և յամենայն տեղիս օդք, կամ մանաւանդ զոլորշիքն որ յօդս, թանձրացեալք 'ի ցրտոյ՝ լուծանին 'ի ջուր 'ի խորս և յերկաս երկրի, որպէս յամպախաղաց երկնի փոխին յանձրև։ Լ՝այս փոխխութիւն դիւրագոյն ևս 'ի լերինս գործի, ծծելով երեսաց նոցա զոլորշի յորդառատ. զի ահա 'ի լերանց մեծամեծաց բղխեն գետք մեծամեծք '։

Լ՝ ապա հրաժարեցին Լ՝նաքսարքոս և Ա՝ետն Յ՝ակղիդեաց, այլ ես կացի ընդ նմա. և աղաչէի զնա բնախօսել ինձ մանաւանդ զհանգամանս և զՀանդամանաց և զառ միմեանս ազգեցութիւնսն մարմնոց։ Լ՝ ասասխանի տուեալ Յ՝ակղիդեաց, ասէ. Լ՝ ինչ գիտութեամբ այսմիկ կը-ցորդութիւն ընդ հմայս. զի բնաբանութեան անկ է գուշակել զդիտաւորութիւն բնութեան 'ի դէպս սովորականս, իսկ հմայից զկամն զից 'ի դէպս անսովորս. այլ գիտութիւնք առաջնոյն վաղ կամ անադան ցրեսցեն զնաբէութիւնս զիւրոց ասոխին։ Լ՝ակեսցէ ժամանակ, զի նշանք որ արդ զարհուրեցանեն զամբոխն՝ դասեսցին ընդ

։ Աբեստոս. նշանք օդ. գիրք Ա. գլ. 13. հա. 1. էջ 545։

արդասիս բնութեան, և խոթամտութիւն նորին այժմու այն ևեթ նորանշան իմն հանդիսացի։

Անսաստութիւն ոչ իշխեաց ցարդ առաւել քան զկարծիս յառաջ բերել ինչ. քանզի անպատրաստ այլակերպութիւնք են արդասեաց բնութեանն, և պատճառաբ նոցին գաղտնածածուկք յոյժ։ Զիք ինչ 'ի ճշմարտութեանց՝ զոր չիցէ նորա նշմարեալ, և ոչ անտեղի ինչ՝ զոր չիցէ նորա 'ի ներքս ածեալ։ Ի գէպ էր նմա շատանալ արդ զնութեամբք, և զվիճիոս ասպատան առնել 'ի դարս ասպագայս. այլ նա հաղիւ լուծեալ 'ի խանձարոց, զիսակութիւն և զյանձնապաստանութիւն առայդ հասակին բերել յանձին։ Վոխանակ զգուշութեամբ զոսն յոտանէ փոխելոյ, արշաւէ ընդ ասպարէզն. և հակառակ օրինացն՝ զոր անձամբ անձին սահմանեալ է՝ նորանոր կարգաւորութիւնս 'ի վերայ կարծեաց ևեթ և ցնորից կառուցանէ։

Ոչեմ՝ որ ինչ իւրաքանչիւր որ յաղանդոց ասացին զմիոյ միոյ 'ի զգալի երևմանցս. և ոչ զտաբերց վարդապետութիւն և որ ըստ նմանէ գուշակութիւնս առ այլ ինչ 'ի ներքս ածեմ, բայց զի չգտանեմ զիսոզագոյն ինչ առ 'ի տալ ճշգրիտ զկերպարանս ուշիմութիւն խմաստասիրացն Յունաց։ Ա՛յ ինչ է փոյթ՝ թէ օրէնք գիտութեան նոցա հաստատուն կամ խարխուլ իցեն. ստգտանիցին նոքա թերևս յետ ժամանակաց վասն ոչ ճշգրիտ ունելոյ գիտութիւնս զբնաբանութենէ։

այլ զԷԹ վկայեսցեն ամենեքին, զի վրիպակք նոցա հանձարեալ մարդկան են վրիպակք։

Ոչ իսկ մարթի յաջողութեան ակն ունել բնաբանից, որք նախ հետամուտ եղեն զիտելոյ զէութիւն զգալեացս էից։ Քրուեսա ինչ ոչ օգնէր նոցա 'ի լուծանել զԷակս. և բաժանումն ցոր վայր և հնարեսցի հասուցանել զայն, զնծայեալ բնազնին աչաց կամ մնաց 'ի տեսիլ առաւելքան զվերին երեսս իրաց աւելի կամ նուազ տարածութեամբն։ Սակայն յետ բազում փորձից հանարեցան նոքա հասու լեալ, զի զոյացութիւնք ինչ փոխին յայլ զոյացութիւնս, և անսուտ առին խնամատարիլ՝ զի են 'ի բնութեան պարզ և յօդուածոյ մարմինք, և զի յօդուածոյքն ոչ այլ ինչ են՝ բայց պարզիցն խառնումն, և զի պարզք պահեն 'ի խառնուրդն զնոյն հանգամանս և զյատկութիւնս՝ որ էին նոցա յառաջագոյն։ Յայտմ հետէ բացաւ Հանասպարհ, և կարեւորագոյն զպարզականացն թուեցաւ ուսանել նախ զէութիւն։ Բնա քեզ ինչ ինչ 'ի գնութեանց նոցա, զորս Արիստոտել եցոյց ինձ։

Հող, ջուր, օդք և հուր տարերքք են ամենայն մարմնոց. վասն որոյ ամենայն մարմին յոտանս 'ի տարերաց ստոյ լուծանի՝։

Վասնզի պարզ մարմինք են տարերքք, ոչ է մարթի բաժանել զնոսա յայլաբաւն մարմինս,

՝ Արիստոտ. յղ. Երկնից, գիրք Գ. գլ. 3. հա. 1. էջ 477։

այլ՝ ի միմեանց ծնանին, և փոխին հանապազ՝ ի միմեանս[1]։

Անհնար է սահմանել զչգրաւս զհանգամանս խառնուածոյ բազկացու մասանցս յիւրաքանչիւր ի մարմնոյ. ապա այսպէսողկ՝ ի կարծ ասացս՝ թէ երկեակ մասունք ոսկեր՝ ի ջրոյ, երկեակ՝ ի հողոյ, և քառեակ՝ ի կրոյ խառնեալ իցեն[2]։

Եւ աւելի ինչ ծանօթ է մեզ ձև կատարիչ մասանց տարերցս, և որք ձեռն արկին՝ ի սահմանել զայն՝ զրաջան եղեն։ Բ՝ ի բացատրել զյատկութիւնս հրոյ՝ կկոք՝ ի ձև բրգան ասացին ունել նման մասունս, և այլք՝ բոլորշի. և հաստատութիւն երկրագնացս յոր բնակեմք, խոբանարդս կարծեցեալ նոցա զմասունս հողոյ[3]։

Ի տարերս իսկ անդ են պատճառք շարժման և դադարման յարակիցք նոցին[4]. յորոց զրդեալ տարրս հողոյ դիմէ՝ ի միջակէտ տիեզերաց, ջուր ամբառնայ՝ ի վերքան զհող, օդք՝ ի վերքան զջուր, և հուր՝ ի վերքան զօդս[5]։ Զ այսն որոյ ծանրութիւն տիրապէս անխառն՝ ի թեթևութենէ յատուկ է հողոյ, և թեթևութիւն տիրապէս անխառն՝ ի ծանրութենէ ուրոյն է հրոյ։ Իսկ միջա-

[1] Արիստոտ. յղ. երկնից, գիրք Գ. գլ. 4. էջ 479։ Նոյն, յղ. ծննդ. գիրք Բ. գլ. 10. էջ 525։

[2] Նոյն, յղ. հոգ. գիրք Ա. գլ. 7. հա. 1. էջ 627։

[3] Նոյն, յղ. երկնից, գիրք Գ. գլ. 8. հա. 1. էջ 483։

[4] Նոյն, յղ. բն. լսելեաց, գիրք Բ. գլ. 1. էջ 326։ Նոյն, յղ. երկնից, գիրք Ա. գլ. 2. էջ 452։

[5] Նոյն, յղ. երկնից, գիրք Գ. գլ. 4. էջ 480։

կանայն երկոցունց օդոյ և ջրոյ համեմատութիւն և եթ առ երկոսին ծայրսն առինչունակ է ծանրութիւն և թեթևութիւն. զի թեթևագոյնք են քան զերկիր, և ծանրագոյնք քան զՀուր։ Այլ դադարէ առինչունակ ծանրութիւն տարերին՝ յիջանել նորա 'ի գաւառ ստորին քան զիւրն. զի օդոյ դադարէ ծանրութիւն 'ի ջուր, և ջրոյն 'ի հող[1]։

Ասեմ. Այսպա ուրեմն համարիցիս զօդս ծանր։ Ասէ. Այլ կարի իսկ քաջ, փամփուշտ ուռուցիկ առաւել կշռէ քան զդատարկն[2]։

Ջորեցունց տարերայց չորք կարևոր յատկութիւնք են, ցրտութիւն և ջերմութիւն, ցամաքութիւն և խոնաւութիւն. առաջինք ներգործականք են, յետինք կրականք[3]։ Տարրք իւրաքանչիւր բերէ երկուս 'ի նոցանէ. հող զցուրտ և զչերմ, ջուր զցուրտ և զխոնաւ, օդք զչերմ և զխոնաւ, հուր զցամաք և զչերմ[4]։ Հակառակութիւն յատկութեանցս այսոցիկ արբանեկէ կամայ բնութեան, որ զամենայն ինչ ներհակօք ներգործէ. և սոքա են միջնորդք, որովք յառաջ ածէ զամենայն արգասիս իւր[5]։

Տարերքք, որոց է ինչ հասարակայ յատկութիւն, դիւրաւ փոփոխին 'ի միմեանս. զի շատ է

1 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Դ. գլ. 4. էջ 490։
2 Նոյն անդ։
3 Նոյն, Նշանք օդ. գիրք Դ. գլ. 1. հտ. 1. էջ 583։
4 Նոյն, յղ. ծննդ. գիրք Բ. գլ. 3. էջ 516։
5 Արիստոտ. յղ. բն. լաբելեաց, գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 321։ Պլուտ. ընդդէմ կողոտ. հտ. 2. էջ 1111։

եղծանել 'ի միում յերկոցունց զյատկութիւնն, որով զանազանին 'ի միմեանց[1]։ Այլ եթէ պատճառք ինչ եկամուտք կապտեն 'ի ջրոյ զցրտութիւն և յաւելուն 'ի նա զջերմութիւն, լինի ջուր ջերմ և զէջ բերելով զյատկութիւնս սեփականս օդոյ, և ոչ ևս զանազանի 'ի նմանէ. սակայն իբրև ջուր եռացեալ վերածիսէ 'ի գաւառ օդոյ։ Այս եթէ 'ի բարձունս անդ այլ ինչ պատճառք կապտեալ զջերմութիւն 'ի նմանէ՝ 'ի բնական ցրտութիւնն զնա դարձուցանիցեն, առնու զառաջին տեսակն անդրէն, և յերկիր թօթափեալ վայրաբերի. որպէս յանձրևս ներգործի այս։ Այ՝ սակայն օրինակի և 'ի հողոյ եթէ զբնական ցրտութիւնն բառնայցես, փոխի 'ի հուր. և եթէ զցամաքութիւն, փոխեսցի 'ի ջուր[2]։

Դարձեալ և տարերք՝ որոց չիք ինչ հասարակաց յատկութիւն՝ փոխակերպին յիրեարս, այլ դուն ուրեք և յամի[3]։

Այ՝ առաջարկութեցս այսոցիկ, որ յարդիւնս կամ 'ի մակածութիւն հաստատեալ են[4], 'ի միտ առնուլ է՝ զի մարմինք յօդուածոյք առաւել կամ նուազ գտանին ծանուցեալք ըստ համեմատութեան խառնելոց 'ի նոսա մասանց տարերաց, որոց է տիրապէս կամ առինչունակ ծանրութիւն[5]։ Յեր-

1 Արիստոտ. յդ. ծննդ. գիրք Բ. գլ. 4. էջ 517։
2 Նոյն, Նշանք օդ. գիրք Բ. գլ. 4. հա. 1. էջ 558։
3 Նոյն, յդ. ծննդ. անդ։
4 Նոյն, Նշանք. օդ. գիրք Դ. գլ. 1. էջ 583։
5 Նոյն, յդ. երկնից, գիրք Դ. գլ. 4. էջ 490։

կուց զուգաքանակ մարմնոց եթէ ծանրագոյն իցէ մին քան զմիւսն, իմն զի տարբ հողոյ առաւել է 'ի ծանրագոյնն, և ջուր կամ օդք 'ի միւսն։

Ջուր ցնդի 'ի ջերմութենէ, և սառնու 'ի ցրտոյ. ըստ սմին օրինակի և ամենայն հոսանուտ մարմին, ընդ նովին փոփոխութեամբք գրաւեալ, 'ի նմին տարերէ ըստ առաւելագոյն մասին է խառնեալ։ Ջերմութիւն ցամաքեցուցանէ և կարծրացուցանէ զհող. և ամենայն մարմին որ ցամաքի 'ի ջերմութենէ, 'ի հողային տարերէ ըստ առաւելագոյն մասին է խառնեալ։

Ի գոյութենէ չորից տարերացս, և 'ի կարևոր յատկութեանց նոցա՝ որք են, որպէս ասացի, ջերմ, ցուրտ, չոր և գէջ, յառաջ գան ոչ միայն ծանրութիւն և թեթևութիւն՝ այլ և խտութիւն և անգայտութիւն, կակղութիւն և կարծրութիւն, դիւրաբեկութիւն և ճապկութիւն, և այլ ամենայն հանգամանք յօդուածոյիցն մարմնոց[2]։ Սովաւ մարթ է տալ զպատճառս հանապազորդ փոփոխմանց նոցա, և սովաւ մեկնել զարփային երևմունս և զբերս երկրի. զի ամենք յերկինս[3], և 'ի ծոց երկրի հանաձոյք և հրահրեալք այլովքն հանդերձ, ոչ յայլմէ իմեքէ գոյանան՝ բայց 'ի ցամաք շոգւոյ կամ 'ի գէջ գոլորշեաց[4]։

[1] Արիստոտ. յՂ. Նշանք Դ. գլ. 2. էջ 585։

[2] Նոյն, յՂ. մասանց հոգ. գիրք Բ. գլ. 1. հա. 1. էջ 976։ Նոյն, Նշանք օդ. գիրք Դ. գլ. 10. էջ 597։

[3] Նոյն, Նշանք օդ. գիրք Բ. գլ. 4. էջ 558։

[4] Նոյն անդ. գիրք Դ. գլ. 6. էջ 583։

Ահա քեզ օրինակ, որով յայտնագոյն 'ի միտ առցես զսահման յառաջադրեալ հմտութեանցս։ Ինաբանք պատակտեալ էին 'ի տալ զպատՃառս սասանութեան երկրի. Ներմկրիտոս մի և զայս ածէր պատՃառս, զի յորդութիւնք անձրևաց ընդմտեալ յերկիր, և երբէք երբէք անսանիս-փելի 'ի լայնատարդ ջրամբարսն՝ զորս 'ի ծոց երկրի դնէր, բուռն առնիցեն ելանել արտաքս[1]։ Իսկ Արիստոտել ըստ նոցին յառաջադրեալ օրինացս իմաստասիրէ ընդ հակառակն, զի ջուրք անձրևաց անդայտացեալ 'ի ջերմութենէ որ 'ի ծոց երկրի, և կամ՝ 'ի տապոյ արեգական, փոխին 'ի քանակ մեծ օդոյ. և ոչ գտանելով ելս՝ շարժեալ դողացուցանեն զերկիր, և զվերին երեսս նորա պատառեն[2]։

Նախնի իմաստասէրքն խնդրէին գիտել թէ որպէս եղեն էքս, մինչև ուսեալ թէ զինչ են[3]։ Ատեան բնութեան բացեալ կայր առաջի աչաց նոցա. իսկ նոքա մինչև ընթերցեալ զայն, ձեռն արկին 'ի մեկնել։ Նագան ուրեմն ասպա յետ երկար և ընդունայն դեգերանաց խելամուտ եղեն, զի առ 'ի Ճանաչել զկենդանիս, ըզբոյսս և զազգի ազգի բերս բնութեան՝ հարկ էր հետազօտել զայնս անդուլ պնդութիւն։ Այսուի յառաջ եկին հաւաքումն գնութեանց և գի-

[1] Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 7. հա. 1. էջ 566։

[2] Նոյն անդ. գլ. 8։

[3] Նոյն. յղ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 967 և 968։

տութիւն նոր, ցանկալի, բազմաբեղուն և կա-
բևոր քան զնախնին բնաբանութիւն։ Այլ արդ
եթէ 'ի պարապելոց ոք յայն կամիցի մանաւա-
բել այլոց զարդասիս բազմաժամանակեայ գի-
շերաջան տքնութեանց նուիրելոց 'ի խելամտու-
թիւն բնութեան կենդանեաց, կրկին հասա-
նէ նմա գործ կարևոր, նախ վիպագրի և ապա
մեկնչի։

Օ՚ի պարտ է նմա հանդոյն վիպագրի Հաւել
նախ յաղագս ծննդեան նոցա և մեծութեան և
ձևոյ և գունոյ և մենդեան և բնաւորութեան
և բարուց նոցա. դարձեալ և զանդամոց մար-
մնոյ նոցա անկ է նմա տալ զՀանգամանս, զնեալ
զամենայն մասունս նոցա հերձմամբ[1]։

Իսկ թարգմանօրէն պարտ է նմա ցուցանել
զմեծասքանչ իմաստութիւն բնութեանն[2] 'ի հա-
մեմատութիւն կազմածոյ գործարանաց նոցա ընդ
գործս իւրաքանչիւր, և ընդ տարերն յորում
կեան, և ընդ հոգւոյն որով ունին զկենդանու-
թիւն[3]. և ցուցանել զայն դարձեալ 'ի զօրութիս
յօդից խաղալեաց որք ներգործեն զշարժումն[4],
և 'ի հնարս հայթայթանաց պահպանութեան
և մինչև ինաւորելոյ տեսակաց նոցա իւրաքան-
չիւր[5]։

[1] Արիստոտ. կենդանաբ. գիրք Բ. գլ. 11. հա. 1. էջ 783։

[2] Նոյն, յղ. մասանց հոգ. 'ի բազում ուրեք։

[3] Նոյն անդ, գիրք Ա. գլ. 5. հա. 1. էջ 976։

[4] Նոյն յղ. կենդան. հա. 1. էջ 733։

[5] Նոյն, յղ. ծննդ. հա. 1. էջ 493։

Լրկնային մարմնոցն միշտ էից գիտութիւն, թէպէտ և անձուկ յոյժ, առաւել քան զերկրայնոց եղծանելի էից արծարծանէ 'ի մեզ եռանդն։ Տեսիլ երկնից զոգցես իմն այնպս զօշոտէ զընաղընին իմաստասիրին զաչս, որպէս զեղեցկութիւն ըզտարփաւորի՝ որ առ 'ի ստացուած ըղձալոյն մտադիւք անտես առնէ զամենայն աշխարհ՝։ Բայց թէպէտ և բնաղընութիւն յերկինս հիացուցանէ զմեզ գիւտիցն գերազանցութեամբ, այլ 'ի վերայ երկրի յինքն ձգէ զմեզ յաձախութեամբ գիտութեանցն զոր հայթայթէ մեզ, և փոխարինէ հանդերձ տոկոսեօք զվաստակս մեր 'ի ստացումն նորին։ Օ՛ի զոր բերկրութիւն ոչ խառնէ նա ընդ երկս իմաստասիրին, որոյ գիտելով զի ոչ ինչ գործէ նա ընդունայն[2], 'ի վերայ հասանէ դաղտնեաց նորա, գտանէ ամենայն ուրեք զզրոյմ՝ մեծութեան նորա, և ոչ նմանի խօսէից թեթևամտաց՝ որք ոչ յանձն առնուն խոնարհեցուցանել զաչս 'ի զնին որդան։ Հիւրոց ոմանց եկեալ առ Հերակղիտոս հարցանել զնա մինչ նա առ թրծոցի ուրեք կայր վասն ձմերայնոյն խրստութեան, ամաչեցեալք իմն առ սեամն անդ զկայ առին. և նա ասէ. Ա՝տէք, զի երեսք դիցն անմահից ոչ անարգութիւն հասանին իւրեանց զլինելն աստ։ Ա՝ենվայելչութի բնութեան աղ-

[1] Արիստոտ. յզ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 5. հա. 1. էջ 974։

[2] Նոյն, յզ. երկնից, գիրք Բ. գլ. 11. հա. 1. էջ 463։ Նոյն յզ. կենդան. գլ. 2. հա. 1. էջ 734։

նուացուցանէ յաչս մեր և զանարգագոյնս յէից. ամենայն ուրեք մայրս հասարակաց նովին միով խորին իմաստութեամբն ներգործէ, և անվրէպ հնարիւքն՝ որ յուշ նպատակին հասուցանենցնա՝։

Լինդ ակնարկել ուրուք զաչս 'ի գործս նորա անբաւս՝ 'ի միտ առնու անդէն, զի առ 'ի քննել զնոսա յօգուտ, առ 'ի հասու լինել համեմատութեանց նոցա, և առ 'ի նկարագրել զնոսա Ճշգրիտ, հարկ է դասակարգել զնոսա՝ բաշխելով նախ 'ի սակաւ ինչ սեռս, որպէս 'ի կենդանիս, 'ի բոյսս և 'ի հանածոյս։ Լաւ ասա 'ի քննել զիւրաքանչիւր 'ի սեռիցն՝ խելամուտ լիցի, զի էից յորոց նոքա գումարին՝ են նմանութիւնք և զանազանութիւնք առաւել կամ նուազ զգալիք, և պարտ է բաժանել զնոսա և ստորաբաժանել 'ի բազում տեսակս՝ մինչև ցանհատս։

Դիւրին էր զատիճանս զայսոսիկ կազմել, եթէ զգալի էին տեսակ 'ի տեսակէ անցք նոցա. այլ զի զայս հազիւ մարթ է նշմարել[3], վտանգ է ամենայն ուրեք խառնելոյ ընդ միմեանս զբաժանելիս և բաժանելոյ զխառնելիս։ Լաւ այս թերութիւն է կարգաւորութեանցն, որ մինչև ցարդ արարան[3]. զի 'ի ցուցակս ուրեք բաժանմանց գտանին անակնկալ կէսք 'ի թռչնոց դասեալ

1 Արիստոտ. յՊ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 5. հտ. 1. էջ 975։

2 Նոյն, կենդանաբ. գիրք Ը. գլ. 1. հտ. 1։

3 Նոյն, յՊ. մասանց հոգ. գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 9։

ընդ ջրային կենդանիս կամ ընդ այլ օտար տեսակս։ Յորինողք ցուցակացս այսոցիկ սխալեցին յօրէնս զիտութեանն, ըստ միոյ 'ի մասանց զլոլորէն առնելով դատաստան. զի զԹեւս հանսրեալ 'ի տեսակարար զանազանութիւն, բաժանեցին զկենդանիս առ հասարակ յերկուս սեռս մեծամեծս՝ 'ի Թեւաւորս և յանԹեւս, ոչ զմնաւածեալ՝ զի և 'ի նորին իսկ տեսակի յանհատս, զոր օրինակ 'ի մրջմունս, զտանին Թեւաւորք և անԹեւք։

Բաժանումն կենդանեաց յընտանիս և վայրենիս, Թէպէտ և ընդունելի առ ոմանս 'ի բնաբանից, սակայն և այն է Թերի. զի այնուհետև մարդ, և կենդանիք՝ զորս զիտացնա ընտանեցուցանել, ոչ ևս ընդհատք իցեն տեսակաւ 'ի մարդոյ 'ի ձիոյ և 'ի շանէ՝ որ յանտառս կեան[2]։ Այլ է ճշգրիտ բաժանումն, որ ոչ իրական ինչ դնէ զանազանութիւն 'ի բաժանեալս. և ոչ է զանազանութիւն տեսակարար, եԹէ ոչ ընդ միով տեսակաւ բովանդակէ զամենայն անհատս այնր տեսակի[3], այս ինքն զհամանմանս կամ որք փոքր 'ի շատէ զանազանին։

Այս քանզի յոյժ դժուարին են պայմանքս այսոքիկ[4], խորհեցաւ Արիստոտել այլ ինն օրինակ

1 Արիստոտ. յդ. մասանց հոդ. գիրք Ա. գլ. 3. հա 1. էջ 971։

2 Նոյն անդ, էջ 972։

3 Նոյն անդ, էջ 971։

4 Նոյն անդ, գլ. 4. հա. 1. էջ 974։

բաժանման, որ զամենայն կատարելութիւնս բե-
ւեռ յինքեան՝ առանց թերութեանց յառաջա-
դրեալ կարգացս։ Զ որ և բացատրեսցէ 'ի միում
ուրեք 'ի Ճառիցն[1]։ և Ճառն այն լիցի աներկբայա-
պէս գործ արժանի առն երկասիրի՝ որ ոչ ան-
փոյթ առնէ զլուիքն, և առն հանճարեղի՝ որ զամե-
նայն ինչ տեսանէ*։

Ի զնութեանցն զոր հանդերձեալ է 'ի մա-
տեան անդր պատմութեան կենդանեաց գան-
ձէ՝ ինչ ինչ եցոյց ինձ, զոր և ես ցուցից քեզ, զի
'ի միտ առցես զօրինակ այժմու ախտաբակաց գի-
տութեանս.

Ա. Ակատեալ զկենդանիս ըստ աշխարհացն
յորս բնակեն, վայրենիքն 'ի նոցանէ գտանին ա-
մերիկացիք Ասիա, հզօրագոյնք Եւրոպա, և
առաւել այլակերպք Աֆրիկէ, ուր ըստ առա-
կին՝ նորանորք միշտ ծնանին հրեշք[2]։ Լեռնա-
կանք փնասակարագոյնք քան զդաշտայինս են[3].
այլ այս խտիր զանազանութեան նոցա 'ի վայրացն
արդեօք բնակութեան նոցա իցէ, թէ առ 'ի
չգոյէ կերակրոց, ոչ է գիտելի. քանզի Եգիպ-
տոս բազում աղգի աղգի գազանք պահէին, և
վայրենագոյնք 'ի նոցանէ և հեզագոյնք խաղա-
ղութեամբ կան 'ի միասին, և տիտեռն քծնի

1 Արիստոտ. կենդանաբ. հտ. 1. էջ 761։

* Զառաջարկութիւնս զայս քաջ պարզաբանէ Պլուտարքոս 'ի յառաջաբան առաջնոյ մա-
տենի բնապատում գրոցն։

2 Արիստոտ. անդ, գլուխ Ը. գլ. 28. հտ. 1. էջ 920։

3 Նոյն անդ, գլ. 20. էջ 920։

զձեռամբ քրմին՝ որ մատուցանէն նմա զՋամբն՝։

Ա.զգեցութիւն մեծ է նահանգին՝ի բարս նոցա[2]. զի կարի ցուրտ և տօթ կարևոր, առնեն զնոսա վայրագս և անգութս[3]. և է ուրեք՝ զի հողմք և ջուր և ձարակ բաւականք են՝ի զայրացուցանել զնոսա[4]։ Ա.զգք հարաւայինք երկչոտք են և վատասիրտք, իսկ հիւսիսականք արիասիրտք և խիզախք. այլ նոքա դիտնագոյնք են կամ վասն երիցութեանն, և կամ թերևս զի առաւել մեղկեալ գտանին. զի ոգիք քաջաց դուն ուրեք փորձին յանժոյժ ըղձից ուսումնասիրութեան[5]։

Որք զխտիր զանազանութեանցս այսոցիկ ներգործեն՝ի բարս մարդկան, նոյնք և՝ի կազմած գործարանաց նոցա ազդեն։ Որում և այն իսկ հաւաստիք են, զի՝ի ցուրտ գաւառս յաճախագոյնք են աչք կապուտակք, իսկ՝ի ջերմ գաւառս սեւաք։

Ռ. Յոյժ զգայականք են խստութեանց եղանակաց թռչունք[6]. ՝ի մերձենալ ձմերայնոյն կամ ամարայնոյ կէսք ի՝ջանեն՝ի դաշտս կամ՝ի լերինս խոյս տան, և կէսք չու արարեալ գնան՝ի տար աշխարհ՝ շնչել զօդ քաղցրախառն. որպէս թագաւորն Պարսից մերթ՝ի հիւսիս և մերթ՝ի հարաւ կոյս սահմանաց հնչնակալութեան

1 Արիստոտ. կենդանաբ. գիրք Թ. գլ. 1. հտ. 1. էջ 923։
2 Պղատ. յղ. օր. գիրք Ե. հտ. 2. էջ 747։
3 Նոյն, առաջարկ. յօդ. 14. հտ. 2. էջ 750։
4 Պղատ. անդ.։
5 Արիստոտ. անդ. էջ 752։
6 Նոյն, կենդանաբ. գիրք Ը. գլ. 12. հտ. 1. էջ 908։

իւրոյ զարքունեան փոխէ, յանբաւից հրաժարեալ 'ի ցրտոյ և 'ի տօթոյ։

Զուսոյ և դարձի Թուշնոյ սահմանեալ է ժամանակ յաշնայնոյն և 'ի գարնանոյ զուգօրութիւնս։ Ցկարագոյնք 'ի նոցանէ կարապետք լինին, և գրեթէ ամենեքին առ հասարակ ուղեկիցք, գոգցես իմն ըստ ցեղից կարաւան կազմեալ։ Այն՝ որոց երկայն իսկ ուղի առաջի կայ մինչև յուշ եղեալ տեղին. քանզի խորդք 'ի սկիւթացւոց աշխարհէն գան, և գնան յաղտիւրս 'ի վերնագաւառս Այգիպտոսի՝ ուստի 'Լեղոսն բղխէ, և ուր Թզուկքն բնակեն անդ։ Այն իբրև լուայ, ասեմ. Լաւ է, և համարիցես Թէ զուցեն իսկ Թզուկք, և Թէ Ճակատ ընդ կոնկանցն տայցեն խուսքս որպէս յաւուրս Հոմերի [2]։ Այսկղիդէս ասէ. Ճակատամարտն այն կեղծիք քերթողին են, անընդունելի բնապատում վիպագրին [*]. բայց Թզուկք գոն իսկ, ազգ կարճահասակ մարդկան՝ մանուանք յոյժ որպէս զձիանն իւրեանց. սեւագոյնք մարմնով, և 'ի քարածերպս բնակեալք հանգոյն Ցրոգղոդիտացն անձաւամոլից [3]։

Այս յաւելեալ Այսկղիդեայ 'ի բանս իւր, ասէ.

1 Փանոնի. կարգադր. Կիւր. գիրք Ը. էջ 233։ Պլուտարքոս. սքսոր. հա. 2. էջ 604։

2 Հոմերի. Եղեակ. գիրք Գ. տող 4։

* Զեր 'ի գիրս Արիստոտելի առասպելիս այսորիկ յիշատակ, և տարապարտ եղելոցն զնա ոմանք 'ի մասանդագրաց՝ լատին Թարգմանչին հաւատս ընծայեալ։

3 Արիստոտ. կենդանաբ. գիրք Ը. գլ. 12. հա. 1. էջ 907։ Երոդոտ. գիրք Բ. գլ. 32։ Նոնոս առ Փոտայ, էջ 8։ Կտեսիաս առ Նոմին, էջ 144։

Լչ. որ ստիպէն զԹուչունս ամի ամի տարադէմ պանդխտել, նոյն և 'ի խորս ջուրց աղդէ զորու-թիւն։ Օր 'ի Բիւզանդիոն եԹէ գնայցես, տեսցես զՀոյլս աղդի աղդի ձկանց՝ որ սահմա-նեալ ժամանակաւ երԹևեկին, մերԹ յեւքսի-նեանն եղեալ Պոնտոս, և մերԹ յեդէականն ի՛ջեալ 'ի ծով։ Լդրամոլին իբրև զԹուչունս գնան. և Ճանապարհ նոյ, հանդոյն կենցաղոյս լի է Թա-կարդիւք՝ որ դարանին նոցա յանցս։

Գ. Լդէն զչափոյ կենաց կենդանեացն խոյզ և խնդիրք, և Թուի իրացն 'ի յայտ եկեալ՝ զի էդք յոլովից տեսակաց երկարակեաց ՝ զարուս գտա-նին։ Լ.յլ առանց կալոյ 'ի խտիրս յայս, տեսա-նեմք զի շունք զամն չորեքտասան կամ հնգետա-սան և մերԹ ևս մինչև ցամն քսան ձգէն զկեանս [1], և արջառք գրեԹէ հաւասար նոցին [2]. 'ի ձիոց բազմազդոյնք զամն ուԹևտասն կամ քսան, կէսք երեսուն, և ոմանք մինչև ցյիսուն [3]. էշք առա-ւել քան զերեսուն [4] *. ուղտք առաւել քան զյի-սուն [5] **, է զի և մինչև ցհարիւր ամ [6]։ Փիղք

1 Արիստոտ. կենդանաբ. գիրք Զ. գլ. 20. էջ 878։ Պլինիոն, բնապատմ. հտ. 5. էջ 223։

2 Արիստոտ. անդ, գլ. 21. էջ 879։

3 Նոյն անդ, գլ. 22. էջ 880։

4 Նոյն անդ, գլ. 23. էջ 881։

* Ըստ Պլինիոնի և էշք հան-դոյն ձիոց կեան զամս քսանև-հինգ կամ երեսուն։ (Բնապատմ. հտ. 4. էջ 226։)

5 Արիստոտ. անդ, գլ. 26. էջ 882։

** Ըստ Պլինիոնի զամս քա-ռասուն կամ յիսուն։ (Հտ. 2. էջ 239։)

6 Արիստոտ. անդ, գիրք Ը. գլ. 9. էջ 906։

ըստ ոմանց՝ ցան երկերիւր, և ըստ այլոց՝ մինչև ցերեքարիւր ամ երկարակեացք լինին[1]։ Կարծիք էին առ հինս՝ եղջերուի զքառասպատիկ կենաց ազդաւու կեալ, և ազդաւու զիննպատիկ կենաց մարդոյ[2]։ Այլ արդ առաւելքան զայս չէն մեզ հաւաստիք զկենաց եղջերուի, զի սաղմին նորա 'ի սուղ ժամանակի կենդանասերիլ, և արագ աճեցումն նորա ոչ ներեն երկայնակեաց յոյժ զնա կարծել[3]։

Այ. ուրեք, զի բնութիւն զարտուղի 'ի սովորական օրինացն։ Որում և աթենացիք ածեն օրինակ զջորին ուղնամեայ. զոր յաւուրս շինուածոյ մեհենին Աթենասայ ազատ կացուցին յաշխատութենէ վասն կարի ծերութեանն, այլ նա առաջնորդէր այլոց՝ խրախուսել զնոսա օրինակաւն իւրով, և վաստակակից լինել նոցա. և ժողովուրդն հրովարտակ արար, արգելեալ վաճառականաց մի զնա վարել 'ի բաց՝ 'ի մատչել նորա 'ի կողովս ցորենոյ և պտղոց եդեալս 'ի վաճառ[4]։

Դ. Անութիւնն, որպէս ասացի, սեռէ 'ի սեռ և տեսակ 'ի տեսակէ անզգալի գործէ անցս[5]. և 'ի մարդոյ մինչև 'ի տրուպս յէից անհնամարելիս եամ արգասիք նի շղթայաբար զմիմեանց ունին։

1 Արիստոտ. կենդանաբ. գիրք Ը. գլ. 9. էջ 906։

2 Եսիոդ. առ Պլուտ. յղ. Թերութեանց պատգամաց, հտ. 2. էջ 415։

3 Արիստոտ. անդ, գլ. 29. էջ 883։

4 Նոյն անդ, գիրք Զ. գլ. 24. էջ 882։ Պլին. գիրք Ը. գլ. 44. հտ. 1. էջ 470։

5 Արիստոտ. անդ, գիրք Ը. գլ. 1. էջ 897։

Կալցուք զՀրահալը, որ են իբր առաջին օղք շղթային. զի ինչ տեսանել 'ի նոսա, բայց նիւթ անշարժ, ամուլ, անպտղաբարտ, վասն որոյ և անկարօտ և անգործ։ Այս յոմանս 'ի բուսոց նշմարեմ շարժումն ինչ, զգացումն աղօտ, կայծակն կենաց. և յամենեսին զարգասաւորութիւն սերտ, առանց մայրենի խնամոց օժանդակութեան։ Արատուցեալ 'ի ծովեղը, հաւանիմ ընդ երկբայս՝ թէ յոր սեռ զիանջնիսիդ դասելի իցէ, 'ի կենդանեաց թէ 'ի բուսոց. դառնամ այսրէն, և տակաւ յաձախեն յաչս իմ նշանակք՝ կենդանութեան։ ահա էակք՝ որ շարժին, շնչեն, զգաւծին և կարօտին։ Կէսք 'ի նոցանէ հանգոյն բուսոց զորոց ասացի, անդստին 'ի տղայութենէ քքեալք բաստին, և կէսք դաստիարակեալ առաւել կամ նուազ խնամովք։ Աղուէք 'ի նոցանէ զնկարագիր բարուց մերոց բարձեալ բերեն. գտանեմ 'ի նոսա բարս համբոյրս, գտանեմ և անդուաձելիս. գտանեմ զկերպարանս հեզութեան զարիութեան զյանդգնութեան զանգութեան զերկիւղն զվատութեան, է ուրեք՝ զի և զխոհեմութեան իսկ և զբանականութեան նշմարանս։ Այնք զիմացականութիւն զիմաստութիւն և զարուեստս յանձին բերեմք, նոքա զօրութիւնս՝ որք զթերին յոլովութեանցս ընդն[1]։

Այս կարգ համեմատութեանց ածեալ հա-

[1] Արիստոտ. կենդանաբ. գիրք Ը. գլ. 1. հա. 1. էջ 897. գիրք Թ. գլ. 7. էջ 928։

սուցանէ զմեզ 'ի ծայր շղթային, ուր մտրդն է հաստատեալ։ Ի հանգամանս նորա, որովք զա-ռաջին ունի տեղին, տեսանեմ կարևորագոյն եր-կուս. զիմացականութիւն՝ որ 'ի կենդանութեան ամբառնայ զնա յերկնային դեղերմունս[1], և զբա-ղեալարանը կալմամբ զգայարանաց նորա՝ մնաս-ւանդ զշօշափելեացն, որ է առաջին և կարևորա-գոյն և աղնուականագոյն 'ի նոսա[2], օժանդակ Ճարտարութեան և դիպողագոյն գործի մտաց։ Ի Լանգի ձեռք, ասէր իմաստասէրն Նաքսագոր, ընծայեն մարդոյ զգերակայութեանն նորա ոչ գոյգն ինչ մանս[3]։

Լ. ընդէ՞ր, ասեմ, 'ի ծայր շղթային զետեղեաս զմարդ. իսկ անջրպետն անբաւ, որ բաժանէ ընդ նա և ընդ աստուած, միթէ անապատ իցէ ա-մայի ընդարձակ վայրն. եգիպտացիք, մոգք քաղ-դեայք, փարիզացիք և թրակացիք ընուն զայն բնակչօք, գերակայիւք քան զմեզ որչափ մեք քան զանբանս[4]։

Լ. Կղեմդէս ասէ. Օ՜ երևելեաց և եթ խօսե-ցայ էից. այլ 'ի դէպ է կարծել զի իցեն և 'ի վեր քան զմեզ անբաւութիւն էակաց աներևու-

1 Արիստոտ. յղ. յիշատ. գիրք ԺԸ. գլ. 9. հա. 2. էջ 140։
2 Նոյն, յղ. մասանց հոգ. գիրք Բ. գլ. 8. հա. 1. էջ 987։ Նոյն, յղ. զգայ. գլ. 4. հա. 1. էջ 668։ Նոյն, կենդանաբ. գիրք Ա. գլ. 15. հա. 1. էջ 773։
3 Նոյն, յղ. եղբայրսիր. հա. 2. էջ 479։
4 Արիստոտ. բնազանց. գիրք ԺԴ. գլ. 4. հա. 2. էջ 1003։ Պլուտ. յղ. թերութեանց պատգ. հա. 2. էջ 415։

թից։ Ի թանձրագոյն յԿէն ը վերելս անզգալիս հասաք 'ի մարդկեղէնս տեսակ. այլ աստի և 'ի վեր մինչև ցաստուածեղէն բնութիւնն պարտ իցէ արդեօք անցանել ընդ բազում կարգս իմանալեաց գերափայլից և մաքրոց ըստ չափոյ մերձաւորութեանն յաթոռ աստուած պետականին։

Կարծիքս այս համեմատ կարգաց բնութեան, է և հինաւանդ յաշգս առ հասարակ, յորոց և մեք զայն ընկալաք։ Ա՝եօք ընդ երկիրս, իսկ երկինք իմանալեաք՝ որոց էն գերաբուն յանձն արար վարել զտիեզերս '։ Համարիմք զնոսա բաշխեալ ամենայն ուրեք՝ ուր բնութիւնն բերէ յինքեանն գկենդանութիւն, բայց մնաւանդ 'ի վայրս՝ որ զմեօք շուրջանակի և 'ի վերկոյս մինչև 'ի պարունակն լուսոյ տարածանին։ Ընդ վարելով նոցա իշխանութիւն անսահման, բաշխեն գկեանս և զմահ, զբարիս և զչարիս, զլոյս և զխաւար։

Ազգայ իւրաքանչիւր և իւրաքանչիւր ուրուք է մի յաներևութից աստի էից բարեկամ՝ փոյթ 'ի պաշտպանել զնա, և թշնամի՝ փոյթ 'ի հալածել։ Ա՝արմինք օդեղէնք էն նոքա², և էութիւն նոցա միջասահման ընդ մերս և ընդ աստուածեղէն բնութիւնն³։ Ա՝ էհագոյնք էն քան զմեզ մտօք. կէսք

1 Պիւթագ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 32։ Թաղէս առ Նմին գիրք Ա. յօդ. 27։ Նոյն, առ Արիստոտ. յՀոգ. գիրք Ա. գլ. 8. հա. 1. էջ 628։ Նոյն առ Պիկեր. յՍ. օր. գիրք Բ. գլ. 11. հա. 3. էջ 145։ Պլուտ. յՍ. օր. գիրք Ժ. հա. 2. էջ 899։

2 Պլուտ. յՍ. Թերութեանց պատգ. հա. 2. էջ 431։

3 Նոյն անդ, էջ 415։

'ի նոցանէ իբրև զմեզ նեղքոյ անկեալ կրից, և բազմագոյնք փոփոխութեանց՝ որովք 'ի վերնա-զոյն անցանեն կարգս։ Օ. Ի անթիւ աղգ հոգւոց բաժանի 'ի քառեակ զլիաւոր դասս. առաջին, զոյն որ բնակեն յաստեղս, և պաշտին 'ի ժողովրդեանէ. երկրորդ, իմաստասէրացն տիրապէս կոչեցելոց. երրորդ, զիւցազանացն՝ որք 'ի կենդանութեան բարերարեցին մարդկան. և չորրորդ, մարդկեղէն հոգւոցս՝ 'ի բաժանեալն 'ի մարմնոց։ Յոլոց առաջնոց կարգացն սահմանեմք պատիւս, որ յաւուր միում մեզ վիճակեսցին, և դասակիցս զմեզ զիւցազանացն և իմաստասէրաց և զոյն կացուսցեն[1]։

Յուկղիդէս ոչ առաւել քան զնս խելամուտ պատճառաց վերապատուութեանցս այսոցիկ, յաւել զի ոմանք յիմանալեաց վիշտս իբրև զմեզ կրիցեն, և որպէս զմեզ 'ի մահ դատապարտեալ լիցեն[2]։ Հարցի թէ չափ կենաց նոցա քանի՞ ինչ ամք լիցեն, և ասէ. Յաւերժահարսունք ըստ Լսիոդեայ, զամն բիւրաւորս երկարակեացք լինին. և Համադրիադք ըստ Պինդարոսի, ընդ ծառս յորս կեանն՝ վախճանին[3]։

Յաւելն և ասեմ. Կարեւոր իսկ էր գիտել, թէ պէտ և ոչ ոք 'ի ցանկալի խնդիրս յայս պարապեաց, թէ որպիսի՞ ինչ իշխանութիւն իմացու-

1 Եսիոդ. առ Պլուտ. յղ. թեր. պատգ. հտ. 2. էջ 415։ Պլութարգ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յոգ. 23։

2 Պլուտ. յղ. թերութեաց պատգ. հտ. 2. էջ 419։

3 Նոյն անդ, էջ 415։

թիւնքս այսոքիկ վարեն 'ի վերայ մեր. թերևս բաղումինչ 'ի գործոց, որոց անգիտելի են մեզ պատճառք, 'ի նոցանէ գործիցին. թերևս նոցին իցեն արգասիք դէպք անակնկալք, 'ի պատահարս բախտին և քաղաքականութեան։ Այլ ընդէր իցէ ինձ թանդուզել. տաղտկացեալ եմ 'ի պատմութենէ իրաց մարդկան, իցէ թէ զիմանալեացն գրեր ոք զվէպս։ Այգիդիէս ասէ. Հաւասիկ որ կարէին քաջահմուտ առնել զքեզ։

Այլ ահա եմուտ անդր 'ի ներքս Տելեսիկղէս պիւթագորական. որոյ տեղեկացեալ զորոց ինչ իրաց խօսակցեաքն, զարմանայր իմն՝ զի ասէաք թէ չիք մեր տեսեալ զոք յիմանալեացն'։ Պապաքէն չհաղորդին նոքա, ասէ, ընդ ումեք՝ բայց պատրաստելոցն առ նոսա 'ի բաղում ժամանակաց խոկմամբ և աղօթիւք։ Պապ պատմեաց, զի ինամակալն իւր դեռ երբէք երբէք երևէր նմա. և զի յաւուր միում ըստ յոգնաթախանձ մաղթանաց իւրոց, ածաւ՝ ինմանէ 'ի գերաշխարհն 'ի բնակարան հոգւոց։ Իսկ ես ասեմ. Արժանի արա զիս լսելոյ զերկնաւոր ուղղորդութիւնդ քո, աղաչեմ զքեզ յանուն ուսուցողին քեզ զզօրութիւն թուոցն ա, բ, գ, դ.[2*]։ Ել ևս կարաց Տե-

1 Արիստոտ. առ Ալեքս. յզ. ՝ՅՅն Սոկրատայ. հտ. 2. էջ 83։

2 Յամբղիկ. գլ. 28. էջ 127. գլ. 29. էջ 138։ Պիւթագ. ոսկ. տող. տող 47։

* Այս ինքն է յանուն Պիւթագորայ, զի սովին ձևով երգման վարէին աշակերտք մեծի առնն, որ զգաշնակս համեմատութեան թուոցս եգիտ։

լեսիկղէս անտես առնել զաղաչանս իմ, խօսեցաւ և ասէ.

Երբև ժամ եղև չուց, զգացի խղելոյ կապանայն՝ որ զՀոգի ընդ մարմին զոդէն յիս. և գտայ յաշխարհ նոր, 'ի մէջ կենդանեաց էից յորս էին բարիք և չարք[1], զուարթերեսք և խոժոռադէմք, խոհականք և ապուշք։ Զ հետ եղաք նոցա առ վայր մի, և թուէր ինձ՝ յանձանձել նոցա զոգուտ պետութեանց և զիւրաքանչիւր ուրուք, և զնոսին դիրս իմանասնոց և զկարծիս ռամկին[2]։

Ապա կին մի հսկայաձև տարածեաց զքօղ իւր սեաւ ընդ կամարաւ երկնից, և հեզիկ ի՝ջեալ յերկիր՝ ետ պատուէրս պաշտօնէից իւրոց, որ զՀետ գնային նմա։ Ի տունս բազումս յարամբի 'ի ներքս մտաք. քուն և արբանեակք նորա սփռէին անդ լիաբուռն զմեկն, լռութիւն և խաղաղութիւն բազմէին սիրով առընթեր առաքինւոյն, և խիղճ մտաց և խուճապք անդրհականք սաստկապէս զմահինս անօրինին շարժեալ տատանէին։ Պղատոն զրէր զթելադրութիւնս դիւին Հոմերոսի, և երազք զուարձալիք թևապարէին զսրիոդաւն Լիկորեաւ։

Նա կարապետն իմ ասէ ցիս. Քրշալոյսն և ժամք բանան զասպարէզ աւուրն, ժամ է մեզ

1 Թագէս. Պիւթագ. Պը. զատ. առ Պլուտ. յԼ. խաղաղ. խմաստաս. գիրք Ա. գլ. 8. հտ. 2. էջ 882։

2 Մոշեմ 'ի Քուտվորթ, գլ. 4. յօդ. 34. էջ 798։ Պրուքք. պատմ. խմաստաս. հտ. 1. էջ 1113։

ամբառնալոյ յօդս։ Մինչ դեռ խնամակալք Ա-
թենայ և Կորնթոսի և Սպարտայ սուտառնին
զբաղաքաքն[1], և Ճախիր առեալ շուրջանակի վա-
րեն 'ի բաց զորս և կարէն 'ի չարեաց՝ որ սպառ-
նան նոցա. սակայն դաշտք նոցա դնին յապակա-
նութիւն, զի դեռ հարաւոյ դարանեալք յամսոյ
խիտս դիմեն սպառնալեաքն ընդդէմ հիւսիսայ-
նոց։ Յաճախեն և 'ի գաւառս յայսոսիկ պատե-
բազմունք, որպէս 'ի ձերոդ. և Տիտանանցն և
Տիւփոնայ Ճակատամարտք, դիւազունդ բանա-
կայ էին բազխմունք[2]։

Հայեաց արդ 'ի ժիր արբանեակսդ, որ հան-
գոյն ծիծռանց սրաթռիչ և անդադար թեւածեալ
զերկրաւ՝ պարագիտեն խորաշնին և հետազօտ ա-
կամբ. մք են տեսուչք իրաց մարդկան։ Եկեալ աղդ-
մունս հեզաբար ներգործեն 'ի մահկանացուս՝ ո-
լոց խնամարկեն, և կեալ զանսողբելին Նեմե-
սիս 'ի վերայ չարագործաց արձակեն[3]։ Տեսա-
նեն զՀրեշտակսդ և զթարգմանս, որ եղեալքս առ-
նեն անդադար. դոքա են, որ զուխտս ձեր և
զնուէրս մատուցանեն դից, և ածեն ձեզ 'ի
նոցանէ երազս բարեգուշակս կամ չարագոյժս[4],

1 Պաւսան. գիրք Ը. գլ. 10. էջ 620։ Կղեմ. ալեքս. յորդ. առ հեթ. էջ 35։

2 Պլուտ. յղ. Խոս. հտ. 2. էջ 360։ Նոյն, յղ. Թերու. թեանց պատգ. էջ 421։

3 Տիմ. Լսկր. 'ի գործս Պղատ. հտ. 3. էջ 105։

4 Պղատ. 'ի խրախճ. հտ. 3. էջ 203 և 204։ Պլուտ. յղ. Խոս. հտ. 2. էջ 361։ Նոյն, յղ. Թերութեանց պատգ. էջ 416։ Դիոդ. ալեքս. գիրք Ը. յօդ. 32։

և զգաղտնիս հանդերձելոյն՝ որ ասպա յայտնին 'ի ձեռն հրամանաց պատասխանուց։

Յայնժամ ձայն բարձեալ, ասեմ. Ո՛ ոգի խնամակալ, ահա հասանեն առ մեզ էակք ահարկուք յաղթահասակք և դժկերպք։ Լաւ նա ասէ. Փախիցուք, դոքա են ոգիք թշուառականք՝ ոչ ոց դժպհի է բարեբաստութիւն այլոց, և չինայեն յոք՝ բայց միայն որք 'ի վիշտս կեան և յողբս[1]։

Խոյս տուեալ 'ի մոլեգնութենէ նոցա, և ահա պատահեցաք այլոց՝ ոչ ինչ նուազ դժնդակաց։ Յանտն Լտէա, աղբիւր անսպառ հերձուածոց՝ որ յուզեն զմարդիկ, Ձեմէր սիգաբայլ 'ի վերոյ գլխոց նոցա, և Ընէր 'ի սիրտ նոցա թշնամանս և վրէժխնդրութիւն[2]։ Լհաբեկ և ակնկոր զՀետ նորա սողեալ գնային աղաչանք, ողբելով զնա ուր հերձուածք յառնէին[3]։ Փառք փախստական գնային հալածեալ 'ի նախանձուէ, որ անձամբ զանձին զկողս կեղեքէր. և Ձնմարտութիւն հալածեալ 'ի կեղծաւորութենէ, որ յար զդիմակն փոփոխէր. և առաքինութիւն իւրաքանչիւր 'ի բազմահոյլ յոռութեանց, որ որոգայթս կամ սուսերս բարձեալ բերէին։

Տեսի յանկարծ և զբախտն, և 'ի գոհանալն իմում զնմանէ վասն պարգևացն զոր բաշխէ

1 Քսենոկր. առ Պլուտ. ժԹ. տող 91։ ՅՂ. Խախ. հտ. 2. էջ 361։
2 Հոմեր. Եղիակ. գիրք 300։
3 Նոյն անդ. գիրք Թ. տող.

մարդկան, ասէ ցիս սատանա. Ղպարզևեմ երբէք ուժէք ինչ, այլ փոխ տամ ծանր տոկոսեաք՝։ Եւ զայս ասելով, Թանայը աջոմն միրգս և ծաղկունս 'ի բաժակ Թունալից՝ զոր 'ի ձախումն ունէր։

Ինչին տպա առ մեօք երկու 'ի դիցն հզօրք, Թողլով զհետ իւրեանց շաւիղ լուսաւոր. և առաջնորդն իմ ասէ ցիս. Սոքա են Արիան ամենի և խոհականն Աթենաս. բանակք երկու ձակատին առ միմեանս 'ի Ախոլտիա. աստուածուհին ինքանէ կալ առընթեր Լպամենոնդայ զօրավարին Թեբացւոց, և աստուածն փութայ յօգնութիւն սպարտացւոց՝ որոց պարտութիւն առաջի կայ. զի պարտ է իմաստութեան յաղթանակել 'ի վերայ քաջութեան։

Հայեաց յերկոսին դևսդ որ յերկիր վայրաբերին, մին բարի և միւսն չար. դոքա գնան իշխել մանկան միոյ նորածնելոյ, և ընկերել նմա մինչև ցգերեզման։ Այժմ ընդ հակառակս միմեանց հնարին զեղուլ 'ի նա զամենայն լաւութիւս կամ զամենայն յոռութիւնս սրտի և մտաց, և յընթացս կենացն հնարեսցին ձգել զնա 'ի բարին կամ 'ի չար, ըստ զօրանալ ազդեցութեան միոյ յերկաքանչիւրոցն քան զմիւսոյն[2]։

[1] Բիոն. առ Սատր. Ճառ. 103. էջ 563։

[2] Եմպեդոկլ. առ Պլուտ. յՀ. խաղաղ. հոդ. հա. 2. էջ 474։ Քսենոկր. և Պլատ. առ Նմին, յՀ. Թերութեանց պատգ. էջ 419։

Տեսանէի անդ և ահա երանէին և իջանէին այլ էակք, որոց տեսիլ Թանձրագոյն քան զդիւացն Թուէր ինձ. և գիտացի զի էին հոգիք՝ որ գնային միանալ ընդ մարմնս մահկանացուս, կամ 'ի մարմնոց լուծեալ գային։ Եւ ահա երևեցան գունդագունդ բազմութիւնք, որ զհետ միմեանց փոքու խտրոցաւ անջրպետեալ գային, և սփռէին ընդ դաշտս երկնից, որպէս որ 'ի դաշտս մեր փոշին զորշ դիզադէզ մրրկեալ։ Եւ ասէ ցիս ոգին. Ահա սկսաւ պատերազմն, հեղեղք գնան արեանց. կոյր և Թշուառ մահկանացուաց ազգ։ Ահաւասիկ հոգիք սպարտացւոց և Թեբացւոց՝ ընդ դաշտս Լևկտրայ անկելոց։ Եւ ասեմ. Յո՞վ երԹան։ Ասէ. Եկ զկնի իմ, և գիտասցես։

Եւ անցեալք ընդ սահմանս իշխանութեան խաւարի և մահու, և վերաբերեալք քան զպարունակ լուսոյ, հասաք 'ի գաւառս ուր ծագէ տիւ մշտնջենաւոր. և ասէ ցիս ոգին որ առաջնորդէրն ինձ. Կացցուք աստ առ վայր մի, և տես շուրջանակի զմեծավայելուչ տեսիլդ, լուր զաստուածարեալ ներդաշնակութիւնդ՝ որ զերկնաչեմ մարմնոցդ վարէ զյարմարաւոր ընԹացս[1]. տես զիարդ մոլորակաց իւրաքանչիւր և միոյ միոյ յաստեղաց է վարիչ իմաստալի. և յաստեղս անդ բնակեն հոգիք քան զմերսն գերաբուռք։

Արինչդեռ ակնկառոյց սլուցեալ յարեգակն,

[1] Յամբլիկ. յղ. վարուց Եմպեդոկլ. առ Պորփիւր. յղ. Պիւթագ. գլ. 15. էջ 52։ վարուց. Պիւթագ. էջ 35։

և հիացեալ կայի 'ի զնին դիւին՝ որ հզօր բաղ-
կաւ վարէր զլուսապայծառ գունդն ընդ ասպա-
բեղն զոր բոլորէ [1], տեսի զի մերժէր ցասմամբ 'ի
բաց զբաղումս 'ի հոգւոցն հանդիպելոց մեզ, և
սակաւուց ոմանց ներէր ընկղմել 'ի լուսեղէն
յորձանս աստեղն [2]։ Այլ ասէր ցիս առաջնորդն
իմ. Որքա՜ն նուազունքդ սակաւամեղք քան զայլսն
են, և սրբեալք 'ի բաց անդր՝ սլացին ապա յայլ
և այլ աստեղս, յորս բաշխեցանն 'ի ստեղծմանէ
տիեզերացս. և կացցեն անդ յաւանդի մինչև օ-
բէնք բնութեան կոչեսցեն զնոսա անդրէն յեր-
կիր, միանալ ընդ այլ մարմնոս [3]։ Հարցի և ասեմ.
Լակ մերժեալքդ այդոքիկ զինչ լինիցին։ Այսպէս
Այրթիցեն 'ի ձորն դատաստանի, և դատաւորք
անաչառք զանօրինագոյնս 'ի նոցանէ մատնեսցեն
'ի տանջանս Տարտարոսին [4], և զայլս 'ի տաժա-
նաւոր և յանեզրական ընթացս։ Այլ դարձոյց
զիս տեսանել զբիւրս բիւրուց հոգւոց՝ որք 'ի
բիւրաւոր ամաց թափառեալ զնային թախծագին
Ելերկինս, վաստակաբեկք 'ի զուր ջանիցն գտանե-
լոյ ապաստան 'ի միում ուրեք յերկնաձեմ գլխ-
դացն [5]։ Այլ ասէ ցիս. Ոչ յաջողեսցի դոցա և ոչ

1 Պղատ. յլ. օր. գիրք ԺԵ. հտ. 2. էջ 819։
2 Պորփիւր յլ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 10. էջ 329։ Պրոկլ. պատմ. խմատտաս. հտ. 1. էջ 296։
3 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 42։
4 Ալքսիոք. առ Պղատ. հտ. 3. էջ 371։
5 Եմպեդոկլ. առ Պղատ. յլ. զգուշ. յընչ. օտար. հտ. 2. էջ 830։ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 77։

առաջնոցն հասանել 'ի բնիկ վայրսն, բայց յետ այսոցիկ խիստ փորձութեանց '։

Իսկ իմ ողորմեալ 'ի Թշուառութիւն նոցա ասեմ. Բարձ յինէն զտեսիլդ, և ած զիս 'ի բաց 'ի տեղի՝ ուստի Ճառագայթք լուսոյ գերաձաձանչք հատանին։ Յուսայի տեսանել անդ ընդ աղօտ զիշխանն տիեզերաց, պար առեալ 'ի դաբանակալաց աթոռոյ իւրոյ 'ի գերամաքուր էիցն՝ զորս խմաստասէրքն մեր կոչեն Թիւս, Նսխատիպս, յաւիտենականս, ոգիս անմահս [2]։ Բ. Յլ ասէ ցիս ոգին. Մնակէ նա 'ի վայրս անմատոյցս մահկանացուաց. մատո՛ նմա երկրպագութիւն, և իջցուք յերկիր։

Եւ իբրև մեկնեցաւ Տելեսիկղէս, ասեմ ցԱՀկղիդէս. Օ՞ինչ արժան է կոչել զվեպքս զոր լուաք, երաՀզս Թէ առասպելս։ ԱՀկղիդէս ասէ. Եւ երազ և առասպելս. բայց Տելեսիկղէս զրեթէ ոչ ինչ օտար յիմաստասիրացն կարծեաց յաւել, որում արդարև մարթէր իսկ յաւելուլ ըստ կարծեաց ռամկին զբնակիչս երկնից յոյժ յոյժ, 'ի նեբքս խառնեալ և զստուերս զորս ըղձիցն և կախարդաց արուեստք կոչեն 'ի շիրմսց [3], և զՀոգիս չարաբաստս՝ որ շուրջ զանթաղ մարմնովքն ամբոխեալ դեգերին, և զդիս դարձեալ և զՀիւաղս՝ որ գիշերի յածեալ շրջին ընդ

[1] Պլատ. 'ի Տիմ. հա. 3. 1316։ էջ 42։

[2] Անոնիմ. յղ. վարուց տող 37։ Պլութարգ. առ Փոսայ. էջ

[3] Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ։

փողոցս, զարհուրեցուցանել զմանկտին կամ կը-
լանել զնոսա[1]։

Այսմ. Շ նորհ ունիմ զչափոյիցն, այլ ցանկա-
լի էր ինձ՝ թէ փոքր մի ինչ աւելի ձառէր զբա-
ւերաբար ոգւոյն, որ զիսն խնամէ։ Այթէ աստուած
որպէս ասէնն, խնամակալ զնա կացոյց զգացմանց
իմոց և գործոց[2], և ընդէր չետ ինձ ձանաչել զնա
և սիրել։ Այսկղեղէս ասէ. Այդմ յառաջագոյն
իսկ կանխեալ Տէրեսիկղեայ՝ ետ պատասխանի,
զի հնորհք իմանալեացն տեսութեան մաքուր հո-
գւոց է պահեալ։ Այսմ. Այլ իմ լուեալ իսկ
է զայդպիսի երևմունս ազգի միտմաւ հասարակ
հնորհեալ։ Այսկ. Այս կարի իսկ քաջ, վկայէ և
աւանդութիւնն պահեալ յԱտալիա, զոր և նկա-
րեալ իսկ տեսի։ Կամիցիս լսել հիւսս իմն ան-
ձոնի առասպելաց. այլ'ի միտ առցես մինչև ցոր-
վայր երբեմն մղեալ զառաձաւ խաբէութիւն և
դիւրահաւանութիւն։

Ի նաւարկել Ողիսեայ 'ի Տեմեսիս քաղաք
բրուտացւոց, անդ Պողիտէս մի յուղեկցաց նոցա
սպանաւ 'ի բնակչաց քաղաքին. այլ հուպ ընդ
հուպ հասին 'ի վերայ նոցա միահամուռ պատու-
հասաք վրէժխնդրութեան երկնից։ Հարցան զիք,
և եղև հրաման պատասխանւոյ՝ հաշտ առնել
զոգին Պողիտեայ, կանգնել նմա մեհեան, և ամի

1 Պղատ. յղ. հաս. գիրք 2 Պղատ. յղ. օր. գիրք ժ.
Բ. հտ. 2. էջ 381։ Թէոկր. հտ. 2. էջ 903 և 906։
գէջն 15. տող 40։

ամի զոհել նմա զգեղեցկագոյնն 'ի դստերաց քա-
ղաքին։ Եւ 'ի կատարել հրամանին եղև խաղա-
ղութիւն մեծ։ Բայց 'ի վաթսներորդի վեցերոր-
դի ողիմպիադին Լեթիմոս նահատակ անուանի
հասեալ անդր 'ի ժամուն՝ յորում այն ինչ զմի
յեղկելեաց անտի զոհից մուծեալ էին 'ի մե-
հեանն, խնդրեաց 'ի զնին կալ հանդիսին։ Եւ
հարեալ 'ի գեղ օրիորդին, խոստացաւ խզել
զկապանս նորա՝ եթէ յանձն առնոյր լինել իւր
կնութեան։ Եւ 'ի հաւանել աղջկանն, երևեցաւ
դևն նորա. և յաղթահարեալ 'ի հարուածոց
ըմբշին՝ հրաժարեաց 'ի պաշտամանէն, որ իբր
յութից դարուց հետէ նուիրէր նմա. և երթեալ
ընկեց զինքն 'ի ծովն՝ որ մերձն կայր [1]։

## ԳԻ ՅՈՒԼԻՈՍ ԿԷ.

Ի նոյն նորին Եկղեգեայ մատենադարանն յաղագս
պատմագրութեան։

Ի ՎԱՂԻՒ անդր 'ի կանխեալն իմաստ առ Եւ-
կղեդէս, ասէ ցիս. Հանդարտեցեր զսիրտ իմ,
զի կասկածէի թէ գուցէ տաղտկալի եղև քեզ
երիկեանն մեր բազմաբանութիւն։ Իսկ այսօր
առաջի կայ մեզ պարապել 'ի պատմագիրս, և ոչ
ևս 'ի կարծիս և 'ի պատուէրս պատաղել։ Բա-

[1] Սորաբ. գիրք Զ. էջ 255։ Պաւսան. գիրք Զ. գլ. 6.
էջ 419։

զուսք կացին պատմագիրքը, այլ ոչ զոք զպատմագրութեան օրէնս եւ, և ոչ զտիպս կերպարանաց բանից պատկանաւորս պատմագրի [1]։

Ի գլուխ պարու նոցին զԱդամս դասելի է, որ յառաջ քան զամն իբր երկերիւր կացեալ՝ խորհուրդ կալաւ առնել զՀնախօսութիւն հայրենեաց իւրոց զԻրիետեայ [2]։ Ի փոն պրոկոնեսացի համառօտեաց զգիրս նորա [3]։

Օ՛հետ Ադամեայ յաջորդեցին առ մեզ պատմագիրքը անընդհատ կարգաւ։ Ի՛նդ հնագոյնս 'ի նոցանէ են Յուգէոն սամեցի, Դեւիոքոս պրոկոնեսացի, Յուդեմոս պարոսացի, և Դեմոկղէս պիգեղացի։ Իսկ ես ասեմ. Յընթեռնուլ խմամ զգիրս դոցա, զայրանալ ինձ եկն ընդ անհեթեթեթ առասպելսն զոր պատմեն. և բաց յականատեսից նոցին իրաց հելբէի զամենայն, որ ինչ և պատմեն։ Օ՛ի և ուստի իսկ առեալ իցէ նոցա զայն, քանզի առաջին ինքեանք այնոցիկ գտանին աւանդիչք։

Նիկոլիդէս ասէ. Դոյր այն ամենայն յաւանդութեան, որ զարուց 'ի դարս մշտնջենաւորէ զյիշատակ վերոյվմանց հասելոց 'ի վերայ մարդկան. 'ի տաղս քերթողաց՝ որոց պահեալ էր ըզփառս դիւցազանց, զաղգահամար թագաւորաց, զսկիզբն և զգաղթականութիւնս ազգաց բազ-

1 Կիկերո. յզ. Ճարտ. գիրք Բ. գլ. 15. հտ. 1. էջ 206։
2 Սուիդ. 'ի բառն Καῖμ.
3 Կղեմ. աղեքս. յաՃառ. խաչ. գիրք Զ. էջ 752։

մաց՝. յարձանագիրս երկայնս՝ յորս բովանդակեին դաշինք ազգաց ընդ միմեանս[2], և կարգ յաջորդութեան քրմաց գլխաւոր մեհենացն Աղ-լադայ*. և 'ի տօնս դարձեալ և 'ի բազինս, և յանդրիս, և 'ի մեհեանս կանգնեալս 'ի դէպս անցից՝ որոց ամի ամի նորոգեին յիշատակք 'ի տեսիլ շինուածոցն և պաշտամանց կատարելոց 'ի նոսա։

Պպաքէն 'ի վէպս իրացս այսոցիկ տակաւ յաւելան հանգամանք հրաշալիք, և նախնի վիպագիրք մեր խառն 'ի խուռն անքննաբար ընկալան զՀմարտութիւն ընդ ստութեան. այլ ոչ յամենցին Պղոսիղայոս, Փերեկիդէս, Եկատէոս, Վրանթոս, Եղանիկոս և այլք բերել յանձին զընտրութիւն Հմարտութեան. և Թէպէտ ոչ 'ի սպառ զհամապարփակ մէգն փարատեցին, այլ եղեն յօրինակ արհամարհութեան առաջնոց դարուցն ստայօղ առասպելաց։

Հաւասիկ մատեան Պղոսիղայոսի, յորում 'ի նեղբս ածեալ զազգաբանութիւն առաջնոց Թագաւորացն[3], ելանէ մինչև 'ի դարս որ նախ

1 Յիշատ. բանաս. կաՃառ. հտ. 6. էջ 165։

2 Տակիտ. տարեգր. 4. գլ. 45։

* Տես 'ի ԽԱ գլուխ գրոցս 'ի յոգուածն Ամիկղեայ, և 'ի ԾԳ գլուխ 'ի յոգուածն որ յաղագս Արգոսի։

3 Թուկիդ. գիրք Բ. գլ. 2։ Պարապ. անդ։ Դիոնիս. ազգկ. հնութիւնք հռոմ. գիրք Ա. հտ. 1. էջ 181։ Պողիբ. ծագկաբաղ, էջ 50։ Յիշատ. բանաս. կաՃառ. հտ. 23, էջ 394։

քան զտրուվական պատերազմն, և մինչև 'ի Փո-
ռոնիկոն Թագաւոր արդիացոց։ Բ. Եւ մեք զանխուլ է այդ յինէն, այլ ծաղու Թուեցան ինձ իբք յընԹեռնուլ խմում 'ի գիրս նորա և այլոց՝ որ զՀետ նորա կացին վիպագիրքք, զի զՓորոնիկոս կոչէն նախամարդ [1]։ Բ. Այց Բ. Կոսիղայոս ներբեղս արժանի է. զի Թէպէտ և յոյժ զմարդկան ազգի զսկիզբն կրտսերացուցանէ, այլ զսիրոյն 'ի վեր յոյժ ամբառնայ՝ զոր ընդ երիցագոյնս 'ի դից համարի, և ժամանակակից աշխարհի զծնունդ նորա [2]։

Գ. Կղեմդէս ասէ. Սուղ մինչ յետոյ քան զԿոսիղայոս եկաց Փերեկիդէս աԹենացի, կամմանաւանդ լերոսացի. և Լերոս մի 'ի Սփիւռ կղզեացն է [3]։ Սա ժողովեաց 'ի գիր որ մինչ հին աւանդութիւնք էին զաԹենացւոց, և զսահմանակից ազգացն խառն ընդ նոսա [4]։ Բազում մինչ մանրապատում իբք էն ցանկալիք 'ի գիրս նորա, որպէս հիմնադրութիւնք քաղաքաց բազմաց, և հատուածք նախնի բնակչացն Լեղադայ [5]։ Զգաբանութեանց նորա է մինչ Թերութիւն, որ 'ի սկզբան քաղաքաժողով միաբանութեանց զփառս ազգատոհմից զոչծէր անեղկեւան. զի 'ի հասա-

1 Սոզոն առ Պղատ. 'ի Տիմ. հա. 3. էջ 22։ Կղեմ. աղէքս. յատնախաղ. գիրք Ա. էջ 380։
2 Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 178։
3 Սաղմ. 'ի Պլին. էջ 846։
4 Սուիդ. 'ի բառն Փեր.
5 Դիոնիս. ազիկ. հնութիւնք հռ. գիրք Ա. հա. 1. էջ 35։
Վոսս. յոյ. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 445։

նել՝ի դարսն առաջինս, կատարէ զկարգ ազգա-
համարին՝ 'ի մի աք 'ի դից. որպէս Արիոնի ծնողս
համարի զՊիսիդոն և զԱրիսագէ, և Տրիպտղ-
մեայ զՍվկիան և զերկիր [1]։

Այսու ժամանակաւ կացին և Լկատէոս մի-
լետացի և Պասանթոս լիդացի. որոց պայծա-
ռութիւն համբաւոյ թէպէտ և նուազեալ, այլ
ոչ ծածկեցաւ երկոքին յաջորդաց նոցա։ Լկա-
տէոս 'ի գիրսն պատմութեան և ազգաբանու-
թեան և նա զնոյն խորհուրդ կալաւ՝ առնել ըզ-
հնախօսութիւն Յունաց։ Ի քնին առնու ինչ
ինչ 'ի հնոց աւանդութեանց, և զեղէզ զհրաշս
որ 'ի նոսա, այսպէս զպատմութիւնն սկսանելով.
"Ակիզբն պատմութեան Լկատեայ միլետա-
„ցւոյ. և գրեմ որ ինչ ճշմարիտ ինձ թուի։ Յոյնք
„բազում ինչ, ըստ իմումն բանի, ներհականս
„և ծաղու արժանի աւանդեցին իրս „[2]։ Լս
հաւատացցէ՞ որ, զի որ այսպէսն խոստանայ՝ պատ-
միցէ ասպա զնոցէն, որ զՎրիքսոս 'ի Սողքիս ած,
թէ էր նա խօսուն [3]։

Մինչև ցայնժամ պատմութիւն սահմանէր
Յելլադա. Լկատէոս ընդարձակեաց զսահմանս
նորա, շրջեալ ընդ Լգիպտոս և ընդ այլ գաւառս
չև ևս ծանօթս [4]։ Սորագրութեամբն երկրի,

1 Ապողոդ. մատենադ. գիրք Ա. էջ 15 և 17։
2 Դիմեար. Փաղէր. յլ. պերձախօս. գլ. 12։
3 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 6. էջ 478։
4 Երոդոտ. գիրք Բ. էջ 143։ Ագաթեմ. յլ. աշխարհագր. գիրք Ա. գլ. 1։

զոր արար, յաւել հմտութիւնս յաշխարհագրութիւն[1], և պատրաստեաց նիւթ որոց զհետ իւր կացին վիպագիրքք[2]։

Հաւասիկ պատմութիւն լուսացուց, զոր գրեաց Թանեթոս. վիպագիր ստուգապատում, և քաջահմուտ հնութեանց իւրոյ աշխարհին[3]։ Ընդ սմա են և Ճառք բազումք Աղանիկեայ լեսբացւոյ զայլ և այլ ազգաց Աղլադայ[4]։ Ի քսանեերորդի առաջնեերորդի ամի պեղպտնեասկան մարտին[5]* հանդիպի վախճան սորա. կարգ և ընդարձակութիւն պակասեն ուրեք ուրեք 'ի գիրս նորա[6]. այլ փառաք յանկի 'ի նա դաս առաջնոց մերոցն վիպագրաց։

Աղբա ամենեքին ամփոփեցին զպատմութիւն 'ի սահմանս քաղաքի միոյ կամ ազգի, և ոչ գիտացին շարախառնել զղեթայաբար զանցս ազգաց բազմաց ցանկալիս 'ի գիտութիւն, և յարդարել մի ինչ բարեյարմար 'ի բազում այլ և այլ մասանց։ Աղոդոտեայ պահէին պարծանք երկնելոյ զառաջարկութիւնս զայս մեծ, և կատարելոյ զայն։ Օծանօթից սահմանաց աշխարհի առ

1 Սարաբ. գիրք Ա. էջ 14 և 7. գիրք Զ. էջ 271. գիրք ԺԲ. էջ 550։

2 Պորփիւր, առ Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք Ի. գլ. 3. էջ 466։

3 Դիոդոր. ազիկ. հնութիւնք հա. գիրք Ա. հատ. 1. էջ 73։

4 Վրաս. պատմ. Յուն. գիրք Ա. գլ. 1. էջ 7. գիրք Դ. գլ. 5. էջ 448։

5 Յիշատ. բանաս. կաճառ. հա. 29. էջ 70։

* Իբր 410 ամաւ Ն. Գ.։

6 Թուկիդիդէս. գիրք Ա. գլ. 97։

հասարակ զպատմութիւն յանդիմանն արար նա Հելլենաց, և ետ նոցա տեսանել համանգամայն որ ինչ անցք ընդ ամն իբր երկերիւր և քառասուն անցեալ էին[1]։ Զ.նդ զառաջինն տեսան կուռ զՀետ միմեանց պատկերք, որ ահաւորազոյնս զմիմեանս գործէն. ազգք վրէժխնդիրք խաղաղութեան, և միշտ անհանդարտք, յար 'ի շարժման. պառակտեալք 'ի խնդիր իւրաքանչիւր օգտին, և միաբանեալք 'ի պատերազմ. ցանկայօղք ազատութեան, և բռնաւորութիւն տուայտեալք։ Զ.մենայն ուրեք ոՀիր յաղթանակեալ, առաքինութիւն հալածեալ, երկիր ողողեալ յարեան, և աւեր 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի տիրապետեալ։ Զ.յլ ձեռն, որ զպատկերս զայսոսիկ նկարեաց, այնպէս զահարկութիւն նոցին ամքէ գեղով երանգոյն և ախորժ ձևովք, և այնպիսի շնորհս և ներդաշնակութիւն և այլակերպութիւն ընդ բարեյարմար կարգ նոցին կցորդէ, և այնպէս յաՀախ ազդէ զքաղցր զպացումն խնդութեան ընդ բարին և տրտմութեան ընդ չարն[2], զի համարի վաստակ նորա մի 'ի չքնաղ արգասեաց մարդկեղէն հանճարոյ։

Թայլ արա ինձ յաւելուլ տեսութիւն ինչ առ այս։ Զ.բանասիրութեան, նոյն և յարուեստս, հանճարք զոզցես ինն անցեալ նախ յասպարէզ մարտնչին ընդ դժուարութիւնս առ ժամանակ

1 Դիոնիս. ազգ. յՍ. Թու. կիր. գատաստ. հտ. 6. էջ 820։ 2 Նոյն, Թուղթ առ Պամպ. հտ. 6. էջ 774։

մի։ Լա՛ւ պարտասել նոցա, այլ ոչ հանձարեալ՝ ի վեր երևեալ՝ անդր ևս քան զեղեալ սահմանսն անցանել կայ օրինակ։ Ա. յապէս Հոմերոս՝ ի գիւցազնականին եկայ քերթութեանն, և Լրոդոտ՝ ի հանաչխարհական պատմութեան։ Ա՝արթ իցէ որոց զՀեռն նորա գայցեն՝ պայծառանալ մանրապատում ճառիցն զեղեցկութեամբ և խոհակնագոյն ընտրութեամբ ճշմարտութեան. այլ՝ ի կարգ մատենագրութեանն և՝ ի յարմարաւոր կցորդութիւն իրացն ճգնեսցին հաւասարել նմա քան զերազանցել զնովաւ։

Իսկ յաղագս կենաց նորա շատ է գիտել, զի ծնաւ նա Ա՝ղիկառնասս քաղաք Կարիոյ՝ ի ջրբորդում ամի եօթանասներորդի երրորդի ողիմ պիաղին՝ *, և զի շրջեցաւ նա ընդ բազմագոյնս յաշխարհաց՝ զորոց առաջի կայր նմա գրել զպատմութիւն. և զի մատեանք նորա յողոմպիական յաշխարհաժողով խաղսն ընթերցեալ, յամենեցունց կայթիւք ձեռաց պատուեցան [2]. և զի՝ ի պառակտել հայրենեացն՝ խոյս տուեալ նորա անտի, կատարեաց զկեանս իւր՝ ի միում ուրեք՝ ի՝ ի քաղաքաց մեծին Յունաստանի [3]։

Ի նմին ժամանակի կեայր և Ա՝ուկիդիդէս, կրտսերագոյն քան զԼրոդոտ ամօք իբր երեքտա-

1 Սկալիգ. առ Եւսեբ. էջ 102։ Քրոնոնի, տարեգր. ատտիկ. հտ. 3. էջ 157։

* Ի 484 ամի Ն. Ք.

2 Ղուկիան. Յերոդոտ. հտ. 1. էջ 833։ Եւսեբ. ժամանակագր. էջ 169։

3 Սուիդ. ՝ի բառն Ηροδότ.

սան [1]։ Յաղնուականագունիցն աթենացւոց էր ազգատոհմ նորա [2]. և ինքն գնդապետ զօրաց կարգեալ, զդէմ կալաւ առ ժամանակ մի զօրացն Թրասիդայ քաջագունին 'ի զօրավարս սպարտացւոց [3]։ Այլ յառնուլ սորա յեղակարծումն Ալէքսիպօլիս քաղաք, աթենացիք 'ի Թուկիդիդեայ լուծին զվրէժ արկածիցն՝ զոր չկարաց նա խափանել։

Յաքսորանս իւր, որ տեւեաց զամս քսան [4], ժողովեաց նա զիրս պատմութեան պեղոպոնեսական մարտին, ոչ խնայեալ 'ի ջանս և 'ի ծախս առ 'ի գիտել զպատճառս մարտին, և որ ինչ իւրաքանչիւր ուրուք չարաշահութիւն 'ի նեղքս անկեալ երկարաձգեցին զայն [5]։ Շրջեցաւ նա ընդ ազգս Թշնամիս, եհարց զիշխանս նոցա և զզօրավարս և զզօրս, և ինքնին խակ ականատես եղև բազմագունից յանցիցն՝ զորս առաջի կայր նմա պատմագրել։ Ի գիրս նորա, որ բովանդակէն զպատմութիւն քսան և միոյ առաջնոց ամանց բազմաղէտ այնր մարտին, երևի Ճշմարտասիրութիւն նորա ծայրագոյն, և առ 'ի տեսութիւնս մեռաց բերումն։ Աթենացիք ոմանք, որոց տեսեալ էր զնա յետ աքսորանացն, վկայէին ինձ զլուրջ զգնութենէ նորա՝ զի բազմախոհ էր և սակաւախօս [6]։

1 Պամփ. առ Ռէլ. Գէլ. 107։
գիրք ԺԵ. գլ. 23։
2 Մարկէլ. վարք Թուկիդ։
3 Թուկիդ. գիրք Դ. գլ.
4 Նոյն, գիրք Ե. գլ. 26։
5 Մարկէլ. անդ։
6 Նոյն անդ։

Յանկալն էր նմա ուսուցանել քան հաձոյ լինել, հասանել յուշ նպատակին քան արտուղութեամբք հեռանալ՝։ Լրով գիրք նորա ոչ որպէս զԼրոդոտեայն քերթուած իմն թուի՝ բովանդակելով զաւանդութիւնս ազգաց զնախնեացն իւրաքանչիւր, զբնութիւն բարուց նոցա և զսովորութեանց, զստորագրութիւն աշխարհաց նոցա յորս բնակէն, և զարմանալիս՝ որ ստէպ զարթուցանէն զմիտս. այլ էն տարեգիրք, և կամ թէ այսպէս հաձոյ ումեք թուեսցի ասել՝ գիրք յիշատակաց զօրավարի։ Որ զի և քաղաքավարակամին էր հմուտ և իմաստասէր, խառնէ 'ի պատմութիւնս իւր և յատենաբանութիւնսն որ 'ի նմա զիմաստս իմաստութեան՝ զոր ընկալաւ Լնաքսագորայ, և զՀրահանգս Ճարտասանութեան՝ յոր վարժեցաւ առ ոտս Լնտիփոնի Ճարտարախօսի[2]։ Յոլովք 'ի տեսութեանց նորա խորինք էն, և առ հասարակ իրաւացիք. ասացուած նորա զօրաւոր և հակիրճ՝, որով և ուրեք ուրեք դժուարիմաց[3], անախորժ էրբեմն ունկան, այլ գրաւէ միշտ զմիտս, որպէս զի 'ի դէպ է ասել՝ թէ խստութիւն նորա գործէ 'ի նմա վեհութիւն[4]։ Լչ ընդէր իցէ քաջի վիպա-

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 22։ Կուինտիլ. գիրք Ժ. գլ. 1. էջ 634։

2 Մարկեղ. վարք Թուկիդ։

3 Կիկէր. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 13. հտ. 1. էջ 204 և 214։ Նոյն, յղ. Երևելի Ճարտ. գլ. 83. հտ. 1. էջ 407։ Նոյն, յղ. Ճարտ. գլ. 9. էջ 406։

4 Դեմետր. Փալէր. յղ. պերճախոս. գլ. 48 և 49։

գրիս 'ի կիր արկանել զվաղեմի ձևս բանից խա-
փանեալս, և զնորաձև բառս. բայց զի աշխոյժք
մնաց այնպիսիք դուն ուրեք հասարակաց խօսիւք
կարեն բերել զբանս։ Օ Հրոդոտեայ 'ի վրէժ-
խնդրութիւն անձին ասեն 'ի նեղքս ածեալ զա-
ւանդութիւնս Թշնամանադիրս ազգաց ոմանց
Հելլադայ[1]. իսկ Թուկիդիդէս համառօտիւ ևեթ
յիշատակէ զաքսորանս իւր, առանց ջատագովու-
թեան անձին, և առանց գանգատանաց[2]. և
եթբև զմի ոք յաւագ արանց յանդիման առնէ
զՊրասիդաս, որոյ փառք զիւրն մեծացուցին, և
որոյ յաջողութիւն եղև իւր 'ի Թշուառութիւն։
Օ պատմութիւն Թուկիդիդեայ շարայարեաց
փառօք Քսենոփոն, զոր դու ծանեար իսկ զնա[3]։
Հրոդոտոս, Թուկիդիդէս և Քսենոփոն հա-
մարեացին աներկբայապէս առ յետինս իշխանք
պատմագրաց մերոց, Թէպէտ և 'ի տիպս կեր-
պարանաց բանիցն 'ի սպառ զանազանեալք։ Յա-
ւելի և ես. Անանանդ յայլ ազգ տեսութիւն ա-
ռաջարկեալ իրացն. զի Հրոդոտ ամենայն ուրեք
տեսանէ զնախանձ դից դարանակալ ամբարձելոց
մարդկան և պետութեանց, առ 'ի կործանել
զնոսա յանդունդս[4]. Թուկիդիդէս յամենայն
արկածս նշաւակէ զսխալանս իշխանաց կամ զօ-
րավարաց. իսկ Քսենոփոն գրեթէ զամենայն

1 Պլուտ. յղ. Էսր. Երոդոտ. հտ. 2. էջ 854։
2 Թուկիդիդէս. գիրք Ե. գլ. 26։
3 Քսենոփ. պատմ. Յուն. էջ 428։
4 Երոդոտ. գիրք Ա. գլ. 32. գիրք Գ. գլ. 40։

յաջողութիւնս և զձախողութիւնս համարի 'ի ցաստանել զիս։ Այս ամենայն ինչ յաշխարհի աստ, ըստ առաջնոյն, 'ի կապեալ հրամանաց յաջողի. ըստ երկրորդին, 'ի խոհականութենէ. իսկ ըստ երրորդին, յերկիւղածութենէ զից։ Զանի յօժարիմք 'ի բնութենէ 'ի սակաւ ինչ պատճառս ըստ մտի ամփոփել զամենայն։

Եւ յառաջ մատուցեալ Եւկղիդեայ զբանն, ասէ. Եղրոդոտ 'ի հարևանցի զասորեստանեայցն և զՊարսից գրեաց զպատմութիւն. և զբիսակս նորա եցոյց այլ ոք վիպագիր տեղեկագոյն քան զնա երկոցունց ազգացն։ Զայտեսեայ ասեմ ինքն դացոյ, որ յաւուրս մեր եկաց. և էր նա բժիշկ Արտաշիսի արքայի, և եղև ժամանակս բազում յարքունիս նորա 'ի Շօշ։ Այս աւանդեաց մեզ զամենայն որ ինչ 'ի դիւանս ինքնակալութեանն եգիտ[2], որ ինչ ետեսն անձամբ, և որ ինչ վկայք ականատեսք պատմեցին նմա[3]։ Զմարտապատումն է նա քան զԵղրոդոտ[4], այլ 'ի տիպս կերպարանաց բանից ստորև քան զնա գտանի, թէ պէտ և վայելուչ են յոյժ ասացուածքն[5], մանաւանդ բացայայտութեամբն գերազանցեալ[6]։ Կտեսիաս ընդ այլ մատենագրութիւնսն և զընդկաց աւանդեաց մեզ զպատմութիւն, յո-

1 Փոտ, մատենադ. էջ 105։
2 Դիոդ. գիրք Բ. էջ 218։
3 Փոտ. անդ, էջ 108։
4 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 6. էջ 176. հտ. 14. էջ 247։
5 Դիոնիս. ազիկ. յդ. շարագր. բառից, հտ. 3. էջ 53։
6 Դեմետր. փալեր. յդ. պերճախօս. գլ. 218։

բում Ճառէ և զկենդանեայ և զմնիկ բերոց հեռաստան երկրին. այլ զի չէր նորա արարեալ զիրացն տեսելոց Ճիշդ յիշատակս, Ճշմարտութիւն պատմելոցն 'ի նմանէ յերկրայս անկանի՝։

Բ. Հաւասիկ հնախօսութիւն Արկիլեոյ, պատմութիւն կենաց երիցոյն Դիոնիսեայ և առաջնոց ամաց կրտսերոյն, զորս գրեաց Փիղիստոս[2]. այն որ յառաջ քան զամս ինչ սպանաւ, պարտութեամբ նաւատորմին որում առաջնորդէրն, զօրավար 'ի կրտսերոյն Դիոնիսեայ կացեալ։ Փիղիստեայ ազգութիւնք մնացն յեղանակաւ իմն հաւասար զնա կացուցին Թուկիդիդեայ[3]. այլ չէին նմա առաքինութիւնք Թուկիդիդեայ։ Բանզի ստրկաբար մարդահաճէ և եթ 'ի գիրս իւր զբռնաւորս[4], և ամենայն ուրեք յայտ առնէ՝ զի բռնաւորութեան քան բռնաւորաց է բաբեկամ։

Գ. Ստանօր վախճան առնեմ Թուկարգութեանս, որ յոյժ իսկ ցայսվայր երկարաձգեալ։ Օ՛ի չիք թերևս ազգ կամ քաղաք կամ մեհեան հռչակաւոր, որոյ չիցէ վիպագիր. և բազումք յոյժ 'ի մատենագրաց պարապեն արդ 'ի վիպագրութիւն։ Եփոր և Թէոպոմպ այժմէն իսկ

1 Արիստոտ. կենդանաբ. գիրք Ը. գլ. 28. հա. 1. էջ 919։ Նոյն, յղ. Ծննդ. կենդան. գիրք Բ. գլ. 2. էջ 1076։

2 Սուիդ. 'ի բառն Φιλίστ. Դիոդ. գիրք ԺԵ. էջ 397։

3 Կիկերո. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 13. հա. 1. էջ 205։

4 Դիոնիս. ազգիկ. յղ. Նախնի. մատենագրք. հա. 3. էջ 424։ Տիմ. և Եփոր. առ Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 974։

պայծառանան 'ի նոյն. և Նոնաքսիս և Գիոնի-սիոդոր դեռ ևս ածին 'ի լոյս զպատմութիւն Յե-ղադայ[1]. և Նոնաքսիմեն լամիսակեցի զՅունացն և զայլոց ազգաց 'ի սկզբանէ ազգի մարդկան մինչև ցմահ Նպամինոնդայ[2]։

Մակագիրդ այդ Ճառում, ասեմ, կանխեալ գրաւէ զմիտս իմ ընդդէմ մատենիդ. զի ժամանակագրութիւն ձեր հաղիւ 'ի հինգ կամ 'ի վեց դար անդր քան զՋրուվադայ պատերազմն ձգի, և բաց 'ի սակաւուց ոմանց յազգաց՝ այլք առ-հասարակ անծանօթ էն ձեզ, և ոչ ինչ աւելի քան զկէտ մի ժամանակի և տեղւոյ գրաւէք. իսկ վիպագիրդ խոստանայ զՀեռադոյն դարուց և զաշ-խարհաց պատմել մեզ զանցս առ հասարակ։ Ել իսկ է մարթ թէ տեղեկացեալ ուրուք պատճառաց, որովք Եգիպտացիք և քաղդէացիք ցուցանեն զՀնութիւն իւրեանց, ոչ աւաղելի զթերի և զառ-ժամագիւտ ցուցակութիւնս ձեր համարիցի։ Վասնի զարմացան քուրմքն 'ի Այիս, յորժամ Սողոն պանծացուցանէր 'ի լուր նոցա զաւանդու-թիւնս ձեր, և Ճառս արկեալ խօսէր նոցա զՓո-ռոնեայ թագաւորութենէ և զդևկալիոնեան ջրոր-հեղեղէն, և զազգում այլ ևս թուականու-թեանց՝ որ նոցա նորք էին, և նմա հինք։ Յե-որպէս մի ոմն 'ի նոցանէ ասաց իսկ ցնա. Ո՞վ Սողոն, Յոյնք միշտ մանկտի էք[3]. յայնմ հետէ

[1] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 403։
[2] Նոյն անդ. էջ 397։
[3] Պղատ. 'ի Կրիտ. հտ. 3. էջ 22։

իսկ միշտ կացիք մանկտի։ Կէսք 'ի ձէնջ քանդրէն ինչ այլ 'ի պատմութիւնս՝ բայց զկէզ առացուածոյ, այլք զէպս գերբնականս և մանկտուց իմն խաղս '. և այլք զարձեալ անցագաբար 'ի միտ առնուն զտաղտկալի ցանկս անծանօթից և թարմատար անուանց, որ կուտակութեամբ առասպելեալց և հրաշից սեթևեթեալ՝ գրաւեն զրեթէ բովանդակ զհնախօսութիւն ձեր, զայն՝ զոր Հոմերի անմահական փառօք պայծառացուցեալ, իսկ ժամանակագիրք ձեր ծանրատաղտուկ ձանձրութեամբ լցին զայն։ Յցիւ յայսմ հետէ վիպագիրք ձեր յանցս երկուց ևեթ կամ երից արդի դարուց պարապէին, զառաջնոց ժամանակացն իրս թողեալ 'ի Ճարակ քերթողաց։

Լուկղիդէս ասէ. Ոչ խորհրդոյն Խոսկրատայ Ինչս թարգմանս. զի նա 'ի պարապեցուցանել զերկուս յաշակերտաց իւրոց զԼիսիոր և զՄիսոսոմակ 'ի վիպագրութիւն[2], քանզի Լիսիոր յամէ և անաջող՝ 'ի տաժանաւոր քննութիւնս, իսկ Միսոսոմակ ժիր և աշխոյժ և աջող 'ի հետազօտել[3], տեսս ինձ զինչ հնարեցաւ. առաջնումն զհնախօսութիւն, իսկ երկրորդին զարդի ժամանակաց անցս առաջի եդ 'ի վիպագրել։

Յայնմ վայրի հասին անդր Լիսիոր և Միսոսոմակ, յղ. անդորր. հոգ. գլ. 6։

3 Կիկեր. յղ. քաջ Ճարտ. գլ. 56. հտ. 1. էջ 383։

1 Խոսկր. համաթ. հտ. 2. էջ 180։

2 Կիկեր. յղ. Ճարտ. գլ. 13. հտ. 1. էջ 205։ Սենեկա, յղ. անդորր. հոգ. գլ. 6։

պոմպ, քանզի մնայր նոցա Լուկղիդէս. որ և զե-
կոյց ինձ դաշն ձայնիւ, զի զային ընթեռնուլ 'ի
լուր մեր հատուածս ինչ 'ի վիպացն յորս պարա-
պէին։ Լինն ընդ նոսա և երկուք կամ երեք ո-
մանք 'ի բարեկամաց նոցա, և Լուկղիդեայ զո-
մանս յիւրոցն էր հրաւիրեալ։ Մինչ էր ամե-
նեցուն ժողովեալ, վիպագիրքն երկոքին յայտ ա-
բարին՝ զի էր նոցա ժամանակաւոր լեալ 'ի ստու-
գել զառասպելախառն վէպս դարուցն առաջնոց
քան զտրամական պատերազմն[1]. և դաւանելով
զսէր և զնախանձ չիմարտութեան, յաւելին.
Ո՞տայր վիպագրաց ակնատես լինել ամենայնի
զոր պատմեն[2]։

Այսպա ասէ Լիմորոս. Որ ինչ 'ի դարձէ Հերա-
կղեանցն և այսր անցք անցին ընդ ամս ութհա-
րիւր և յիսուն, զայն ամենայն եղև ինձ 'ի մտի
գրել։ Յերեսուն գիրս բաժանեցի զպատմու-
թիւնս, զորոց իւրաքանչիւր առնելով նախադրու-
թիւն[3]. և ունին տալ գիրքս այս զսկիզբն այլ
և այլ ազգաց, զհիմնարկութիւն գլխաւոր քաղա-
քաց, զհատուածս որ 'ի նոցանէ գաղթեցան,
զօրէնս և զբարս նոցա, և զնահանգացն յորս
բնակեն՝ զհանգամանս, և զարս աւագս որ կա-
ցին անդ[4]։ Լաւ կնքեաց Լիմորոս զբանս իւր,
խոստովան լինելով զհնութիւն այլոց ազգաց քան

[1] Դիոդ. գիրք Դ. էջ 209։ գիրք ԺԶ. էջ 468։
[2] Պոլիբ. գիրք ԺԲ. էջ 669։ Սարաբ. գիրք Թ. էջ 422։
[3] Դիոդ. գիրք Դ. էջ 209։
[4] Պոլիբ. գիրք Զ. էջ 488. գիրք Թ. էջ 540։ Սարաբ. գիրք Ա. էջ 33։

զՀՅոյնս. և այնու կանխեալ գրաւեաց յինքն զմիտս իմ։

Եւ յետ այսր նախեզգաճեաց ընթերցաւ հատուած ինչ 'ի մատեանս երորդ գրոց պատմութեանն զստորագրութիւն Եգիպտոսի։ Ասդ 'ի զանազան կարծիս այլոց զյորդութենէ 'Լեղոսի' յաւելու զիւրն այնպիսի ինչ, զոր ոչ օրէնք ախտարակաց և ոչ հանգամանք իրացն տանին[2]։ Իսկ ես, քանզի մերձ առընթեր կայի Աւկղնդեայ, ասեմ ցնա. Ինտեղեակ է դա Եգիպտոսի, և 'ի տեղեկագունիցն ինչ չիք հարցեալ դորա[3]։ Եւ ասա 'ի միտ առի, զի վիպագրին զստուգութենէ իրացն չէր ինչ փոյթ, և զի կարի իմն հաւատարմութեամբ զՀետ երթեալ բազմագունից յորոց յառաջ քան զնա կացեալ էին վիպագիրք, Հնարէր համեմել զվէպսն առասպելական աւանդութեամբք ազգաց և պատմութեամբք ուղղորաց[4]։ Զուտ ինձ զակատեալ 'ի ձեւս Ճարտասանական. և քանզի բազումք 'ի մատենագրաց 'ի վեր քան զվիպագիր դասէն զՃարտարախօս, խորհուրդ քաջ վարկանէր Եւփորոս յերկաքանչիւրսն իսկ ազգս շարագրածոց գերազանցել[5]։

Սակայն հանդերձ ամենայն թերութեամբքն համարեսցի միշտ մատեանս այս գանձ պատուա-

1 Թէոն. 'ի նախակրթ. էջ 13։
2 Դիոդ. գիրք Ա. էջ 36։
3 Նոյն անդ, էջ 37։
4 Նոյն անդ։ Սարաբ. գիրք Ե. էջ 244. գիրք Թ. էջ 422։ Սենեկա, խնդ. բն. գիրք Է. գլ. 16։
5 Պոլիբ. գիրք ԺԲ. էջ 670։

կան, ազգայ իւրաքանչիւր զտանելով 'ի սմա ու-
բոյն և գեղեցիկ կարգաւ զամենայն ցանկալիս
իւր։ Լսացուած նորա յստակ, ընտիր և ծաղ-
կեալ, թէպէտ և կարի յաճախ զչափս ինչ յար-
մարաւորս բերէ[2], և զրեթէ ամ ուրեք վերջա-
նայ 'ի վսեմութենէ և 'ի կենդանութենէ[3]։

Ի վախճանել ընթերցուածոյն՝ դարձուցին
ամենեքին զաչս 'ի Թէոպոմպոս[4]. և նա խօսել
կալաւ զանձնէ։ Հայրն իմ, ասէ, Պատմոստրատ
վասն կուսակցութեանն ընդ սպարտացիս՝ աքսո-
րեալ 'ի հայրենեաց իւրոց 'ի Թիայ կղզւոյ, ած
զիս Աղլեադա. և յետ ոչ բազում ժամանակի
եկի ես 'ի քաղաքս յայս, ուր պարապեցի անդուլ
յուսումն իմաստասիրութեան և ճարտարխօսու-
թեան[5]։

Նառս յօրինեցի բազումս, շրջեցայ առ ազգս
յոլովս, ատենաբանեցի 'ի ժողովս նոցա, և յա-
ճախեալ ինձ պարծանս՝ ընդ քաջագոյնս 'ի ճար-
տարախօսաց ժամանակիս դասիմ 'ի վեր քան
զամենեսին՝ որ կացին յանցեալ դարու. զի նա-
խապատուեալքն անդ և ոչ զերկրորդն արդ կալ-
ցին զտեղի[6]։

Լսոկրատ 'ի գերապանծ ասպարիզէն, յորում
յաղթանակէի, ած զիս 'ի միւս այլ զոր Լիրոդոտ

1 Դիոնիս. ազիկ. յղ. շա-
բաթի. բառից, հա. 5. էջ 173։
2 Կիկերո. յղ. Ճարտ. գլ.
57. հա. 1. էջ 469։
3 Սուիդ. 'ի բառն Ե՞փօր.
4 Վրաս. պատմ. Յուն.
գիրք Ա. գլ. 7։
5 Փոտ, մատենագ. էջ 392։
6 Նոյն, էջ 393։

և Ալուկիդիդէս հանձարո

ծառութիւն, ազնուութիւն և ներդաշնակութի՛ յասացուածն՝, մինչև ստիպել մեզ դրուատիս տալ այնմ՝ որ առաւել քան զամենայն ոք անգոս-նելին էր։

Այլ ոչ դադարէր նա յընթերցուածոյն, զոյգ նմին և զարմացումն մեր նուազէր. դարձեալ վերստին՝ի վեր երևեցան առասպելք, և լուաք վեպս չհաւատալիս[2]։ Այլ ոք հակառակ հրամանի դիցն, ասէր, մնանել կարասցէ՝ի մեհեան Աքամազդայ Ամբիկադիա, մեծի հասցէ հնարի. զի մարմին նորա յամենայն կեանս իւր ոչ արկցէ ստուէր յանկանել զնովաւ Ճառագայթից արեգական։ Յաւել ևս, զի յառաջին ամն թագաւորութեան Փիլիպպեայ յանկարծ՝ի քաղաքս ուրեք՝ի Մակեդոնիա թզենիք և ձիթենիք ետուն զպտուղս իւրեանց որպէս՝ի գարնանի, և զի յայնմհետէ իրք թագաւորին յաջողեցին մինչ՝ի սպառ[3]։

Այլ արտուղութիւնք այնքանք՝ի դիրս նորա յաՃախեալ, զի զերիս ջրիր մնասուս մատենին գրաւեն[4]. և մերթ ևս այնպէս երկայնք, մինչև՝ի մռայցնս արկանել զկարգ բանիցն։ Յորդորակք զորս գտնէ՝ի բերան զօրավարաց՝ի ժամ մարտի, ձանձրալի են ընթերցողաց, և պարտասե-

1 Դիոնիս. ազիկ. հտ. 6. էջ 786։

2 Կիկերո. յղ. օր. գիրք Ա. գլ. 1. հտ. 3. էջ 116։ Եւսեբիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 18։

3 Թէոպոմպ. առ Ա թենն. գիրք Գ. գլ. 4. էջ 77։

4 Փոտ, մատենագր. էջ 393։

ցուցիչք իսկ զօրականին[1]։

Յղանակի բանից նորա, որ պատշաճագոյն է Ճարտարախօսի քան վիպագրի, են գեղեցկութիւնք մեծամեծք և մեծամեծ թերութիւնք[2]։ Ըստ կարգաւորութեան բառիցն ոչ ինչ թերահոգ գտանի, իսկ ըստ ընտրութեան նոցա՝ բնաւ իսկ անհոգ։ Զգձգէ ուրեք ուրեք զդարձուածս բանից առ 'ի բոլորել զչափն կամ առ 'ի խափանել զձայնաւորաց առ միմեանս հանդիպումն. և է ուրեք զի անշքացուցանէ զնոսա գռէհիկ ասացուածովք կամ անպատկանաւոր զարդուք[3]։

Բազում ուրեք 'ի լուր ընթերցուածոցն խեղամուտ եղէ արհամարհութեան կամ տգիտութեան Յունաց զայլոց ազգաց։ Յփոքոս համարէր մի 'ի քաղաքաց զԼբերիա*[4]. զոր ես 'ի փիւնիկեցւոյ ուսումնէ վաճառականէ, որոյ մինչև 'ի Ղադիր ձգէին շահավաճառք, տեղեկացեալ զիտէի՝ զի էր Լբերիա աշխարհ ընդարձակ և բազմամարդ։ Յաս ասպ Լուսոսոմն 'ի յիշատակել ուրեք զՀռոմ, հարցեալ զայնմանէ՝ ասէ. Հռոմ քաղաք է Յիտալիա, և աւելի ինչ ոչ գիտեմ՝ բայց զի առաւ այն երբեմն 'ի գաղղիացւոց[5]։

Յաս Իբրև 'ի բաց մեկնեցան վիպագիրքն, եղեն

1 Պլուտ. օր. հաս. հտ. 2. էջ 803։

2 Կուինտիլ. կարգադր. գիրք Ժ. գլ. 1. էջ 634։

3 Ղանգին. յղ. վանմ. գլ. 42։ Դեմետր փաղէր. յղ. պերճախօս. գլ. 75։

* Սպանիա։

4 Յոսեպ. յԱպիոն. գիրք Ա. հտ. 2. էջ 444։

5 Պլին. գիրք Գ. գլ. 5. հտ. 1. էջ 152։

զնացանէ գովութիւնք՝ որոց բազում իրօք էին արժանի։ Մի ոմն յորոց անդն կայէն, և էր նորա 'ի ձեռ խմնոտասիրի արկեալ կրկնոց, վշիռ ետ մեծատոստ. Թէոպոմպ, ասէ, նա ձգեաց նախ զսիրտ մարդոյ յատեան պատմութեան. տեսէք քանի՞ հմտաբար զանդունդն խորհնս հետազոտեաց, և քանի՞ զօրութեամբ ճարտարիսօսութեանն յանդիման արար մեզ զահարկու զննութիւնսն. ամենայն ուրեք կազմ ընդդէմ չքնաղ գործոց, նշաւակէ զյոռութիւնս կեղծաւորեալս դիմակաւ առաքինութեան։։

Իսկ ես ասեմ։ Կասկած է ինձ, թէ գուցէ յաւուր միում գոցին 'ի գիրս նորա թոյնք չարակամութեան ընդ կերպարանօք համարձակութեան և լաւութեան դարանեալ[2]։ Անհանդուրժելի են ինձ դոցա այդպիսեաց դաժան միտք, որ ոչ ինչ արգասիս պարզութեան և անմեղութեան գտանեն 'ի մարդիկ. զի որ ոչն դադարէ 'ի կասկածելոյ զմտաց այլոց, կասկածելի ինձ զնուրն առնէ։

Ա՛յս պատասխանի ետ և ասէ. Հետևակ վիպագրի է պատմել և եթ զերս. վիպագիր իմաստասէր հետազօտէ զպատճառս իրաց։ Ինձ ատելի է անօրէնութիւն, և կամիմ գիտել զանօրէնն՝ զի ատեցից զնա։ Այլ եթէ չիցէ, ասեմ, անօ-

1 Դիոնիս. աղիկ. Թուղթ առ Պոմպ. հտ. 6. էջ 785։
2 Նեպոս յԱղիբ. գլ. 11։
Պլուտ. 'ի Լիսանդր, հտ. 1. էջ 450։ Յովսեպ. յԱպոլ. գիրք Ա. հտ. 2. էջ 459։

բէնութիւն նորա յանդիմանեալ։ Այլ. Արդա-
պարտ է որ ցանկայ անօրինել. զի թէ փառամոլ
ոք իցէ, հետաքրքրելի է յամենայն գնացս նորա,
ոչ զոր առնէն՝ այլ զոր կամի առնել. նմին իրի և
պարտ է ինձ շնորհս ունել զվիպագրին, որ յայտ-
նէն ինձ զդժնդակ գաղանիս ախտին։ Այլ իբր,
ասեմ, կարծիք միոյն՝ որ յատենի դատաւորաց
ոչ աւելի ինչ զօրեն քան որչափ 'ի նպաստ հաս-
տատագոյն ցուցակութեանց, 'ի վէպս ընդդէմ
իրաւացի բողոքոյ զօրեսցեն 'ի դատապարտել
զյիշատակ ուրուք 'ի նախատինս յաւիտենից։
Թէոպոմպ շատ իսկ ճշգրտապատում 'ի վէպսն
թուի. այլ 'ի բաշխելն ըստ հաճոյս զպարսաւ և
զնեբբող, ոչ ևս ընդհատ 'ի ճանապարհակողաց
դատանի։ Եթէ զկրից ինչ բանք իցեն, հարկ է
նոցա զոլ դժնդակ և անմեղկելի. և եթէ
զդժպհոյ ումեքէ', ըստ գործոց ինչ նորա ստեղ-
ծանէ նմա բարս, և ըստ բարուցն զամենայն
կեանս նորա։ Զղուկ էաք, եթէ զբպարտողաց
այսպիսեաց անկ էր իշխել համբաւոյ։
Կրկնեալ անդրէն զայրագին ասէ. Սակայն
եղկելի ևս էաք, եթէ չէր օրէն կապտել զհամ-
բաւ անիրաւ։ Թէոպոմպ նմանն է դատաւորացն
դժոխոց՝ որ 'ի սիրտս մեղապարտից ընթեռնուն
զյանցանս նոցա, և բժշկաց՝ որք խարեն և հա-
տանեն զկեղ, առանց վնասելոյ ողջ մնասանց մար-

1 Ղուկիան. թէ արդեւ գրի պատմ. հտ. 2. էջ 67։

մնայ՝։ Ոչ զկայ առնու նա յաղբերակն ախտից, մինչև ստուգեալ զթունաւորութիւն նորա։ Այլ ընդէր, ասեմ, ինքն իւրոց բանիցն ոչ գայ զհետ. զի՝ի սկզբան գրոցն ոչ վասն այլ իրիք ասէ ձեռնարկել յայն, բայց զի զպարտական մեծարանսն մատուցէ Փիլիպպեայ, համարելով զնա աւագագոյն յարս մեծամեծս որ կացին Հերոպա. և ապա ցուցանէ զնա անկարգ և անիրաւ և նենգաւոր քան զամենայն մարդիկ[2]։ Այթէ Փիլիպպեայ ակնարկեալ ևեթ էր՝ի նա զամ մի, տեսանէր զնա փարեալ վատութեամբ զոտիւք իւրովք։ Այլ՝ի ձայն բառնալ ամենեցուն, յաւելի և ասեմ. Պիտասջիք ասա, զի և արդ թէ ոսկոմսկ յօրինէ ներբող զՓիլիպպեայ լի շնորհիւք[3]. և ուր աստանօր արժան իցէ հաւատալ, վիպագրին թէ իմաստասիրի։

Ոչ միանգամ և ոչ միւսում, ասէ Եւոկրատ, մի՝ի բարեկամաց Աւկղեդեայ։ Այլ էր նա այր գիտնաւոր, որ և պարապեալ՝ի վարժս քաղաքականին և բարոյականին՝ արհամարհէր զպատմութիւն։ Այլ յառաջ մատուցեալ զբանսն, յաւելու. Ակոսիղայոս սուտ յանդիմանի Հայլանիկեայ, և Հայլանիկ Հայիոսէ, և սա ընդհուպ յանդիմանեացի յայլոց։ Օրհնապազ նորանոր վրիպակք՝ի գիրս Հերոդոտեայ գտանին, և Թուկիդիդէս

1 Դիոնիս. աղիկ. Թուղթ առ Պոմպ. հտ. 6. էջ 785։
2 Պողիբ. Ծաղկաքաղ, էջ 21 և 22։ Ատենն. գիրք Զ.
էջ 260. գիրք Ժ. էջ 439։
3 Թէոն. Նախակրթ. էջ 15 և 77։

իսկ ոչ է ազատ 'ի սխալանաց'։ Այ իսպագիրք տգէտք կամ մոռահաճոյք, իրք անհաւատիք ըստ պատ-ճառացն կամ ըստ հանգամանաց, ահաւասիկ փոքր 'ի շատէ յոռութիւնք յարակիցք պատմութեան։

Ահաւասիկ և կենցաղոգտութիւնք նորա, ասէ Աւգղիդէս. նախատիպք քաղաքավարութեան մեծամեծք, և մեծամեծ օրինակք բարոյականին։ Օրհնապաղ 'ի պատմութիւնս ստիպէն դիմել ազգք Աղլադայ առ 'ի գիտել զնուրաքանչիւր անկն, և առ 'ի սահմանել զվէճս. անդ սեռութիւնք իւրաքանչիւր գտանեն զանձնիւր իրաւունս իշխանութեան և փառաց. և անտի ճարտարախօսք մեր ածեն հանապազ վկայութիւնս 'ի ցուցանել զօգուտ մեր։ Իսկ ըստ բարոյականի մասին, ոչ ապաքէն զօրաւորագոյնք ի նոսա օրինակք Աբիստիդեայ և Սոկրատայ և Եւռիպիդայ քան զաղամանսուն պատուէրս նորա 'ի յորդոր արդարութեան, իմաստութեան և հայրենասիրութեան։

Որ ինչ պատմիչք մեր օտար 'ի միմեանց ասանդեն 'ի ժամանակագրել զնախնեացն մերոց իրս և 'ի ճառել զօտար ազգաց, զայն ամենայն՝ եթէ հաճոյ թուի՝ թողցուք 'ի բաց։ Այլ յետ պատերազմացն մերոց ընդ Պարսս, ուստի բուն սկիզբն է պատմութեանս մերոյ, եղև նա աւանդա-

1 Յովսեպ. յԱպիոն. գիրք Ա. հատ. 2. էջ 439։

պահ ցանկալի մերոցս հմտութեանց՝ դարուց 'ի դարս աւանդելոց[1]։ Խաղաղութիւն, պատերազմ, սակը և բաժը, և ամենայն մասունք տեսչութեան քննեալ 'ի համախուռմբ ժողովս, վճիռք նոցա աւանդեալ պահին 'ի դիւանս հասարակաց, պատմութիւն անցից կարևորաց 'ի գրուածս առ հասարակ և 'ի բերանս ամենեցուն հռչակի, և յաղթութիւնք մեր և դաշինք գրոշմեալ կան յարձանս ակներև ամենեցուն։ Այլ ո՞ 'ի մատենագրաց իշխեսցէ հակառակել այսքանեաց երևելի և հաստատարիմ վկայից։

Բայց զի 'ի հանգամանս պատմութեանց ինչ տարաձայնին 'ի միմեանց վիպագիրք, զայն ինձ թերևս 'ի դէմս ածիցես. այլ զի փոյթ է թէ 'ի Սաղամինա կղզեթացիք վատք կամ առաքինիք երևեալ իցեն[2]. շատ իսկ է՝ զի 'ի Սաղամինա, 'ի Պղատիէս և 'ի Թերմոպիլէ հազարք ոմանք, 'ի Յունաց զդէմ կալան բիւրաւորացն Պարսից, և զի անդ թերևս զառաջինն յայտնի եղև Հնմարտութիւնն մեծ և սքանչելի, զի սեր հայրենեաց հզօր է 'ի գործել արութիւնս՝ որ թուին 'ի վերքան զկար մարդոյ։

Տեսարան իմն է պատմութիւն, և դէմք 'ի նմա քաղաքավարութիւն և բարոյականն. անդ մանկրտին ընդունի գնախկին տպաւորութիւնս, որ զբազմաց 'ի նոցանէ սահմանեն բախտ. պարտ է

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 22։ [2] Երոդոտ. գիրք. Ը. գլ. 94։

ապա յանդիմանն առնել նոցա նախատիպս գեղեցիկս առ 'ի նախանձ նմանութեան, և ազգել 'ի նոսա սոսկումն 'ի սուտ քաջութենէ։ Իշխանաց և ազգաց մարթի է առնուլ անտի խրատս կալեալս. պարտ է ապա լինել նմա անախտակիր որպէս զարդարութիւն՝ զորոյ անկ է նմա խնդրել զվրէժ, և անկեղծ որպէս զՀիմարտութիւն՝ որոյ պարծի նա զոլ բերան։ Ի. յնպիսի մեծափառ հասանէն նմա զործք, զորս պարտ էր արանց վիպասելոց լաւութեամբ կատարել զայնոսիկ, և յանդիմանն անաչառ ատենի որպէս զԻ. բիսպագեայն։ Չ. վախճանեալ զանս իւր Չ. կղերեայ, ասէ. Հանուռատիւ ասացից. կենցաղոգտութիւն պատմութեան անհմտութեամբ ևեթ զրողացն նուազէ, և արհամարհի յանհմտութէ ևեթ ընթերցողացն։

## ԳԼՈՒԽ Կ.Օ.

Վասն որ առ Յոյնս յաձախեալ յատուկ անուանցն։

ՊՂԱՏՈՆ 'ի միում ուրեք 'ի Ձառիցն յառաջ մատուցանէ ստուգաբանութիւնս անուանց բազմաց, դիւցազանց և դիւաց և դից[1], համարձակութեամբք՝ որ 'ի շարագրածս յայսպիսիս բնաւորեալ էն։ Օ. Հետ նորա խրախուսեալ և իմ,

1 Պղատ. 'ի Կրատիլ. հտ. 1. էջ 383։

այլ զգուշագոյն քան զնա, ածեմ այսր 'ի ներքս զիտելս ինչ զյաձախսելոց առ Յոյնս յատուկ անուանց։ Պետպ ինձ զայնոսիկ ածին 'ի զիտութիւն յերկոսին խօսակցութիւնսն, զորս 'ի վերս այսր պատմեցի։ Ի նոյն խօսակցութիւնս երբէք երբէք և Ճառք արտուղիք անկան զիմաստասիրութենէ և զՍոկրատայ, և տեղեկացայ հանգամանաց ինչ իրաց նորա՝ զորս պատմեցից 'ի յաջորդ գլուխդ։

Լրկեակ ազգ անուանց են նոցա, պարզք և բարդք։ Ի պարզից՝ են որ 'ի նմանութենէ ինչ կենդանեաց առին սկիզբն. զոր օրինակ Էն, ՠՠԷԾ. Լիկոս, գայլ. Մոաքոս, ոբն. Կորաքս, ագռաւ. Սաւրոս, մողէս. Բաղրաքոս, գորտ։ Լբ են որոց 'ի գունոյ զիմանց թուի առեալ կոչումն. զոր օրինակ Լբգոս, սպիտակ. Մելաս, սեաւ. Բանեթոս, խաբուեաղ. Պիւռոս, կարմիր։

Լ զի և 'ի զիցն անուանց առնուն մանկունք զկոչումն, յաւելմամբ զոյգն ինչ մանկան. որպէս Լպոզենիոս յԼպոզենէ, Պոսիդոնիոս 'ի Պոսիդոնէ, Պետեմետրիոս 'ի Պետեմետրեայ, Լթենէոս յԼթենասայ։

Բարդք յաձախագոյնք են քան զպարզս. ծնողաց աղօթիւք ստացեալ որդի 'ի յոյս ազգատոհմին, յանուն խնամակալ զիցն կոչեն զնա վասն գոհութեան, յաւելեալ յայն զբառս ՠՠԷ, որ թարգմանի տուրք Աստուծոյ պարգև։ Լստի պատճառս առին անուանքն Աթենոդորոս, Դիոդորոս,

Ողիմպիոդորոս, Հիւպատոդորոս, Հերոդորոս, Մթենոդորոս, Հերմոդորոս, Հեփեստիոդորոս, Հեղիոդորոս, Մսկղեպիոդորոս, Կեփիսոդորոս, այլովքն հանդերձ. այս ինքն է պարգև աստուծոյ Դիոսի, Ողիմպիայ, բարձրելոյ, Հերայ, Մթենասայ, Հերմեայ, Հեփեստեայ, արեգական, Մսկղեպեայ, Կեփիսեայ և այլն։

Այն ազգատոհմքն՝ որ 'ի դից համարին սերեալ. ուստի և անուանակոչութիւնքն Դիոգենէս կամ Դիագենէս՝ որ թարգմանի 'ի դէոյ ծնեալ, Դիոգենէս՝ 'ի Դիոսէ ծնեալ, Հերմոգենէս՝ 'ի Հերմեայ ծնեալ, և որ սոցին նմանք։

Ակատեսցի և այս, զի յոլովագոյնք յանուանց զորս յիշատակէ Հոմերոս՝ են մեծարանաց նշանակք. տուեալք 'ի վարձ առաքինութեանց՝ որ 'ի դիւցազնական դարսն առաւել մեծարէին, որպէս քաջութիւն, կորով, արագընթացութիւն, խոհականութիւն, և այլ առաքինութիւնք։ Ի բառէս պոլէմոս որ նշանակէ պատերազմ, ածանցին Տլեպոլեմոս[1] այս ինքն է ծոծծիալ պատերազմի[2], Մքքեպտոլեմոս[3] ոսողջէլ պատերազմի։

Ի բառէս մարդ, որ թարգմանի մարդ, կցորդութեամբ նախադրութեանց և այլոց մասանց բանի՝ որ յեղյեղեն զնշանակութիւն նորա յիմաստս պարծանաց, ստեղծան անուանքս Մմ

[1] Հոմեր. Եղիակ. գիրք Բ. բառն Τλή. տող 657։
[2] Սուդաբ. մատեան, 'ի տող 128։
[3] Հոմեր. անդ, գիրք Բ.

փիմաքոս, Ընդիմաքոս, Պլոմաքոս, Տելեմաքոս։ Բան նմին օրինակի և 'ի բառէս Հոմերէ զօրութիւն, արիութիւն, բարդեցան Ընդապենոր սերող արիոռնեան[1], Ընդենոր վարիչ զօրոռնեան, Պրոտենոր նախաոզբ, և այլ ևս բազում անուանք. որպէս Ընդենոր, Ընտենոր, Ընդեփենոր, Ընքենոր, Պեսենոր, Ինսենոր, Ինպերենոր, և այլն։ Ի բայէս ԴամաօնուաՀեմածանցեցան Ինամաստոր, Ընմիդամաս, Իներսիդամաս, Ինփիդամաս, Պոզիդամաս, և այլն։

Ի բառէս Նոյոս, որ նշանակէ թեթևընթաց, կազմեցան անուանքս Ընթեթոյոս, Ընգկաթոյոս, Պանեթոյոս, Պիրեթոյոս, և այլն։ Ի բառէս Նոյոս, որ է միտք, իմացութիւն, Ընտինոյոս, Ընսինոյոս, Ընտոնոյոս, Ինփինոյոս, և այլն։ Ի բառէս Դէդոս, որ է խորհուրդ, Ընգամեդոս, Ընամեդոս, Ընկոմեդոս, Պերիմեդոս, Ինվասիմեդոս, և այլն։ Ի բառէս Կլէոս որ է փառք, Ընմիկլէս, Ընգակլէս, Ինսիկլէս, Ինորիկլոս, Ընքեկլոս, Ինփիկլոս, Պատրոկլոս, Ալեքսանդրոս, և այլն։

Ընպա ուրեմն պարտ էր բազմաց երկանունս գոլ[2], մի՝ զազգատոհմին ունելով զանուն, և միւս ևս՝ քաջութեամբն իւրով ստացեալ. այլ երկրորդն մոռացումն ընդ հուպ առնէր առաջնոյն։

Ընդանք մեծարանաց զորս ահա նշանակեցի,

1 Հոմեր. Եղիակ. գիրք Բ. տող 609։ Պարապ. գիրք Ը. տող 114։ 2 Եւստաթ. յառաջին գիրս Եղիակ. հա. 1. էջ 124։

և այլ և յոլովք զորս լուեմ, որպէս Որմենոս՝ սասպէկ, Պստերոպէոս[2] շանթող, այլովքն հանդերձ, որդւոց յորդիս անցանէին 'ի յիշատակ քաջութեան հարցն, և 'ի նախանձ նմանութեան նոցին[3]։ Որք և կան և մնան ցարդ, և յայլ և այլ դասս քաղաքայնոց անցեալ՝ ոչ ևս մեծարին. են իսկ՝ որոց պայման կենացն կամ բնաւորութիւն՝ որում վիճակին 'ի ծնել, հակառակ են անուանցն։

Որմն 'ի պարսկաց, որ 'ի շուք անուան ևեթ իւրոյ խրոխտացեալ պանծայր, ելն յԱթենս. և զի ծանօթ էր իմ 'ի Շ. օր, ածի զնա 'ի հրապարակն, և բազմեցաք 'ի ժողով աթենացւոց՝ որ խօսէին ընդ միմեանս։ Յարցն նա ինձ զանուանս նոցա հանդերձ մեկնութեամբքն, և ասեմ. Զրաջինն կոչի Յուդոքսիոս, այս ինքն է բարեբաստ. և պարսիկն խոնարհեցաւ առաջի նորա։ Յերկրորդն, ասեմ, կոչի Պոլիկլետոս՝ որ է բազմահաճեալ։ Յչ զնա առաւել ևս մեծարեաց, և ասէ ցիս. Յցեն արդեօք դոքա իշխանք աշխարհիդ։ Իսկ ես ասեմ. Մինևին իսկ ոչ, այլ հազիւ ծանուցեալք 'ի ժողովրդեան։ Յերրորդ այդ երևեալ տկար՝ կոչի Զասթենէս կամ Թերևս Մեդասթենէս իսկ, այս ինքն է հզօր կամ ճեծաղօր։ Չորրորդն՝ դեր և ծանրամարմին՝ կոչի Պրոթոյոս, այս ինքն է ընբնա-

1 Հոմեր. Եղիակ. գիրք Ը. տող 274։

2 Նոյն անդ. գիրք ԺԷ. տող 217։

3 Եւստաթ. Յեղիակ. հատ. 2. էջ 650։ Պարապ. Հոմեր. գիրք Բ. տող 495։

կամ արաբերեն։ Հինգերորդն՝ որ Թուի տխուր՝ կոչի Լակիբարէս, այս է ղուարբն։ Լա յառաջեալ պարսիկն ասէ. Լակ վեցերորդն։ Վեցերորդն, ասեմ, կոչի Սոատրատոս՝ որ է էրէնէ ղօրաց։ Ասէ. Օ՞ զրաւաւոր ուրեմն կացեալ ինչ դորա։ Ասեմ. Այ, և չիք իսկ դորա զօրաւարեալ։ Լաօթներորդն կոչի Վիտոմանքոս, այս է հուլակաւոր 'ի մարդէ. այլ ինքն փախստական յամենայն պատերազմունս լեալ՝ վատ յամենեցունց Հանաչի։ Ութերորդին անուն կոչի 'Նիկէոս', այս ինքն է արդար։ Պարսիկն ասէ. Լա չինչ՞ արդար։ Ասեմ. Յաբեբայ քան զամենայն մարդիկ գտանի։ Լա իբրև զինն ներորդին ևս մեկնէի զանուն՝ զի կոչէր Լաեղթոն, այս ինքն է բարեաւէնեալ², յոտն եկաց հիւրն և ասէ ցիս. Պոքա այդոքիկ թշնամանեն զանուն իւրեանց։ Լակ ես ասեմ. Ա՛յլ գոնեա ոչ մնափառին յանուանս իւրեանց։

'Լախատական անուն գրեթէ և ոչ մի գտանի 'ի գիրսն Հոմերի. և արդ յաՀախեալ են, այլ յոյժ նուազ քան որչափ 'ի դէպ էր ակն ունել 'ի ժողովրդենէ՝ որ հետազօտէն ծաղու իրս և պարսաւադէտն է։

¹ Երոդոտ. գիրք Ը. գլ. 65։ ² Նոյն, գիրք Դ. գլ. 162։

# ԳԻԼՈՒՍ ԿԼ·

Զ Սոկրատայ։

Սոկրատ Սոփրոնիսկեայ անդրիագործի որ-դի՝, առ ժամանակ մի զարուեստս հօրն կալեալ փա-ռօք, ապա եթող զայն 'ի բաց[2*]։ Լաւ էր մայր նորա Փենարետա մանկաբարձ[3]։

Համեմատութիւնք գեղեցիկք և ձեռք վայե-լուչք, տպաւորեալք զրչաւ 'ի կիՃն, ետուն նմա զնախագիծ օրինակ կատարելութեան. ընդ որ տակաւ գերաստիՃանեալ մտօք, խելամուտ եղև զի հարկ էր՝ թէ 'ի մասունս տիեզերացս գոյր բնաւից առ միմեանս յարմարութիւն, և 'ի մար-դումն ՃշգրիտՃ համեմատութիւն գործոց ընդ պարտս։

Լռ 'ի հասու լինելոյ առաջնոցս այսոցիկ գի-տելեաց, ետ զանՃն յամենայն աղգի աղգի վարժս արիութեամբ և անյաւրութեամբ եռանդուն և յամառ ուսումնասիրութեանն։ Լչ զի 'ի հե-

[1] Պղատ· յԱղկիբ· 1· հտ· 2· էջ 132։ Դիոգ· լայերտ· գիրք Բ· յօդ· 18։

[2] Դիոգ· լայերտ· գիրք Բ· յօդ· 19։ Պաւսան· գիրք Ա· գլ· 22· էջ 53· գիրք Թ· գլ· 35· էջ 782։

* Սոկրատայ գրոչեալ էր զանգրիս երեցունց Շնորհաց, որ առ գրան միջնաբերդին ա-թենացւոց· և էին նոքա ծած-կեալք քօղով, որպէս 'ի ժա-մանակին յայնմիկ սովորութիւն էր գրոչել զնոսա։ (Պաւսան· անդ։)

[3] Պղատ· 'ի Թէէտ· հտ· 1· էջ 149։

տաղօտութիւն բնութեան[1], և էր՝ զի 'ի չափա-
կան գիտութիւնս[2], և մերթ յարուեստս ախոր-
ժելիս մտադիւրութեամբ պարապէր։

Այլ այս նա 'ի ժամանակի, յորում թուէր մտաց
մարդկան օր ըստ օրէ բանալնորանոր աղբիւրս գի-
տութեանց։ Այլ կեակաւ դասք մարդկան յանձն ա-
ռեալ էին զհոգ ժողովելոյ և բաշխելոյ զայնս. ի-
մաստասէրքն, յորոց յոլովք պարապէին զամե-
նայն կեանս իւրեանց 'ի հետազօտել զլինելու-
թիւն տիեզերաց և զլինութիւն էից. և իմաստակք,
որք զբօսանս իւրեանց համարէին հարևանցի ինչ
գիտութեամբք և ճոռոմ ճանաչողութեամբք
ճառել զամենայն մասանց բարոյականին և քաղա-
քականին, առանց և ոչ մի ինչ ածելոյ 'ի գի-
տութիւն։

Սակրատ յաճախէր առ երկաբանչիւրսն[3], զար-
մանայր ընդ աջողութիւնս մտաց նոցա, և վրի-
պակաւք նոցա իմաստնանայր։ Ուրաջնոցն զհետ
երթեալ, ետես զի ըստ յառաջ մատչել յասպա-
ւիրելին՝ թանձրանայր զիւրև մէջն. և 'ի միտ էառ,
զի բնութիւն զառաջին կարևորսն կամակար
տայ մեզ 'ի գիտութիւն. զնուազ պիտանիս թո-
ղու կորչել 'ի ձեռաց իւրոց. իսկ որ ինչ առ ընդ-
վայրաքնին խոյզս և ետ են պիտանացու, խափա-

1 Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 96։
2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 814։
3 Պղատ. 'ի Մեն. հտ. 2. էջ 96։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յոդ. 19։

նէ 'ի մէնջ 'ի սպառ։ Վասն որոյ և 'ի բացայայտուէ նոցա և 'ի մթութենէ առեալ զչափ կարևորութեան նոցա, հրաժարեաց յուսմանէ առաջին պատճառաց, և եթող 'ի բաց զամենայն առաջարկութիւնս իմանալիս՝ որ ոչ առ այլ ինչ էին պիտանացու, բայց 'ի տարնապել և մոլորեցուցանել զմիտս։

Զարդ որում իմաստասիրացն տեսութիւնք մտաց թուէին ընդունայնք, վասնզի կարագոյնք ևս յոյժ թուէցան նմա իմաստակք այնու, զի սոքա զամենայն վարդապետութիւնս հաստատեալ, և ոչ զմի 'ի նոցանէ ընկալեալ, մուծանէին 'ի նեղքս զհամարձակութիւն երկբայելոյ զհիմարտութեանց կարևորագունից 'ի խաղաղութիւն կենաց մարդկան։

Ի զրաջան խուզարկութեանցն իւրոց 'ի միտ էառ, զի միայն գիտութիւն կարևոր մարդկան էր գիտել զպարտս իւրեանց, և միայն պարապումն արժանի իմաստասիրի՝ ուսուցանել նոցա զայնս. և ընդքննութեամբ բանին արկեալ զմարդկան առ դիս և զառ միմեանս հայեցումն, հաստատեցառ յայս աստուածաբանութիւն պարզ՝ որում ընդ բազմահոլով դարս խաղաղութեամբ պատկառ կացեալ էին ազգք և աղինք։

Վերաբերն իմաստութիւն պահպանէ յան-

1 Քսենոփ. Յիշատ. գիրք Դ. գլ. Լայերա. գիրք Բ. Ա. էջ 710. գիրք Դ. էջ 815։ Յոգ. 21։

ծերանալի մանկութեան զտիեզերս զոր ստեղծ՝. անտես է ինքնին, այլ աքանչելիք զորս արարն՝ պատմեն զփառս նորա։ Զգտի ընդ էքս առ հա-սարակ խնամակալութիւն դից, որ ամենավայրք են ամենատեսք և ամենալուրք[2]։ Ի մէջ անբաւ բազմութեան էիցս հաստելոց՝ ի նոցանէ, մարդս գերազանցեալ՝ ի կենդանիս յառաջամատնութիւնք, և մանաւանդ իմացականութեամբն՝ որով իմա-նայ զաստուած, միշտ սիրելի եղև նոցա և նախամե-ծար՝ ի նոցանէ[3]։ Զոքա խօսին առ նա անդադար տիրական օրինօքն, որ՝ ի սիրտ նորա դրոշմեալ. «Երկիր պագ դից, պատուեա զծնօղս, հատո բարիս բարեբարաց»[4]։ Զարբառին առ նա և՝ ի ձեռն պատգամախօսաց իւրեանց՝ որ ընդ ամե-նայն երկիր, և բազում՝ աքանչելեօք և գուշա-կութեամբք՝ որ թարգման են կամաց նոցա[5]։

Զի և ոք ապա բողոք կալցի զլռութենէ նոցա. մի՞ ոք ասիցէ՝ թէ նոքա բարձունք են յոյժ, և չիո-նարհին՝ ի տկարութիս մեր[6]։ Զի թէպէտ և զօ-րութեամբ գեր՝ ի վերոյ կան, այլ բարութեամբն մերձեցուցանեն զմեզ առ իւրեանս։ Զայլ զինչ պահանջիցեն. բայց զպաշտօնն՝ ի վայրս իւրա-

1 Քսենոփ. Կիւրոպեդ. գիրք Ը. էջ 237։ Նոյն, յիշատ. գիրք Դ. էջ 802։

2 Նոյն, յիշատ. գիրք Ա. էջ 711 և 728։

3 Նոյն անդ, էջ 727. գիրք Դ. էջ 800 և 802։ Պղատ. ի Փեդոն, հտ. 1. էջ 62։

4 Քսենոփ. անդ. գիրք Դ. էջ 806 և 808։

5 Նոյն անդ, գիրք Ա. էջ 708 և 709. գիրք Դ. էջ 802։

6 Նոյն անդ, գիրք Ա. էջ 728։

քանչիւր սահմանեալ [1], զաղօթս 'ի թախանձել անսահմանաբար զինեալս նոցա, զզոհս՝ յոբում կարևորագոյն է սրբութիւն սրտի, քան զփարթամութիւն նուիրաց. զի պարտ էր հրաժարել 'ի կենաց, եթէ զոհք չարագործաց աստուածահաճոյք էին քան զաւանցն [2]։ Պահանջէն և այլ ինչ. զի առ 'ի պաշտել զնոսա՝ հարկ է հնազանդել նոցա [3], և առ 'ի հնազանդել՝ լինել պիտանի կենցաղումս։ Իսկ ոմանն որ վաստակէ 'ի բարեկենդանութիւն ժողովրդեան, մեկին որ արգասաւորել զերկիր, և ամենեքին որ զիւրաքանչիւր պարտս կատարեն զգուշութեամբ, մատուցանեն դից պաշտօն բարի [4]. այլ պարտ է հանապազորդել նոցա 'ի նոյն։ Զանց ջերմեռանդն բարեպաշտութեան և յուսոյ և վստահութեան ոչ է մարթ հաճոյ լինել նոցա [5]։ Մի զկարևորագոյն ինչ բուռն հարցուք, մինչև զնոսա հարցեալ. մի ինչ ընդդէմ հրամանաց նոցա գործեսցուք [6]. և զիտացուք զի երեսք նոցա լուսաւորեն և ընուն զամենայն տեղիս և զկարի իսկ խաւարիս և ամայիս [7]։

Ոչ ինչ զաստուածային բնութենէն Ճառեաց Սոկրատ, այլ եցոյց միշտ յայտնապէս զգոյութիւն նորա և զինամակալութիւն, զորս դաւա-

1 Ֆսեենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 803։
2 նոյն անդ. գիրք Ա. էջ 722։
3 նոյն անդ. գիրք Դ. էջ 803։
4 նոյն անդ. գիրք Դ. էջ 780։
5 նոյն անդ. գիրք Դ. էջ 803։
6 նոյն անդ. գիրք Ա. էջ 709։
7 նոյն անդ. էջ 728։

նէրն 'ի սրտէ, և միայն 'ի Հնմարտութիւնս անդր հնարաւոր և կարեւոր համարէր հասանել։ Զա-նեաւ նա զմի աստուած, արարիչ և պահպանիչ տիեզերաց[1], զեր 'ի վերոյ դիցն խնամարհագունից հաստելոյ 'ի նմանէ, և հաղորդելոյ իշխանութեան նորա. և զսոսա արժանիս պաշտելոյ 'ի մարդկանէ։ Այլ ամենայն երկիւղածութեամբ պատրաստ էր ամենայն ուրեք երկիր պագանել նմա, և պատուել զպաշտօնեայս նորա՝ յոր ա-նուն և կարդայր ոք զնոսա, եթէ միայն ա-զատք 'ի տկարութեանցս մերոց համարէին, և ուր մնապաշտութիւնք ոչ 'ի նեղքս խանդէին թշնամանադիրք պաշտման նոցա, և 'ի բաց մերժէին 'ի կրօնից առասպելք՝ զորս հաստատէր իմն պիւթագորեանն և Այմպեդոկղէայն խնա-տասիրութիւն[2]։ Այ՝արթ համարէր արարողութեց զանազանել ըստ ազգաց, այլ պարտ համարէր հաստատել նոցա յօրինաց, և զուղղութիւն մտաց մերձ ունել[3]։

Այ հետազօտեաց նա զպատճառս չարեաց, ոչ զբարոյականացն և ոչ զբնականաց. այլ ծանեաւ զբարիս և զչարիս՝ որ յօրինեն զբարեբաստու-թիւն և զթշուառութիւն մարդկան, և զայս բա-րոյականին եդ հիմն։

Հնմարիտ բարին յարատեւակ է և անփոփոխ,

1 Քուսավորթ տեսութիւն մտաց. գլ. 4. յօդ. 23։ Պը-ղատոնէ. պատմ. խմբատատ. հա. 1. էջ 560։

2 Քանեոպ. յիշատ. գիրք Դ. էջ 803։

3 Պլուտ. յդ. գիւրին Սոկր. հա. 2. էջ 580։

ընու զՀոգի առանց հիւծելոյ. 'ի բազում խաղա-
զութեան կացուցանել զնա զարդիս, և անբերկեան
զՀանդերձելոյ։ Այլ չէ այն 'ի վայելս բերկրա-
նաց կամ իշխանութեան կամ առողջութեան
կամ մեծութեանց և փառաց. զի սոքա, և որ ինչ
առաւել գրգռեն զկրգս մեր, ոչ են ըստ ինքեան
բարիք. քանզի օգտակարք և վնասակարք ըստ
վարելեացն գտանին', կամ ըստ արգասեացն՝ զոր
բնաւորեալ են մատուցանել։ Զի կիսոց կից են
տանջանք, այլոց զՀետ գնան դատնութիւն և
խիղճ մտաց. և կորնչին առ Հասարակ 'ի զեղծա-
նել ուրուք նոքօք, և կասկած կորստեանն խա-
փանել զվայելսն։

Այլ ոչ զբարեաց յորոց զարՀուրիսքն, արդա-
բագոյն բերեմք կարծիս։ Վասն 'ի նոցանէ, որպէս
արՀամարՀութիւն, հիւանդութիւն, աղքատու-
թիւն, է ուրեք՝ զի հակառակ ահարկութեանն
առաւելագոյն գործեն օգուտ քան զմեծարանս,
զմեծութիւնս և զառողջութիւն[2]։

Զարդ այսպէս կացեալք 'ի մէջ իրաց, զորոց ան-
գիտանամք զբնութիւն, Հոգիս մեր տատանեալ
և անստոյգ նշմարել յաղօտ ինչ նշոյլ զբարին
և զչար, զարդարն և զանիրաւ, զպատշաճն և
զանպատշաճ[3]։ Այլ քանզի ամենայն ինչ զոր առ-

1 Պղատ. 'ի Մենն. հա. 2. էջ 88։ Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 777. գիրք Դ. էջ 798։

2 Քսենոփ. անդ. գիրք Դ. էջ 798 և 799։

3 Պղատ. յԱղկիբ. հա. 1. էջ 117։ Նոյն, 'ի Պրոտ. հա. 1. էջ 357։

նեմքս ընտրութիւն է, և ընտրութիւնքս այսոքիկ որչափ կարեւորագոյնք իցեն այնչափ անխորհրդագոյնք են, վասնզ առաջի կայ մեզ յարաժամ անկանելոյ յորոգայթս որ շուրջ կան զմեզ։ Լուսոյ ներհակք՝ ի գնացս մեր յաճախեալք, առաքինութիւնք դիւրագայթք, և բարեբաստութեան կարգք վեր՝ ի վայր շրջեալ։

Այլ դիք ետուն մեզ ուղեցոյց՝ ի բազմամբեպ շաւիղս յայսոսիկ զմտաստութիւն, որ մեծն է քան զամենայն բարիս, որպէս տպիտութիւն քան զամենայն չարիս՝։ Մտաստութիւն է բան լուսաւոր[2], որ զերկիւղալին և զյուսալի մերկացեալ՝ ի սուտ երանգոց՝ ցուցանէ մեզ որպիսիք են՝ ի բնէ, հաստատէ զյողդողդութիւն դատմանց մերոց, և սահմանէ զկամս մեր ըստ զօրութեամբ բացայայտութեան։

Ի ձեռն պայծառ և յստակ լուսոյս է մարդ արդար, խելամուտ լեալ՝ զի բարի է նմա հնազանդել օրինաց, և մի ուրեք անիրաւել[3]։ Լովին դարձեալ սակաւապէտ է և ժուժկալ, քանզի տեսանէ յայտնապէս՝ զի շուայտութիւն և զեղխութիւն ձգեն զհետ իւրեանց զկորուստ առողջութեան և զգոյից և զհամբաւոյ։ Լովին դարձեալ է արիասիրտ, քանզի տեսանէ զվտանգս և

1 Պղատ. յԵրեթիդ. հա. 1. էջ 281։ Դիոդ. լայերտ. գիրք Բ. յոդ. 31։

2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 812։

3 Նոյն անդ, էջ 803, 805 և 806։

4 Պղատ. ի Պրոտագ. հա. 1. էջ 353։

զՀարկ խիզախելոյ ընդդէմ նոցա[1]։ Լ՝ սմանկ, և այլ ամենայն առաքինութիւնք նորա յառաջ գան, կամ մանաւանդ ոչ այլ ինչ՝ բայց խնամ-տութիւն ըստ ազգի ազգի հանգամանաց կենաց պատշաճեալ[2]։

Լ՝նչա ուրեմն ամենայն առաքինութիւն է գի-տութիւն, որ յաւելու հրահանգօք և խոկմամբ[3]. և ամենայն յոռութիւն է մոլորութիւն, որ բնա-ւորապէս յառաջ բերէ զայլ ամենայն յոռու-թիւնս։

Լ՝. յամ՝ առաջարկութեան՝ զորմէ և արդ իսկ խնդիրք են առ խնամատարսն, էին և յաւուրս Սոկրատայ հակառակորդք՝ որք ասէին. Օ՝տկա-րութենէս մերմէ պարտ է մեզ բողոք ունել և ոչ զտգիտութենէ, զի ոչ եթէ չգիտիցեմք զչարն՝ զոր գործեմք[4]։ Լ՝ Սոկրատ պատասխանէր. Լ՝յլ չգիտէք իսկ. զի եթէ համարէիք զայն չար, մերժէիք յանձնէ՛ի բաց[5]. այլ ընտրէք զայն քան զարին, զի լաւագոյն թուի ձեզ այն։

Իսկ նորա վիճեալ սնդէին. Օ՝ ընտրութիւնն զայն, ասէն, դատապարտեմք յառաջ իսկ և յե-տոյ քան զանկումն[6]. այլ է երբեմն, զի հրապոյրք

1 Ք՝սենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 812։
2 Նոյն անդ. գիրք Գ. էջ 778. գիրք Դ. էջ 812։
3 Նոյն անդ. գիրք Բ. էջ 754։ Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Զ. գլ. 13. էջ 82։
4 Պղատ. Ի Պրոտագ. էջ 352։
5 Նոյն անդ. էջ 358։ Նոյն Ի Մենն. հատ. 2. էջ 77։
6 Արիստոտ. անդ. գիրք Է. գլ. 3. հատ. 2. էջ 86։

հեշտութեան տան մեզ մոռանալ զգիտութիւնս մեր, և զողանան յաչաց մերոց զՀանդերձեալսն՝։ Օ՛ի ոչ եթէ շինջուցանել երբեքէ կարիցեմք զբոց կրից մերոց, որ գերեն զմեզ։

Իսկ Սոկրատ ասէր. Լ՚թէ գերի իցէք, ոչ էս պարտ է ձեզ յուսալ յառաքինութիւնս, ուստի և ոչ բարեբաստութեան ակն ունել։ Անմոստութիւն՝ որում պահեալն է տալ զայն, ազատաց եւեթ՝ի մարդկանէ առնել զձայն իւր լսելի, և կամ այնոցիկ՝ որ զՀետ են ազատութեան[2]։ Լ՚ա՝ի դարձուցանել՝ի ձեզ զազատութիւն, չինդրէ այլ ինչ՝ բայց հրաժարել յեկամուտ կարեաց։ Որչափ առաւել քաղցրանան ումեք խրատք նորա և խելամուտ լինի՝ի նոսա, նոյնչափ դիւրագոյն թօթափիէ զլուծ ծառայութեանցն՝ որ ամբոխեն և մթացուցանեն զմիտս նորա։ Օ՛ի ոչ՝ի բռնաւորութենէ կրից երկնչելի է, այլ՝ի տգիտութենէ՝ որ մնանէն զձեզ՝ի ձեռս նոցա, յանձախելով զզօրութիւնս նոցա։ Լ՚թէ քակեսցի իշխանութիւն նոր, բարձցին՝ի միջոց պատրանքդ որ շլացուցանեն զձեզ, և խառն՝ի խուռն և յողդողդ կարծիքդ՝ որ ձեզ գիտութիւնք թուին։ Լ՚յնուհետև պայծառութիւն և գեղ առաքինութեան այնպէս՝ի հոգիս մեր տպաւորեսցի, զի ոչ էս կարասցուք զդէմ ունել հզօր ողբանացն որ ձգեն զմեզ։ Յայնժամ կարիցեմք ասել, թէ տկարանամք

1 Պղատ. ՝ի Պրոտագ. էջ 352 և 356։

2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 808։

առ չարութիւն [1]. զի չկարեմք խելամտութեամբ նախադասել բարւոյ զչար, և ոչ զգոտակարն նախամեծար առնել քան զգոտակարագոյնն [2]։

Սոկրատայ ընկերմեալ 'ի մտածութիւնս յայս, երկնեաց զիսորհուրդն չքնաղ և կարևոր՝ եղծանելոյ, եթէ չէր տարաժամ, զմոլորութիւնս և զմտահաճութիւնս՝ որ թշուառութիւն և նախատինս ածեն մարդկան։ Ինդ էր տեսանել զայր մի սոսկական, աննշան և անզօր, առանց օգտի ինչ ակնկալութեան կամ փառաց ցանկութեան, ստանձնեալ զտաժանաւորն և զվտանգաւոր հոգ ուսուցանելոյ զմարդիկ, և 'ի ձեռն ձշմարտութեան ածելոյ զնոսա յառաքինութիւն։ Օր ահաւասիկ նուիրեալ զկեանս իւր և զամենայն իսկ զվայրկեանս կենացն 'ի գործն գերապանծ, կատարէր զայն եռանդեամբ և չափոյիւք՝ զոր աղդէ իմաստուն նախանձ հասարակաց բարւոյ, լինելովնեցուկ՝ որքան զօրէրն՝ խարխալելոյ պետութեան, օրինաց և ուղղութեան բարուց։

Ոչ խնդրեաց նա երբեք մտանել 'ի տեսչութիւն իրաց աշխարհին, զի գործ ազնուականագոյն հասանէր նմա. զի 'ի պատրաստել լաւ քաղաքացիս, բազմապատիկ ևս համարէր մատուցանել զպարտս ծառայութեան իւրոյ առ հայրենիս [3]։

1 Արիստոտ. աւագ բարոյ. գիրք Ա. հա. 2. գլ. 9. էջ 153։
2 Պղատ. 'ի Պրոտագ. հա. 1. էջ 358։ Նոյն, 'ի Մէն. հա. 2. էջ 77։
3 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 732։

Այլ քանզի չկամէր զառաջարկութիւն բարեկարգութեանն յայտ առնել, և ոչ 'ի կատարումն այնորիկ անձասպարէր, չետ ամենևին ինչ 'ի գիր, և ոչ ժամանակեմանեաց ժողովելոյ լսողաց առիւր [1], այլ 'ի հրապարակս և 'ի հասարակաց ճեմելիս, յակումբս ազնուականաց և յամբոխս ռամկին, պարապ առեալ ուսուցանէր զիւրաքանչիւր պարտս առագանոյն և արուեստաւորաց և մշակաց, և ամենեցուն առ հասարակ եղբարս իւրոց, զի այսպէս զամենայն մարդիկ համարէր [2]*։ Ի սկզբան ճառս ինչ վեր 'ի վերոյ 'ի ներքս ածեալ, ապա տակաւ յանդգնութենէ զկենաց իւրաքանչիւրոցն առնոյր հատոր. և բազմագոյնք 'ի նոցանէ 'ի միտ առնուին հիացմամբ, զի բարեբաստութիւն ըստ անձնիւր պայմանի հաստատեալ է 'ի լինել ազնիւ ազգական, բարեկամ բարի, և լաւ քաղաքացի [3]։

Ոչ էր ակնկալն Սոկրատայ թէ վարդապետութիւն իւր հաճոյ թուեսցի աթենացւոց 'ի ժամանակին, յորում պեղոպոնեսական մարտն յուզէր զազգս, և զհամարձակութեան լցեալ էր ըզչափ. այլ յուսայր՝ զի որդիք նոցա հլուք քան

1 Պլատ. յղ. Ծերոյ տես. տեսել զհատ. հտ. 2. էջ 796։

2 Նոյն, յղ. տաբար. հտ. 2. էջ 600։ Կիկերո. առակուլ. գիրք Ե. գլ. 37. հտ. 2. էջ 392։

* Սոկրատ կոչէր զանձն աշխարհաքաղաքացի. (Կիկերո. անդ.) իսկ Արիստոխպոս տաբաշխարհիկ ամենայն ուրեք զանձն անուանէր։ (Գաղենոփ. Յիշատ. գիրք Բ. էջ 736։) Երկոքին այսոքիկ անուանքս բաւականք են առ 'ի տալ զնկարագիր վարդապետին և զաշակերտին։

3 Պլատ. 'ի Ղաք. հտ. 2. էջ 187։

զՀարան առանդէին զայն յետնոց։

Զգէր յինքն զնոսա քաղցրութեամբ բանից, և մերթ ևս խրախճանակից լինելով ընդ նոսա՝ առանց կցորդ լինելոյ զեղխութեան նոցա։ Մի ոմն 'ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Լ,սքինէս, 'ի լսել զբանս նորա՝ ասէ. Զիք ինչ իմ; Սոկրատ, այլ զոր ունիմն՝ զանձն իմ՝ քեզ ընծայեմ։ Լ,ս նա ասէ. Զգիտես զգեղ իրիդ՝ զոր ընծայեսն։ Լ,սիս քան զամենայն քնեալ զբարս նոցա. օգնէր նոցա հարցուածովք առ 'ի յայտ ածել զխորհուրդս նոցա, և բռնադատէր զնոսա պատասխանեաւքն՝ հրաժարել յայնցանէ։ Սահմանք Ճշգրիտք մերժէին տակաւ 'ի մտաց նոցա զմոլար գիտութիւնս՝ յորս նախակրթեալն էին, և առարկութիւնք երկբայութեանց Ճարտարք՝ յաՃախէին զվարանս նոցա և զցանկութիւն գիտութեան։. զի արուեստ նորա մեծ այն էր, անբերելի առնել նոցա զտգիտութիւն իւրեանց և զվերութիւնս։

Բազմաց չՀանդուրժեալ հանդիսից այսոցիկ փորձութեանց, և զամենի հարեալ ընդ պայման կենաց իւրեանց՝ յորմէ չկարէին հրաժարել, թողին զՍոկրատ և գնացին. և նման ոչ ինչ փոյթ եղև կոչելոյ զնոսա անդրէն[2]։ Իսկ այլք կորանօքն իւրեանց ուսան երկմտել զանձանց. և յայնմհետէ ոչ ևս լարէր որոգայթ մատիսառութեան նոցա[3]։ Ոչ խստիւ իբրև զքննիչ ոք խօսէր ընդ նոս-

[1] Քսենոփ. Յիշատ. գիրք Դ. էջ 798։

[2] Նոյն անդ, էջ 799։

[3] Նոյն անդ, էջ 800։

սա, և ոչ խրոխտով որպէս զիմաստակ. ոչ ևս դառն կշտամբանք, և ոչ ստգտանք ծանրատաղտուկք, այլ բանականութիւն և բարեկամութիւն 'ի բերան առաքինութեան բարբառէր։ Ջանայր կրթել զմիտս նոցա, զի պարտ էր պատուիրանաց յենուլ յօրէնս. և հրահանգէր ըզնոսա 'ի հակառաւութիւն, զի կարող լինէին զդէմ ունել ձարտարմտութեանց հեշտախտութեան և այլոց կրից [1]։

Ընդեղ որ իբրև զնա աննախանձ. որք միանգամ զչափական մակացութեանց ծանծաղ ինչ և վեր 'ի վերոյ ցանկային ունել զգիտութիւն, յուցանէր նոցա վարժապետս հմտագոյնս քան զինքն [2]։ Լակ որ յայլ վարժարանս կամէին յաձախել, յանձն առնէր զնոսա իմաստասիրաց, զորս նոքա նախամեծար առնէին քան զինքն [3]։

Լպրատք նորա էին զուցատրութիւնք ընտանեկանք, և խառն ընդ նոսա պատձառք ձառիցն յարակցեալ։ Լր զի ընթեռնոյր ընդ նոսա ըզպիրս իմաստնոց՝ որ յառաջ քան զինքն կացեալ էին [4], և երկրորդէր զընթերցուածն, զի առ 'ի հանապազորդել 'ի սէր բարւոյն՝ պարտ համարէր յաձախ խելամտել ձշմարտութեանց, որոց յառաջագոյն ուրուք խելամուտ լեալ իցէ։ Լբ էր զի խնդիրս 'ի մէջ առնոյր զարդարութենէ, զգիտու-

1 Բանենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 810։
2 Նոյն անդ. էջ 814։
3 Պլատ. 'ի Թէետ. էջ.
4 Բանենոփ. անդ. գիրք Ա. էջ 151։
4 Բանենոփ. անդ. գիրք Ա. էջ 751։

թենէ և զՀնմարիա բարւոյն [1], և ասէր. Կորիցէ յիշատակ յանդգնելոյն՝ որ նախ ընդ արդարն և ընդ օգտակար արար խտիր [2]։ Լաւ էր դարձեալ՝ զի առաջի առնէր նոցա մի ըստ միոջէ զմարդկան ընդ միմեանս կցորդութեան պատշաձն, և ընդ այլս յէից՝ որ շուրջ զնոքօք պատեալ կան [3]։ Հը-նազանդութիւն կամաց ծնողաց, եւս և ծանուցց. կատարելագոյն եւս հնազանդութիւն հրամանաց հայրենեաց, և կարի խիստ խստագունից [4]. հաւ-ասարութիւն հոգւոյ յերկաքանչիւր ներՀակս բախ-տին [5]. պարտք պիտանի լինելոյ մարդկան. հարկ կալոյ 'ի պատերազմի ընդ կիրս անձին, և 'ի խա-զաղութեան ընդ կիրս այլոց. զայս ամենայն յստակ և հաւաստի բանիւք վարդապետէր Սոկ-րատ։

Որով 'ի միտս լսողացն պարզէին բազմահոծ գիտութիւնք նորանորք. որով և վՀրգէն աստ անդ հետք բանից նորա պահեալք, թէ որչափ նուազագոյն կարօտի ոք իրաց՝ այնչափ նմանա-գոյն աստուծոյ գտանի [6]. և զի դատարկութիւն արհամարհ առնէ զայր և ոչ աշխատութիւն [7]. և զի ակնարկութիւն 'ի գեղ, հանդերձ ախորժե-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 751։

2 Կիկերո. յղ. օր. գիրք Ա. գլ. 12. հտ. 3. էջ 126։ Նոյն, յղ. պատշաձ. գիրք Գ. գլ. 3. էջ 259։

3 Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 794։

4 Պղատ. 'ի Կրիտ. հտ. 1. էջ 51։ Նոյն, 'ի Պրոտագ. էջ 346։

5 Աստր. Ճառ. 147. էջ 234։

6 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 731։

7 Նոյն անդ, էջ 720։

լով, զեղու 'ի սիրտ զվեցն մահացու[1]. և զի փառք խնամանոյ է զոլ առաքինի առանց ցանկալոյ երևել. և բերկրութիւն նորա՝ յաւելուլ օր ըստ օրէ յառաքինութիւն[2]. և զի լաւ է մեռանել բարեհամբաւ, քան կեալ նախատանօք. և զի ոչ է պարտ չարի չար հատուցանել[3]։ Դարձեալ մի և այս էր յահաւոր Հնմարտութեանցն, զոր պնդագոյնս ցուցանէր. զի չիք չարագոյն խաբեութիւն քան 'ի ինդիր լինել տեսչութեան և առաջնորդելոյ մարդկան, առանց ունելոյ զհանճար առաջնորդական[4]։

Ա.ԶԴ ԼԲԸ մարթէր յանդուգն տգիտութեան չհակառակել այնմ, որ զօրութեամբ ուսման և ջանից հաղիւ օրէն համարէր իւր ասել՝ թէ գիտէր զտգիտութիւն և էթ զիւր[5], և որ զկարևորագոյն իշխանութիւնս աշխարհին համարէր դաւով ժառանգեալ 'ի տգէտ և յանիրաւ մարդկանէ, և 'ի քաղաքաժողով միաբանութեան և 'ի տունս իւրաքանչիւր զամենայն խնամատս օրինաց խաւարեալ և զպարտս ամենայն մոռացեալ, և 'ի մանկտին ամենացուց զոգի ամբարտաւանութեան և զմնափառութեան տիրեալ՝ որոյ պահանջմանցն ոչ գոյր սահման, և որ հաւասար անպիտանութեանն բերէր յինքեան խրոխտումն։

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 724։
2 Նոյն անդ, էջ 730 և 732։
3 Պղատ. 'ի Կրիտ. հատ. 1. էջ 49։
4 Քսենոփ. անդ, էջ 732։
5 Պղատ. 'ի պատասխանատ. հատ. 1. էջ 21։ Նոյն 'ի Թէէտ. հատ. 1. էջ 157։

Սոկրատ հանապազ կազմ և ժամանն 'ի կոր-
ծանել զբարձրամտութիւն նոցա [1], ընթեռնոյր
'ի սիրտ Աւկիբիադեայ զիղձս անցանելոյ ընդ
հուպ 'ի գլուխ հասարակապետութեան, և 'ի
Արիտիասայն զփառամոլութիւն նուաճելոյ զայն.
որք երկաքանչիւր ևս նշանաւորք էին ազգաւ և
մեծութեամբք, և ուսումնասէրք՝ առ 'ի սեր-
ձանալ ապա գիտութիւնքն յաչս ժողովրդեան [2]։
Բայց Աւկիբիադ երկիւղալի ևս էր. զի ընդ յո-
լովութեանցս այսոցիկ յանձին բերէր և զբարե-
մասնութիւնս զևս սիրայօրդորս։ Սոկրատայ ըղ-
սիրտ նորա յինքն պարուրեալ, բռնադատէր զնա՝
մերթ ընդ տգիտութիւն իւր և մերթ ընդ մնա-
փառութիւն արտասուել, և 'ի յոյզս անդ կրեցն
խոստովանել, զի ոչ էր մարթ լինել նմա բարե-
բաստ ոչ ընդ այնպիսում վարժապետի, և ոչ ա-
ռանց այնպիսւոյ բարեկամի։ Այս առ 'ի զերծա-
նել յանդիմադարձ ողբանաց նորա, երկոքին ևս
Աւկիբիադ և Արիտիաս 'ի բաց կացին 'ի նմանէ [3]։

Յաղթութիւնք թէպէտ և ոչ այսքան պայ-
ծառք այլ տեւողագոյնք, հատուցին զվարձս
վաստակոց նորա. թէպէտ և ոչ սփոփեալ զնա
'ի վերայ կորստեանն։ Հրաժարեցուցանէր յա-
ւագութեանց զթերահմուտս յաշակերտաց իւ-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 791։
2 Նոյն անդ. գիրք Ա. էջ 713։
3 Նոյն անդ։ Պլատ. 'ի Խրախճ. հտ. 3. էջ 215 և 216։

լոց [1]. իսկ ոչք անսիրեալ արարեալ կամ առ համեստութեան հրաժարեին, յորդորէր զնոսա 'ի նոյն [2]։ Այնաբանէր զգժտութիւնս նոցա [3], և խաղաղութիւն 'ի տունս նոցա հաստատէր, և կարգ 'ի գործս [4]. և յորդորագոյնս զնոսա առնէր յերկիւղածութիւն, յարդարութիւն և 'ի ժուժկալութիւն [5]։ Այսոքիկ էին արգասիք քաղցր ողբանացն՝ զոր զեղայ 'ի սիրտս նոցա [6], և այսոքիկ բերկրութիւնք՝ յորս զմայլէր սիրտ նորա։

Այլ զայսոսիկ, առաւել քան խրատուք, օրինակաւն իւրով գործէր [7]. և զի դժուարին էր յաձախեալսն ընդ նմա չյաւելուլ 'ի լաւութիւն, վկայեն առաջիկայ իրքս [8]։ Օր 'ի ծնեալ մէտ 'ի յոռութիւնս ամենեւին գոլով, օրինակ ամենայն առաքինութեանց յամենայն կեանս իւր եկաց։ Աշխատ եղև յոյժ 'ի նուաճել զասստուածութիւն բուսոց բարուցն, կամ վասն դժուարուղղելի թերութեանն գոլոյ, և կամ զի դիւրաւ օք ներէ զայն անձին. այլ յետոյ ուրեմն երկայնամտութի նորա յաղթանակեաց։ Վասնզի ոպպեայ կնոջ նորա դժնեայ բնաւորութիւն ոչ ևս խռովէր ըզ-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 772։

2 Նոյն անդ, էջ 774։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 29։

3 Քսենոփ. անդ, գիրք Բ. էջ 743։

4 Նոյն անդ, էջ 741 և 755։

5 Նոյն անդ, գիրք Ա. էջ 711. գիրք Դ. էջ 803 և 808։

6 Նոյն անդ, գիրք Ա. էջ 713. գիրք Դ. էջ 814։ Պուլկիան. 'ի Դամենակտ. հտ. 2. էջ 379։

7 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 712։

8 Նոյն անդ, էջ 721։

*խաղաղութիւն հոգւոյ նորա* [1], *և ոչ զզուարթութիւն երեսաց նորա ամբոխեր* [2]։ *Մինիոփեաց զձեռն իւր ձգեալ 'ի վերայ ստրկին 'ի հարկանել, ասելով. Հարկանեի եթէ չէր յիս ցասումն* [3]։ *Եւ աղաչէր զբարեկամն իւր ազդ առնել նմա, եթէ երբէք 'ի կերպարանս իւր կամ 'ի բարբառ նշմարեին զցասումն* [4]։

Թէպէտ և աղքատ էր յոյժ, այլ ոչ երբէք վարձս ընդ վարժից պահանջէր [5], և ոչ պարգևս յաշակերտացն ընդունէր։ Ամենք 'ի Յունաց ճոխք հրաւիրեցին զնա առ իւրեանս [6], այլ նա հրաժարեաց. և Աղբեղայոս աղքայ մանկեդոնացւոց մատուցանէր նմա բարձ յարքունիս իւր, և զայն ևս չէառ յանձն, պատճառելով զի ոչ կարէր հատուցանել ընդ բարերարութեն բարիս [7]։

Սակայն ըստ արտաքին ձևոյն չէր ինչ գձուձ, թէպէտ և զչքաւորութիւնն յանդիմանն առնէր։ Օ՛ի զմնքրութիւն բերէր յանձին ըստ օրինաց բարեկարգութեան և պատշաճից՝ որ ուղղեին զգործս նորա, և զինամն առողջութեան առ 'ի պահել զմիտս իւր ազատ և խաղաղ [8]։

1 Քսենոփ. 'ի խրախճ. էջ 876։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 36։

2 Կիկերո. յղ. պատշաճ. գիրք Ա. գլ. 26. հտ. 3։

3 Սենեկա, յղ. բարեսրթեան, Ա. գլ. 15։

4 Նոյն անդ, գիրք Գ. գլ. 13։

5 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 712 և 729։ Պղատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 19։

6 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 25։

7 Սենեկա, յղ. բարեգործ. գիրք Ե. գլ. 6։ Դիոգ. լայերտ. անդ։

8 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 712։ Դիոգ. լայերտ. անդ, յօդ. 22։

Լ Ձայն, ուր խրախուն եղբեամն զառաջանին յանկարգութիւն, զարմանալին բարեկամք նորա ընդ սակաւապիտութիւն նորա [1]. և ասիցք իսկ նորա պատուէին զամբծութիւն բարուց նորա [2]։

Լ բազում պատերազմունս եմուտ, և ամենայն ուրեք եղև յօրինակ քաջութեան և հնազանդութեան։ Լ՚ս քանզի 'ի բազում ժամանակաց կրթեալ էր ընդդէմ կարեաց բնութեան և անհարթութեանց յեղանակաց [3], 'ի պաշարման Պոտիդեայ քաղաքի մինչդեռ առ խիստ ցրտոց զօրքն ամենայն արգելեալ կային 'ի վրանս, եղանէր նա իւրով հանդերձիւն զոր միշտն կրէր՝ առանց սյլ իրիք զգուշութեան, և գնայր բոկոտն ընդ սառամանիս [4]։ Համարէին զօրքն առ նոսա տինս մեղկութեան իւրեանց առնել նմա զայն, այլ նա գնոյն գործէր՝ թէպէտ և չէր ոք տեսօղ։

Պարձեալ 'ի նմին պաշարման 'ի յարձակել ամրականացն 'ի դուրս, տեսեալ նորա վիրալից զԼՀՀԵԻԱԴ՝ զերծոյց զնա 'ի ձեռաց ոսոխին, և ասա մրցանակ քաջութեան ետ սահմանել նմա՝ որում ինքն իսկ էր արժանի [5]։

Լ պատերազմին Պելոնոնի ընդ յետինս գտաւ նա 'ի նահանջել, կալով միշտ առընթեր զօրավարին՝ որում օգնէրն խորհրդով, և հանդարտա-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 723։ Դիոդ. լայերտ. գիրք Բ. յօդ. 27։
2 Քսենոփ. անդ. էջ 724։
3 Նոյն անդ. էջ 711 և 729։
4 Պլատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 220։
5 Նոյն անդ։ Պլուտ. ՅԱՌԿԻԿ. հա. 1. էջ 194։ Դիոդ. լայերտ. գիրք Բ. յօդ. 23։

քայլ յառաջ խաղալով՝ անդադար 'ի մարտնչելոյ։ Որոյ տեսեալ զմանուկն Քսենոփոն՝ զի վաստակաբեկ անկեալ զներ կործանեալ յերիվարէն, ստանձնեաց զնա և զերծոյց եդ յապահովի։ Զ աբէս զօրավար մարտին վկայեաց ասելս, զի ի Թէ զօրքն ամենայն հանգոյն Սոկրատայ էին՝ 'ի ձեռին իւրում գտանէր յաղթութիւն[2]։

Օ՝նոյն արիութիւն յանձին բերէր և 'ի դէպս առաւել արդեօք վտանգաւորս։ Ա՝ խնակաւ խառնեալ էր նա ընդ աւագանին, և անկ էր նմա ընդ ոմանս յաւագաց գահերէց բազմել յատեան ժողովրդեան։ Զատաստան առաջի կայր զզօրավարաց ամբաստանելոց, որոց այն ինչ կանգնեալ էր յաղթութիւն մեծ. և հարցփորձ 'ի մէջ մատուցաւ խառն 'ի խուռն 'ի դատապարտութիւն ոմմեղութեան։ Մ՝ՐՔոին ընդ դոյզն ինչ բանս ջատագովութեան զայրագնեալ, ընդ ամբաստանեալս զջատագովն համարէր։ Ա՝յլք յատենակալաց զարհուրեալք հաստատեցին զՔՀոն։ Սոկրատ միայն աներկիւղ յաղաղակէն և 'ի սպառնալեացն, ասէ. Արդուսյ դատել ըստ օրինաց, և ոչ ինչ բռնադատեսցէ զիս լինել երդմնազանց։ Այ՝ ոչ դրժեաց երդմանն[3]։

Ծ՝աղրաբանէր նա ստէպ զկերպարանաց իւ-

1 Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 221։ Սոդրատ. գիրք Թ. էջ 403։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յոդ. 22։

2 Պղատ. 'ի Ղաք. հա. 2. էջ 181։

3 Քսենոփ. պատմ. Յունաց. հա. 1. գիրք Ա. էջ 449։ Նոյն, յիշատ. գիրք Ա. էջ 711. գիրք Դ. էջ 803։

բոց, որպէս թէ զտիպս դիմաց Սիղէնեայ դիցն բերելով՝։ Սիրելի և զուարթ էին նմա միտք, բաղդ զօրաւոր և հաստատուն, և հանճար զարմանալի՝ ի զգալի առնել և ցանկալի զՀնմարտութիւն։ Սեթեւեթք՝ ի ձառս նորա ոչ ուրեք, վըսեմութիւն բազում ուրեք, և ամենայն ուրեք ՀՂգութիւն բառից և կապակցութիւն և ՀՂգըըտութիւն իմաստից։ ՅԱսպասիայ ասէր զանձն վարժեալ՝ ի ճարտարիոսութիւն[2], յայտ իմն այսպէս արարեալ՝ զի՝ ի նմանէ ուսեալ էր վայելչագոյն զբանն ձևացուցանել։ Լդէն նմա իբք ընդ կնոջս այսմիկ ականաւորի, ընդ Պերիկղեայ, ընդ Լուբիպիդեայ. և ընդ արս երևելիս ժամանակին, բայց Հնմարիտ բարեկամք եղեն նմա աշակերտք իւր՝ որ ոգւով չափ սիրէին զնա[3]. և տեսի իսկ՝ ի նոցանէ զոմանս, որ յետ բազում ամաց մեռանելոյ նորա՝ դեռ ևս յիշատակաւ նորա գործէին։

Ի խօսակցելն իւրում ընդ նոսա ասէր ստէպ, զի էր իւր առընթերակաց՝ ի մանկութենէ ոգի աղդարար[4], որ թէպէտ և ոչ բռնադատէր զնա երբէք առնել ինչ՝ այլ արդելոյր նմա բազում ինչ[5]։ Օր՝ ի հարցանել ինչ ուրուք նմա, եթէ

1 Փաեն. ի խրախճ. էջ 883։ Պղատ. ի թէէտ. հտ. 1. էջ 143։ Նոյն, ի խրախճ. հտ. 3. էջ 215։

2 Պղատ. ի Մենէքս. հտ. 2. էջ 235։

3 Բաեն. ի Յիշատ. գիրք Ա. էջ 731։ Ղուկիան. ի Դամոնեակ. հտ. 2. էջ 379։

4 Պղատ. ի թէագ. հտ. 1. էջ 128։

5 Նոյն անդ։ Նոյն, ի Փեդր. հտ. 3. էջ 242։ Կիկեր. յՊրէ. գիրք Ա. գլ. 54. էջ 45։

ձախողակի եւք իրացն հանդերձեալ էին պատա-
հել՝ լինէր 'ի նմա ազդումն. իսկ եթէ յա-
ջող, չլինէր նմա ազդումն։ Ուրումն յաշակերտաց նորա զարմացեալ 'ի լուր նորանշան իրացն, թախանձեաց զնա՝ յայտնագոյնս ինչ յաղագս երկնայնոյ ազդեցութեանն ասել. և ոչ ընկալաւ պատասխանի։ Եւ այլ ոմն առ Տրոփոնիոս հարցուկ յաղագս այնորիկ դիմեալ, և ոչնա ըղձիցն պատահեաց՝։ Իսկ իմ հարցեալ երբեմն զայսմանէ զԱսենոփոն, ասեմ. Ընդոյծ ուրեմն է թող զերկբայսն. իսկ թէ ոգւոյն այնուիկ ըզչքնաղ խոհականութիւնն նշանակէր, զոր բազում հմտութեամբքն ստացաւ. կամ թէ պատրել ջանայր զաշակերտսն, և մեծարել 'ի նոցանէ որպէս զաստուածազդեցիկ։ Եւ պատասխանի ետ ինձ Ասենոփոն, և ասէ. Դա՛ւ լիցի. զի ոչ երբեք կեղծաւորեաց Սոկրատ զՀնմարտութիւն, և խաբէութիւն 'ի նմա ոչ գտաւ։ Զեր նա մնասիաւ և ոչ խօթամիտ, թէ կանխասացութիւնս Հնմարիտս զթարմնատար գուշակութիւնսն կարծեցուցանէր. այլ այնպէս վկայէին միտք նորա, և 'ի բարբառէն ընդ մեզ իբրև յընտանեակ ոգւոյն՝ զգայր զազդումն նորա 'ի սրտին։

Եւ Սիմմիաս, նորին դարձեալ Սոկրատայ աշակերտ՝ զոր ծանեայ 'ի Թեբէ, վկայեր զվարդապետէն՝ զի ղդիս դաւանէր անտեսս 'ի մարդ-

։ Պլուտ. յղ. գիւին Սոկր. հա. 2. էջ 590։

կանէ, նմին իրի աստուածերևութեանցն որ պատմէին նմա՝ չգներ ունկն. իսկ որոց աստուածային ազդեցութիւնս ինչ ասէին կրեալ, հաստատեալ եւ լեր նոցա մտադիրութեամբ [1]։

Ի վկայութիւնս յայսոսիկ հաւատարիմս յաւելեալ եւ զայն, զի Սոկրատ մինչև ցվախճան իւր վկայեաց՝ արժանի լեալ կանխագիտութեան դիցն երբեմն հաղորդելոյ [2], եւ զայն իսկ՝ զի ինքն եւ աշակերտքն իւր պատմէին զլաղում կանխատեսութեանց նորա զ լրումն [3], եւ զի ոմանք յայնցանէ շշուկ մեծ յարուցին 'ի մէջ աթենացւոց, եւ ոչ ինչ փոյթ եղև նմա ժխտել եւ խոստանել զհամբաւն [4], աներկբայելի է՝ զի նա ըստ վկայութեանն մատայն բարբառէր որ ինչ զառընթերակայ ոգւոյն ասէրն, թէ կրեր ինչ յանձին՝ թերևս անծանօթ այլոց [5]։

Ի քննել զիմաստս նորա եւ զկեանս՝ երևի ընդ աղօտ թէ արպէս տակաւ եկն նա 'ի համարել յանձին զգերաշխարհիկ զօրութիւնն։ Զրկիւղածութեամբ ըստ կրօնից ժամանակին հաւատայր հնոցն աւանդութեանց՝ որ ընդունելի էին առ խմաստասէրս [6], զի զթացեալ զից 'ի կարիս

1 Պլուտ. յդ. գիւին Սոկր. հտ. 2. էջ 588։

2 Պղատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 31։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 32։

3 Քսենոփ. պատասխանատ. էջ 703։ Պլուտ. յդ. գիւին Սոկր. հտ. 2. էջ 581։ Եղիսեան. պատմ. գիրք Ա. գլ. 1։

4 Պլուտ. անդ։

5 Պղատ. յդ. հատ. գիրք Զ. հտ. 2. էջ 496։

6 Կիկերոն. յդ. ընդ. գիրք Ա. գլ. 3 և 43։

լաւաց, և լուեալ աղօթիցն նոցա, յայտնեն երբեմն նոցա զհանդերձեալս ազգի ազգի նշանօք՝։ Այսմն իբրև և յորդորեր զաշակերտսն մերթ 'ի հարցանել զդիս, և մերթ 'ի պարապել յուսումն հմայից[2]։ Այլ ինքն իսկ զբազմանգունիցն զհետ երթեալ կարծեաց[3], միտ դներ երազոց, և հընազանդեր նոցա որպէս երկնաւոր ազգեցութեանց՝։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և 'ի հիացմանն լեալ երբեմն մնաց նորա ժամն ձիգս, և պարզեալ և մերկացեալ 'ի զգայութեանց, վերանայր տակաւ հոգի նորա առ նոյն ինքն նախասկիզբն պատճառս պարտուց և առաքիչութեանց։ Զրդ 'ի յամել յաստուածային դեգերմունս անդ՝ ի՞նչ խելի էր նմա հարցանել և առնուլ պատասխանի, և ընդ ելանել ընդ ցնորս՝ որ 'ի խնդութենէ մնաց երբեմն երևանան։ Զ սան այնորիկ և չէն ինչ զարմանք, զի Զոկրատ աստուածազգեցիկս երբեմն զզգացմունս իւր կարծէր, և 'ի գերբնական պատճառէ զարգասիս խոհականութեանն կամ դիպաց։

Զայց որ զնմանէ պատմին՝ թէ գնալով նորա ընդ աշակերտս իւր, ուրեք ուրեք յանկարծ զկայ առնոյր, զմիտսն յինքն ամփոփէր, և իբր յաղդմանէ առընթերակայ ոչ՝ հրամայէր նոցա

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 723։

2 Նոյն անդ, գիրք Դ. էջ 815։

3 Արիստոտ. յՂ. ըզ. գՂ. 1. հտ. 1. էջ 697։

4 Պղատ. 'ի Կրիտ. հտ. 1. էջ 44։ Նոյն, 'ի Փեդոն. էջ 61։ Կիկերո. յՂ. ըզնութեց, գիրք Ա. գՂ. 25. էջ 22։

խոտորել 'ի Ճանապարհէն, ընդ որ ոչ ինչ իսկ վտանգ էր նոցա գնալ '*, յերկրայս կացուցանել զուղղութիւն մնաց նորա։

Պարձեալ և 'ի պաշարման Պոտիդեայ տեսաւ նա յայգուէ արտաքոյ խորանին անշարժ ընկղմեալ 'ի խորհուրդս ընդ բոցակէզ տօթով արեգական յամարայնի։ Յողովեցան զնովաւ զօրքն, և զարմացեալք ցուցանէին զնա միմեանց։ Այլ իբրև երեկոյ եղև, ոմանք 'ի նոցանէ խորհուրդ կալան կալ ընդ նմա զգիշերն 'ի զնին. և մինչև 'ի վաղիւ անդր եկաց նա այնպէս։ Այլ ապա երկրպագեալ արեգական, մեկնեցաւ 'ի խորան իւր խաղաղութեամբ [2]։

Զդ 'ի տեսիլ արդեօք բանակին կամէր զանձն ընծայեցուցանել. մի թէ մարթ ինչ էր 'ի տեսութիւն ճշմարտութեան իրիք յամել այնչափ ընդերկար, կամ թէ աշակերտք նորա կերպարանափոխ զնրսն արարին յաւանդել մեզ զայն։ Ի դէպ ևս է ասել, զի և իմաստանագունիցն և առաքինագունից արանց կեանք յանդիման առնեն երբեմն խաւարս անդնելի։

Կալցի ոք զայս որպէս և ախորժէ, բայց ա-

1 Պլուտ. յզ. գիւին Սոկր. հտ. 2. էջ 580։

* Ոմանց յաշակերտացն նորա հակառակ ազդեցուէ ոգւոյն ընդ նոյն երթեալ Ճանապարհ, պատահեցին երամակի խոզից՝ որ տղմաթաթաւս գնոսա աբարին։ Զայս Թէոկրիտոս ասշակերտ Սոկրատայ պատմէ 'ի գիրս Պլուտարքեայ 'ի վայուութիւն ածեալ և զՍիմմիաս աշակերտակից իւր։

2 Պղատ. 'ի խրախճ. հտ. 1. էջ 220։ Փաւոր. առ Ասլ. Դեալ. գիրք Բ. գլ. 1։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 23։

թենացիք ոչ արարին Սոկրատայ զմեծարանս՝ որում բազում իրօք արժանին էր, և ոչ 'ի կանխասացութեանցն վկայելոց ակն ածեալ։ Հարկ էր տարաղու կենաց նորա սարտուցանել զնոսա կամ դժպհի լինել նոցա։ Վասոց անբերելի էին ծանրատաղտուկ խոյզք և ինդիրքն՝ որոց ոչ կարէին երկայնամտել. և այլոց խոստովանութիւն տգիտութեանն իւրեանց, յոր ստիպէրն զնոսա։

Լաւ քանզի պատուիրէր նա առ 'ի հետազօտութիւն Հնմարտութեան երկիւղայել նախ և զբվստահել ընդ անձին գիտութիւն, և զի առ 'ի հրաժարեցուցանել զաշակերտեալս իւր 'ի կանխագէտ մոլար ուսմանցն ածէր զնոսա ընդ աստիճանս քանից 'ի խոստովանել՝ զի ըստ առաջարկութեանցն իւրեանց զնասակար գտանէր և իմաստութիւն, պատահելոցն անդ ոչ 'ի վերայ կացեալ գիտաւորութեան նորա՝ ամբաստանէին զնմանէ իբր թէ 'ի վարանս արկանէր զաշակերտսըն, զներհակս հաստատէր, զամենայն ինչ կործանէր և ոչ ինչ կանգնէր '։

Դարձեալ զիտառ անծանօթս պատճառէր զտրգիտութիւն, և ծածկէր 'ի սկզբան զզօրութիւնս իւր՝ առ 'ի յաղթողագոյնս ապա 'ի կիր արկանել զայնս, ասէին՝ թէ թշնամանալից հենգնութիւն լարէր որոգայթ պարզմտութեան այլոց [2] *։

[1] Պլատ. 'ի Մեն. հա. 2. էջ 80 և 84։ Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 805։

[2] Տիմ. առ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 19։ Քսենոփ. անդ։

* Յեսայեայ մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Ա։

Այլ դարձեալ զի մանկտին աթենացի 'ի պայքար հանձարեղ մարդկան որպէս 'ի գաղանամարտի բերկրանօք կալով 'ի վնին՝ ծափս հարկանէր ընդ յաղթութիւն նոցա, և զղէնս ոչ լոսվք նոքա յաղթէին՝ ընդ առնուլ պարապ 'ի կիր արկանէր, ասէին՝ թէ ոչ յայլ ինչ առ նմա վարժէր մանկտին՝ բայց 'ի վիճել և յընդդիմաբանել։ Իսկ նեռոզազոյնք ասէին՝ թէ արդարև աղդէ 'ի համբակս զսէր իմաստութեան, այլ ոչ դիւրէ նոցա վարել նովաւ։

Դուն ուրեք գնայր նա 'ի տեսարանս, և էպերելով զսպերասան համարձակութիւն կատակերգութեանց ժամանակին՝ ձգեաց յինքն զատելութիւն քերթողաց նոցին։ Այլ վասն սակաւ ուրեք երևելոյ նորա 'ի ժողովս ժողովրդեան, և զի չէր նորա զօրութիւն և ոչ արուեստ գին և վաճառ առնելոյ քուէից, բազումք համարէին զնա դատարկապորտ և անպիտան, քարոզող բարեկարգութեանց, և պարծենող յառաքինութիւնս։

Այս ամենայն մտահաճութիւնք և կարծիք միսբանեալ յառաջ բերին զկարծիս զրեթէ հասարակաց, զի Սոկրատ մի էր յիմաստակաց, ճարտարագոյն և առաքինագոյն քան զնոսա՝ այլ թերևս մտափառ քան զամենեսին։ Տեսի յա-

1 Պղատ. 'ի պատասխանատ. հա. 1. էջ 23։
2 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 725։
3 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 13։
4 Ամիպս. առ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 28։

թենացւոց անտի արս գիտնաւորս, որք և բա-
զում ժամանակաւ յետոյ քան զմահ նորա զսոյն
կարծիս բերէին զնմանէ՝. զնոյն և՝ ի կենդա-
նութեան նորա ոմանք՝ ի մատենագրաց Հարտա-
բութեամբ՝ ի կիր արկին՝ ի վրէժ արհամարհա-
նաց նորա։

Քրիստոփան, Լուսաւորիչ և Միփսիաս ծաղր
կացուցին զնա՝ ի տեսարանի[2], որպէս իշխեցին
նշաւակել անդ և զՊերիկղէս և զԱկիբիադ,
և զրեթէ զամենեսին իսկ՝ որ կային՝ ի վերայ
իրաց աշխարհին. որպէս և այլք՝ ի թատերական
քերթողաց զայլ յիմաստասիրաց արարին տե-
սիլ նշաւակի[3]. զի՝ ի ժամանակին յայնմիկ ա-
տելութիւն՝ ի մէջ երկուց դասուց գիտնոցս զօ-
բանայր[4]։

Քրիստոփան առ՝ ի ծաղր առնել զկարծեցեալ
ոգին Սոկրատայ և զհիացմունս նորա ընդ ժամ
ճիգս, յանդիման առնէ զնա կախեալ՝ ի բար-
ձունս. նմանեցուցանէ զիսորհուրդս նորա նուրբ
և թեթև օդոյ՝ զոր հնէ նա անդ[5], և տայ նմա
կարդալ զամպս աստուածուհիս խնամակալս ի-
մաստակաց, զորոց թուի նմա լսել զձայն՝ ի միջոյ
մառախղոյ և խաւարի՝ որ շուրջ զիւրև մածեալ

1 Եպիֆան. ՝ի Տիմարքս. էջ 287։
2 Պարապ. Արիստոփ. յԱմպ-
սին, տող 96։ Դիոգ. Լայերտ.
գիրք Բ. յօդ. 28։ Սենեկա,
յՂ. Երան. կենաց, գլ. 27։
3 Սենեկա. անդ։
4 Պլատ. յՂ. հաս. գիրք
Ժ. հա. 2. էջ 607։
5 Արիստոփ. յԱմպսն,
տող 229։

կան [1]։ Այլ առ 'ի չարահամբաւել զնա առաջի ժողովրդեան, ամբաստանէ զնմանէ՝ իբր թէ ուսուցանէր մանկուոյն անարգել զդիս և նենգել մարդկան [2]։

Արիստոփան մատոյց զքերթած իւր 'ի հանդէս, և ընկալաւ ծափահանչեան դրուատիս, այլ ոչ պսակեցաւ [3]. և 'ի միւսումն ամի ած զայն 'ի թատր, և ոչ անդ կալաւ մրցանակ։ Յղկեաց զայն վերստին, այլ դեպք ժամանակին խափանեցին ածել զայն միւսանգամ 'ի տեսարան։ Այլ պատմեն՝ ոչ ինչ ամօթ համարեալ Սոկրատայ առընթեր կալ յառաջնումն նուագի, և ցուցանել իսկ զանձն հիւրոց ոմանց՝ որք զիտեալ խնդրէին զնա 'ի խուսն անդ [4]։ Ոչ ինչ աւելի քան զայլ պատահարս կենաց սատանեցուցանէին յարձակմունքս այսոքիկ զարիութիւն նորա [5], այլ ասէր. Եթէ կշտամբանք քերթողացս իրաւացի իցեն, պարտ է ինձ ուղղել զանձն. իսկ եթէ տարապարտք, արհամարհել զայնոսիկ։ Այլ մի՛ երբեմն լուեալ՝ զի չարախօսէր ոք զնմանէ, ասէ. Օ՛ի չէ ուսեալ զբարիս խօսել [6]։

Մինչ իբր քսանեւչորք 'ի վերայ անցեալ յետ Մահ պոյն կատակերգութեան 'ի տեսարան ածելոյ, յորժամ համարէին Սոկրատ զերծեալ այնու-

[1] Արիստոփ. Յանպս, տող 291 և 329։
[2] Նոյն անդ, տող 112 և 246։
[3] Նոյն անդ, 525։
[4] Եղեան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 13։
[5] Սենեկա, յղ. հատ. իմաստ. գլ. 18։
[6] Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յոդ. 36։

հետև 'ի հալածանաց, ազգ եղև նման՝ զի պա-
տանուց ուրումն գիր չարախօսութեան զնմանէ
մատուցեալ էր առ երկրորդն յինուանց իշխանաց՝. և էր գրոյն օրինակ այս. “ Մեղեալտոս որդի Մե-
„ լիտեայ, 'ի Պիթեայ աւանէ, ամբաստանէ յե-
„ զեռնզՄոկրատ զորդի Մոիրոնիսկեայ, յՄ՝ զոսպե-
„ կեայ աւանէ։ Մեղապարտ է Մոկրատ, զի ոչ
„ ընդունի զդիս, և զի դիս օտարոտիս 'ի նեղքս
„ մուծանէ՝ ողիս զնոսա կոչելով. մեղապարտ է
„ դարձեալ, զի զեղծուցանէ զմանկտին աթե-
„ նացի. մահապարտ է նա „ [1]։

Այս էր Մեղիտոս քերթող ցուրտ և անհանձար. արարն նա ողբերգութիս, որոց յիշատակ յերգի-
ծանութիւնն ևեթ Ա՝ բիստոփանեայ մնացեալ [2]։
Պատախսագք երկու հզօրագոյնք քան զնա, Ա՝ նիտոս և Լիկոն, ատելութեանն իւրեանց գործի զնա առին [3]։ Լիկոն էր մի 'ի Ճորտարարախօսաց աշխարհին, որք 'ի ժողովս աւագանւոյն և ռամ՝ կին՝ պաշտպան կան օգտի հայրենեաց, և իշխեն կարծեաց բազմութեան, որպէս բազմութիւնն իշխէ ամենայնի [5]։ Այս յանձն էառ զփուրշիշ ամբաստանութեանն [6]։ Իսկ Ա՝նիտոս փարթամ

1 Պլատ. յԵւթիփր. հտ. 1. էջ 2։

2 Նոյն, 'ի պատասխանեան. հտ. 1. էջ 24։ Քսենոփ. յի-շատ. գիրք Ա. էջ 708։ Փաւոր. առ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 40։

3 Արիստոտ. 'ի Դոտուունան, տող 1337։ Սուիդ. 'ի Մելետ.

4 Պլատ. անդ, էջ 23։ Ան-տիսթ. առ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 39։

5 Արիստոտ. յղ. հտ. գիրք Դ. գլ. 4. հտ. 2. էջ 369։

6 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 38։

ձնխութեամբքն և մեծամեծ վաստակօք 'ի վերայ աշխարհին ընդ հզօրագոյնս 'ի քաղաքացոյց 'ի հանդերձ էր[1]։ Ոչ նա ընդ բարձրագոյն աստուածիսնս աշխարհին[2]. և վասն վրէժխնդիր նախանձուն ընկերհաշտութեան հալածեալ յերեսանից բռնաւորացն, եղև զօրավիգն գումարելոցն 'ի հալածել զնոսա և 'ի դարձուցանել զաշխարհն յազատութիւն[3]։

Ոնիտոսի ժամանակս բազում մտերմութիւն կացեալ էր ընդ Սոկրատայ. և 'ի խնդրելն 'ի նմանէ հրահանգել զորդին իւր նախակրթեալ յիւրմէ 'ի ձեռագիտութիւն՝ յորմէ էր նմա ոչ սակաւ շահ, եցոյց նմա Սոկրատ՝ զի նուաստն այն արուեստս ոչ 'ի դէպ էր մանկանն, ոչ ըստ հայրենի պատուոյն և ոչ ըստ աջողութեանն մտացն՝. և յայտնեալ 'ի խոր խոցեալ Ոնիտեայ, արդեալ պատանեայն՝ մի՛ և ևս գնալ առ վարժապետն։

Յետ ոչ բազում աւուրց խնդիր առնելով Սոկրատայ ընդ Ոնոնի, միում 'ի բարեկամաց իւրոց, թէ արդեօք դաստիարակութիւն կարիցէ՞ տալ զբարեմասնութիւնս մտաց և սրբոտի զինայեալս 'ի բնութենէ, եհաս անդր Ոնիտոս, և եմուտ 'ի խօսակցութիւն։ Այց գնացք որդւոյն, զորոյ ապախտ առնէր զդաս-

1 Խոսկր. 'ի Կալիմաք. հա. 2. էջ 495։
2 Լիս. յԱնդոքատ. էջ 261։ Նոյն, 'ի Դարդան. էջ 388։
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 468։
Հնոյն, 'ի պատասխանատ. էջ 706 և 707։

տիարակութիւն, անդստին յաւելուին նմա վիշտս։ Եւ 'ի կարգ անկեալ բանիւքն եցոյց Սոկրատ, զի որդիք Թեմիստոկղլի, Արիստիդեայ և Պերիկղեայ պար առեալ 'ի վարժապետաց երաժշտութեան, ճիտվարութեան և ըմբշական հրահանգաց, եղեն քաջք 'ի վարժս յայնոսիկ՝ այլ ոչ հանգոյն հարցն իւրեանց առաքինիք։ Եւ յաւելեալ 'ի բանս իւր, ասէ. Արդացոյց հաւաստի, զի ոչ գտին հարք նոցա վարժապետ զոր հմուտ 'ի կրթել զնոսա 'ի հայրենի քաջութիւնն։ Զնիտոս՝ որ զանձն 'ի կարգս աւագաց այնոցիկ աբանցն դասէր՝ հասու եղև զօրութեան բանիցն, և 'ի թշնամանս իւր համարեցաւ զաստացեալն. և ծանրացաստումն լեալ, ասէ. Դու դժոխքմբեր ժպրհութեամբ բամբասես զայլս, այլ լուր ինձ և զգոյշ լեր, զի աստանօր քան ամենայն ուրեք դիւրագոյն է առնել բարի կամ չար ընդ որում կամք իցեն. զիտա զայս [1]։

Յառանձին դժկամակութիւնս յայսոսիկ յաւելան և այլք, դառնացուցիչք Զնիտեայ և բազմագունից այլոց յազգէն. զորս հարկ է ասել աստանօր, առ 'ի քաջայայտ առնել զբուն պատճառս ամբաստանութեանն Սոկրատայ։

Յամենայն ժամանակի երկպառակ եղեն յաթենացիս կուսակիցք աղնուապետութեան և ռամկապետութեան։ Զոաջինք գրեթէ միշտ

[1] Պղատ. 'ի Մեն. հտ. 2. էջ 94։

նկուն լեալ, շատ համարէին 'ի յաջողութեան ժամանակի քրիստոնէական յիրեանս. իսկ 'ի ժամանակի չարեաց աշխարհին, և մանաւանդ 'ի վերջս պերզպոնեսական մարտին, զուն գործէին ընկճել զտարապայման իշխանութիւն ռամկին։ Յետ առման քաղաքին ամենացուց սպարտացիք թոյլ ետուն նոցա ընտրել երեսուն այր, և տալ 'ի ձեռս նոցա զառաջնորդութիւն աշխարհին. և ընտրեցան բաղմագոյնք 'ի կուսակցաց ազնուապետութեան, և Կրիտիաս մի յաշակերտաց Սոկրատայ գլխաւոր էր 'ի նոսա։ Ընդ ամիս ութ գործեցին անգթութիւնս այնչափ, որչափ ինչ ընդ բաղում դարս չէր գործեալ ժողովրդեան։ Խաղումք 'ի քաղաքացոց ստիպեալք խոյս տալ յաշխարհէն, զումարեցան ապա ընդ առաջնորդութեամբ Թրասիբուղեայ և Նիտոսի։ Կործանեցին զսակաւապետութիւն *, և զառաջին կարգ պետութենն անդրէն կանգնեցին. և առ 'ի խափանել յայնմ հետէ զամենայն հերձուած՝ արարին մուրհակ մուռացութեան չարեաց, ներումն գրեթէ ամենեցուն շնորհելով։ Յս հրատարակեցաւ մուրհակս երդմնակուռ հաստատութեամբ զերեամ մի յառաջ քան զմահ Սոկրատայ '։

Խայց թէպէտ և երդուաւ ժողովուրդն զանցիշաչարութիւն, այլ զդողանի հարկանէր յածելն

* Զպատմութիւն իրացս այսոցիկ գայցեն ինդրոցք 'ի վերջ կոյս առաջնոյ մատեանի գրոցս։

1 Անդոկ. յլ. խորհրդ. էջ 12։

զմտաւ՝ զի կապտեցաւ երբեմն յիշխանութենէ, և զի մարթէր նմա ժամ 'ի ժամ դարձեալ կորուսանել զայն, և զի իշխէր նմա Լակեդեմոն՝ նախանձայոյզն 'ի հաստատել ամենայն ուրեք զսակաւապետութիւն, և զի գլխաւորք 'ի քաղաքայնոց համախոհք էին ընդ նմա, և 'ի նոյն նախանձ վառեալք։ Լյ զինչ ոչ էր մարթ անտ զորմիցն գործել յայլ դէպս, որոց 'ի յապուրդ մոլեգնութեանն այնչափ արեանց պէտք եղեն յաւեր աշխարհին։

Հրապուրողք ժողովրդեանն յանձախեցին զերկիւղ նորա, իբր թէ ոգիք ստահակք հանապազօր 'ի վեր երևէին խռովարար ժպրհութեամբ ընդդէմ ռամկապետութեան, և զի Լոկրատ վընասակար քան զամենեսին էր առաւելագոյն գիտութեամբն՝ ոչ դադարելով 'ի զեղծուցանելոյ զմանկտին աթենացի իմաստիւք հակառակօք սահմանադրութեան աշխարհին. զի բազումանգամ լուեալ էր 'ի բերանոյ նորա՝ թէ անմտութիւն է զգործս և զուղղութիւն աշխարհին տալ 'ի ձեռս սինլքոր քաղաքայնոց ընտրելոց 'ի կոյր վիճակէն[1]. զի Լ.ակիբիադ վարժեալ 'ի նմանէ, բաց 'ի յաբեացն զորս էած 'ի վերայ աշխարհին[2], զումարեցաւ ապա և ընդ դարանակալս ազատութեան նորա. զի 'ի նմին ժամանակի և Կրիտիաս և Թերամենէս, դարձեալ և նոքա աշակերտք

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 712։ 2 Նոյն անդ, էջ 713։

Սոկրատայ, ժպրհեցան 'ի զլուխ երեմնից բռնաւորացն անցանել կալ. և զի պարտ էր սանձահարել զհամարձակութիւնն՝ որ յեղակարծ և անհրաժեշտ զհետ ձգէին չարիս։

Բ. Յլեր մարթէր դատափետել զՍոկրատ. զի չէին նոր այլ յանցանք բաց 'ի բանից, զորոց ոչինչ սահմանէին օրէնք, և որ չէին բաւական 'ի դատապարտութիւն, զի և ոչ կարևոր ինչ կցորդութի՛ն էր այնոցիկ ընդ չարիսն՝ զորոց բողոք ունէին։ Այլ դարձեալ պատճառս ամբաստանութեան 'ի բանիցն առնելով, վտանգ էր զրկուելոյ անդրէն երկպառակութեան, և հարկ դառնալոյ յանցս՝ զորովք անյիշատակ լուութիւն ածեալ էր մուրհակին մոռացութեան։

Դաւն պատրաստեալ Անիտեայ յամենայն դժպատեհութեանց աստի զերծ գտանէր, և սպասաւորէր ատելութեան նորա և վրէժխնդրութեան կուսակցաց ժողովրդեան։ Դանզի դատախազին ամբաստանելով զՍոկրատ յամենպարշտութիւն՝ յոյս մեծ առաջի կայր կորուսանելոյ զնա. զի ժողովուրդն նախանձայուզութիւն լսէր ամբաստանութեանց այսպիսեաց[1], և հաւանէր՝ հանգոյն ելոյց խմաստասիրաց պարապելոց 'ի խոյզս ախտարակաց ուրանալ նմա զդիս[2]։ Դարձեալ և բազմագոյնք 'ի դատաւորաց հանդիսատեսք ձևացութեան Սմպոցն Աթինտիա-

[1] Պլատ. յԵւթիփր. հա. 1. էջ 3։
[2] Նոյն. 'ի պատասխանատ. հա. 1. էջ 18։

նեայ, դեռ ևս յանձին բերէին ընդդէմ Սոկրատայ զգաղտաձիգ տպաւորութիւնն՝ որ դիւրընկալք են յոյժ 'ի քաղաքի մեծի, և կարի դժուարին մերկանալ զայնոսիկ 'ի բաց'։

Հանդերձ սոքիմբք և Մելիտեայ ամբաստանելով զնա զեղծուցիչ մանկտւոյն, մարթէր տարտամ չարախօսութեամբն հարևանցի իմն առանց վտանգի յիշեցուցանել զիրս ընդոստուցիչս դատաւորաց և զարհուրեցուցիչս կուսակցաց ռամկապետութեան։

Այլ գաղտնիք հնարիցն ոչ ծածկեցան 'ի յետնոց. ամենք իբր յիսուն և չորիւք զկնի մեռանելոյ Սոկրատայ՝ Լաբինէս Ճարտարախօս, ընդ որում եղև ինձ մտերմութիւն, ասէր 'ի նմին իսկ ատենի՝ ուր իմաստասիրին քննեցաւ դատաստան. "Դուք զիմաստակն Սոկրատ 'ի մահ մատնեցէք, դատապարտեալ զնա իբր վարժապետ Կրիտիասայ, միոյ յերեսնիցն որք կործանեցին ըզռամկապետութիւն"[2]։

Ի սկզբան հարցափորձին հանդարտ կայր Սոկրատ. այլ աշակերտք նորա զարհուրեալ, փութային զառաջս առնուլ չարեացն։ Իւսիաս հրաչակաւորն արար վասն նորա Ճառ ողբական, հզօր 'ի շարժել զդատաւորս 'ի գութ. բայց Սոկրատ թէպէտ և զքաջութիւն Ճարտարախօսին գովեաց, այլ ոչ 'ի դէպ վարկաւ իւր զայն՝ առ 'ի

1 Պղատ. 'ի պատասխան Նատ. հա. 1. էջ 19։

2 Եպիֆան. 'ի Տիմարք. էջ 287։

չգոյէ 'ի նմա անմեղութեանն կորովի բարբառոյ '։ Այլ Աբրահամեայ բարեկամի իւրում, որ աղաչէրն զնա պատրաստել 'ի Ջատագովութիւն իւր ասէ. Յորմէ հետէ կեամ՝ վաստակեմ 'ի դոյն. քնեսցեն բովանդակ զկեանս իմ, և զտցեն անդ զպատասխանատրութիւն իմ։

Աբրահամեան ասէ. Սակայն կարօտ օգնականութեան է Ճշմարտութիւն, և դու ինքնին գիտես՝ քանի՞ անմեղք յատեանս մեր դատապարտեցան, և քանի՞ մեղապարտք անպարտ արձակեցան Ճարտարիսօսութեամբ։ Սոկրատ ասէ. Գիտեմ զայդ, և երկիցս իսկ ձեռն արկի 'ի պատրաստել զպատասխանիս իմ. այլ ոգին ազդարար զգուշացոյց զիս, և խելամուտ եղէ զի իմաստութեամբ էին խորհուրդք նորա։

Կեցի ցարդ բարեբաստագոյն քան զամենայն մարդիկ, և ոչ ուրուք կեանք նախանձելի եղեն ինձ։ Այլ ընդէ՞ր իցէ ինձ կալ և սպասել, զի տկարութիւնք ծերութեան արկցեն զիս 'ի զգայութեանց, և նուաղեցուցեալ զմիտս իմ, արասցեն ինձ զաւուրս իմ անպիտանս կամ 'ի դառնութիւն ևեթ պիտանացուս[2]։ Մահ խաղաղական, որպէս Թուի, պատրաստեն ինձ դիք ազատ 'ի ցաւոց, որ միայն ցանկալի է ինձ։ Բարեկամք իմ տեսօղք մահուն իմոյ ոչ սոսկացին ընդ ար-

1 Պիկեր. յղ. Ճարտ. գիրք գլ. 4։ Ա. գլ. 54. հտ. 1. էջ 182։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յոգ. 40։ Վաղ. Մաքս. գիրք Ա.։

2 Քսենոֆ. յիշատ. գիրք Դ. էջ 817։

հաւիրս տեսլեանն և ընդ մարդկեղէն տկարութիւնս. և 'ի յետին տուրևաւ ինչոյս դեռ ևս լցի լիս զօրութիւն դարձուցանելոյ զաչս իմ 'ի նոսա, և յայտ առնելոյ նոցա զզգացմունս սրտի իմոյ[1]։

Զատ արասցեն յետինք ընդ իս և ընդ դատաւորս իմ. և եղեալ զյիշատակ նոցա 'ի նախատինս՝ լցին իմոյս վրէժխնդիր, և ցուցցեն զի ոչ միայն չղեղծուցի զքաղաքակիցս իմ՝ այլ վաստակեցի յաւելուլ զնոսա 'ի լաւութիւն[2]։

Այնչ դեռևս յայսմ մտաց խորհրդի էր, եհաս նմա եկակոչ յատեան Յղիեայ՝ որում աւանդեալ էր զդատաստանն մի յինուցն իշխանաց, որ կոչէին ալքայ. և դատաւորք ոչ ինչ նուազ քան զՀինգ հարիւր 'ի դատաստան անդր գումարեցան[3]։

Այնիտեայ և այլոց դատախազից պարապով զյարձակմունսն պատրաստեալ էր, ամենայն կախարդանօք Ճարտարիսօսութեան[4] և ամենահնար արուեստիւք ժողովեալ զՀանգամանս մոլորեցուցիչս մտաց դատաւորացն։ Այնչ ինչ յամբաստանութեանց նոցա աստանօր զօրեմ, Հանդերձ պատասխանեօքն։

Զաջին յանցուած Սոկրատայ, զի չընդունէր նա զդիս աթենացւոց, զորս պարտ էր ըստ օ-

1 Փսեն. 'ի պատասխանատ. էջ 702։

2 Նոյն անդ, էջ 706։ Նոյն, Յիշատ. գիրք Դ. էջ 817։

3 Յիշատ. բանս. կաշառ. հտ. 18. էջ 83։

4 Պղատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 17։

ըինայն Դրակոնի իւրաքանչիւր ումեք 'ի քաղաքացոց պաշտել'։

Դիւրին էր առ այս պատասխանի. քանզի Սոկրատ զոհս յաՃախս մատուցանէր դից առաջի տան իւրոց, և յաւուրս տօնից 'ի բազմիս իսկ հասարակաց. և մարթէր ամենայն բազմութեանն և Աելիտոսի իսկ տեսանել զայն, եթէ կամեցեալ էր։ Բայլ քանզի Սոկրատ հակառակ կայր նանրահաւատ պաշտամանցն որ մտեալ էին 'ի կրօնս, և ոչ յանՃն առնոյր երբէք համարել նեղքոց անկեալ զդիս ատելութեան և այլոց ամենայնի կրից, զիւրին էր զբսպարտել զնա առաջի այնոցիկ՝ որոց միշտ կասկածելի են իմաստուն կրօնք։

Յաւել Աելիտոս, զի Սոկրատ վարդապետութեամբ ընտանեակ ոգւոց հնարէր օտարոտի դիս 'ի նեղքս մուծանել, և զի յանդգնութիւնն այն արժանի էր պատուհասի ըստ օրինաց։ Լուստ Ճարտարախօսն էառ ծաղրաբանել զոգւոյն, յորմէ Սոկրատ ասէր ընդունել ազդեցութիւնս 'ի սրտի իւրում։ Պատասխանի ետ Սոկրատ և ասէ. Ազդեցութիւնն այն ոչ 'ի նորոց թնչ դից ներգործի, այլ յայնցանէ զորս պաշտեմքն։ Դուք

1 Պորփիւր, յղ. Ժուժկալ. գիրք Դ. էջ 380։

2 Քսենոֆ. 'ի պատասխանատ. էջ 703։ Նոյն, յիշատ. գիրք Ա. էջ 708։

3. Պլատ. յղ. գիրք Սոկր. հտ. 2. էջ 580։

4 Պլատ. Եւթիփր. հտ. 1. էջ 6։

5 Պլատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 31։

իսկ ինքնին խոստովանիք զի յառաջածանօթ էն նոյ հանդերձեալքն, և զի 'ի կամն նոցա է յայտնել մեզ զայնոսիկ. և յայտնեն ոմանց 'ի ձեռն դեղփական հարցկին, այլոց ազգի ազգի նշանօք. իսկ ինձ թարգմանաւ, որոյ պատգամք գեր 'ի վերոյ են քան զամենայն գուշակութիւնս՝ որ 'ի թռիչս հաւուց յայտնեալ. վկայեն ինձ աշակերտք իմ՝, զի ոչ ինչ 'ի կանխասացութեանցս իմոց եղ 'ի դերև։

Յայն քան դատաւորքն դժկամակեալ, շնջէին ընդ միմեանս [1]. և մարթէր Պելիտեայ յաճախել զդժկամակութիւնն՝ եթէ յաւելցը ցուցանել նոցա, զի 'ի հաստատել յայտնութեանցն Սոկրատայ՝ վաղ կամ անագան 'ի նեբքս մտանէին ցնորք նանրահաւատք 'ի մարդիկ, որոց դիւրագրգիռ է երևակայութիւն, և զի բազումք պարտ անձանց վարկանէին լսել հրամանաց ոգւոյն իւրեանց քան իշխանացն։ Պ.յլ թուի վտանգս այս ոչ 'ի միտս անկեալ Պելիտեայ։

Արկրորդ յանցուած Սոկրատայ, որպէս թէ զեղծուցանէր զմանկտին ամենայն։ Ոչ զբաւրուց ամբաստանելոյն էին աստանօր բանք, այլ զվարդապետութենէ նորա. զի ասէին՝ ոչ յայլ ինչ վարժել համբակաց առ ուտս նորա, բայց 'ի խղել զկապանս ազգականութեան և զբարեկամութիւնս [2]։ Պ.յս չարախօսութիւն, որում ոչ այլ ինչ

[1] Քսեն. 'ի պատասխանատ. էջ 703։

[2] Նոյն անդ, էջ 704։ Նոյն, յԵշատ. գիրք Ա. էջ 719։

հաւատիք էին՝ բայց կամակորութիւն բանից ինչ նորա, զամբաստանողին նշաւակէր զնեղութիւն. բայց Ելիտոս դարձեալ զօրացաւ 'ի ցուցանել զՍոկրատ թշնամի Ժողովրդեան, ամբաստանելով զարեկամութիւն նորա ընդ Ալկիբիադեայ և ընդ Կրիտիասայ[1]։ Որում տուաւ պատասխանի, զի ցորքան ժամանակս կային նորա ընդ ձեռամբ Սոկրատայ՝ առաքինութիւնս ևեթ բերին յանձինս. և զի Սոկրատ միշտ իսկ եպերեր զհամարձակութիւնս Ալկիբիադեայ, և 'ի բռնակալել Կրիտիասայ՝ նա միայն հակառակ եկաց կամաց նորա։

Այլ վախճանեալ Ելիտեայ զբանս իւր, ասէր. Ոչ իմ ձակաւ ընտրեալ էք, ա դատաւորք, և բաղումք 'ի ձէնջ ընդ բարձր աւագութիւնս անցեալ։ Արդ զայդ կարգ ընտրութեան, որով միայն պահի հաւատարութիւն 'ի քաղաքացիս, պարսաւէ Սոկրատ. և մանկտին աթենացի ըստ օրինակի նորա վերջանայ 'ի մեծարելոյ զկարևորն կարգ սահմանադրութեանս մերոյ[2]։

Սոկրատայ 'ի պարսաւել զղեղծումին՝ որ 'ի դէպս ապաստան առնէր զբախտ իւրաքանչիւրոյ և զհաստատութիւն պետութեան, ոչ ինչ աւելի քան զիմաստնագոյնս յաթենացւոց ասացեալ էր[3]։ Դարձեալ զոր և 'ի վերս անդր ասացի, բանք այսպիսիք ոչ մահապարտութեան էին յանցանք,

[1] Քսեն. Յիշատ. գիրք Ա. էջ 713։
[2] Նոյն անդ. էջ 712։
[3] Իսոկր. արիսպ. հտ. 1. էջ 322։

որպէս դատախազն 'ի վերայ ածեալ սահմանէրն։

Բազումք 'ի բարեկամացն Սոկրատայ պաշտպան կացին նմա հանարձակ [1], այլք ձառս վասն նորա գրեցին [2]. և 'ի պարտութիւն արդեօք մատնել Մելիտոս, եթէ ոչ Անիտոս և Լիկոն 'ի թիկունս հասանէին նմա [3]։ Բանզի աւանդէն զառաջնոյն, զի իշխեաց ասել ցդատաւորս. Կամ չէր մեզ պարտ բողոքել յատեան ձեր, և կամ պարտ է ձեզ մատնել զնա 'ի մահ. զի յարձակել նորա անպարտ, մանկտին մեր և և յարեսցի 'ի վարդապետութիւն նորա [4]։

Սոկրատ առ 'ի հնազանդել օրինաց՝ արար վասն անձին պատասխանի [5], այլ արիութեամբ անմեղութեան և արժանի առաքինութեան։ Յաւելում աստանօր հատուածս ինչ 'ի Ձառէն՝ զոր ջատագովք նորա, և մանաւանդ Պղատոն, դնեն 'ի բերան նորա. քանզի այս զնկարագիր բարուց նորա յանդիման առնէ։

"Օ Հօթանատնամենիւք անցեալ, զայս առաջին նուագ յանդիման լինիմ ատենի։ Յստանօր տարազ բանից և ձևք, ամենայն ինչ նոր է ինձ. և զի 'ի լեզու օտար հանդերձեալ եմ խօսել, այս մի ինչ խնդիր է ինձ 'ի ձէնջ, միտ դնել փաստից քան բառից. զի ձեզ պարտ է առնել զարդարու-

1 Քսեն. 'ի պատասխանատ. էջ 705։
2 Նոյն անդ. էջ 701։
3 Պղատ. 'ի պատասխանատ. հա. 1. էջ 36։
4 Նոյն անդ. էջ 29։
5 Նոյն անդ. էջ 19։

թիւն, և ինձ խօսել զՀիմարութիւն»[1]։

Եւ յետ սրբելոյ յանձնէ զկեղտ անպարշտութեան[2], անցանէ յերկրորդ գլուխ ամբաստանութեանն։ «Զեղծուցիչ մանկտուոյն աթենացւոց ամբաստանիմ. ցուցցեն զմի ոք յաշակերտաց իմոց, զոր 'ի յոռութիւն ձգեալ իցեմ[3]։ Զբանս 'ի նոցանէ տեսանեմ յատենիս. յոտն կացցեն, վկայեսցեն ընդդէմ զեղծուցողին իւրեանց[4]։ Եւ եթէ դոքա ակն ածեն յինէն, ընդէր հարք և եղբարք դոցա և ազգականք չկարդայցեն զխրատութիւն օրինաց 'ի վրէժխնդրութիւն, և ընդէր Մելիտոս զվկայութիւն նոցա անտես առնիցէ։ Զի նոքա ոչ միայն չամբաստանեն զինէն, այլ և 'ի թիկունս ինձ հասեալ կան։

Ոչ զրպարտութիւնք Մելիտեայ և Անիտոսի դատապարտեսցեն զիս 'ի մահ[5], այլ ատելութիւն մնափառ և անիրաւ մարդկանն՝ զորոց նշաւակեցի զոգիտութիւն և զախտս. ատելութիւն որ զբազումս 'ի լաւաց կորոյս և կորուսցէ. զի չհամարիմ թէ մահուամբ իմով յագեսցի։

Զատելութիւնն զայն յանձն ձգեցի ցանկութեամբ խելամուտ լինելոյ զօրութեան հրամանին պատասխանւոյ դեղփական հարցկին[6], որ վեհ քան զամենայն իմաստունս եցոյց զիս»[*]։

1 Պղատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 17։
2 Քսենոփ. 'ի պատասխանատ. էջ 703։
3 Նոյն անդ, էջ 704։
4 Պղատ. անդ, էջ 33։
5 Նոյն անդ, էջ 28։
6 Նոյն անդ, էջ 21։
* Եւ հրամանն պատասխանաւոյն այս է, որպէս ասան-

Լստանօր 'ի բարկութիւն բրդեցան դատաւորք՝. բայց Սոկրատայ յառաջ ածեալ զբանսն, ասէ. Զարմացեալ ընդ պատգամն, հարցի զսականաւորս յամենայն կարգէ քաղաքացոց. և ամենայն ուրեք գտի յանդգնութիւն և կեղծաւորութիւն։ Զանացայ երկմտեցուցանել զնոսա ընդ իւրաքանչիւր քաջութիւն, և արարի ինձ ասելս հաշտելս. և 'ի միտ առի՝ զի չէք որ իմաստուն, բայց միայն աստուած. և զի պատգամախօսին այլասացութեան այս էին իմաստք, զի որ չհամարի զանձն իմաստուն՝ նա իմաստնագոյն է 'ի մարդիկ[1]։

Լութէ վասն անցուցանելոյ իմոյ զամն բազումն 'ի խնդիրս վասանգաւորս զիս ամբաստանիցեն, իմ պատասխանի այս է. Լուհամարհելի էն կեանքս և մահ՝ առ 'ի լինել սիփտանի մարդկան։ Պիտացի՝ զի 'ի հրահանգել զնոսա սահմանեցին զիս երկինք[2]. և որ զվտանգ մահու յանձն առեալ՝ ոչ լքի զդաս իմ յոր կացուցին զիս զօրավարքք Լամփիպոլիս, 'ի Պոդիտեա և 'ի Պելիոն, պարտ է ինձ արիագոյն ևս կալ ուր կացուցին զիս դիք 'ի միջի ձերում, և չկարեմ դասալիք լինել առանց ընդդէմ դառնալոյ հրամանաց նոցա, և զվատութիւն յանձն առնլոյ[3]։

դէ մեկնիչն Արիստոփանեայ. (Լամպան. տող 144.) «Իմաստուն Սոփոկլ, իմաստուն Եւրիպիդէս. բայց Սոկրատս իմաստնագոյն քան զամենայն մարդիկ»։

1 Փաստ. 'ի պատասխանատ. էջ 703։

2 Պլատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 23։

3 Նոյն անդ, էջ 30։

4 Նոյն անդ, էջ 28։

Լոյս ոչ այսչափ միայն. այլ թէ և անպարտ կամիցիք արձակել զիս՝ զի մի և խօսիցիմ[1], ասացից ձեզ. Դատաւորք արդոյք, և սիրելիք ինձ, աստուծոյ պարտիմ հնազանդել առաւել քան ձեզ. և մինչև իցէ յիս շունչ, ոչ դադարեցայց որպէս մինչև ցայժմ յասելոյ համարձակաձայն ամենեցուն՝ որ ընդ առաջ լինին ինձ. Ոչ ամօթ համարիցիք հետամուտ լինել մեծութեանց և փառաց, և անսիրելի առնել զգանձս իմաստութեան և զճշմարտութեան՝ որ հոգւոյդ ձերում զարդ գործեն և կատարումն։ Դարձանձեցուցից զնոսա ժառանգութեամբք և խնդրուքք և ամաչեցուցից ընդ կուրութիւն իւրեանց և ընդ սուտ առաքինութիւնս, և ցուցից զի նախամեծար առնեն քան զամենայն բարիս որ ինչ արհամարհանաց են արժանի։

Օ այսոսիկ հրաման է ինձ յաստուծոյ քարոզել անլռելի մանկանց և ծերոց, քաղաքայնոց և օտարաց. և որով 'ի հնազանդելն իմում հրամանի նորա՝ պարգևք մեծագոյնք պարգևին ձեզ, նովին իսկ 'ի մատնեալդ ձերում զիս 'ի մահ մերժեսջիք զպարգևսն աստուծոյ, և ոչ և զոք գտանիցէք յայս նախանձ վառեալ։ Զեզ պաշտպան կամ յատենիս, մինչ թուիմն պաշտպանել անձին. զի Թէպէտ և Անիտոս և Մելիտոս կարէն զպարտել զիս և աքսորել և բառնալ 'ի կենաց,

1 Պղատ. 'ի պատասխանատ. հա. 1. էջ 29։

այլ միասել ինձ ոչ կարեն. և աւաղելիք են քան զիս, զի են անիրաւք՝։

Ա՛ռ 'ի խուսել 'ի հարուածոց նոցա, ոչ ըստ օրինակի այլոց ամբաստանելոց հնասս գաղանաձածուկ 'ի կիր արկի կամ յայտնի աղերսանս։ Ա՛ռ յոյժ մեծարանաց և ոչ գութ հնարեցայ արկանել 'ի ձեզ արտասուօք խնդիք կամ որդւոց իմոց կամ բարեկամաց, շուրջ ածեալ զնոսա զինև [2]. զի զգութ 'ի տեսարանի արժան է յուզել ողորմելի տեսլեամբք, իսկ ասա՝ Ճշմարտութեան ևեթ պարտ է լսելի առնել զձայն։ Լրդուեալ իսկ է ձեր յանդիման ամենեցուն՝ զատել ըստ օրինաց. արդ եթէ երդմնահարութեան հրապոյրս 'ի նեղքս արկից՝ ամենարշտութեան գտայց մեղապարտ։ Ա՛յլ ես խելամտագոյն ևս եմ քան զՀակառակորդս իմ՝ թէ է աստուած, և անվեհեր յարդարութիւն նորա և 'ի ձերդ լինիմ ապաստան [3]։

Ա՛ստոյգ քանզի բազմագոյնք 'ի դատաւորաց Սոկրատայ էին 'ի տգէտ և յանիմաստ ամբոխէն, կէսք զարիութիւն նորա արհամարհանս համարեալ, այլք 'ի պարծանաց նորա 'ի խոր խոցեալ [4], ետուն վճիռ՝ պարտաւոր զնա յայտ արարեալ և անպատասխանի։ Սակաւ ինչ աւելի թուովք

1 Պղատ. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 30։

2 Քսեն. 'ի պատասխանատ. հտ. 1. էջ 34։ Նոյն, յիշատ. գիրք Դ. էջ 804։

3 Պղատ. անդ, էջ 35։ Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 722։

4 Քսեն. 'ի պատասխանատ. էջ 707։

յաղթեցին ոսոխք նորա [1], և այն ևս արդեաք պա-
կասէր նոցա, և ինքեանք երթեալ տանէին զպա-
տուհաս, եթէ սակաւ ինչ ջանացեալ էր նորա
ողջոյնել զդատաւորսն։

Պարտ էր ըստ օրինացն ամենացուցոյ երկրորդ-
դել զդատաստանն, առ 'ի սահմանել զպատու-
հաս նորա [2]։ Մ'ելիտեայ 'ի մուրհակ ամբաստա-
նութեանն զմահ սահմանեալ էր 'ի պատուհաս.
բայց հրամայն եղև նմա ընտրել իւր տուգանս
կամ սուքոր և կամ բանտ անել։ Պատասխանի ետ
Սոկրատ և ասէ. Թէ Թեթև ինչ յանձն
առնուցուս պատուհաս, մեղապարտ զանձն առ-
նեմ [3]. այլ ես սոպասաւորութիւն մեծ մատու-
ցեալ հայրենեաց, 'ի նահապետանոցին արժանի
զտանիմ կեալ 'ի զանձուց աշխարհիս [4]։ Այս
իբրև ասաց, ութսուն այր 'ի դատաւորաց՝ որոց
նախ արդարացուցեալն էր զնա՝ միաբանեցին ընդ
դատախազին, և սահմանեցան վճիռ մահուն [5]*,
դեղով զբաւել նմա 'ի կենաց։

1 Պղատ. 'ի պատասխանատ. հա. 1. էջ 36։

2 Կիկերո. յղ. Ճարտ. դէ. 54. հա. 1. էջ 182։

3 Պղատ. անդ. էջ 37։ Քսենոփ. 'ի պատասխանատ. էջ 705։

4 Պղատ. անդ.։

5 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 42։

* Պղատոն ասանգէ ('ի պատասխանատ. անդ. էջ 38.) յանձն առեալ Սոկրատայ թեթև ինչ տուգանս, և բաշխուսուրելով զայն ոմանց յաշակերտաց նորա և մանաւանդ Պղատոնի. 'ի սոյն և այլք 'ի մատենագրաց միաբանին։ (Դիոգ. լայերտ. անդ, յօդ. 41։) Բայց Քսենոփոն այսպէս ասէ բարբառել նմա, իբր չկարելով առանց զմեղանս յանձն առնլոյ դատապարտել զանձն և 'ի դոյզն ինչ պատիժ։

Ընխառով զվՃիռն զայն ընկալաւ Սոկրատ, որ յամենայն կեանս իւրում ուսեալ էր զմեռանել՝։ Եւ դարձեալ երրորդ անգամ խօսեցաւ, և միւ-թարեաց զդատաւորս՝ որոց անպարտ դատեալ էր զնա, և եցոյց նոցա՝ զի ոչ ինչ՝ի դժնդակաց հա-սանէ առն բարւոյ, ոչ՝ի կեանս և ոչ՝ի մահու[2]։ Իսկ չարախօսացն իւրոց և դատապարտողաց գու-ժեաց՝ տանջել մինչև՝ի սպառ՝ի խղճէ չա-րեացն[3], և կրել կշտամբանս՝ի մարդկանէ։ Եւ յա-ւել ևս՝ թէ մեռանել շահ է ինձ. նմին իրի և ոչ զայրանամ ընդ նոսա, բայց զատելութենէ նոցա բողոք ունիմ։ Եւ վախճանեալ զանս իւր, ա-սէ. Համ է արդ մեկնելոյ՝ի բաց, ինձ առ՝ի մահ, և ձեզ առ՝ի կեանս. այլ ոչր՝ի մէնջ լա-ւագոյն իցէ բախտ, զայն աստուած գիտէ[4]։

Եւ իբրև եկ յատենէն գնալ՝ի բանտ, ոչ ինչ՝ի դէմն նորա կամ՝ի գնացս երևէր փոփո-խումն։ Եւ տեսեալ զաշակերտս շուրջ զնովաւ զի լային, ասէ. Ինդէր այժմ սկսանիք ողբալ, չգի-տէիք զի բնութեանն՝ի ծնէ դատապարտեալ էր զիս՝ի մահ։ Որում Պղոդոդոր, մի՝ի կրտ-սերագունից աշակերտաց նորա թախծագին ա-սէ. Եւ այն դառնագոյն է ինձ, զի անպարտ մե-ռանիս։ Պատասխանի ետ Սոկրատ ժպտելով, և

1 Պղատ. ՝ի Փեդոն. հա. 1. էջ 64 և 67։

2 Նոյն, ՝ի պատասխանատ. 1. էջ 41։

3 Քսեն. ՝ի պատասխանատ. էջ 705։ Պղատ. անդ, էջ 39։

4 Պղատ. անդ, էջ 40 և 42։

ասէ. Այլ կամէիր զի պարտաւոր մեռայց։ Այլ տեսեալ զՆիտոս զի անցանէր, ասէ ցբարեկամս իւր. Տեսէք զիարդ պանծայ ընդ յաղթանակ իւր. ոչ գիտէ, զի առաքինութիւն է միշտ յաղթութիւն[1]։

Ի վաղիւ անդր յետ վճռոյ դատաստանին՝ քուրմն Պղոնի պսակեաց զնեալս պատերազմիկ նաւին, որ ամի ամի ածէ 'ի Դելոս նաւէրս յաթենացւոց[2]. և յայնմհետէ մինչև 'ի դարձ նաւին ոչ է օրէն կատարել զվճիռս դատապարտութեան մահու։

Օ աւուրս երեսուն եկաց Սոկրատ 'ի բանտի[3] անխռով որպէս յամենայն կեանս իւր՝ պար առեալ յաշակերտացն, որք զտրտմութիւն իւրեանց հայեցուածովք և բանիւք նորա սփոփէին, յետին զիւրաքանչիւր բարբառ նորա և զանկարկուութիւն համարելով։

Ի միւմ աւուրց զարթուցեալ, ետես զՔրիտոն զմի յառաւելագոյն սիրելեացն՝ բազմեալ առ մահիճս իւր, և ասէ. Ո՞ր ինչ իցէ կանխել քո այսօր, ոչ այդ դեռ ևս խորին է։ Քրիտոն ասէ. Այո, դեռ ևս լուսանայ։... Սոկրատ ասէ. Այլ որպէս եթող քեզ բանտապանն մտանել այսր։ Քրիտոն ասէ. Ճանաչէ զիս, պարզևս ինչ արարեալ իմ նմա։ Սոկրատ ասէ. Ապասեցեր ինձ

1 Քսեն. 'ի պատասխանատ. էջ 706։
2 Պլատ. 'ի Փեդոն. հա.
1. էջ 58։
3 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 816։

յոյժ։ Կրիտոն ասէ. Ո՛չ սակաւ։ Սոկրատ ասէ. Եւ ընդէ՞ր ոչ զարթուցեր զիս։ Կրիտոն ասէ. Պ՛աղցը 'ի քուն լինէիր, և զգուշացայ չխռովել զքեզ. միշտ իսկ զարմանալ էր ինձ ընդ խաղաղութիւն հոգւոյ քո, այլ առաւել և ևս հիացեալ կայի արդ։ Սոկրատ ասէ. Ո՞մեթ իսկ իցէ զառամելոյ իբրև զիս խռովել ընդ մերձենալ մահուն. այլ զի՞նչ հարկ արար քեզ գալ այսր։ Կրիտոն ասէ. Համբաւ չարագոյժ, ոչ քեզ, այլ ինձ և բարեկամաց քոց, քան զամենայն համբաւս դժբնդակ և չարաշշուկ։ Սոկրատ ասէ. Ա՞յ գուցէ հասեալ իցէ նաւն։ Կրիտոն ասէ. Այրեկ ընդ երեկս հասեալ էնա 'ի Սունիոն, և այսր հասցէ այսօր, և վաղիւ անցցես յաշխարհէ։ Սոկրատ ասէ. Այդպէս, որպէս դիցն կամք սահմանեցին*։

Յայնժամ Կրիտոն յայտնեաց նմա, զի առ 'ի չհանդուրժելոյ ընդ կոտուստ նորա՝ խորհուրդ կալեալ էր ընդ ոմանս 'ի բարեկամաց իւրոց, զերծուցանել զնա 'ի բանտէ. և զի ամենայն ինչ կազմ և պատրաստ կայր յառաջիկայ գիշերին, և դոյզն ինչ արծաթ բաւական էր 'ի կաշառել զպանտապահս և 'ի լռեցուցանել զամբաստանողս նոցա. և զի հայթայթէր նմա 'ի Թեսաղիա արժանի ապաւէն և անդորր կենցաղ։ Եւ ասա յաւել. Ո՛չ է մարթ անտես առնել քեզ մահ Սոկրատայ յապաղեաց 'ի միւս վաղիւն։

* Կրիտոն համարէր հասանելն նաւուն առօրին 'ի Պիրէոն, այլ 'ի վաղիւ անդր եհաս. և

զաղաչանս մեր՝ առանց մնասն լինելոյ անձին, և որդւոց քոց՝ զորս Թողուս 'ի կարօտութեան, և բարեկամաց քոց՝ որոց մնայ կրեղնախատինս մինչև 'ի սպառ, որպէս ոչ փոխանակեալ զկեանս իւրեանց առ 'ի կեցուցանել զքեզ[1]։

Պատասխանի ետ Սոկրատ, և ասէ. Ո՛վ սիրելի ցեալդ իմ Կրիտոն, նախանձ քո հակառակ է իմաստութեան՝ որոց միշտն պատկառ կացի, և յորոց ոչ կարասցեն մեկնել զիս չարաչար տանջանքք[2]։

Ամոլ անդր նախ 'ի բաց զնախատինս, զոր կատկածես 'ի մարդկանէ. չգիտիցես զի ոչ 'ի կարծիս բազմաց արժան է կալ, այլ 'ի վՃիռ այնորիկ՝ որ ընտրէ ընդ արդարն և ընդ անիրաւ, որ նոյն ինքն Աստուածութիւնն է[3]։ Ամոլ անդր 'ի բաց և զերկիւղդ, զոր ջանասս արկանել յիս վասն որդւոց իմոց. զի խնամեսցին նոքա 'ի բարեբարութենէ բարեկամաց իմոց՝ որք արդ ինձ բարեբարեն[4]։ Մինայ արդ խորհել թէ իցէ՞ ինձ օրէն մեկնել ասսի անհրաման յաթենացւոց[5]։

Ոչ ապաքէն հաստատեալ գիտեմք, զի ոչ երբեք օրէն է անիրաւութիւն ընդ անիրաւութեան հատուցանել. ոչ ապաքէն խեղամուտ եմք, զի կարևորագոյն պարտ քաղաքացւոյ է հնազանդել օրէնս նոցա, և չիք ինչ որ յայսմանէ զնա ազատ առնիցէ։

1 Պղատ. 'ի Կրիտ. հա. 1. էջ 44։
2 Նոյն անդ, էջ 46։ Քսենոփ. 'ի պինա. էջ 705։
3 Պղատ. անդ, էջ 48։
4 Նոյն անդ, էջ 54։
5 Նոյն անդ, էջ 48։

Լաւդ զինչ է հակառակ կալ կատարմանն նոյ, բայց կապտել զզօրութիւն նոյ և եղծանել զնոսա։ Լինի չէի հաճ ընդ նոս, ազատութիւն էր ինձ և կարող էի գնալ յայլ աշխարհ՝. այլ մտադիրութեամբ ընդ լծով նոցա կացի ցարդ, և յաճախ զինամակալութեան նոցա և զբարերարութեան զփորձ առի. և արդ զի զեղծանին նովաւ մարդիկ՝ի կորուստ իմ, կամիցիս զի առ՝ի խնդրել վրէժ՝ի նոցանէ՝ տապալեցից զօրէնս, և դաւաճանեցից զՀայրենիս իմ՝ որ՝ի նոսա յեցեալ կան։

Լաւ դարձեալ օրինացն պատրաստեալ էր ինձ պատասխան, զի յետ առաջնոյ ատենին աքսոր ևեթ ինձ առաջի կայր։ Ինտրեցի միւսանգամ ելանել յատեան, և յանձն առի հանդարձակ զմահ քան զաքսորանս՝։ Լաւ արդ դրժեալ բանիցն իմոց և պարտուց՝ երթայց ինքնահալած՝ի տար աշխարհ, զի տեսցեն ազգք հեռաւորք զՄոկրատ տարագրեալ կորակոր, եղծիչ օրինաց և թշնամի իշխանութեան՝ առ՝ի կեալ զաւուրս ինչ նըւաղս և անարգս։ Լրթայց թողուլ առ նոսա յիշատակ զվատութեան իմոյ և զյանցանաց, և չիշխել՝ի բերան առնուլ զարդարութիւն և զառաքինութիւն առանց շառագունելոյ, և առանց ձգելոյ յանձն զդառնագոյն կշտամբանս։ Լաւ լիցի ինձ առնել զանդ զայդ, սիրեցեալդ իմ Կրիտոն. հանդարտ լեր և թող ինձ հետևել ընդ

1 Պղատ. ՝ի Կրիտ. հա. 1. 2 Նոյն անդ. էջ 52։ էջ 51։

շաւիղն՝ յոր ուղղէն զգնացս իմ դիք[1]։

Լրկաւուրբ յետոյ[2] մեռաստանքն՝ որոց յանձն է դոր ծ պատուհասի մահապարտից՝ կանխեցին 'ի բանտն, արձակել զնա 'ի կապանաց, և զժամ մահուն յայտ առնել նմա[3]։ Այլա և բազու

նայն լինել արժանի՝։ Լաբ՝ի վերայ ածեալ զնաւս անմահութեան հոգւոյ, եցոյց զայն բազմապատիկ հաւատոցեօք՝ի հաստատութիւն յուսոյն իւրոյ, և ապա յաւել. Թայց թեպետ և՝ի դերև ելցէ յոյս իմ, սակայն պահանջելոյն՝ի նմանէ դժնդակաց յանձնառութիւն չարգել՝ինձ զոլ բարեբաստ քան զամենայն մարդիկ, և արդ իսկ մերժէ յինէն՝ի բաց զամենայն դառնութիւնս մահու, և սիրիլ զյետին վայրկեանս իմ անապակ և բերկրալից խնդութեամբ՝։

Լաբ յառաջ ածեալ զբանսն, ասէ. Լաբ ամենեցուն իսկ, որ հրաժարեալ՝ի հեշտութեանց ջանան զարդարել զհոգիս իւրեանց ոչ օտարոտի զարդուք՝ այլ որ պատկանաւորքն են նոցա, արդարութեամբ և ժուժկալութեամբ և այլովք առաքինութեամբք, պարտ է քաջայոյս լինել, և մնալ խաղաղութեամբ օրհասի մահուն։ Լիկեսջիք և դուք զկնի իմ յորժամ և ձերդ հասցէ. այլ իմն ահա հասեալ կայ, և որպէս մի՝ի մերոց քերթողացս ասէ՝ լեմ իսկ զբարբառ նորա զի կոչէ զիս։

Լաբ աղաչեաց զնա Կրիտոն, հրամանս տալ վասն որդւոց իւրոց և տան իւրոյ. և նա ասէ. Օ՞ր յաճախն պատուիրեի, զնոյն դարձեալ ասեմ, գանձել ձեզ առաքինութիւնս. եթէ զայս առնիցէք, աւելորդք իցեն այնու հետև խոստմունք ձեր.

1 Պղատ. ՝ի Փէդոն. հա. 2 Նոյն անդ, էջ 91 և 114։
1. էջ 67 և 68։

իսկ եթէ ոչ, անպիտանք նոքին առ ընտա-
նիս իմ։

Այսպէս էանց 'ի մերձակայ սենեակն, լուանալ 'ի
բաղանիս. յորաւ զՀետ նորա և Կրիտոն։ Իսկ
այլք յաշակերտաց նորա խօսէին ընդ միմեանս
զանիցն զոր լուան 'ի նմանէ, և զառաջիկայ ա-
ղետիցն՝ յոր մահուամբ նորա հասանելոց էին. և
անդատին համարէին զանձինս որբացեալս յան-
փոխանակելի հօրէն, և լային առաւել 'ի վերայ
անձանց քան 'ի վերայ նորա։ Այլ ածին առ նա
զերիս որդիսն, յորոց երկոքին դեռ ևս տղայք էին.
և ետ պատուէրս կանանց որ ածէին զնոսա, և
արձակեալ զնոսա՝ դարձաւ անդրէն առ բարեկամն
իւր[1]։

Այլ ահա եմուտ բանտապետն 'ի ներքս, և ա-
սէ. Սոկրատ, 'ի գուժել իմում այլոց զժամ ըմ-
պելոյ բաժակի դեղոյն՝ անիծանէն զիս. այլ 'ի
քէն չկասկածեմ զայդ։ ՀԱՅԷ իմ տեսեալ զոք 'ի
տեղւոջ ասա արի և հեզ իբրև զքեզ, և հաստա-
տեալ գիտեմ՝ զի չիցես ընդ իս դժկամակեալ, և
ոչ ինձ համարիցիս 'ի մեղս զԼեթշուառութիւնս քո,
զորոյ քաջ իսկ գետես զպատճառս չարեացն։ Այրթ
խաղաղութեամբ, և քաջալերեսցս հնազանդել
հարկին։ Այլ 'ի փղձուկ հարեալ հաղիւ զանան
կարաց կատարել. և անց մեկուսի, հեղուլ համար-
ձակ զարտասուս։ Այլ Սոկրատ ասէ. Ինա խա-

1 Պղատ. 'ի Փեդոն. հա. 2 Նոյն անդ, էջ 116 և 117։
1. էջ 115։

զաղուԹեամբ, արարիչ ըստ բանիքումն։ Եւ դարձեալ առ բարեկամն իւր, ասէ. Տեսէք զայրդ բազմագուԹ, որ յաՃախ այց առնէր բանտարկեալս. տեսէք զիարդ արտասուէ։ . . Պարտ է հնազանդել զմա Կրիտոն. առէք ինձ այսր զբաժակդ ԹէՀ իցէ խառնեալ. իսկ եԹէՀ ոչ, խառնեցէք զդա վաղվաղակի։

Բայց Կրիտոն կացեալ ցուցանէր նմա՝ զի չէ ևս արևն 'ի մուտս էր, և զի այլոց շնորհէր ժամն ինչ և յետ այնորիկ յամել 'ի կեանս. իսկ Սոկրատ ասէ. Այլոց գուցեն պատՃառք յամելոյ, իսկ ինձ փուԹալոյ '։ Եւ ետ Կրիտոն պատուէր, և իբրև կատարեցաւ՝ մի 'ի սպասաւորաց ած զբաժակն մահացու։ Սոկրատ ասէ. Օ՞ինչ պարտ է առնել։ Սպասաւորն ասէ. Ելանել զայդ, և ապա զգնալ. և իբրև ծունկք քո կԹուցեալ լիցին, անկցիս յանկողին։ Յայնժամ Սոկրատայ առանց այլագուանելոյ և անդողդոջ ձեռամբ առեալ զբաժակն, և յետ աղօԹս մատուցանելոյ դից՝ մերձեցոյց զայն 'ի շրԹունս իւր։

Արհաւիրք կալան զամենեսին ընդ սոսկալի տեսիլն, և արտասուք յորդէին անժոյժք յաչաց նոցա. կէաք զհանդերձս ածէին զգլխով՝ առ 'ի ծածկել զարտասուսն, այլք ընդոստուցեալ՝ 'ի բաց կային յերեսաց նորա։ Այլ իբրև դարձուցեալ զաչս 'ի նա՝ տեսին զի արբեալ էր զբաժակ

։ Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 116։

մահուն, կսկիծ նոցա բռնադատեալ ընդ երկար՝ լուծաւ յողբս սաստիկս։ Եւ էաս յաճախեցին հեկեկանք նոցա 'ի կոծ մանկանն Աղոզոդորայ, որ զոչն ամենայն ոչ դադարեալ 'ի լալոյ՝ և յայն ժամ ահագին կականաւն հնչեցուցանէր զտուն բանտին։ Իսկ Սոկրատ անխռով կացեալ, ասէ ցնոսա. Օ՞ զործէք արք, զկանայս 'ի բաց արարէք՝ զի մի՞ յայդ տկարութիւն գայցեն. քաջալերեցարուք, լուեալ է իմ՞ ասելոյ յաճախ՝ զի պարտ է բարեգուշակ զոլ մահու։

Բայց Սոկրատ ոչ դադարէր 'ի զգնալոյ. և իբրև տկարացան ծունկքն նր, անկաւ 'ի մահիճն՝ ածեալ զիւրև զկրկնոցն։ Եւ սպասաւորն ցուցանէր զոլոյ անդն կային զտակաւ ազդումն թունոյն. և մինչ սարսուռ մահուն զոտս նորա և զլարձս կալեալ՝ 'ի սիրտն հասանէր, 'ի բաց էառ Սոկրատ զծածկոյթն, և ասէ ցԿրիտոն. Աքաղաղ մի Ասկղեպեայ ուխտեցաք, յիշեսջիր կատարել զուխտն*։ Եւ Կրիտոն ասէ. Կատարեցից զայն. այլ ցիցէ՞ քո այլ ինչ պատուէր։ Իսկ Սոկրատ ոչ էաս ետ պատասխանի. և ապա յետ սակաւ միոյ նշան ետ. և սպասաւորին զգացեալ՝ ընկալաւ զվերջին ակնթարթ նորա, և Կրիտոն կափոյց զաչս նորա։

1 Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 117։

* Աքաղաղ Ասկղեպեայ մատուցանէին նու էր. զայսմանէ գացեն խնդրոյք 'ի գիրս Պոմպէի Փեստեայ. (գիրք Թ. էջ 189)։

Ա. յապէս զրաւեցաւ 'ի կենաց երկիւղածագոյնն և առաքինի և բարեբաստ քան զամենայն մարդիկ [1], որ միայն արդեօք, առանց երկիւղի ստուգեաւն, կարող էր ասել համարձակ. Ոչ բանիւ և ոչ գործով անիրաւեցի ինչ ումեք [2] *։

## ԳԼՈՒԽ ԿԸ.

Յաղագս Եղեւսեան խորհրդատուութեանն։

Օ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ մանուկ կրօնիցն աթենացւոց առաջի կայ ինձ Ճառեալ, զխորհրդոց՝ որոց սկիզբն 'ի գիշեր ժամանակին ծածկեալ, և արարողութիւնք նորա արհաւիրս ոչ ինչ նուազ ածեն քան պատկառանս, և որոց գաղտնիք 'ի սակաւուց ոմանց լուծեալ՝ լուծիչք գաղտնեացն վաղվաղակի 'ի մահ մատնեցան և յանէծս հասարակաց [3]։ Օ՛ի զսպանութիւն ևեթ նոցա և զընչիցն գրաւումն ոչ շատ համարին օրէնք, այլ հրամայեն զյանցանս նոցա և զպատուհաս արձանագրեալ 'ի սիւն՝ կանգնել 'ի տեսիլ ամենեցուն և 'ի մշտայուշ յիշատակ [4]։

Զ՚ան զամենայն խորհուրդս սահմանեալս 'ի

[1] Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 118։ Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 818։

[2] Քսենոփ. անդ. գիրք Ա. էջ 721. գիրք Դ. էջ 805։

* Յեւակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Բ։

[3] Մեծրս. յեղեւս. գլ. 20։

[4] Անդոկ. յղ. խորհուրդ. էջ 7։

պատիւ զից զերահաչակը են Պետրոսեայ խորհրդատուն. քանզի նորին իսկ Պետրոսեայ ասեն սահմանեալ զայն։ Օ՛ի՛ի շրջէն՝ի ինդիր Պերսեփոնեայ դատեր իւրոյ, զոր Պղուտոնի յափշտակեալ էր, եկն ետաս՝ի դաշտ Լչեւսեայ. և հաճեալ ընդ հիւրընկալութիւն բնակչաց քաղաքին, արարն նոցա պարգևս երկուս մեծամեծս՝ զարուեստ երկրագործութեան և զդպրութիւն սրբազան գիտութեան[1]։ Լանդէն դարձեալ գնասատուն նակ սուագ խորհրդատուսիցն զփոքրն՝ի պատիւ Հերակղեայ սահմանեալ[2]։

Լ.յլ թողեալ ռամկին զնտոտի աւանդութիւնս, ՝ի կարևորագոյնն միտ զիցուք՝ի սահման կրօնական կարգիս հաստատութեան, քան՝ի գիտել զհաստատողս սորա։ Լմենայն ուրեք, ուր և մուծին զսա աթենացիք, համարի տարածեալ սէր միաբանութեան և մարդասիրութեան[3]. և զի սրբէ սա զհոգի՝ի տգիտութենէ և՝ի պղծութենից[4], և պատրաստէ զառաւելագոյն օգնականութիւն դիցն[5], զզօրութիւն հասանելոյ՝ի ծայր առաքինութեան, զբերկրութիւնս անբիծ կենաց և զյոյս անդորր մահու և բարեբաստութեան[6]։ Հայուի-

1 Խոսկր. Ներբ. հտ. 1. էջ 132։ Արիստիդ. Եղեւս. Ճարտ. հտ. 1. էջ 450։

2 Մեհրս. յԵղեւս. գլ. 5։

3 Կիկեր. յղ. օր. գիրք Բ. գլ. 14. հտ. 3. էջ 148։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 155։

4 Պրոկղ. ՝ի հաս. Պղատ. էջ 369։

5 Սոպատ. յղ. զան. ինդ. հտ. 1. էջ 370։

6 Կիկեր. անդ։ Խոսկր. անդ։ Կրինագ. ՝ի Ծաղկաքաղ. գիրք Ա. գլ. 28։

բելոյն 'ի խորհուրդս յայսոսիկ լեցի տեղի պայ-
ծառագոյն յեղիւսեան դաշտս, ժառանգեսցեն
նոքա զլոյս անստուերս', և կեցցեն յաստուած.
իսկ այլք 'ի մեռանելն բնակեսցեն յարհաւիրս 'ի
խաւարչտին տեղւոջ [2]։

Բդ. առ 'ի զերծանել 'ի հակառակէն, զիմեն
անդր Յակեւսիս յամենայն կողմանց Յոյնք՝ առ-
նուլ զառհաւատչեայ խոստացեալ բարեբաստու-
թեանն։ Ընդոստին 'ի մատաղ տիոց աթենացիք
մտանեն 'ի խորհրդածութիւնն. իսկ որոց չեղե
երբէք հաղորդ լեալ պաշտամանն, ինդրեն զայն
'ի մահու [3]. զի սպառնալիք և պատկեր պատու-
հասի անտի կենացն, յառաջագոյն ծաղր թուե-
ցեալ յաչս նոցա, ազգողագոյն յայնժամ տպա-
ւորին 'ի միտս նոցա, և ընուն զնոսա ահիւ՝ որ յո-
մանս մինչև 'ի վաստութիւն զառածանի [4]։

Բ.այց կէսք յիմաստնագունից չհամարին զան-
ձինս կարօտ պաշտամանն առ 'ի լինել առաքինի։
Սոկրատ չէառ երբէք յանձն ընծայել 'ի պաշտօնն.
և այս մերժումն նոր համարեցաւ նմա յամպարշ-
տութիւն [5]։ Պղատոն ևս լու 'ի լուինձ յորդորեալ
յոմանց նուիրիլ 'ի պաշտօնն, ետ պատասխա-
նի. Պատեկիոնն նուիրեալ էր 'ի պաշտօն անդր ա-

1 Պինդ. առ Կղեմ. ազնքս. յաշնախապ. գիրք Գ. էջ 518։
2 Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 69։ Արիստոտ. 'ի Գոլսաս, տող 145։
3 Արիստոտ. 'ի խաղաղ. տող 374։
4 Պղատ. յՂ. հատ. գիրք Ա. էջ 330։ Ջէլեւս. առ Սոտր. Ճառ. 42. էջ 279։
5 Ղուկիան. 'ի Դամոնակտ. հտ. 2. էջ 380։

սաղմոսն հռչակաւոր, իսկ Նպամինոնդ և Պելեսիղայոս անուանէրը. արդ մինեանք նա երանելի յեղիսեան դաշտս կայցէ, և սոքա 'ի ժամս դժոխոց ընդ քարշ ածիցին [1]։

Յունաց ամենեցուն օրէն է հաղորդել պաշտամանն [2], իսկ այլոց աղգաց արգելուն օրէնքն հինաւանդք [3]։ Խոստանային թուլացուցանել ինձ զնստութիւն օրինացն, զի զքաղաքացւոյ կրկի Ա՛թենս զանուն, և զօրութիւն մեծ օրինակի ոմանց այլոց առ ձեռն կայր ինձ. այլ զի հարկ էր ինձ յանձն առնուլ պարտս և հրաժեշտս՝ որ բառնային յինէն զաղատութիւն, խնդիրս ինչ միայն արարի զկարգաց հաստատութենն, և տեղեկացայ հանգամանաց իրացն, զորս առանց երդմնազանցութեան օրէն է ինձ պատմել։ Նա յաւելից զնոսա ընդ իրս յետին ուղղորութեանս իմոյ Ա՛ղեսիս, ուր չոգայ 'ի զնին աւագ խորհրդատուն [4], որ կատարին անդ ամի ամի [5] 'ի հնգետասներորդումաւուր ամենեան բոլեդրոմիոնի [6]։ Փոքրն եւս տարի 'ի տարւոջէ կատարի, վեց ամսովք յառաջ քան զմեծն։

Յաւուրս աւագ խորհրդատուին արգելեալ է

1 Պլուտ. յղ. ունկնդր. քերթ. հտ. 2. էջ 21։ Դիոգ. լայերտ. գիրք Զ. յօդ. 39։
2 Երոդոտ. գիրք Ը. գլ. 65։
3 Մեսրոպ. Յելեւս. գլ. 19։
4 Երոդոտ. գիրք Ը. գլ. 65։
5 Ցուլիան. Ճառ 5. էջ 173։ Պետաւ. յղ. գիտ. ժամանակաց, գիրք Ա. գլ. 8։ Նոյն, 'ի Թեմիստ. էջ 408։
* Ըստ մեռոնեան ջրջանին՝ սկիզբն բոլեդրոմիոնի մարթէր հանդիպել 'ի 23 օրէ ամենեան Օգոստոսի մինչև 'ի 21 սեպտեմբերի։

խստիւ չառնել եկակոչ, և ոչ օրէն է ձեռն արկանել 'ի պարտապան ոք դատապարտեալ յաստենի։ Ի վաղիւ անդր յետ տօնիցն առնէ աւագանին հարցփորձ սաստիկ 'ի վերայ այնոցիկ, որոց բռնութիւն և կամ այլազգ զկարգ պաշտամանցն աղմկեալ իցէ՝. և մնայ և կամ տոյժք ծանուցեալ յանցաւորացն սահմանեալին 'ի պատուհաս[2]։ Կարելոր թուի խստութիւնս այս, որպէս զի մի խռովութիւնս ինչ յարիցէ յամբաւ բազմութեան ամբոխին որ խռնի Յ[ղ]ելսիս[3]։ Յ[ղ]թէ պատերազմ 'ի միջի կայցէ, արձակեն աթենացիք ամենայն ուրեք հրեշտակս՝ բաշխել հրամանագիր որոց կամիցին զալ՝ 'ի հաղորդութիւն պաշտամանն կամ 'ի զնին և եթէ հանդիպիցին[5]։

Յերկրորդում ամի հարիւրորդի ինն երորդի ողնմպիադին, 'ի չորեքտասներորդի աւուր ամսեան բոյեդրոմիոնի*, յուղղն անկայ ընդ ոմանս 'ի բարեկամաց իմոց՝ Հաւահանդիստ քաղաքին աթենացւոց, ուստի մեկնին ուղղորքն Յ[ղ]ելսիս, կոչի նաւահանդիստ սուրբ. և ուղղին, որ անտի անդր ածէ, ուղղի սուրբ[6]. և էն 'ի միջի ընդ Ի-

1 Անգոկ. յղ. խորհրդ. էջ 15։

2 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 631։ Պեսիա. օր. ատատիկ. էջ 36։

3 Երոդոտ. գիրք Ը. գլ. 65։

4 Եպեին. յղ. վրէպ հրեշտ. էջ 416։

5 Լիւս. յԱնգոկ. էջ 106։

* Յայսմ ամի սկիզբն ամսեանն բոյեդրոմիոնի հանդիպէր 'ի 29 մերոյ սեպտեմբերի. որով և 14 օր նորին բոյեդրոմիոնի անկանէր 'ի 4 հոկտեմբերի։ Եւ գաւանին սկսեալ ամէնքն 'ի 5 հոկտեմբերի, 343 ամին Ն. Ք։

6 Մեօրս. յԵլլեւս. գլ. 27։

թէնս և ընդ Լդեւսիս ասպարէզք իբրև հարիւր։ Լս անցեալք առ բլրով միով բարձու, որ 'ի վարդատեսակ յարաղուարձ թփաստանեաց էր ծածկեալ՝, մնաք 'ի սահմանս Լդեւսեայ, հասաք յեզր վտակաց՝ յորոց մին Դեմետրեայ և միւսն Պերսեփոնեայ նուիրեալքն էին։ Կամեցայ և ոչ զսոսա անյիշատակ առնել, զի քրմաց Լեթ մեհենին օրէն է ձուէն 'ի նոսա որսալ, և զի աղի է ջուր նոցա, և անտի առնուն 'ի պէտս նուիրանաց 'ի պաշտօնն [2]։

Լ՝նդր ևս 'ի կամուրջ գետոյ միոյ՝ որ համանուն սեթենականին կոչի Կեփիս, ձաղանս անհեթեթս կրեցաք 'ի սինքքոր խուժանէն։ Օ՛ի յաւուրս տօնիցն սովորութիւն է նոցա դարանակալ լինել անդ անցաւորաց, և զբօնանալ 'ի ծաղր առնել զնոսա, և մանաւանդ զերևելիս 'ի նոցանէ զաւազս աշխարհին [3]։ Օ՛ի այսպէս աւանդեն ապարեալ սպառաւոյ ուրումն Յամբեայ՝ 'ի հասանել Դեմետրեայ յԼդեւսիս [4]։

Փոքր մի հեռի 'ի ծովէ երկայնեալ ձգի 'ի դաշտին յարևմտից հիւսիսոյ ընդ արևելս հարաւոյ բլուր մեծ. 'ի զառ 'ի վայրին նր յարևելեան ծայրն կառուցեալ կայ հռչակաւոր մեհեանն Դեմետրեայ և Պերսեփոնեայ, և ստորև քան

1 Սփոն, ուղևոր. հա. 2. էջ 161։ Ռուքքը օրագր. գիրք Զ. էջ 425։

2 Պաւսան. գիրք Ա. գլ. 38. էջ 61։ Հիւսիք. 'ի բառն Բειτοί. Սփոն, անդ։ Ռուքքը անդ։

3 Սարաք. գիրք Թ. էջ 400։

4 Աղոզոդ. գիրք Ա. էջ 17։

զնա Լևեւսիս քաղաք փոքրիկ։ Շուրջ զբլրովն, և 'ի վերայ բլրոյն են շինուածք բազումք սրբազանք, խորանք և բագինք[1]. և Հնիւ քաղաքին աթենացւոց ժառանգեն անդ ամարաստան ապարանս գեղեցիկս[2]։

Մեհեանն այն դաստակերտ Պերիկղեայ, 'ի պետտելեան վիմանց է շինեալ, և 'ի հարթապակ կոփեալ ժայռի կառուցեալ կայ՝ դիտելով ընդ արևելս։ Խոզարձակ է յոյժ և հոյակապ. շրջապատն որ զնովաւ՝ ձգի 'ի հիւսիսոյ ընդ հարաւ ոտնաչափս իբր երեքարիւր ութսուն և չորս, և յարևելից յարևմուտս իբր երեքարիւր քսան և հինգ[3]։ Արևելագունից 'ի Հարտարաց յանձն եղև ածել զզարծն յանթերի կատարումն[4]։

Թ. քուրմն մեհենին գլխաւորք են չորք[5]։ Բաց ջին՝ կատարողապետ, որ սրբազանին կոչի. և գործ է նորա՝ նուիրել զմատուցեալսն 'ի խորհուրդսն։ Պայտնա 'ի մէջ զգեցեալ այլազգեաւ, թագ 'ի գլուխ, և վարքք նորա զուստրքն գեղածիւղ[6]։ Պարտ է նմա գալ կատարելահատակ ըստ տեսոց՝ համեմատ հանդարտութեան պաշտամանն, և պերճանաց՝ ախորժալուր լսելեաց[7]։ Այ՝ինչև ցկեանս է իշ-

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 38. էջ 93։
2 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 628։
3 Ութքը, օրագր. գիրք Զ. էջ 427։
4 Սարաբ. գիրք Թ. էջ 395։ Վիտրուվ. 'ի յառաջաբ. գիրք Է. էջ 125։
5 Մեսրոպ. Յեղեւս. գլ. 13։ Եկեղեաց. բանաս. կանոնս. հտ. 21. էջ 93։
6 Աբրիան. Յեղիկոս. գիրք Գ. գլ. 21. էջ 441։ Պլուտ. Յակոբ. հտ. 1. էջ 202։
7 Աբրիան. անդ։ Փիլոսոփ. յղ. վարուց խնամատակ. գիրք Բ. էջ 600։

խանութիւն նորա՝. և ընդ առնուլ զայն՝ պարտ է հրաժարել նմա՝ի հարսանեաց մինչև՝ի սպառ։ Շ փնտրեալ մոլեխնդի ասէն առնուլ նմա զօրութիւն՝ի պահպանութիւն այսր օրինաց։

Երկրորդի քրմին գործ է կրել զՋահն սուրբ՝ի պաշտամունսն, և սրբել զմատուցեալսն՝ի նուիրումն. իշխանութիւն է և նմա հանգոյն կատարողապետին ածել թագ՝ի գլուխ[1]։ Իսկ այլք երկոքին են քարոզն սուրբ, և սպասեակ բագնին. առաջնումն անկ է՝ի բաց առնել զպիղծս, և զգուշանալ լուռ և անզբօս կալոյ նուիրելոցն. իսկ երկրորդին՝ օգնել այլոց՝ի պաշտամունսն։

Ի սրբութիւն պաշտամանն նոցա յաւելուն պայծառութիւն փառք ազգատոհմին. զի կատարողապետն ընտրի Յումոզպեանց[2], որոց ազգատոհմ է մի՝ի հնագունիցն աթենացւոց. քարոզն՝ի Վերիկեանց, որ անդստին Յումոզպեանց սերեալ են. և այլքն ևս երկոքին հանգոյն սոցա յերևելի ցեղից ընտրին[3]։ Ղորեցունցն ևս են և այլ պաշտօնեայք բաղումք՝ի ձեռանէ, թարգմանք, երգիչք, և ուղղիչք կարգաց թափորոյն և այլոց արարողութեանց[4]։

Են Յելևսիս և քրմուհիք Դեմետրեայ և Պերսեփոնեայ, որոց օրէն է ընծայել զոմանս՝ի

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 14. էջ 142։
2 Մեօրա. Յելևս. գլ. 14։
3 Հիսիւք. Ի բառն Էլևսն.
4 Պաւսան. գիրք Ա. գլ. 37. էջ 89։
5 Պոլիտեկ. գիրք Ա. գլ. 1. յոդ. 35։

խորհուրդն[1], և յաւուրս ինչ տարուց մատուցա-
նել զոհս վասն ոմանց[2]։

Լրկրորդն յինանց իշխանաց տեսուչ է տօնիցն,
և զգուշանայ մանաւանդ բարեկարգութեան նո-
ցա, և զի մի դոյզն ինչ լցցի 'ի նոսա փոփոխումն։
Ինդ բազում աւուրս յերկարաձգին տօնքն. և է
զի ընծայեալքն ընդհատուին քնոյ անընդհատ
զպաշտամունսն կատարեն։ Ցեսաք մեք զնոսա
գիշերայն, զի մեկնեալ 'ի բակէ մեհենին՝ գնային
լրիկ զոյգ զոյգ, իբաքանչիւր ջահ վառեալ ու-
նելով 'ի ձեռին[3]։ Լբ 'ի դառնալ մտանելն յա-
պաստան անդր սուրբ՝ ձեռիսին 'ի գնացս. և գի-
տացի՝ զի զՎեմտրեպ և զՊերսեփոնեայ զար-
շաւանսն յանդիման առնէին. և արագ արագ
ձախր առեալ՝ ձօձեին զջահն, և ձեռայ 'ի ձեռա
միմեանց փոփոխէին զնոսա։ Ռանցն փայլատա-
կեալ 'ի նոցանէ բոցոյն կարծեն սրբել զՀոգիս, և
նշանակ համարին զայն լուսոյն՝ որ հանդերձեալն
է ծագել նոցա[4]։

Ի միում յաւուրց տօնին կատարեցան խաղք 'ի
պատիւ աստուածուհեացն[5]։ Ի մթիշք ականատեսք,
'ի կողմանց կողմանց Ելլադայ եկեալ էին անդր 'ի
տօնսն. և մինչանակ յաղթողին տուաւ զրիւ մի
գաւաց ժողովեալ 'ի մերձակայ անդոց, որոց

1 Սուիդ. 'ի բառն Φὀλεῖȣ. 2. էջ 166։
2 Դեմոսթ. 'ի Նեար. էջ 880։ 4 Մեսրս. Յնիւս. գլ. 26։
3 Ուիլբր. տրագր. գիրք Դ. 5 Նոյն անդ. գլ. 28։
էջ 428։ Սփան, ուղևոր. հա.

բնակիչք ուսեալք 'ի Դեմետրեայ՝ նոքա նախ մնակեցին զդարի[1]։

Ի վեցերորդ աւուր տօնին, որ պայծառադոյն քան զամենայն աւուրս էր, պաշտօնեայք մեհենին և նուիրեալքն ածին Ալթենայ Լիդեւսիս զպատկեր Յաքոսի[2] զոր համարին որդի Դեմետրեայ կամ Պերսեփոնեայ։ Լաւ էր պատկերն պատկեալ մրտենեաւ, և ջահ 'ի ձեռին նորա[3]. և ոգիք իբրև բիւրք երեք գնային զհետ[4]։ Հնչէին օդք մինչև 'ի բացարձակ վայրս յանուն աստուածոյն[5]. և չու հանդիսին ուղղէր 'ի ձայն նուագարանաց և յերգս օրհնութեանց, և երբեք երբեք 'ի հանգիստս զոհք մատչէին և յօրինէին պարք։ Ոչ էին մուծին զպատկերն 'ի մեհեան անդր Լիդեւսիս, և անդրէն վերստին դարձուցին զայն յիւր մեհեան նովին չքով և պաշտամունքք։

Բազումք 'ի հանդիսականացն դեռ ևս 'ի փոքր խորհուրդն ևեթ ընծայեալք էին, որ յեզր Լոնս գետոյ մերձ 'ի զրունս Ալթենայ 'ի մեհեան մի փոքրիկ կատարէին խորհուրդքն։ Ունդ մի 'ի բրմաց ստորակայից քննէ և պատրաստէ զնուիրականն[6]. և 'ի բաց մերժեալ զձեռնածուս և զեղեռնագործս, և մանաւանդ զսպանողս և զգողս[7], այ-

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 38. էջ 93։
2 Պլուտ. 'ի Փակ. հա. 1. էջ 754։ Մէօրս. Յելեւս. գլ. 27։
3 Պաւսան. անդ, գլ. 2. էջ 6։
4 Երոդոտ. գիրք Բ. գլ. 65։
5 Արիստոտ. 'ի Գոլոս, տող 319։
6 Հիւսիք. 'ի բառն Ὑδμαν.
7 Յուլիան. Ճառ. 5. էջ 173։ Մէօրս. անդ. գլ. 19։

լոյն սահմանեալ քաւութիւնս բազումս։ Այլ խելամուտ արարեալ զնոսա՝ ընտրել զլոյս ճշմարտութեան և մերժել զխաւար մոլորութեան՝, արկանել 'ի միտս նոցա զսերմանս հոգևոր զիտութեան, և քաջալերել զնոսա 'ի նուաճել զկիրս բռնաւորս[2], և սրբութեամբ մնայ և սրտի արժանի լինել անձնաւ բարեաց ընծայութեանն[3]։

Բազումք զամս բազումս կան 'ի նորընծայութիւնս, այլ նուազ քան զամ միոչ է օրէն կալ։ Այնչ դեռ 'ի փորձութեանն են՝ զնան Յեղեսիս 'ի տօնս, այլ առ դրան մեհենին կան ցանկանալով ժամուն՝ յորում մատցի նոցա մուտ[4]։

Հասեալ իսկ էր ժամանակն, և էր սահմանեալ յառաջիկայ գիշերին նուիրիլ նոցա 'ի մեծ խորհուրդսն։ Պատրաստէին յայն ուխտիւք և պատարագօք, զորս երկրորդն յինուանց իշխանացն ջրեսին օգնականս իւր ընտրեալս 'ի ժողովրդենէ մատուցանէր 'ի յաջողութիւն իրաց աշխարհին. և նորընծայքն պակեալ էին մրտենեաւ[3]։

Հանդերձ նոցա համարի սրբազանեալ 'ի պաշտամունսն յայնոսիկ, նմին իրի և բազումք տանին զայն մինչև 'ի պատառոտել նորա, և այլք խանձարուրս մանկանց իւրեանց առնեն յայնմա-

1 Կղեմ. ազգաբ. յաձախապ. գիրք Ա. էջ 325. գիրք Է. էջ 845։

2 Պորփիւր, առ Սաոբ. ծաղկաբաշ բնաբան. էջ 142։

3 Աբրիան. յԵպիկտ. գիրք Գ. գլ. 21. էջ 440։ Լիբան. յղ. արտասան. հտ. 1. էջ 495։

4 Պեստաս. 'ի Թեմիստ. էջ 414։

5 Պարապ. Սոփոկլ. յԵդիպ. Կոլոն. տող 713։

նէ, և կամ կախեն զայն 'ի մեհենի անդ նուէր արդադիր՝։ Ցեսաք մեք զնա, զի մտին 'ի շրջապատն մեհենական. և 'ի վաղիւ անդր մի 'ի նորընծայիցն նուիրելոց որ բարեկամ էր ինձ, պատմեաց ինձ զարարողութիւն ինչ պաշտամանն՝ որում լեալ էր ականատես։

Գտաք մեք, ասէ, 'ի նեղքս անդ զպաշտօնեայս մեհենին, և էր նոցա զքրմական հանդերձն ըզգեցեալ։ Կատարողապետն, որ անդ զարարչին տիեզերաց զդէմն քերէ, կրէր նշանակս ամենազօր իշխանութեան. ջահընկալն և սպասաւոր բազնին զկերպարանս արեգական և լուսնի, և քարոզն սուրբ զՀերմեայ[2]։

Այն ինչ զկայ առաք, և ահա քարոզն կարդայր. Լուցաց կացցէն անաւրէքք և ամպարիշտք, և մի՛ ոք 'ի պղծելոցն անօրէնութեամբ, մերձեսցի 'ի բագինս յայս[3]։ Այլ մահապարտ էր՝ որ ոք յարտաքսելոցն յետ քարոզին ազդարարութեան յանդգնէր կալ 'ի ժողովի անդ[4]։ Այլ քուրմն երկրորդ ետ տարածանել ընդ ոտիւք մերովք ըզմորթս մատուցելոց զոհիցն, և սրբեաց զմեզ վերստին[5]. և ընթեռնոյր բարձրաձայն կարգաւորութիւն պաշտամանն նուիրանաց ընծայելոցն[6], և օրհնութիւնք Գոմերեայ նուագէին։

1 Մեհրս. յԵղեւս. գլ. 12։ էջ 119։
2 Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք Գ. գլ. 12. էջ 117։
3 Սուետոն. 'ի Ներ. գլ. 34։ Լամպրիդ. յԱղեքս. Սեւ.
4 Լիւ. գիրք ԼԱ. գլ. 14։
5 Հիսիւք. և Սուիդ. 'ի բառն Διὸς Κώδ.
6 Մեհրս. անդ. գլ. 10։

Այս ասա՛ շշուկ ինչ լսելի լիներ. Թուէր մինչել երկրի ընդ ոտիւք մերովք, և շանթից և փայլատականց ահաւոր երևմունս խուճապից և ճիւաղաց 'ի խաւարի գործել՝. որոց զսուրբ վայրն լցեալ կաղկանձմամբք, պակուցանէին զմեզ արհաւրօք։ Այսկիծ մահաւիթ, անդամմունք դժոխոյ մթերք, չքաւորութիւն, ախտք, և մահ ինքնին գլխովին, կերպս 'ի կերպս դժնդակս և զարհուրելիանս երևէին մեզ[2]. և կատարողապետն մեկներ մեզ զտեսիլն, կենդանատիպ նկարագրութեամբքն յաճախեալ զտագնապ և զարհուրիս մեր։

Ասայց 'ի նշոյլ աղօտ ինչ լուսոյ[3] յառաջ մատչէաք 'ի կողմն դժոխոյ, ուր սրբին հոգիք՝ մինչև յերանաւէտ օթևանսն հասեալ։ Այս 'ի խոսն ողբոց լուաք զդառն հեծութիւնս անձնասպանիցն[4], և կատարողապետն յաւել. Ոչքա աւադիկ պատուհասին վասն թողլոյ զկայսն, ուր դիցն զնոսա յաշխարհի աստ կացուցեալ էր[5]։

Այս մինչ դեռ բանքն 'ի բերան նորա կային, բացան դրունք պղնձիք ահագին ճռնչմամբ, և յանդիման եղեն մեզ արհաւիրք սանդարամետաց[6].

1 Դիոն. ոսկեբ. Ճառ. 12. էջ 202։ Թեմիստ. Ճառ. 20. էջ 235։ Մեսրոպ. յԵղեւս. գլ. 11։

2 Վիրգիլ. Ենէակ. գիրք Զ. տող 275։ Որոգին. ընդդ. Կելս. գիրք Դ. էջ 167։

3 Ղուկիան. 'ի ստեղծ. հտ. 1. էջ 643։

4 Վիրգիլ. անդ, տող 434։

5 Պղատ. 'ի Փեդոն, հտ. 1. էջ 62։ Նոյն, յդ. օր. գիրք Թ. հտ. 2. էջ 870։

6 Վիրգիլ. անդ, տող 572։

և հնչէր տարտարոսն 'ի շառաչիւն շղթայից, և 'ի ձիչ թշուառականաց. և խառն ընդ տխուր և սրբ-տառուչ աղաղակն՝ երբէք երբէք լսելի լինէր բարբառս այս ահեղ. "Խրատեցարուք մեռք՝ երկրնչել 'ի դից, և ուղղել զարդարութիւն, և դոհայոդք լինել,[1]։ Օ՛ի ոչ միայն անօրէնութիւնք խոստիեալք 'ի դատաստանաց մնրդկան և եղծիչք պաշտամանն դիցն՝ այլ և խստասրտութիւն և անխնամութիւն ծնողաց և ապախտիք աղդի աղդիք կրեն պատուհաս[2]։ Ցեսաք մեք զժանտն կատաղիս մնրակաւորս զայրագնեալս անխնայ 'ի վերայ եղեռնաւորացն[3]։

Այլ մինչ դեռ տեսիլքս այսոքիկ ահագինք յաւելեալ 'ի սաստկութիւն յաղդոյ և 'ի մեծասաստ բարբառոյ կատարողապետին՝ որ թուէր ինն երկնաւոր վրէժինդրութեանն դահիճ՝ ընուին ըզմեզ արհաւրօք, և հաղիւ շունչ կենդանութեան էր 'ի մեզ, և ահա փոխեցաք յանտառս զուարձալիս և յարօտս գեղաձիծաղս, վայր երանաւէտ՝ պատկեր եղիւսեան դաշտացն, ուր նշողեր լոյս անաղօտ, ուր ձայնք քաղցրալուրք հնչէին զմայլեցուցիչք[4]. և ասա մուծեալք 'ի վայրն սուրբ, տեսաք զանդրի դիցուհւոյն լուսապայծառ՝ զարդարեալ մեծափարթամ իւրովք սպասուքն[5]։

1 Վիրգիլ. Ենէակ. գիրք Զ. տող 620։ Պինդ. պիւթ. տող 40։
2 Վիրգիլ. անդ, տող 608։
3 Նոյն անդ։ Ղուկիան. 'ի սաեղծ. հտ. 1. էջ 644։
4 Վիրգիլ. անդ, տող 638։ Սաոք. Ճառ. 119 և 604։
5 Թեմիստ. Ճառ. 20. էջ 235։

Ընդ վախճան լիներ հանդիսի փարձութեան մերոյ, և անդ տեսցք և լուցք իրս, զորս ոչ է օրէն պատմել*։ Այլ արբեալք 'ի սուրբ խնդութենէն՝ նուագեցաք օրհնութիս, երանելով զաստուծմեր'**։

Այս պատմեաց մեզ նորընծայեալն 'ի խորհուրդն։ Այլ ոմն յաւել հանգամանս ինչ, զոր առաջնոյն մոռացեալ էր։ Զի 'ի միում յաւուրց տօնին եբաց կաթարոզապետն զկողովն խորհրդաւորս՝ զորս բարձեալ բերին 'ի հանդիսին, մեծարեալս յամենեցունց։ Այլ էն 'ի նոսա սրբազան սպասքն՝ որոց տեսիլ արգելեալ է պըղծոց. այս ինքն էն փոխինդք այլայլաձևք, հատք աղի, և այլ որ ինչ[2] պատկանաւոր 'ի վեպս Մեմեարեայ և 'ի վարդապետութիւնս խորհրդոց նոցա։ Ուխրելոցն կողով 'ի կողովէ փոխեալ զնոսա, այնուհետև կարող էն ասել՝ թէ պահեցաք և արբաք զՎիկէտն[3]***։

Յետսի աբս բազումն հանձարեղս 'ի Հնուիրելոց անտի 'ի խորհուրդս Մեմեարեայ, զի խընդրէին ընդ միմեանս վասն վարդապետութեանն՝ որ 'ի խորհուրդս անդ առանդեալ, և ասէին. Ո՞չ

* Յեսայեայ մատենիս 'ի տեղեկութիւնն. թիւ Գ։

1 Աբիատար. 'ի Գ. Թագ. տող 431։

** Անդ. թիւ Դ։

2 Կղեմ. ազեքս. յորդոր. առ. հեթ. էջ 19։

3 Նոյն անդ, էջ 18։ Մեծար. Յեղեսս. գլ. 10։

*** Ksxsov ազգ ըմպելոյ, կամ մանաւանդ խաշոյ՝ զոր մատուցին Դեմեարեայ։ (Կղեմ. ազեքս. անդ, էջ 17։ Ագիր. գիրք ԺԱ. գլ. 12. էջ 492։)

աւելի ինչ արդեօք քան զպատմութիւն էիցս և զյե-
զափոխութեանց սոցա բովանդակիցս [1]։ Զիսկ
նորա այլ ինչ կէտ նպատակի բայց միայն ցուցա-
նել՝ զի 'ի ձեռն օրինաց և երկրագործութեան 'ի
վայրենութենէ 'ի զգօնութիւն ածաւ մարդ. և
առ ինչ գիտութիւնքս այսոքիկ քօղարկեալք։ Այ-
մի ոմն յաշակերտաց Պղատոնի յառաջ մատոյց
յածութեամբ զկարծիս, զոր աւասիկ զօդեմ [2]։

Այրեի, ասէ, հաւատի՝ 'ի խորհուրդս անդ
հաստատեալ հարկ պատժոց և վարձուց, որ մնան
մեզ յետ մահու, և նորընծայելոցն տեսանել անդ
զայլ և այլ պայմանս՝ ընդ որովք դրաւին մարդիկ
աստ և 'ի հանդերձեալ կեանս [3], և կատարողաս-
պետին ուսուցանել նոցա անդ՝ զի կէսք 'ի բաղ-
մութենէ երկրպագելոց դիցն հոգիք են սպա-
սաւորք կամաց զերաբուն էին՝ որք ուղղեն հրա-
մանաւ նորա զշարժմունս տիեզերաց [4], և կէսք
լեալ երբեմն մահկանացուք՝ որոց դեռ ևս բազում
ուրեք Այլապես կան շիրիմք [5]։

Ամ դ ըստ այսոցիկ 'ի դէպ է կարծել, զի հաս-
տատողաց խորհրդոցն կամելով պատշաճագոյն

1 Կիկերո. յդ. բն. դից, գիրք Ա. գլ. 42. հա. 2. էջ 433։

* Յեսայեայ մատեանս 'ի տե-
ղեկութիւնն. Թիւ. Ե։

2 Որոգէն ընդդ. Կելս. գիրք Գ. հա. 1. էջ 501. գիրք Ը. էջ 777։

3 Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 202։ Պլուտ. յդ. թեր. պատգ. հա. 2. էջ 417։

4 Կիկերո. տուսկուլ. գիրք Ա. գլ. 13. հա. 2. էջ 243։ Նոյն, յդ. բն. դից, գիրք Բ. գլ. 24. հա. 2. էջ 254։

տալ կարծիս զաստուածութենէ՝, հնարեցան պա-
հել զվարդապետութիւն՝ որոյ կան իսկ հետք ա-
ւելի կամ նուազ տպաւորագոյնք ի վարդապե-
տութիւնս և ի պաշտամունս գրեթէ ամենայն
ազգաց, զգաւանութիւն ասեմ միոյն աստուծոյ՝
որ է սկիզբն և կատարած ամենայնի։ Այս են
ըստ իմումս բանի գաղտնիքն գերազանցք, որ
յայտնին նուիրեալսն ի խորհուրդսն։

Ի հաստատութիւն այսր կրօնական միաբա-
նութեան և տեսութիւնք արդեօք քաղաքականք
ձեռն ետուն։ Օ՛ի տարածանել բազմաստուա-
ծութեանն հանապատիւռ, յայտնի եղեն արգասիք
չարեացն ի բարս մարդկան նեղգործեալ՝ի պաշ-
տամանել զից. զի ոչ առ այլ ինչ բազմացան նոքա,
բայց ի հաստատութիւն ամենայն ազգի ազգի
անիրաւութեանց և ախտից։ Այլ պաշտօնն այն
հաճոյ էր ժողովրդեան մի՞ հնութենն, և վասն յո-
ռութեանն իսկ. նմին իրի հաստատողք խորհրդոցն
ոչ մնալատտակ եղեն ի կործանել զայն, այլ
այլ ինն կրօնս սուրբս հնարեցան դնել ընդ ա-
ռաջնումն ի կրնս, որ և փոխարիներ մարդկան
ընդ տուժից բազմաստուածութեանն։ Այլ քան-
զի զամբոխն օրէնք քան ուղղութիւն բարուց
սանձահարեն, ի զէպ թուեցաւ թողուլ զնա ի
նանրահաւատ պաշտամունս իւր՝ զորոց դիւրին էր
խափանել զնեղծումն. և զի խնամանագոյնք ընդ

[1] Աստուած. մատեան, ի Τέλετ.

հակառակին յուղղութենէ բարուց քան յօրինաց առաջնորդին, կարելոր թուէցաւ ուսուցանել նմա զվարդապետութիւն յորդորիչ առաքինութեան։

Եւ ասպա յանէլ աշակերտն Պղատոնի. Եւ արդ ստոյ 'ի միտ առնուլ է վասն որոյ իրաց 'ի տեսարանս Լ թենայ՝ զկիր առ 'ի ծաղը 'ի գէտն ածին. զի աւագանին ազատ 'ի մերոյ կարծեաց բազմաստուածութեան, անփոյթ առնէ խոտա-նել զհամարձակութիւնն՝ որ ռամկին եւ թմբ-թէր դժպիտի գոլ, այլ նա զբօսանի յայն։

Դարձեալ և զայն 'ի միտ առնուլ է, թէ զնարդ կրօնք երկու՝ ամենեին հակառակք իրերայոց վար-դապետութեամբ՝ կան յայսքան բազում ժամա-նակաց հետէ 'ի նմին տեղւոջ անխառով և ան-նախանձ. զի ընդ այլ և այլ վարդապետութեանն՝ մի բարբառ է նոցա, և չիմարտութիւն առնէ մե-լորութեամբ զաւառանս՝ զոր պարտելոն պահանջել 'ի նոսանէ։

Խորհուրդքն չցուցանեն արտաքոյ այլ ինչ քան զպաշտօնն ընդունելի ամբոխին. օրհնութիւնքն որ անդ նուագին հրապարակաւ, և առաւել-գոյնք յարարողութեանց որ անդ պաշտին, յան-դիման առնեն զհանգամանս բազումս յարիշտա-կութեանն Պերսեփոնեայ և զարշաւանացն Դէ-մետրեայ, և զհասանելոյ նորա և զընակութեանն Յունաստան։ Շ ջնակայք քաղաքին լի են դաստա-կերտօք կառուցեալովք 'ի պատիւ աստուածու-հւոյն, և զվէմն խոկ տակաւին ցուցանեն անդ,

յորոյ վերայ բազմեցաւ նա պարտասեալ, որպէս ունին զրոյցք զնմանէ՝ [1]։ Այսպէս խուժանն տգէտ ձգի զՀետ երևմանն՝ որ մոլորութեանցն իւրոց ձեռնտու է, իսկ նուիրեալքն՝ ի զորութիւն անդր խորհրդոցն ուշ եդեալ՝ օրէն համարին յուղղութիւն դիտաւորութեանն կալ ապաստան։

Կալցի ոք որպէս և ախորժէ զկարծիս զայս, զոր ածի. այլ ընծայութիւնս այս գրեթէ ոչ ինչ աւելի քան զմնոտի արարողութիւն ունի, և ոչ ընծայեալքն առաքինագոյնք քան զայլս գտանին. զօրհանապաղ դրժեն երդմանցն հրաժարելոյ՝ ի թուչնոց, ՝ի ձկանց, ՝ի նռանէ, ՝ի բակլայէ և յայլոց ընդոց ինչ և՝ ի պտղոց [2]։ Բազմանց՝ ի նոցանէ ոչ ըստ պատշաճի առաջարկութեանն յանձն առեալ է զուխտն սուրբ. զի գրեթէ յաւուրս մեր դէպ եղև, զի պետութիւնն առ՝ ի ընուլ զպակասութիւն զանձուն հրամանն ետ ստանալ արծաթոյ զնիրաւունս հաղորդութեան խորհրդոցն [3]։ Այլ՝ ի բազում ժամանակաց հետէ կանայքն նշաւակք ընդունելի լեալ ընծային՝ ի խորհուրդսն [4]. և եկեսցէ ժամանակ, զի ապականութիւն եղծցէ՝ ի սպառ զսրբազոյնն՝ ի միաբանութիւնս [5]։

1 Արեսթ. յԵլիսեա. գլ. 3։
2 Պորփիւր. յղ. ժուժկալ. գիրք Դ. էջ 353։ Յուլիան. Ճառ 5. էջ 173։
3 Ագաթն. յղ. արկ. Ճարտարախօս. էջ 691։
4 Խաչայ Ճառ. յղ. ժառանգ. Փիլոկտեմ. էջ 61։ Դեմոսթ. ՝ի Ղեբր. էջ 862։
5 Կղեմ. ապէքս. ՝ի յորդոր. էջ 19։

# ԳԻՄԻՍ ԿԱԹ.

Չթատերախաղից յունաստանի։

Խոցչդ և ինդիրը, յորս պարապէի յաղագս թատերական քերթութեանց, բովանդակեցան յաւուրսն յայնոսիկ։ Օգկզանէ արուեստին և զզարգացմանէ այլափոխս 'ի միմեանց տան գրիչք, և նախանձ հակառակութեան զպարծանացն յուզի 'ի ժողովուրդս Հելլադայ'։ Ի համառօտել ըստ կարի խնամ զիրս կարևորս խմասանոյ ազգին՝ պարտ է ինձ զնոցին զելս յանդիման առնել։ Հաւանելի ինձ թուեցան աւանդութիւնք աթենացւոց զայսցանէ, և նախամեծար զնոսա արարի։

Ի բազմամբոխ ինջոյս և 'ի զառանցանս զինեբբուաց կերպարանեցաւ վսեմագոյնն և գեղեցկայարմար քան զամենայն արուեստս[2]։ Զոմանս յուք մնոք յառաջ քան զդարս իբր երիս. 'ի սպանդարամետական տօնսն, որ նուազ սպասուք՝ այլ առաւելագոյն ցնծութեամբ քան զայժմուս կատարէին յայնժամ 'ի քաղաքս[3], երգէին նուագք երկնեալք 'ի ստոյգ կամ վեր 'ի վերոյ

1 Բուլենգ. յղ. թատեր. գիրք Ա. գլ. 2։ Արիստոտ. յղ. քերթ. հա. 2. գլ. 3. էջ 654։

2 Աթեն. գիրք Բ. գլ. 3. էջ 40։

3 Պլուտ. յղ. ցանկ. ընչից, հտ. 2. էջ 527։

ազգմանէ քերթողական խանդից. զերկդմնէնին ասեմ տաղս, յորս երբէք երբէք ցոլանան թռիչք հանճարոյ, և յաճախ ևս փայլատակումք նսեմաստուերք ցնորից երևակայութեան։ Այս մինչ դեռ հնչէին նուագքն քաղցրալուրք 'ի լսելիս ամբոխին, խումբք աստուածապարարկաց և նոխազոտն պարկաց շուրջ պատեալ զգարշ պատկերաց զորս յաղթանակաւ բարձեալ բերէին', նուագ գէին ցուցս զազիրս, և էր զի նշաւակ առնէին զոմանս ծաղու ամբոխին։

Յոփազոյն ևս հանարձակութիւն էր դաշտականաց 'ի պաշտօն նորին Պիոնիսեայ դիցս, և մանաւանդ 'ի կութս այգեստանեաց՝ որ ինամակալութեամբ նորա պտղաբերին։ Այանդ կթողացն թաթաւեալ 'ի մրուր, և զմայլեալ անապակաւն և ցնծութեամբ, հեծեալ 'ի կառս՝ դիմէին 'ի փողոցս անհեթեթ բարբանջանօք, և լուծանէին վրէժս 'ի դրացեաց՝ լցեալ զնոսա ծաղու, և 'ի մեծատանց՝ նշաւակելով զանիրաւութիս նոցա[2]։

Իսկ 'ի քերթողաց ժամանակին կէաք զարութիւնս և զարկածս դիցն և զդիւցազանց նուագգէին[3], այլք խորամանկագոյնս երգիծանէին զյոռութիւնս և զծաղու իրս այլոց. նոքա 'ի նմանութիւն Հոմերի նախանձ բերէին, իսկ սոքա ձեռներէզք լեալ՝ օրինակաւ նորա զեղծանէին։ Հո-

1 Պլուտ. յղ. ցանկ. ընչից, հտ. 2. էջ 527։

2 Պարագ. Արիստոփ. Յանդ. սքն, տող 295։

3 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 4. հտ. 2. էջ 654։

մերոս քան զամենայն քերթողս ողբերգագոյն[1], և նախատիպ ամենեցուն որ զՀեան նորա եկին, զդիւցազնականն ազգ քերթութեան 'ի կատարումն էած Յունականին և Լատինականին իւրում. իսկ 'ի Արգիտականին 'ի կիր էարկ զծաղրածութի[2]։ Լալզի զեղեցկութիւնք քերթուածոց նորա առաւել 'ի յոյզս կրից է և 'ի շարժմունս որովք տայ նոցա զկենդանութիւն, քերթողք որ յետնորա կացին՝ հնարեցան մուծանել 'ի քերթածս իւրեանց արարուածս հզօրս 'ի գոլովել և 'ի զուարթացուցանել զտեսօղս. և ոմանք գուն գործեցին զերկոսին միանգամայն յուզել կիրս, փորձ փորձեալ անկերպարան քերթածովքն, որ ապա կոչեցան անխտիր ողբերգութիւնք և կատակերգութիւնք, զի զերկաքանչիւրոցն միանգամայն բերէին զնկարագիր[3]։ Քերթողք ուրուականացս այսոցիկ թատերգութեանց չեղին հնարագիտութեամբ ինչ երևելիք. այլ միայն յաւելուն 'ի վէպս արուեստին կարգ ինն անուանց, զորս ընդունայն է ածել 'ի լոյս՝ յոր չկարեն կալ[4]։

Վաղ իսկ ծանուցան պէտք և զօրութիւն թատերական զբօսանացս. օրհնութիւնք Պսանդարամետին 'ի նկարագրել զերագ արշաւանս նորա և զքաջայաղթ աշխարհակալութիւնսն՝ եղեն

1 Պղատ. յղ. հաս. գիրք ժ. էջ 598 և 607։ Նոյն 'ի Թեետ. հտ. 1. էջ 152։

2 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 4. հտ. 2. էջ 654։

3 Ցիշատ. բանաս. կաձառ. հտ. 15. էջ 260։ Բրիտոյ 'ի վէմն Ոքսոնի, էջ 420։

4 Սուիդ. 'ի բառն Θ՚εσπ.

նմանութիւնք՝. և 'ի պիտեան խաղս հրամայէ-
ին օրէնք նուազածուացն սրնգօք 'ի մեցարա-
նին՝ յանդիմանն առնել կարգաւ զհանգամանս
յաղթութեանն Պղոլոնի ընդդէմ Պիւթոնի ա-
ռաջնոյն, միջնոյն և վերջնոյն[2]։

Մեք ինչ զկնի սահմանադրութեան[3], Սուսա-
բիոն և Լեսպիս, երկոքին ևս ծնեալք յԱկարիոն
աւան փոքրիկ յԱտտիկէ՝, կացին 'ի գլուխ եր-
կուց խմբից խաղակից, մին 'ի տախտակամած 'ի
վերայ փայտոտանց հաստատեալ բեմի, միւսն 'ի
սայլի*. առաջինն 'ի նշաւակել զյոռութիւնս և
զծաղու իրս իւրոյ ժամանակին, իսկ երկրորդն
'ի ձառս բարձրապատումս 'ի վիպասանութեանց
առեալ։

Պատակերգութիւնք Սուսարիոնի էին ըստ տա-
բաղու անձամ և երգիծական ծաղրածութեանց,
որ դեռ ևս 'ի քաղաքս ուրեք Հելլադայ երևին[4].
և եղեն նոքա ընդ ժամանակս բաղումս զբօսանք
դաշտականաց[6]։ Մեթէնք ոչ ընկալան զտեսարանն

[1] Արիստոտ. առաջարկ. գլ. 19. առաջարկ. 15. հտ. 2. էջ 764։

[2] Սարաբ. գիրք Թ. էջ 421։ Պաւսան. գիրք ժ. գլ. 7. էջ 813։ Պղոլեմէկ. գիրք Ի. գլ. 10. յօդ. 84։

[3] Ռքսոնեան վէմք, դար 40 և 44։

[4] Սուիդ. 'ի բառն Θέσπ. Ովիատ. յղ. արչ. քերթ. տող 275։ Աթեն. գիրք Բ. գլ. 3. էջ 40։

* Սուսարիոն զնախկին քերթածս իւր ած 'ի տեսիլ իբր 580 ամաւ Ն. Ք.։ Անքք ինչ յետոյ Թեսպիս եւս ձաշակս ինչ ողբերգութեան, և յամին 536 Ն. Ք. ած 'ի տեսարան զԱկեստեայն ողբերգութիւն։

[5] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 4. հտ. 2. էջ 655։

[6] Նոյն անդ. գլ. 3. էջ 654։

զայն, մինչև զարդացեալ 'ի կատարումն ածաւ 'ի Միկիլնա'։

Մեսպեայ տեսեալ էր յաՃախ 'ի տօնս, յորս տակաւին օրհնութիւնք ևեթ նուագէին, զի մի յերգեցողաց կացեալ 'ի փայտակերտ աստիՃանի՝ յօրինէր զուցատրութիւն իմն ընդ պարուն[1]։ Բ.սատ ուշ 'ի կուրծս անկեալ նորա, եմոյծ յողբերգութիւնս իւր զոր՝ որ երբեք երբեք վիպասանութեամբ հանգիստ առնէր պարուն, բաժանէր զարարուածս, և ցանկալի ևս յարդարէր զայն[2]։ Բ.յս Ճարտարնորաձևութիւն, կցորդեալ ընդ այլ համարձակութիւնս՝ յոր ձեռներեց եղև, խուսափեաց զօրէնսդիրն ամենացուց՝ որ առաւել քան զամենայն ոք զօրութեան իրացն և վտանգին խելամուտ լինէր։ Սողոն արգել զազգ թատերախաղից՝ յորում հին աւանդութիւնք եղծանէին կեղծեօք, և ասէ ցՄեսպիս. Ի տեսարանս մեր պատուեալ ստութիւնք, ընդ հուպ անցցեն 'ի դաշինս յԼս սրբազոյնս'։

Ծայրայեղ ախորժակք ընդ քերթածս Մեսպեայ և Սուսարիոնի անդէն բռնացեալ 'ի քաղաքին և արտաքոյ, արդարացուցին և 'ի դերև հանին զնախահոգ զգուշութիւն Սողոնի։ Բան զի քերթողք, որ մինչև ցայսժամ պարապէին

1 Արիստոտ. յՂ. քերթ. գԼ. 5. էՂ 656։
2 Պողնակ. գլուք Դ. գԼ 19։
3 Դիոդ. լայերտ. գլուք Գ.
4 Պլուտ. 'ի Սոլ. հտ. 1. էՂ 95։ Դիոդ. լայերտ. գլուք Ա. յօդ. 59։
յօդ. 50։

յերկդունեմնն և յերգիծական տաղս հատարձակս, հարեալք 'ի նորաձև չքնաղ կերպարանս թատերախաղիցն, նուիրեցին զՀանձար իւրեանց յողբերգութիւն և 'ի կատակերգութիւն[1]։ Այս ապա ընդ հուպ փոփոխեցան ողբերգութեանն վէպք. որոց միանգամ սովորականքն և եթե են ախորժելի, բազոքք ունէին վասն վիպացն օտարանալոց 'ի պաշտամանէ Պանդարամատին[2]. իսկ այլք մնաղիւր 'ի նորաձև քերթածոն դիմէին։

Վրինիքոս աշակերտ Թեսպեայ զչափ տաղի՝ որ պատշաճագոյնն է թատերական քերթածոց՝ զայն ընտրեաց, և այլ ևս փոփոխութիւնս ինչ 'ի նոսա արարեալ[3] եթող զողբերգութիւն դեռ ևս 'ի տղայութեան։

Այսքիղոս ընկալաւ զայն 'ի ձեռանէ նորա զբաժուծս զգեցեալ, մեզոյր 'ի յայտսն ծեփեալ կամ դիմակ անկենդան զերեսօքն ածեալ[4]. չգոյր նորա հնարք և ոչ վայելչութիւն 'ի շարժմունսն, աղդեր իղձս իմն կարեկցութեան՝ հաղիւ զկիրս յուզելով, չև ևս ցրտացեալ 'ի սիրոյ ծաղրածութեանցն և խեղկատակութեանց՝ յորս զբօանոյրն յառաջին ամն[5], և տիպք կերպարանաց բանիցն 'ի նմա ուրեք ուրեք ընտիրք և վեհք, այլ բազում ուրեք անզօրք էին, նուաստք և աղտեղիք թանձր խենհշութեամբք։

1 Արիստոտ. յղ. քերթ. Գ. 4. հտ. 2. էջ 655։
2 Պլուտ. խրախճ. գիրք Ա. հտ. 2. էջ 615։
5 Սուիդ. 'ի բառն Φρύν.
4 Նոյն 'ի բառն Θεσπ.
5 Արիստոտ. անդ։

Լաբիղոս Հայը ողբերգութեան, զի այսպէս արժան է կոչել զայրն մեծ[1], հզօր և եռանդուն ոգւոյ 'ի բնութենէ էր դիպեալ։ Լռութիւն նոր և հանդարտութիւն զիստութիւն բուսոյ բաբրուցն յանդիման առնէին[2]։ Ոչ ակատամարտս որ 'ի Արաթոն, 'ի Սաղամիս և 'ի Պղատիէս, ուր աթենացիք բազումք առաքինացան, անդ և Լաքիղոս պայծառացաւ քաջութեամբ[3]։ Ընդատին 'ի տղայ տիոց վարժեալ էր 'ի դիրս քերթողաց, որք մերձ 'ի ժամանակս դիւցազանց կացեալ՝ բերէին իմաստս մեծամեծս ըստ մեծագործութեանց նոցա[4]։ Այլ էաք անցելոց դարուցն ընծայէին աշխոյժ մտաց նորա յաջողութիւնս և արկածս նշանաւորս, գահոյս շաղախեալս արեամբ, կիրս բռնաւորս և ծախողականս, առաքինութիւնս վսեմս, ոճիրս և վրէժխնդրութիւնս դժնդակս, ամենայն ուրեք տիպս մեծութեան, և յաճախս ուրեք վայրագութեան։

Ը 'ի տպաւորագոյն գործել զազդեցութիւն պատկերացս՝ պարտ էր զատուցանել զմի մի 'ի համնխմբութէն, յոր հնոց քերթողացն կցորդեալ էր զնոսա։ Այլ իսկ քերթողք երկդռնենին տաղից և առաջնոց ողբերգութեանցն արարին զայս, այլ չեղև նոցա փոյթ մերձ մատուցանել մեզ զայնոսիկ։ Օ՛ի յոյժ առաւել յուզին զութք

[1] Փիլոսոփ. վարք Ապոլոնի. Գորտան, տող 857։
Հերք Զ. գլ. 11. էջ 245։
[2] Պարապ. Արիստոտ. 'ի Գորտան, տող 857։
[3] Վարք Եպիքեայ։
[4] Արիստոտ. անդ, տող 1062։

յակամատեա լինել թշուառութեանց քան 'ի լսել զպատմութիւն նոցա[1]. նմին իբրև Լաքիղոս 'ի կիր էարկ զամենայն հնարս թատերական յանդիմանութեան, առ 'ի դնել առաջի աչաց ժամանակ և զտեղի տեսարանին, որով պատրանք փոխեցան իմն 'ի ճշմարտութիւն։

Լսեալ նա և միւս այլ դերասան յողբերգութիւնս իւր առաջինս[2]. և ապա օրինակ առեալ 'ի Սոփոկղէ՝ որ այն ինչ յասպարէզ անդր մտեալ էր, կացոյց և երրորդ զոք[3], էր զի յաւելցոյ և չորրորդ[4]։ Ի բազմմնալ դիմանց՝ մին 'ի դիւցազն վիպացն կերպարաներ, յինքն առաւել զկարեկցութիւն ձգելով. և զի այնուհետև արբանեկէր և ևեթ պարն, Լաքիղոս համառօտեաց զնորին մասն, այլ թերևս ոչ բաւականապէս[5]։

Բայց Լաքիղոս ստգտանի մի 'ի ներքս մուծանելոյ դէմս համերս. զի Լաքիղէս յետմահու բարեկամին իւրոյ, և 'ի Լիսվրէ յետ որդւոցն իւրոց մեռանելոյ ձգին 'ի թատր. և փոփոխին բազում տեսարանք, իսկ նորա անշարժ կան քօղարկեալ դիմաք անբարբառ[6]։ Բայլ ևեթ տայր արտասուել նոցա և ողբոց բանս բարբառել, ներգործէր ար-

[1] Արիստոտ. յղ. Հաբտ. գիրք Բ. գլ. 8. հա. 2. էջ 559։
[2] Նոյն. յղ. քերթ. գլ. 4. հա. 2. էջ 655։ Դիոգ. Լայերտ. գիրք Գ. յօգ. 56։
[3] Նոյնիպէս 'ի Քոյն փոտոգ 665։
[4] Պոլիտեկ. գիրք Դ. գլ. 15. յօգ. 110։
[5] Արիստոտ. 'ի Գորգան, տող 945։ Արիստոտ. յղ. քերթ. գլ. 4։
[6] Արիստոտ. անդ, տող 942։

դէօք զսակումն՝ զոր ազգէ քօղոնն այնուիկ և լուութեամբ և լքեալ թողեալ թաղծութեամբն։

Հոմանս 'ի քերթուածս նորա կարի յոյժ ընդարձակ է բացատրութիւն վիպացն[1], յայլս ոչ բացայայտ[2]. և թէպէտ սիալէ յաձախ ընդդէմ կարգաց որ յետոյ սահմանեցան, այլ զրեթէ զամենայն իսկ նշմարէ ընդ աղօտ։

Ի դէպ է ասել զնմանէ՝ որ ինչ ինքն յաղագս Խոպոմեդոնի զիւցազնն ասաց, թէ պակուցումն գնայ առաջի նորա՝ յամպս զգլուխն ծրարեալ[3]։ Զամենայն ուրեք ազգէ արհաւիրս ստստիկս և պիտանիս. զի ոչ առ այլ ինչ շարժեալ տատանէ զոգիս մեր, բայց առ 'ի վերացուցանել զնա անդէն 'ի հանդէս զօրութեան իւրոյ։ Գիւցազունք նորա լաւ համարին ամպահար ստստակիլ քան զլատութիւն երբեք յանձն առնուլ, և արիութիւն նոցա անսղոքելի եւս է քան զանհրաժեշտ օրէնս հարկին։ Զայլ որ այնպէսն ջանահնար լիներ 'ի յուզել զկիրս, զիաւոր զպատշաճ չափ յուզմանն։ Օ գուշացաւ նա չշաղախել երբեք զտեսարանն արեամբ[4]. զի պարտ համարէր նկարագրութեանն իւրոց պակուցիչ զոլ, և մի ածել ստակումն։

Զոմն ուրեք շարժէ նա զարտասուս կամ յու-

1 Եաբեղ. յԱդամ։
2 Արիստոտ. 'ի Գոտրան, տող 1163։
3 Սեպտ. ընդդ. Թեբ. տող 506։
4 Արիստոտ. անդ. տող 1064։ Փիլոստր. վարք Ապոլոն. գիրք Զ. գլ. 11. էջ 244։

զէ զգուեցս՝, բնութեան զրկելով զնա 'ի քաղցր զգացմանէն՝ որ կարեկիցս խնդրէ իւր, և կամ մանաւանդ զի զանգիտէր 'ի մեղկելոյ զլաջոց։ Ու զվեղրա և ոչ զվեթեռվակ մարթէր նմա ածել 'ի տեսարան, կամ նկարագրել զողբանս և զմղեգնութիւնս սիրոյ[2]։ Օ՛ի 'ի յարձակմունս կրիցս այսոցիկ նկատեր մեղկութիւնս և ոՀիրս զեղծուցիչս բարուց վնասակար օրինակաւն. և կամէր զի որոց կարեկիցն ստիպիսք լինել, ստիպեցիսք և 'ի մեծարել զնոսա։

Ակնցցուք յառաջ հետևել նմա ընդ անհունս ասպարէզն զոր եհատ. և առցուք 'ի քնին՝ որ պէս զայլ և այլ մասունս ողբերգութեան յարդարիցէ զվէպն, զլարս, զիմաստս, զբառս, զտեսարանս և զերգս[3]։

Կարգաւորութի՛ քերթութեանց նորա է ամենապարզ. չէր ինչ նմա փոյթ, կամ մանաւանդ անծանօթ իսկ էր նմա արուեստ պատրուակելոյ զդժուարահաւատալիս[4], կաշկանդելոյ և լուծանելոյ զՀանգոյց արարուածոյն, կապակցելոյ սերտիւ զնոսունս նորա ընդ միմեանս, փութացուցանելոյ կամ յամեցուցանելոյ զելս իրացն յայտնութեամբ անծանօթին և կամ այլովք հանգոյն ինն անաչնակալ պատահարօք[5]։ Ի ուրեք՝ զի

[1] Վարք Եպիսկոպոս։
[2] Արիստոտ. 'ի Գոբման. տող 1075։
[3] Արիստոտ. յդ. քերթ. գլ. 6. հտ. 2. էջ 656։
[4] Դիոն. ռսկեր. Հատ. 52. էջ 549։ Եպիս. յԱգամ.
[5] Վարք Եպիսկոպոս։

պատմութեամբ և ելեթ իրացն և կենդանութեամբ զբուցատրութեանցն շարժէ զունկնդիրս [1], և է դարձեալ՝ զի կորովութեամբ ասացուածոյն կամ արհաւրոք տեսլեանն [2]։ Օ միութիւն արարուածոյն և ժամանակի կարևորագոյն հանմարէր, որպէս երևի. իսկ զտեղւոյն միութիւն ոչ նոյնպէս կարևոր [3]։

Պարն ոչ ևս առ 'ի նուազել ելեթ 'ի քերթութիւնս նորա մնանել, այլ կցորդի ամենայնի։ Պատսպարան է նա տառապելոց, խորհրդական թագաւորաց, ահարկու բռնաւորաց, մտերիմ ամենեցուն. և է զի խառնի նա յարարուածն 'ի սկզբանէ մինչև ցվախճան [4]։ Պարտ էր քերթողաց, որ յետ նորա կացին, յաձախագոյն 'ի կիր արկանել զայս. այլ և ոչ ինքն Դաքիոսս վարէր միշտ սովաւ։

Կարագիր և բարք դիմաց իւրաքանչիւր զորս 'ի ներքս ածէ՝ պատկանաւորք են նոցա, և դուն ուրեք օտարանան 'ի բնաւորութենէն։ Ի զիւցազանցն ժամանակաց առնու զրեթէ զամենայնս նախատիպս իւր, և գերակայէ զնոսա 'ի բարձր՝ ուր Հոմերոս զիւրսն կացոյց [5]։ Խորժէ նկարագրել զարս քաջասիրտս, խիզախս, գերազանցս երկիւղն, ինքնանուէրս հայրենեաց, անյագս 'ի

1 Եպիշ. յեսթանան ընդդ. թեր։
2 Նոյն 'ի յաւել. և Եւմին։
3 Նոյն յԵւմին։
4 Նոյն անդ։
5 Դիոն. ոսկեբ. Ճառ. 52. էջ 549։

տենչ փառաց և պատերազմի, վեհագոյնս քան զբեար ժամանակին, այնպիսիս՝ որպիսիս կամէին պատրաստել ախոյանս Աղապայ[1]. զի յաւուրս պատերազմին Պարսից գրեր գքերթութիւնան։

Այլ քանզի յահարկութիւն քան 'ի գթութիւն ունի բնութեամբ միտումն, ոչ միայն չամոքէ զխիստ բարս, այլ և յաճախէ զվայրենութիւն նոցա, առանց ստնանելոյ 'ի յոյզս ըղձից ունկնդրացն։ Ալիտեմիեստրայ փողոտեալ զայր իւր, պատմէ զոճիրն դառն ծաղու և արիութեամբ առն անզգամի։ Ասկումն ածէր ոճիրն այն, եթէ չէր արդար յաչս նորա, եթէ չէր կարևոր, և եթէ ըստ մտաց այնր ժամանակի որերոյն չէր պարտ սրբեան տարապարտ հեղելոյ քաւել արեամբ[2]։ Ալիտեմիեստրա յայտ առնէ զնախանձ իւր ընդ Ասանդրայ և զտարփանսն ընդ Այգիսթեայ[3], այլ ոչ յորդորէր այսպիսիք տկարք դրդեն զձեռն նորա. բնութիւն և դիք[4] ստիպեն զնա 'ի վրէժխնդրութիւն։ Այսպէս բարբառի առ ժողովուրդն. Պատմեմ անվեհեր զոր առանց զարհուրանաց գործեցի[5]։ Թէպէտ հաճոյ թուեսցի ձեզ և թէ դժպհի, ոչ ինչ փոյթ է ինձ։ Հաւասիկ այր իմ դիակնացեալ, ես սպանի զնա. արիւն նորա ցայտեաց զինև, և ընկալայ զայն որ-

[1] Եպիգ. 'ի Պրամ. տող 178։ Արիստոփ. 'ի Գորգան, տող 1046, 1073։

[2] Եպիգ. յԱգամ. տող 1371։

[3] Նոյն անդ, տող 1445։

[4] Նոյն անդ, տող 1494։

[5] Նոյն անդ, տող 1411։

պէս երկիր տուղորեալ յարեգակնէ զցօղ երկնառատ[1]։ Եւ զզուստր իմ եղէն, և ես սրախողխող զնա արարի. մանաւանդ զի ոչ Աստուածեսերա[2], այլ դևն Աստրէոսի, ոգին ուղղիչ արիւնախառն ինչ ոյոց Թագաւորին, նա զկերպարանս իմ էառ՝ առ 'ի բազմահոչակ ես զվրէժինդրութիւն որդւոյն Լիփեստեայ առնել։

Հացայայտագոյն ևս պարզեսցի ասացեալս, յաւելեալ և զայս տեսութիւն։ Օր 'ի խուռն խառնակութեանց և գաղտնեաց բնութեան առաւել քան զամենայն ինչ ապրեցուցիչ Թուէր Հաքիղեայ նորանշան պայման բնութեան ազգի մարդկան. յինքն 'ի մարդն ոՀիրքն զորս գործէ, և Թշուառութիւնք զորս կրէ. և 'ի վերոյ քան զնա վրէժինդրութիւն երկնից կապեալ հրամանք Ճակատագրին[3], յորոց մին 'ի յանցանել նորա և միւսն 'ի բարեբաստութեանէ հալածէ զնա։ Կենակցութիւնն ընդ իմաստունս ներակրթեալ՝, 'ի վարդապետութիւնս յայս սիռեաց զայն զրեթէ յամենայն քերթածս իւր. որովք զոգիս մարդկան կալեալ միշտ յերկիւղի, խրատէ անդուլ՝ մի ձգել յանձն զցաստուն դից, և խոնարհել ընդ հարուածովք բախտին։ Ստի արհամարհութիւնն՝ որով անտեսէ զմոտի բարութիւնս զոչոտիչս աչաց մերոց, և հզօր Ճարտար-

2 Եսբիղ. ԱՆգամ. տող 1398։ և 513։
1 Նոյն անդ. տող 1506։
3 Նոյն 'ի Պրոմ. տող 105
4 Եւրիպ. ԱՆգեստ. տող 962։

խօսութիւնն՝ որով զԹշուառութիւնս բախտին յաչս դնէ։ Զոչէ ուրեք զայրագին Կասանդրա. Ո՛վ մեծութիւնք մարդկան, պատկերք լուսափայլք և մնոտիք՝ զոր դոյն ինչ ստուեր մեծացուցանէ, և կաթիլ ջրոյ եղծանէ. ընդ բարեբաստութիւն մարդոյ ողորմիմ առաւելքան ընդ թշուառութիւնս[1]։

Յաւուրս Լաքիղեայ վիպասանականն ևեթ չափ տալի և երկդտնեանին Ճանաչէր պատկանաւոր դիւցազնականին ազգիքերութե։ Լաւ քանզի չափքս այսոքիկ համեմատք էին բարձրութեան խորհրդոց և իմաստից Լաքիղեայ, փոխեաց զնոսա յողբերգութիւն առանց տկարացուցանելոյ։ Ա՛ղեալ՝ի խանդից՝ զոր ոչ ևս կարէ սանձել, յանձախէ զմակդիրս և զայլասացութիս և զամենայն ձևս հոգիահրաշ բարբառոյ, և որ ինչ յաւելու սաստ և զօրութիւն և պերճութիւն՝ի բանս[2], և որ կենդանացուցանէն զնա և կիրս՝ի ներքս խառնէ։ Ընդ նկարակերտ զրչաւ նորա պատմութիւնք, իմաստք և վշիոք փոխին՝ի պատկերս հիացուցիչս գեղոյն կամ նորաձևութեամբ։ Յողբերգութեանն[3], զոր արժան է կոչել երկն Էրիսի[4], մի՝ի սուրհանդակաց՝ զոր Լաոէոկղի

[1] Եպիղ. ՅԱդամ. տող 1335։
[2] Վարք Եպիղ։ Դիոնիս. ազիկ. յոլ. արդի մատենագրութ. Դէ. 2. հա. 5. էջ 423։
[3] Եպիղ. յեօթանան ընդդ. թեր։
[4] Աբիստոտ. ի Գորտան. տող 1053։ Պլուտ. խրախճ. գիրք Է. գլ. 10. հա. 2։

արձակեալ էր ընդ առաջ բանակին արգիացւոց, եկեալ ասէ. «Աբբայդ Թեբացւոց, Թշնամիք „ հասեալ գան. տեսի իսկ զնոսա, հաւաստեաց „ եմ համբաւաբեր.

„ Վանգի զօրավարք գոռք եօթանեքին
„ Լոգն 'ի վերայ սեաւ զենեալ ասպարին,
„ Լաւ 'ի ջերաջերմն արկեալ ձեռն յարիւն,
„ Նրդումն ահաւոր աւասիկ երդնուն
„ Ի յարիւնախանձ Նրկիւղն և Մարէս
„ Լաւ 'ի Ռեզմնա երդուեալք պլենդապէս,
„ Վանդեալ ըզԱղամեայ քաղաքն 'ի հիմանց,
„ Կամ թանալ զերկիրս այս արեամբ իւրեանց՝.»

Լաւ դարձեալ զառնէ ու

առիւծու, և 'ի փայփայելոյ զնա՝ մինչդեռ տա-
կաւին երկնչի, և 'ի հակառակելոյ նմա՝ յորժամ
ոչ ևս երկնչի[1]։

Ի մէջ լուսափայլ Հառագայթիցս ուրեք ուրեք
'ի քերթածս նորա զտանի մթութիւն, ոչ 'ի կարի
Հատառօտութենէն եւ 'ի յանդուգն ձևոցն
'ի ներքս անկեալ՝ այլ և 'ի նորանոր բառիցն[2],
որովք ջանայ Հոխացուցանել կամ ամրակուռ ըզ-
բանն կազմել։ Ալ Հաճոյ թուէր Լաքիզեայ
բարբառել դիւցազանցն իւրոց իբրև զայլս 'ի
մարդկանէ. զրուցատրութեան նոցա վայելէր իսկ
գոլ 'ի վերս քան զիտառնաղանջ խօսս[3], այլ յա-
Հախս ուրեք և քան զծանօթ բարբառ նկրտի 'ի
վերս։ Բառք ստուարակարկամք և խիստք՝ յա-
ւերակաց այլոց բառից կազմեալք՝ ամբառնան եր-
բեք երբեք 'ի միջոց բանիցն յամրութիւն ասա-
ցուածոցն, Հանդոյն ինն աշտարակաց բարձանց՝
որ զքաղաքորմովք կանգնեալ, որպէս այլաբանէ
Լաքիստոփան[4]։

Կարի Հուժկու էր Հարտարիօսութիւն Լա-
քիզեայ, և ոչ է 'ի դէպ խնդրել 'ի նմա ընտրու-
թիւն, ներդաշնակութիւն և Հնդութիւն կանոն-
նաց[5]։ Զոսիչք մնաց նորա կարի յանդգունք

1 Արիստոտ. 'ի Գորգա, տող 1478։
2 Դիոնիս. ազիկ. յոլ. արդի մատենագր. գլ. 2. հա. 5. էջ 423։
3 Արիստոտ. անդ, տող 1092։
4 Կնոյն անդ, տող 1036։
5 Վաղբ Եպիզ. Դիոնիս. ազիկ. յոլ. հարագր. բառից, գլ. 22. հա. 5. էջ 150։ Ղանգին. յոլ. վանմի, գլ. 15։

էին, և չէր մարթ ազատ լինել նոցա յարտուղութեանց և յանկմանց։ Զ նորա առ հասարակ վեհ և վսեմ է, ուրեք ուրեք կարի յոյժ մեծ և շքեղ մինչև ցՀամարտակութիւն [1], և մերթ օտարախորթ և դժպհի անարդ նմանութեամբքն [2], և մանկական ծեբենայիւք բառից [3], և այլովք թերութեամբք ընդելականօք գրչաց՝ որոց առաւել հանձարոյ է զօրութիւն քան կիրթ ախորժակաց։ Զ.յլ հանդերձ ամենայն թերութեամբքն արժանի է նա բարձրագոյն դասու ընդ գերահռչակ քերթողս Հայաստանեաց։

Զ էր բաւական մեծասաստ բարբառոյ ողբերգութեանց նորա ազդել խորագոյն 'ի սիրտ զարպատորութիւն մեծութեան, պարտ էր առ 'ի յինքն ձգել զբազմութիւնն՝ միաբանել ամենայն մնասանց տեսարանին 'ի ներգործել զնոյն։ Զ.ուտ էր յայնժամ այնպէս, զի բնութեանն տալով նախնի գիւցազանց կերպարանս հսկայաձևս [4] յաւելեալ էր զրոշմել 'ի Ճակատ նոցա փառս իմն, որ ոչ ինչ նուազ քան զսպառազինութիւնսն որովք շուրջ պատեալ էին՝ ահարկու էր ժողովրդոյ։ Հոբիոնս կոչիկս բարձրաբերձս ազգոյ յոտս գուսանացն [5]. և զերեսօք նոցա, վասն բազմաց 'ի

1 Կուինտիլ. գիրք Ժ. գլ. 1. էջ 632։
2 Եպիթ. յԱդամ. տող 330 և 875։
3 Նոյն անդ. տող 698։
4 Փիլոստր. վարք Ապոլոնի. գիրք Բ. գլ. 21. էջ 73։ Աբլ. Գելլ. գիրք Գ. գլ. 10։
5 Փիլոստր. անդ. գիրք Զ. գլ. 11. էջ 245։ Նոյն, յոլ. վարուց իմաստակ. գիրք Ա. էջ 492։ Ղուկիան. յոլ. պար. յոգ. 27. հա. 2. էջ 284։

նոցանէ տգեղութեան, ած դիմակս առ 'ի ծած-
կել զայլանդակութիւն նոցա[1]. և զգեցոյց նոցա
հանդերձս ստորոտաքարշս և շքեղս, որոց այն-
պիսի վայելուչ էր ձև՝ զի և քուրմք Դեմետրեայ
ոչ ամօթ համարեցան վարել նովաւ[2]։ ԼՀ ար-
քանեկաց գուսանացն ըստ իւրաքանչիւր պատշա-
ճի սահմանեաց դիմակս և զգեստ։

ԼՀ փոխանակ բեմիցն, որ 'ի վերայ փայտե-
տանց վարկպարազի հաստատէին, հայթայթեաց
տեսարան ամենակազմ[3], և նկարակերտ յօրի-
նեաց զայն[4]։ Հնչեցոյց անդ փողս, բուրեցոյց
խունկս 'ի վերայ բագնաց, ստուերս 'ի շիրմաց
յարուցեալս անդ երևեցոյց, և զժամանս կատա-
ղիս 'ի սանդարամետաց անդր յարձակեցոյց։ Լ
միւմ ուրեք յողբերգութեանց նորա անդ զա-
ռաջինն երևեցան դիքս այսոքիկ զժոխոց, ածեալ
դիմակս մահատիպս, ջահ 'ի ձեռին, և օձք ընդ
գիսակս նոցա խառնամանեալ[5], և շուրջ զնոքօք
ընդգոյգք զարհուրականք։ ԼՀ աւանդեն, զի 'ի
տեսիլ նոցա և 'ի լուր ահագին գոչմանցն՝ ար-
հաւիրքս կալան զամենայն կացեալս 'ի զնին, և
կանայք ոմանք յղիք անցուցին տարաժամ զման-
կունս, և տղայք ոմանք մեռան յերկիւղէն[6]. և

1 Ովսաս. յդ. արհ. քերթ. տող 278։
2 Ալթեն. գիրք Ա. գլ. 18. էջ 21։
3 Ովսաս. անդ. տող 323։
4 Վիտրուվ. 'ի յառաջաբ. գիրք Է. էջ 124։ Վարք Եսքիլ. առ Թոբոտա. էջ 11։
5 Արիստոփ. 'ի Պլուտ. տող 423։
6 Վարք Եսքիղեայ։

զի դատաւորք առ 'ի խափանել զվտանգ արկա-
ծիցն, պատուէր ետուն՝ զի փոխանակ յիսնից
խաղալկաց մի՛ և աւելի քան զՀնգետասան ո-
գիս զտցին 'ի պարն [1]։

Տեսողաց հիացեալ ընդ պատրանսն՝ զոր բա-
զում այնչափ նորանոր տեսիլք գործէին 'ի միտս
նոցա, ոչ ինչ նուազ զարմանային ընդ հանձարն
նշողեալ 'ի շարժմունս խաղալկացն։ Հանապա-
զոր կրթէր զնոսա Լաքիղոս իւրովի, և ուսուցա-
նէր նոցա զգալի և յարդարեալ զարարուածն
նորանոր և ազդողագոյն ձևովք. և օրինակաւն
իւրով առաւել ևս հրահանգէր զնոսա, ընդ գու-
սանսն խառնելով [2]։ Լա՛ մերթ ևս օգնական իւր
'ի կրթել զնոսա առնոյր զՏեղեստես քաջ երաժշ-
տապետ, որոյ զարուեստ շարժուածոց բազում
իւիք կատարելագործեալ էր։ Յածել 'ի տե-
սիլ զողբերգութիւն Լօթն զօրավարացն առ
Մեբաւ, այնպէս կենդանատիպ ձևացոյց՝ զի
մարթէր շարժուածոյն զլարբառոյ ունել զտեղի [3]։

Լաքիղոս, որպէս ասացաք, զոՀ դիւցազնա-
կան բանաստեղծութեան և զերկդունեանին տաղից
փոխեալ յողբերգութիւն՝ յաւել յայն և զվեմ
դաշնակս և զլափս ոտից սաստիկս խրախուսա-
կան նուագաց [4]. այլ ոչ ընկալաւ զնորաձևու-

[1] Պողնակ. գիրք Դ. գլ. 15. յօդ. 110։
[2] Ամեն. գիրք Ա. գլ. 18. էջ 21։
[3] Արիստոկղ. առ Ամեն. գիրք Ա. գլ. 18. էջ 22։
[4] Ցիմաբք. առ պարսաւ. Արիստոփ. 'ի Փորտս, տող 1315։ Եսքիղ. յԱգամ. տող 1162։

թիւնս՝ որ սկսանէին խանգարել զնախնին երա-
ժշտութիւն։ Այլանակք երգոց նորա առ հա-
սարակ վերջք և վայելուչք են, յարմարեալ ըստ
յարաձայնին ազգի երաժշտութեան՝[1] որ պար-
զագոյնն է և բնականագոյն քան զընաւս։

Ղարախոսութիւն եղև զնմանէ՝ իբր թէ ըզ-
խորհուրդս երկնեան տօնիցն յայտնեալ, և հա-
զիւ 'ի մոլեգնութենէ նախանձայոյզ ամբոխին
զերծաւ[2]։ Սակայն ներեաց նա աստ անիրաւու-
թեան աթենացւոց, զի կենացն և եթէ հաստատեր
վտանգ. այլ 'ի պակել նոցա զոսոխս իւր՝ նա-
խամեծար առնելով զբերթածս նոցա իւրոցն,
ասէ. Յամենակին անկ է դարձուցանել զիմն 'ի
տեղի իւրեանց[3]. և լքեալ զՀայրենիս իւր, չոգաւ
'ի Ակիկիա[4]. ուր Հերոն արքայ մեծապարգև մե-
ծապատիւ մեծարեաց զնա։ Այնդ յետ սակաւ ժա-
մանակի մեռանէր, ամենց իբր եօթանասնից*։
Այ եղաւ 'ի վերայ գերեզմանի նորա արձանագիր
յօրինեալ յիւրմէ[5]. "Այստ զնի Աքիլլոս Այ-
փորինեի որդի, ծնեալ Այտոլիկէ, վախճանեալ

1 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1137։

2 Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 29։ Եղիան. զան. պատմ. գիրք Ե. գլ. 19։

3 Ատեն. գիրք Ը. գլ. 8. էջ 347։

4 Պլուտ. 'ի կիմ. հտ. 1. էջ 483։

* Ն. Գ. 456 ամաց։ (Ընտանեան վէմք, գար 60։ Գրոտենի տարեգր. աստիկ. հտ. 3. էջ 119։)

5 Պարապ. վարք Էպիկ։ Պլուտ. յղ. աքսոր. հտ. 2. էջ 604։ Պաւսան. գիրք Ա. գլ. 14. էջ 35։ Ատեն. գիրք ԺԳ. էջ 627։

յարգաւանդն Գեղա. Պարսք և անտառն Մա-
բաթնոի քաջութեան նորա վկայք մինչ 'ի բա-
սաւ[1]։ Օր տաղտկացեալ, ոպկս թուի, 'ի
գրաւորական պարծանայ՝ ոչ ևս ինչ քան ըզ-
փառս զինուց պայծառագոյն համարէր։ Մթե-
նացիք սահմանեցին փառս յիշատակի նորա.
և բազումք բազում անգամ 'ի քերթողաց ոգե-
երգուաց երթեալ հեղին նուէրս զգերեզման-
նաւ նորա, և արտասանեցին զքերթածս իւ-
րեանց առ տիւր յիշատակարանաւն։

Յամենցի 'ի ձնաս վաստակոց քերթողիս. զի
փոփոխմունքն զորս արար նա յողբերգութեան՝
զրեթէ առ հասարակ գիւտք են նորանորք. և զի
դժուարագոյն էր օրինակօքն, որ առ ձեռն կային
նմա, ամբառնալ զողբերգութիւն 'ի կէտ բար-
ձրութեանն յորում երթող զայն, քան յետնոց
նորա հասուցանել զայն 'ի ծայր կատարման[2]։

Կարի արագ յաջողեաց յառաջադիմութիւն
արուեստին։ Ինքնաւ սքիրոս ամաք մինչ յետոյ
քան զերևումն Աղկեստեայն Թեսպեայ 'ի թա-
տեր[*]. և կացին նմա ժամանակակիցք և ոսոխք
Արքերիոս, Պրատինաս և Փրինիքոս, զորոց նա
մեծացոյց զփառս. և Սոփոկղ, որ 'ի կշիռ ընդ
նմա եկաց։

1 Վարք Եսքիղ. առ Սոսանլ։
2 Պարսաւ. վարք Եսքիղ. առ Թեոդորա. էջ 11։
* Թեսպիս զողբերգութիւն Աղկեստեայ ած 'ի տեսարան 536 ամաք՝ Ն. Քրիստոսի։ Եսքիղոս ծնաւ 525 ամաք նախ քան զԵ-նոյն Թուականութիւն. իսկ Սոփոկղ 497 ամաք։

Սոփոկղ յաշնուական ծնողաց սեթենացւոց ծնաւ 'ի Հոբրոզդ ամի Եսեթանամերոզդի ողիմ պիտղին [1], իբր քսանեւեօթն տաճք յետոյ քան զծնունդ Լաբիղեայ, և իբր հարեւասան տաճք նախ քան զ[illegible]բրիպիդեայն [2]։

Լ[illegible]ողում ասել զնանեմ, զի յետ Ճակատամարտին Սաղամեայ պարագլուխ կացեալ մանկուսյ՝ որք շուրջ զսիոյենաւ երդեին նուագս յաղթութեան, զոհեսողացն ամենեցուն յինքն ձգեաց զաչս գեղոնին, և զգովութիւն նոցա 'ի ձայն քնարին [3]։ և զի 'ի բաղում դէպս յանձն եղեն նմա իբր կարեւորք [4] քաղաքականք և զինուորականք *։ և զի յուեթանամենի [5] հարախօսեալ յապաշնորհ որդւոյն իբր անկարող տնտեսութեան տան իւրոյ, ընթերցաւ 'ի լուր ատենին զողբերգութիւն մանկագրեալ Լ[illegible]դիպոս 'ի Կողոնէ, զոր այն ինչ քերթեալն էր, և գատաւորացն ծանրացաստուն լեալ 'ի վերայ որդւոյ նորա՝ թողին 'ի նա զժառանգութիւն ընչիցն, և որք անդն կային՝ ածին

1 Ոքսոնեան վէմք, գար 57։ Քրոնենի տարեգր. առ տիկ. հա. 2. էջ 49։

2 Վ. ամբ Սոփոկղի։ Պարապ. Արիստոտ. 'ի Գաբաս, տող 75։ Ոքսոնեան վէմք, անդ։

3 Պարապ. վարք Սոփոկղի։ Ամենն. գիրք Ա. գլ. 17. էջ 20։

4 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 638։ Պլուտ. 'ի Պերիկղ. հա.

1. էջ 156։ Կիկերո. յդ. պատշաճ. գիրք Ա. գլ. 49։

* Եկաց նա զբաւարակից ընդ Պերիկղեայ. բայց այս ոչ զբաջնութեի պատերազմական յայտ առնէ 'ի նմա, այլ միայն զկալ նորա ընդ տասն զբաւարս՝ որք ամի ամի ընտրեին վիճակաւ։

5 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 15. հա. 2. էջ 601։

զնա յաղթանակաւ 'ի տուն իւր՝. և զի մեռաւ նա ամենայ ենեսուն և միոյ, ժառանգեալ զփառս՝ որ օր ըստ օրէ յաւելու 'ի պայծառութիւն. զի այս ամենայն նուազ զօրձէն նման փառս։ Լ.յլ ասացիս զի հեզութիւն բարուց նորա և շնորհք մտացն յաճախեցին նման բարեկամն, որք կացին ընդ նմա մինչև 'ի վախճան կենացն[3]. զի հրաժարեաց նա առանց հպարտութեան և առանց ստրջանաց 'ի յոգնաթախանձ հրաւիրանաց թագաւորաց[5]. և զի թէպէտ և 'ի զբօսասէր հասակին մոլորեցուցին զնա երբեմն տարփանք[4], բայց նա ոչ միայն չբողոքեր զծերութենէ՝ այլ և երաներ զանձն նոցա, որպէս ստրուկ զերծեալ 'ի ծառայութենէ վայրագ բռնաւորի[6]. և զի 'ի մեռանել Լ.ուբիսիդեայ ասոխին իւրոյ՝ սուղ ինչ յառաջ քան զմնքն, նա 'ի թուխս համակեալ՝ սգակից եղև աթենացւոց, և ոչ եթող յողբերգութեանն զոր ածէր յայնժամ 'ի տեսարան՝ պսակաւորս երևել գուսանացն[6]։

Ի քնարերգականն նախ պարապեաց նա 'ի քերթութիւն[7]. այլ հանձար նորա վաղ ձգեաց զնա 'ի փառաւորագոյն ասպարէզ, և 'ի նախկին

1 Կիկեր. յղ. Ծեր. գլ. 7. հա. 1. էջ 301։ Պլուտ. յղ. Ծերոյ անուսել զհաս. հա. 2. էջ 785։

2 Պարապ. վարք Սոփոկղի։

3 Նոյն անդ։

4 Ա.թէն. գիրք ԺԳ. էջ 592 և 603։

5 Պլաս. յղ. հաս. գիրք Ա. հա. 2. էջ 329։ Կիկեր. յղ. Ծեր. գլ. 14. հա. 3. էջ 309։

6 Թոմ. Մաղ. 'ի վարս Եւրիպիդեայ։

7 Սուիդ. 'ի բառն Σοφοκλ.

հանդիսին յաղթութեամբն զկայ էառ անդ մինչև 'ի սպառ։ Դեռ և ես անոյ քան և ութից, ասոյս եկայ ընդ Լաքիղեայ՝ որ տիրապետէրն 'ի տեսարանի՝։ Յաւարտել ողբերգութեանց, և բիւրազոյնն յինանց իշխանաց՝ որ վերակացու էր խաղուցն՝ ոչ կարաց ընտրել վիճակաւ զդատաւորս, որոց անկ էր սահմանել պսակ յաղթողին. 'ի զոչիւն երկպառակելոյ ամբոխին հնչէր թատրոնն։ Եւ մինչ դեռ ամբոխ աղաղակին թանձրանայր, տատանէին զօրավարք աշխարհին՝ որոց զլխաւոր էր Կիմոն՝ ժառանգեալ յաղթութիւնքն և առատաձեռնութեամբք զլուսն փառաց և համբաւոյ, անցին 'ի տեսարան, և մնացեան 'ի բազին Դիոնիսեայ՝ հեղուլ զօրինաւոր նուէրսն նախ քան զհրաժարելն յիշխանութենէ։ Ցեսիլ երեսաց նոցա, և արարողութեանն զոր կատարէին, ցածոյց առ վայր մի զաղմուկն. և իշխանին պարապ առեալ, ընտրեաց զնոսա 'ի դատել զյաղթողն. և երդմնի արարեալ զնոսա, բազմեցոյց։ Դաղմնացան թիւք Սոփոկղի՝. և ասոյսն նորա 'ի խոր խոցեալ ընդ պարտութիւնն, մեկնեցաւ ընդհուպ 'ի Սիկիղիա։

Զքնաղ յաղթանակաւն մեռայր Սոփոկղն տիրել մինչև 'ի սպառ 'ի տեսարանի. բայց Եւրիպիդէս մնանուկ ակամատես լեալ այնմ՝ տանջեր

[1] Ուքսոնեան վէմք, դար 57։ Պլուտարքոսի տարեգրութիւն. առ. սիկ. հա. 2. էջ 48։

[2] Պլուտ. 'ի Կիմ. հա. 1. էջ 483։

յիշատակաւն անդստին, մինչ զեռ ևս վարժէրն 'ի Հարատարխու�ութիւն առ ոտս Պրոտիկեայ, և յիմաստասիրութիւն առ ոտս Լ'նաքսագորայ։ Յութեւտասնամեայն ' եմուտ նա յասպարէզ, և ընդ սան բազումն զուգընթացս Սոփոկլի ցուցաւ, հանդերձ խրոխտ նժոյգիւ՝ որ հաւատար ածխուժիւք 'ի յաղթութիւնն դիմիցեն։

Բայց թէպէտ և սիրելի էր յոյժ հանձար Լ'ուրիպիդեայ, խստութիւն նորա կապտեր յաձախ 'ի դիմաց նորա զզուարթ ժպիտ, և զպայծառ երանգս բերկրութեան [2]. զի 'ի վարժապետէն իւրմէ Լ'նաքսագորայ, որպէս և Պերիկղէս, յինքն ձգեալ էր նի զնութիւնն զայն։ Այրաբնայր նա ընդ ծաղրածութիւնս, և 'ի միում ուրեք 'ի քերթութեանցն սոէ. Լ'տելի են ինձ արք անպիտանք, որոց ոչ պղծինչ քաջութիւն է՝ բայց ծաղր առնել զիմաստունս, զրք արհամարհենն զնոսա [3]։ Որով ակնարկէր 'ի համարձակութիւն քերթողաց կատակերգուաց՝ զրք ընդ վայր հարկանեին զբարս իւր որպէս զիմաստասիրացն։ Բարս շատ էր պատասխանել, զի Լ'ուրիպիդէս բարեկամ էր Սոկրատայ. և Սոկրատ, որ զրեթէ ոչ երբէք երթայրն 'ի տեսարան, 'ի լուր ողբերգութեանցն Լ'ուրիպիդեայ գնայր [4]։

1 Աւլ. Գելլ. գիշեր. Ատտիկ. գիրք ԺԵ. գլ. 20։
2 Ակէրս. Եռոզ. առ Աւլ. Գելլ. անդ։
3 Եւրիպիդ. 'ի Մելան. առ Աթէն. գիրք ԺԳ. էջ 613։
4 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 13։

Տիկնայս արատաւորս ածեալ Եւբիպիդեայ 'ի տեսարան, զկանայս առ հասարակ 'ի զէմն նոցա յանձախ կշտամբէր [1]։ Եղէն որք հնարեցան յարուցանել զնոսա ընդդէմ քերթողին [2]. կէսք ասէին՝ թէ ատեայ զնոսա [3]. այլք խորագիտաց զոյնք՝ թէ սիրէ զնոսա ախտաբար [4]։ Եւ յասել երբեմն ուրումն զնմանէ՝ թէ ատեայ զնոսա, պատասխանի ետ Սոփոկղ. Ա՛յո՝ արդարև ատեայ զնոսա, այլ յողբերգութիւնս եւեթ իւր [5]։

Հարկ եղև նմա 'ի ծերութեան իւրում խոյս տալ առ Մակեդոնացւոց, որ ժողովէր յարքունիս իւր զարս երևելիս 'ի դպրութիւնս և յարուեստս։ Եւ եղիտ անդ զՕ՚էաքսիս և զՏիմոթէոս [6], յորոց միոյն զնկարչութիւն և միւսոյն զերաժշտութիւն կերպարանափոխ արարեալ էր. եղիտ անդ և զՄ՚ղաթոն քերթող զբարեկամ իւր [7], որ էր մի 'ի լաւագունից և 'ի սիրելեաց արանց Ժամանակին [8]։ Եւ ասէր ցՄ՚ակեդոնայս՝ թէ պարտ է թագաւորի զերիս զայսոսիկ յուշի կապել, զի իշխէ մարդկան, զի պարտի իշխել նոցա ըստ օրինաց, և զի զոյ

1 Եւրիպիդ. 'ի Մեդեան. առ Բարն. հտ. 2. էջ 480։

2 Արիստոտ. 'ի Թեատրի։ Բարն. 'ի վերս Եւրիպիդ։

3 Պարսպ. Նախադր. 'ի Թեատրի. էջ 472։

4 Ամեն. գիրք ԺԳ. գլ. 8. էջ 603։

5 Հերոն առ Ամեն. գիրք ԺԳ. էջ 557։ Սոռբ. Ճառ. 6. էջ 80։

6 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 17։ Պլուտ. առակ. հտ. 2. էջ 117։

7 Եղիան. անդ. գիրք Բ. գլ. 21։

8 Արիստոտ. 'ի Գոռգաս, տող 84։

իշխանութեան նորա վախճան։ Ել ինչ նուազ համարձակութեամբ խօսէր ընդ նմա և Յերիպիդէս. և անկ իսկ էր նմա համարձակել, զի չենդրէր ինչ ընդդէս 'ի Թագաւորէն։ Ի միում աւուրց, յորում սովորութիւն էր մատուցանել Թագաւորին նուէրս ինչ դուշնաբերայս առհասատչեայ տիրասէր մեծարանաց, չերևեցաւ Յերիպիդէս ընդ դրանիկսն և ընդ մարդահաճոյս՝ որք ձեռէին 'ի կատարել զպարտսն. և 'ի յանդիմանել զնա Թագաւորին մեղմով, պատասխանի ետ Յերիպիդէս. Խնդրէ աղքատն որով տայցէ[2]։

Յետ յետ ամաց ինչ մեռաւ, կեցեալ զամս իբր եօթանասունևվեց[3]։ Ի Թենացիք հրեշտակս արարին 'ի Ի՝ակեդոնիս, խնդրել զմարմին նորա և ածել զայն յԱթենս. բայց Ի՝քբեդայոս, որոյ սուգ 'ի վերայ քերթողին առեալ էր հրապարակաւ, մերժեաց զինդիր նոցա՝ համարելով պարծանս աշխարհին իւրոյ զաՀիւն մեծի քերթողին։ Յե կանգնեաց նմա շիրիմ հոյակապ մերձ 'ի Թագաւորեալ քաղաքն յեղը վտակի միոյ, որոյ ջուր ակամակիտ հրաւիրէ զանցաւորս զկայ առնուլ անդ[4], և նկատել զշիրիմն երևելի աչաց։ Յայնժամ և աթենացիք կանգնեցին նմա գերեզման Թափուր առ Ճանապարհաւն, որ 'ի Պիրէոս.

1 Պատ. Ճառ. 44. էջ 308։
2 Եւրիպիդ. յԱբքեղ. առ Բարն. հտ. 2. էջ 456։
3 Ալքսանեան վէմք, դար 64։
4 Պլին. գիրք ԼԲ. գլ. 2. հտ. 2. էջ 550։ Վ խարուվ. գիրք Ը. գլ. 3. էջ 163։

նէ ածէ 'ի քաղաքն՝. և մեծարանօք յիշէն զա-
նուն նր, է զի և զմայլմամբ։ Ի Աղամիոնա քա-
ղաքէ ծննդեան նորա ածին զիս յանձաւ մի, ուր
զուգազան յաղթերգութեանցն ասէն գրեալ նո-
ցա[1]. և 'ի Կողմնէ աւան ցուցանէին ինձ բնա-
կիչքն յանձամբ զտունն, յորում Սոփոկղի բա-
զում ժամանակս կեցեալ էր[2]։

Գրեթէ 'ի միասին զերկոսին գերահռչակ
քերթողն կորուսին Աթէնք։ Ընդ փակել ա-
չաց նոցա, Աքիստոփան ած 'ի տեսարան քեր-
թութիւն ինչ՝ որ հանդէս եղև տեսողաց[3]. քանզի
կեղծէր տաղտկացեալ զՊիսիս յանշուք ողբեր-
գութեանց՝ որ 'ի տունս իւր ածէին 'ի տեսարան,
և իջեալ 'ի սանդարամետս առ 'ի վերբերել ան-
տի զԵւրիպիդէս, և 'ի հասանելն անդր՝ գտեալ
զաղբունիս Պղուտոնի պառակտեալ 'ի հերձուա-
ծըս։ Պատճառք հերձուածոյն յանձախեին ըզ-
փառս բանաստեղծուն։ Օ՛ի առ գահոյիւք Սան-
դարապետին կանգնեալ կային և այլ աթոռք
բազումք, և բազմեալ 'ի նոսա քերթողք վեհ և
բարձրագոյն տաղից[4]. այլ պարտ էր նոցա տեղի
տալ 'ի հասանել գերահանձաւ մարգկան։ Լա-
քիրոս ունէր զաթոռ ողբերգութեան, Եւրի-
պիդէս կամէր առնուլ զայն. վէճն ածաւ 'ի դա-

1 Պաւսան. գիրք Ա. գլ. Ե. գլ. 1. հա. 2. էջ 197։
2. հա. 6։
2 Փիլոք. առ Աէլ. Գելլ. գիրք ժէ. գլ. 20։
3 Պիկեր. յՍ. կասաբ. գիրք
4 Նախագր. Արիստոփ. 'ի Դորաս, էջ 115 և 116։
5 Արիստոփ. անդ, էջ 773։

տատան։ Լուսիսկիդեայ պատասպարան եղեն Թանձրամիտ ամբոխն անկիրթ ախորժակաց՝ պատրեալ 'ի սեթևեթից Հարստաբիսուութեան նորա։ Իսկ Սոփոկղ կուսակից եղև Լաքիղեայ, պատրաստեալ վարժապետ իւր զնա կոչել՝ եթէ յաղթող գոցի, իսկ եթէ յաղթեալ՝ վիճել ընդ Լուսիսկիդեայ վասն պսակին։ Կացին ասոխքն 'ի պայքար, երկաբանչիւր զինուորեալ նետիւք երգիծանաց՝ պանծացուցանելին զքերթութիւնս իւրեանց, ընդ վայր հարկանելով զոստխին։ Գիտնականեայ անկ էր տալ զվճիռն։ Նորա յամեալ ընդ երկար յերկրայս, ապա զԼաքիղոս եցոյց յաղթող։ և Լաքիղոս 'ի մեկնելն 'ի դժոխոց՝ խնդրեաց բաղում թախանձանօք, զի մինչև 'ի դարձ իւր անդրէն Սոփոկղ կացցի զաթոռ իւր։

Հայց թէպէտ և Քրիստոսին դժկամակութեամբ էր ընդ Լուսիսկիդեայ, վճիռ նորա 'ի տալ Լաքիղեայ զառաջին տեղին, և Սոփոկղի զերկրորդն, և զերրորդն Լուսիսկիդեայ, էր յայնժամ Հանճարն կարծեաց առաւելագունիցն յաթենացւոց։ Քայլ ես առանց Հաստատելոյ կամ եղծանելոյ զայն, պատմեցից որ ինչ փոփոխումն Սոփոկղ և Լուսիսկիդես արարին 'ի վաստակս Լաքիղեայ։

Սոփոկղ, ըստ նախապատուին իմոյ բանիս, է-

1 Արիստոփ. 'ի Գորտս, տող 1563։

մոյծ երրորդ զոր գուսան յառաջին ողբերգու-
թիւնս իւր. Թողում զյաւելուած նկարուցն՝ ո-
րոյք զարդարեաց զխաղետղն, և զնշանակ՝ զորս
յաւել 'ի ձեռս ոմանց յաւագայն իւրոց[1]։ Ի՞նչ
գտաներ զերեսին զայսոսիկ Յաբիղոս, զկարի
բարձրութիւն իմաստից նորա, զհսկայաձև կեր-
պարանս ասացուածոց, և զտաժանաւոր կարգաւո-
րութիւն առաջարկութեանն. և համարեր խոյս
տուեալ իւր 'ի թերութեանց աստի[2]։

Լ՚ոթէ նախատիպք որ յանդիման առնին մեզ
'ի տեսարանի՝ յոյժ բարձունք էին, ոչ ևս մար-
թեր աղեստից նոցա գորովել զմեզ, և ոչ օրինա-
կի նոցա խրատել զմեզ։ Դիւցազունք Սոփոկղ
են կրիս 'ի բարձրութեան՝ ուր զարմանք մեր
և կարեկցութիւն հասանեն. և վասն զի 'ի վեր
են քան զմեզ, և ոչ հեռի 'ի մէնջ, ամենայն որ
ինչ պատկանի նոցա՝ ոչ անընտանի է մեզ, և
ոչ յոյժ ընդելական. և վասն զի յեւս ահագին
հանդէսս քաջութեան պահեն զտկարութիւն[3],
ածեն գորով ինն վսեմ՝ որ առաւելագոյն զտիպս
նկարագրի քերթողիս ընծայեն։

Ա՚յնպէս զգուշանայ կալ 'ի սահմանս ՀՀմա-
բիտ մեծութեան, զի առ ահի արտասահման
անկանելոյ՝ չմնտի իսկ երբեմն անդր։ Յարշա-
ւասայր ընթացս, մինչ զեռ ահա բոցածաւալ բոր-

[1] Արիստոտ. յՈ. քերթ. գլխ. առաք. հտ. 2. էջ 79։
գլ. 4. հտ. 2. էջ 655։ Սոփոկ. 3 Դիոնիս. ազիկ. յՈ. քեն.
'ի բառն Σοφοκλ.. նախն. մատենագր. գլ. 2.
[2] Պլուտ. յՈ. յառաջա- հտ. 5. էջ 423։

բոցի, յանկարծ կասեալ շիջանի՝. զի լաւ արդեօք համարի զանկումն քան զարտուղութիւն։

Զեր նա քաջայարմար զկայ առնոյց՝ի տկարութիւնս մարդկեղէն սրտի և ոչ՝ի նուաստ ոձիրս. այլ խնդրեր հոգի հզօր և բազմագութ, նովին իսկ և շարժիչ՝ի գութ. հոգի՝ որ սասանիցի յարկածից, այլ ամենևուն առանց ամբարհաւաձումն։

Սոփոկլ յածել զդիւցազնութիւն՝ի պատշաձ՝ չափն, ցածոյց զբարբառ ողբերգութեան, և մերժեաց՝ի բաց զբացատրութիւնս՝ զորս աժխոյժ ցնորք մնաց Թեսպրիէին Լաքիոնեայ, և որք արհաւիրս՝ի սիրտս տեսողաց արկանէին։ Լղանակ բանից նորա որպէս զՀոմերականն զոբաւոր է և մեծավայելուչ աղնուական և քաղցրը[2], և՝ի նկարագրութիւն բնագոյն իսկ կրից՝ քաջ պատշաձեալ պայմանի խօսելեացն[3]։

Լաքիոն նկարեաց զմարդիկ վեհագոյնս քան զկար նոցա, Սոփոկլ որպիսիս անկ էր նՁ գոլ, իսկ Լուրիպիդէս որպիսիք էին։ Բազինք երկոքին Թողին՝ի բաց զկիրս և զՀանգամանս, զորս երբորդն վարեալ ընդունական մեծամեծ արգասեաց։ Մ՝երթ յանդիման արար տիկնայս բորբոքեալս սիրով, տոփացեալս՝ի հնութիւն և յոձիրս[4]. և մերթ թագաւորս կործանեալս յար-

1 Ղոնգին. յղ. վսեմի, գլ. 33։

2 Դիոն. ոսկեբ. ճառ. 52. էջ 552։ Կուինտիլ. գիրք ժ. գլ. 1. էջ 632։

3 Դիոնիս. առկ. յղ. քնն. նախնի մատենագր. գլ. 2. հա. 5. էջ 423։

4 Արիստոտ. ի Գ. որոտս, տող 874 և 1075։

կածիչ 'ի թշուառութիւն, մինչև մուրացիկ շը-
ջել ցնցոտուովք[1]։ Նկարագիրքս այսոքիկ, յորս
ոչ ևս նշմարէին դրոշմք ձեռինն Նաբիղեայ և
Սոփոկղի, սարտուցին անդէն 'ի սկզբան զոգիս։
Կէսք ասէին՝ թէ չէ պարտ և ոչ միով իւիք պատ-
ճառանօք արատել զբարս և զաստիճան դիւցա-
զանց 'ի տեսարանի. իսկ այլք՝ թէ անպատեհ է
գծագրել արուեստիս պատկերս անհամեստս, և
վտանգաւոր՝ ընծայել ախտից զզօրութիւն օրի-
նակի արանց աւագաց[2]։

Այլ ոչ ևս այն ժամանակ էր, յորժամ օրէնք
պատուհասակոծ առնէին զնարտարս՝ որք ան-
պարկեշտս զձեռակերտսն յօրինէին[3]։ Մեղկէին
ոգիք, և սահմանք պատշաճիցն օր ըստ օրէ ընդար-
ձակէին։ Բազմագոյնք յաթենացւոց փոխանակ
դժկամակելոյ ընդ հարուածսն՝ զորս քերթու-
թիւք Նէրիպիդեայ տային հասարակաց կարծեաց,
զգածէին կրիւք՝ յորս գրգռէրն զնոսա։ Բանզի
քերթողս այս, աջողակ 'ի յանդգիմանս առնել
զամենայն կիրս, զարմանալի ևս է 'ի նկարագրել
զմոլեգնութիւնս սիրոյ և 'ի յուզել զգութս[4].
զի անդ արդարև գեր 'ի վերոյ և քան զանձն իսկ
ամբառնայ, և հասանէ 'ի վսեմն՝ յոր բնութեանն

1 Արիստոփ. ՅԱմպան, տող 919։ Նոյն 'ի Գորտս, տող 866 և 1095։ Նոյն ՅԱքարն. տող 411։

2 Նոյն 'ի Գորտս, տող 1082։

3 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 4։

4 Կուինտիլ. գիրք Ժ. գլ. 1. հէջ 632։ Դիոգ. Լայերտ. գիրք Դ. յօդ. 26։

չերև ի սահմանեալ զնա։ ՝։ Լ.թենացիք 'ի գուբ
խանդաղատեցան ընդ աղէտս Փեդրայ անդէն
իսկ 'ի յանցանն, արտասուեցին ընդ Թշուառու-
թիւն Տելեփեայ, և ոչ ինչ մեղադրեցին քեր-
թողն։

Լ.ուրիպիդէս մինչ ամբաստանէրն մեղկիչ ողբ-
երգութեան, գուն գործէր 'ի յարդարել զայն
գպրոց իմաստութեան։ Լ. 'ի քերթածս նորա
վարդապետութիւն Լ.նաքսագորայ վարժապետին
իւրոյ յաղագս լինելութեան էից և կարգաց
բարոյականին՝ զորոց վարդապետէրն յայնժամ
Սոկրատ բարեկամն իւր։ Լ.ս վասն զի ախորժե-
լի էր աթենացւոց բազմարուեստն Ճարտարիսո-
սութիւն՝ յոր 'ի Պրոտիկեայ վարժեալն էր, ջա-
նայր մանաւանդ պարարել նուաւ զլսելիս նոցա։
Որով վարժք իմաստասիրութեան և հռետորա-
կանին զարդք ընդունելի եղէն յողբերգութեան,
և այսու ևս մասամբ Լ.ուրիպիդէս քան զքեր-
թողս որ յառաջ քան զնա կացին՝ գտաւ երևելի։

Լ.քերթութիւնս Լ.սքիղեայ և Սոփոկղի փու-
թան կիրք 'ի նպատակն, առանց յաՃախելոյ ի-
մաստս՝ նահանջիչս ընթացից իւրեանց. մանա-
ւանդ Սոփոկլ Ճեպ 'ի Ճեպոյ և գոգցես իմն ան-
խորհրդաբար սահմանէ միանգամայն զբարս, և
յայտնէ զկիրս գաղտնիս զայնոցիկ՝ զորս ածէ 'ի
տեսարան։ Լ.յսպէս յողբերգութեանն Լ.նտի-

1 Դիոգին. յղ. վսեմի. գլ. 15 և 39։

գոնայ, բառիւ միով վաղելով ընդ շրթունս տիկնոջն, յայտ առնէ զտուփանս նորա ընդ որդւոյ իւրում Արէտնի[1]։

Եւրիպիդէս յաձախեաց զմեծիռս և զտեսութիւնս[2]. ախորժէ նա և պարտ իսկ համարի հոլանել զգիտութիւնս իւր, և բազում ուրեք պարապէ 'ի ձեւս Ճարտասանականս[3]։ Ամին իրի պէսպէս դատաստանք առնին զքերթողէս, և յայլ և այլ դէմս նկատի։ Իբրև մի յիմաստասիրաց բազումս ունի իւր կուսակիցս. աշակերտքն Անաքսագորայ և Սոկրատայ ըստ օրինակի վարժապետացն, ուրախ լինէին ընդ յաղթանակել վարդապետութեան իւրեանց 'ի տեսարանի. և հեղբեալ միայն զբացատրութիւնս ինչ նորոյ թարգմանին իւրեանց նպաստամատոյցս ինքնիշխանութեան[4], համարձակ կացին ջատագով այնմ՝ որ յորդորէին 'ի սէր պարտուցիչ և առաքինութեան, և որ ոչ անդ զկայ առեալ՝ քարոզէրն յայտնաբարբառ, զի ոչ զդիս պարտ է ամբաստանել 'ի կիրս ամենայնիս, այլ զմարդիկ՝ որ չարախօսէնն զնոցանէ[5]։ Լաւ վասն զի սնդաղոյնս հաստատէր զվարդապետութիւնս կարևորս բարոյականին, դասեցաւնա 'ի թիւ իմաստնոցն[6].

1 Սոփոկլ ՅԱնտիգ. տող 578։

2 Կուինտիլ. գիրք Ժ. գլ. 1. էջ 652։ Դիոն. ռակիր. Ճառ. 52. էջ 553։

3 Դիոնիս. ազիկ. յդ. քնն. նախնի մատենագիր. հտ. 5. էջ 423։

4 Պլատ. յդ. հատ. գիրք Ը. հտ. 2. էջ 568։

5 Եւրիպիդ 'ի Յոլիս. տող 442։

6 Եպիֆն. 'ի Ցիմ. էջ 283։ Արիստոտ. յԱնգան, տող 144։

և համարեսցի մինչև 'ի սպառ խմաստասէր ողբերգու[1]։

Ճարտասանութիւն նորա, զառաձեալ ուրեք ուրեք 'ի մտոտի յորդութիւն բառից[2], ոչ ինչ նուազ կացոյց զնա հռչակաւոր 'ի Ճարտարախօսս առ հասարակ, և մանաւանդ 'ի փաստաբանս։ Հաւմղէ եռանդուն խմաստիւքն, և խելամուտ առնէ Ճարտարութեամբն՝ որով ածեալ թափէ զմիտեամբք զպատասխանսին[3]։

Գեղեցկութիւնք քերթածաց նորա, ընդ որս զարմանան խմաստասէրքն և Ճարտարախօսք, թերեւ յաչս պարսաւադիտաց նորա թերութիւնք ծանուցեալ։ Իբր զի այն յաՃախաւոր ասացուածք հռետորականք, և առածք շեղջակուտեալք, և դրուագք հմտութեանց և վէճք ընդվայրաբնութեանք[4], խափանիցեն զյոյզս կրից։ Այլ յայն սակս իսկ յոյժ 'ի վայր դասէն զԱրիստոտէս քան զԱրիստոկղ, որ ոչ ինչ աւելորդ 'ի ներքս խառնէ[5]։

Այսքիղեալ 'ի տիպս կերպարանաց բանիցն պահեալ գքաջայանդուգն ձևս երկդմնեանցն տաղից, և Արիստոկղի զմեծվայելչութիւն դիւցազնականին, իսկ Արիստոտէս սահմանեաց զբարբառ

1 Վիթրուվ. 'ի յառաջաբան. գիրք Ը։ Ամեն. գիրք Դ. գլ. 15. էջ 158։

2 Արիստոտ. 'ի Գոտաս, տող 1101։ Պլուտ. յղ. ուն. կընգր. հտ. 2. էջ 45։

3 Կուինտիլ. գիրք ԺԱ. գլ. 1. էջ 632։ Դիոն. ոսկեբ. Ճառ 52. էջ 551։

4 Կուինտիլ. անդ։ Արիստոտ. 'ի Գոտաս, տող 787, 973, 1101։

5 Դիոնիս. ազիկ. յղ. քնն. Նախնի մատենագր. հտ. 5. էջ 423։

ողբերգութեան։ Զպահեաց նա զբեթէ և ոչ մի ինչ 'ի բացատրութեանց սեփականելոց բանաստեղծութեանէ, այլ գիտաց այնպէս ընտրանաւ 'ի կիր արկանել զսովորականս, զի Հարտար զուգադրութեամբ նոցա՝ տկարութիւն խնամտիցն գոգցես իմն ծածկեր, և կարի իսկ հասարակք 'ի բառից աշնուանային։ Լ. յնպիսի կախարդանք են դիւթական այնր ասացուածոց, զի կշիռ 'ի միջատահմանին կացեալ նուաստութեան և բարձրութեան՝ զբեթէ միշտ ընտիր և յստակ գտանի, զբեթէ միշտ քաղցրալուր հեզասահ և առ ամենայն խնամտս մտաց դիւրայարմար[2]։

Լ. յլ նա կարի տաժաներ 'ի կազմել զտողս դիւրինս. հանգոյն Պղատոնի և Օ. ելեքսեայ, և ամենեցուն որ միանգամ նկրտին 'ի կատարելութիւն, դատեր զերկս իւր խստութեամբ ոսոխի, և խնամեր հայրենի զթով[3]։ Յասել նորա էր. բեմն՝ զի 'ի յօրինուած երից տողից զաւուրս երիս աշխատ լեալ էր, ասէ ցնա մի 'ի սինկքոր քերթողաց. Ով ես էի, տողս հարիւր յերիս աւուրս յօրինեի։ Եւ Եւրիպիդէս ասէ. Գիտեմ և ես, այլ ոչ ինչ աւելի քան զերիս աւուրս յերկարակեաց լինելին տողք քո[4]։

[1] Արիստոտ. Հարտ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 585։ Ղենդին. յլ. վեսմ. գլ. 39. էջ 217։

[2] Դիոնիս. աղիկ. յլ. շարադր. բառից, գլ. 23. հտ. 5. էջ 173։

[3] Ղենդին. յլ. վեսմ. գլ. 15. էջ 108։ Դիոն. ոսկեբ. Հատ. 52. էջ 551։

[4] Վաղ. Մաքս. գիրք Գ. գլ. 7։

Սոփոկղեմայծ 'ի պարս ողբերգութեան զփոխ-
դային նուագ[1], զյորդորականն 'ի զգաստու-
թիւն, զպատշաճն 'ի պաշտօն դից[2]։ Իսկ Ա-
րիսպիդէս, համախոհ նորաձևութեանցն զորս
Տիմոթէոս արար 'ի նախնին երաժշտութիւն[3],
ընկալաւ զրեթէ զամենայն ազգի ազգի եղա-
նակս, և մանաւանդ զայնոսիկ՝ որ քաղցրու-
թեամբն և մեղկութեամբ յարմարէին ընդ ի-
րում քերթութեանն։ Յապուշ եղեն ունկն-
դիրք 'ի հնչել թոյլ նուագայն 'ի տեսարանին,
և 'ի յեղյեղել նոցա 'ի մի հեգ բառի[4]։ Ընդ-
ղ ընդ հուպ 'ի տեսիլ ածաւ քերթողն 'ի դէմս ա-
պիկար Ճարտարի, որոյ ոչ կարելով ամբառնալ
յողբերգութիւն՝ ցնա առ ինքն իջուցանէր, և
նովին իսկ յամենայն մասանց նորա կապտեր ըղ-
սատ և զահեղութիւն՝ որ անկ են նոցա[5], և որ
եղանակս յեղյեղուկս ընդ բառս մանուսնս կցոր-
դեալ՝ փոխանակեր զնդգոյր ընդ գեղջ և զՀնարս
ընդ զօրութեան։ "Տացուք, ասեր Աքիստո-
փան, նուագել Արիսպիդեայ. առցէ 'ի ձեռս
քնար, կամ մանաւանդ զայս խեփորից[6]. զի ընդ
նոսին ևեթ մարթի տողից նորա համաձայնել,,։

1 Արիստոտ. առ. Պարապ. 'ի վարս Սոփոկղի։
2 Պղատ. յղ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 399։
3 Պլուտ. յղ. Ծերոյ արն. տեսել զհաս. հա. 2. էջ 795։
4 Արիստոտ. 'ի Գորգս, տող 1336, 1349 և 1390։
5 Նոյն անդ, տող 971։
6 Նոյն անդ, տող 1340։ Դիդիմ. առ Աթէն. գիրք ԺԴ. գլ. 4. էջ 636։

Ել ումեք արդ պարսաւ այսպիսի իշխելի է առնել. այլ յաւուրս Քրիստոփանեայ սուլորեալ բազմաց 'ի մանկութենէ յահեղ և 'ի մեծավայելուչ եղանակ ողբերգութեան, սարտնուին 'ի լուր նորաձև ոլորակացն բախելոյ զլեալիս նոցա։ Այլ քաղցրութիւն թուլացոյց ասպա զխստութիւն կարգաց 'ի սուղ ժամանակի յաղթանակեալ։

Այլ ըստ կազմածոյ ողբերգութեանց՝ յաղթող 'ի բազմաց վկայի Սոփոկղ։ Արթի իսկ ցուցանել, զի գրեթէ ամենայն օրէնք ողբերգութեան 'ի քերթութեանց նորա առան. այլ քանզի ուր զկիրթ ախորժակաց բանք իցեն, քնութիւն բարւոյ մատեանի գրեթէ միշտ գտանի մատեան յոռի, անտես 'ի նմա լեալ զգծն և պատկանաւոր գեղեցկութեանցն մասն ոչ սակաւ, նմին իրի հասարակաբար և էթ շատ լնցի ասել զքերթողէս, զի ազատ գտաւ 'ի մեծամեծ թերութեանցն՝ որ ստգտանին 'ի քերթութիւնս իւրոյ ոսոխին։

Դուն ուրեք Եւրիպիդէս յաջողի 'ի կարգաւորութիւն վիպացն'. մերթ 'ի հաւանականութիւն իրացն ստնանել, և մերթ բռնի զեկամուտ դէպս 'ի նեբքս մուծանել. և է ուրեք՝ զի ոչ ևս մի ինչ արարուածն գտանի, և գրեթէ միշտ 'ի կնճիռն վիպացն և 'ի լուծումն նորա մնայ

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 13. հտ. 2. էջ 662։

ինչ ցանկալի, և բաղում այն է՝ զի պարք նորա ոչ քաջ ընդ վէպսն կցորդին[1]։

Խորհեցաւ նա զառաջարկութիւն ողբերգութեանցն բացատրել երկայն նախերգանաւք, զրեթէ անկցորդելի ընդ քերթուածոյն։ Ընդ սովորաբար մի 'ի գուսանացն 'ի մէջ եկեալ[2], անհման իմն համառօտէ՝ որ ինչ նախ քան զարարուած ողբերգութիւն պատկանաւոր 'ի նոյն անցք անցեալ էին։ ցուցանէ զաղգատոհմ իւր կամ զայլոց ուրուք 'ի գլխաւորացն[3]. և եթէ 'ի գլխոյն ոք էին, վասն որոյ իրաց իմբեալն է յերկնից՝ պատմէ. իսկ եթէ ոք 'ի մահկանացուաց, զայն թէ ո՛ւարար նմա վերկենցաղել։ Ընդ առ 'ի տալ ծանօթս հանդիսատեսացն, զանուն իւր յայտ առնէ. Այս ինքն եմ Պտղոմէկ[4]. Այս ինքն Հերմէս, որդի Մայայ[5]. Այս ինքն Պողնդոր, որդի Նկովբայ[6]. Այս ինքն Յոկաստ[7]. Այս Ընդրոմաքէ[8]։ Բ. Յապէս ահա Խիփիկենիա, միայնակ 'ի տեսարան անդր եկեալ, ասէ[9]. Պեղոփս որդի Տանտաղեայ եկեալ 'ի Պիսա, և զդուստր Նոմայոսի ածեալ կնութեան, ծնաւ 'ի նմանէ զԱտրէոս, ծնաւ զԹիեստէս, զայս և զԶամեենոն։ Սա զդուստր Տինդարեայ էառ կնութեան, և 'ի հարսանեաց անտի ծնայ

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 18. հտ. 2. էջ 666։
2 Արիստոտ. 'ի Գորտս. տող 977։
3 Եւրիպ. 'ի Մոլեանն հերակլ։
4 Նոյն, 'ի Հիպպոլ։
5 Նոյն, 'ի Յոնն։
6 Նոյն, Նեկովբ։
7 Նոյն, 'ի Փենիսս։
8 Նոյն, Ընդրոմ։
9 Նոյն, Խիփիդ. և Տաւր.

ես Լիբիգենիա*։ Լչ յետ ազգահամարոյս, զոր Աբիստոփան կարի 'ի Ճահ 'ի միում ուրեք 'ի կաստակերգութեանն ածէ 'ի ծաղը', պատմէ անձամբ անձին օրիորդն արքայազն՝ զի հայր իւր կոչեաց զնա Յէղիս պատճառանօք իբր թէ 'ի հարսնութիւն Աբիլեայ, այլ Ճշմարտութեամբ առ 'ի զոհել զնա Աբրահամայ. և զի աստուածուհւոյն, եղն 'ի բագին անդր ընդ նորա փոխանակեալ, յաիշտակեաց ած զնա 'ի Տաւրիս՝ ուր թագաւորէ Թոտաս, 'ի հանգիստարագ թռչնոց թեթևընթացութենէն կալեալ զյորջորջումն**։ Լչ ապա յետ այլոց հանգամանաց ինչ, վախճանէ զանոն պատմութեամբ զարհուրական անրջոց՝ որ գուժէ նմա զմահ եղբօր իւրոյ Ովբեատեայ։

Իսկ Լսքիլ և Սոփոկլ Ճարտար արուեստիւ անդատին 'ի սկզբանէ ողբերգութեանն յայտ առնեն զառաջարկութիւնն. զոր և Լբրիպիդեայ երևի գողացեալ 'ի նոցէ 'ի Մեդեային իւր և Յիփիգենեայն ողբերգութեան։ Բայց տարաշ քերթութեան նորա, թէպէտ և զրեթէ միշտ ան-

* Հայրն Պոլիմոնա, որ հնարի ծածկել զթերութիւնս նախնեաց, սկսի զանն առնել սաստարեալ յաւելուածով որ չէ Եւրիպիդեայ. «Եղծուկ» զնեա, և ընդէր ելցէ ինձ» պարտ յիշատակել զվնասուածութիւնս իմ»։

տող 47։

** Եւրիպիդէս զանունս թռչնոց Θόας համարի ածանցեալ 'ի հելլէն բառէն Θοός, որ նշանակէ թեթևընթաց։ Բարբառք իսկ համարեալ զատուգաբանութիւնս այս, որ ոչ է, սակայն կարի անճահ 'ի տեղւոջս յոյսմիկ էր։

արուեստ, ոչ է զաստապարտեալ 'ի հանձարեղ քննողաց[1]։

Այլոցանշան ևս այն է, զի 'ի նախերգանս ամենից 'ի քերթուածոցն գողցեալ իմն առ 'ի տկարացուցանել զաղգումն՝ զոր ջանայ առնել 'ի լաւոյ, պատմէ յառաջագոյն զբազմագոյնս 'ի պատահարաց՝ որոց պարտն է յեղակարծ 'ի վերայ հասեալ գործել հիացումն[2]։ Այլ այն դարձեալ զարմանալի, մերթ ստրկաց խնամասիրաբար տայ բարբառել[3], և թագաւորաց ստրկաբար[4]. և մերթ առ 'ի շողոմել զժողովուրդն՝ արտուղի յառաջարկութենէն, զոր Յաղաւորմն նորա յայտնապէս է տեսանել։

Լուսեսոսի պատրաստեալ զբանակն ամենայցոց, մնայր վերջին պատասխանուց Արէոնի արքային թերացուց՝ առ 'ի չու առնել ընդդէմ նորա։ Յայն վայր հասանէ հրեշտակ Արէոնի, և խնդրէ խօսել առ արքայն. իսկ նա պատասխանի առնէ. Ի զուր խնդրես զնա, զի աղատ էն Աթէնք, և արքայութիւն ատ 'ի ձեռս ամենայն ժողովրդեան է։ Յայնժամ հրեշտակն խօսի ընդդէմ ռամկապետութեան տողս եօթնեւտասն[5]. և Լուսեսայ տաղտկացեալ՝ կոչէ զնա շաղակրատ, և

1 Արիստոտ. յՀ. Ճարտ. գիրք Գ. գլ. 14. հա. 2. էջ 600։

2 Եւրիպիդ. յԵկովբ. և յԻպպոլ։

3 Արիստոտ. 'ի Գ.օրաս, տող 980։ Պարապ. անդ, յԱքարն, տող 395։ Որոգին. 'ի Կէլբ. գիրք Է. էջ 356։

4 Եւրիպիդ. յԱղիկեստ. տող 675։

5 Նոյն, յԱղաչ. տող 409։

նկարագրէ 'ի տողս քսան և եօթն զգժպատե-
հութիւնս թագաւորութեան։ Այլ յետ ան-
պատկանաւորն վիճաբանութեան ապա հրե-
տակն տայ զպատգամ իւր։ Արևի առաւել հաճոյ
լեալ Աւրիպիդեայ՝ տեղի տալ հանճարոյ իւրում-
քան թէ նուաճել զայն, և առաւելագոյն փոյթ
լեալ նմա յօգուտ իմաստասիրութեան քան ա-
ռաջարկութեան իւրոյ։

Յառաջիկայ գլուխ գրոցս ցուցից և զայլ թե-
րութիւնս նորա, յորոց կէսք և Սոփոկղի են.
այլ զի այսոքիկ ոչ մթացուցին զփառս նոցա,
յայտ է զի գերազանց ևս էն գեղեցկութիւնքն՝
որովք քերթածք նոցա ճոխանան։ Ի դէպ է յա-
ւելուլ և զայս 'ի պարծանս Աւրիպիդեայ, զի
առաւելագոյն 'ի քերթութեանց նորա թէպէտ և
արկածս դժնդակս յանդիման առնեն՝ սակայն
ազդողագոյն են յոյժ, և ողբերգագոյն քան զա-
մենայն քերթողս թատերականս զնա կացուցա-
նեն[1]։

Ուղեշս դափնոյ առատս մատուցանէր տեսարան
հանճարաց, զորս 'ի վեր երևեցուցանէր։ Յես-
քիղեայ և այսր իբր ընդ դար մի և կէս, բազմու-
թի քերթողաց գուն գործեցին 'ի հարթել կամ 'ի
գեղեցկացուցանել զճանապարհս, զոր աջողու-
թեան մնաց այն ինչ բացեալ էր առաջի իւր։
Աչկոց նոցա մնայ ծանուցանել զնոսա յետնոց.

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 13. հտ. 2. էջ 662։

այլ ես յիշատակեցից զոմանս 'ի նոցանէ, որոց յաջողութիւնք կամ ընդունայն ձգումք պայծառացուցանէն զպատմութիւն արուեստին, և տան հմտութիւնս պարապելոցն 'ի նոցն։

Փրինիքոս աշակերտ Մեսպեայ ոսոխ Լաբիղեայ եմոյծ զդէմն կանանց 'ի տեսարան[1]։ Յորժամ Մեմիտոկղեայ յանձն եղև 'ի դիմաց ցեղին իւրոց կալ 'ի պայքար 'ի Թատերախաղս, Փրինիքոս յանդիման արար զմի 'ի քերթութեանց իւրոց, և կալաւ զմրցանակն. և անուն քերթողին արձանագրեցաւ 'ի վիմի 'ի միասին ը անուան յաղթողին Պարսից[2]։ Ողբերգութիւն Նորա մակագրեալ Բ.ռումն Միլետայ Նորանչան իմն վիճակեցաւ բախտի. քանզի տեսօղք հարան յարտասուս, և դատապարտեցին զքերթողն 'ի տուգանս հազար դրամակշռոց, փոխանակ զի կարի կենդանատիպ նկարագրեաց զչարիսն՝ զորս մարթէր խափանել աթենացւոց[3]։

Յոն ընդ պսակել միոյ 'ի քերթութեանցն իւրոց այնպէս մնափառեցաւ, մինչև պարգևեալ աթենացւոց իւրաքանչիւր մէն մի անօթ թրծեալ՝ որ 'ի հայրենիս իւր 'ի Ռիմոս կերտին[4]։ Մարթ է ըստ քերթութեան մնսին ստգտանել զնա իբր կարի անատգիւտ. քանզի քերթածք նորա այնու խնամով յօրինեալ էն, զի և աչք կո-

1 Սուիդ. 'ի բառն Φρύνιχ.
2 Պլուտ. 'ի Թեմիստ. հտ. 1. էջ 114։
3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 21։ Քորսինի տարեգր. տառ. 2 հտ. 3. էջ 172։
4 Ելիան. գիրք Ա. գլ. 3. էջ 3։

բովաբերեալ ոչ ինչ 'ի նոսա նշմարեն արատ։ Սա-
կայն ամենայն քերթածք նորա ոչ հաւասարեն
Լ,ղիպեայն Սոփոկղլ. զի ամենայն ջանիւքն իւ-
րովք հազիւ 'ի միջատահմանին եհաս 'ի ծայր
կատարելութեան[1]։

Ա,ղաթոն բարեկամ Սոկրատայ և Լ,ուրիպի-
դեայ նա էած նախ 'ի տեսարան վէպս ստեղծա-
կանս[2]։ Կատակերգութիւնք նորա ընտիր և
վայելուչ գրեալ են ոճով. իսկ ողբերգութիւնք
հանդոյն Ճառից Գորգեայ Ճարտարախօսի կու-
տակութեամբ հակադրութեանց և յարմարա-
կարգ զարդուց[3]։

Փիլոկղէս արար քերթուածս բազումս յոյժ,
որոց չէք ինչ սեփական բաց 'ի դառն ասացուա-
ծոյն՝ յորմէ Մ,աղէ անուանակոչեցաւ[4]։ Դեր-
թողս այս հետևակ՝ յաղթող Սոփոկղի դատե-
ցաւ յաթենացւոց 'ի մարտին, յորում Սոփոկղ
Լ,ղիպեայն յանդիման արար ողբերգութիւն
զմի 'ի գեղեցկագոյն քերթուածեանց իւրոց և
թերևս զհրաշակերտ հելլէն տեսարանին[5]։ Ա,յլ
եկեսցէ արդեօք ժամանակ, զի ոչ իշխեսցէ ոք
քաջ քան զՓիլոկղէս ասել զՍոփոկղ՝ առ 'ի չա-
նարգելոյ զնա[6]։

1 Դիոգէն. յդ. վեռմ. գլ. 33. էջ 187։
2 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 9. հտ. 2. էջ 659։
3 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 13։ Փիլոստրատ. վարք խնամատակ. գիրք Ա. էջ 493։ Աթէն. գիրք Ե. էջ 187։
4 Սուիդ. 'ի բառն Φιλοχλ.
5 Դիկեարք. 'ի յառաջաբան. Եղիպ։
6 Արիստոտ. Ճարտ. հտ. 3. էջ 422։

Պսիդատնոյ եղբօրորդւոյ Փիլոկղեայ առաւել ևս եղեն քերթածք քան զՀօրեղբօրն, և հնգետասանեկի կալաւ մրցանակ՝։ Պարձեալ և որդի նորա Համանուն յաւուրս իմ արար բազում քերթուածս. և ասիք կային նմա Պսկղեսիաս, Պիարէոս որդեգիր Խոսկրատայ, Լեվոնդեկտոս, այլովքն հանդերձ. որ զարմանալիք արդեօք լինէին, եթէ չէր նոցա յաջորդեալ արանց արդարև զարմանալեաց։

Ինչեաւ զիս ասել յաղագս Պիոնեսեայ արքային սիրակուսացւոց երիցոյն, որում՝ արք Հանձարեղք օգնական եղեն՝ ի քերթութիւն ողբերգութեանցն, և օգնականութեամբ նոցա կալաւ՝ ի մնասին յայսմիկ բանասիրութեան զյաղթութիւն[2]։ Այս ամենարհաւաճեալ ընդ քերթածս իւր, վատութեամբ և բռնաւորաբար անցք թեամբ՝ ստիպէր զամենեսին որ մերձն կային՝ տալ գովութիւն։ Ինդրեաց նա երբեմն՝ ի Փիլոքսենեայ քերթողէ՝ յղկել զմի՝ ի քերթուածոց իւրոց, զոր գեռ ևս յօրինեալ էր. և Փիլոքսենեայ ջնջեալ զայն ծայր՝ ի ծայր, դատապարտեցաւ՝ ի քարահատս[3]։ Ի վաղիւ անդր Պիոնեսիոս ետ ազատել զնա, և ընկալաւ դարձեալ՝ ի սեղան իւր։ Այլ՝ ի վերջին ուրախութեան նուագսն արտասանեալ տողս ինչ՝ ի քերթուածոց

[1] Դիոգ. գիրք ԺԴ. էջ 270։ Սուիդ. ՝ի բառն Ա՛ստուծ.

[2] Պլուտ. ՝ի վարս տասն Ճար. տարախոս., հա. 2. էջ 833։

[3] Նոյն. յղ. զորութեան Ակիբ. հա. 2. էջ 334։

իւրոց, ասէ ցՓիլոքսենն. Օ՛ի՞նդ Թուի քեզ, ասա Փիլոքսենն։ Իսկ քերթողն ոչ ինչ ետ նմա պատասխանի, այլ դարձեալ առ Թիկնապահսն ասէ. Դարձուցէք զիս 'ի քարահատս[1]։

Լաքիզ, Սոփոկլ և Լուրիպիդէս եղեն և լցին միշտ նախապատիւք 'ի պայծառացուցիչս տեսարանին[2]։ Լաքիզ զի՞նդ ապա 'ի բազմապատիկ քերթուԹեանցն զորս ածին 'ի պայքար*, երեքտասան ողբերգուԹիւնք ևԵԹ առաջնոյն պսակեցան[3], երկրորդին ուԹևտասն[4], և հինգ երրորդին[5]։ Վանգի զյաղԹուԹիւնն ամբոխն սահմանեաց, իսկ զկարգ քաջուԹեան նոցա հասարակաց դատաստան։ Ամբոխին էին խնամակալք՝ զորոց գգուէր նա զկիրս, և սիրելիք՝ որոց պատրաստարան լինէր ըղձիցն. աստի չարարուեստ հընարքն և բռնուԹիւնք և անիրաւուԹիւնք 'ի ժամ վՃռոյն 'ի ներքս մտանէին։ Իսկ դատաստան հասարակաց, այս ինքն է ողջամտադոյն մտսին ազգին, ԹԷպէտ և երբէք երբէք շլացաւ յաղօտ ինչ նշուլից գեղեցկուԹեան սփռելոց 'ի հետևակ գրուածս, այլ ոչ յամենայն հատուցանել հանձարեղ մարդկան զիւրեանց կարգ և տեղի՝

[1] Դիոգ. գիրք ԺԵ. էջ 331։
[2] Պլուտ. 'ի վարս տասն Ճարտարախօս. հտ. 2. էջ 841։ Արիստոտ. Ճարտ. հտ. 3. էջ 703։ Կուինտիլ. գիրք Ի. գլ. 1։
* Յետակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Զ։
[3] Անոնիմ. 'ի վարս Եսքիլեայ։
[4] Դիոգ. գիրք ԺԳ. էջ 222։
[5] Սոփոկ. 'ի բառն Եսրիպիդ. Վարք. առ Աբլ. Գելլ. գիրք ԺԷ. գլ. 4։

'ի խելամտել գերակայութեան նոցա ընդունայն Ճգամբք ասխաց նոցա և յաջորդաց։

Կատակերգութիւն թէպէտ և զնոյն կալաւ սկիզբն ընդ ողբերգութեան, այլ պատմութիւն նորա՝ ոչ որպէս զնորայն քաջածանօթ՝ ընծայէ յեղափոխութիւնս, որոց անդիտելի են մեզ հանգամանք. և գիւտս, որոց անյայտ են մեզ գտիչք։

Ծնեալ 'ի յիսներորդի ողիմպիադին յաւանս Աստիկեայ և պատշաՃեալ անկիրթ բարուց գեղջկէին, ցիշխեր 'ի մայրաքաղաք անդր մնտել։ Այլ երբէք, զի խումբ կատակագուսանաց ինքնահրաման սպրդէին անդր յանդիման առնել զանպատեհ ծաղրածութիւնն. այլ թոյլ ևեթ տայր նոցա պետութիւնն և ոչ հրաման՝։ Յետ ժամանակս բաղում կալոյ 'ի տղայութեան, ապա ուրեմն յանկարծ զարգացաւ 'ի Սիկիլիա՝։ Փոխանակ կցորդութեան ունայդ և անկարգ տեսլեանց, Այսպիքարմոս իմաստասէր սահմանեաց միակ արարուած, և զամենայն մասունս նորա զօդեալ ընդ միմեանս, և ամփոփեալ 'ի պատշաՃչափուն զընդարձակութիւն նորա, ած զնա անստերիւր 'ի կատարած։ Այերթածք նորա ընդ նովին օրինօք ողբերգութեանն գրաւեալ՝ ծանուցան Ասիլադա, և եղեն նախատիպք՝. և կատակեր-

1 Արիստոտ. յՀ. քերթ. գԼ. 3. հտ. 2. էջ 654։ Դիոմեդ. յՀ. Ճարտ. գիրք Գ. էջ 485։

2 Արիստ. անդ. գԼ. 5։

Ովիդիոս. գիրք Բ. թուղթ ԺԱ. տող 58։

3 Պղատ. 'ի թէէտ. հտ. 1. էջ 152։

գութիւն բաժանեաց անդ ընդ հուպ ընդ ոսոխին իւրում զդրուատիս հասարակաց, և զմեծարանս որ անկ են հանձարոյ։ Յս մանաւանդ ամենեցեալք այնու ցնծութեամբ ընկալան զնա, որպէս զաւետիս յաղթութեան։

Յաղուամբ 'ի նոցանէ պարապեցին յայն, և անուանեալք նոցա յաւելուն զպարծանս բազմութեան կատակերգուացն՝ որ յաւուրց Յպիքարմեայ մինչև ցաւուրս մեր կացին երևելիք։ Որպիսիք 'ի հնագոյնս եղեն Մաղնէս, Կրատինոս, Կրատէս, Փերեկրատ, Եւպողիս, և Մրիստոփան՝ որ մեռաւ իբր երեսուն ամաց նախ քան զՀասանեէն իմ Յիշեցեալ։ Յս սոքա ամենեքին 'ի ժամանակս Պերիկղեայ։

Մաղնէս պայծառացաւ յոյժ 'ի սկզբան անդ դառն երգիծանութեամբքն. յաւել ապա 'ի խոհականութիւն և 'ի զգուշութիւն, և անկան քերթածք նորա։

Կրատինոս ոչ յոյժ աջողակ 'ի կարգաւորութիւն վիպացն, այլ էր ձարտար 'ի նկարագրել. զյոռութիւնս. դառն որպէս զՄրքիղոքոս, ազդոյ իբրև զՄրքիղոս, ծանակէր զոր և կամէր հանարձակ առանց խնայելոյ[2]։

Կրատէս զուարթ հանձարաբանութեամբքն եղև նշանաւոր[3], և Փերեկրատ նուրբ ասացուա-

[1] Արիստոփ. ՅԱռպէտան, տող 522։

[2] Պղատ. 'ի Նախադր. Արիստոփ. էջ 11։ Արիստոփ. ՅԱռպետան, էջ 534։

[3] Պարապ. Արիստոփ. ՅԿատակերգ. էջ 12։

ծուլքն[1]. երկոքին եւ 'ի գիւտն յաջողեալ, զգոյշ եղեն 'ի ծանակելոյ զծանօթս[2]։

Լուսաւորիչ 'ի նոյն կարգ Կրատիսեայ դարձ ա-բար, այլ բարձրագոյն և զուարճալի քան զնա ո-ճով։ Արիստոփան նուազ քան զԿրատիսոս լե-ղեաւ, և սակաւ-ք զԼուսաւորիչ գեղով, զդառնու-թիւն միոյն բարեխառնեաց յաճախ քաղցրու-թեամբք միւսոյն[3]։

Լրթէ 'ի մանագրութիւնս կատակերգու-թեանցն ոք հայիցի, որ յաւուրց ժամանակաց նոցա հասին առ մեզ, գժուարաւ 'ի միտ առնու-ցու որպիսի ինչ էին յայնժամ կատակերգութիւն։ Հաւասիկ ոմանց 'ի նոցանէ մանագրութիւնք. Պրոմեթեւս[4], Տրիպտղոմէոս[5], Պանդարա-մետ[6], Պտուղածապարարքք[7], Ուստ Հերակղէս[8], Հարսանիք Լքեայ[9], Ղանայեանք[10], Լիովբէ[11], Միթիարաւոս[12], Լաւաբեկութիւն Ոդի-սեայ[13], Ղար ոսկեղինիկ[14], Այրենի մարդիկ[15],

1 ԱԹԵՆ. գիրք Զ. էջ 268։
2 Արիստոտ. յՂ. քերթ. գլ. 5. էջ 654։ Նախագր. Արիստոփ. էջ 11։
3 Պլատ. 'ի Նախագր. Արիստոփ. էջ 12։
4 Եպիքարմ. առ ԱԹԵՆ. գիրք Գ. էջ 86։
5 Փերեկր. առ ԱԹԵՆ. գիրք էջ 67։
6 Արիստոտ. առ ԱԹԵՆ. գիրք ԺԴ. էջ 658։
7 Եպիքարմ. անդ, գիրք Գ. էջ 106։
8 Փերեկր. անդ, էջ 122։
9 Եպիքարմ. անդ, գիրք էջ 85։
10 Արիստոփ. առ ԱԹԵՆ. գիրք Բ. էջ 57։
11 Նոյն անդ, գիրք Է. էջ 301։
12 Նոյն անդ, գիրք Դ. էջ 158։
13 Եպիքարմ. անդ, գիրք ԺԴ. էջ 619։
14 Լուսող. առ ԱԹԵՆ. գիրք Թ. էջ 375։
15 Փերեկր. անդ, գիրք Ե. էջ 218։

Լրկինք [1], Լրզանակք [2], Լրկիր և ծով [3], Աբրագիլք [4], Թռչունք, Մեղուք, Գորտք, Մկնք [5], Այծք [6], Օրէնք [7], Կարիչք [8], Պիւթագորեանք [9], Դասալիքք [10], Խարեկամք [11], Շողոքորդք [12], Կնամարդիք [13]։

Այլ այնթեւնուլ ուրուք զքերթուածս զայսոսիկ, տեսանէ յայտնապէս զի ոչ այլ ինչ էրքերթողաց նոցին ուշ նպատակի՝ բայց հաճոյ ևեթ լինել ամբոխին, և զի անխտիր զամենայն հնարս 'ի կիր արկանէին առ այս՝ դարձուցանել 'ի ծաղր զմատենագրութիւնս զգօնս, այլաբանել և երգիծանել ամենազաղիր նմանութեամբք և շինականագոյն բանիւք։

Օնոյն վէպս ողբերգակ քերթողաց այլովք երանգովք նկարագրեցին։ Նիսոլբէն Նբրիպիդեայ յարտասուս շարժէր, իսկ Աբիստոփանեայն 'ի ծաղր. դիք և գիւցազունք ծպտեալք երևեցան, և ներհակութիւն կեղծեաց և վեհա-

1 Ամփիս. առ Աթեն. գիրք Գ. էջ 100։
2 Կրատին. առ Աթեն. գիրք Թ. էջ 374։
3 Եպիքարմ. առ Աթեն. գիրք Գ. էջ 120։
4 Արիստոփ. առ Աթեն. գիրք Թ. էջ 368։
5 Նոյն, անդ։
6 Եւպոլ. առ Աթեն. գիրք Դ. էջ 94։
7 Կրատին. անդ, գիրք ԺԱ. էջ 496։
8 Փերեկր. առ Աթեն. գիրք Թ. էջ 395։
9 Արիստոփ. անդ, գիրք Դ. էջ 161։
10 Փերեկր. անդ, գիրք Գ. էջ 90։
11 Եւպոլ. անդ, գիրք Զ. էջ 266։
12 Նոյն անդ, գիրք Է. էջ 328։
13 Կրատին. անդ, գիրք ԺԴ. էջ 638։

փառութեան նոցա ծնաւ զծաղը։ Եւ Թերթածք բազումք կոչեցան յանուն Յոհանիսեայ դիցն և Հերակղեայ, կատակերգելով զբարս նոցա. օրէն համարեալ ծաղը կացուցանել առաջի խաժամուժ ամբոխին զվատ և զապաժամանն յուլութիւն առաջնոյն, և զերկրորդին ամենածախս որ կորուստ։ Եւ յագուրդ քաղցի սորա Յպիքարմոս նկարագրէ մանրամասնաբար, և տայ ածելառաջի նորա 'ի սեղան զամենայն ազգի ազգի ձըկունս և զիսընջունիս, որ 'ի ժամանակին յայնմիկ ծանօթք էին։

Օնոյն կատականս 'ի կիր արկանէին և 'ի վէպս այլաբանականս. որպէս առ 'ի պանծացուցանել զբարեբաստութիւնս ոսկի դարուն, կէսք ասէին՝ թէ յերանաւէտ յայնմ դարու ոչ էին պէտք ստրկաց և գործաւորաց. գետք բղխէին իւղ և պարարտութիւն, ուղիք գինւոյ սեղային յերկնից. և մարդիկ ընդ հովանեաւ պտղոյն ծառոց բազմէին, և հաւք խորովեալք և համեմեալք շուրջ զնոքօք թեւածեալ ինդրէին 'ի բերան նոցա մտանել[2]։ Եւ այլ ոք անդուստ 'ի վերայ ածէր. Եկեսցէ դարձեալ ժամանակ, յորում հրամանն տաց սեղանոյ պատրաստել իւրովի և ապակեաց՝ զեղուլ ինձ գինի, և թերխորով ձկան 'ի միւսն կողմն դառնալ, և ձենձերիլ իւզաթուրմ[3]։

1 Արիստոփ. 'ի խաղաղ. գիրք Զ. էջ 268։ տող 740։ Պարապ. անդ։
2 Փերեկր. առ Աթեն. էջ 267։
3 Կրատին. առ Աթեն. էջ

Այդ զնկարագրութիւնս զայսոսիկ յանդիման առնէին վասն այնոցիկ 'ի քաղաքացոց, որ անձեռնհաք էին վայելել 'ի բերկրանս կենցաղոյս, և ախորժելի էր նոցա կարծել՝ զի չէին երբեւէն և չիցեն յետ ժամանակաց խափանեալ 'ի նոցանէ վայելչութիւնքն։ Զ. շնորհուկս նոցա դարձեալ և քերթողք ականաւորք տային գուսանաց իւրեանց մերթ անձահս զգենուլ և շարժել և խօսել, և մերթ թշնամանս դժնդակս ընդդէմ ոմանց բարբառել։

Տեսաք մեք կատակերգուս, որք խառն 'ի խուռն զծաղրածութիւնսն առնէին՝ ոչ զոք նըշաւակելով. իսկ այլք զծերութիւն ընդ յուռութեան և զվաստակս ընդ ծանկանս խառնակէին։ Լ ըտեաք յակումբս և չարախօսք 'ի տեսարանս գոլով, մանաւանդ զհամբաւ բարի չարասիրութեանէ ամբոխին, և նախանձու նորա զարութեաստութիւն՝ թէպէտ յիրաւի և թէ անիրաւութեամբ ժառանգեալ։ Ա. ոք 'ի քաղաքացոց, ոչ առագն և ոչ ռամիկ, զերծ էր 'ի հարուածոց նորա. մերթ յայտնի նշանօք ակնարկեալ, և յաճախ ևս յանուանէ նշաւակեալ կամ կերպարանաքն 'ի գիմակ կատակագուսանին տարաւորեալ։ Պահի մի 'ի կատակերգութեանց, յորում Տիմոկրէոնն ծաղր կացուցանէ զԹեմիստոկղ և զԱնտիդէս 'ի միասին՝. և այլ ևս յոլովք,

1 Սուիդ. 'ի բառն Τίμοκρ.

յոլս ծանակի Լպերբոզ ոմն լապտերապոծ՝ ոչ չարարուեստ հնարիւք ամբարձաւ յաւագութիւն՝։

Վերթողք երդիծանութեանցս այսոցիկ 'ի յագուրդ ատելութեան իւրեանց՝ ապաստան լինէին 'ի զրպարտութիւն, և առ 'ի հաճոյ լինել սինքքոր խուժանին՝ յանխնդիր զանս զաղիրս թշնամանաց։ Մոյնք 'ի ձեռին ընթանային ընդ ամենայն կարգս քաղաքայնոց, և 'ի շտեմարանս տանց մտեալ, խայտառակէին զգաղշելս՝ որոց զոյս երբէք չէր տեսեալ[1]։ Լչ մերթ սանձարձակք լինստասէրս, 'ի քերթողս ողբերգուս և յոսոխս իւրեանց յարձակէին։

Լչ քանզի խնստասէրքն անսիրեալ արարեալ արհամարհէին զյարձակմունս նոցա, փորձէցան կատակերգութիւն կոսկածելի զնոսա առնել ապաջի պետութեան, և ծաղր առաջի ռամկին։ Լյսպէս առաքինութիւն Սոկրատայ բազում անգամ զոհ 'ի տեսարանի մատուցաւ[2]. և Լքիստոփան 'ի միում ուրեք յիւրոց կատակերգութեանց ծաղր արար զկարգաւորութիւն ամենայարմար հասարակապետութեանն, զոր երկնեցին 'ի մտի Պլոտագորաս և Պլատոն՝։

Օգնու ժամանակաւ կատակերգուն ձգէր

1 Արիստոփ. յԱմպան, տող 552։
2 Արիստոփ. յԱպոկեստն, տող 1271։ Ոմքաս. գիրք Բ. Թղութ ա. տող 105։
3 Արիստոփ. յԱմպան։ Սենեկա յդ. Էրան. կենաց, գէ. 27։
4 Յիշատ. բանաս. կանաս. հա. 30. կէ 29։

յատեան իւր զամենեսին զպարապետսն յողբերգութիւն։ Մերթ ստուարացուցանէր զայրագին զթերութիւնս նոցա և զբերթուածոց նոցին, և մերթ հենգնէր զառնապէս զտաղաչափութիւն նոցա, զխորհուրդս և զիմաստս։ Եւրիպիդէս յամենայն կեանս իւր հալածեցաւ Արիստոփանեայ. և նոքին իսկ ունկնդիրքն պսակեցին զառաջնոյն ողբերգութիւնս, և զերիրորդին ստգտանս զնոցունց։

Դարձեալ և 'ի քերթողս՝ ոչք 'ի նմին ասպարիզի էին ընթացակիցք՝ զրգռէր նախանձ։ Արիստոփանեայ կշտամբեալ զգինեհարութիւն և ըզխօթանալ մնացն Կրատինեայ և զայլ թերութիւնս կցորդս ծերութեան[1], Կրատինոս 'ի վրէժ քինու նշաւակեաց զանապաղութիւն ոսոխին, և եցոյց զնա պաճուճեալ 'ի կասպտից Եւպոլեայ[2]։

Յայսքան պատերազմունս թշնամանադիրս բանասիրութեան, Կրատինոս երկնեաց 'ի մեի, և Արիստոփան կատարեաց զխորհուրդ նորա, ընդարձակել զսահմանս կատակերգութեան։ Արիստոփան ամբաստանեալ 'ի Արեոնէ՝ իբր յափշտակող կարգի քաղաքացւոյ, զՀոմերոսի զերկուս տողն 'ի դիմաց Տելեմաքեայ ասա-

[1] Արիստոփ. յԱքարն, տող 8։ Նոյն, յԻժան, տող 312։ Նոյն, յԱսպէտան։ Սուիդ. 'ի բառն Πάροδ.

[2] Արիստոփ. յԱսպէտան, տող 399։ Սուիդ. 'ի բառն Ἀφέλ

3 Պարապ. Արիստոփ. անդ, տող 328։

ցեալ ած 'ի պատասխանի, այսպէս դարձուցանե-
լով զայն 'ի ծաղր.

Վ ըկայէ մայրն իմ զի որդի եմ Փիլիպպեայ,
Ի՛ՀԼՆՃ չէ յայտ. և ո՞ գիտէ ո՛ ծնաւ ըզդայ՝։

Լ՛ այսու հնարիւք զկարգ քաղաքացւոյ ան-
կորուստ կալեալ, խորհէր հանապազ 'ի վրէժ-
խնդրութիւն։ Լ՛ հերակղեան արիութեամբ
խրախուսեալ, որպէս ինքն իսկ ասէ՝, արար ընդ-
դէմ Կրէտոնի քերթուած լի դառնութեամբ և
թշնամանաւք՝։ Լ՛ իբրև ոչ ոք 'ի ձեռագիտաց
իշխեաց կերտել զդիմակ առնն ահաւորի, և ոչ
'ի զուսանաց ոք առնուլ յանձն զդէմն նորա,
հարկ եղև քերթողին ելանել անձամբ 'ի տեսա-
րան՝ մերրով զդէմն պատուհանեալ՝, և յոյժ ու-
րախ եղև ընդ հարկանել ամբոխին զաղաղակ
ցնծութեան ընդ հէնան անողորմն՝ արձակեալս
'ի զօրագլուխն մեծարեալ 'ինմանէ, և ընդ դառն
թշնամանան՝ զոր 'ի նա ինքն ձգէր։

Հ՛ամարձակեցաւ նա յաջողութեամբ այսուիկ
զերս կարևորագոյնս աշխարհին այլաբանաբար 'ի
մէջ բերել։ Վ՛երթ ցուցանէր զկարևորութիւն
զրաւ առնելոյ բազմաժամանակեայ և աշխարհ-
աւեր մարտին՝, և մերթ զայրագներ ընդ կաշա-
ռակրծութիւն զօրավարաց, ընդ տարաձայնու-

1 Պրիմուա, յզ. թատեր. Ցուն. հտ. 5. էջ 267։
2 Արիստոփ. 'ի խաղաղ. տող 751։
3 Արիստոփ. յԱպաքեան։
4 Վարք Արիստոփ. էջ 13։ Պարապ. 'ի Նախագր. Ապաքեան. էջ 172։
5 Արիստոփ. յԱքարն. և 'ի խաղաղ. էջ 14։

թիւն աւագանւոյն, և ընդ խօթամտութիւն ռամկին 'ի խորհել և 'ի սահմանել։ Կալլիստրատոս և Փիլոնիդէս գուսանք ձեռնտու էին Ջանից նորա. յերևել առաջնոյն՝ յայտնի էր, զի 'ի յոռութիւնս իւրաքանչիւրոց ոմանց ակնարկէր կատակերգութիւնն. իսկ յերևել երկրորդին 'ի յոռութիւնս առաջնորդութեան իրաց աշխարհին։

Այլ ողջախոհագոյնք քրթմնջէին զնրացն, և էր զի յաջողէին իսկ ընդդէմ հնարից կատակերգութեան։ Յառաջնումն հրովարտակի արգելաւ՝ բնաւ իսկ չառնել ձևացութիւնս կատակերգականս[1], յերկրորդումն մի զոք յանուանէ նշանակել[2], և յերրորդումն մի զոք յաւագանւոյն ծանակել[3]։ Այլ 'ի հրովարտակաց աստի է որ խափանեցաւ, և է որ 'ի մոռացմանս արկաւ, զի թուէին հակառակք կարգի պետութեանն, և զի դարձեալ ոչ ևս մարթէր ժողովրդեան հրաժարել 'ի զբօսանաց տեսարանին՝ որ 'ի նշանակս նախանձու նորա ձգէր զամենայն թշնամանս և զզալիր խեղկատակութիւնս։

Ի վերջկոյս պեղոպոնեսական մարտին սակաւուց ոմանց 'ի քաղաքացոց կալեալ զիշխանութիւն աշխարհին, առաջին հոգ նոցա եղև սան-

1 Պարապ. Արիստոփ. ԱՆ. քարն, տող 67։

2 Նոյն անդ, տող 1149։ Նոյն 'ի Հաւան, տող 1297։

3 Նոյն անդ, ԱՄպան. տող 31։ Պեսիտ օր. առտիկ. էջ 79։

ձահարել զհամարձակութիւն քերթողաց, և հրաման տալ անարգելոցն 'ի նոցանէ ձգել զնոսա յատեան։ Հարկութիւն արանցս հզօրաց կերպարանափոխս արար անդէն զկատակերգութիւն. խափանեցաւ պարն, զի Ճոխք զարհուրեալ ոչ ևս յանձն առին զկարգաւորութիւն նորա և զծախս կարևորս. դադարեցին երգիծանք՝ ոչ ևս զոք յայտնապէս ծանակելով, և ոչ ընդդէմ աւագաց առնելով կշտամբանս, կամ զկերպարանս ուրուք 'ի դիմակս բերելով։ Հրիստոփան ինքնին գլխովին հնազանդեցաւ կարգացն 'ի յետին քերթութիւնս իւր'. և որք զհետն նորա յաջորդեցին, Հուբուղոս, Հնտիփանէս և այլք, մեծարեցին զօրէնս պատշաճիցն։ Հս աղէտք Հնաքսանդրիդեայ եղեն նոցա 'ի խրատ, ոչ ևս խստորելոց 'ի կարգաց անտի. քանզի խեղկատակեալ նորա զբան Հուրիպիդեայ՝ որ ասէ. Հնոռնիէանն հրամայէ, և ոչ ինչ ֆոյն է նմա զօրինաց մերոց. և ընդ Բնոռնիէանն փոխանակեալ զհայրենիս, դատապարտեցաւ 'ի սովալլուկ մահ[2]։

Հ սահման այսր ածեալ էր կատակերգութիւն, յորժամ էի ես Հաղադա։ Հվն որ տակաւին կատակերգէին զառասպելս և զպատմութիւնս, այլ բազմագոյնք նախամեծար առնէին

1 Արիստոփ. 'ի Պլուտ. 'ի Կոկալ. և յԵւոլոս։ Փարբիկ. մասենագ. Յուն. հտ. 1. էջ 710 և 713։

2 Պարնէս առ Փենիսս. տող 396։ Նոյն, 'ի վարս Եւրիպիդ. էջ 21։

զկեղծիս. և որպէս իմաստասէրքն խուզարկուք և հետազօտք բնութեան մարդկան, պարապէն 'ի կենակցութեան 'ի հաւաքել զտիպս սփիւռս, որք առ միմեանս ածեալ՝ կերպարանեն զմեծութիւն հոգւոյ կամ զփոքրոգութիւն, ըստ նոցին օրինակի և քերթողնկարագրէին անսահմանաբար զփնտասակարութիւնս իւրաքանչիւր ուրուք առ միաբանութիւն հասարակաց մարդկան, և զգործս նոցա՝ որ 'ի նախատինս են սմա։

Կատակերգութիւն զկերպարանս արուեստի առեալ էր, քանզի մարթէր իմաստասիրաց սահմանել զայն. զոր և կոչէին արուեստ 'ի դէմս բերելոյ զյառութիւնս, ոչ զամենայն անխտիր՝ այլ զծաղրականս [1]։ Այս յաւելուին՝ զի օրէն է նմա ըստ օրինակի ողբերգութեան յաւելուլ ստուգաբացուցանել զնկարագիրս, առ 'ի գործել զնոսա աղդողագոյնս [2]։

Յերևել դարձեալ պարուն, որ դուն ուրեք այնուհետև պատահէր, խառնէին որպէս երբեմն հանգիստք ընդ փոփոխմունս տեսարանին, և նուագք ընդ արտասանութեան։ Խակ առանց պարուն բնականագոյն ևս էր արարուածն և արագագոյն. գուսանք խօսէին 'ի լեզու, որ և փափկագոյն լսելեաց էր ախորժալուր. և ոչ ևս վէպք այլանդակք յանդիման առնէին աչաց զերամն թռչնոց և զպարս պիծակաց և նախիրս այլոց կենդանեաց։

[1] Արիստոտ. յղ. քերթ. դլ. 5. հա. 2. էջ 655։ [2] Նոյն անդ, դլ. 2. էջ 653։

դանեաց 'ի բնիկ կերպարանն։ Հետաղօտութիւնք լինէին հանապազօր մոլորութեանց մտաց և սրտի, և ոչ ևս պակասէր ինչ բայց հանձարն, որ յօգուտ 'ի կիր արկանէր զսխալանս առաջնոց և զարգեաց խելամտութիւնս *։

Լարտեալ զՀառս զարգացման ողբերգութիւն և կատակերգութեան, մնայ ինձ ասել և զքերթուածոյն՝ որ ընդ զգօնութիւն առաջնոյն և զերկրորդին խառն 'ի դէմս բերէ զզուարթութիւն '. որ և սա 'ի սպանդարամետական տօնսն ծնաւ։ Ի սմա պարք Աիղենայց և Սատիրայից խառնէին ծաղրածութիւնս ընդ երգսն, զորս նուագէին յօրհնութիւն Սպանդարամետին։ Ի յաջողութենէ սոցա սկիզբն էառ սատիրականն քերթութիւն, յորում վէպք և կարի խակ խանդաղատելիք խառն ընդ կատակերգութեան կազմեն զուարճախառն ողբերգութիւն [2]։

Լայց զանազանի յողբերգութենէ ըստ անհմանութեան դիմացն՝ զորս 'ի ներքս մուծանէ, ըստ անցիցն՝ որ չեն դժնդակք, ըստ յեղակարծ իմաստիցն և հանձարաբանութեանց և ծաղրածութեանց՝ որ կարևոր մասունք են նորա։ Զանազանի և 'ի կատակերգութենէ ըստ հանգամանաց առաջարկութեանն, ըստ վեհ կերպա-

* Մենանդր ծնաւ 'ի յեռին ամս դեգերելոյ Անաքսարսեայ 'ի Յունաստան։

1 Ովրատ. յղ. արհ. քերթ. տող 222։

2 Դեմետր. փաղեր. յղ. պերճախօս. գլ. 170։

բանաց բանիցն՝ որ երբէք երբէք կերպարանափոխ առնեն զտեսարանն [1], և ըստ զգուշութեանն չկծանելոյ զոք։ Օ անազանի դարձեալ յերկաքանչիւրոցն ըստ սեփական նմին չափոյ ոտիցն [2], ըստ պարզութեան վիպացն, և ըստ սահմանի տեսողութեանն արարուածոցն [3]. զի սատիրականն թատերգութիւն է քերթուած փոքրիկ կցորդեալ զհետ ողբերգութեան առ 'ի զբօսանս ունկընդրաց [4]։

Տեսարանն ընծայէ աչաց անտառս և լերինս և անձաւս և պէսպէս վայրս զուարճալիս [5]։ Իւրաքանչիւր ոք 'ի պարուէն ծպտեալ 'ի կերպ այլանդակ՝ յորս Սատիրայքն նոխազոտունք նկարագրին, մերթ կայթս տան աշխոյժս ոստոստելով [6], և մերթ զբուցատրեն ընդ դիս և ընդ դիւցազունս [7]. և յայլակերպութենէ խորհրդոց նոցա և իմաստից և բացատրութեանց գործին ներհակք չքնաղ և զարմանալի։

Լաբիղոս քաջ քան զամենեսին 'ի քերթութիւնս յայս գտաւ. Սոփոկղ և Լաբիպիդէս և նոքա յաջողեցան, այլ ոչ որպէս զԼքեոս [8] և ըզՀեգեմոն։ Վանզի սա նոր իմն գեղ 'ի սատի-

[1] Եւրիպ. 'ի Կիկղոպ։
[2] Մար. Վիկտորին. արհ. քերակ. գիրք Բ. էջ 2527։ Կասաւբ. յղ. երգիծ. գիրք Ա. գլ. 3. էջ 96։
[3] Եւրիպիդ. անդ։
[4] Ովիատ. յղ. արհ. քերթ. տող 220։ Դիոմեդ. յղ. Ճարտ. գիրք Գ. էջ 488։
[5] Վիտրուվ. յղ. Ճարտարապետ. գիրք Ե. գլ. 8։
[6] Ատենն. գիրք ԺԴ. էջ 630։
[7] Կասաւբ. անդ. գիրք Ա. գլ. 4. էջ 102։
[8] Մէնեդ. առ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 133։

բականն յաւել քերթուածին, շրջեալ 'ի ծաղրածուութիւն տեսիլ առ տեսիլ զամենայն ողբերգութիւնս ծանօթս[1]։ Ծաղրածութիւնքս այսոքիկ, կծանողք յոյժ նրբութիւք կատականացն, մեծաւ ծափաձայն դրուատեօք պատուեալ՝ յաճախ ևս պակեցան[2]։ Ի յանդիման առնել նորա զհոսկայամարան իւր, մինչ դեռ ամենեքին զքրքիջ բարձեալ ծիծաղէին, գուժկան եհաս պարտութեան բանակին 'ի Սիկիլիա։ Հեգեմոն կամեցաւ լուել. այլ աթենացիք անշարժք 'ի կայից իւրեանց, ծածկեցին ևեթ զերեսս իւրեանց հանդերձիւքն, և վայրիկ մի արտասուեալ զազգականս իւրեանց անկեալս 'ի մարտին, դարձան 'ի լուր քերթուածեանն ոչ ինչ նուազ մտադիւրութեամբ։ Այլ ապա 'ի լուծանել խաղուն, ասէին արարեալ զայն այնպէս՝ առ 'ի ծածկել զտկարութիւն իւրեանց և զսուգ առաջի օտարականաց, որ կային անդ 'ի զնին[3]։

## ԳԼՈՒԽ Հ.

Վասն որ ՅԱԹԷՆՍ հանդիպի սեսարանացն։

ՏԵՍԱՐԱՆ 'ի սկզբանէ փայտակերտ կազմեցան. այլ 'ի կործանել այնորիկ մինչ Պրատենայ

1 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 7. էջ 404։
2 ԱԹԷՆ. գիրք ԺԵ. էջ 609։
3 Նոյն, գիրք Թ. էջ 407։ Կատաւբ. ՅԱԹԷՆ. էջ 438։

նախնոյ քերթողի ողբերգութիւն ածէր անդ՝ի տեսիլ, քարակերտ այնուհետեւ կառուցին զայն, որ եւ կայ ցարդ՝ի հարաւային արեւելակողմն միջնաբերդին։ Լինի ստորագրել զայն կամիցիմ, ոչ տեսողացն եւ ոչ այնոցիկ որոց չիցէ զայն տեսեալ՝ հաճոյ գտայց. ապա տեղագրեմ եւ թէ զայն, յաւելեալ ինչ ինչ յասացեալքս յառաջագոյն* յաղագս քերթութեանցն ածելոյ՝ի տեսիլ։

Ա. Ի ժամ թատերախաղից ոչ ումեք օրէն էր կալ՝ի միջոց տեսարանին՝ի գետնի՝. զի եթէ ոչ դատարկ էր՝ի սպառ միջոցն այն՝ աղօտ հասանէին ձայնք՝ի լսելիս, վկայեալ՝ի փարձոյ[1]։

Բ. Դաշք տեսարանին որոշին յերկուս մասունս. ՝ի բարձուն կան գուսանք, եւ՝ի խոնարհագունին պարն սովոր է կալ։ Խոնարհագոյնն՝ի տանել մինչեւ ցերկոտասան ոտնաչափ ամբառնայ յերկրէ, ուստի ընդ աստիճանս են անդր ելք[2]։ Պարուն կալով անդ, գիւրին է՝ի գուսանս եւ՝ի հանդիսատեսս դառնալ[3]։

Գ. Լաւ վասն զի ոչ է տեսարանն յարկածածուկ, պատահէ անձրեւոյ ստիպել զհանդիսատեսս պատսպարել՝ի կամարակապս կամ՝ի շի-

* Ի ԺԱ. գլուխ դրոցս։

1 Վիթրուվ. գիրք Ե. գլ. 6 և 8։

2 Արիստոտ. առաջարկ. յօգ. 11. յօգ. 25. հա. 2. էջ 73։ Պլին. գիրք ԺԱ. գլ. 51. էջ 643։

3 Պղատ. ՝ի խրախճ. հա. 3. էջ 194։ Պլուտ. ՝ի Դեմեթր. հա. 1. էջ 905։ Պոլիւկ. գիրք Դ. գլ. 19. յօգ. 127։

4 Պարտզ. Արիստոտ. ՝ի նախագր. Ամպոցն, էջ 50։

նուաճս աշխարհանուա՝ որ մերձ անդր կան [1]։

Դ. Յընդարձակատարը տեսարանին առնին յաճախ վերնք քերթողաց և երաժշտաց կամ կաքաւաց, որ կցորդք են մեծահանդէս տօնից։ Լաւ թէպէտ փառաց այն սահմանեալ է տեղւոյ, այլ ի նմին ի միում աւուր զհետ մեկ յողբերգութեանցն Լաբիպիդեայ ի տեսիլ ածան անդ խաղալիք լարախիլք [2]։

Ողբերգութիւնք և կատակերգութիւնք ոչ միշտ ածին ի տեսիլ, այլ յերիս տօնս եւեթ ըստ պանդարամետականս [3]։ Յորոց առաջինն կատարի ի Պիրէոն, ուր նախ հանդիսացան ողբերգութիւնք Լաբիպիդեայ [4]։ Լրկրորդն՝ որ կոչի բաժակեան կամ հնձանեան՝ հանդիպի յերկոտասանեարորդ օր անթեստերիոնի ամսեան [5], և տեւէ ոչ ինչ աւելի քան զօր մի [6]։ Այլ քանզի բնակաց եւեթ ատտիկատան աշխարհին օրէն է կալ ի զնին հանդիսին [7], պահէն բանաստեղծք զքերթածս իւրեանց ի հանդէս աւագ տօնիցն սպանդարամետականաց՝ որ հասանեն յետ ամ սոյ միոյ, և յորս դիմեն յամենայն կողմանց խուռն բազմաւ ի զնին։ Յերկոտասանեարորդում աւուր

[1] Վ Խարուվ. գիրք Ե. գլ. 9. էջ 92։

[2] Ա.Թեն. գիրք Է. գլ. 17. էջ 19։ Կասաւբ. անդ։

[3] Դիոնոսի ի Մեկ. էջ 604։

[4] Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 13։

[5] Սիկիլն ամսոյս հանդիպ. պէս երբեմն ի վերջ կոյս յուռնուաթի, և յաճախ ևս յառաջին աւուրս փետրուարի։ (Տասուել յոլ. ջրջանաց։)

[6] Յիշատ. բանաս. կանոնաս. հտ. 39. էջ 174։

[7] Ուրիսաոգի. ՅԱքարն. տող 503։

ամենեան Եբրեբողինի սկսանին տունքն *, և տևեն զաւուրս բազում. յորս քերթուածինքն՝ սահմանեալք 'ի հանդէս մրցանակին, ածին 'ի տեսիլ [2]։

Պաժուարագոյն յոյժ քան այժմն էր երբեմն յաղթութիւն։ Խրաքանչիւր ոք 'ի քերթողաց ածէր ընդդէմ ոսոխին ողբերգութիւնս երիս, և քերթուած մի փոքրիկ սատիրական։ Սոքիմբք մեծամեծ զօրութեամբք մղեցան մարտքն հռչակաւորք. յորս Պրատինաս յաղթեաց Պրերիդեայ [3], Սոփոկղ Լաբիդեայ [5], Փիլոկղէս Սոփոկղի [4], Լուփորին դարձեալ Սոփոկղի և Լուրիպիդեայ [5], Լուրիպիդէս Յոփոնի և Յոնի [6], և Պրոսենոկղէս Լուրիպիդեայ [7]։

Բանդեն զի 'ի ժամանակին յայնմիկ զողբերգակ քերթողացն, որպէս այժմ զՀարաւարախօսաց, ըստ թուոյ ոսոխացն զչափ ժամանակի սահմանէր կաթուած ջրոյ հոսելոյ ընդ ջրգողն անուանեալ գործի [8]։ Լցէ այս որպէս և է, բայց Սոփոկղի խոնջեալ 'ի պատրաստութենէ բազմա-

* Սկիզբն ամսոյս գուն ուրեք հանդիպէր 'ի վերջ կոյս փետրուարի, այլ գրեթէ միշտ յառաջինն աւուրս մարտի։ (Տ. տուէէ յդ. ջրջանաց։)

1 Յիշատ. բանաս. կանոնս. հտ. 39. էջ 178։

2 Սուիդ. 'ի բառն Πρατίν.

3 Պլուտ. 'ի Կիմ. հտ. 1. էջ 483։

4 Դիկիէարք. առ Պարարոյ. Նախագր. Եգիպ։ Արիստիդ. Ճարտ. հտ. 3. էջ 422։

5 Նախագր. Մեդ. Եւրիպիդ. էջ 74։

6 Նախագր. Խոլոզ. Եւրիպիդ. էջ 216։

7 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 8։

8 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 7. հտ. 2. էջ 658։

պատիկ հնարից յաղթութեան, փորձ փորձեաց մատուցանել միակ քերթուած 'ի հանդէս[1]. և սովորութիւնս այս պահեալ 'ի սկզբանէ հետէ 'ի մրցանակ կատակերգութեան, եմուտ տակաւ և 'ի հանդէս ողբերգութեան։

Ի տոնս առօրեայս ածին արդ 'ի տեսարան հինգ կամ վեց քերթուածք ողբերգականք կամ կատակերգականք. այլ յաւագ տոնսն սպանդարամատակաս որ տուէն զաւուրս բաղումս՝ ածին երկոտասան կամ հնգետասան, և մերթ աւելի ևս քերթուածք[2]։ Ա՝ աղքաջ ընդ առաւօտն ըստ կրսանի տեսարանն[3], և է զի տուէ զօրն 'ի բուն։ Ուրաջնումն յինունց իշխանացն անկ է տեսանել նախ զքերթածս, և ընդունել զայնոսիկ 'ի գուպար մրցանակին կամ մերժել 'ի բաց։ Վերթողք հետևակք խնդրեն զպաշտպանութիւն նորա. և 'ի հանդիպել խնդրոյն, ընուն խնդութեամբ[4]. իսկ մերժեալքն արձանագիրս ընդդէմ նորա առնելով սփոփին, կամ մնասանդ օրինակաւն Սոփոկլի՝ որ մերժեցաւ 'ի գուպարէն, յոր մի ոմն 'ի հետևակ քերթողաց ժամանակին ընկալեալ էր[5]։

Ոչ բազմամբոխ ժողովոյն է սահմանել ըզմրցանակն, այլ աւագանին վերակացու տոնիցն

1 Սոփոկ. 'ի բառն Σοφοκλ.
2 Յիշատ. բանաս. կածառ. հա. 39. էջ 182։
3 Դեմետրիոս. յիշատ. գիրք Ե՝. էջ 825։ Եպրին. 'ի կոնսիսիս. էջ 400։
4 Արիստոտ. 'ի Գրրտս, տող 94։
5 Հիւսիք. 'ի բառն Πυρπερ. Կրասին. առ Աթեն. գիրք ԺԳ. գլ. 9. էջ 638։

տայ ընտրել վիճակաւ դատաւորս ոմանս *, որք երդնուն դատել անաչառապէս [1]։ Յայլ ազգն ժամ պարապոյ խնդրեն կուսակիցք և ոսոխք քերթողն, և ամբոխն յուզեալ 'ի նոցանէ՝ կանխէ երբեմն առնել դատաստան, և զայրագին ընդդէմ դառնայ ընտրութեան նորոյ ատենին, կամ բռնադատէ զդատաւորս 'ի հաստատել զվճիռ իւր [2]։

Ինդ անուան յաղթողին հրատարակին և անուանք երկուց յոսոխացն, որ մերձաւորագոյնք 'ի յաղթութիւն գտանին [3]։ Իսկ յաղթողն պատուեալ 'ի տեսարանին ծափաձայն դրուատեօք՝ զոր մերձ 'ի վախճան քերթուածոյն թախանձէ պարն [4], բազում այն է՝ զի ուղեկցութեամբ բազմաց 'ի տեսողացն դառնայ 'ի տուն [5], և ըստ յաճախ սովորութեան՝ առնէ խնջոյս բարեկամաց իւրոց [6]։

Ել է օրէն քերթուածոյ յետ միանգամ յաղթութեան անցանել 'ի գուպար. և ոչ պարտեալսն՝ առանց բազում փոփոխութեանց [7]։ Հա-

* Անհնարին եղև ինձ դատնել հաւասատեաւ զթիւ դատաւորացն. ուրեք հինգ, ուրեք եօթն, և է ուրեք՝ զի աւելի ևս դատանի թիւ նոցա։

1 Պլուտ. 'ի Կիմ. հտ. 1. էջ 483։ Պարապ. Արիստոտ. 'ի Հաւան, տող 445։

2 Պլուտ. անդ։ Եղիան. ընն. պատմ. գիրք Բ. գլ. 13։

3 Պարապ. 'ի վարս Սոփոկ.

ղն։ Նախագր. կատակերգ. Արիստոտ։

4 Երբիպիդ. Ովիդեան. Փենիս։ Խիթ. 'ի Տաւր։

5 Պլուտ. յզ. Ծերոյ տրնտեսեալ զհատ. հտ. 2. էջ 785։

6 Պլատ. 'ի խրախճ. հտ. 3. էջ 173 և 174։

7 Արիստոտ. յՀանդն, տող 546։

կառակ այսմ սահմանի հրամարտակ իմն ժողովրդեան վաղեմի հրամանն տայր քերթողաց գուսանաբել միով յողբերգութեանցն Լաբիղեայ, յԸղկեալ զայն և փոփոխեալ՝ որպէս իւրաքանչիւր հաճոյ թուէր. և յաջողեցան այսու օրինակաւ յաղթութիւնք բազումք[1]։ Ուստի համարձակութիւն առեալ Արիստոփանեայ խնդրեաց և ընկալաւ զպատիւ միւսանգամ ածելոյ 'ի գուսան զմի 'ի պակեղոց քերթութեանցն[2]։ Եւ ասպա ընդ քերթութիւնս Լաբիղեայ յաւելան և քերթուածք Սոփոկղի և Եւրիպիդեայ[3]. և վասն զի գերազանցութիւն նոցա օր ըստ օրէ յայտնագոյն երևեալ՝ 'ի բաց կացուցանէր զբազումն 'ի գուսարելոց։ Իկուրգոս Հարտարախօս 'ի մեկնութիւնսն 'ի քաղաքէն աթենացւոց խորհէր առաջարկել ժողովրդեան զիստիանուն այնոցիկ 'ի տեսարանի, և զհարազատ օրինակս նոցա պահեալ յաւանդի՝ ամի ամի վերծանել զնոսա 'ի լուր հասարակաց, և կանգնել քերթողաց նոցին անդրիս[4]։

Երկու ազգք են գուսանաց. կիսոց գործ է զկարգ արարուածոյն յառաջ ածել, և կէսք պարուն են յօրինիչք։ Ու 'ի քաջահմուտ զընթեր-

1 Կուբնիկ. կարգագր. գիրք ժ. գլ. 1. էջ 632։ Փիլոսոր. վարք Ասպազն. գիրք Զ. գլ. 11. էջ 245։

2 Դիկեարք. առ Պարապ. Արիստոփ. 'ի նախագր. Գարտոցն, էջ 115։

3 Դեմոսթ. յՂ. վրէպ հրբեշտ. էջ 331։

4 Պլուտ. 'ի տան Հարտարախօս. հտ. 2. էջ 841։

ցողս առնել նոցին ընդ միմեանս գործակցութեան աւասիկ զլաժանման քերթուածեանցն զդեմ զհամառօտագիծ պատկեր։

Լաց 'ի կարեւորագոյն մասանց թատերախաղից, որ են վէպք, բարք, ասացուածն, իմաստք, երաժշտութիւն և տեսարան[1], նկատելի է 'ի նոսա և զնմանունս ընդարձակութեանն՝ որ են նախերգանք, դրուագ, երգ և պար[2]։

Նախերգանքն սկսանին ընդ քերթուածոյն, և դադարեն յառաջին հանգիստն։ Դրուագն բաղումն է՝ զի յառաջին հանգստանէ մինչ 'ի վերջին ձգի։ Լակ երգն բովանդակեն զամենայն, որ ինչ զկնի վերջին հանգստեանն[3]։ Յառաջնումն 'ի մասանց ասի բացատրին վէպքն, և սկսանի երբեմն կնճիռն, յերկրորդումն 'ի յայտ գայ արարուածն, և յերրորդումն լուծանի կնճիռն։ Ոչիք ինչ մասանցս այսոցիկ ընդ միմեանս համեմատութիւն. զի Սոփոկղի Օդիպսան 'ի Կողմնէ ունի տողս հազար ութհարիւր վեթսունեւերկու, և նախերգանք նորա ոչ ինչ աւելի են քան զեօթն հարիւր տողս[4]։

Եւ երբէք անմարդի մեայ տեսարանն։ Լ՝ զի անդէն 'ի սկզբան երևի պարն, և է զի յետոյ. այլ 'ի յետոյ երևելն՝ հարկ է նմա պատճառաւ

[1] Արիստոտ. յղ. քերթ. տոփ. էջ 14։ հա. 2. դլ. 6. էջ 656։

[2] Նոյն անդ, դլ. 12. էջ 669։ Պարապ. վարք Արիստ. տես. 3 Արիստոտ. անդ։

[4] Պլուտ. յղ. Ծերոյ տրն. տեսել զհնս. հա. 2. էջ 785։

ինչ 'ի ներքս մտանել, և մի ելանել վայրապար, և մի ելանելն յամել արտաքոյ։

Բարուածն հիւսս իմն տեսլեանց յանդիման առնել, խառն ընդ հանդիստս՝ որոց թիւ ըստ հաշոյս քերթողին սահմանի։ Բազմանդ 'ի քերթուածոց ջրոք հանդիստք են[1], այլոց հինգ[2], և այլոց դարձեալ վեց[3]։ Յեկովբէն Եւրիպիդեայ[4], և Ալչեկտրայն Սոփոկղի երիս ևեթ գտանեմ հանդիստս, Յովեստէսն առաջնոյն երկուս միայն, և 'ի Փիլոկտետն երկրորդին միակ[5]։ Ոչ միշտ հաւասար են որ ընդ երկուս հանդիստս միջոցքն, կիսոց տեսիլս բազումն և այլոց միակ բերելով տեսիլ։ Որովք յայտ է զի բաժանումն քերթուածեանցն և կարգաւորութիւն մտանց նոցա 'ի կամն ևեթ քերթողին է ապաստան։

Հանգստեանցն ընդիկ նշանակ այն է, ուր պարակիցք երգեն միահամուռ[6], և համարին միայնակք. զի թէպէտ և 'ի գուսանաց ոք նախորդ տեսլեանն ըստ դիպուածոյ իմն գտցի անդ յայնժամ, ոչ երբեք ոչ բարբառին առ նա, և ոչ առնուն 'ի նմանէ պատասխանի։

Պարակիցք ըստ պատշաճի իրացն ընտրին արք կամ կանայք, ծերք կամ տղայք, քաղաքացիք

1 Եւրիպ. յԻպպոլ։
2 Նոյն, 'ի Փենիս. տող 210։ Նոյն, 'ի Մեդ. տող 410։
3 Սոփոկղ. յԱնտիգ. տող 100, 338, 588 և 1127։
4 Եւրիպիդ. յԵկովբ. տող 444, 629 և 905։
5 Սոփոկղ. 'ի Փիլոկտ. տող 686։
6 Արիստոտ. յղ. քերթ. հտ. 2. գլ. 12. էջ 661։

կամ ստորուկք, քուրմք, զօրականք, այլովքն հան-
դերձ. այլ թիւ նոցա յողբերգութիւնս է միշտ
հնգետասան, իսկ 'ի կատակերգութիւնս քսանև-
չորք [1]. և են միշտ ստորագոյնք կարգաւ քան
զգէլսաւոր դէմն քերթուածոյն։ Այս զի յաճախ
զդէմն ժողովրդեան առնու պարն և կամ զմա-
սանց նորա, արդեալ է օտարաց բնակացելոց
իսկ յԱթենս՝ խառնել ընդ պարակիցս [2], նովին
իսկ պատճառաւ՝ որով խափանեալ է նոցա չը-
մնանել 'ի համախումբ ժողովս ազգին։

Պարակիցք մնանեն 'ի տեսարանն, կարապետ
առաջի ունելով՝ որ 'ի ձայն սրնգի ուղղէ զգնացս
նոցա [3]։ Մերթ զհետ միմեանց միրստիոջէ մնա-
նեն, և յաճախ եւս երեք առ երի և հինգ զկնի
միմեանց, կամ հինգ առ երի և երեք զհետ մի-
մեանց յողբերգութիւնս. իսկ 'ի կատակերգու-
թիւնս չորք առ երի և վեց զհետ միմեանց կամ
ընդ հակառակն [4]։

Յընթացս քերթուածոյն պարն մերթ զգու-
սանաց պաշտէ զգործ, և մերթ զհանդիստն
գործէ։ Ուաջնոյն խառնեալ յարարուածն, նուա-
զէ կամ արտասանէ ընդ գուսանս, պարապե-
տին բերելով զարարաւ [5]։ Այս է զի երկգնդեալ,

1 Պողխակ. գիրք Դ. գլ. 15. յօդ. 108։ Պարապ. Ա-
րիստոտ. ԱՌաքն. տող 210։
2 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 612։ Պլուտ. 'ի Փոկիոն, հա-
1. էջ 755։
3 Պարապ. Արիստոտ. յիժան, տող 580։
4 Պողխակ. անդ, յօդ. 109։
5 Եվեկոյս մատենիս 'ի տե-
ղեկութիւնսն. Թիւ Է։

յերկուց վարի պարագլխաց՝ որք զՀանգամանս ինչ արարուածոյն առնեն մանրապատում, կամ զերկիւղ իւրեանց և կամ զյոյս ազգեն միմեանց[1]. և տեսիլքս այսոքիկ, գրեթէ միշտ նուագաւորք, յանկին երբեմն 'ի վերստին երգակցութիւն երկուց խմբիցն[2]։ Լսակ 'ի Հանգիստսն ողբայ զթշուառութիւն մարդկան, և կարդայ զգիս յօդնականութիւն նոցին՝ ընդ որս կարեկցի։

Դ. Սուն ուրեք 'ի տեսիլս պարն տեղափոխեալ. այլ 'ի Հանգիստս, և մանաւանդ յառաջնումն, պէսպէս շրջանս առնու 'ի ձայն սրնգի։ Ցաղք զորս նուագէ՝ են որպէս զերգս յօրինեալս 'ի կցուրդ, 'ի փոխ անդրադարձ 'ի վերերգ, այլոլիքն Հանդերձ մասամբք։ Փոխք իւրաքանչիւր անդրադարձք յար և նման են կցրդիցն չափով և թուով տողիցն և եղանակաւ երգոյն։ Պարագկիցք յառաջնումն կցրդի շարժին յաջմէ 'ի ձախ, և յանդրադարձ նորին փոխն՝ 'ի ձախմէ յաջ, 'ի նոյն չափ ժամանակի այլովք բառիւք գնոյն կրկնելով զեղանակ[3]։ Լսպա զկայ առնուն. և դարձեալ յունկնդիրս. փոխեն զեղանակն։ Լսազում այն է՝ զի գնոյն շրջանս վերստին գործեն, փոփխութեամբ բառից և եղանակի երգոյն՝ յար և նման 'ի Ձեռն և 'ի դարձ։ Լսստանօր զյաձախեալն առաջի առնեմ սովորութեան. զի յայսմ մա-

1 Եպիֆ. յեսթանան ընդդ. թեր. տող 875։ Պողոսեկ. դիրք Դ. գլ. 15. յօդ. 106։

2 Սոփոկլ. յԱյաս, տող 877։

3 Նախագր. Պարագ. 'ի Պինդ։ Սուագաւոր. մասեան 'ի բառն Προσῳδ.

սին առաւելապէս հանդէս առնեն քերթողք այ-
լակերպութեան չափոյ տաղերցն և նեղդաշնա-
կութեան։

Յողբերգութիւնս իւրաքանչիւր երից գուսա-
նաց պէտք են, առ 'ի բերել զերիս աւագագոյն
դէմս։ Պէտք է ասուրն յինունց իշխանաց տալ ընտրել
զնոսա վիճակաւ, և մատուցանել նոցա զքերթուա-
ծքն արտասանելիս։ Ոչ է օրէն քերթողին ընտրել
զնոսա, բայց միայն 'ի քերթուածս՝ որ յառաջա-
գոյն յայլ տոնս պատկեալ իցեն[1]։

Ուրեք զինոյն գուսանք ընտրին յողբերգու-
թիւնս և 'ի կատակերգութիւնս[2]. այլ դուն ու-
րեք որ յերկոսին և ս քաջ գտանի[3]։ Ոչ է հարկ
ասել՝ զի էր որ յառաջին դէմն պայծառանայր
յողբերգութիւնս, և էր որ 'ի վերջն զերրորդն
չժամանէր[4]. և զի դարձեալ էն դէմքն՝ առ որս
աւելի քան զսովորականն խնդրի զօրութիւն, որ-
պէս առ 'ի կերպարանել զմոլեգնութիւն Այասայ[5]։
Կէսք 'ի գուսանաց, առ 'ի կորովի և դիւրաղարձ
կազմել զմարմին իւրեանց, կրթին յասպարիսի
ընդ մանկտին յրմբշամարտս[6]. և կէսք կեան 'ի
խիստ զգուշութեան՝ ժուժկալեալք 'ի կերակրոց,
առ անաղօտ և քաջահնչող ունելոյ զձարբառ[7]։

1 Հիւսիք. և Սուիդ. 'ի բառն Νέμητι.
2 Ուշպան. 'ի Դեմոսթ. էջ 653։
3 Պլատ. յդ. հաս. գիրք Գ. հտ. 2. էջ 395։
4 Դեմոսթեն. յդ. վերկ հտ. 2. էջ 665։
5 Պարսպ. Սոփոկլ. յԷաս. տող 875։
6 Կիկերո. Տարտ. գլ. 4.
7 Պլատ. յդ. հաս. գիրք Գ. հտ. 1. էջ 423։
7 Պլատ. յդ. օր. գիրք Գ.

Վարձք մեծամեծք յոյժ հատուցանին գուսանաց հուչակաւորաց. տեսի ես զՊող գուսան, զի քանքար մի յաւուրս երկուս շահեցաւ՝. և սահմանին նոցա վարձք ըստ թուոյ քերթուածեանցն զոր արտասանեն։ Ի պայծառանալ նոցա յաթենական տեսարանին, խնդրին այնուհետև՝ ի գլխաւոր քաղաքս Լչլադայ։ Հրաւիրեալք՝ ի նոցանէ՝ ի պայծառութի տօնիցն, ի դրժել խոստմանն իւրեանց զոր տան գրով, տուժին զգուսմար արծաթոյն դաշնադրեալ՝ ի մուրհակին[1]։ Վարձեալ և՝ ի հայրենեացն դատապարտին՝ ի տուգանս ծանուցեալ, եթէ յաւուրս տօնից բնիկ աշխարհին մեկնին անտի՝ ի բաց[2]։

Բազմաջնուին՝ ի գուսանաց պարտ է երևելի լինել քան զայլսն երկոսին, մնանաւանդ քան զերրորդն՝ զոր ինքն՝ ի վարձու ունի. որպէս զի թէ պէտ և նոքա պերճանայնք իցեն՝ զգուշութեամբ պարտին զեղգեղել զբարբառ իւրեանց, զի մի նորայն նսեմասցի՝։ Լաւոդորոս, որ յաւուրս իմ զառաջին դէմն բերէր միշտ՝ ի տեսարանի, հնեբեր երբէք երկուցն այլոց ստորակայից գուսանաց բարբառել նախ քան զինքն, և ձգել յիւրեանս զունկնդիրսն[3]։ Բայց միայն յորժամ թողոյր երրորդին զդէմն գլխաւորի ուրուք, որպէս զթագաւ-

1 Պլուտ. ի տան Ճարտարարեսաս, հա. 2. էջ 848։
2 Էպիֆն. յդ. վրէպ հրեշտ. էջ 398։
3 Պլուտ. յԱղէքս. հա. 1. էջ 681։
4 Պիկեր. յդ. ըղձ. գէ. 15. հա. 4. էջ 125։
5 Արիստոտ. յդ. հաս. գիրք Ի. գէ. 17. հա. 2. էջ 449։

ւորի[1], յայնժամ զնախասպատուութիւնն անտես առնէր։

Ոգբերգութիւն գրեթէ միշտ զմեծավերջն 'ի կիր արկանէ չափ տաղի, գոգցես իմն թելադրեալ 'ի բնութենէ՝ որ 'ի խօսակցութիւնս կազմէ զայն յաճախ[2]։ Այլ 'ի պարս ընդունի զբազմագոյնս 'ի չափուց, որովք քնարերգականն պերճանայ քերթութիւն։ Այլ ոչ միայն զանազանութեամբս այսուիկ չափուց սթափի անդադար ուշ ունկնդրին, այլ և այլակերպութեամբ հնչման բառիցն՝ յորոց կէսք նուագին և կէսք պատասանին։ Նուագին 'ի հանդիսատս, և պատասանին 'ի փոփոխմունս տեսլեանց յորժամ՝ պարն լուէ. զի խօսակցել նորա ընդ գուսանս, կամ պարագլուխն պատասանէ ընդ նոսա, և կամ նոքա երգակցին փոփոխս ընդ պարուն[3]։

Ալինգ 'ի նուագսն ուղղիչ է ձայնի, իսկ յարտասանութիւնսն քնար՝ չթողլով նմա անկանել, և զաստիճանսն ազդելով նմա կարգաւ զքառեակսն, զհնգեակսն և զութեակ*. զի սոքա են համաձայնութիւնք յաճախեալք 'ի բարձրապատում և յընտանի զրուցատրութիւնս**։ Այց

1 Դեմոսթ. յդ. վրէպ հերեշա. էջ 331։

2 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 4. հտ. 2. էջ 655։ Ովիդիոս. յդ. արհ. քերթ. տող 81։

3 Եպիդ. յԱդամ. տող 1162։ Ղուկիան. յդ. պարու, յոդ. 27. հտ. 2։

* Ա յս էր, որպէս ինձթուի, անուանեալ քնարն հերմեան։ Տես 'ի գիրս Ռուսիէի յաղագս նախնեաց երաժշտութեան. էջ 11։

** Յեռակոյս մատենիս 'ի սակրկութիւնսն. թիւ Ը։

'ի նուաՀել անդ ՀայնմԻն 'ի պատշաՀ աստիՀանն, ազատի 'ի խիստ օրինաց չափոյ '. և մարթ է գուսանին Հանդարտել կամ արագել զարտասանութիւնն։

Իսկ յեղանակ երգոցն խստիւ երբեմն ամենայն օրէնք պահէին. այլ արդ ոչորակին և ամենակին եղծանին օրէնք անպատուհաս[2]։ Բ. 'ի զգուշութիւն այլոցն, 'ի չժամանել քերթողին, պարագլուխն[3] մարդէ ընդերկար զգուսանս նախ քան զքերթութեանն ածել 'ի տեսիլ, և նա ինքն զչափսն ազդէ ոտիւք և ձեռօք և այլ ևս օրինակօք 'ուղղելով զշարժմունս պարաւորացն՝ որ ուշ եղեալ դիտեն զայն ամենայն ազդմունս[5]։

Պարոն դիւրագոյն ևս է քան միոյ ուրուք ձայնի պահել զչափս. այլ եղանակք ինչ, որոց աշխոյժք ոչ 'ի ՀնՀ դան պարզ և Հանդարտ բնութեան պարաւորացն, ոչ երբեք նուագին 'ի նացանել[6], այլ պահին աւագ որերոյն։

Յերաժշտութենէ տեսարանին 'ի բաց մերժեալ են ամենայն ազգ նուագաց, որք ընդ քաւորդ աստիՀանի կամ ընդ բազում կիսաձայնս յառաջ խաղան, զի չեն արիականք կամ դիւրա-

1 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 6. հա. 2. էջ 656։ Պլատ. յդ. երաժշտ. հա. 2. էջ 1137։

2 Դիոնիս. Հալիկ. յդ. շարագրք. բառից, յօդ. 11. հա. 5. էջ 63։

3 Պլատ. յդ. օր. գիրք Է.

Հա. 2. էջ 812։ Դեմոսթ. 'ի Միդ. էջ 612։

4 Յիշատ. բանաս. կաՀաս. Հա. 5. էջ 160։

5 Արիստոտ. առաջարկ. յօդ. 22. հա. 2. էջ 765։

6 Նոյն անդ, էջ 770։

նուագելիք[1]. և երգոյն կարապետ, որ կամ երգուք ոմանք 'ի նուագ սրնգի[2]։

Պարտ է պարագլխին ոչ միայն զձայնս պարաւորացն կրթել, այլ և վարժել զնոսա յերկեակ ազգս կաքաւուց։ Որ է բուն կաքաւն, զոր պաքաւորք 'ի քերթուածս ինչ և 'ի դէպս ուրեք յօրինեն. որպէս յորժամ աւետիք բարեաց յորդորեն զնս 'ի հրճուանս ցնծութեան[3]։ Եակ միւսն անագան ուրեմն մուծաւ յողբերգութիւն[4], և ուղղեալ զշարժմունս և զակէսպէս ձևս մարմնոյ[5], նկարագրէ Աշխարհիս քան զմիւսն զգործս, զբարս և զկիրս[6]։ Զան զամենայն նմանութիւնս ազգազագոյն իցէ սա. զի Աստուածաբանութիւն նորա աբաղ ոչ տկարանայ բառիւք, բացատրէ զամենայն՝ տալով զամենայն 'ի միտ առնուլ, և ոչ միայն շարժէ զսիրտ՝ այլ և խելամուտ առնէ ըզմիտս։ Զոր Հոյնք, կաղմք և ժամանք 'ի յաձախել զՀնարս հրապուրանաց, ոչ ինչ անտես արարին 'ի կատարելագործել զբարբառս զայս բնութեան։ Զ նոսա երաժշտութիւն և բանաստեղծութիւն օգնին միտ 'ի շարժուածոց զուսանաց. և յայնպիսի եռանդուն և համոզող շարժուածոց՝ որ կենդանացուցանէ զՀառս Աստուածաբանաց[7], է

1 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1137։

2 Եղիան. կենդանաբ. գիրք ԺԵ գլ. 5.

3 Սոփոկլ. յԷսա, տող 702. 'ի Տրաքին. տող. 220։

4 Արիստոտ. Աստուա. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 583։

5 Պլուտ. յղ. օր. գիրք Է. հտ. 2. էջ 816։

6 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 1. հտ. 2. էջ 652։

7 Պլուտ. 'ի Դեմոսթ. հտ. 1. էջ 851։ Նոյն. 'ի տասն Աստուածաբանս, հտ. 2. էջ 845։

ուրեք՝ զի և զխրատս իմաստասիրաց[1]։ Հռչակին դեռ և ես անուանք քերթողայն և երաժշտաց, որք նորանոր ձևս յաւելին յայն. և խելամտութիւք նոցա հնարեցին արուեստ իմն, որ կարի յաջողութեամբն և ի զեղծաւ։

Այս քանզի կաբաւս այս, հանդոյն ներդաշնակութեան երգոց[2], է կցորդութիւն իմն յարմարաւոր շարժմանց և երկար հանգստեանց, հարկ է նմա զանազանել ըստ ազգի ազգի թատերգութեանցն[3]։ Պարտ է նմա յողբերգութեան 'ի դէմն ածել զհոգիս անյողդողդս 'ի կրից, 'ի բարեբաստութենէ և 'ի թշուառութենէ շքով և արիութեամբ՝ որ վեհ նկարագրին նոցա 'ի ձահ գան[4]։ Պարտ է նմա 'ի ձևս գուսանաց տալ անդրիագործաց նախատիպս՝ 'ի նոյն գեղեցիկ կերպ զանդրիսն ձևացուցանելոյ[5], և յարմարել զշրջանս պարուն ըստ կարգի և ըստ հրահանգաց պատերազմական ջուց[6]։ և համառօտ ասացեալ, գումարել զամենայն արտաքին նշանս 'ի նոյն ուշ նպատակի յուզելոյ զկիրս այնու ձևարտարութեամբ, զի ոչ ինչ նուազ պարարիցին 'ի նոսա աչք քան զլսելիս։

Բայց խելամուտ էին նախնիք յարմարու-

1 ԱԹԷՆ· գիրք Ա· գլ· 17· էջ 21։
2 Պլատ. խրախճ· գիրք Թ· ինգ· 15· հա· 2· էջ 747։
3 ԱԹԷՆ· գիրք Ա· գլ· 17· էջ 20։ Պարսպ· Արիստոտ·
ԱՅՄԱՆ, տող 540։
4 Պղատ· յզ· օր· գիրք Է· հա· 2· էջ 816։
5 ԱԹԷՆ· գիրք ԺԴ· գլ· 6· էջ 629։
6 Նոյն անդ, էջ 628։

թեանս այսմիկ. զի նոքա զկաքաւս զայս ողբերգական կոչեցին Լամենլիա[1], որ յայտ առնէ զաղբերյարմար խառնումն վսեմ և ընտիր դաշնակութեանց, և զգեղեցիկ եղանակ շարժուածոյ ողբերգուացն ամենեցուն[2]։ Զորոյ և զփոքր իսկ առի յաձախ, և մանաւանդ յողբերգութեանն Լաբիղեայ 'ի գրաւաթափ առնել Պրիամու արքայի զդիակն ողբոյ իւրոյ[3]։ Զի պար տրուվացւոց անկեալ ընդ նմա առ ոտս Լկտորի յաղթականին, յայտ առնէն հանգոյն նմին 'ի շարժուածս իւրեանց քաջ վայելուչս այնպիսի ձևս թախծութեամբ և երկիւղի և յուսոյ, զի ընդ Լաբիղեայ 'ի գութ խանդաղատեն և զամենայն տեսօղս։

Լաքաւն կատակերգութեամբ աղատ է և ընդելական, և նուաստ իսկ յաձախ, և յաձախագոյն ևս անարգեալ շինականագոյն ցոփութիւնք՝ որ սարտուցանեն զպարկեշտս[4]։ Որպէս զի Լաբիստոփանեայ պարծանս իւր համարել, զի յոմանս 'ի կատակերգութեանցն չետ այնոցիկ մուտս[5]։

Ի սատիրականն թատերգութիւն կաքաւս այս աշխոյժ ևս է և բազմադղորդ, այլ վերջացեալ 'ի բացատրութենէ և անհամեմատ ընդ երգսն[6]։

1 Պլատ. յՂ. օր. գիրք Է. հատ. 2. էջ 816։ Ղուկիան յՂ. պարու., յօդ. 26. հատ. 2. էջ 283։

2 Պարապ. Արիստոփ. 'ի Գորգոս, տող 924։

3 Ամեն. գիրք Ա. գլ. 18. էջ 21։

4 Թէոփր. պարագրիք, գլ. 6։ Տիւփոռ., անդ, էջ 305։

5 Արիստոփ. յԱմման, տող 540։

6 Ամեն. գիրք ԺԴ. գլ. 7. էջ 630։

Յոյնք ընդ խելամուտ լինել զբուութեան կաքաւոյս՝ այնպէս ախորժեցին ընդ այն, զի քերթողք խրախուսեալ, դրուատեօք ամբոխին՝ ոչ յամեցին օտարացուցանել զայն 'ի բնութենէն։ Լցեալ է արդ չափ զեղծման նորա. աստի խաղակացն հտպլտտել և ամենեցուն զանձինս նմանեցուցանել խեղկատակելով՝, և անտի տեսողաց ոչ ևս դրուատել ինչ ծափաձայն՝ բայց զձևս կանացիս և խենչս, և զխառն 'ի խուռն մոլեկան շարժմունս։ Կալլիպիդէս կատակագուսան, որ կոչեցաւն Կապիկ, նա ինքն ոչ բազում ինչ յառաջ քան զաւուրս մեր եմոյծ կամ մանաւանդ հաստատեաց զախորժակս զայս յոռի՝ իւրով վնասակար հանձարոյն աջողութեամբ*։ Եւ յաջորդք նորա վառեալք 'ի նախանձ նմանութեան, զՀետ չոգան ջարաշուք պարծանաց նորա. և առ 'ի գերազանցել քան զնա, անցին ըստ չափ և ըստ պայման։ Շարժլին և տագնապին հանգոյն անհմուտ երաժշտաց, որք 'ի հարկանել զսրինդ՝ ձևացուցանեն խեղաթիւր և այլանդակ գեղմամբքն զկամակոր շաւիղ բոլորակի թաւալելոյ ընդ երկիր[2]։

Ասողովուրդն ը անհեթեթ կուտակութիւնս ձևոյն զուարճացեալ, չհանդուրժէ ապա ընդ թերութիւնս ինչ ներելիս։ Ակսանի տակաւ

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 26. հտ. 2. էջ 675։

[2] Արիստոտ. անդ. գլ. 26. հտ. 2. էջ 675։

* Յետոյն մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Թ։

հծծել, ծիծաղել, գբլբիջ բառնալ, զաղաղակ հարկանել ամբոխիւ ընդդէմ գուսանին[1], այսն առնել զնա շչելով[2], և զոտս ընդ երկիր բաղխել՝ զի ելցէ 'ի տեսարանէն[3]։ Զի և տայ նմա մերկանալ զդիմանին, առ 'ի տեսանել զշառագունանս նորա[4]. և կոչէ 'ի ձայն քարոզի զայլ ոք 'ի գուսանաց, որ եթէ չգտցի անդ կազմ՝ մատնի 'ի տուգանս. և մերթ ևս պատիժս նախատանաց տան ածել զնովաւ[5]։ Ոչ հասակ ծերութեան, ոչ հուչակ համբաւոյն, և ոչ բազմամեայ վաստակ աղատ կացուցանէն զնա 'ի խստութեանց աստի։ Որոց եթէ յաջողութեանց մարթէ բառնալ 'ի նմանէ զնախատինսն. զի 'ի դէպս այնոցիկ դարձեալ նովին ցնծութեամբ և ամբոխիւ ծափս հարկանէն[6] և դրուատիս կարդան։

Այս դարձադարձ փառաց և անարգանաց ոչ գուսանաց եթէ հասանէ, այլ և ճարտարախօսաց՝ որ ճառէն 'ի համախումբ ժողովս ազգին, և վարժապետաց՝ որ կրթեն զաշակերտս[7]։ Կարօտութիւն եթէ աջողութեան նուաստացուցանէ զպայման նորա. ժառանգէ նա զամենայն ազատութիւնս քաղաքացւոյ. և վասն զի պարտ

1 Պղատ. յղ. օր. գիրք Գ. հա. 2. էջ 700։
2 Դեմոսթ. յղ. վերկ հրբչա. էջ 346։
3 Պողիտեկ. գիրք Դ. գլ. 19. յոդ. 122։
4 Ցիւփոռ, 'ի Թեոփր. նկարագիրսն, գլ. 6. էջ 308։
5 Ղուկիան. 'ի պատասխանատ. յոդ. 5. հա. 1. էջ 713։
6 Թեոփ. նկարագիրք, գլ. 11։
7 Ցիւփոռ, անդ, էջ 376։

է նմա լինել զերծ յամենայն նախատանաց՝ զոր 'ի վերայ ածէն օրէնք, մարթի է հասանել նմա և 'ի բարձրագոյն աւագութիւնս։ Արիստոդեմ գուսան հռչակաւոր առաքեցաւ յաւուրս մեր հրեշտակ առ Փիլիպպոս արքայ մակեդոնացւոց[1]. և այլք մեծարէին 'ի հասարակաց ժողովի։ Դարձեալ և Աքիլլ և Սոփոկլ և Արիստոփան ոչ ամենի համարէին խառնել ընդ գուսանս, յածել 'ի տեսարան զքերթածս իւրեանց[2]։

Տեսի ես գուսանս քաջս. տեսի զԱվոդոր 'ի սկիզբն ասպարիզի փառաց իւրոց, տեսի զՊօղ 'ի կատարած իւրոյն։ Բայցատրութիւն առաջնոյն այնպէս էր բնական, զի թուէր նոյն ինքն՝ զորոյ զդէմն բերէր[3]. իսկ երկրորդն 'ի ծայր աւրուեստին էր հասեալ։ Այրբէք ուրեք գործարան գեղեցկագոյն այնպիսում զօրութեան մտաց և զգացման ոչ վիճակեցաւ։ Ի միում ուրեք յողբերգութեանցն Սոփոկլի, որում եղէ իսկ ականատես, բերէր նա զդէմն Այլեկտրայ։ Զիք ինչ աղիողորմ քան զտեսիլ դշխոյիս յորժամ գիրկս արկանէ զսափորոնին, յորում կարծէր զաճիւն Ովրեստեայ եղբօր իւրոյ աւանդեալ։ Ոչ անդ աճիւն ցուրտ և օտար, այլ որդւոյ նորին ինքեան Պօղայ այն ինչ մեռելոյ աճիւնն ամփոփեալ կայր

[1] Եպիֆան. յղ. վասպ հրեշտ. էջ 397։

[2] Ամենն. գիրք Ա. գլ. 17. էջ 20։ Վարք Արիստոփ. էջ 13։

[3] Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 585։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 40։

'ի սափորի, զոր իւր իսկ հանեալ էր 'ի գերեզմանէն։ Լցրև ածին զայն առ նա, և իբրև ընկալեալ զայն զողզոջուն ձեռօք՝ զիրկ ընդ խառն փարեցաւ զնովաւ, այնպիսի ցաւագին և խանդաղատելի բանս բարբառեցաւ և Հնմարտութիւն ահաւոր, զի հնչեաց ամենայն տեսարանն, և ի ջուցին ամենեքին ուղխս արտասուաց ընդ ողորմելի բախտ որդւոյն, և ընդ ահագին արկածս հօրն[1]։

Պուսանք զգենուն հանդերձս և կրեն նշանակս ըստ պատշաճի դիմանցն զոր բերեն։ Գաւազաւորք կրեն թագ 'ի գլուխ, և յենուն 'ի գաւազան արքունի արծուիհնան*. և հանդերձս զգենուն երկայնս ոսկեթել ծիրանի ընդ երիս երիս երանգս խառնեալ[2]։ Պուսաղունք երևին յաձախ արկեալ զեւրեամբք մերթ առիւծու[3] կամ վագեր, զինեալք 'ի սուսեր, 'ի նիզակ, 'ի կապարձն և 'ի լախտ։ Ոմք 'ի վիշտս իցեն՝ զգենուն սեւաւս կամ թուխ կամ դորշ, և մերթ ևս պատատաստունս։ Ծէր և տղայ, այր և կին, աղքատն և Հոխ, սգաւորն և ուրախ, զրեթէ միշտ 'ի գոյն և 'ի ձև զգեստուցն Հանապէն։

Բ. Յլ առաւել ևս յայտ առնէ զնոսա գլխա-

1 Աւ. Գեղ. գիրք. Է. գլ. 5։

* Գաւազանն արքունի 'ի սկզբանէ էր ցուպ երկայն։

2 Արիստոտ. 'ի Հաւան, տող 512։ Պողիսակ. գիրք Դ. գլ. 18. յոդ. 115։

3 Գուկիան. յլ. կաքաւուց, յոդ. 27. հա. 2. էջ 285։

4 Պողիսակ. անդ, էջ 117։

պանն, որ բովանդակ զդէմն նոցա պարաճաճ-
կեալ՝ կերպարանափոխ առնէ զնոսա ստէպ, և
փոփոխէ զպատրանսն։ Զ զիմնակացն ասեմ զբազ-
մակերպից, որ յողբերգութեան և որ 'ի կատակ-
երգութեան և որ 'ի սատիրական թատերերգու-
թիւնսն 'ի կիր առնուն։ Զիսոց 'ի նոցանէ այլա-
գոյն են հեղք, այլոց մերոյն կարճ կամ եր-
կայն, կամ թաւ և կամ անօսր. և այլք զարձեալ
բերեն զտիպս մանկութիւնն և զեղջ։ Զոմն ևս՝ որոց
է բերան մեծաբաց, պատեալ թիթեղամբք պը-
ղընձեօք կամ յայլ ինչ նիւթ հնչողական, որ-
պէս զի յաւելուլ ձայնին 'ի զօրութիւն և 'ի
շառաչ, և ընթանալ ընդ լայնատարը շրջապատ
աստիճանացն՝ յորս բազմութիւն բազմի 'ի զնին[2]։
Զոմ են զարձեալ, զորովք գմբեթաձև ամբառ-
նան խոպոպիք սրածայր[3], 'ի ձև նախնի յօրինուա-
ծոց վարսից կանանցն աթենացւոց։ Զի և անդ
ուրեմն յառաջին փորձս թատերախաղից սովո-
րութիւն էր ժողովել զուսանաց զդիսական, և
զգազաթամբք իւրեանց կապել 'ի ցցունս[4]։

Ողբերգութիւն զրեթէ անդէն 'ի ծնանելն 'ի
կիր էառ զդիմակ։ այլ թէ յումեմ այն մուծաւ

1 Պողիտեկ։ գիրք Դ։ գլ։ 19։ յօդ։ 133։
2 Աւլ։ Գելլ։ գիրք Ե։ գլ։ 7։ Պլին։ գիրք Լէ։ գլ։ 10։ հտ։ 2։ Սողին։ գլ։ 37։ եջ 67։
3 Պողիտեկ։ անդ։ Ղուկիան։ յլ։ կաքաւուց, յօդ։ 2։ եջ 284։
4 Թուկիդ։ գիրք Ա։ գլ։ 6։ Եղիան։ զան։ պատմ։ գիրք Դ։ գլ։ 22։

'ի կատակերգութիւն ոչ է յայտ՝։ Փոխանակեաց նա 'ի տեղի թանձր ներկոյն՝ որովք հեատեւօղք Մեսպեայ թաթաւէին զդէմն, և խիստ սաղարթացն՝ զոր ընդ Ճակատն 'ի վայր ածէին առ 'ի համարձակագոյն անկղիտանալ յերգիծանս և 'ի ցոփութիւն։ Մեսպիս յաւել և և զժպրհութիւն նոցա, պատրուակ զդիմաք նոցա ածեալ[2]. և Նաբիղ, որ ինքն կամ՝ 'ի ձեռն հեատեւողաց իւրոց զամենայն զթատերական արուեստին եդիտ զգաղանիս, խելամուտ եղև 'ի փորձ նախորդին՝ զի սովորութեան ձեռնտու լինելով բովանդակ դիմանցն այլակերպութեան, մարթէր հայթայթելնոր իմն հնարս պակուցանելոյ զզգայութիւնս, և շարժելոյ զսիրտ։ Կերպարանեաց զդիմանէն, և պաճուճեաց զայն երանգովք, ըստ վսեմ նախատպին՝ զոր 'ի միտս իւր ունէր՝ 'ի պատկեր դիցն և դիւցազանց[3]։ Վերերդ և յաջորդք նորա յաւելին ընդարձակել և կատարելագործել զհնարս Նաբիղեայ՝. որպէս զի յօրինեալ կազմեցաւ կարգ իմն պատկերաց, բերելով 'ի դէմն՝ որչափ ձեռն տայր արուեստն՝ զիտիր կարևոր զանազանութեանց պայմանի և բարուց և կրից՝ զոր երկաքանչիւր ներգործեն բախտք[5]։ Նաբ-

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 5. հա. 2. էջ 656։

2 Սուիդ. 'ի բառն Θεσπ. Պողխակ. գիրք ժ. գլ. 39. յօդ. 167։

3 Ովիատ. յղ. արհ. քերթ. տող 286։

4 Ամեն. գիրք ԺԴ. գլ. 22. էջ 659։ Սուիդ. 'ի բառն Χοιρίλ.

5 Պողխակ. գիրք Դ. գլ. 19. յօդ. 133։ Պարապ. Սոփոկլ. Յեթիպ. տող 80։

դարև ինձ իսկ յաձախս ընդ ակնարկելն դեպ լե-
ներ զգալ զ[1]լիսելեայ զծանրաթախիծ տրտմու-
թիւն, զ[2]եղեայ զգժնդակ խորհուրդսն, զհե-
բակղեայ զահագին սրտմտութիւնն, զ[3]ասայ
զաւաղելի վհատութիւն հիբին՝, և զ[4]ամենեայցն
զայրագնելոց զնեռաղուտ վրէժխնդրութիւնս 'ի
մահատիպ դէմն տպաւորեալ՝։

[5]Չ երբեմն յորժամ կատակերգութիւն ըն-
ծայէր 'ի տեսիլ զկենդանագիր այնոցիկ, զորս
ծանակէրն համարձակ՝։ [6]Յլ արդ պատշաձա-
գոյն ևս 'ի դէմն ածէ հասարակաբար զնմանու-
թիւնս, որ պատկանին 'ի ծաղր և 'ի յոռութիւն
զորս նշաւակ։ [7]Այլ սակայն ձանաչին անդէն
տեղն և ծառայ և հացկատակն, ծերունին նե-
բող կամ խիստ, և պատանին բարեբարոյ կամ
անկարգ, օրիորդն դեղով վայելուչ, և տիկինն ըս-
պիտակավարսիւքն և հանդարտուք՝ յայտնեալ՝։

[8]Պաքէն ոչ ևս է անդ տեսանել տակաւ զաս-
տիձանս կրից 'ի դէմն գուսանին, այլ բազմա-
գոյնք 'ի տեսողաց ոչ մերձ 'ի խաղեսղ անդր
կան 'ի զնին, այլ հեռի՝ ուր չհասանէ ձարտա-
բախօս լեզուին ազդումն։ [9]Արդ այժմ եկից 'ի
ստգիւտս արդարասդոյնս. զի դիմանին կորուսանէ
բազում մնասանքք զորոշակս ձայնին, որ զայն-
պիսի գեղեցկութիւնսն յաձախսն 'ի զրուցա-

1 Կուլենեկ. գիրք ԺԱ. գլ. 3. էջ 702։
2 Արիստոտ. 'ի Պլուտ. տող 423։
3 Նոյն, Աստղեսան, տող 230։
4 Պողսանկ. գիրք Դ. գլ. 19. յօդ. 135։

տրութեան . բեկբեկումն նորա գործի դա-
ժան , եւ էջք խիստք և որպէս թէ առասպելք ՝ .
ծիծաղ անբնական , և եթէ ոչ արուեստ հաս-
ցէ նմա ՝ի թիկունս՝ բառնի ՝ի սպառ վայել-
չութիւն նորա հանդերձ արգասեաքն[2] ։ Դար-
ձեալ և զիմաստ ի ցէ հանդուրժել ՝ի տեսիլ ան-
հեթեթ բերանոյն՝ որ կայ անշարժ[3] , և մշտա-
բաց ՝ի լուել իսկ գուսանին* ։

Դժպատեհ թուի Յունաց այս ամենայն , այլ
դժպատեհ ևս բացաւ երեսաք երևել գուսանաց
՝ի տեսարանի ։ Օ՛ի զիմաստ մարթ ի ցէ ՝ի դէմն
բերել նոցա զտիպս համեմատս նկարագրին , և
կերպարանս պատշաճս իւրաքանչիւրն պայմանի ։
Զգի , որ ոչն ներել կանանց ելանել ՝ի տեսարան՝ ,
և որ զօրէնս պատշաճից համարի անլուծանելի
և կարևոր ոչ միայն բարոյականին՝ այլ և ՝ի հրա-
հանգս արուեստից , ոչ մարթէր հանդուրժել ,
եթէ Անտիգոնէ և Փեդրա երևէին ՝ի կերպա-
րանս՝ որոց խստութիւն նշաւակէր զամենայն
զկեղծիսն , և Զամեմոնն և Պրիամոս յանապ-
գի կերպարանս , և Պպոդիտոս և Քիլլէս խոր-

1 Դիոգ . լայերտ . գիրք Դ . յօդ . 27 ։ Սուիդ . ՝ի բառն Φλοῖς.

2 Կուինտիլ . գիրք ԺԱ . գլ . 3 . էջ 716 ։

3 Ղուկիան . յղ . մրց . յօդ . 23 . հա . 2 . էջ 904 ։ Նոյն , յղ . կաքաւ . հա . 2 . էջ 284 ։ Փիլոստր . վարք Ապոլոնեայ , գիրք Ե . գլ . 9 ։

* Յեսակոյս մասնենս՝ի տեղեկութիւնսն . Թիւ Ժ ։

4 Պղատ . յղ . հաս . գիրք Գ . հա . 2 . էջ 395 ։ Պլուտ . ՝ի Փոկիոն . հա . 1 . էջ 750 ։ Ղուկիան . յղ . կաքաւ . յօդ . 28 . հա . 2 . էջ 285 ։ Աւլ . Գելլ . գիրք Է . գլ . 6 ։

շոմեալ և ալևորեալ։ Իսկ զիմակք, զորս օրէն է փոփոխել 'ի տեսիլս իւրաքանչիւր, և յորս մարթ է զրոշմել զտիպս զլխաւոր կրից հոգւոյ, նոքա ևեթ կարէն յերկարաձգել և արդարացուցանել զպատրանս զգայութեանց, և յաւելուլ ըզհաւաստիս նմանութեան կեղծեաց։

Ամէն իրի և հսկայաձևք երևին յաճախ գուսանք յողբերգութիւնս 'ի հասակ չորեքկանգնեան՝ ըստ Հերակղեայն[2] և ըստ նախնի դիւցազանցն հասակի։ Ի կօշիկ բարձունք են յոտսնոյ, է զի չորք և կամ հինգ մատնաչափք[3]. և ձեռէք զլաղկաց նոցա յաւելուն զերկայնութիւն. և զլանջն և զկողս և զամենայն մասունս մարմնոյ իւրեանց ըստ նմին համեմատութեան ստուարացուցանեն[4]։ Այլ յորժամ ըստ օրինացս ողբերգութեան, որ խնդրէ արտասանութիւն իմն սաստիկ և մերթ ևս մեծասաստ[5], դէպ լինի հսկայաձև ամբարտակին, արկեալ զիւրեաւ զմեծաշուք հանդերձն, հնչեցուցանել զարբեաւ՝ որոյ զանգիւն ազդէ 'ի հեռաւորս[6], սակաւք իցեն 'ի հանդիսականացն՝ որ ոչ պակնուցուն ընդ ահաւոր մե-

1 Արիստոտ. 'ի Գորգս, տող 1046։ Աթեն. գիրք Ե. գլ. 7. էջ 198։

2 Աղլոզոդ. գիրք Բ. գլ. 3. յոդ. 9. էջ 96։ Փիլոսոր. գիրք Բ. գլ. 21. էջ 73։

3 Վինքելմ, պատմ. արհ. հատ. 2. էջ 194։

4 Դուկիան. յլ. կաքաւ. գլ. 27. հատ. 2. էջ 284։

5 Ոլիատ. գիրք Ա. տող 14։ Յորնաղ, երգիծ. 6. տող 36։ Բուլենգ. յլ. Թատեր. գիրք Ա. գլ. 7։

6 Դիոն. ոսկեբ. Ճառ 4. էջ 77։ Փիլոսոր. վարք Ապոլոն. գիրք Ե. գլ. 5։

ծուլթիւն իրացն, և ոչ առաւել ազդիցեն 'ի նոսա տպաւորութիւնք՝ զորս խնդրէ քերթողն ներգործել 'ի նոսա։

Այսպէս զՀանդէս տեսարանին մաքրեն ըզշուրջ տեսանելեաց տեղիս[1]. և յետ Հանդիսին գունդք գունդք աւագանւոյն եղեալ 'ի տեսարան անդր հեղուն նուէրս 'ի վերայ բագնի Սպանդարամետին[2]։ Պաշտամունքս այսոքիկ սրբազանեն իմն զզբօսանսն, սկիզբն նոցա և աւարտ առնելով։

Այլբք, որովք խաղետղն է պաճուճեալ, ոչ ինչ նուազ զօշոտեն զայս բազմութեանն։ Աղաթարքոս Ճարտարապետ ժամանակակից Այաքիղեայ, նա երկնեաց զՀնարս զայս. որ և 'ի բաղմահմուտ գիրս իւր բացատրէ զօրէնս, որովք ուղղեաց զվաստակս իւր։ Օնսիսակերտ փորձս նորա ածին ապա 'ի կատարումն ջանք յաջորդացն Այաքիղեայ[3], և մատեանք Ինաքսագորայ և Դեմոկրիտեայ յաղագս կանոնաց ընդօրինակութեան[4]։

Խաղետղն ըստ պատշաճի առաջարկութեան իրացն ընծայէ 'ի տեսիլ դաշտ զուարճալի[5], անապատ ահարկու[6], ծովամն շրջապատեալ 'ի ժայ-

1 Հարպակր. և Սուիդ. 'ի բառն Καϑαρσ. Պոլսեակ. գիրք Ը. գլ. 9. յօդ. 104։
2 Պլուտ. 'ի Կեմ. հտ. 1. էջ 483։
3 Պարապ. 'ի վարս Սոփոկլի։
4 Վիտրուվ. յառաջաբ. գիրք Է. էջ 124։
5 Եւրիպիդ. Յեղեկոր։
6 Եաբիղ. 'ի Պրամ։

ակից սեպացելոց և 'ի խորտիսոր քարանձաւաց[1], խորանս կանգնեալը առ պարսպօք քաղաքաց պաշարելոց[2], կամ մերձ 'ի նաւահանգիստս ծածկեալ 'ի բազմութենէ նաւաց[3]։ Այլ յաձախ ևս կատարին իրքն 'ի գաւթի ուրեք ապարանից՝ կամ յանդաստակ մեհենաց[5], ուր հրապարակ 'ի ձակատուն երևի, և երկուստեք ապարանք, և ընդ մէջ նոցա պողոտայք երկու գլխաւորք՝ որ մին գնայ ընդ արևելս և միւսն ընդ արևմուտս[6]։

Զգոյշ է յոյժ երբեմն տեսիլն, որ ընդ բանալ տեսարանին ընծայի աչաց։ Բազմութիւն ծերոց և կանանց և մանկտւոյ անկեալ առաջի բադնի պաղատին առ դիս կամ առ թագաւորն[7]։ Այլ 'ի միջոցս տեսարանին բազմակերպ փոփոխմն տեսիլք։ Զքայք նորատիպ հասանեն անդր 'ի հանդերձանս որսոց, շուրջ պատեալ յորսակցացն և 'ի բարակաց՝ նուագելով օրհնութիւնս Զատեմեայ[8]։ Ընդրոմանքն հեծեալ ընդ որդւոյ իւրում Զատինաքսայ 'ի կառս[9], և այլ կառք անդուստ՝ որ մերթ շքով մեծաւ ածեն 'ի բանակն Յունաց Զկիտեմեստրա պարտեալ 'ի ստրկաց իւրոց, և մանկիկն Ովրեստէս 'ի գիրկս նորա նիրհեալ.

1 Սոփոկլ 'ի Փիլոկտ։ Եւրիպիդ. Իփիգ. 'ի Տաւր։
2 Սոփոկլ Այաս։ Եւրիպիդ. 'ի Տրոադ։
3 Եւրիպիդ. Իփիգ. Աւլ։
4 Եւրիպիդ. 'ի Մեդ. և Ալգկեստ. և Անդրոմ։
5 Եւրիպիդ. Իփիգ. 'ի Տաւր. և 'ի Յոնն։
6 Սոփոկլ. Այաս, տող 816։ Եւրիպիդ. Ովրեստ. տող 1259։
7 Սոփոկլ. Յեդիպ։
8 Եւրիպիդ. Հելենէ. տող 1186. և Իպոլոտ. տող 58։
9 Նոյն 'ի Տրոադ. տող 568։

և մերթ ածէն զնա 'ի հիւղն՝ ուր դուստր նորա Լեկտրա ընկէ յաղբերէն՝։ Այսր Ոդիսևս և Փիմեդէս սպրդեալ գիշերային 'ի բանակն տրոյացւոց, արկանեն աղմուկ. պահայոյզքն այսր անդր ընթանան, և յամենայն կողմանց հնչէ բարբառ. Կա՛ց, կա՛ց. Հա՛ր, հա՛ր։ Այս անդ զօրք Յունաց առեալ զՏրովադա, երևին 'ի վերայ տանեաց՝ Ջահ բորբոքեալ 'ի ձեռին, և հուր հարկանեն զնոցանէ առ 'ի յաՃիւն դարձուցանել զքաղաքն հուչակաւոր[2]։ Այս է դարձեալ, զի ածին 'ի դաղաղս դիակունք զօրավարացն արգիացւոց անկելոց 'ի պաշարելն զՊերէ, և անդէն 'ի տեսարանին կատարի հանդէս յուղարկաւորութեանն նոցա, և կանայք նոցա տխուր նուագօք զսուգ թախծութեանն յայտ առնեն. Այսաղնէ մի 'ի նոցանէ ելեալ 'ի սեպ ժայռին, առ որով խարոյկ Կապանեայ առն իւրոյ բորբոքի առ ստորոտովն, զարդարեալ 'ի զգեստս իւր մեծագինս, և փակեալ զլսելիս առ աղաչանս հօր իւրոյ և առ ՃիՀ աղաղակի ընկերացն, մղեալ հոսի 'ի բոց փայտակուտին[3]։

Այս զարմանալիք դարձեալ յաւելուն զՀրապոյրս դեղոյ տեսարանին։ Այսր ոմն 'ի դից ծածուկ կաղմածովք իջանէ 'ի վայր, և անդ ստուերն Պողիդորայ 'ի ծոցոյ երկրի 'ի վեր երևի՝ զուժել Այ-

1 Եւրիպիդ· Յելեկտր· տող 55 և 998։
2 Նոյն, 'ի Տրովադ· տող 1256։
3 Նոյն, Յաղաչ· տող 1054 և 1070։

կովքայ զմեծատաղաւտն. և այլ երբեմն ստուերք Աբիմելեայ ելեալ 'ի գերեզմանէն՝ երևի 'ի ժողով Յունայց, և պատուիրէ զՀեղ զՊողիքսենէ զդուստր Պրիամու[1]։ Նա Հեղինէ 'ի կամարս երկնից ամբառնայ, այլակերպեալ խառնել ընդ աստեղատունս, և նաւաստեացն գոլ նշան բարեգուշակ[2]. և Մեդէա դարձեալ ընդ երկինս սլանայ կառօք լծելովք յօձից[3]։

Ուստանօր զկայ առնումք. և եթէ մեծագունից ևս իցեն պէտք օրինակաց, զտից զայն անաշխատ յողբերգութիւնս Յունայց՝ մանաւանդ 'ի հինս։ Կարգս ինն շարժուն պատկերաց է ուրեք տեսանել 'ի քերթութիւնս Աքիլեայ[4]. կէսք ցանկալիք, և կէսք այնպէս այլանդակք և նորանշանք, զորս ամենի աշխուժից եթէ մտաց քերթողին մարթէր կազմակերպել։ Օ՛ի և 'ի սքանչելիս անդր սպրդեալ եմուտ առաւելազանցութիւն. զի ահաւասիկ Հեփեստոս անդէն 'ի տեսարան աջակցեալ 'ի զօրութենէ և 'ի բռնութենէ, բևեռէ զՊրոմեթէոս 'ի ծագ Կովկասայ լերին. և հուպ ընդ հուպ զՀետ այլանդակ տեսլեանն հաստանէ Ովկիան հեծեալ յերիվար օդապարիկ[5], և Յով յաւերժահարսն՝ եղջիւրս երնջու 'ի գլուխ իւր ունելով[6]։

[1] Եւրիպիդ. յԵկուբա. Սոփոկլ առ Ղենդին. յդ. վասմի, գլ. 15. էջ 114։

[2] Եւրիպիդ. յՈվիդիոս. տող 1631։

[3] Նոյն, 'ի Մեդ. տող 1321։

[4] Սենեկա, 'ի Մեդ. տող 1025։ Ովիդիոս. տաղերգ. 3. տող 14։

[4] Եռբիդ. յԱզաչաւորն։

[5] Նոյն, 'ի Պրոմ. տող 286։ և 395։

[6] Նոյն, անդ, տող 590 և 675։

Լոտելի են արդ առ Յոյնս նկարագրութիւնք այսպիսիք իբր անպատկանաւորք ողբերգուէ՝։ և զարմանան նոքա ընդ իմաստութիւն Սոփոկղի, որով զմանն ինչ ողբերգութեանն Լդիպեայ յօրինէ։ Զանազի Լդիպոս զրկեալ 'ի լուսոյ և հալածեալ 'ի թագաւորութենէ իւրմէ՝ կայր երկոքումբք դստերօք իւրովք 'ի Կողոնէ աւան մերձ ՅԱթէնս, ուր Զեսէս ետնման ապաստան։ Ի պատգամանց դիցն տեղեկացեալ գիտէր՝ զի նշանք յեղակարծք հանդերձեալ էին կարապետել մահուն իւրում, և զի ոսկերոտին իւր աւանդեալ 'ի տեղի ծանօթ Զեսեայ միայնոյ և յաջորդաց նորա՝ ձգելոց էին մինչև 'ի սպառ ըզվրէժինդրութիւն դից 'ի վերայ Թեբացւոյ և զինամն նոցա 'ի վերայ աթենացւոց։ Լորհի յառաջ քան զմահ իւր յայտնել Զեսէսոսի զգաղտնիս զայս[2]։ Յայնմ վայրի կողմնացիք երկնչին՝ թէ գուցէ առ բնակիցութեան թշուառական եղեռնաւորին հասցեն նոցա աղէտք. և 'ի նոյն վարանս երկիւղի զաղաղակ բառնան.

Որոտընդոստ սաստէ Պիոս, ոչ երկինք[3].

[1] Արիստոտ. յդ. քերթ. զն. տող 93 և 650։ ԳԼ. 14. հտ. 2. էջ 662։ 3 Նոյն անդ, տող 1526։
[2] Սոփոկղ. յԵդիպ. Կո-

ԵԴԻՊՈՍ.

Ո՛վ դուք դըստերք իմ սիրելիք,
Ը՞ր ոչ՝ ի վիշտս իմ զկս թողիք,
Լրթայք Լեռեսայ արարիք աղդ,
Օ՛ի փուքթասցի հասանել աստ։

ԱՆՏԻԳՈՆԷ.

Լա՛ զի է քեզ, էր աղագաւ
Կոչես դու զնա, հայր, ըշտապաւ։

ԵԴԻՊՈՍ.

Շ՛ըրինդն ահեղ լըսեմ, ո՛վ դիք,
Օ՛ի հընչէ յունկն իմ աւադիկ.
Ի՞նչ՝ ի ցայդ անըդտս յաւէժ
Ա՛ղէ Դիոս զկս գահավէժ.
Ազգամբ մընայք, կոչէ զկս մահ,
Ինձ՝ ի շիրիմ փոխեալ ըզգահ։

ՊԱՐՆ Ի ՆՈՒԱՓ.

Ա՞հ, ըզդողանի
Միտս իմ հարկանի.
Շ՛անթք երկնատեղաց
Սատիւ սպառնալեաց

Արփուն երկեղուկ
Ազարեաց 'ի շըշուկ։
Յասումն անողքք
Հ՝ողայ դիցն ըզմեօք,
Ի ձայն որոտման
Դիցն ազգի հրաման։

ԵԴԻՊՈՍ.

Դ՝ըստեղք իմ, ահեղն ազդեալ 'ի յերկնուստ
Ա՝հա առ իս կայ օրհաս անփախուստ։

ԱՆՏԻԳՈՆԷ.

Ա՝յ թե զիտիցես, ո՞ եցոյց քեզ զայն։

ԵԴԻՊՈՍ.

Հաւաստի 'ի դիցն ազդեցեալ նըշան.
Ա՝ղ աթենացւոց հասցէ այսր աղքայն։

ՊԱՐՆ 'Ի ՆՈՒԳ.

Դ՝ըկինք ՀԵՐԿԻՐ ՎԵՐԸՍՏԻՆ
Որոտընդոստ դըղոբդին.
Ի՝նայեա ո՛վ ՎԵՀԴ աստուածոց
Ով զքո ցասման վառէ զբոց

Գութ մեր յուզեալ 'ի Նըպատտ
Մեղապարտիս չարաբաստ.
Լէր մեզ աստուած ունկընդիր,
Չէ մի 'ի սպառ վըհՃիսընդիր*։

Օ սոյն օրինակ յարաՃդի տեսիլն մինչև ցհատանել Թէոսեայ, որում Նղիպոս փութայ 'ի վեր հանել զգաղտնիսն։

Բազում ազգի ազգի կազմածոց պէտք են 'ի ձևացութիւն կեղծեացն՝. զի կէսք զվերաթևութիւնն ընդ երկինս գործեն և զէջն դիցն 'ի վայր և զերևմտնս ստուերաց[2], այլք զընութեան արգասիս՝ զծուխս, զբոց[3], զորոտումն՝ զորոյ զշառաչիւն կեղծեն հոսելով զքարինս հեղեղատի 'ի բարձանց 'ի տաշտ մեծ պղնձի. և այլք դարձեալ յանդիման առնեն զնեբբոյս տանց կամ զնորանաց, 'ի վերայ անուակաց հոլովեալ զնոս[4]։ Նոյպէս աՃեն 'ի տեսիլ զԼաս 'ի Ճապաղիս արեան կենդանեացն՝ զորս սրտմտութեն իւրում ետ Ճարակ[5]։

* Ի հատուածոյ տասի և յորոց 'ի վեր այսր ասացաք 'ի միտ առնուլէ, զի հելլեն ոչ բերգութիւնն հանգոյն այժմու երաժշտական թատերբերգութեանցս՝ խառն իմն էր 'ի բանաստեղծութիւն, յերաժշտութիւնէ, 'ի պարերգութենէ և 'ի ձևացութեանց. այլ երկու մինչ ընտրութիւն էր 'ի միջի. մի՝ զի անդ մերթ նուագէին գուսանք և մերթ արտասանէին. և միս եա՝ զի գուսուրեք անդ պարն յորիներ ըստ բնիկ կաքաւս, և զի մշա կըցորդէին ընդ նոսա նուագք։

1 Պլուտ. յղ. փառաց Աթենս. հտ. 2. էջ 348։

2 Պողիան կ. գիրք Դ. գլ. 19. յոդ. 130։

3 Եւրիպիդ. յՈվիսատ. տող 1541։

4 Արիստոփ. յԱքարն. տող 407։

5 Պարապ. Սոփոկղ յԷյաս, տող 344։

Հանդիսադիրքը թատերախաղից զմնան ինչ ծախուցն ինքեանք հայթայթեն, բայց ընդունեն 'ի տեսողաց փոխարէնս ինչ՝ ։ Ի սկզբան մինչ դեռ փոքրիկ եւ էթ փայտակերտ տեսարան էր նոցա, ոչ էր օրէն պահանջել առ դրան 'ի մտելոյն եւ ոչ դոյզն ինչ տուրս. այլ զի իզձք գրաւելոյ զկայսս ծնանէին յաճախ վէճս, հրամանն եղուն իշխանք՝ առնուլ այնուհետեւ յիւրաքանչիւրոյն մէն մի դրամակշիռ[2], որով ճոխք ժառանգեցին զնմ զկայս. այլ ոչ յետ բազում ժամանակաց Պերիկղէս զգինս կայիցն նուազեցոյց 'ի դանկ մի։ Վանդի խորհէր նա ածել զիւրև զամբոխն, և առ 'ի դիւրել նմա զմնաս 'ի տեսարանն՝ ետ առնել հրովարտակ, զի մի ոմն յաւագանւոյն նախ քան զհանդէս տեսարանին բաշխեսցէ իւրաքանչիւր 'ի նոցանէ երկու դանկս, մի 'ի գինս կայիցն, և միւս եւս՝ 'ի հայթայթել որ ինչ 'ի տօնս անդ պիտոյ լինի իւրաքանչիւր[3]։

Շինուածոյ տեսարանին՝ որ կայ իսկ ցարդ, 'ի բաց բարձեալ ընդարձակութեամբն յոյժ ըզդժպատեհութիւնս առաջնոյն, պարտ էր խափանել զբաշխոյն. այլ եկաց մնաց հրովարտակն այն՝, թէպէտ և դժնդակ ջարիս զհետ իւր ձգեալ 'ի վերայ աշխարհին։ Պերիկղեայ զծախսն զայն

1 Դեմոսթ. յղ. պսակ. էջ 477։ Թեոփր. նկարագիրք. գլ. 11։

2 Հիւսիք. և Սուիդ. 'ի բառն Θεωρίκ.

3 Լիբան. նախագր. ողնեթ. 1։ Ուլպիան. յողնեթ. 1. էջ 14։

4 Արիստոտ. յԻժան, տող 1184։

'ի գանձուց աշխարհին սահմանեալէր, 'ի հարկաց՝ զոր ազգք նիզակակիցք տային վասն պատերազմին ընդդէմ Պարսից[1]։ Խրախուսեալ նորա յաջողութեամբն այսուիկ, յաւել 'ի նմին գանձուց յաձախել զպայծառութիւն տօնիցն, որպէս զի տակաւ ամենայն զինուորական գանձուն ծախել 'ի զբօսանս ամբոխին։ Ոչ բզի՞ ժամանակք էին՝ զի ուրումն 'ի Ճարտարախօսաց խորհուրդ առաջի աբարեալ դարձուցանելոյ զայն յառաջին սահմանն, հրովարտակ համախումբ ժողովոյ ազգին արդեալ սպառնալեօք մահու՝ մի զփոփոխումն զայն առնել[2]. և արդ ոչ ևս ոք իշխէ հակառակ կալ յայտնապէս տարապայման զեղծմանն։ Պեմոթենեայ երբեքէ երբեքէ փորձեալ ցուցանել զանպատեհսն[3], յուսահատեցաւ. և արդ գոչէ բարձրաձայն՝ թէ չէ պարտ առնել ինչ փոփոխումն[4]։

Հանդիսաւորին ընծայէ երբեմն և ձրի տեսարանս[5]. և է դարձեալ, զի բաշխէ պիտակս՝ որ ընուն զտեղի վարձուցն սահմանելոյ[6], որ են արդ երկու գանձք[7]։

1 Խորկ. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 400։
2 Ուլպիան. յողնեթ. 1. էջ 14։
3 Դեմոսթ. ողնեթ. 1. էջ 3 և 4։ Ուլպիան. էջ 11։ Ողնեթ. 3. էջ 36։
4 Դեմոսթ. Փիլիպպ. 4. էջ 100։
5 Թէոփր. Նկարագիրք. գլ. 11։
6 Նոյն անդ։
7 Դեմոսթ. յղ. պսակ. էջ 477։ Թէոփր. անդ, գլ. 6։

# ԳԻԼՈՒԽ ԺԱ.

*Ջրուցատրութիւնք բնախօսականք զողբերգութենէ և յաղագս առ որ ինչ սահմանեալ այն։*

ԱՆՏԵՐՄԱՑԱՑ 'ի տան Ալպողոդորայ ընդ միում յեղբօրորդւոյ նորա, որում անուն էր Օպիրոս. պատանի լիահանճար, և բորբոքէր նա եռանդեամբ՝ նուիրել զանջողութիւն մտաց իւրոց յաւուրեստ տեսարանին։ Ի միում աւուրց եկն նա ինձ յայց, և եգիտ առ իս զԼիկեփոր քերթողն, որոյ փորձս ինչ 'ի կատակերգականին փորձեալ, իրաւացի համարէր նախամեծար առնել զԱրիստոփանեայն քան զԱքիղեայն արուեստ։

Օպիրոս խօսեցաւ ընդ իս զըղձիցն իւրոց, յաւելեալ ևս քան զևս յընտանին իւր եռանդն, և ասէ. Ողորմանաս, զի չև ևս արարեալ է խմբագիր կանոնաց ողբերգութեան. չքնաղ նախատիպք են մեզ, այլ մեծամեծ թերութիւնք 'ի նոսա։ Այրբեմն համարձակ ճախր առնուին քերթողք բարձրութիւն 'ի թեւս հանճարոյն, այլ արդ հարկ է գերել զմիտս 'ի ծառայութիւն օրինաց՝ զորս և ոչ արժան համարին ցուցանել մեզ։ 'Լիկեփոր ասէ. Այլ զինչ պէտք իցեն այնոցիկ, ես ինձէն 'ի կատակերգութեան ստեղծանեմ ըղդէպս որ նախ քան զարարուածն, զհանդիսումն պատահարաց 'ի կազմութիւն արարուածոյն, ըզ-

կնձիոն և զլուծումն այնորիկ. նմին իրի և խստիւ յոյժ դատիմ 'ի լսողաց։ Իսկ յողբերգութեան ոչ այսպէս. զի առաջարկութիւն իրացն սահմանեալ է և ծանօթ, և թէ ոչ, չէ ինչ փոյթ։ Թէ զ'Զրատ ածէս 'ի տեսիլ, տղայք անգամ պատմեն զաղէտս նորա. և 'ի լուր անուան ևՀԹ Դիպեայ և Զ'զկմեանի' գուշակեն զյանդել իրացն 'ի մայրասպանութի։ Թէ զԹեղս վիպացն կորուսանես, ածՀ զպարերգութիւն 'ի մէջ. իսկ եԹէ խառնակի կնձիոն դըժուարալոյծ, ինչ զմի ոք'ի դից կաղմածով։ Մինչ կախարդեալ երաժշտութեամբ և հիացեալ ընդ տեսիլն, ներեսցէ զամենայն համարձակութիւն, և պակեսցէ անդէն զյանդուզն Հիպն քո'։

Այլ տեսանեմ զի զարմանք Թուին քեզ բանքքս. անտա, և մանրամասնաբար խելամուտ լիցիս ամենայնի։ Զայս ասացեալ, նոստաս. և իբրև ըստ օրինակի իմաստակացն ձգէր զձեռն իւր 'ի նկարել յօգս ձև վայելուչ, ահա մոնին անդր Լեռն գեկտոս քերԹող հրաշաղան ողբերգութեց բաղմաց[2], Պօղ մի 'ի Հարտարագունից գուսանաց Հելլադայ[3], և ոմանք 'ի բարեկամաց մերոց՝ որոց ընդ ներՀուն հմտութիւնս էին և ամենակիրԹ ախորժակք։

'Լիկեփոր ասէ ժպտելով. Զա արդ զինչ ա-

1 Անոիփ. և Դիփիլ. առ բախասս, հա. 2. էջ 837։ Ամեն. գիրք Զ. էջ 222։ Սուիդ. 'ի բառն Θεοδ.
2 Պլուտ. 'ի տասն Հարտաս. 3 Աբ. Գելլ. գիրք Ի. գլ. 5։

բարից զձեւս զայս։ Այլ ես ասեմ. Կամ զայն թե-
բաքամեալ, թերեւս ընդ հուպ դէպ լեցի քեզ 'ի
կիր արկանել զայն։ Այլ առեալ զձեռանէ Օ-
պիրայ, ասեմ ցՕՎոդեկտոս. Ի-քո խնամն զմա-
նուկս զայս յանձն առնեմ, զի 'ի տաճար փառաց
խնդրէ սա մտանել, և առ հմուտս ճանապարհին
ուղղեմ զսա։

ՕՎոդեկտոս թուէր հոգ յանձին ունել զման-
կանէն, և խոստանայր խորհրդակից լինել նմա
'ի պէտս։ Ասեմ. բռնադատեմ հարկն, պարտ է
մեզ արդ մատեան ինչ զօրինաց արուեստին ու-
նել։ ՕՎոդեկտոս ասէ. Այլ ուստի մարթի իցէ
առնուլ զայն. են՝ որք աջողութեամբ մտաց և օգ-
նականութեամբ օրինակաց պարապեն 'ի գործ
արուեստին. այլ քանզի տեսականին գիտութեան
պարտ է նկատել զէութիւն նորա, և ամբառ-
նալ մինչև 'ի մտացածին նորայն գեղեցկութիւն,
խմաստասիրութիւն անկ է հրահանգել զախորժակս
նորա և ուղղել զփոյթ։ Արիսեալ անդրէն ասեմ.
Գիտեմ զի բազում ժամանակս պարապեցեր դու
'ի տեսութիւն թատերական քերթուածոյ՝ որով
տարարն իսկ զարժանին դրուատիս, և զի յա-
ճախ զայնմանէ խնդիրս արարեր ընդ Այրիստո-
տելի գրով և բանիւ։ ՕՎոդեկտոս ասէ. Այլ
ոչ անգիտանաս և զայն, զի 'ի խնդիրսն յայնոսիկ
յամենայն քայլափոխս ընդ առաջ եկանէն առաջ-
արկութիւնք դժուարալոյծք և խոչք անկոխելիք.
և զի օրինաց իւրաքանչիւր հակառակ եկանէն օրէ

նակը, և օրինակաց իւրաքանչիւր մարթի յայծ-
ղութիւն արդարանալ. և զի օրինազանցութիւնք
և կարի իսկ մեծամեծք յենուն յօրինակս ա-
բանց առագաց, և հասանել երբեմն հարկ դա-
տապարտելոց զգերահանձար քերթողս Աթե-
նայ։ Այլ արդ 'ի դէպ իցէ ինձ, ասել ասա, յանձն
առնուլ զվտանգս զայս առաջի ոխերիմ ոսոխաց
նոցա։

Ալիկեփոր ասէ. Վերեցեալդ իմ Թէոդեկտէ,
յիս հոգդ այդ ամբաստանելոց զնոցանէ, մտա-
դիւր յանձն առնում զայն։ Դու ասա և էթ
զերկբայութիւնս քո, և լուիցուք դատաստանի
ժողովոյս։ Այլ զի՞նչ Թէոդեկտոս 'ի Թախան-
ձանս մեր, պայման առաջի եդեալ 'ի վկայութիւն
Աբիստոտելի լինել ապաստան, և զի մեք ևս յա-
ւելցուք յիւրսն զհմտութիւնս մեր, զկարևորաց
և էթ մասանց արուեստին առնելով խնդիր։ Բայց
թէպէտ և զյետինս ևս զայս պայման նախա-
հոգ զգուշութեամբ հաստատեցաք, սակայն զա-
ւուրս բազումս հարկ եղև մեզ դառնալ 'ի ժո-
ղով։ Զբովանդակութիւն զրուցատրութեանցս
մերոց աստանօր համառօտեմ, սակաւս ոմանս
խառնելով 'ի Ձառսն՝ առ դիւրիմաց առնելոց զայն.
աստստին այս յայտ լսցի ընթերցանելեաց։

## ԺՈՂՈՎ ԱՌԱՋԻՆ

Օդոքէրոս. Այլ զի ներեսս ինձ, անուանիդ Ամէոդեկտէ, նախ զայն իսկ հարցից. առ ինչ սահմանի ողբերգութիւն։

Ամէոդեկոս. Զ'ի շարժել զսարսափ և զգութ'ի կարեկցութիւն։ Զ'այս յանդիման առնելոյ արարուած ինչ անխառն'ի ծաղուէ և ամբողջ, և ոչ յոյժ կարճառօտ[1]։ Ողբերգութիւն, թողլով կատաղերգութեան զհասարակակիր յոռութիւնս և զծաղրական իրս, նկարագրէ զթշուառութիւնս մեծամեծս զթագաւորաց և զդիւցազանց։

Օդոքէրոս. Այլ ընդէր ոչ'ի ստորինս իջանէ, զի յոյժ առաւել ազդէն յիս աղէտք զինև դեղերեալք։

Ամէոդեկոս. Կասկածեմ զի աղէտքդ այդոքիկ'ի ձարտար ձեռանէ նկարագրեալ կարի սաստիկ յուզիցեն զկիրս։ Իսկ'ի յանդիման առնել օրինակս զեր'ի վերոյս քան զքոյդ պայման, աստուածիէ քեզ նկատելոյ զայնս յանձին քում, և զերծ յայնցանէ զանձն համարելոյ։

Պօղ. Զայլ ինձ ընդ հակառակն ազդողագոյն թուէր կործանումն իշխանութեանն քան զյեղափոխութիւնս աննշան բահստից։ Համարիս ուրեմն

1 Արիստոտ. յդ. քերթ. 2 Նոյն անդ. գլ. 6. հա. գլ. 9. հա. 2. էջ 660. գլ. 2. էջ 656։ 11. էջ 600։

զի շանթիք զթփով անկեալք նուազ գործիցեն պակուցումն քան որք ջաղխջախեսին զկաղնի երկնաբերձ։

ԱՌԵՈԴԵԿՈՍ. Օթուփս մերձաւորս նմին 'ի գէպ էր հարցանել զայսմանէ. զի մին 'ի տեսանանց այսի ահաւորագոյն արդեօք թուեսցի նոցա, իսկ միւսն ազգողագոյն։ Զ.ՅԼ առանց այլ և այ յամելոյ 'ի խնդիրս յայս, բացայայտագոյն և Օ ոպիրայ տայ զպատասխանին։

Հ.ախնի քերթողք մեր սովոր են զդիւցազանց ժամանակացն զարանց աւագայ հռչակաւորաց ողբերգել զիրս։ Զ.ս մեք անփոփոխ զսովորութիւնս զայս կալաք, զի որք յընկերհաշտութեանն կեան՝ ոխերիմ խնդութեամբ կան 'ի զնին տապալելոյ գահոյից, և կործանման թագաւորի՝ որ զթագաւորութեան և զհետ իւր առեալ ձգէ զկործանումն։ Ամոզում ասել՝ զի աղէտք իւրաքանչիւրոց ոմանց ոչ ածեն ինչ զարմանս, որ կարևորն է յողբերգութեան։

Պարտ է արարուածոյն գոլ ամբողջ և կատարեալ, այս ինքն զի իցէ նորա սկիզբն, մէջ և կատարած [1]. զի այսպէս իմաստասէրն սահմանէ ըզբոլոր, որոյ տակաւ երևին մեզ մասունք [2]։ Գրինակաւ յայտնագոյն զբանս արարից. Յ.ողնականն Հոմերի 'ի գժտութենէ Զ.գամեմնոնի ընդ Զ.քիլլեայ սկսանի արարուածն, և ձգի յաջորդու-

1 Արիստոտ. յզ. քերթ. 2 Պղատ. 'ի Պարմ. հտ. 3. գլ. 6. հտ. 2. էջ 656։ էջ 137։

թեամբ անբաւ աղետիցն՝ զոր հրաժեշտ Աքիլ-
լեայ զՀեռ իւր ածէ. և կատարի յողբերգ ցաս-
մանն նորա արտասուօքն Պրիամու՝, զի ահա յետ
այնր խանդաղատելի տեսլեան չՔ այլ ինչ ցան-
կալի ընթերցողին։

՝Լիկիդոր. Օ՞ինչ այլ ևս ցանկալի կայցէ տեսո-
ղին յետ Լասայ մեռանելոյ. ոչ ապաքէն նախ
քան զերբորդ մասն ողբերգութեանն կատարի
արարուածն։ Բայց Սոփոկղ՝ի դէպ յամարի
երկարաձգել զայն անձահ վիճաբանութեամբ
Մենեղաւոսի ընդ Տեւկերայ, միոյն չկամելով
հրաման տալ հանդիսի թաղման ողորմելոյն Լասայ,
և միւսոյն կամելով ընդ այն՝։

Մոդեստիա. Օ՞րկումն՝ի պատուոյ աստի,
քանզի յաձախակ առ մեզ զթշուառութիւն վախ-
ճանելոյն, յաւելու և զարկածից ողբերգու-
թեանն զարհաւիրս։ Բայց կարծիք մեր զայս-
մանէ սկսանին փոխել. և եթէ գայցէ ժամա-
նակ՝ յորում՝ ոչ ևս թշնամանքս այս թուեսցին
յաղէտս, ոչ ինչ անտեղի քան զվիճաբանու-
թիւնդ զայդ կայցէ. այլ զայն ոչ քերթողին է
մեղադրելի։ Բ՞ըդ յարարուածն դառնամ։

Մ՝ի ընդ ոմանս՝ի մատենագրաց զմիութիւն
արարուածոյն համարիցիս՝ի միութի դիւցազնին
հաստատեալ, և մի՞ ըստ օրինակի նոցա օրէն հա-
մարիցիս բովանդակել զամենայն հանգամանս կե-

[1] Տասիէ, խելամտութիւնք էջ 106։
՝ի վերայ քերթ. Արիստոտ. [2] Սոփոկղ. Այաս։

նաց Թէոսեայ կամ զՀերակղեայ 'ի զիւցազնա-
կանն իսկ 'ի քերթուած։ Օ ի նուազկ և գաղա-
ղիք իսկ 'ի սպառ կարեկցութիւն 'ի յերկարա-
ձգեալն տարապայման կամ 'ի սիրել 'ի բազում
ինչ իրս[1]։ Քանզայիր ընդ խմաստութիւն Հո-
մերոսի, զի յերգ Իլիականին իւրոյ ոչ ինչ աւելի
առնու քան զմի 'ի պատահարաց տրոյական պա-
տերազմին[2]։

Օ դոդիրոս. Պատքէն յաճախեն յոյզք կրից 'ի
յաջորդել զՀետ միմեանց, չէ մարթ ազդողա-
գոյն շարժել զսիրտ՝ քան կուռ զմիմեանսն թօ-
թափելով զՀարուածս. սակայն ոչ է պարտ ա-
բարուածոյն յերկարաձգել։ Ի կատարումն իրաց
Պատմութեանն Լսբիղոսի երկայն ժամանակի
պէտք են, և Պղաչաւորացն Լսբիսպիդեայ իրք
տեւեն զաւուրս բազում, ուր Սոփոկղ յողբեր-
գութիւնն Լատայ և Լդիպպեայ 'ի սուղ ինչ ժա-
մըս աւուրն կատարէ զիրսն։ Հրաշակերտք տեսա-
բանիս մերոյ այնպէս 'ի մասինս յայմիկ զանազա-
նին 'ի միմեանց, զի հարկ է ինձ կարկեալ կալ։

Թէոդեկտոս. Այլ թէ ոչ տեսէին իրքն աւելի
քան զնկարագրութիւն ողբերգութեան. այլ
Ջանասցիս գէթ ամփոփել զայն ընդ եզս և ընդ
մուտս արեւու[3]։

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 26. էջ 675։
2 Նոյն անդ, գլ. 23. հտ. 2. էջ 671։
3 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 5. էջ 656։ Տասիկ խե-
լամտ. 'ի վերայ քերթ. Արիս-
տոտ. էջ 66։
* Արիստոտել ասէ 'ի շրջան
մի արեւու, և յայսմանէ կա-

Յամեմ՝ի ձառս արարուածոյն, զի շունչ ինն և հոգի է սա ողբերգութեան՝, և ախտակցութիւն լողացն՝ի վէպս անդր կամ յառաջարկութիւն իրացն հաստատեալ է։

Պօղ. Ա. յԴմ և փորձ իսկ իրացն վկայէ. զի տեսի ես ողբերգութիւն դրուատեալ, ոչ վասն այլ ինչ՝ բայց զի բարւոք կազմեալ էին վէպք նոցա և ձարտար յեալ ածեալ. տեսի և այլ՝ որոց բարառնութիւնք և խմաստք և եղանակ ասացուածոյ յոյս մեծ յաջողութեան առաջի դնէին, և ընդ վայր հարան վասն խառնակութեան վիպացն, որ համբակաց առ հասարակ դեռասարժից է թերութիւն։

Թէոդեկտոս. Ոչ համբակաց միայն, այլ և բազմաց՝ի նախնի քերթողաց. զի և նք երբէք երբէք անսիոյթ եղեն՝ի կազմած առաջարկութեանն, և փոխանակ այնորիկ միտ եղին գեղեցկութեան մնասանց նորա, որ զերանգոց նկարուցն ունին զտեղի յողբերգութեան։ Ա. Դ թէպետ չքնաղագեղ երանգքն իցեն, ոչ ազգեն իբրև զձարտար ծրագիր դիմաց՝ որ գծիւք ևեթ աւարտեալ իցէ՝։

Գծագրեսջիր ասա նախ զառաջարկութիւն ողբ-

լան արդիւք գաստանեաց ջրից ժամուց սահման։ Ամլ քաջահմուտք՝ի մեկնչաց շքնաւոր աբերգական խմանան զոտս ևեթ. և քանզի ողբերգութիւնք կատարեին՝ի վերջ կոյս ձմերայնոյ, սահման սեռոցութեան արարուածոյն ոչ ինչ աւելի քան զինն կամ զտան ժամն գտանէր։

1 Արիստոտ. յԳ. քերթ. գլ. 6. հտ. 2. էջ 657։

2 Նոյն անդ։

երգութեանդ[1], և ապա զպատշաճ զարդսն յաւելցես 'ի նոյն։ Ի կարգաւորելոյն զայն, յուշ լինցի քեզ որ ինչ 'ի մէջ է ընդ վիսպագիր և ընդ քերթողս։ Զի մին պատմէ զանցս՝ որպէս և անցին, իսկ միւսն որպէս մարթէրն և կամ պարտ էր նոցա անցանել։ Լինթէ պատմութիւնն առանց հանգամանաց ինչ ընծայէ քեզ դէպս, օրէն է մեզ պաճուճել զայն կեղծեաւք, և 'ի գլխաւոր արարուածն յաւելուլ յարակիցս՝ ոչք ցանկալի ևս գործեսցէն զայն։ Զայլմ ինչ յաւելցես անպատճառ, և որ չիցէ ճշմարտատիպ կամ կարևոր[2]։

Զստանաւոր ընդարձակեցսն ճառքն, զաղգի ազգի նմանութեաց ճշմարտութեան զանազանելոյ զիտիրս. զի է՝ որ ռամկին, և է՝ որ զիտնոց թուի ճշմարտատիպ. և զի 'ի դէպ է առնել ըստ պահանջելոյ տեսարանին՝ ուր առաւելու ռամիկն։ Զսա այս սահմանք հաստատեցան.

Ա. Ճշմարտատիպ կոչի որ ինչ գրեթէ ամենեցուն թուի նման ճշմարտին, և որ ինչ դարձեալ սովորաբարն պատահէ յայս ինչ կամ յայսն հանգամանս[3]. որպէս 'ի պատմութեան՝ այս ինչ դէպք սովոր են զՀետ ձգել զայս ինչ, և 'ի բարոյականին՝ որ այսպիսի ինչ պայման կենաց և տիս և բարս յանձին բերիցէ, սովոր է այսպէս խօսել և գործել[5]։

1 Արիստոտ. յԼ. քերթ. ԳԼ. 17. էջ 665։
2 Նոյն անդ, գլ. 9. էջ 659։
3 Նոյն անդ։
4 Նոյն, Ճարտ. գիրք Ա. ԳԼ. 2. էջ 517։
5 Նոյն, յԼ. քերթ. անդ։

Բ. Լ. Հնմարտատիպ, որպէս քերթողն Աղա-թոն ասէր, զոր յառաջ քերէն իւրք ոչ Հնմար-տատիպք. որպէս որ զկորովագոյն ոք և զարիագոյն քան զինքն յաղթահարեալ պարտիցէ։ Զայս անսովոր Հնմարտատիպ արկին 'ի կիր քերթողք ո-մանք, առ 'ի լուծանել զկնճիռն ողբերգութեան[1]։

Գ. Որ ինչ դէպք թուին դիպեալ, Հնմարտա-տիպք. են իսկ որ ինչ ոչ երբէք դիպեալ, էին Հնմարտատիպք[2]։

Դ. Լաւագոյն է 'ի կիր արկանել զանհնարին ինչ՝ որ իցէ Հնմարտատիպ, քան զհնարաւորն ոչ այնպիսի[3]։ Զոր օրինակ կիրք, անիրաւու-թիւնք և անպատեհութիւնք որ կեղծին 'ի դիս յանհնարից են. ոճիրք և թշուառութիւնք նախ-նի դիւցազանցն ոչ միշտ հաւանականք են, այլ 'ի սովորութէ աւանդութիւնքս այսոքիկ ընդունե-լի լեալ առ ազգս. և 'ի տեսարանս կարծիք հա-սարակաց համազօր են Հնմարտութեան[4]։

Ե. Պարտ է կազմածոյ առաջարկութեանն, փոփոխմանց տեսարանին, նկարագրութեան բա-ղուց[5], յայտնութեան անծանօթից[6], և բնաւ ամենայն մասանց ողբերգութեանն զոլ Հնմար-տատիպ։ Հարց ցանձն քո անդադար, թէ իցէ կարելի կամ կարևոր այսր իրիք դիմանց այսպէս

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 18. հա. 2. էջ 666։
2 Նոյն անդ, գլ. 9. էջ 659։
3 Նոյն անդ, գլ. 24. էջ 672։
4 Նոյն անդ, գլ. 25. էջ 673։
5 Նոյն անդ, գլ. 15. էջ 663։
6 Նոյն անդ, գլ. 16. էջ 664։

խօսել կամ գործել՝։

Դիէոդոր. Մարթէր Անդիպեայ զամն քսան կեալ՝ի միասին ընդ Յոկաստայ, և չգիտել զհանգամանս մահուն Լայոսի։

Մեդոդեկոս. Պպաքէն չմարթէր, այլ կարծիք հատարակաց համարեին զայն այնպէս. և Սոփոկղ առ՝ի պատրուակել զանտեղութիւն իրացն, սկիզբն արարուածոյ ողբերգութեանն առնէ՝ի դադարմանէ չարեացն՝ որ նեղէին զՄեդէա. զի որ ինչ յառաջ քան զայն անցք անցեալ էին՝ արտաքոյ են ողբերգութեանն, որպէս զայս Արիստոտել ասոյց ինձ[2]։

Դիէոդոր. Արիստոտել առ անբասիր առնելոյ զՍոփոկղ, ընծայէ նմա գիտաւորութիւն օտար ամենևին՝ի մտաց նորա։ Զանգի Անդիպոս խոստովանի յայտնապէս զտգիտութիւն իւր, և ասէ իսկ ինքնին՝ չգիտել զանցս մահուն Լայոսի. հարցանէ զտեղւոյն ուր սպանան, ՝ի Մեդէթէ՝ի դաշտին և կամ թէ յաշխարհ ուրեք հեռի[3]։ Այլ որպէս. անփոյթ ուրեմն արարեալ էր նորա տեղեկանալ անցիցն, որով ժառանգէրն ըզդը շխոյն և զանթոռ թագաւորութեն։ Կարի ապուշ զԱնդիպոս համարիս, և անշշունչ զաղքունիս նորա։

Այլ Ջանայր Մեդոդեկտոս արդարացուցանել

1 Արիստոտ. յղ. քերթ. դլ. 15. հտ. 2. էջ 663։
2 Նոյն անդ, դլ. 24. էջ 672։
3 Սոփոկղ. Յեդիպ. տիւր. տող 112 և 228։

զՍոփոկղ, այլ'ի զուր. յաւելաք ամենեքին 'ի կողմն՝ Լիկեփորայ։ Լաղումողբերգուն'ք 'ի խնդիրս յայս 'ինեղբս ածան, ոչ վասն այլ իրիք խոտեալք՝ բայց զի թերի էր 'ի նոսա նմանութիւն Աշմարտութեան. ընդ որս ածաւ և Կարկինեայն, յորում՝ ոմն յաւագաց մտեալ 'ի մեհեան՝ ոչ ևս էլ. և ապա երևեալ անդրէն 'ի տեսարանին, այնպէս անհաճոյ թուեցաւ տեսողաց, զի անգոսնեցաւ քերթուածն'։

Պ. Հարկ էր այլոց մեծագոյն ևս թերութեանց գոլ 'ի նմա. զի եղէ ես յաճախ ընդ գուսանս յողբերգութիւն Լիկեփորայն Սոփոկղի, և յիշէ նա զպիւթեան խաղս՝ որոց հաստատութիւն բազում դատրուք կրտսերագոյն է քան զժամանակ դիւցազանց ողբերգութեանն[2]։ Ի նուազս իւրաքանչիւր 'ի տեսիլ ածելոյ քերթուածոյն՝ քրթմնջէ բազմութիւնն ընդ վրիպակ ժամանակագրութեանն, սակայն քերթուածն ոչ անարգի։

Ամէնեքեան. Վրիպակդ այդ, քանզի անգիտելի է բազմաց 'ի տեսողացն, նուազ է վտանգաւոր քան զմիւսն՝ զորմէ ամենեցուն է դատաստան առնել։ Օ՛ի թերութիւնք նմանութեան Աշմարտին՝ զիտնոց ևեթ զգալիք, և կամ՝ 'ի սաստիկ կիրս խառնեալք, զրեթէ առ հասարակ աներ-կիւղալիք են քերթողին։ Լաղումք են ողբերգու-

[1] Արիստոտ. յղ. քերթ. [2] Նոյն անդ, գլ. 24. էջ 672։ Դլ. 17. հտ. 2. էջ 665։

թիւնք՝ որ կեղծէն անցս բաղումն արտաքոյ տե-
սարանին 'ի սուղ ժամանակի պատմութեանցն
անցեալ, որոց չքաւէ 'ի կատարումն մեծագոյն
մասն աւուր՝։ Այլ ընդէր այս ոչ դժպատեհ թուի.
զի արարուածոյն երապութեան զհետ իւր առեալ
ձգելով զմիտս տեսողաց, չթողու նոցա ոչ պա-
բաւ և ոչ կամն դառնալոյ յետս 'ի քննին իրաց՝ որ
զբաղցր պատրանս նորա աղմկեն*։

Պատանօր լուծաւ առաջին ժողովն։

## ԺՈՂՈՎ ԵՐԿՐՈՐԴ

Ի վաղիւ անդր 'ի գումարել անդրէն ժողովոյն,
Օղոսիրոս առ Լիոդեկտոս ասէ. Դու յերեկին
ցուցեր, զի պատրանաց տեսարանին պարտ է յե-
նուլ 'ի միութիւն արարուածոյն և 'ի նմանու-
թիւն Հնմարտութեան. և զինչ եւս իմդրի առ
այն։

Լիոդեկտոս. Հասանել յուշ նպատակի ողբեր-
գութեանն, որ է շարժել զսարսափ և զգորով։
Երկոքումբք մարթ է հասանել անդր. նախ
կերպարանօք, որպէս յանդիմանն առնելով զԱ-
դիպոս 'ի դիմակ արիւնաթաթաւ, զՏեղեփոս

1. Սոփոկլ. յԵդիպ. Կո-
ղզն. տող 1625 և 1649։ Եւ-
րիպիդ. յԱնդրոմ. տող 1008։
* 'Ի Փեդրայն Ռասինի ոչ
ինչ դժպատեհ թուի յարաս-
տանութեան երեսունեւհօթն
ամեայ ունել ժամանակ
դառնալոյ այսրէն առ թե-
սէոս։

'ի հանդերձս պատառատունս, և զ[illegible]մենեայս 'ի զարհուրագին կազմածս. և երկրորդ՝ արա-
բուածոն, ուր առաջարկութիւն իրացն և յարա-
կից նմին դէպք բաւականք իցեն 'ի շարժել սատ-
կապէս զտեսօղս։ Երկրորդումն յայսմիկ պայծա-
ռագոյն փայլէ հանձար քերթողին։

Ի բազում ժամանակաց հետէ ծանուցեալ՝
յայտ է, զի 'ի հոլս ազգի ազգի կրից սոսկումն
և ահ և գթութիւն ծնանին զկարեկցութիւն
սաստիկ և ձիգ։ Սմին իրի՝ եղերերգութիւն և ողբ-
երգութիւն ելևէջս զմիմեանսք արարին՝ ազ-
դել 'ի սիրտ մեր շարժմունս, ողբ առանց բռնու-
թեան արծարծանեն զնա 'ի նուաղմանէն, և
տանջանս բերկրանս անամբոխելի 'ի խղճէ մտաց։
Սոսկամ և գորովիմ ընդ աղէտս՝ զոր կրեն իմ
նմանիք, և զոր մարթ է կրել և ինձ[1]. այլ սի-
րելի են ինձ սոսկումն իմ և արտասուք. առաջինն
տաղնապէ զսիրտ իմ ոչ առ այլ ինչ, բայց զի
երկրորդն սփոփումն զնովաւ ածիցէ։ Յթէ ար-
դիւնք իրացն որ յարտասուս շարժեն զիս՝ էին
առաջի աչաց իմոց, զիա՞րդ մարթէր ինձ հան-
դուրժել ընդ տեսիլն[2]. այլ կեղծիք նոցին ցու-
ցանեն ինձ զնոսա ընդ քօղ, որ մեղմէ զտեսիլն.
թերի քան զնախատիպն է օրինակեալն, և մի 'ի
կարևոր բարեմասնութեանցն անկատարութիւնն
այն է։

[1] Արիստոտ. Ճարտ. գիրք Բ. գլ. 8. հտ. 2. էջ 559։ [2] Նոյն. յղ. քերթ. գլ. 4. հտ. 2. էջ 654։

Պօղ. Ամ՛ ապաքէն և Քրիստոսել զնոցն ասիցէ, ուր զողորմութիւն և զերաժշտութիւն կոչէ զտիչս եկեղեաց և զորովանաց՝։

Թէոդորէտոս. Այս կարի խիստ քաջ. զի զտեղ զկիրս զայսոսիկ ոչ այլ ինչ է, բայց պարզել զնոսա և հրաժարեցուցանել յանչափութենէ։ Օ՛ի ա-ռուեստք նմանողականք բառնան յիրաց անտի զդժնդակս, պահեալ որ ինչ ցանկալին է՝ի նոսա։ Ա՛յլ ուրեմն պարտ է խնայել՝ի տեսօղս, և մի ներգործել՝ի նոսա կիրս կարի դժնեայ և դառինս յոյժ։ Ա՛նմոռաց են իրք Թագաւորին եգիպտա-ցւոց, որոյ՝ի ծայր թշուառութեանն ցամաքեցան արտասուք՝ի տեսիլ որդւոյն՝ որ ածէրն՝ի պա-տուհան մահու, և եհեղ վտակս արտասուաց՝ի տեսանել զմի՝ի բարեկամաց իւրոց՝ի շղթայս որ կարկառէր զձեռն իւր առ անցաւորս[2]։ Օ՛ի երկրորդն զորովեցոյց զսիրտ նորա, իսկ առա-ջինն խստացոյց։ Օ՛ն, անդր՝ի բաց տար յի-նէն զտարապայմանն սոսկումն, և զշանթաձիգ հարուածսդ՝ որ հեղձամղձուկ առնեն զդուքդ. մի շաղախեր զթատր՝ի ճապաղիս արեան։ Մի Մ՛եղէա առ՝ի սրախողխող առնել զորդիս իւր, և մի Ա՛դիպոս առ՝ի խլել զաչս իւր, և մի Ա՛սա առ՝ի ձգել սուր՝ի կող իւր*, ՝ի տեսարան անդր

1 Արիստոս. յզ. քերթ. գլ. 6. հա. 2. էջ 656։ Նոյն, յզ. հաս. գիրք Բ. գլ. 7. հա. 2. էջ 458։

2 Երոդոտ. գիրք Գ. գլ.

14։ Արիստոտ. ճարտ. գիրք Բ. գլ. 8. հա. 2. էջ 559։

* Յեսայեայ մատենիս՝ի տեղեկութիւնսն. թիւ ԺԱ։

'ի յայտ գայցեն։ Զ'ի մի և այս 'ի կարևոր կանոնաց ողբերգութեանն է։...

'Լ.ԷԷԴ· Յայց զբրհանապազ լուծանեք զգա, և պարարին աչք ձեր 'ի տեսիլս յահագինս և 'ի դժնեայս։ Յ'հա Լ.դիպոս[1] և Պողիմնեստոր[2] զրաւեալք 'ի կենաց՝ երևին անդրէն 'ի տեսարանի, թաթաւեալք արեամբն՝ որ դեռ ևս յարիւնռուշտ աչաց նոցա հոսէ։

ԹԷՍԴԵԿՈՍ· Տեսիլդ այդ արտաքոյ ողբերգութեանն է, և առ շնորհուկս ռամկին յաւելեալ՝ որում ախորժելի են սաստիկ ամբոխմունք կրից։

'Լ.ԷԷԴ· Բ.յլ դուք 'ի դժնդակն ընդելացուցէք զնոսա։ Լ.ռեմ զեղերունս որոց ձառք ևեթ սարսափեցուցանեն զլսելիս. լռեմ և զամուսնաց և զմարց զտղայոց խողխողելոց 'ի սիրելագունից իւրեանց. զի թերևս ասիցես՝ թէպատմութեան զնոսա ընդունելի արարեալ իցէ, և զի 'ի մանկութենէ 'ի լուր այդոցիկ սովորիցիք, և զի վաղնջուց ժամանակաց այդոքիկ իցեն իրք[3], և ոչ ևս ածիցեն սոսկումն աւելի քան զկարևորն յողբերգութիւն։ Բ.յլ դուք ձարտար գիտէք զչարաչուք արուեստ յաճախելոյ զարհաւիրս նոցա։ Հերք իմ քստմնին, յորժամ առ ձիչ Ալքեմնեստրեայ՝ զոր Ավրեստէս որդի նորա յետոյս տեսարանին հարկանէ՝ Լ.ղեկտրա դուստր նորա գոչէ 'ի տե-

[1] Սոփոկ· Յեդիպ· տիր· տող 1320 և 1330։

[2] Եւրիպիդ· Յեկուբ· տող 1066։

[3] Արիստոտ· Ճարտ· գիրք Գ· գլ· 8· հա· 2· էջ 559։

տարանէն. Արինեա, թէ կարես, զՀարուածդ՝։

Ամբրոսիոս. Սոփոկլ ընդ ամենայն ողբերգութիւնն այնչափ կիրս յաձախէ դշխոյին, այնչափ ազէտք և նախատինք շուրջ պատեն զնովաւ, և այնպիսի ահափեռք և յեղմունք յուսահատութեան և ինդութեան անցանէն ընդ նա, զի թէպէտ և չիշխեմ անբասիր առնել զնա, այլ ներելի գտանի անագորոյն բարբառն՝ի տագնապ ժամուն վազեալ ընդ շրթունս նորա։ Տես զի գուշակէր Սոփոկլ զազդեցութիւն այնր բարբառոյ, և առ՝ի մեղմել զայն՝ տայ յառաջագոյն Եղեկտրայ յայտ առնել, զի ոչ ումեք կամէր չար՝ բայց միայն սպանողի հօր իւրոյ[2]։

Յօրինակէ աստի յայտէ՝ ոչ այն և եթ թէ քանի ձարտարութեամբ ձեռն աջողակ պատրաստէ և ուղղէ զՀարուածն, այլ և զի կիրք զորս հնարի նա ազդել՝ի մեզ՝ յառաջ գան առաւելապէս՝ի հանգամանաց աւագագոյն անձին և՝ի յարակցութենէ նորա ընդ այլս։ Տես զի անցք՝ անցեալք՝ի մէջ թշնամեաց կամ որոց չիցեն ինչ իրք ընդ միմեանս՝ հարևանցի իմն ներգործէ ազդումն. այլ սաստկապէս ազդէ տեսիլ սպանութեան յեղբօրէ կամ՝ի քեռէ կամ յորդւոյ և կամ՝ի ծնողաց։ Այս կացո, եթէ կարես, զդիւցազն քո՝ի մարտ ընդ բնութեան. այլ մի եղեռնագործ զոք առցես՝ի ձեռին, զի թէպէտ՝ի թշուառու-

1 Սոփոկլ. Յեղեկտ. տող 1438։ 2 Նոյն անդ, տող 963։

թենք 'ի բարեբախտութիւն և թէ 'ի բարեբախտութենք 'ի թշուառութիւն փոփոխեսցի, ոչ ուրեք սոսկումն կամ դողով ածիցէ։ Այլ մի 'ի ծայրացելոցն զոք առաքինութեամբ ընտրեսցես, որ տարապարտուց անկանիցի 'ի թշուառութիւն՝ առանց ինչ երբեք տալոյ պատճառս։

Պօղ. Ակարեմ կալ 'ի վերայ զօրութեան բանիցդ։ Զայն ոչ ինչ դժուարին է ինձ 'ի միտ առնուլ, զի պատուհաս չարին ոչ կարեկցութիւն և ոչ սոսկումն ազդիցէ. քանզի տարապարտ ևեթ վշտակրութիւնք կարեկցութեան են արժանի, իսկ անօրինին կարի իսկ արժանահաս են վիշտք. և դարձեալ նմանեացն ևեթ իմոց վշտակրութիւնք սոսկալի են ինձ, իսկ անօրէնն ոչ է իմ նմանի։ Այլ յորժամ անմեղութիւն հալածեալ և հարստահարեալ՝ հեղուցու արտասուս դառնիս, և ընդունայն բողոք բառնայցէ, զինչ առաւել քան զայն սոսկալի և աղիողորմ տեսիլ կայցէ։

Թէոդեկտոս. Այլ զինչ ևս ատելի քան զայն, յորժամ անմեղուի հանդերձ ամենայն ցուցիւք արդարութեն նկուն լինիցի։ Զի յայնժամ փոխանակ անխառն բերկրութեն, զոր խնդրեի 'ի տեսարանի, պատահեն ինձ անդ հարուածք վրէժտագինք՝ դժպհիք սրտի և մտաց։ Զտարացուցիչս իմն թերևս թուիցիմ բերել 'ի լսելիս քո.

Արիստոտ. յՂ. քերթ. գԼ. 2 Նոյն անդ։
13. հա. 2. էջ 661։

այլ զայս այսպէս ուսուցանէն մեզ յԵսայեայ ժամանակացս իմաստասէրքն պարապեալք՝ի քնին բերը կրութեանն՝ զոր ողբերգութեան պարտ է զործել՝ի մեզ՝։

Յս որպիսի՞ հնչ ասպա պատկեր անկ իցէ նմա ածել՝ի տեսարան։ Զայնպիսուց ուրուք որում մարթ իցէ մեղադրել իւր իւրք զեթշուառութիւն։ Զիցէ՞ զո երբեք հետազօտեալ զաղետից մարդկան և զպետութեց իսկ կործանման զսկիզբն. զի բազում՝ այն է, որ՝ի հեռաւոր կամ՝ի մերձաւոր վրիպանաց ուստեք առնուն պատճառս. վրիպակք՝ որոց այնչափ առաւել ահագինք են արդասիք, որչափ անսակնկալք։ Զդ ըստ այսմ կանոնի խելամուտ լեալ՝ գտցես՝ի Լվիեստ ծայրայեղ վրէժխնդրութիւն, Յդիպոս և Յգամեմնոն ձախողակի իղձս փառաց և իշխանութեանց, Յաս ամբարտաւանութեան արհամարհող օգնականութեանց երկնից[2], Յպպոդիտոս անիրաւութեան առ նախանձայոյզն՝ի դից[3], ՝ի Յոկաստէ ապախտիս կարեւորագոյն պարտուց, ՝ի Պրիամ և Յկովբէ կարի զիջումն ընդ յափշտակողն Հեղինեայ, և Յնտիգոնէ զաղանիս բնութեան նախադասեալ օրինաց սահմանելոց։

Պժբաղդութիւն Լվիեստեայ և Յդիպոսի աչքէ սոսկումն[4]. բայց Լվիեստ մերժեալ՝ի ժամ

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 14. էջ 662։
2 Սոփոկլ. յԱյաս, տող 785։
3 Եւրիպիդէս, յԻպպոլ. տող 113։
4 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 14. հա. 2. էջ 662։

ռանգութենէ թագաւորութեան յերեսաց Պ-
ղատոսի եղբօր իւրոյ, դժնդակագոյն թշնամանս
առնէ նմա՝ յափշտակելով զկին նորա սիրելի։
Մեղապարտ էր Պտղոմէոս, այլ և ոչ Լիվիստ ան-
պարտ։ Արդիպոս 'ի զուր պատճառի, բողոքելով
յանգէտս լեալ հայրասպան՝. քանզի այն ինչ
'ի պատգամացն զիցն յայտնեալ նմա՝ զի հանդեր-
ձեալ էր գործել զոճիրն [2], ընդէ՞ր ծերունւոյն որ
ընդ առաջ եղև նմա՝ չետ անցս, և առ դոյզն ինչ
նախատանաց սպան զնա, և զստրուկս որ ընդ
նմա։

Օ՞գոստոս. Օ՞ի ոչ կարաց յաղթել բարկու-
թեանն։

Լիվիոստոս. Ա՞յլ պարտ էր նմա յաղթել. չէք
ինչ 'ի կրից անյաղթելի, իմաստասէրք ուսուցա-
նեն զայս [3]. և թէպէտ տեսողք թերիմաստք նե-
րողագոյնք իցեն, այլ և ոչ անգիտանան՝ զի յան-
կարծ ուրեմն հարևանցի զառաջուն կրից բա-
ւական է 'ի գահավիժել զմեզ 'ի վիհս չարեաց։

Օ՞գոստոս. Լաւ իշխիցես դատապարտել զՊ-
տիդոսն, զի ընդդէմ անիրաւ հրամանին՝ ետ թա-
ղել զեղբայր իւր։

Լիվիոստոս. Օ՞արմանամ՞ ընդ արիութիւնն նո-
րա, և ցաւէ ինձ՞ ընդ անկանել նորա 'ի մէջ եր-
կուց պարտուց ներհակաց. սակայն բացայայտ

[1] Սոփոկլ. յեգիպ. կո-
ղն. տող 270, 538 և 575։
[2] Նոյն. յեգիպ. տիւր.
տող 812։
[3] Արիստոտ. յղ. յիշատ.
գիրք Գ. գլ. 1, 2, 3. էջ 28։

առաջի կային օրէնք՝, և Անտիգոնէ՝ի լուծանելն զայն՝ ետ պատճառս դատապարտութեանն։

Լինէ յառիթս արկածից գլխաւոր դիւցազնին ի՛ցէ՝ ինչ դիւրաւ նեղելի, յաւելցես՝ի նա տկարութիւնս և սխալանս՝ որովք մեղմասցին յաչս մեր արհաւիրք թշուառութեան նորա։ Ուստ տեսութեանցս այսոցիկ ժողովեսցես զազգմունս ըղձից յանձն բարւոյ ուրուք առաւել քան չարի, որ ոչ դժնդակ անօրէնութեամբք անկցի՝ի թշուառութիւն, այլ վասն իրիք՝ի ծանուցեալ վրիպակաց՝ որ դիւրաւ նեղելի են՝ի յաջողութեան, որպէս Լայիպեայն և Թիւեստեայն[2]։

Պող. Պարսաւելիք ուրեմն ի՛ցէն քեզ ողբերգութիւնք, յորս որ ակամայ գտանի յանցուցեալ և թշուառացեալ։ Սակայն այսոքիկ հաճոյ եղեն միշտ, և հեղցին միշտ արտասուք ընդ աւաղելի բախտ Փեդրայ և Ալքեստեայ և Լուկտրայ։

Լս. վիճաբանութիւն անդ սաստիկ զայսմանէ եղև. կէսք վիճեալ պնդէին, զի յընդունել զբանս Աւոդեկտեայ՝ հարկ էր խոտել զնախնեացն տեսարան, որ յենոյր՝ի կապեալ հրամանս ճակատագրին. այլք տային պատասխանի, զի հրամանքս այսոքիկ թէպէտ և՝ի բազմագոյնս յողբերգութեանցն Սոփոկղի ստէպ յեղյեղեալք՝ ոչ ինչ ստնանէին, ոչ ազդեցութեան արկածից

[1] Սոփոկղ. Անտիգ. տող 434։

[2] Արիստոտ. յղ. Ճարտ. Գլ. 13. հտ. 2. էջ 661։

գլխաւոր դիւցազնին, և ոչ կարգի արարուածոյն. և յօրինակ ածէին այլովքն հանդերձ և զԿնոփ-գոնայն Սոփոկղի և զՍեղեայն և զՆոդրոմա-քայն Եւրիպիդեայ։

Եւ պատկանաւորքն այսոցիկ եղեն անդ Ճառք զանհրաժեշտ Ճակատագրէն զդից և զմարդկան[1]։ Կէսք ասէին. Պատանգաւոր, առաւել քան զոր էն, թուի վարդապետութիւնս այս. զի աշա-կերտեալքն այնմ այնպէս քարոզեն բանիւք իբր թէ ոչ ինչ կարիցէն, և գործեն իբր ամենայնի կարողք։ Իսկ այլք ոչ առ այլ ինչ համարեալ զայն պիտանացու՝ բայց յարդարացուցանել զան-օրէնութիւնս և 'ի սրտաբեկել զառաջինութիւն, հարցանէին՝ եթէ որպէս եղև նմա մուտ։ Եւ Թեոդեկտոս պատասխանի տուեալ ասէ.

Չբ երբեմն յորժամ հարստահարողք տկարաց խղճիւ և եթ մնայն ոչ սանձահարէին, և հնարք 'ի կիր արկան նահանջելոյ զնոսա երկիւղիւ կրօ-նից։ Յամարշտութիւն համարեցաւ ոչ միայն ապախտ առնել զպաշտօն դից և արհամարհել զտէրութիւն նոցա, այլ և կողոպտել զմեհեա-նս, յափշտակել զանդեայս մեհենականս, և թշնամանել զքուրմս։ Հնօրէնութեանցս այսո-ցիկ անմարթ էր մնալ անպատուհաս, բայց եթէ հատուցումն թշնամանացն առնէր անօրինեալն, և դիմէր առ ոտս բազմաց խոնարհել 'ի պաշտա-մունս սահմանեալս 'ի քաւութիւն։ Արմատ զակն

[1] Եպիզ. 'ի Պրոմ. տող 513։

'ի նա հանապազ պիշ ունելով, եթէ բախան ինչը զնա պարգևօք, ասէին. Զնա 'ի ձեռն պարգևաց ձգեն զնա զիք յորոգայթ[1]։ Իսկ եթէ արկածք ինչ ըստ պայմանի կենացս հասանէին նմա, յաւելուին. Զնա ցասումն երկնից, որում հարկ էր անկանել զնովաւ։ Զթէ յամենայն կեանս իւր ապրէր նա 'ի պատուհասէ, դարձեալ ասէին. Յամեն շանթք երկնաւաքք, այլ որդիք և թոռունք նորա զՀայրենի անօրէնութեանն տացեն զվրէժ[2]։ Զստի սովորութիւն եղև համարել զվրէժինդրութիւն դից հետամուտ մեղապարտին և որդւոց նորա ազգէ յազգ, իբր արդարութիւն 'ի վերայ անօրինելոյն, և որպէս Ձնկատագիր 'ի վերայ յաջորդելոյն յեղերական ժառանգութեան։ Զս համարէին այսու խելամուտ լեալ վասն որոյ իրաց արկածք բազումք խառն ընդ ոճիրս անձետ արարին զՀնագոյն ազգատոհմն Զելադայ. յորոց աւասիկ զոմանս ասեմ յօրինակ։

Զնէոս արքայ Ետողայցւոց անտիոքի առնէ մատուցանել նուէրս Զրտեմեայ նախանձայուզին 'ի վրէժինդրութիւն արհամարհանաց իւրոց. և անտի յաճախեալ պատուհասաբ՝ աւերեն զաշխարհ նորա[3], և արիւնախանձ ոխութիւնք պառակտեալ զազգատոհմն արքունի՝ մինչև ածեն հասուցանեն մահ Զեղեգազրի որդւոյ Զնէոսի[4]։

1 Եսքիլ. 'ի Պերս. տող 93։
2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 91։ Եւրիպիդ. Յիպոլոգ. տող 831 և 1378։
3 Հոմեր. Եղիակ. 9. տող 529։
4 Պաւսան. գիրք ժ. գլ. 31. էջ 874։

Յանցուած իմն Տանտաղեայ ոսոխս հակառակ արեան պեղոպեանց ձգէ զկատաղիս դժոխոց. որոց վաղ իսկ զայն Թունիւքն իւրեանց 'վարակեալ, և ասպա զնեան ձգեալ Մ'զամեմնամէ ուղղէն յեղնն նուիրական Պ'ետերեայ'։ Խնդրէ աստուածուհին զՎիրգէնիա 'ի զոհ, և պատճառանս անտի առնու Կիտեմնեստրա 'ի խողխողել զայր իւր[2]։ Ովրեստէս խնդրէ զվրէժ հօրն մայրասպանութեամբ, և հալածի Յ'ամենեայց մինչև ցխոնարհել իւր 'ի քաւութիւն։

Ընտեսանիցեմք դարձեալ զանընդհատ կարգ սոսկալի անօրէնութեանց և ահագին աղետիցն, որ հասին տանն աղքունի՝ որ այժմ թագաւորէ՝ յաւուրց անտի Կադմեայ, որ հիմնեացն զվրեբէ, մինչև ցորդիս հիքին Յդիպեայ։ Յ'զինչ այսոցիկ դժնդակ պատճառք, բայց զի սպան Կադմոս զվիշապն պահապան աղբերն՝ որ նուիրեալ էր Մ'արեայ, զորոյ զգուստն զՅրմիոնէ ըզծնեալն Յ'աստղկանէ առեալ էր կնութեան։ Հէփեստոս սրտմտեալ նախանձու, արկ զլամբշամբն հանդերձ ներկեալ յոճիրս՝ որ սերեցան յորդիս նորա ազգէ յազգ[3]։

Բայց երանի ազգաց, յորժամ վրէժինդրութիւն երկնից սահմանի յորդիս ևեթ յանցու-

1 Սոփոկլ յԵլեկար. տող 570։
2 Նոյն անդ, տող 530։ Եւրիպիդ. յԵլեկար. տող 1020։
3 Եւրիպիդ. 'ի Փէն. տող 941։ Ապողոդ. գիրք Գ. էջ 169։ Պանիէ, գիցաբ. հտ. 3. էջ 73։

ցելոյն. քանզի բազում անգամ և աշխարհն առ հասարակ նոցին լինի պատժակից, և թշնամիք ուրուք յազգաց ոսոխս յանձինս ձգեն և զգիս նոցա, թէպէտ և ոչ ինչ ընդդէմ նոցին մեղուցեալ։

Կարծիքս այս թշնամանադիրք դից, փոխեցան ապա յայլ իմն ոչ ինչ նուազ թշնամանս նոցին։ Քանզի ոմանց յիմաստնոց զարհուրեալ 'ի յեղափոխութեանց՝ որ վեր 'ի վայր հարեալ կործանեն զերս մարդկանն, համարեցան զօրութեան իմիք խաղալ ընդ խորհուրդս մեր, և դէպ ժամանակի բարեբաստութեան մերում սպասել՝ առ 'ի մատնել զմեզ իւրումն անագորոյն վրէժխնդրութե[1]։

Այլ ապա Թէոդորեկտեայ 'ի վերայ ածեալ, ասէ. Ոստ այլանդակ կարծեացս այսոցիկ՝ մարթի ումեք անկանել յեղեռն կամ 'ի թշուառութիւն, մղեալ ևեթ յումեքէ 'ի դից՝ որում ատելի իցէ ազգատոհմ իւր կամ ազգ և կամ իւրն իսկ յաջողութիւն[2]։

Այլ զի խստութիւն վարդապետութեանս այսորիկ զգալի ևս էր յողբերգութեանքան յայլ շարագրածս, նախնի քերթողք մեր բազում ուրեք ամբեալով զայն 'ի նեբբս ածին, և դարձեալ այսու օրինակաւ մերձեցան 'ի կանոնն

[1] Երոդոտ. գիրք Ա. գլ. 32. գիրք Գ. գլ. 40։ Սոփոկլ 'ի Փիլոկտ. տող 789։

գիրք Բ. հա. 2. էջ 380։ Եւրիպիդ. Յիպպոլ. տող 831։ Կասաւբ. Յերիսատփ. Յանպիան, տող 443։

[2] Նպիլ. առ Պղատ. հատ.

զոր աւանդեցի։ Յաւագայ ոք հարեալ 'ի Ճակատագրէն, առ 'ի ցուցանել զայն արդար՝ յաւելու և զիւրն ինչ յանցուած 'ի Ժառանգեալն 'ի հարց, և մերթ լցեալ զՀարկ Ճակատագրին՝ ապա զերծանի 'ի վախիցն, մինչև յամն նոցին 'ի նմանել մղեալ։ Փեղրա տուչքի եղեռնական տուփանօք, զոր Պտղոմին բորբոքէ 'ի սիրտ նորա առ 'ի կորուստ Պապողիտեայ։ Լու զինչ հնարս 'ի կիր արկանել Լուրիպիդէս. յերկրորդական դէմն զդշխոյն 'ի ներքս ածէ յողբերգութեանն. և ոչ այսչափ միայն, այլ և տայ երկնել նմա և կատարել զսոսկալի խորհուրդ զպարտութեանն. զԱպողոլիտեայ։ Ցուրումն նորա ակամայ յանցանքը, այլ ոչ և եղեռն զպարտութեանն. նմին իրի ատելի անձն նորա որ վայրիկ մի 'ի կարեկցութիւն ածեալ զտեսօղս, ապա զրգռէ զնոսա ընդդէմ իւր 'ի ցասումն։

Այն ինքն Լուրիպիդէս զամենայն ազգմունս ըղձից Ժողովէ յանձն Խիզեանեայ։ Պնպարտ աբեան անմեղին և առաքինւոյ պարտ էր քաւել ըղթշնամանս, զոր Պգամենոն արար Պրտեմեայ։ Լու զինչ առնէ քերթողն. ոչ 'ի լուսն ածէ զաղէտս օրիորդին, այլ աստուածուհին ածէ զնա 'ի Ցաւրիս, դարձուցանել զնա յետոյ յաղթանակաւ Ալեքսադա։

Հրամանք Ճակատագրին ոչ ուրեք հզօրագոյնք

1 Եւրիպիդ. տող 728 և 877։ տող 1583։ Նոյն, Խիզ. 'ի
2 Նոյն, Խիզ. Ալեքս. Ցաւր. տող 783։

իշխեն, որպէս յողբերգութիւնս Սվրեստեայ և Եղեկտրայ. այլ նոքա Թէպէտ և յորդորեալք 'ի ձեռն պատգամաց 'ի խնդրել զվրէժ հօր իւրեանց[1], Թէպէտ և նախ քան զոՀիրն արՀաւրօք և յեռ այնորիկ խղճիւ չարեացն տագնապեալք, Թէպէտ և խրախուսեալք 'ի ձեռն տեսլեան դից՝ որ արդարացուցանէ զնա և բարեբաստագոյնս խոստանայ նոցա կեանս[2], նոքա ոչ ինչ նուազ հակառակ կան ելից ողբերգութեանն։ Սակայն և Հաճոյ ընծային, զի չիք ինչ աղիողորմ քան զվտանգ Սվրեստեայ, քան զաղէտս Եղեկտրայ, և քան զշնորՀակալութիւն եղբօրն և քեռ. զի և չիք ինչ դարձեալ՝ որ ոչ գեղեցկասցի ընդ գըբ-չաւ Եաքիղեայ և Սոփոկղի և Եւրիպիդեայ։

Ա. յլ զարդիս, քանզի ողջամիտ խնամասիրութիւն ելեալ գնել դից կիրս նախանձու և անիրաւութեան[3], կասկածեմ զի Հանդոյն սոցին վէպք նորոգ ածեալք 'ի տեսարան՝ Թէպէտ և նովին Ճարտարութեամբ՝ չիցեն ամենեցուն ընդունելի։ Այլ ինչ երկբայիմ ընդ այն, զի դժուարին թուեսցի տեսանել զաւագագոյն դիւցազնն շաղախեալ 'ի դժնդակ անօրէնութիւն. և վկայ երաշխաւորել ինձ 'ի մեծոյ Աստիդամանս Ճարտարութեամբն՝ զոր 'ի կիր էարկ 'ի վէպս ողբեր-

1 Եւրիպիդ. յՍվրեստ. տող 416 և 593։ Սոփոկղ առ Եղեկտր. տող 35, 70։

2 Եւրիպիդ. յՍվրեստ. տող 1625։ Նոյն, յԵղեկտր. տող 1238։

3 Պղատ. 'ի Տիմ. հա. 3. էջ 29։ Նոյն, 'ի Թէետ. հա. 1. էջ 176։

գութեանն Աղկմէոնի։ Օ՛ի պատմութիւնն տայ նմա իշխանութիւն սուր 'ի կող արկանելոյ մօր իւրոյ Աբիսիլեայ. և բզէք 'ի քերթողաց ողբերգեցին զվէպս զայս, և Աբիսիլիդէս սպառեաց յայն 'ի զուր զհնարս արուեստին՝ առ 'ի բարեքել զսոսկալի ոճիրն՝։ Իսկ Պատրոկլոս հնարս ըստ կիրթ մերոցս ախորժակաց 'ի կիր արկեալ, ապաքէն տայ Աղկմէոնի լինել մայրասպան՝ այլ յանգէտս՝։

Պօղ. Եթէ չիցէ քեզ ընդունելի յանցուածոց և աղետից որդի 'ի հօրէ ժառանգութեամբ սերումն, ապա հարկ համարիս խափանել զսոզոքն՝ որ հնէ ստէպ 'ի տեսարանին ընդդէմ անիրաւութեան դից և խստութեան ճակատագրին։

Թէոդորէթոս. Մի զտառապեալն զրկեսցուք 'ի սիրոյ մանաց, թողցուք նոցա զսոզոքն՝ այլ յարդարագոյն դէմս փոխեալ. զի է նոցա և այլ իմն իսկագոյն իրաց կարգ ոչ ինչ ընդհատ քան զհարկ ճակատագրին ահագին. զտարապայման զանհամեմատութիւնն ասեմ զյանցուածոցն ընդ չարիս զորս զհետ իւրեանց ձգեն, 'ի ծայր թշուառութիւն հասանելով յանցուցելոցն վա՜ առաջամայն ինչ կրից և վարկպարազի անխոհականութեան, է ուրեք՝ զի և վասն կարի խոհականութիւն, և իշխանին յանցուածոց զբովանդակ աշխարհին բերելով զթշուառութիւն։

Աբկածք այսպիսիք յաճախ պատահէին 'ի

1 Աբիսոոս. յղ. յիշատ. 2 Նոյն. յղ. քերթ. գլ. 14. գիրք Գ. գլ. 1. հմ. 2. էջ 28։ էջ 663։

վաղնջուց ժամանակս, յորս կիրք սաստիկք՝ փառասիրութիւն և քինախնդրութիւն այլազգին հանդերձ՝ համարձակ զամենայն զօրութիւն 'ի կիր արկանէին։ Այլ ողբերգութիւն զդիւցազանց ժամանակացն նախ էառ 'ի նուագ զդէպս, յորոց կէսք 'ի գիրս Հոմերոսի աւանդեալ կային, և առաւելագոյնք 'ի խմբագիր ուրեմն անուանեալ Պարունակ դիւցազնական՝ յորում նախնի աւանդութիւնք Յունաց յայլ և այլ մատենագրաց ժողովեալ էին[1]։

Դաց յաղբերէ աստի, ուստի Սոփոկղ զբեթէ զամենայն ողբերգութեանցն իւրոց էառ զվէպս, են և յարդի պատմութեանց առեալք. և կէսք համարձակեցան երբեմն ստեղծանել զվէպս ողբերգութեանցն իւրեանց։ Այսքիղոս զպարտութիւն Պարսեբսեայ 'ի Սաղամիս ած 'ի տեսարան[2], և Փրինիքոս զառումն Միլետայ[3]. Աղաթոն ողբերգեայ վէպս բնաւին կեղծեալս[4], և Եւրիպիդէս այլաբանականս[5]։

Հաճոյ եղէն փորձք նոցա, այլ ոչ հանապազորդեցին. կամ զի հանճար մեծ առ 'ի յաջողութիւն այսոցիկ խնդրի, և կամ զի պատմութիւնն բաւնայ զազատութիւն քերթողին, և կեղծիք կարի համարձակ տանի նմա ազատութիւն,

1 Կասաբ. ՅԱԹԷՆ. գիրք Է. գլ. 3. էջ 301։
2 Եսքիղ. 'ի Պարս։
3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 21։
4 Արիստոտ. յլ. քերթ. գլ. 9. էջ 659։
5 Դիոնիս. ազիկ. յլ. արհ. Ճարտ. հտ. 5. էջ 301 և 355։

որ երկոքին և ս դժուարընդելք էն ընդ մերում տեսարանիս։ Լա զինչ ասա խնդրի. արարուած ինչ ՀՀմարտատիպ, յորում դիք և ստուերք յա՜ՀՀախ 'ի նեերքս մուծցին։ Լթէ արդի ինչ իրս առցես ողբերգել, հարկ լիցի քեզ 'ի բաց թողուլ զքանչելիս. իսկ եթէ ստեղծանիցես զիրսն, ոչ պատմութեանն պատսպարան լինելով այնմ և ոչ կանխակալ կարծեաց հասարակաց, դիցես զայն 'ի վտանգ անհաւանականութեան'։ 'Լմին իրի գեղեցկագոյն այժմու ողբերգութեանցն մերոց վեպք 'ի սակաւուց ոմանց վաղնջուց ազգատոհմից առեալ են, որպէս Մղկմէոնին, Թիւեստեայն, Լդիպոսին, Տեղեփեայն, և այլոց ոմանց դիւցազանց ազգատոհմք, ընդ որս երբեմն բազում այնչափ ահագին արկածքն անցին[2]։

'Լնէնէտ. 'Լերեա ինձ ասել յայսնապէս, զի ծանրատաղտուկք են ողբերգութիւնքդ՝ զնոցս միշտ դարձեալ վերստին 'ի տեսիլ ածելով զՄ՜գամեմնոն և զՊվրեստէս և զԼդիպոս և զնա՜ւից առ 'ի մահ դատապարտելոց հանդէս։ Լա զինչ պարծանք իցեն յանդիման առնել զսովորական և զծրդեալ իրս։ Ինձ յոյժ զարմանալ գայ ընդ ամենութիւն մտաց ձերոց, և ընդ երկայնմտութիւն սաթենացւոց։

Թէոդեկտոս. Ակարծեմ թէ բովանդակութեամբ ասիցես զայդ, տեղեկագոյն քան զայլս

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 9. էջ 659։

[2] Նոյն անդ, գլ. 13. հա. 2. էջ 662. գլ. 14. էջ 663։

գիտելով՝ զի ողբերգեալ առ մեզ վէպքդ անսպասելիք են, և զի հարկ է մեզ զընկալեալ աւանդութիւնս ըստ կարևորագոյն և եթէ հանդամանացն պահել անփոփոխ։ Զի թէպէտ և պարտ է Կլեոտեմնեստրայ մեռանել Յովեստեայ, և Էրիփիլեայ Մղկիմոնէ[1], այլ զի զհանդամանս իրաց նոցա այլափոխս տան աւանդութիւնք[2], մարթ է քերթողին ընտրել յայնցանէ զպատկանաւորս իւրում առաջարկութեանն, կամ այլ փոխանակ նոցին ստեղծանել։ Այնպէս և 'ի ծանօթից դիմաց շատ է նման զմի ոք կամ երկուս 'ի ներքս մուծանել, յայլսն աղատ է[3]։ Այլ իրք իւրաքանչիւր ընծայեն անպարոյր զանազանութիւնս. և ոչ ևս իցեն նոյն, 'ի փոխել քերթողին զինձիոն նոցա և զելս իրացն[4]։

Զանազանութիւնս ասեմ 'ի վէպն, զի կէսք 'ի նոցանէ պարզք են և կէսք յօդուածոյք[5]։ Պարզք, եթէ արարուածն միօրինակ յարաձգեալ կատարի՝ առանց ինչ պատահարաց փոփոխումն կամ խոչ ընթացից նոցա 'ի ներքս արկանելոյ։ Այլ յօդուածոյք, եթէ յայտնութեամբ անծանօթից փոխին կցորդութիւնք զիմաց ընդ միմեանս, կամ պատահարք յեղափոխեն զպայման նոցա, և կամ երկոքին իսկ 'ի ներքս

1 Արիստոտ. յղ. քերթ. էջ 659։
հա. 2. գլ. 14. էջ 662։
2 Պարտաց. Սոփոկլ. Նաստագր. Յէաս։
3 Արիստոտ. անդ. գլ. 9.
4 Նոյն անդ. գլ. 18։
5 Նոյն անդ. գլ. 10 և 11. էջ 660։

խառնին։ Բստանօր ինդիրը եղէն զկրկնակի վի-
սպաց, և յօդուածոյք նախասպատիւ քան զսպարզս
համարեցան[1]։

Օ անազանութիւնս ասեմ դարձեալ 'ի յա-
բակից պատահարսն, որ ածեն սոսկումն և գթու-
թիւն։ Եթէ կրկին արգասիքս այսոքիկ ներգործ-
ին 'ի բնաւորական զգացմանց, որ չՀանաչիցին
կամ Հակառակքն իսկ այնոցիկ գործիցին, որպէս
զի վտանգ ումեք 'ի դիւցազանց առաջի կայցէ
կորուսանելոյ զկեանս, յայնժամ սպանօղն կամ
որ Հանդերձեալն է սպանանել՝ մարթի քառակի
գործել զսպանութիւնն։

Եւս՝ կամակար գիտութեամբ, որպէս 'ի բա-
զում ողբերգութիւնս նախնի քերթողաց։ Օ-
բինակ իմն, Մեղէա յողբերգութիւնս Եւրի-
պիդեայ մտաբերէ 'ի սպանութիւն որդւոց իւրոց,
և կատարէ զնորՀուրդն[2]. այլ այնչափ առաւել
գտանի դժնդակ անօրէնութիւն նորա, որչափ զի
չէր ինչ Հարկ սպանութեանն 'ի միջի։ Թուի ինձ,
զի ոչ ոք զարդիս իշխեր 'ի փորձ ինչ այսպիսի։

Երկրորդ՝ յանգէտս գործել զսպանութիւնն,
և յետ գործոյն ասպ իրաղեկ լինել, որպէս Ե-
դիպոսն Սոփոկղի։ Օ՛ի անգիտութիւն եղեռնաս-
գործին մեղմէ զդժնդակութիւն գործոյն, և տա-
կաւ յայտնութիւն եղեռանն ազդէ 'ի տեսօղս

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 13. էջ 661։
[2] Նոյն անդ. գլ. 14. էջ 663։

կարեկցութիւն յոյժ։ Բ.յս հնարք ընդունելի են մեզ։

Երրորդ՝ եթէ մերձ՝ի կատարումն խափանեացի յանկարծ սպանութիւնն, անակնկալ յայտնութեամբ։ Որպէս Պերովպէ ճանաչէ զորդին, և Իփիգենիա զեղբայր իւր, ՝ի կռռել անդ զհարուածն։ Այս քան զամենայն հնարս ընտրելի է այս։

Պօղ. Այս կարի յիրաւի խակ. զի՝ի շողացուցանել Պերովպեայ զսուսերն՝ի վերայ որդւոյն, շուկ ընդ տեսողս ընթանայ, որպէս յաճախ իսկ զփորձ առեալ գիտեմ։

Թէոդորէկոս. Իսկ չորրորդ օրինակն յոռեգոյն քան զամենայն, այն է՝ ՝ի ժամ կատարման գործոյն փոխել յանկարծ՝ի խորհրդոց. զոր գրեթէ ոչ ուրուք՝ի կիր արկեալ է։ Բ.րիստոտէլ երբեմն ինձ յօրինակ ածէր զ.մն, որոյ՝ի վերայ հօր իւրոյ Կրէոնի ձգեալ զսուսեր՝ փոխանակ հարկանելոյ զնա գնայ զիւրովին[1]։

Թէոդորէկոս. Այս ոչպէս մարթէր նմա հարկանել զհայրն, զի սա զարհուրեալ՝ խոյս ետ՝ի հարուածոյն[2]։

Թէոդորէկոս. Կարող էր զհետնորա հասանել։

Պօղ. Թերևս ոչ այլ ինչ կամէր նա՝ բայց յանդիմանն աչաց հօր իւրոյ գնալ զիւրովին, որպէս

1 Արիստոտ. յղ. քերթ. 2 Սոփոկլ, Անտիգ. տող 1248։
ԳԼ. 14. հտ. 2. էջ 663։

թուի իսկ սպառնալ յառաջագոյն՝. զի քաջ իսկ հմուտ էր Սոփոկղ պատշաճիչ տեսարանին, և չէր մարթ նմա տալ մտաբերել առաքինուոյն Յ-մենի՝ ի հայրասպանութիւն։

Օրեստես. Յա՛ ընդէ՞ր ոչ մտաբերէր. գիտիցես զի Յմեն պատրաստէր առնուլ կնութեան զԼ՚նտիգոնէ՝ զոր սիրէրն և որում սիրելին էր. և հայր նորա հրաման ետ թաղել զօրիորդն կենդանեւոյն. իսկ Յմենի չկարացեալ ողբել արտասուօք իւրովք զհայրն, եգիտ զսիրուհին սպանեալ, և առ ոտս նորա թաւալեր հեղձամղձուկ՝ ի կատաղութենէ և՝ ի տարփանացն։ Ա՛յդ քեզ օտա՞ր ինչ թուիցի, զի տեսանելով նորա յանկարծ զԼ՚ուէոն՝ յարձակեր՝ ի՛նա, ոչ իբրև՝ ի հայր իւր՝ այլ իբր՝ ի դահիճ սիրուհւոյն։ Յա՛ ոչ զհետ բանաւորին դիմէր՝ ի խուսանէն, զի առաւել ցանկայր կարձել զդժպհի կեանս իւր։

Թեոդեկտոս. Ա՛զնուականագոյնս զնմանէ ածգմտաւ. յաւել մանաւանդ, զի առաջին շարժումն նորա սրտմտութեան էր և վրէժինդրութեան, իսկ երկրորդն խղճի մտաց և առաքինութեան։

Օրեստես. Յոր դէմս և կալցի ոք զայն, ինձ թուի՝ զի մի յաղիողորմ և՝ ի վսեմագոյն մասանց մերոյ տեսարանիս է. այլ Ա՛քիստոտէլն քո չեղև այսմ խելամուտ, զի անփորձ էր արդեօք սիրոյ։

՝ Սոփոկղ. ՅԱՅտիդ. տող 762։ Պարապ. անդ։

Թէոդեկոս. Օ գոյշ լեր, սիրելեալդ իմ Օ ո-
պիրէ, չնշաւակել զծածուկս սրտի քո։ Շնոր-
հեմ քեզ զօրինակդ. այլ զօրէնսն հաստատուն
կալցուք, զի ոչ է պարտ սկսանել գործ ինչ դժ-
դնդակ, և կամ չթողուլ զայն անպատճառ յետ
սկսանելոյ։ Դարձցուք անդրէն 'ի կարգ զանազա-
նութեան վիպացն։

Օ անազանութիւն ասեմ դարձեալ 'ի յայտ-
նութիւնս անծանօթից, որ է մի 'ի զօրաւո-
րագոյն մասանց բարացուցականին, մանաւանդ
ուր յանկարծ յեղափոխին զպայման անձանց։
Զգի ազգի յայտնութիւնք են անծանօթից[2].
կէսք անարուեստ, և սովորական հնարք հետեւակ
քերթողաց, հաստատեալք 'ի նշանս պատահա-
կանս, կամ 'ի բնականս, որպէս յապարանջանս,
'ի քառամանեակս, 'ի սպիս և 'ի դրոշմս տպա-
ւորեալս 'ի մարմնի*, և կէսք ճարտար արուես-
տիւք հնարաւորեալ։ Դրուատի Դիկեոսնե-
այն 'ի Ալիպացիսն իւր. զի տեսանելով դիւց-
ազնին զնկարագործ պատկեր իւրոց աղետիցն՝
արտասուէ, և արտասուք նորա մատն լինին ան-
ձին նորա։ Յա Պողնիդեայն՝ որ յողբերգու-
թեանն Լիւիկեանեայ. զի Ոլիսեսեա 'ի ժամ
զենմանն աղաղակէ. Բ. յսպէս քոյրն իմ Լիւիկե-

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 11. հտ. 2. էջ 660։

2 Նոյն անդ, գլ. 16. էջ 664։

* Արիստոտել յիշատակէ յայտնութիւն անծանօթի ուրուք լեալ 'ի ձայնէ կկոցի 'ի Տերեսիայն ողբերգութեան Սոփոկլի, որ արդ չէ 'ի միջի։ (Արիստոտ. յղ. քերթ. գլ. 16. էջ 664։)

նիա զոհեցաւ յԱ՛ղիս։ Պեղեցկագոյնք 'ի յայտնութեց անդատին 'ի վիպացն յառաջ գան, օրինակ Լդիպոսն Սոփոկղի և Լուրիպիդեայ Իփիգենիայն յԱ՛ղիս՝։

Օ՝անազանութիւն դարձեալ 'ի նկարագիրս բարուց։ Պիւցազանցն որ յաշխարհն 'ի տեսարանս մեր՝ սահմանեալ էն առ մեզ բարք. Ա՛քիլլեայ բուռն և սաստիկ, Ոդիսեայ խոհական և կեղծաւոր, Մենելայ անողոքելի և անգութ. այլ այս ամ՝ հանգամանաց մարթ է այնպէս աստիճանել, զի նկարագիրքք բազմք այլևայլք 'ի միոջէն յառաջ գայցեն՝ զերևելագոյն ևեթ տիպս հանգոյն միմեանց բերելով. որպէս Լլեկտրայն[2] և Փիլոկտետեայն[3] յողբերգութիւնս Լսքիղեայ, Սոփոկղի և Լուրիպիդեայ։ Օրէն է քեզ ստուարացուցանել զթերութիւնս Ա՛քիլլեայ, այլ լաւագոյն է ծածկել զնոսա պայծառութեամբ առաքինութեանցն, որպէս արար Հոմերոս։ Լս Ա՛զաթոն քերթող զնորին զհետ երթեալ, ած 'ի տեսիլ զԱ՛քիլլէս որպիսի չև ևս էր երևեալ 'ի թատեր՝։

Օ՝անազանութիւն դարձեալ յելս ողբերգութեանն։ Ամենի կէսք կատարին 'ի բարեբախտութիւն, այլք 'ի թշուառութիւն. և էն՝ յորս

1 Արիստոտ. յՍ. քերթ. գԼ. 16. հա. 2. էջ 665։

2 Եպիղ. 'ի Գ՝ոյեփ։ Սոփոկղ յԵւրիպիդ. յԵլեկտր։

3 Դիոն. ոսկեբերան. Ճառ 52. էջ 548։

4 Արիստոտ. անդ էջ 664։

կրկնակի յեղափոխութեամբ բարեաց և չարաց ներհակքն պատահեն բախտք։ Ուրեմն գրեթէ ոչ այլ ուրեք 'ի կիր արկանի, բայց 'ի կատակերգութեան'։

Օրոպերոս. Այս ընդդէմ իցէ չառնուլ զայն 'ի կիր և յողբերգութեան. յաճախեսցեն տրտմանքն ընդ ամենայն ողբերգութիւնն, այլ գէթ 'ի կատարածին լիցի ինձ ոգի առնուլ, և սիրտ իմ սիրտիւեալ կալցի զվարձս կարեկցութեանն։

Թեոդեկտոս. Կամիցիս ապա զի շինուցից զգութ գորովոյ որ յուզին 'ի քեզ, և արգելից զարտասուս՝ զոր քաղցր է քեզ հեղուլ։ Դեղեցկագոյն ևս քան զայն հատուցումն չկարեմ մատուցանել բազմագորով սրտիդ, քան յարաձգել որքան է հնար զյոյզս կրից նորա։ Ի խանդաղատելն տեսլեանց անտի, յորս քերթողն Ժողովէ զամենայն հնարս արուեստին Հարտարիօսութեան, յառաջ գայ առժամայն ևեթ ըստ մտանեայ կարեկցութիւն. այլ մեզ զայն խնդրելի է, զի վէպքն ինքնին ծնանիցին զկարեկցութիւն, և տակաւ յաճախեսցեն զայն, և 'ի լուր ևեթ անուան ողբերգութեանն ազդեսցեն զայն 'ի սիրտս տեսողաց։

Օրոպերոս. Այս ոչ գտանիցի այդ յողբերգութիւնս, յորս բարեաց և չարաց ներհակքն պատահեն բախտք։

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 13. հա. 2. էջ 662։

(Ամբոխեալսն. Արդեսն ասացի իսկ, ախորժն զոր դոքա մատուցանեն՝ կարի իմն նմանին կատակերգութեանն ախորժակաց։ Այլ թէպէտ ախորժեն տեսօղք ընդ կրկնակի յեղափոխութիւնն, և քերթողք իսկ նախամեծար առնեն զայն, այլ ինձ թուի՝ զի երկրորդ զայն դասելի է։ Ի փորձ Պօղայ ապաստան առնեմ զվՃիռն, որ այն քերթուածք իցեն՝ որ արդարև ողբերգականքն համարիցին[1]։

Պօղ. Անդրիկ առհասարակ, որոց տրտմականք են եղք։

(Ամբոխեալսն. Այս դու Անաքարսիս, որպիսի՞ ինչ կրեցեր կիրս ընդ այլ և այլ բախտս՝ յորս զաւապագոյն դիւցազնն 'ի տեսիլ ածեմք։

Անաքարսիս. Ի սկզբան հեղուի արտասուս յոյժ առանց խելամուտ լինելոյ 'ի պատճառսն. և ապա 'ի միտ առի զի գեղեցկագունից յողբերգութեանցն ձերոց տկարանայր ազդուութիւն յերկրորդումն նուագի ածելոյ նոցա 'ի տեսարան, այլ մանաւանդ այնոցիկ յողբերգութեանց՝ որ կատարին 'ի բարեբաստութիւն։

Ելիսեթ. Արդեսն ես մնայ ինձ տարակոյս. թուի ինձ թէ դու քոյոց բանիցդ ոչ զհետ գաս. քանզի կամիս եղից ողբերգութեանն տրտմականս գոլ, և դարձեալ գովես զյայտնութիւնս անծանութիւն՝ որ 'ի թշուառութենէ զնոսա 'ի բարեբաստագոյն փոխեն պայման[2]։

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 13. հտ. 2. էջ 662։

[2] Տասիկ, խելամտ. 'ի վերայ քերթ. Արիստոտ. էջ 224։

Թեոդեկտոս. Պռավեմ զայսոսնութիւնս անծանօթից՝ որ խափանեն զերդերունս, այլ ոչ որ ելս ողբերգուին առնիցեն։ Ովրեստէս ծանօթս տուեալ Ոփիգենեայ՝ կայ ընդ զինուք Թոսվասայ 'ի մահ, նոյն և Լեկարայ տուեալ ծանօթս՝ մասնի 'ի ձեռս կատաղեացն դժոխոց՝. ապա վտանգէ 'ի վտանգ և թշուառութենէ 'ի թշուառութիւն անցանէ։ Լուրիպիդէս առ 'ի զերծուցանել զնա յերկրորդ թշուառութենէն՝ զդիս 'ի ներքս մուծանէ. հնարքս այս թերևս կարևորք էին Յոփիգենիայնոցա 'ի Տաւրիս, այլ ոչ Ովրեստէսն. զի ողբերգագոյն լինէին վէպք սորա, եթէ զըսպանօղս Կլիտեմնեստրայ թողցը 'ի թախիծս խղճի մնաց իւրեանց։ Ասէ Լուրիպիդէս ախորժէր իջուցանել զդիս կազմածովք, և կարի յաճախ զանարուեստ հնարս զայս 'ի կիր արկանէ առ 'ի բացայայտել զառաջարկութիւն իւր, և ելս առնել ողբերգութեանն։

Օրոստէս. Լայերեաս ուրեմն զերևմունս դից, այլ շուք մեծ յաւելուն նոքա 'ի տեսարանի։

Հիէրոնիմոս. Լաւ դիւրութիւն ևս յոյժ յաւելուն քերթողին։

Թեոդեկտոս. Ոչ ինձ ընդունելի, բայց միայն ուր հարկ առաջի կայցէ գիտելոյ ինչ յանցելոց կամ 'ի հանդերձելոց՝ զոր չիցէ մարթ գիտել այլազգ[1]։ Զանց հարկիս այսորիկ, հրաշք յաճա-

[1] Եւրիպիդ. Ովրեստ։
[2] Արիստոտ. յզ. քերթ. գլ. 16. հա. 2. էջ 664։

խեն զփառս հիւսան կազմածոյն քան զքերթողն։

Պինդ կալցիս յամենայնի զօրէնս բանին և զկանոնս նմանուն ձշմարտին։ Այնպէս զվէպս քո յօրինեսջիր, զի բացատրութիւն նորա և կնձիոն և լուծումն իցեն առանց ձգանց։ Մի հրեշտակ յերկնից իջցէ, պատմել մեզ ցուրտ նախերգանօք որ ինչ յառաջագոյն անցք անցեալ, և որ ինչ հանդերձեալ են անցանել։ Կընձիոն, յօդեալ 'ի խափանաց յառաջագունից քան զարարուած ողբերգութեանն և որ յարարուածոյ անտի յառաջ գան, պատատեսցի և ա քան զև՝ անդստին յառաջնոց տեսլեանցն, յորս եղք ողբերգութեանն սկիզբն առնուն[1]։ Այրտուղութիւնք մի իցեն, մի յոյժ երկարաձիգք և մի յանձխաւորք[2]. և յարակից պատահարք արագ արագ 'ի միմեանց ծնեալ, դեպս անակնկալս 'ի ներքս ածիցեն[3]։ Համառօտիւ ասացեալ, այլևայլ մասունք արարուածոյն այնպէս քաջ ընդ միմեանս զօդեսցին, զի 'ի հանել զմի 'ի նոցանէ 'ի բաց կամ 'ի տեղափոխել և ևեթ, եղծցի ամենայն կամ կերպարանափոխ լեցի[4]։ Մի նմանեսցիս քերթողաց՝ որք զկնձիոն ձարտարահիւս չկարեն ձարտարութեամբ լուծանել[5], և անհմտաբար պատաղեալք 'ի խուչ չգտա-

[1] Արիստոտ. յԳ. քերթ. գլ. 16. էջ 664. գլ. 18. էջ 666։

[2] Նոյն անդ, գլ. 17. էջ 665։

[3] Նոյն անդ, գլ. 7. էջ 658. գլ. 9. էջ 660։

[4] Նոյն անդ, գլ. 8. էջ 659։

[5] Նոյն անդ, գլ. 18. էջ 666։

նեն եւ բաց յօգնականութենէ երկնից։

Հայցուցի քեզ զպէսպէս յօրինուածս վիպացն. յաւելեցես յայն և զբազում ազգի ազգի զանազանութիւնս խմնստից և զդաշնակս երաժշտութեան. և մի՛ և ելցի քեզ բողոքել զամբութենէ առաջարկութեանցս մերոց, 'ի միտ առեալ՝ զի կերպարանափոխս ևեթ առնել զնոսա այնպէս է, որպէս հանձարել 'ի մտաց։

Ա՛ԼԷԷՏՐ. Ա՛ՅԼ դուք ոչ ըստ բաւականին կենդանացուցանէք զնոսա. և ուրեք ուրեք թուի՝ թէ չիշխիցէք մատչել 'ի խորս կրից։ Այնթէ 'ի ձակատ միմեանց առաջի կայցէ հանել զկիրս, կամ հակառակ խիստ պարտեաց կացուցանել՝, հազիւ տայք նշմարել զանլռելի մարտնոցն ընդ միմեանս։

ԱՆԷՈՊԵՆՈՍ. Ա՛ռազում ուրեք չքնաղագեղ երանգովք գոյեցես նկարեալ զսէր Հարսանեկան[2] և զգութ բարեկամութեան[3], և հզօրագոյն զբաւ յառնախ ուրեք զրոշմեալ զմոլեգնութիւնս փառասիրութեան[4], ատելութեան[5], նախանձու[6] և վրէժխնդրութեան[7]։ Կամէիր թէ անդ կենդանագիրք սրտից մարդկան և հետաքրքրութիւք կրից նոցա քեզ յանդիման առնէին։ Ա՛ռուեստք իւրաքանչիւր և գիտութիւնք 'ի սահմանս իւրեանց ամփոփին առ մեզ. բարոյականին է և հռետորա-

1 Եւրիպիդ. ԱՌՎԵՏ։
2 Նոյն, ԱՆԶԿԵՍՍԷՍ։
3 Նոյն, ԱՌՎԵՏՍԷՍ։
4 Նոյն, 'ի ՓԵՆԻՍՍԱՅ։
5 Սոփոկլ, 'ի ՓԻԼՈԿՏԵՏ և ԱՅԱՍ։
6 Եւրիպիդ. 'ի ՄԷԴ։
7 Եսքիլ. ԱՅԱՄ։

կանին տեսական գիտութիւն կրից՝, մեզ անկ է արգասեաց նոցին միտ դնել և ոչ գաղտնեաց. զի ոչ եթէ զմարդ առաջի առնեմք աչաց քոց, այլ զյեղափոխութիւնս կենաց նորա, և մանաւանդ զարկածս որ ընկնեն զնա[2]։ Ողբերգութիւն ոչ այլ ինչ է, բայց պատմութիւն ահագին ինչ և ողորմագին դիպաց. որպէս զի 'ի կատարած բազմաց յողբերգութեանցս մերոց արտասանել պարուն զբանս զայս. Լ.ՈՒՈՆՕՐ ԴԷՊ ԿԱՊԱԼԻՆ։ 'Լկատեալ արդ 'ի դէմս յայս զողբերգութիւն՝ 'ի միտ առցես, զի կարևոր է բացատրել 'ի նմա զՀանգամանս՝ որք ցանկալի և առնեն զպատմութիւն, և ողորմագոյն զելս ողբերգութեն. և կարևորագոյն և այն է, զգացուցանել քան ասել զայմ։ Լ. յս է Ճարտարութիւն Հոմերի. չյամէ նա 'ի մանրապատում առնել զգութ գոլոյց բարեկամութեան Լ.քիլլեայ ընդ Պատրոկղի, այլ 'ի մեռանել սորա՝ յայտնի այն յուղխիցն արտասուաց Լ.քիլլեայ և յորոտընդոստ շանթաձիգ հարուածոցն։

Ս.ՈՂԲՐՈ. Միշտ իսկ լեցի ինձ զարմանալ ընդ այն, զի գորովագոյնն և հզօրագոյնն 'ի կիրս ցարդ անտես լեալ է։ Լոգք սիրոյ 'ի սիրտ Գեղրայ համաձարակ բորբոքեալ, և ոչ կայծք նորա սիռնին յողբերգութեանն Եւրիպիդեայ[3]։ Ամ-

[1] Արիստոտ. յղ. յեշատ։ [2] Նոյն, յղ. Ճարա։ [3] Եւրիպիդ. Լիպպոլ։

6. էջ 657։

կայն սկիզբն լուցանելոյ տուփանացն և տակաւ վառումն նոր և տաղնապք և թախիծք մնացն խղճի քանի՛ Հոխ տեսարանս կարէին ընծայել ընդ նկատագործ զրչաւ քերթողին, և որչափ ևս առաւել դէմք դշխոյին շարժէին նոքօք զտեսօղս 'ի կարեկցութիւն։ Լաւ սէր Լամենի ընդ Լուսիդոնէ, զորմէ եղէն մեզ բանք՝, ընդէր ոչ զկենդանութիւն արարուածոյն գործիցէ. քանի՛ պատերազմունս չյարուցանէր այն 'ի սիրտ հօրն և տարփաւորաց, քանի՛ պարտս պատկառելս նոցա, և քանի՛ աղետից երկիւղ։

Թէոդեկտոս. Ա՛յլ նկարագրութիւնքդ այդոքիկ, որոց անտեսն լինել զարմանք թուին քեզ, ոչ միայն ապականիչք բարուց, այլ և անարժանք գտանէին տեսարանի՝ ուր դէպք մեծամեծք և բարձրագոյն կիրք ածին 'ի հանդէս։ Ի դարս դիւցազանց ոչ ինչ 'ի յեղափոխութեանցն, զորս ողբերգութիւն յանդիման առնէ մեզ, 'ի սիրոյ կսլաւ սկիզբն։

Օդոէրոս. Լաւ ուստի՞ պատերազմին Տրովադայ սկիզբն։

Թէոդեկտոս. Ա՛յ կորուստ Հեղինեայ զինուորեաց զՅոյնս ընդդէմ տրովացւոց. այլ զԱ՛ենեզաւոս վրէժինդրութիւն յայանի անիրաւութեանն, և զայլ թագաւորս ուիտ նիզակակցութեանն ընդ նմա՝ առ 'ի չտալոյ զՀարմանն 'ի բայ[2]։

1 Սոփոկլ. ՅԱՆՏԻԳՈՆԷ։
2 Եւրիպիդ. Իփիդ. ՅԱՆՏԻԴ. տող 58։

ոչ այլ ինչ նոքա 'ի համարձակեալ սէրն նկատե-
ցին, բայց միայն զիշնամանս պատուոյ։

Միրոյ սեփական դուշնաքեայք ևեթ էն
հնարք, զորս կատակերգութեան թողլի է. քա-
նի՛ հառաչանս և արտասուս և նուաղմունս քեր-
թողք նուագայարդարքք անդանօր չբացատրիցեն։
Լակ եթէ ուրեք երբէք յաշնուական և 'ի վեհ
կերպարանս երևիցի սէր, անդ վրէժինդրութիւն
և փառասիրութիւն և նախանձ ներգործեն, ե-
բեքին հզօր զօրութիւնք՝ ոչ ուրեք յողբերգու-
թիւնս մեր անտես լեալք։

## ԺՈՂՈՎ ԵՐՐՈՐԴ

Լինդիրք 'ի զումարել ժողովոյն 'ի մէջ ար-
կան յաղագս բարառնութեանց և խմաստից և
զգացմանց և եղանակի բանից, որ պատկանին
ողբերգութեան։

Լսօսել կալաւ Արիստոտես, և ասէ. Լ քեր-
թութիւնս նմանողականս, մանաւանդ 'ի դիւց-
աշնականն և 'ի թատերական, բարառնութիւն
կոչի Ճշգրիտ համեմատութիւն գործոց և զգաց-
մանց և խորհրդոց և բանից դիւցազնին ընդ նկա-
բագիր բարուց նորա։ Այս պարտ է, զի անդրս-
տին 'ի սկզբանէ ողբերգութեանն երևեսցին 'ի
բանս և 'ի գործս նորա յօժարութիւնքն որ կրին
'ի նմա, և վերջին խորհուրդք մտաց նորա[1]։

[1] Արիստոտ. յղ. քերթ. գլ. 6. հտ. 2. էջ 657։

Բառիք ընծայեն 'ի տեսիլ զտիպս նկարագրի գործողին[1], նմին իրի և պարտ է նոցա լինել բաբեւօժար։ Օգոյշ լեր չյաձախել զթերութիւնս նոցա, այլ մնանանդ նուազել. քերթութիւն հանգոյն նկարչութեան գեղեցեսկ զկենդանագիր, առանց անտես առնելոյ զնմանութիւն։ Մի արատեր զբարս դիւցազին, թէպէտ և 'ի ստորակայից ոք իցէ, առանց հարկի։ Ի միում ուրեք յողբերգութեանցն Եւրիպիդեայ[2] ըստ դտանին բարք Մենեղաւեայ, զի առանց իրիք բռնադատութեան գործէ զչար[3]։

Պարտ է բարուց լինել և և սպատշաձ, նման, և անփոփոխ, զի իցէ 'ի դէպ՝ հասակի և պատուոյ դիւցազնին, և մի հակառակ նկարագրին՝ զոր նախնի առանդութիւնք տան մեզ զնմանէ, և զի մի երբեք յընթացս ողբերգութեանն ինքն իւր հակառակեսցի։

Եթէ պայծառ և երևելի առնել կամիցիս ըզբարս, ընդհակն կացո 'ի դիմի. տես զիարդ Եւրիպիդէս զբարս Պողնիկեայ ազգողագոյն գործէ համեմատութեամբ բարուց եղբօր նորա Եւտեոկղի[4], և Սոփոկղ զԷլեկտրայն համեմատութեամբ բարուց քեռ նորա Քրիսոթեմեայ[5]։

Պարտ է մեզ հանգոյն Հարտարախօսաց գութ

1 Արիստոտ· յդ· քերթ· հա· 2· գլ· 6· էջ 656
2 Եւրիպիդ· յՈվիդիոս։
3 Արիստոտ· անդ, գլ· 15· էջ 663։
4 Եւրիպիդ· 'ի Փինիսա։
5 Սոփոկղ յԷլեկտր։

և ահ և ցասումն արկանել 'ի դատաւորս մեր, և հանգոյն նոցին ցուցանել զՀիմարտութիւն, հերքել զներհակս, ստուարացուցանել և փոքրկացուցանել զերս[1]։ Օ՜օրէնս այսոցիկ գտցես դու 'ի զերս հռետորականս՝ որ 'ի լոյս ածան, և զօրինական յողբերգութիւնս՝ որ են զարդք տեսարանիս մերոյ։ Ա՜նդ պայծառանայ գեղեցկութիւն իմաստից և աղնուականութիւն զգացմանց, անդ յաղթանակ բարբառ Հիմարտութեան և Հարտարիսօսութիւն տառապելոց։ Ցեսանիցես զԱ՜երովպէ, զ՚Կովբէ, զ՚Հեկտրա, զ՚Նոտիպոնէ, զ՚Լաս, զՓիլոկտետ պաշարեալս մերթ յարհատաց մահու և մերթ յամօթոյ և 'ի յուսահատութենէ. լուիցես զողբս նոցա, զբարտառուբացագանչութիւնս, և զխանդաղատելի ձեւս բանից՝ որովք ծայր 'ի ծայր ընդ տեսարանն լսելի առնեն զբարբառ բնութեան 'ի սիրտս ամենեցուն, և ընտն զաչս արտասուօք։

Ա՜ռ ուստի այս ամենայն զարմանալի ազդեցութիւնք, բայց զի քերթողք մեր ներկուռք են և քաջահմուտք 'ի կացուցանել զդիւցազունս 'ի բարացուցագոյն դէմս, և զի զբարս նոցա յանձին բերելով խորասուզին յայն աւելի կիրս, որ խնդրի առ ետեղ։

Ա՜ և քեզ մարթ ըստ արժանն բաւականին խելամուտ լինել 'ի նախատիպսն չքնաղս. նկատես ջիր զգեղ նոցա, այլ ուսիր դատաստան առնել

[1] Արիստոտ. յՊ. քերթ. գլ. 19. էջ 667։

զնոցանէ, և մի կոյր զարմացմամբ մեծարէր զսխա-
լանս նոցա։ Մի երկիցես զՅոկաստայն եպերել
զաղերս. զի 'ի միաբանել որդւոց նորա Թագա-
ւորել փոխանակաւ 'ի Թեբէ, իբրև ջառնոյր
յանձն Լատեոկղ ի ջնանել յաթոռոյ, 'ի յորդո-
բանս՝ զոր ածէ դշխոյն առ 'ի համոզել զնա՝ յա-
ւելու և զայն, զի հաւասարութիւն երբեմն կա-
ցոյց զկշիռս և զչափս, և նա յամենայն ժամա-
նակի ուղղէ զկարգ փոխառութեան տուընջեան
և գիշերոյ'։

Ոչ՝ ձիոք պայծառք և հակիրճք, անաշխատ 'ի
նեղբս ածեալք, հաճոյ են յոյժ աթենացւոց.
այլ զգուշութեամբ ընտրելի է զնոսա, քանզի
ցասմամբ մերժեն 'ի բաց զկոմաստս եղծիչս բա-
ղոյականին,

Պոչ. Ա.յլ բազում այն է, զի և 'ի տարա-
պարտուց։ Լ.ուրիպիդեայ 'ի յանցանս գրեցաւ,
զի այսպէս Խպոդոլիդեայ ետ բարբառել. "Շ ը-
թունք իմ ետուն զերդումն, այլ ոչ 'ի սրտէ"։
Սակայն 'ի դէպ իսկ էր անդ բանն այն, և յան-
իրաւի ամբաստանեցին զնա ոսոխքն՝ իբր թէ ո-
ւրեմն վասն ամենեցուն բանիւն այնուիկ տայր։
Լ.ա այլ երբեմն կամեցան վարել 'ի բաց զգու-
սանն, որ զդէմն Խելլերոփոնի բերելով՝ ըստ պատ-
շաճի բարուց նորա ասաց. "Պատուականագոյնք

1 Լ.ուրիպիդ. 'ի Փենիսս. տող 544։
2 Նոյն, Խպոդոլ. տող 612։ Աբիսատաս. Ճարտ. գիրք Դ. գլ. 15։ Կիկերո. յոլ. պատ. շաճ. գիրք Դ. գլ. 19։

*են գանձք քան զտիենայն »։ Պատասպարութի՛ի վերայ կայր ողբերգութեանն, և յելանել Լաբրիպիդեայ՝ի տեսարան անդր՝ ազգ արարին նմա՝ի բաց հատանել զտողն զայն, և նա պատասխանի տուեալ ասէ. Ուսուցանել այլոց անկ է ինձ և ոչ՝ յայլոց ուսանել՝. երկայնամիտ լերուք վայրիկ մի, և տեսանիցէք Լեղերոփոնի կրել զարժանահաս պատուհասն[2]։ Լ.յլ և յածել զողբերգութիւնն Լքսիոնի՝ի տեսարան, և յասել բազմաց՝ի տեսողացն յետ հանդիսին՝ զի եղեռնագործ էր յոյժ դիւցազնն, ասէ. Ի՛մին իրի կաշկանդմամբ նորա յանիւս զտեսարանն կատարեցի[3]։*

*Ոչ՝ պէտ և ոչ ևս արդ եղանակ բանից ողբերգութեան պերճ որպէս յառաջն է[4], այլ պարտ է նմա պատշաճել շքոյ իմաստիցն։ Պեղով պերճախօսութեան քօղարկեսցես զանհաւանականս, զորս հարկ է քեզ մուծանել՝ի ներքս. այլ՝ի բացատրել զիմաստս և՝ի նկարագրել զբարս՝ մի՛ մնոտի զարդուք նսեմացուսցես զբանսդ[5]։ Օ՜ զոյշ լեր՝ի նուաստ ասացուածոց[6]. ազգի ազգի թատերական քերթութեանց ուրոյն եղանակք են ասացուածոյ և այլևայլ ձևք[7]. յայսոցիկ անհրամ*

1 Վաղ. Մոքս. գիրք Դ. գլ. 7։
2 Սենեկա, թուղթ 115։
3 Պլուտ. յղ. ունկնդր. քերթ. հա. 2. էջ 19։
4 Արիստոտ. Ճարտ. գիրք Դ. գլ. 1. էջ 584։
5 Նոյն, յղ. քերթ. գլ. 24. էջ 672։
6 Ատիէն. գիրք Դ. գլ. 15. էջ 158։
7 Պուխնտիլ. գիրք Ա. գլ. 2. էջ 650։

տութենէ Կղէոպոնի և Մթենեղեայ ասա-
ցուածք, ընդ կատակերգականին Թուին համա-
բարբառ[1]։

Դիէնէոր. Բ՚ՅԼ ինչ Թուի ինձ այդորիկ պատ-
ճառ։ Օ՚ի քերթութիւնդ ձեր արուեստակեալ
ինն է, և մերս բնական և հարկ է ձեզ ստէպ
այտի այսր անցանել, և կիր առնուլ ՚ի մերմէս
իմաստս, կիրս, ձևս, զուարճախօսութիւնս և եղա-
նակս բացատրութեան։ Ի պատկառելեացն ա-
ծից քեզ յօրինակ, Յ՚ապիղեայ, ՚ի Սոփոկղէ և
Յ՚ուրիպիդեայ, որք ծեքենայս առնեն բառից և
նմանաձայնութիւնս անհաճ անուան ցիւ ա-
զանցն իւրեանց[2]։ Ի սոցանէ Սոփոկղ այսպիսի
ինչ յեղակարծ տայ բարբառել Յ՚ասայ[3], Յ՚է,
քանի՞ համեմատ անուան՝ զոր կրեմ՝ պատահէն
ինձ աղէտք[4]։

Մենոդեկոս. Վասնզի կարծիք էին նոցա, զի
անուանք վիճակեալ իւրաքանչիւր զհանդեր-
ձեալ նոցին բախտս գուշակիցեն[5]. և զայն ոչ
է հարկ ասել, զի որ ՚ի թշուառութեանն իցէ՝
պատճառս չարեացն պարտ է նմա գտանել ինչ։

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Գ. գլ. 7. հտ. 2. էջ 590։ Նոյն, յՍ. քերթ. գլ. 22. էջ 669։

2 Եսքիղ՚ՅԱգամ. տող 690։ Եւրիպիդ. ՚ի Փենիսս. տող 639։ Արիստոտ. Ճարտ. գիրք Բ. գլ. 23։

3 Սոփոկղ Յ՚ասս. տող 430։

* Զի սկիզբն անուանն Էասայ ածէ զուարճական բացագանչութիւնս է, զոր հելլէնն ասէ Αἴ և Αἰαῖ.

4 Սոփոկղ, անդ. տող 626։ Եւրիպիդ. ՚ի Բաքք. տող 508։

Ելիեզեր · Լաւ օրպէս մարթ իցէ անբասիր առնել զքերթողայն ձերոց զախորժակս ձախողակի ստուգաբանութեանց , զծերբենայս բառից [1] , զցուրտ այլաբանութիւնս [2] , զանախորժ զուարճախօսութիւնս [3] , զանպատեհ նմանութիւնս [4] , զերգիծանս ընդդէմ կանանց [5] , զկատակախաւն նուաստ տեսիլս [6] , և զյաճախութիւն շինակաղազոյն բանից և կծանող համարձակախօսութեանց [7] : Ո՞ երկայնամտել կարասցէ ընդ լուր մահուն Ալէանիրայ , յորժամ գուժկանն փոխանակ յայտ առնելոյ պարզաբար զմահ նորա՝ ասիցէ զվերջին ուղևորութիւն իւր արարեալ նորա , առանց փոխելոյ և ոչ քայլ մի ոտին : Լաւ ժաՆն ինչ իցէ փառաց ողբերգութեան , թէ նամանս անհեթեթս և խեղկատակս զգայուել մանկլուսոյ ընդդէմ ծնողաց . և Լնտիգոնայ ասել համարձակ · Լնտրեմ փոխանակել զայր և զորդի ընդ եղբօր , զի մարթ է ինձ ծնանել միւս այլ որդի և լինել առն այլում , այլ չմարթի ունել այլ եղբայր : Վանզի մեռեալ իսկ էին ծնօղք նորա ։

1 Եպիփ · Ի Պարսս , տող 769 · Եւրիպիդ · Ի Բաքք · տող 567 ։

2 Երմոգ · յոլ · Հաբա · ձեոց · գիրք Ա · գլ · 6 · էջ 285 ։

3 Սոփոկլ · յԱյաս · տող 1146 ։

4 Եւրիպիդ · յԱլկէստ · տող 570 ։ Երմոգ · յոլ · գիւտից , գիրք Դ · գլ · 12 ։

5 Եւրիպիդ · յԻպպոլ · տող 616 · յԱնդրոմ · տող 85 ։

6 Նոյն , յՈփեստա · տող 1506 ։ Եպիփ · յԱգամ · տող 864 ։

7 Սոփոկլ · յԱնտիգ · տող 325 ։ Եւրիպիդ , յԱլկէստ · տող 750 ։

Ալ ինչ զարմանք էն ինձ, զի Արիստոփան երգիծանէ 'ի հարևանցի զՀնարս, որովք Աբիզոս առնէ զյայտնութիւն Ովրեստեայ և Լեկտրայ[1]. այլ վայելէր ինչ Եւրիպիդեայ խաղ առնել զյայտնութիւնն զայն, և այնպիսի կատականօք ծաղր կացուցանել[2]։ Պօղ տացէ աստանօր զիրաւն։

Պօղ. Ընկալեմ ժխտել, զի բազում անգամ թուէր ինձ կատակերգել ողբերգական դիմակաւ։ Յորինակն զորս ածէր, ներբեսցի ինձ յաւելուլ և այլս երկուս 'ի Սոփոկղէ և Եւրիպիդեայ։

Սոփոկղ պատճառս միում յողբերգութեանցն առեալ զայլակերպութիւն Տերեայ և Պրոմնեայ, ծաղրածութիւնս բազումս համարձակի առնէլ ընդդէմ թագաւորին՝ զոր 'ի կերպարանս թռչնոյ 'ի տեսիլ ածէ որպէս և զՊրոմնէ[3]։

Իսկ Եւրիպիդէս 'ի միում ուրեք 'ի քերթութեանցն հովիւ զոք 'ի ներքս մուծանէ, որում թուէր տեսեալ ուրեք զանուն Թէսէոսի։ Եւ հարցեալ՝ թէ գիտիցէ ընթեռնուլ, պատասխանէ. Ալ գիտեմ զդպրութիւն, այլ զնկարագիր տառիցն տաց. առաջինն բոլորակ է՝ կէտ 'ի միջի ունելով*. երկրորդն յօդի յերկուց գծից կանգնե-

1 Եսքիլ. 'ի Գոյեփ. տող 223։ Արիստոփ. Յնմեղն, տող 534։

2 Եւրիպիդ. Յեղկոր. տող 520։

3 Արիստոփ. 'ի Հաւսն, տող 100։

* Եւրիպիդէս նկարագրէ ասասանօր զձևս վեցեցունց հելլէն տառից, յորոց յօդի առնուն թեսէոս ΘΗΣΕΥΣ.

լոց, որ խոտորնակի գծիւ կցորդին ընդ միմեանս. այլովքն հանդերձ։ Այս տեսս ինձ զի ստորագրութիւնս այս կազմածոյ անուանն Թեսէոսի այնպէս հաճոյ եղև, զի Պղաթոն քերթող զՀետ նորա արար միւս այլ հանդոյն նմին ստորագիր վսեմագոյն արդեօք զիւրն համարեալ՝։

Թեոդեկտոս. Լուռն է ինձ ասել, զի և ես երրորդեմ զնոսն յողբերգութեանս՝ որ 'ի ձեռին իսմամ է[1]. զի խաղքս այսոքիկ մնաց զբօսայուսանեն զամբոխն. և վասն զի անմարթ է նոցա հետևել մերոց ախորժակացս, մեզ հարկ է նոցայոցն հպատակել։ Դ՚ոչքք 'ի քերթողաց մերոց հեծէին ընդ դերութիւն ընդ այս, և բազմագոյնք 'ի թերութեց զորս դու ստգտեր՝ հաւաստիք են չկարելոյ նոցա թօթափել զլուծն։ Այն և այլք 'ի նոցանէ, զորս արժան է անբասիր առնել. զի 'ի համեմատութիւն դիւցազանց ժամանակացն ստիպին նկարագրել զբարս այլազգ 'ի մերոցս, և 'ի համեմատութիւն բնութեան հարկ լինի նոցա 'ի պարզէն յընտանին գործել անցս՝ որոց խառնին ընդ միմեանս սահմանք։

Հանձար նուազագոյն է մեզ արդ, բազմագոյնք առաջի կան մեզ վտանգք, և դժուարագոյն այժմ է արուեստն։ Դ՚անզի տեսօղք յագեալ գեղեցկութեամբք՝ որ 'ի բազում ժամանակաց հետէ յանդիման լինին նոցա, պահանջեն 'ի տա-

[1] Եւրիպիդ. 'ի Թեսէոս էջ 454։
առ. Աթեն. գիրք ժ. գլ. 20. [2] Աթեն. անդ։

բասպարտուց զամենայն աջողութիւնս հանձարոյ առաջնոցն բովանդակել յիւրեանս այժմու քերթողաց՝։ Լաւ գուսանք դարձեալ ոչ դադարեն 'ի քրթմնջելոյ, զի ոչ մեծաշուքս յօրինեսցեմք զդէմս. և բռնադատեն զմեզ մերթ ընդարձակել և բրնազբօսել զվէպսն, և մերթ եղծանել զշաղկապումն նոցա՝. և յաճախ ևս յանսիրելի առնելոյնոցա և յանաջողակութենէ անկանին քերդուածք։ ՀԵրեա ինձ Պօղ առնել զկշտամբանս զայս. զի համարձակութիւնս իմ առաջի քո՝ յաճախէ քեզ պարծանս։

Պօղ. Պոռ աւադիկ ըստ մտի իմում բարբառեցար. և ես յաւելից պատմել Օ՝ոպիրայ ըզվտանգն՝ յոր եղև երբեմն Ավղեստէսն Լաբիպիդեայ։ Ի չքնաղ տեսլեանն ուր աղբայորդին յետ մոլեգնութենէն ուշաբերի, Լգեղբոս գուսան 'ի տարաժամու կլեալ զոգի՝ մեկնեաց 'ի միմեանց զերկուս բառս, որ այլ իմաստ 'ի ծայրատելն և այլ յամբողջ արտասանելն բերէին. միոյն նշանակելով, Օ՝ՀԵՈ ՄՐԿԷ Ե ԱԿԱ ԽԱՂՂՐՈՒԹԻՆ. Իսկ միւսոյն Օ՝ՀԵՈ ՄՐԿԷ Ե ԱԿԱ ԿԱՊՈ*։ Ավ է հարկ ասել որ ինչ աղմուկ շփոթի 'ի կարևորագոյն մասին ողբերգութեանն անկումն այն յաբրոյց 'ի տեսարանին. Ճարճատէր բազմականն ծաղու, և ոտիք քերթողին և գուսանին երգիծանս

² Արիստոտ. յդ. քերթ. գլ. 18. էջ 666։

* Յետոյսս մատենիս 'ի տեղեկութիւնն. Թիւ. ԺԲ։

¹ Նոյն, անդ, գլ. 9. էջ 659։

դառինս արձակէին ընդդէմ նոցա [1]։

## ԺՈՂՈՎՔ ՀՈՐԻՐՈՐԴ

Ի Յորրորդումն նուագի գումարելոյ Ժողովոյն յուզեցան ինդիրք ինչ, զորոց չև ևս լեալ էին բանք։

'Այսպէս՝ զի գրեթէ ընդ ամենայն ողբերգութիւնս խօսակցութիւնք և պատասխանիք աւարտին ընդ տողս [2]. որով զբուցատրութիւնն յօրինի կենդանատիպ և ամփոփ, այլ ուրեք ուրեք օտար 'ի բնականէն։

Երկրորդ՝ զի Պիղատոս 'ի միում ուրեք յողբերգութեանցն Եպիդեայ ոչ ինչ աւելի քան զեբիս տողս բարբառի [3], և Յեկտորայն Սոփոկղի և Եւրիպիդեայ և ոչ տող մի. և այլք ևս 'ի դիւցազանց երևեալք 'ի տեսարանի, ընդ բազում փոփոխմունս տեսլեանց լուռ ևեթ կան առ տրտմութեան և կամ առ վէս ամբարտաւանութեան [4]։

Երրորդ՝ զի ուրեք ուրեք 'ի նեղքս մնանէն դէմք այլաբանականք, որպէս զօրութիւն, բռնութիւն, մահ, կատաղութիւն, այլովքն հանդերձ։

Չորրորդ՝ զի պարն յողբերգութիւնս Սոփոկղի խառնի յարարուածն, իսկ Եւրիպիդեայն

[1] Եւրիպիդ. Յովեստ. տող 279։ Արիստոփ. 'ի Գորգաս, տող 306։

[2] Պոլիտակ. գիրք Դ. գլ. 17. յօդ. 113։

[3] Եպիդ. 'ի Քոյեփ. տող 900։

[4] Նոյն, 'ի Պրոմ. տող 435։

բազում ուրեք հայլիւ կցորդի ընդ նմա, և յԱ-
ղաթոնին բնաւ իսկ անկցորդ է, և զի ըստ օրի-
նակի յետնոյս առանց իրիք խղճելոյ խառնին արդ
'ի հանգիստսն պատառիկք քերթուածեան և ե-
բաժշտուածեան առ 'ի զբաղեցուցանելոյ զմիտս
առ վայր մի';

Լ. Իբրև հակառակ զեղծմանցս այսոցիկ ե-
տուն վճիռ, հարցի թէ արդեօք ողբերգուածն
արուեստ հասեալ իցէ 'ի ծայր կատարմանն; Լ.
ամենեքին միաբանեցին, զի արդարև ոմանք յողբ-
երգուածեանց ամենակատարք էին՝ եթէ 'ի բաց
բառնային 'ի նոցանէ արատք ինչ նոցա անյարա-
կիցք 'ի կազմած նոցին; Լ. Յորժամ խառնեալ
նոցա զերկայսն Լրիստոտելի զայսմանէ[2], խրս-
տադոյն եղև քննութիւն, և յաճախեցին տա-
բակուսանք;

Վասն ասէին՝ թէ կարի ընդարձակ է տեսա-
բանն և բազում յոյժ ամբոխ տեսողաց, և աստի
յառաջ գան դժպատեհք, զի հարկ լինի քեր-
թողին յարմարել ախորժակաց տգէտ ամբոխին,
և գուսանաց բարձրագոչ լեալ պարտասել, և ոչ
այնպէս լսելի լինել ամենեցուն; Վասն որոյ բար-
ուոք թուէր նոցա սահմանել այլ տեղի անձկա-
գոյն, և յաճախել զգինս կայից դիտակ տեղեացն,
որպէս զի կիրթ մարդկամբ տեսարանն լցցի;
Լ. Յեք տային պատասխանի, զի ոչ 'ի ճահ պա-

1 Արիստոտ. յզ. քերթ. 2 Նոյն անդ. գլ. 4. հա. գլ. 18. հա. 2. էջ 666. 2. էջ 655.

տահէր խորհուրդն այն՝ ոչ կարգի և ոչ օգտի պետութեանն. զի 'ի շնորհս ռամկին և վասն օտարաց այնու շքով տեսարանքն պատրաստէին. իսկ ըստ առաջարկեալ խորհրդոյն՝ ոչ միայն հաւասարութիւնն սահմանեալ 'ի քաղաքացիս 'ի միջոյ 'ի բաց բառնայր, այլ և զրկէր աշխարհն 'ի բազում շահիցն՝ որ գային 'ի յաձախելոյն 'ի տունս անդր։

Յաւելին առաջինք. Լու ընդէր ինչ չխափանել զպարս և զերաժշտութիւն յողբերգութեան, որպէս խափանին արդ 'ի կատակերգութիւնս։ Զի պարն հարկ առնէ քերթողաց օտարանալ ստէպ 'ի նմանութենէ բնականին, և ձգել զաւագորեար ողբերգութեանն եթէ կամայ և թէ ակամայ յանդաստակ ուրեք ապարանից կամ՝ այլ ուրեք 'ի բացի, առ 'ի հոլանել նոցա անդ զգաղտնիս սրտիցն, և խօսել զիրաց պետութեան լու 'ի լու բազմաց՝ որ յաձախ իսկ անպատձառ ածին անդր։ Զնդ Մեդեա յայտնէ զսոսկալի խորհուրդսն զոր երկնէ, անդ Փեդրա զկիրսն՝ զոր յանձնէ իսկ ծածկել ցանկալի էր նմա, և անդր Զկեստէ ածի 'ի շունչ վախձանին՝ առ 'ի մեռանել անդ։ Իսկ յաղագս երաժշտութեան, անտեղի իսկ է ընկալեալոց 'ի վշտաց խօսել և մեռանել երգովք։

Պատասխանի ետուն այլք և ասեն. Ի բառնալ պարուն՝ բարձցի ամենայն փութոխութիւն 'ի տեսարանէն, և շուք 'ի հանդիսիցն։ Յաձախել

նա զկիրս 'ի տեսիլսն, և 'ի հանգիստս վառ և բորբոք պահէ զայնոսիկ։ Յաւելին և վասն երաժշտութեան, զի դժկամակէր ժողովուրդն հրաժարել 'ի բերկրանաց անտի, և զի օտարանայր ողբերգութիւն 'ի բնութենէ իւրմէ փոփոխութեամբն այնուիկ։

Օգուշալի է, ասէ Լիկեփոր, կապտել 'ի նմանէ զզարդսն. զի մեծ ինչ այնու պակասեսցէ նմա։ Այլ գոնեա սահմանելի է նմա կէտ ազնուականագոյն, զի հանգոյն կատակերգութիւն...

Թէոդեկոս. Այս զինչ կամիցիս ասել, զի հանգոյն կատակերգութեան 'ի ծաղր շարժեսցէ ըզմեզ։

Լիկեփոր. Ոչ այդպէս, այլ զի ի բոցէ պիտանի։

Թէոդեկոս. Այս ո՞ իշխիցէ անպիտան զնա ասել. ոչ ապաքէն ողջամտագոյն բարոյականին վՃիռք յողբերգութիւնս մեր յեղանակին։

Լիկեփոր. Ոչ ապաքէն և նոքին դարձեալ եղծանին անդ գործովք։ Խպպողիտոս 'ի գիտել զտուփանս Փեդրայ, զգիտակցութիւն իսկ սոսկալի անօրէնութեանն համարի իւր 'ի բիծ[1], և սակայն 'ի կորուստ մատնի. և զինչ ՃԵասասկաբարագոյն քան զայս հրապոյրք մանկտոյ կայցեն։ Ոստ օրինակի մերում սկսայք և դուք նշաւակել զԹերութիւնս տեսչութեան, այլ քանի այլազգ 'ի մէնջ. մեք զՃարտարախօսս աշխարհիս մերազարտս ծաղր կացուցանէաք, դուք Ճառս մեծա-

[1] Եւրիպիդ. Խպպող. տող 655։

ձիկս զզեղծմանց Ճարտարիսասութեան յօրինէք ծանրատաղտուկս [1]։ Ի՞նչ Ճշմարտութիս խիստս և օգտակարս առաջի դնէաք ամենացւոց, դուք շողոմէք զնոսա ամենապարտ ժպրհութեամբ [2]։

Թէոդորէպոս. Տածելով զատելութիւն նոցա ընդդէմ միապետութեան, յորդորեմք զնոսա յընկերհաշտութիւն. ցուցանեմք նոցա զերկիւղածութիւն զբարեգործութիւն և զայլ առաքինութիւնս նախնեաց առ 'ի նախանձ նմանութեան. և զփառասիրութիւն նոցա զգուեմք առ 'ի յորդորել զնոսա 'ի լաւութիւն։ Զի՞նչ ողբերգութիւն՝ յորում չիցեն նոցա հրահանգք համբերելոյ իւրաքանչիւր չարեացն, և զգուշանալոյ 'ի յանցուածոց՝ որ զայնոսիկ զհետ իւրեանց ածեալ ձգեն։

Լիէէոր. Հաւանէի ընդ այդ, եթէ հրահանգքդ անդստին յարարուածոյն յառաջ գային, և եթէ արտաքսէր 'ի տեսարանէդ հայրենի ժառանգութիւն աղետից, և ոչ ոք առանց իւրոց ինչ մեղացն գտանէր մեղապարտ, և ոչ ոք թըշուառական՝ առանց զեղծանելոյ կրիւքն իւրովք. և եթէ յանցաւորն միշտ պատուհասէր, և վարձատրէր միշտ առաքինին։

Ա. յլ ցորչափ գերեալ կայք կարգացդ ձերոյ, մի օգտի ինչ ակն ունիցիք 'ի Ճգանցդ։ Պարտ է ձեզ կամ զյոռութիւնս հրապուրական վիպացդ

[1] Եւրիպիդ. Յունական. տող 905։
[2] Նոյն. 'ի Հեղինէ. և 'ի Հերակլ։

ձերոյ փոխել, և կամ 'ի կիր առնուլ որպէս երբեմն վէպս մտացածինս. չգիտեմ թէ յաջողեսցի հանձնարեղ և յօդել իրս, այլ ուղղագոյն 'ի նոսա բարոյականին կարգ և օգտակարագոյն անելիք բայապէս յօրինեսցի։

Պոսվեցին ամենեքեան զբանս նորա, և Ավոդեկտոս իսկ. բայց սա տակաւին վիճեալ պէտք էր, զի ըստ իրաց ժամանակին յորում էին՝ օգտակարագոյն էր բարոյականին ողբերգութիւն քան զկատակերգութիւն։ Յայնժամ Պօղոս դարձեալ առ իս, ասէ. Համբակդ Պղատոնի, զի՞նչ արդեօք վարժապետն քո և Սոկրատ տային վճիռ զիրացս՝ զորոց վիճին Ավոդեկտոս և Դիկեփոր։ Ասեմ. Պատասարտէին արդեօք զերկաբանչիւրոցն և զբանս. քանզի ցամաքութիւն իմաստասէրքն 'ի տեսանել զՀիւսս ցոփութեանցն և զերգիծանութեանց, յորս անկղնտանայր նախկին կատակերգութիւն։

Դիկեփոր ասէ. Ա. յԼյուշ լեցին հանգամանք ժամանակի. զի Պերիկղէս լուեցոյց զԱրիստագն, և չմնային հնարք ուղղութեան բարուց՝ եթէ ոչ քերթողք մեր արիանային 'ի կիր արկանել զկրճատմբանն հրապարականս։

Պատասխանի ետու և ասեմ. Ոչ էն պէտք արիութեան առ 'ի լինել չար, ուր անպատուհաս է չարութիւն։ Պերճ առ միմեանս դիցուք զերկոսին ատեանսն, զորոց արդ ասացեր։ Տեսանեմ յատեան Արիստագին դատաւորս անկաշառս,

առաքինիս, խոհականս, որոց տրամութիւն է հասանել՝ ի վերայ յանցաւորին, և չդատապարտեն զնա մինչև խոստովանեցուցեալ նմա զյանցաւորութիւնն։ Իսկ՝ ի միւս ատեանն տեսանեմ զրիչս սիտաւորս մոլեգնիս, է զի և կաշառաբեկս, որ ամենայն ուրեք խնդրեն Ճարակ չարակամութեանց իւրեանց, յօգեն ոՃիրս, ստուարացուցանեն ըզյոռութիւնսն, և առնեն նախատինս դժնդակս առաքինութեան՝ զնոյն թշնամանս ընդդէմ անօրինին և առն բարւոյ ժայթքեալ։

՝Այրանշան արդարև ուղղիչ բարուց Աբիստոփան, այն՝ որում առաւել քան զամենեսին էր հանձար և աջողութիւն մտաց, խելամտագոյն կատականաց նրբից. և որ առաւել քան զայլս պարապեաց յանագորոյն բերկրութիւնն։ Յարբեցութեան գինւոյ ասի զնմանէ՝ թէ զկատակերգութիւնսն յօրինէր, այլ ասելի էր մանաւանդ՝ թէ յարբեցութեան քինու և ատելութեան՝։ Այթէ ոչ ինչ գտանէ իրս բամբասանաց յատելիս իւր, ՝ի նուաստութիւն տոհմի նոցա յարձակի և՝ի չքաւորութիւն և՝ի թերութիւնս մարմնոյ։ Որ և զԱրիպիդէս բազում անգամ նախատեաց վասն բանջարավաճառի մոր գոլոյ նորա որդի՝։ Միրելի էր նա լաւաց, այլ բազումք՝ ի կատակերգութեանց նորա թուին սահման-

1 Ատեն. գիրք ժ. գլ. 7. էջ 429։
2 Արիստոփ. յԱրպեսան, տող 19։ Նոյն, յԱքարն. տող 477։

նեալ վասն շուայլելոց 'ի զեղխութիւնս և թա-
թաւելոց յոմիրս [1]։

Լ. ԻՆԵԹԷՐ. Լքանեմ զԱրիստոփան 'ի զառա-
ծանել կատականաց նորա յապերասան երգի-
ծանս. այլ զարմանալի է ինձ այլն, յորժամ հա-
սու լեալ չարեաց հայրենեաց՝ յառնել ընդդէմ
խոտորեցուցչաց նորա [2], և յարձակի անխնայ 'ի
Ճարտարախօսս, 'ի զօրավարս, յաւագանին և 'ի
ժողովուրդն իսկ ինքնին գլխովին։ Յաճախեցին
այնու փառք նորա, և հասին յաշխարհս հեռա-
ւորս. մինչև թագաւորին Պարսից ասել ցՀրեշ-
տակս սպարտացւոց, զի մարթ էր աթենացւոց
բոլորովին տիրել Լեղադայ՝ եթէ լսէին խրատուց
քերթողին [3]։

Ի նախարսին. Թողջ անդր 'ի բաց զվկայութիւն
պարսիկ թագաւորին։ Լաւ որոմ հաւատարմու-
թեան էր արժանի որ չգիտէրն և կամ կեղծա-
ւորեր չգիտել՝ զի չէ պարտ ծաղրածութեամբ
յանդիմանել զյանցանս [4], և զի կենդանագիր որ
շարժէ զտեսօղս 'ի ծաղր՝ ոչ ևս է ատելի։ Այլ որ
'ի տեսիլ բռնաւորի ուրուք կամ եղեռնաւորի ծի-
ծաղի, ապա և ոչ 'ի տեսիլ պատկերի նոցա պարտ
է ումեք ծիծաղել՝ ընդ որով կերպարանօք և յան-
դիմանս առնիցին։ Արիստոփան ազդողագոյնս

1 Արիստոփ. ԱՍոպկեան, տող 1275։
2 Նոյն, 'ի Գորգաս, տող 698։
3 Նոյն, ԱՌաքին, տող 646։
4 Պիկեր. Ճարտ. գլ. 26. հա. 1. էջ 441։ Պլուտ. յՂ. մարդահաճ. և քարեկամ. հա. 2. էջ 68։

նկարագրեր զստահակութիւնս և զյափշտակութիւնս ատելոյն խորոյ Կղէոնի, որ իշխանն էր հասարակապետութեան. այլ ծաղրածութիւնք անհեթեթք և անսխորժք խափանէին զաղդեցութիւն պատկերին։ Կղէոն 'ի ձեւացութիւնս խեղկատակս զգետնեալ 'ի գոռհկէ ումեմնէ, որ մենամարտեալ ընդ նմա՝ յափշտակէ զմրցանակ ժպրհութեան, կարի անձահս գտանի նուաստացեալ յարհամարհութիւն։ Լաւ զինչ այսոցիկ արդասիք, բայց զի ամբոխն զուարճանայր ընդ նախատինս նորա, որպէս և յայլ կատակերգութիւնս նորին քերթողի ընդ նախատինս Հերակղեայ և Պիտոխեայ, և ապա ընդ ելանել 'ի տեսարանէն՝ խոնարհեալ երկիր պագաներ և Պիտոխեայ և Հերակղեայ և Կղէոնի։

Կշտամբանք զոյս քերթողն առնէր ամենայցոց՝ ոչ միայն չէին օգտակարագոյնք, այլ և զըգուէին զյոռութիւնս նոցա։ Օն ոչ միայն համարձակութիւնք այսպիսիք ներելի լինէին՝ 'ի չհակառակել սահմանադրութեանց աշխարհին, այլ և զի Քրիստոսին յաւելոյր ամբանս յիւրսն Հարտարութեամբ։ Յողովուրդս այս, ասէ, անխորհրդաբար և ինքն իւր հակառակ գործէ. խիստ է և բարկացող՝ և անցագ 'ի գովութիւնս։ Ի ժողովս իւր է նա ծերունի, որ զՀեգս ինչ լսէ զբառից [1], և ձգեալ ածի որպէս մանուկ զՀեգ

[1] Արիստոտ. Յաստեսան, տող 40։
[2] 'Նոյն անդ, տող 46։

կարկանդակի, որ այլուր լիսհանձարն է և խոհական[1]։ Դիտէ զի խաբի, այլ երկայնամտէ վայրիկ մի. ապա 'ի վերայ հասեալ սխալանացն՝ պատուհասէ զլեղծեալսն բարութեամբ իւրով[2]։ Ընդ ծերունին փայփայեալ գովութեամբն՝ ծիծաղէր ընդ թերութիւնս իւր, և ծաղր արարեալ զդիս իւր և զիշխանս և զանձն ևս իւր, ոչ դադարէր 'ի մնապաշտութենէն և 'ի դիւրախաբ և ծանծաղամիտն գոլոյ։

Տեսարան՝ զի այսքան անպատեհութեամբ և չարասիրութեամբ՝ սարտուցանէր զիմաստունս և զբանիբունս ազգին. որք այնչափ հեռի 'ի բացեայ էին 'ի համարելոյ զայն պատասպարան բարուց ուղղութեան, զի Սոկրատ ոչ երբեք 'ի հանդէս կատակերգութեանց գնայր[3], և դատուրբաց Աքրիսպագին ոչ էր օրէն քերթել կատակերգութիւնս։

Աստանօր Թէոդեկտեայ 'ի ձայն բարձր աղաղակեալ՝ լուծաւ խնդիրն. յոտն եկաց։ Արկնեալ անդրէն 'Դիկեփորի ասէ. Կայ վայրիկ մի ևս, մնայ և մեզ տալ զքերթողայ ձերոյ վճիռ։ Թէոդեկտոս ասէ. Ոչ ինչ զանգիտեմ. քանզի Սոկրատ զուարճանայր 'ի զնին ողբերգութեանցն Եւրիպիդեայ[4], և զՍոփոկղ մեծարէր[6]. և յա-

1 Արիստոփ. Հայաստան, տող 750։

2 Նոյն անդ, տող 1122 և 1352։

3 Եղեան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 13։

4 Պլուտ. յզ. փառաց Աթէն. հտ. 2. էջ 348։

5 Եղեան. անդ։

6 Սոկրատ առ Քսենոփ. յիշատ. գիրք Ա. էջ 725։

մենայն ժամանակի միաբանութեամբ եղաք մեք ընդ իմաստասէրս։ Այլ իմ՝ առ ընթեր նորա կալով, ասեմ՝ցնա յունկանէ. Դու կարի ներողամիտ ես։ Պատեցաւ նա, և դարձեալ կամէր խուսել՝ի բաց, այլ արգելաւ. և ինձ հարկ եղև առնուլ վերստին զխօսս, և դարձեալ ցիմաստասէրս ասեմ.

Սոկրատ և Պղատոն դատաստան արդար առնէին զհանճարոյ և զլաւութենէ քաջաց ողբերգուաց, այլ մեղադրէին նոցա՝ զնուաստացուցանել հանգոյն այլոց քերթողաց զդիս և զդիւցազունս։ Այլ չկարէցեալ իսկ՝ի մասինս յայսմիկ արդարացուցանել զնոսա։ Մենայն առաքինութիւն ընդ բնաւ իսկ օրէնս բարոյականին համակրծան անկանին, ուր աստուածք ախտաւորք՝ անիրաւք և անողորմք քան զմարդիկ լարեն որոգայթս անմեղութեան առ՝ի ձգել զնա՝ի թըշուառութիւն, և մղեն զնա՝ի յանցանս՝ առ՝ի պատուհասել զնա։ Կատակերգութիւն զայնպիսի աստուածն ծաղր կացուցանելով արժանաւորագոյն գտանի ներբելոյ քան զողբերգութիւն, որ՝ի սպաս պաշտամանն նոցին յորդորէ զմեզ։

Օդոբրոս. Այլ ինչ դժուարին էր մեծվայելչագոյն փառօք ածել զնոսա՝ի տեսարան. այլ զինչ և սմարթէր յաւելուլ՝ի շուք դիւցազանցն Այաքիղեայ և Սոփոկղի։

Ինոփարխս. Օ՜հաստատագոյն և զհիմարիտ մեծութիւն. և զոր ասեմն, այս է։ Հայեցեալ

'ի յեղափոխութիւնս՝ որ 'ի ձեզ եղեն 'ի սկզբանէ քաղաքականութենէ ձերոյ և այսր, մարթի երիս ազգս մարդկան զանազանել 'ի ձեզ՝ սեռիւ և ենթ նմանս միմեանց։ Ի՝նչպանս ասեմ՝ որպիսիք էին դեռ ևս 'ի դարս դիւցազանց. արուեստականս, որպիսիք էդդ այժմիկ. և իմաստասիրականս, որպիսիս 'ի ժամանակաց ինչ հետէ հընարի յարդարել իմաստասիրութիւն։

Ա՝ռաջինք անսեթևեթք և անկեղծք, այլ ծայրայեղք յառաքինութիւնս և 'ի տկարութիւնս, ոչ կան 'ի կշիռ չափոյ. մերթ կարի մեծամեծք, և մերթ փոքրկուցք յոյժ. որպիսիս յողբերգութիւնս է տեսանել։

Երկրորդ ազգ մարդկանն կորուսեալ զվեհ և զազնուական տիպս նկարագրի առաջնոյն, ոչ ևս գիտէ՝ ոչ որ ինչ էն, և ոչ որ ինչ ցանկայն լինել։ Չիք այլ ինչ տեսանել 'ի նմա, բայց խառնուրդ իմն նորանշան ազգի ազգի կերպարանաց՝ որք զերևոյթս ենթ բերեն զիրաց և ոչ զարդիւնս. այնքան 'ի նմա յաձախեալ կեղծեաց, զի և բնակաւորաց նմին հանգամանաց թուել մուրացածոյս։ Մ՝ի ինչ քաջութիւն է նմա, կերպարանել զկատակերգութիւն. որ և սա զնոյն ինքն կերպարանէ։

Լակ երրորդ ազգ մարդկանն նորօրինակ։ Օ՝գրութիւն հզօր քան զզրգիռ ախտիցն յարդարէ զլոյս բարուց նորա կորովի և հաստատուն. ընդդէմ ամենայն դիպուածոց կայ նա անպարտելի,

և ոչ զՀետ նոցա զառաջեալ ձգի իբրև անպարգ մի ստրուկ։ Զգիտէ նա եթէ արկածք դժնդակք կենցաղոյս բարիք իցեն եթէ չարիք. այլ զայն և եթէ գիտէ զի յառաջ գան 'ի տիեզերական հրամանէն՝ որում պարտ համարի հնազանդել։ Կեայ անչարչար 'ի խղճէ մտաց, լուելեայն ընթանայ զասպարէզ իւր, և աներկիւղ նկատէ զյամրաքայլ մօտել առ ինքն մահուն։

Օրոպերոս. Այլ ոչ վշտանայցէ ընդ մահ հօրն կամ որդւոյ կամ կնոջ և կամ բարեկամի։

Անատարսէս. Կոելուն աղէք նորա, այլ անխոտոր յօրինացն զոր եդեալ է անձին՝ խստանայ ընդդէմ ցաւոցն', և ոչ ողբս անօգուտս առեալ կականի յայտնապէս կամ 'ի ծածուկ։

Օրոպերոս. Այլ ողբք և կական սփոփիչք են հոգւոյ։

Անատարսէս. Մանաւանդ թէ մեղկիչք. միանգամ գերեալ նոցա, այնուհետև կացցէ մնասցէ հոգին 'ի գերութեան։ Օ՛ի սա 'ի մասունս իմն գոգցես բաժանի յերկուս[2]. մին յար 'ի շարժման և միշտ կարօտ կրից՝ լաւագոյն համարի ըզսատիկ հարուածս ցաւոց քան զդժոխըմբեր անձկութիւն հանգստեան. իսկ միւսն միւսմն և եթէ ուշ ունի, սանձահարելոյ զբռնութիւն առաջնոյն, և հաստատելոյ 'ի մեզ զիսաղաղութիւն՝ անխառով յաղմկէ զգայութեանց և կրից։ Այդ

[1] Պլատ. յՀ. հատ. գիրք ժ. հա. 2. էջ 603։

[2] Նոյն անդ, էջ 605 և 606։

քերթողք ողբերգութեանց ոչ զխաղաղութիւնս զայս հոգւոյ կամին հաստատել, և ոչ երբեք զնմաստուն որ և զանցողդողդ ընտրեն 'ի դիւցազն, զի նկարագիրս այս բարուց դժուարին է 'ի նմանութիւն, և ոչ ազգէ 'ի սիրտ ամբոխին։ Այլ պարապեն նոքա 'ի զգայականագոյն և 'ի թանձրագոյն մասն հոգւոյս. յուզեն զնա և վշտացնեն, և սոսկումն և գութ արկանեն 'ի նա, և բռնադատեն զնա յագել ողբովք և հեծութիւնք՝ որոց գոգցես իմն, սովեալ գոսանի[1]։

Այլ զինչ այնուհետև յուսալի է յառնել, որ անդստին 'ի սկզբնաբոյս հասակէն վարժեալ իցէ հանապազ յերկիւղ և 'ի փոքրոգութիւն. որպէս վատութիւն համարեսցի և նախատինս նկուն լինել յաղէտից, որ տեսանեն հանապազ՝ զի Հերակղէս և Աքիլլէս ոչ ինչ ամօթ համարին գոչել 'ի վիշտս և հեծել և ողբալ, և զի ազգ մի ողջոյն արտասուէ 'ի վերայ նուաստութեան՝ յոր զգիւցազունսն անպարտելիս կործանեն արկածք[2]։

Ոչ և չէ մարթ իմաստասիրութեան միաբանել ընդ ողբերգութեան, զի մին եղծանէ անդադար զոր միւսն շինէ։ Առաջինն գոչէ սաստիւ առ թշուառացեալն. Խիզախեա ընդդէմ վտանգաց. կաց հաստատուն և անսասան 'ի մէջ փլատակաց՝ որ զքեզ անկեալ կործանին. համբուրեա

1 Պղատ. յոլ. հատ. գիրք ժ. հա. 2. էջ 605։
2 Նոյն անդ։

զՀեռն որ Հարկանէն զքեզ, և Համբեր անտրտունջ. այս էն օրէնք խնամատութեան։ Խսկ ողբերգութիւն խանդաղատելի և և յորդորական ձայնիւ խրատ. Խնդրեա սփոփանս, զօձիս պատառեա, ընդ մոխիր թաւալեա, ողբա առ, և ցոյց զվիշտս քո. այս էն օրէնք բնութեան։

Խստանօր Նիկեփորի յաղթանակեալ՝ 'ի վերայ եբեր, զի կատակերգութիւն 'ի հասանել իւր 'ի կատարումն՝ գտցի մերձ յիմաստասիրութիւն, իսկ ողբերգութիւն և քան զևս հեռի։ Խ 'ի Ժպտել նորա ընդ հէնգն իմն՝ զրգռեցաւ մանուկն Օ ոպիրոս, և ոչ և 'ի կշիռ չափոյիցն կացեալ՝ ասէ ցիս զայրագին. Պու զբանս Պղատոնի մեզ 'ի դէմն ածես, այլ իմաստք՝ անիրք ոչ երբէք զօրեսցեն առաւել քան զկիրթ դատաստան աթենացւոց, և մանաւանդ աթենուհեաց, ոլք յամենայն ժամանակի զողբերգութիւն նախամեծար արարին քան զկատակերգութիւն։ Խ ասա յարձակեցաւ ընդդէմ կատակերգութեան, կշտամբելով զայն՝ զի յետ ձգանց երկերիւր ամաց տակաւին զնշմարանս առաջնոց յոռութեանն բարձեալ բերեր։

Խ ասէ ցՆիկեփոր. Ոչ ինչ անծանօթք էն ինձ անուանիք 'ի քերթողացդ ձերոց. և դեռ և վերծանեալ զքերթութիւնս Խրիստոփա-

1 Պղատ. յզ. հատ. գիրք ԺԷ 681։ Պղատ. յզ. որ. գիրք Ի. հատ. 2. էջ 604։ Ի. հատ. 2. էջ 658։

2 Ուլպիան. 'ի Դեմոսթ.

նեայ, բայց 'ի Հաւուցն որ անդստին յառաջնոյ տեսլեանց սարտուցին զկս, վկայեմ զի ոչ ըստ Համբաւոյն զտանին իրքն։ Մոռեալ անդր զդառն և զկծուակիծ կատակասնն և զդժնդակ մախանս՝ որովք լի են կատակերգութիւնք նորա, ո՛ զի-մաստս նորա նաեւմն և զծեքենայս բառից անա-խորժս թուել կարասցէ, և զյեղյեղուկ տիպս կերպարանաց բանից նորա յանդիման առնել՝։

Լ։ Մեծոդեկտեայ զնովիմբ ածեալ ասէ. Յա-ւել և զայն՝ թէ ո՛ զպերճութիւն բանից նորա, ո՛ զյատակութիւն ասացուածոյն, ո՛ զնրբութիւն ծաղրածութեանցն, ո՛ զընականութիւն և զաժ-խոյժս զրուցատրութեանցն, ո՛ զանատեղծու-թիւն պարերգութեանցն յանդիման առնել կա-րասցէ։ Մանուկ դու, մի դժուարահաւան լի-նիր առ 'ի ցոյց իմաստութեան. զիտեա՛ զի ա-ռաւելագանց յարումն յեռանդն հանճարոյ բա-զում այն է՝ զի խօթութեան սրտի և մտաց է նշանակ։ Լէ զի այր մեծիմաստ չզարմանայ ընդ ամենայն, ամենայն որ որ ոչ ինչ զարմանալի հա-մարեսցի՝ իցէ մեծիմաստ։ Մերթ ողբ զորոց դու չափես զզօրութիւնս՝ մինչև զքոյոցդ առեալ զչափ, լի են թերութեամբք և կատարելու-թեամբք։ Հրեշք են դոքա բնութեան, որ հան-դերձ ամենայն անկատարութեամբքն՝ զոր տգի-

1 Պլուտ. 'ի համեմատ Արիստոտ. և Մենանդր. հտ. 2. էջ 853 և 854։

տուԹիւնս մեր նշմարէ 'ի նմա՝ երևի մեծ որոց սլշուցեալ յառիցին 'ի նա։

Աբրիստոփան խելամուտ եղև աղգի կատականաց, ոչ որ աԹենացւոց ևԹԹ ժամանակին էր հաձոյ՝ այլ և որ յամենայն ժամանակի հաձոյ եղիցի մարդկան։ ԵրԹուածք նորա բերեն յիւրեանս զբողբոջ ձշմարիտ կատակերգուԹեան և զնախատիպս քաջի կատակերգուի. և չէ մարԹ գերազանցել քան զնա, առանց հասու լինելոյ գեղեցկուԹեանց նոցա '։ Այսմ ինքնին իսկ խելամուտ լինէիր, եԹէ երկայնամտեալ էր քո կատարել զընԹերցուած այլաբանուԹեանն՝ բազումն 'ի նմա գտանելով տիպս ինքնաբուխս անօրինակս։ Երեսցի ինձ զտեսչեանց ինչ բովանդակելոց 'ի նմա տալ զկերպարանս։

ՊիսԹետեր և այլոք յաԹենացւոց առ 'ի զերծանել 'ի դատից և 'ի գժտուԹեանց՝ որովք տաղտկան ընակել յԱԹէնս, չուեն 'ի գաւառս Թռչնոց, և հաւանեցուցանեն նոցա կանգնել քաղաք օդակառոյց։ Ակիզբն հիմնարկուԹեան քաղաքին սահմանեն՝ առնել, նոխազ 'ի զոհ մատուցանելով. այլ յամէ պաշտօնն վասն ժիտ և դատարկախոյզ մարդկան, որ զիմեն անդր անդադար՝ գտանել իւրեանց բախտ 'ի նորակերտ քաղաքին։ Հասանէ անդր նախ մի 'ի քերԹողաց, նուագելով[2]. "Արգեա Ա՞ուսայդ, զԹրուչ-

1 Պարապ. 'ի Նախադր. 2 Աբրիստոփ. 'ի Հաւան, վարուց Աբրիստոփ. էջ 14։ տող 905։

նաբնակ զամպակառոյց քաղաքն զԼեփելոկ-
կիգիա ,, * ։ Հարցանէ զնա Պիսթեատեր . Դու-
ոմ ես և ուստի։ Պերթողն պատասխանէ . Ես
հոմերական բարբառոյ , հաւատարիմ ծառայ եմ
Մուսայից . և բղխեն շրթունք իմ զմեղը ներ-
դաշնակ մեղեդեաց ։

ՊԻՍԹԵՏԵՐ .

Ո՞ր ինչ գաս ։

ՊԵՐԹՈՂՆ .

Ասոր Սիմոնիդեայ կացեալ՝ յօրինեցի նուագս
օրհնութեանց ազգի ազգի , ըստ ամենայն պաշ-
տամանց , 'ի շուք նորակերտ քաղաքիդ . և ոչ
դադարեցից յերգելոյ զգա ։ Ո՛հ հայր , որ զհի-
մունս Լոնայ հաստատեցեր , հէգ յիս զուղիս
բարութեանց՝ զորս զքեզ շեղջակուտել ցանկամ։

Ὀλοῦρε ὦναξ πρόπολε Πινδαρικῆς ῥοῆς ἐγὼ
Ἥρης ἀρχῆς ἐξικνοῦμαι τῆς ։

ՊԻՍԹԵՏԵՐ .

Տաղտկացուցեալ դա զիս , մինչև տաց ինչ . դմա
պարգև ։ Ո՞ր սարքունն է՞ր . Լ՚ուր ինձ , տուր դմա
զպատմուճանդ , այլ զգոյշ լեր՝ զի մի և զբաձկոն
քո առցէ ։ Լո՛ սա ։ Պերթողն . Ո՞ր զպատմուճանդ ,
զի թուիս ինձ ցրտացեալ ։

* Νεφελοκοκκυγία անուն է նակէ քաղաք թռչնոց յամպս։
Նորակերտ քաղաքին , և Դշա-

ՔԵՐԹՈՂՆ.

Գոհանայ Մուսայն իմ զպարվեստդ։ Օպինդարական լուր արդ զտաղս։

Աստուածոյ Ի զայլ տողս Պինդարեայ շրջէ 'ի ծաղր, խնդրելով Ի զբաձկոն սորկին. Ի զայն Ի սառեալ, ելեալ 'ի բաց երթելով։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Օերծաք ըստ բախտի 'ի սառամանեաց տաղից նորա. ո կարծէր զի և այսր պատուհաս այսպիսի հասանիցէ մեզ։ Այլ 'ի զոհ անդր մնատիցուք։

ՔՈՒՐՄՆ.

Լուռ լերուք։

ԻՂՁՆ, հարբեալ 'ի յեռին.

Մի ոք հպեսցի 'ի սպանդն։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Դու ով ես։

ԻՂՁՆ.

Թարգման պատգամաց։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Պարտաւորագոյն ես։

1 Արիստոտ. 'ի հաւան, տող 957։

ԻՂՁՆ.

Զայրը լեր, և մեղանած 'ի սրբութեանց. պատգամ ածեմ քաղաքիդ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Աղաղոյն պարտ էր քեզ ածել զայդ։

ԻՂՁՆ.

Ալեթոյլ ետուն աստուածքն։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Սա զայն։

ԻՂՁՆ.

"Յորժամ՝ զայրը ընդ ազգաւս բնակեսցեն 'ի դաշտին, որ բաժանեն ընդ Ասկիոն և ընդ Կորընթոս ,, . . . *

ՊԻՍԹԵՏԵՐ.

Օ՛ի կայ իմ և կորընթացւոց։

ԻՂՁՆ.

Հռակաւոր է պատգամս, և անկնարկէ 'ի գաւառ օդոց՝ յորում եմքս։ Լսուր և զոր զինին. "Օ՛ենէք երկրի նոխազ, և որ զկամն իմ նախ թարգմանեսցէ՝ առցէ հանդերձ զեղեցիկ և կօշիկ նոր ,,։

* Էր պատգամ հռչակաւոր Արիստոֆանէայ. 'ի հատն, որոշ սկսեալ այսպէս։ ՀԻՆ ՔԻՒԷ 969։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Չէ զկոշիկն ասիցէ։

ԻՂԶՆ.

Կա՛ և ընթերցիր. "Կոշիկ նոր, և ապակեակ գինւոյ, և 'ի փորոտւոյ զոհին մասն"։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Չէ զփորոտին և ես։

ԻՂԶՆ.

Կա՛ և ընթերցիր. "Լթէ զհրամանս իմ առնիցէք, լիցի գեր 'ի վերոյ մահկանացուաց՝ որպէս արծուի քան զհաւս"։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Չէ զսին և ես գուշակիցէ։

ԻՂԶՆ.

Կա՛ և ընթերցիր։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Լինէ՛ի զրկոյս ուրեք արձանագրել պատգամ Պսոզնի, փոքր մի այլազգ 'ի քումմէդ, և ունի այսպէս. Յորժամ որ ինքնահրաւէր ժպրհեսցի սպրդել մտանել՝'ի ձեզ, աղմկել զկարգ զոհիցդ, և պահանջել անտի մասն, գանաձեռ լիցի։

ԻՂՋՆ.

Լուսի ինձ թէ խաղ առնիցես։

ՊԻՍԹԵՏԵՐ, Մոքոյանէլով նմա գիրոյն.[1]

Այս և ընթերցիր։ Լուսպետ և արծուի իցէ, և թէ 'ի հուշակաւորաց ոք խաբեբայից Ղ.թենայ, հարէք զնա և մի խնայէք։

ԻՂՋՆ.

Լոյս զայն և ասիցէ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Այս և ընթերցիր։ Ղ.յլ ճն անդր 'ի բաց, երթ յօդել այլուր զպատգամն քո։

Ինդ ելանել նորա, և ահա հասանէ Վեստն աստեղաբաշխ քանոն և կարակն 'ի ձեռին՝ տեղագծել զնորակերտ քաղաքն, և խօսի բանս անտեղիս։ Պիսթետեր խրատ տայ նմա մեկնել, և հարուածովք իսկ վարէ զնա 'ի բաց։ Ղ.յլ զի քաջութիւն Վեստնի վկայեալ է արդ յամենեցունց, այս տեսիլ գործէ նախատինս քերթողին առաւել քան թէ նմա։

Լոյս ասա հասանէ մի յոստիկանաց, զորս հասարակապետութիւնն արձակէ 'ի հարկահանութիւն, և պահանջէն նոքա ընձեռայս 'ի հարկատու ազգաց։ Ի մնալ նորա, լսելի լինի բարբառ. Վէր իցեն ասպնջականք։

1 Արիստոտ. 'ի հաւան, տող 1022։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Ո՞վ Սարդանապաղդ այդ։

ՀԱՐԿԱՀԱՆՆ.

Ալիճակաւ ընտրեալ հարկահան նորակերտ քաղաքիդ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Յումմէ գաս։

ՀԱՐԿԱՀԱՆՆ.

Յերեսաց ժողովրդեանն Ղթենայ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Ղրդ լուր ինձ, զի՞նչ քո ընդ սահմանս մեր, այլ ներեալ այս. տացուք ինչ քեզ և երթիցես խաղաղութեամբ։

ՀԱՐԿԱՀԱՆՆ.

Չրդուեալ՝ի դիս, բարեկամք խօսեցարք. զի պարտ է ինձ հասանել՝ի համախումբ ժողովին որ առաջի կայ մեզ, ՝ի խորհուրդ հաշտութեանն՝ յոր սկսայ խօսել ընդ Փառնակայ միւմ՝ ՝ի փոխանորդաց արքային Պարսից։

ՊԻՍԹԵՏԵՐ. հրամանաւ պարսկական.

Ահա զոր խոստացայն քեզ. առեալ զայդ՝ երթիցես բարեաւ, և մի՛ յամենացես։

ՀԱՐԿԱՀԱՆՆ.

Լա՛ զինչ լիցէ այդ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Ա՛յս վՀիու է համախումբ ժողովոյն վասն Փառ-նակայ։

ՀԱՐԿԱՀԱՆՆ.

Դո՛ւ զայր հարկահան իշխես հարկանել. հասէ՛ք վկայք։ Լա՛ռնէ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Դէպք նորանշան. մինչև զՀիմունս արկեալ քաղաքիս, կանխեն հարկահանք։

ՔԱՐՈԶ.

Լթէ ոք 'ի բնակչաց նորակերտ քաղաքիս զայր աթենացի թշնամանեսցէ...

ՊԻՍԹԵՏԵՐ.

Լակ դա զինչ շաղփաղփիցէ ընդ չքոտի թըղ-թեանդ։

ՔԱՐՈԶՆ.

Օ հրովարտակս վաՀառեմ զաւագանւոյն և զժողովրդեան՝ նորք են, իցէ՞ ոք գնդ։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Օ զինչ հրաման է հրովարտակին։

ՔԱՐՈԶՆ.

Հաւասարել ձեզ ընդ կշիռս ընդ չափս և ընդ վճիռս մեր։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Ինա՛ հնձ վայրիկ մի, և ցուցից քեզ զոր մեքն երբեմն 'ի կիր արկանեմք։ Լո՛ հարկանէ զնա։

ՔԱՐՈԶՆ.

Օ՛ գործես։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Լթէ ոչ առեալ զՀրովարտակդ 'ի բաց կորիցես,...

ՔԱՐՈԶՆ, դարձեալ 'ի քէսարն անդր.

Օ՛ Պիսթետեր յատեան կոչեմ փոխանակ զի զայր ամենացի թշնամանեաց։

ՊԻՍԹԵՏԵՐ.

Ելէ, և դարձեալ յանդգնիս երևել։

ՔԱՐՈԶՆ, դարձեալ դարձեալ 'ի քէսարն.

Լթէ զք զաւագանին մեր 'ի բաց վարէ փոխանակ պատշաճ մեծարանաց ընդունելոյ,...

ՊԻՍԹԵՏԵՐ.

Տակաւին զեզերիս ասա։

ԳԱՐՈՋՆ.

Դու տուժեացիս հազար դրամակշիռ։ Այս էա-
պոտ անփամ ելոտմոտա առնեն. և Պլուսիպոսէր մերն ղայ-
ոտ և մերն ղայն հալածէ, գնելա սոխպին մեգնել գնալ
'ի բաց։

Քանզի եթէ 'ի համառօտութիւնս յայս և ըզ-
ծաղրածու ձևս գուսանացն յաւելցուս՝ 'ի միտ
առցես անդէն, զի գաղտնիք շարժելոյ զամ-
բոխն 'ի ծաղր և զգիտունս 'ի ժպիտ 'ի բաղում
ժամանակաց էին ծանօթ, և չմնայ այլ ինչ՝ բայց
յարմարել զայնոսիկ ըստ ազգի ազգի ծաղրա-
ծութեանց։ Վերթողք մեր 'ի դէպ ժամանակի
կացին. զի ոչ երբէք որպէս առ նոքօք գտանին
յաճախեալ հարք ազահք և որդիք շռայլք,
տունք կործանեալք խաղասիրութեամբ և դա-
տից և պոռնկաց պարապելով, խրոխտումն ըստ
իւրաքանչիւր պայմանի, և առաւելաղանցութիւն
յիմաստս և 'ի կարծիս և 'ի յոռութիւնս իսկ։

Ը. փարթամև բարգաւաճեալ ազինս ևեթ,
որպէս առ աթենացիս և առ սիրակուսացիս, ծնա-
նին ախորժակք կատակերգութեան և ածին 'ի
կատարումն։ Այս է ինչ առաւելութիւն աթե-
նացւոց քան զսիրակուսացիս. զի բարբառ նոցա
դիպողագոյն է քան զսոցայն 'ի կատակերգու-
թիւն, քանզի սիրակուսացւոցն փոքր մի ինչ սաս-
տիկ է[1]։

1 Դեմետր. փաղեր. յզ. պերճախօս. գլ. 181։

Հաճոյ թուեցան յոյժ Լիկեփորի գովութիւնքն՝ զոր Լիմոդեկտոս խօսեցաւ զնախնոյն կատակերգութենէ, և ասէ. Լցիւ էր ինձ աղուութիւն մտաց առ 'ի մատուցանել զպատշաճ դրուատիսն հրաշակերտից ձերոյ տեսարանիդ։ Լշխեցի զթերութիւնս ինչ նորա ստգտանել, այլ անդ ոչ զգեղեցկութեանցն էին բանք։ Լաւ զի ինդիր է արդ՝ թէ արդեօք ողբերգութեան մարթի առաւել ևս առնուլ զարգացումն, ասեմ հանարձակ. Լոտ կաղմածոյ վիպացն, թերևս խորագոյն արուեստին հետազօտութեամբ գտցին հնարքք ինչ՝ յորոց նախնի քերթողք վերջացեալ գտան. զի ոչ իսկ է մարթ սահման դնել արուեստին։ Լայլ ձարտարագոյն քան զնոսա նկարագրել զկիրս բնութեան, այս յանհնարիցն է. զի չիք իսկ բնութեան այլ և այլ բարբառ։

Միաբանեցին ամենեքեան և ասեն. Լյդպէս է։ Լաւ վախճան եղև ժողովոյն։

## ԳԻՂՈՒԿՍ ՀՐ.

*Նաւարկել Ամաքարսեայ ընդ Ծովեզերս Ասիոյ և շուրջ'ի կղզիս։*

ՓԻԼՈՏԱՍԱՑ էին կալուածք 'ի Սամոս կղզւոջ, և հարկ էր նմա գնալ այց առնել նոցա։ Լսորհեցաւք ընդ նմա կամիսել քան զսահմանեալ ժամանակն, գնալ նախ 'ի Դելոս, անցանել անտի

'ի ցամաք, շրջել ընդ գլխաւոր քաղաքս Յունաց որ Լաւոդիս, 'ի Յոնիա և 'ի Դորիս, և ապա նաւել 'ի Հռոդոս և 'ի Կրետէ, և դարձ արարեալ տեսանել զկղզիս՝ որ են մերձ 'ի Ծովելերս Ասիոյ, զԼեսբոսպաղէ, զԼիով և զՊատմոս, և անտի անցանել 'ի Սամոս։ Լրկայնապատում են իրք ուղևորութեանս, այլ ես համառօտեմ որ ինչ կարգի գրոցս Թուի ինձ պատկանաւոր յօրագրին իմում։

Պտղոմեոս ետ ընդ մեզ զԻսիս զորդի իւր, որոյ կատարեալ զկարգ հրահանգացն՝ այն ինչ մնեալ էր յիրս աշխարհի։ Բազումք 'ի բարեկամաց մերոց կամեցան ուղեկից լինել մեզ ընդ որս և Սորատոնիկոս հռչակաւոր քնարահար՝ սիրելեալ յոյժ սիրելեաց իւրոց, և ահարկու այնոցիկ՝ զորս չսիրէրն. զի կարի աջողակ էր 'ի կշռել զպատասխանսն։ Ընդունայներ նա զկեանս իւր շրջելով յայլ և այլ կողմանս Լչլադայ՝. և այն ինչ դարձեալ էր յայնժամ յԱնոս քաղաքէ՝ որ 'ի Թրակիա։ Հարցաք զնա վասն օդոց նահանգին, և ասէ. Օ՝ամիսս չորս իշխէ անդ ձմեռն, և ցուրտ զայլ ամիսս ութ[2]։ Լաւ կարգեալ էր նորա չգիտեմ ուր՝ վարժեար զարուեստին, և երկու ևեթ աշակերտաք լեալ էին նմա։ Ուսուցաներ նա անդ 'ի սրահի ուրեմն, ուր դրօշեալք ինուն Մուսայիցն էին հանդերձ Պտղոմիս. վասն որոյ հարցեալ յու-

1 Ատեն. գիրք Գ. գլ. 10. 2 Նոյն անդ, էջ 351։ էջ 350։

մեմնի՝ թէ քանի աշակերտք իցեն քո, եւ պա-
տասխանի. Լրկոտասան. զդիսն եւ 'ի համար
արկեալ՝։

Արիոս, ուր նախ նաւեցաք, է մի 'ի մեծա-
մեծ եւ 'ի հռչակաւոր կղզեաց եգիպտական ծո-
վուն։ Պոտիք բազումք լերանց, վարսագեղ
ծառովք պսակեալց, յօրինեն անդ հովիտս զուարա-
ձալիս[2]. եւ բլուրք 'ի տեղիս տեղիս ծածկեալք
այգեստանեաւք, որ բերեն գինի ազնիւ։ Այլ այ-
գեստանեաց կողմանն, որ կոչի Աբուիսիա, յար-
գի յոյժ գինին[3]։

Ինակիչք կղզւոյն վիճեալ սնդին. յիւրեանց
առեալ այլոց ազգաց զմիակութիւն այգեաց՝։
Աազմախինջոյ է նոցա սեղան։ Ի միում աւուրց
ճաշէաք առ ումեմն 'ի մեծամեծաց կղզւոյն, եւ
յուզեցան բազմահռչակ վիճքն զհայրենեաց Հո-
մերոսի, զի ազգք բազումք իւրեանց սեփականեն
զբարս քաղաքակցութեան գերահամբաւեալ
քերթողին[3]։ Ասերժեցան արհամարհանաք պար-
ծանք այլոց քաղաքաց, եւ Արիայն սնդագոյնս
հաստատեցաւ. զի ասէին՝ թէ տակաւին սե-
ռունդն իսկ ազգատոհմին գոյր 'ի կղզւոջն, զհո-

1 Ամթեն. գիրք. Գ. գլ. 9. էջ 348։
2 Թէոպոմպ. առ Ամթեն. գիրք Զ. գլ. 18. էջ 265։ Սատի. 'ի Χιός Թուրնիֆոր, ուղեւոր. հտ. 1. էջ 371։
3 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 645։ Պլին. գիրք ԺԴ. գլ. 7. հտ. 1. էջ 722։ Ամթեն. գիրք Ա. գլ. 29 և 32։
4 Թէոպոմպ. անդ. գիրք Ա. գլ. 20. էջ 26։
5 Ելլան. յոյ. հայրենեաց ոմերՀ. գլ. 1։

մերականն կրելով զանուն՝։ Լաւ ահա տեսաք երկուս ոմանս՝ի նմին ազգատոհմէ, զգեցեալ հանդերձս շքեղս, և պսակ ոսկի՝ի գլուխ[2]։ Ոչ ինչ գովութիւնս խօսեցան նոքա զքերթողէն, զի գոյր նոցա գերապանծ և ընծայել նմին ներբող։ Զ Դիոս նախ կոչեցեալ յօգնութիւն[3], ապա երգեցին փոխանակաւ պատառիկս յՈղիսականէն, այնու ճարտարութեամբ եղանակելով զի և զՀրաշազան հատուածոցն որ՝ի նմա յաճախէին զգեղ։

Վիացիք տիրեցին առ ժամանակ մի ընդ ծով՝. այլ զօրութիւն նոցա և մեծութիւնք եղեն նոցա՝ի կործանումն։ Ոչ է պարտ լռել զպարծանս նոցա, զի՝ի պատերազմունս ընդ Պարսս, ընդ սպարտացիս և ընդ աթենացիս՝ի յաղթելն և՝ի պարտել զնոցն խոհականութիւն բերին յանձինս[4]. այլ պարսաւելի են յոյժ այնու՝ զի մեծին զօրութիւն մարդագին վաճառականութեան։ Զ Որմէ տեղեկացեալ պատգամախօսին, ետ հրաման պատասխանւոյ, զի զցասումն երկնից ձգէին անօրէնութեամբն՝ի վերայ իւրեանց[6]։ Վերեցիկ էր պատգամն, այլ մի յընդունայնագունից սպառնալեաց դից։

1 Սարաք. գիրք ԺԴ. էջ 645։ Խոսկ. Ներբ. ՝ի Հելլն. հտ. 2. էջ 144։

2 Պղատ. ՝ի Յոնն, հտ. 1. էջ 530 և 535։

3 Պինդ. ՝ի Նեմ. 2. տող 1։

4 Սարաք. գիրք ԺԴ. էջ 645։

5 Թուկիդ. գիրք Ը. գլ. 24։

6 Թէոպոմպ. առ Աթեն. գիրք Զ. գլ. 18։ Եւսեբիոս. Յոգիս. գիրք Գ. էջ 1262։

Ի Վիայ նաւեցաք 'ի Կումս յԱւոդիս, և անտի ջոգաք տեսանել զքաղաքս բարգաւաճեալս՝ որովք ընդ եգեպական ծովակողմն սահմանի աշխարհն Պարսից։ Ընտանօր 'ի դէպ է նախաշաւիղ տեղեկութիւնս ինչ վասն առաջիկայիցս տալ բանից։

Ի վաղնջուց ժամանակաց էին Յոյնք բաժանեալ յերիս մեծամեծ ազգս, որ են դորացիք, եւոդացիք և յոնիացիք։ Յորդւոցն Պեւկալիոնի, որ Թագաւորեացն 'ի Լեսաղիա, ասեն զանուանս զայսոսիկ ազգացն կալեալ։ Վանղի երկուք յորդւոց նորա Պոր և Լեւոդ, և Թոռն նորա Յոն, բնակեցին յայլ և այլ կողմանս Լիդադայ. և ազգք 'ի քաղաքականութիւն կամ 'ի մի վայր աճեալք 'ի նոցանէ՝ պարծանս իւրեանց Համարեցան կրել զանուն նոցա, որպէս ազգք ազգք ի մատաստիրաց զաղանդասպետին իւրեանց։

Լրեցունց ազգացս այսոցիկ, զորս ասացի, երեւին ցարդ խտիրք զանազանուն ուրեք առաւել և ուրեք նուազ։ Լրրեակ այլ և այլ բարբառք են յունական լեզուին գլխաւորագոյնք, դորացին, եւոդացին և յոնիականն[2]. որք և 'ի բազում յայլ բարբառս անթիւս ստորաբաժանին։ Պորացին 'ի Սպարտա, Մարգոլիս, 'ի Արեան, 'ի Սիկիլիա և յայլ տեղիս յօրինեալ յատուկ բարբառս[3].

1 Հերակլ. պոնտ. առ Աթեն. գիրք ԺԴ. գլ. 5. էջ 624։
2 Դիկեարք, առ մատեն.
աշխարհագր. հտ. 2. էջ 21։
3 Մեսրս. 'ի Կրետ. գլ. 15։

նոյնպէս և յոնիականն՝. իսկ եւողականն բա-
զում այն է՝ զի խառնի ընդ դորացին։ Լ՚ԷՐ զի և
՝ի բազում յայլ իրս կարևորս նմանք են սոքա
միմեանց, զդորացին և եթ և զյոնիացին մարթ է
համեմատել ընդ միմեանս։ Օ՚ր թէ պէտ և ոչ
իշխեմ զզուգակշիռս զայս առնել, այլ օրինակ ինն
՝ի մէջ մատուցից։ Խստաբարոյք եղեն միշտ դո-
բացիք. մեծութիւն և պարզութիւն են տիպք
նկարագրի երաժշտութեան նոցա Ճարտարապե-
տութիւն, բարբառոյ և բանաստեղծութեան։ Խակ
յոնիացւոյ հեզացան բարք, և ամենայն գործք
ձեռաց նոցա բերեն զկերպարանս աշնութեան
և զկիրթ ախորժակաց։

Ի՚ ՝ի մէջ ազգացս երկաբանչիւրոց անսիրելու-
թիւն ինն ընդ միմեանս[2]. և պատճառք, կամ զի
սպարտացիք ՝ի մէջ ազգաց դորացւոց, և աթենա-
ցիք ՝ի մէջ յոնիացւոց են գահերէցք[3], և կամ զի
անհնար է դասակարգութիւն՝ի մարդիկ առանց հա-
կառակութեան։ Սակայն որպէս և է, բայց դորացիք
եղենարգոյք յոյժ քան զյոնիացիս՝ որ ուրեք ուրեք
ամօթ համարին և զկոչելն յոնիացի[4]։ Լ՚ս անար-
գանքս այս, ընդ որով ոչ անկան երբէք աթենա-
ցիք, յաճախեցին ևս քան զևս ՝ի հնագանդել
յոնիացւոց բնակելոց յԼ՚ոնիա մարթ ընդ բռնա-
ւորօք, և մարթ ընդ ձեռամբ խուժադուժ ազ-
գաց։

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 142։
2 Թուկիդ. գիրք Զ. գլ. 80 և 81։
3 Երոդոտ. անդ. գլ. 56։
4 Նոյն անդ. գլ. 143։

Յետ սմանց իբր երկերիւրոց զկնի տրովական պատերազմին, հատուած 'ի յոնիացւոց աստի գաղթեալ բնակեաց 'ի ծովեզերս Ասիոյ հալածեալ անտի զՀին բնակիչս[1]։ Սակաւ ինչ յառաջ քան զայս կալեալ էր եւողացւոց զերկիրն, որ կայ 'ի հիւսիսոյ Յոնիոյ[2], և ապա յերկիրն որ 'ի հարաւոյ՝ տիրեցին դորացիք[3]։ Երբեակ գաւառքս այսոքիկ կազմեն բոլորածիր զծովեզերքն ասպարեզս իբր հազար և եօթնհարիւր ընդ գիծ ուղիղ, և ասպարէզս իբր չորեքարիւր և վաթսուն լստ ընդարձակագոյն լայնութեան։ Լմոյզ զկղզիս, զՀռոդոս, զԿոս, զՍամոս, զԲիոս և զԷսբոս, որ երեցունց գաղթականացն էն մասն։

Երկիրն զոր կալան նոքա 'ի ցամաքի, անուանի է Հոնիութեամբ և գեղեցկութեամբ։ Օարմանազան զծովեզրն առհասարակ յօրինեն սարաւանդակք և ծոցք, զոլովք խիտ առ խիտ ամբառնան աւանք և քաղաքք. և բազմութիւն գետոց, յորոց կէսք բազմահետ գնացիւքն զյոլովից գետոց բերեն զկերպարանս, ընուն զգաշտսն առատութեամբ։ Լմէպետ և երկիր Յոնիոյ ոչ որպէս զԱրոդեայն արգաւանդ է[4], այլ անդ ջերին ևս է երկին, և ևս բարեխառն օդք[5]։

1 Ոքսոնեան վէմք, գար 28։ Սարաք. գիրք ԺԴ. էջ 632։ Եղեան. զան. պատմ. գիրք Ը. գլ. 5։

2 Սարաք. գիրք ԺԴ. էջ 582. գիրք ԺԴ. էջ 632։

3 Պրիդ. 'ի վէմն Ոքսոն. էջ 385։

4 Երոդոտ. գիրք Ա. գլ 149։

5 Նոյն անդ. գլ. 142։ Պաւսան. գիրք Ի. գլ. 5. էջ 533։

Լուսողացուց էն՝ի ցամաքի քաղաքք մեռասան, յորոց ժողովին երբէք երբէք հրեշտակք՝ի Լուսա՝։ Միշակակցութիւն յոսիացուց դուսարի յերկոտասան զլխաւոր քաղաքաց. և ժողովին հրեշտակք՝ի նոցանէ ամի ամի մերձ՝ի մեհեանն Պիսիդոնի, որ է՝ի դիցանուէր անտառին՝ի ստորոտ Ամիկաղեայ լերին, սակաւ ինչ հեռի Լիսիեսոսէ։ Ընդ զոհ մատուցեալ, ուր պրիեենացուց ումեին պատանուց անկ է հանդիսաւորիր լինել, և ոչ ումեք յայլոց յոսիացուց, ապա խորհուրդ՝ի մէջ առնուն զիրաց գաւառին[2]։ Լուսողովետղ ազգաց դորացուց է՝ի Տրիոպիոն հրուանդան. Կնիդոս քաղաք և Կոս կղզի և որ՝ի Հռոդոս քաղաքք երեք, նոքա միայն ունին իշխանութիւն արձակելոյ անդր հրեշտակս[3]։

Լայսպէս՝ի սկզբանէ ժամանակաց կարգաւորեցան ժողովք Յունաց ասիացուց։ Խաղաղութեամբ՝ի նոր բնակութիւնսն կեցեալք, մշակեցին յանդորրու զՆոխս անդաստանսն. և վայրք քաջաղէպք հրաւիրեցին զնոսա ծովեզերաց՝ի ծովեզերս ածել զբերս՝ի վաճառ։ Յաճախեաց վաղընդփոյթ վաճառաշահ նոցա ընդ ճարտարութեան, և ապա հասին բնակեցին Այգիպտոս, խիզախեցին ընդ Հանդրին անդուն-

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 149 և 157։

2 Նոյն անդ. գլ. 143, 148, և 170։ Սարաք. գիրք Ը. էջ 384։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 364։

3 Երոդոտ. անդ. գլ. 144։ Դիոն. ազիկ. հնութիւնք հռ. գիրք Դ. յոդ. 25. հա. 2. էջ 702։

դրս և ընդ ծովն տիրեենական, կանգնեցին իւրեանց քաղաք 'ի Կոլոսիկա, և նաւեցին մինչև 'ի Տարտեսոս կղզի անդր քան զարձանսն Հերակղեայ[1]։

Այլ կանխակալ յաղթութիւնք նոցա ոսոխ յիւրեանս ձգեցին զազգ դրացի, որ ահարկուն էր մերձաւորութեամբն։ Իւրացիք, որոց էր քաղաք Թագաւորանիստ Սարդիս, տիրեցին 'ի քաղաքս ուրեքնոցա[2]։ Արեսոս ապա նուաճեաց զամենայն քաղաքս նոցա, և արկ հարկ 'ի վերայ նոցա[3]։ Աիւրոս յորժամ դիմէն 'ի վերայ Արեսեայ, յորդորեաց զնոսա գումարել ընդ իւր։ այլ նոքա հրաժարեցին[4]։ Իսկ Աիւրոս յետ յաղթութեան ոչ ևս ընկալեալ զսպաս ծառայութեան նոցա, խաղացոյց 'ի նոսա զզօրավարս իւր, և սպառեալ զամենայն նուաճեալ խառնեաց զաշխարհ նոցա ընդ Պարսս[5]։

Յաւուր Դարեհի որդւոյ Աշտասպեայ ապըստամբեցին նոքա[6], և ապա օգնականութեամբ աթենացւոց հրձիգ արարին զՍարդիս քաղաք, և լուցին ընդ Պարսս և ընդ Յոնս զհրդեհ թշնամութեանն՝ զոր ուղղս արեանց չև ևս կարացին շիջուցանել։ Ապ երստին ապա նուաճեալք 'ի Պարսից[7], բռնադատեցան տալ նոս-

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 163։ Սարաք. գիրք Է. էջ 801։

2 Երոդոտ. անդ, գլ. 14, 15, 16։

3 Նոյն անդ, գլ. 6 և 27։

4 Նոյն անդ, գլ. 75։

5 Նոյն անդ, գլ. 141։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 16։

6 Երոդոտ. գիրք Ե. գլ. 98։

7 Նոյն, գիրք Զ. գլ. 32։

ցս նաւս ընդդէմ աթենացւոց[1]. այլ յետ Պի-
կաղեայ Ճակատամարտին թօթափեցին զլուծն[2]։
Ի պեղպոնեսական մարտին մերթ ընդ սպար-
տացիս, և յաՃախ ևս ընդ աթենացիս միաբա-
նեցին. և ապա աթենացիք զնոսա նուաՃեցին
'ի ծառայութիւն։ Այլ յետ ամաց ինչ Անտալ-
կիդեայ խաղաղութեամբն դարձան առ տեարս
իւրեանց առաջինս։

Այսպէս զամն իբր երկերիւր Յոյնք բնակեալք
Ասիա անցուցին 'ի կրեալ 'ի մաշել 'ի թօթա-
փել և 'ի վերստին արկանել զանձամբ զկապանս
ծառայութեանն։ Խաղաղութիւն նոցա, որպէս
և ամենայն բարգաւաՃեալ ազանց, էր իբրև
զՀանգիստ քնոյ առ սուղ ինչ դադարումն վաստա-
կոց։ Այլ յայսքան դժնդակ արկածս յեղափո-
խութեանց դասն քաղաքք, որ համախումբ ընդ-
դէմ կացին թշնամեացն՝ յամառեալք մինչև 'ի
սպառ. և այլք օրինակս մեծամեծս արիութեան
ցուցին։ Տէացիք և փոկիսացիք թողեալ զգե-
րեզմանս հարց իւրեանց, առաջինք չոգան բնա-
կել Ամբրակիա քաղաք 'ի Լակիա՝ և 'ի փոկիսա-
ցւոց կէսք թափառեալք բազում ժամանակս ընդ
ալիս, հիմնեցին ապա զՅղէա քաղաք Իտալիա[3],
և զԱսիկլիա 'ի Պաղղիա։

Իսկ զաւակք այնոցիկ, որք կացին 'ի ծառայ-

1 Երոդոտ. գիրք Ը. գլ. 85 և 90։
2 Նոյն գիրք Թ. գլ. 104։
3 Նոյն, գիրք Ա. գլ. 164 և 168։

ութեան Պարսից, հատուցանէն նոցա զհարկն՝ զոր եդ Դարեհ 'ի վերայ հարց նոցա[1]։ Ի լարաբաժին առնել նորա զամենայն սահմանս ինքնակալութեան իւրոյ, Լիդոյին, Յոնիա, Դորիս հանդերձ Պամիիլեաւ, Լիկիա և այլ գաւառք հրամայեցան տալ ամի ամի չորեքարիւր քանքար անխափան[2], որ ոչ բազում ինչ է առ համեմատութեամբ ընդարձակութեան երկրին և արգասանդութեան, և բնակչացն Ճարտարութեան և վաճառաշահութեանն։ Այլ քանզի 'ի բաժս հարկին ծնանէին գժտութիւնք ընդ քաղաքս և ընդ բնակիչսնոցա իւրաքանչիւր, Աստափեռն եղբայր Դարեհի ետ չափել զերկիրն հարկատու, և ըստ փարսախաց* սահմանել զբաժս. և միաբանութեամբ հրեշտակաց իւրաքանչիւր քաղաքացն ապար աղիւսակ զբաշխիցն, յորում ամենեցուն ինամէր շահ և խափանէին աղմուկք[3]։

Յորմէ յայտ է, զի պարսիկն զՅոնս՝ որ ընդ ձեռամբ իւրով էին՝ կամէր 'ի հնազանդութեան ունել քան 'ի ծառայութեան. զի և զօրէնս նոցա և զկրօնս և զտօնս և զաշխարհախումբ ժողովս թողեալ էր ազատ։ Այլ ձախողակի քաղաքավարութեամբ զպետութիւն քաղաքաց իւրաքանչիւր կամ զյանձանձանս իրաց նոցա տայր

[1] Երոդոտ. գիրք Ա. գլ. 6 և 27։ Գենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 501։

[2] Երոդոտ. գիրք Գ. գլ. 90։

* Այս ինքն են փարսախք քառակուսիք։

[3] Երոդոտ. գիրք Զ. գլ. 42։

'ի ձեռս միոյ ուրուք 'ի քաղաքացոց, որ երաշխաւոր հաւատարմութեան քաղաքակցացն կացեալ, ապա զրգռէր զնոսա յապստամբութիւն և կամ՝ բռնանայր 'ի վերայ նոցա[1]։ Այլ հարկ էր նոցա ոչ զնախապարսի և եթէ ամենայն զաւառին կրել զգոռոզութիւնս, այլ և զհարստահարութիւնս քաղաքապետաց իւրաքանչիւր. և զի հեռի ևս էին յոյժ 'ի ծայրս ինքնակալութեանն տարաբնակք, դուն ուրեք հասանէր բողոք նոցա յաթոռ թագաւորին։ Այսպէսիսս, այն որ զոբրավարեացն բանակին Պարսից առ Արսերքսիս, ընդվայր ջանացաւ դարձուցանել զնոսա յառաջին կարգն։ Օ՛ի թէպէտ և նախարար 'ի Սարդիս կացեալ՝ հաստատեաց անդրէն զընկերհաշտութիւն 'ի քաղաքս Յոնիոյ, և հալածեաց 'ի բաց զամենեսեան՝ որ 'ի ձեռանէ բռնաւորք կային[2], այլ ոչ յամենին նոքա անդրէն 'ի վեր երևել[3]. զի որք զհեռն Պարսկի յաջորդեցին թագաւորք, վարձս շնթողացն իւրեանց կամելով հաստուցանել՝ առ ձեռն պատրաստ գտանէին տալ 'ի յափշտակութիւն նոցա զքաղաքս հեռաւորս։ Լակ զարդիս, քանզի սակաւուց ոմանց պարգևքս այսոքիկ շնորհին, Յոյնք բնակեալք Յունիս՝ մեղկեալք 'ի զրգռանս՝ թողին ամենայն ուրեք սակա-

[1] Երոդոտ. գիրք Դ. գլ. 137 և 138. գիրք Ե. գլ. 27։ Ա. բիստոտ. յոյ. հատ. գիրք Ե. գլ. 10. հտ. 2. էջ 402։ Նոյն. յոյ. տնտես. առանին իրաց. հտ. 2. էջ 304։ Նեպոս 'ի Միլտիադ. գլ. 3։

[2] Երոդոտ. գիրք Զ. գլ. 43։

[3] Նոյն. գիրք Է. գլ. 85։

սպասաւորութեան կանգնել կալ 'ի վերայ աւերակաց ասմկապետութեան '։

Այսպս բարւոք ուրուք միտ եդեալ՝ խելամուտ լինի, զի մեզն նոցա երբեք հնար կալ 'ի կատարելոյ ազատութեան։ Ի խառնել սպա աշխարհին Լուզացւոց ընդ մարդս ինքնակալութեան Պարսից, հարկ էր նմա սահմանել յարևմտից 'ի ծովն Եգիպտոս՝ զորով գաղթականք Յունաց բնակեն։ Այս գաղթականացն այնպէս անձուկ էն սահմանք, զի պարտ է նոցա կամ անկանել 'ի ձեռս Լուզացւոց և Պարսից, և կամ կացուցել ընդ դէմ նոցա 'ի պատերազմ։ Բայց չար այն էր, որ և արդ 'ի պետութիւնս զաշնակիցս բնակեալս 'ի ցամաքս երկիրն Լեղադայ երևի, զի ոչ միայն Լուսոյիս, Յոնիա և Դորիս՝ 'ի դիմել 'ի վերայ նոցա հինից թշնամեաց՝ չմիաբանելին ընդ միմեանս 'ի պատերազմ, այլ և բնակելոց յիւրաքանչիւրս 'ի նոցանէ ազգաց ոչ հարկ անհրաժեշտ զինուորութեան 'ի վերայ ածէր զՀոս աշխարհաժողովոյն։ Ոչ ոչ անդ ուրեմն յաւուրս Կիւրոսի է տեսանել, զի միլեսացիք առանձինն առնեն ընդ նմա խաղաղութիւն, մնանեալ 'ի մոլեգնութիւն թշնամւոյն զայլ քաղաքս Յոնիոյ '։

Լեղադայ պարտական կացեալ նոցա, ձգեաց 'ի վերայ իւր զյաջխախադունդ Խամբարս Պարսից։ և ընկէր իսկ արդեօք 'ի զօրութենէ նոցա,

[1] Աբիան։ արշաւանք Ա։ [2] Երոդոտ։ գիրք Ա։ գլ։ զեբս։ գիրք Ա։ կէ 38։ 141 և 169։

եթէ ոչ նպատակն դէպք և բաջութիւնք նպաստ 'ի կռիւ լինէին նոցա։ Յետ հարիւրեմեան բազմա-զեալ պատերազմաց չհրաժարէր նա 'ի դժնդակ խորհրդոյն խորտակելոյ զզղջաց յոնիացւոց, եթէ ոչ խելամուտ լինէր՝ զի երբեն ինքնին 'ի բնէ զնէին ընդդէմ ազատութեան նոցա խոչ անկոխելի։ Ի նուաճել Կիւրոսի զ[1] Լիդիա, Փիսա պրիենացի՝ մի յիմաստնոցն Յունաց՝ ասաց համարձակ 'ի համախուռք ժողովի յոնիացւոց. Մեթ ապարտ ծառայութեան, և մի պղտամիտ ամենայն ունիցիք. եկէք 'ի նաւս ձեր, անցէք ընդ ծով, կալայք զԱրդինիա և զմերձաւոր քաղաքս, և կեցցեն 'ի խաղաղութեան անձինք ձեր։

Յետ 'ի սպառ նուաճելոյ աղգաց այսոցիկ ընդ տէրութեամբ Պարսից, երկիցս մարթէր նոցա լինել լծընկէց. միանգամ եթէ լուեալ էր նոցա բանիցն Փիսայ, և միւսանգամ ըստ խրատուն սպարտացւոց՝ զոր յետ պատերազմին Աբրոյ խոստանային ածել զնոսա Յունաստան։ Մինոքա ոչ յանձն առին երբեք թողուլ զենակութիւն իւրեանց. և եթէ օրէն էր 'ի բազմանդրութեանէ նոցա և 'ի փարթամութենէ գուշակել ինչ, ոչ ինչ կարեւոր էր 'ի բարեբաստութիւն նոցա ինքնիշխան ազատութիւն։

Յամենայն յոյժ 'ի բանս, արդ այժմ 'ի վերպ ուղևորութեան իմոյ դառնամ։ Շրջեցաք մեք ընդ

[1] Երոդոտ. գիրք Ա. գլ. 170։
[2] Նոյն գիրք Թ. գլ. 106։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 29։

երիս գաւառս Յունաց ասիացւոց. այլ որպէս վերագոյն խոստացայ, հանուռօտ տեսութեամբք ինչ կատարեցից զպատմութիւնս։

Կումա է մի 'ի մեծամեծ և 'ի վաղնջուց քաղաքաց Լեռոդիոյ։ Ուեալ էաք զընակչաց նորա իբր թէ ապուշք ունէին, այլ վաղ 'ի միտ առաք՝ զի առաքինութիւն նոցա տեղի տուեալ էր համբաւոյն։ Ի վաղիւ անդր անձրևէր մինչ դեռ զգնայաքն 'ի հրապարակ քաղաքին, շուրջ պատեալ 'ի կամարակապ յարկածածուկ արքունի գաւթաց։ Խորհեցաք պատսպարել անդր, և արգելին զմեզ. զի պարտ էր մնալ հրամանի։ Չէ՞ ահա բարբառ եղև. Մ՝տէք 'ի գաւիթս. և ամենայն բազմութիւնն ընթացաւ անդր։ Չէ՞ ապա գիտացաք, զի պետութիւնն տուեալ էր զայնոսիկ առ ժամանակ մի 'ի ձեռս փոխատուաց աշխարհին. և զի ժողովուրդն ակն ածէր 'ի նոցանէ, և նոքա ամենի համարէին թողուլ զժողովուրդն ընդ ճնասակարութեամբք օդոց. ուստի յառակս եղև՝ թէ կումացիք անձրևաթացք, առանց քարոզին հրամանի չխուսեն յանձրևաց։ Չէ դարձեալ ոչ ինչ մնքսելով նոցա յառաջագոյն 'ի վաճառաց՝ որ գային առ նոսա 'ի տար աշխարհէ', ասացաւ զնոցանէ՝ թէ ընդ ամն երեքարիւր չգիտէին թէ գոյր նոցա նաւահանգիստ։

Օ՝ աւուրս ինչ եղեալ 'ի Փովկիա, որոց պարիսպք 'ի մեծամեծ և 'ի կոփածոյ վիմանց կապա-

1 Պարաբ. գիրք ԱՂ. էջ 622։

բայօդ երկաթագամ ընդ իրեւաբս մանծուցելոց են կառուցեալ՝, մնաք 'ի լայնածաւալ և 'ի բա-
բելից դաշտս՝ զոր Լրմոս ալեօքն իւրովք պարար-
տացուցանէ, և որք 'ի ծովեզերաց անտի մինչև
անդր ևս՝ զԱարդիս տարածանին[2]։ Օ ուարձալի
էր տեսիլն, այլ ոչ անխոտն 'ի տրտմախանաց։
Վանի՝ ձնապաղիք արեանց ոռոգեցին զդաշտ-
սըն[3], և քանիք դարձեալ ոռոգեսցեն[4]։ Ի յու-
նաստան ուր ուրեք դաշտ ինչ լայնատարած ընդ
առաջ լինէր մեզ, ասէին ցիս. Յայս ինչ և յայն
ժամանակի անկան աստ 'ի Յունաց բիւրք այս-
չափ։ Իսկ 'ի Ակիւթիա ոչ այսպիսի ինչ, այլ թէ
Դաշտքս այսոքիկ յաւէրժ խաղաղութեան օ-
թևանք՝ մնուցանեն անդէոց բիւրս այսչափ։

Ընդ ուղին յոր գնայաք՝ ծառք վարսագեղք հո-
վանի առնէին[5], և հասաք մինչև 'ի բերան գետոյն
Լրմեայ։ Ընտի հայեցեալ տեսաք զմեծավայելուչ
նաւահանգիստն, ապահովացեալ 'ի ցամաք կըղ-
զոյն՝ յորում են Լրիթրա և Ցէոս քաղաքք։ Ի
խորս ծոցոյն երևին աւանք երկու փոքրիկք, հեռք
չարաբաստք նախնոյն Օ միւռնայ քաղաքի՝ զոր
կործանեցին երբեմն լուսացիք[6]։ Ընոյն դեռ ևս
կրեն զանուն. և եթէ դէպք բարեպատեհք թող-

1 Երոգոտ. գիրք Ա. գլ. 163։
2 Սարաք. գիրք ԺԳ. էջ 626։ Թուրքերֆոր. ուղևոր. հտ. 1. էջ 492։
3. Քսենոֆ. կարգագր. Կիւրոյ. էջ 158։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 298։ Պաւսան. գիրք Գ. գլ. 9. էջ 226։
4 Լիւ. գիրք ԼԷ. գլ. 37։
5 Թուրքերֆոր անդ. էջ 495։
6 Սարաք. գիրք ԺԳ. էջ 646։

ցեն նոցա յետ Ժամանակաց պատասպարել պա-
ղբապա զընակիչսն, բարեբաստիկ բնակուի քա-
ղաքին անդր աներկբայապէս ձգեսցէ շահավա-
ճառ մեծ։ Յուցին մեզ ոչ ինչ հեռի 'ի տեղւոջէն
քարայր մի, ուստի Ա՛ռեղէս բղխեր վտակ՝ սրբա-
զան առ նոսա. ուր և Հոմերի ասեն զգիրսն ա-
բարեալ՝։

Ի նաւակայս անդ, գրեթէ դէմ՝ յանդիման
Օ միւռնայ, է Կղազոմենէ կղզի՝ որոյ շահ մեծ
է 'ի ձիթոյ[1], և բնակիչք նորա ընդ նախապա-
տիւս համարին 'ի յունիացիս։ Պատմեցին նոքա
մեզ զՀնարսն, որովք երբեմն էլա դատարկու-
թեան գանձուց աշխարհին էր հնարեալ։ Օլ 'ի
սպառել այնոցիկ 'ի միում ուրեք 'ի պատերազ-
մաց, և 'ի պակասել քսան քանքարաց 'ի թօշակ
զօրացն յարձակելն զնոսա, հատուցին նոցա առ
ժամն զշահն և եթէ քսան և հինգ առ հարիւր. և
ապահատեալ դրամ երկաթի, զնոցն յարգ արծա-
թոյ սահմանեցին նմա։ Յանձն առին ձոիք փո-
խանակել ընդ այնմ զդրամն իւրեանց արծաթիս, և
հատուցան նուէր պարտք. և զգուշացոյն սնտե-
սուք մնից գանձուն բարձան տակաւ դրամքն ան-
արգք մուծեալք 'ի վաճառականութիւն[2]։

Բանաւորք փոքրկունք կացեալք երբեմն 'ի
Յոնիա չարագոյն էա 'ի կիր արկին հնարս առ 'ի

1 Պառսան. գիրք Է. գլ. 5. էջ 535։ Արիստոտ. Ճառ 'ի Զմիւռն. հտ. 1. էջ 408։

2 Արիստոտ. յդ. անառս. տաանին իրաց. հտ. 2. էջ 504։

3 Նոյն անդ։

մեծանալ։ Ի Վովկէա հռոգացի ոմն կացեալ քա-
ղաքապետ, որպէս բնակիչք քաղաքին պատմե-
ցին մեզ զայս, խօսի զաղտ ընդ առաջնորդս երկ-
պառակութեան քաղաքացոցն, զորս իւր խակ
հերձեալ էր, և խոստանայ երկաքանչիւրոցն ու-
րոյն 'ի դիմաց ոսոխացն իւրեանց գանձս այսչափ
առ 'ի միաբանել ընդ նոսա։ Ի յերկաքանչիւ-
րոց կողմանց առեալ զգանձսն նոյնչափ, հաշտե-
ցուցանէ զնոսա ընդ միմեանս։

Ընտի գեմ եղաք ընդ Հարաւ. և բաց 'ի քաղա-
քացն՝ որ էին անդ 'ի միջերկրայս տեսաք յեզը
ծովուն և մերձ 'ի ծովեղերս անդր զ Էբեդոս,
զՎողոփոն, զՊրիենէ, զՊ'Իոս, զՊ'Իլետոս, զՅա-
սոս, զՊ'Մինդոս, զՊ'ղեկառնաս և զՍիդոս։

Ապեսայիք ցուցին մեզ աւաղելով զմեացուածս
մեհենին Ատրամեայ, զՀռչակաւորին Հնու-
թեամբ և մեծութեամբ[2]։ Յառաջ քան զամն
չորեքտասան մեհեանն այն հրձիգ լեալ էր, ոչ
'ի յերկնէ հրընկէց շանթիւ և ոչ 'ի մոլեգնու-
թենէ թշնամեաց՝ այլ յանձնահաճ կամաց առն
ուրուսն, որում առնուն էր Աշոստրատ. որ 'ի
խոշտանգանս խոստովան եղև, ոչ վասն այլ ինչ
իրաց զայն գործեալ՝ բայց զի անուն իւր ասիցի
'ի սպառ[3]։ Յաշխարհաժողով ազգացն Յունիոյ

1 Արիստոս. յՂ. անտես. առանձին իրաց, հտ. 2. էջ 504։
2 Պաւսան. գիրք Դ. գլ. 31. էջ 356։
3 Կիկերո. յՂ. բն. գիրց. գիրք Բ. գլ. 27. հտ. 2. էջ 456։ Պլուտ. յԱղէքս. հտ. 1. էջ 665։

տուաւ վՃիռ՝ դատապարտել զչարաշուք անուն նորա 'ի մոռացմանս, այլ դատակնիքն իսկ ինքնին յաւերժացուցեալ զյիշատակ նորա. և Թեոպոմպ պատմագիր ասաց ցիս յաւուրս միում, զի չէր մարթ նմա 'ի գրել զպատմութիւն իրացն անյիշատակ առնել զանուն եղեռնագործին[1]։

Ի հոյակապ շինուածոյն ոչ այլ ինչ կան մնացուածք, բայց չորեքին որմք և սիւնք ինչ յաւերակս անդ ամբարձեալք։ Յարկ մեհենին, և իմբարանին յօրինուած զարդուց ծախեալ է 'ի հրոյն, և սկսանին շինել զայն վերստին, հանգանակելով քաղաքացւոցն ամենեցուն, և կանանց զզարդս իւրեանց ակամակաս մատուցանելով[2]։ Որ ինչ վնասեալ ևեթ է 'ի հրոյն՝ նորոգի, իսկ որ ինչ աւերեալ՝ չքեղագոյն կամ ըստ ընտիր ևս սխորժակաց յօրինի։ Ի նեղքս մեհենին Ճաճանչ ոսկւոյն և հրաշակերտք անուանի Ճարտարացն յաՃախեին զգեղեցկութիւն[3]. այլ արդ գեղեցկագոյն ևս յօրինեսցեն զայն հարկատուք նմին նկար և քանդակ[4], ևս քան զևս յետ այնորիկ զարգացեալք։ Պատկերի աստուածուհւոյն ոչ փոխեսցի կերպարան՝ 'ի վաղնջուց դրոշելոյն եգիպտացւոց օրինակեալ, որպէս բազում՝ ուրեք և

1 Աւ. Դեղ. գիրք Բ. գլ. 6։ Վաղ. Մաքս. գիրք Ը. գլ. 14։

2 Արիստոտ. յՍ. անուանս. առանձին իրաց, հատ. 2. էջ 605։ Սարաք. գիրք ԺԴ. էջ 640։

3 Արիստոտ. յԱմպան, տող 598։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. հատ. 2. էջ 649։

4 Սարաք. գիրք ԺԴ. էջ 641։ Պլին. գիրք ԼԵ. գլ. 10. հատ. 2. էջ 697։

յայլ մեհեանս Յունաց է տեսանել. աշտարակ 'ի վերայ գլխոյ նորա, և ձողք երկաթիք նեցուկք բազկաց նորա, և իրան նորա աւարտեալ 'ի կո-թող՝ դրուագեալ կերպարանաւք կենդանեաց և այլովք առակաւոր ձևովք*։

Որչափ եփեսացւոց կարի իմաստունս սահմանեալ է 'ի վերայ շինուածոց հասարակաց։ Դանզի Ճարտարապետին, որոյ կազմած ձևոյն ընտրիցի, պարտ է պայմանել զսակ ծախուցն, և զամենայն ինչս իւր գնել 'ի գրաւ։ Եթէ չորիր ևեթ մասամբ յաւելուցուն ծախքն, 'ի գանձուց աշխարհին յաւելուածն լնու. իսկ եթէ աւելի քան զչորիր մասն յաւելցին վճենակք, Ճարտարապետն տուժի'։

Լուահա հասաք 'ի Միլետոս։ Զարմանալի էն պարիսպք նորա, զարմանալի մեհեանք և տաճք, գործարանք ձեռակերտաց, և նաւահանգիստք՝ ուր հոյլք բազմամբոխ նաւուց և նաւաստեաց և գործաւորաց խառն 'ի խուռն աղմկեալ յուզին։ Զնդ է օթևան մեծութեանց, գիտութեանց և զբօսանաց, Զթենք 'ի Յոնիա Միլետոս։ Զորիս դուստր Զվկիանու ծնաւ 'ի Զերեռսէ դստերս յիսուն, որ կոչին Զերեայք՝ զանազանեալք 'ի միմեանց գեղով. իսկ Միլետոս բազմագոյնս քան զնոր ծնաւ զաղթականս, որ հատուածք 'ի նմանէ բնակեալ յեզերս Զլեսպոնտեայ և Պրոպոնտեայ

* Յեակոբս մատենիս 'ի տեղի կուրթիւնն. Թիւ. ԺԳ։

† Վիսարով. յառաջաբ. գիրք ժ. էջ 203։

և Եւքսինեան Պոնտոսի՝[1], յաւերժացուցանեն զփառս նորա։ Ի մայրաքաղաքի անդ կացին հինգ 'ի վիպագրաց և նախնիք յիմաստասիրաց. և պարծինաբնդ Աստասիա և ընդ ևս չքնաղագեղն ծընեալս յիւրմէ տարփածուս։ Մերթ շահավաճառ հարկ արար նմա նախամեծար քան զպատերազմ առնել զխաղաղութիւն, և մերթ յաղթանակաւ զղէնս 'ի բաց եդ. ուստի առաւէն՝ Միլետացիք երբեմն քաջք[2]։

Զեռակերտք 'ի քաղաքն, և շուրջ զբաղաքաւն Ճոխութիւնք բնութեան յաճախեն զպայծառութիւն։ Պնայաք ստէպ յեզր Մէանդրեայ, որ զգետս բազումս յինքն ընկալեալ, և զքաղաքաց բազմաց բաղխեալ ալեօքն զպարիսպս, ծաւալի ոլորտապտոյտ ընդ մէջ դաշտին՝ որ զանուն նորին պարծանօք կրէ, և պերճազոյնս բարերարութիւնքն նորա Ճոխանայ[3]։ Դաղմեալք յաճախ 'ի դալարուոջն, որ զծաղկազարդ գետեզերքն պատի, և շուրջանակի տեսարանք զօշոտեն զաչս, չյագէաք 'ի տուրևառ անապակ օդոցն, և ոչ 'ի լոյս արևուն ջինջ և ակնապարար[4]. խլտեր քաղցր թմբրութիւն 'ի սիրտս

1 Եփոր. առ Ամեն. գիրք ԺԲ. էջ 523։ Սարաբ. գիրք ԺԴ. էջ 635։ Պլին. գիրք Ե. գլ. 29. էջ 278։ *Եւթանասունն և հինգ գաղթականս ասէ Սենեկա հաստատեալ 'ի Միլետեայ, իսկ Պլինիոս աւելի քան զութսուն։ Ցեսցեն զայսմանէ խնդրօղք 'ի Նշանակեալ մատեանսն։

2 Երոդոտ. գիրք Է. գլ. 26։ Սարաբ. գիրք ԺԵ. էջ 577 և 578։

3 Երոդոտ. գիրք Ա. գլ. 142։ Պաւսան. գիրք Է. գլ. 3. էջ 523։

մեր, և զմայլեալ իմն էաք բարեբաստութեամբ։ Այսքան ազգեցութիւն է յոնիական նահանգին. և բարոյականին՝ փոխանակ 'ի չափոյն ունելոց զկիրսն՝ և և զրգռելով զնոսա, արար զյոնիացին մեղկ և տարփալի քան զսամոսացին ազգս Աշխարհաց։

Յիմացուածս նոցա, 'ի զգացմունս և 'ի բարս՝ են քնքշանք իմն, որ կախարդեն զսկումբն. յե-բաժշտութեան նոցա և 'ի կաքաւս[2] համարձակութիւն իմն, որ 'ի սկզբան անդ սարտուցանէ, և ապա խոտորեցուցանէ զսիրտս։ Հրապոյրս նորանորս յաւելեալ է նոցա 'ի զրդանս, և հնարագիտութեամբքն յաճախեալ զգեղխութիւն։ Ցօնախմբութիւնք կուռ զհետ միմեանց հասեալք՝ զբաղեցուցանեն զնոսա 'ի հայրենիսն, կամ առ սահմանակիցս ածեալ ձգեն։ Ընդ արք պայծառազգեստք և կանայք շքեղաշուք պճնեալ, ընծայեն զանձինս 'ի տեսիլ առ 'ի հաճոյ լինելոց տեսողաց[3]։ Այսմն իրի և զհին աւանդութիւնս, որ պատսպարանք են ախտից նոցա, ունին զգուշութիւն։ Ոչին զմեզ յաղբիւրն Խիզեայ մերձ 'ի Իրլետոս, ուր հէք օրիորդ դիւցազն Խիեղիս առ տուփանայն և առ վշտին անչնչացաւ[4]։ Յուցին մեզ և զԱտմոս լեառն, ուր Ապոլոնիս յաճախէրն առ

1 Պղատ. յղ. օր. գիրք Դ. հտ. 2. էջ 680։ Ասթեն. գիրք ԺԲ. գլ. Ե. էջ 623։

2 Վիրատ. գիրք Դ. տարերգ. 6. տող 21։ Ասթեն. գիրք ԺԴ. գլ. Ե. էջ 525։

3 Քսենոփ. առ Ասթեն. գիրք ԺԲ. էջ 526։

4 Պաւսան. գիրք Է. գլ. Ե. էջ 535։ Ովիդ. այլաբան. գիրք Թ. տող 434։

պատանին Լ՝ինդիմիոն՝։ Լ՝ինդր՝ի Սամոս գնան տար-
փաւորք չարաբաստք, ուղերձել զուխտս իւրեանց
առ ստուերս Լ՝էնտիքեայ և Հռադինեայ՝։

Ի Մ՝եմֆեայ ընդ վերկոյս գետոյն՝ Լ՝եղոսի
մինչև՝ ի Թեբէ յայս և յայնկոյս գետոյն ձգին
շինուածք հոյակապք, և խիտ առ խիտ ամբառ-
նան՝ ի նոսա բրգունք և կոթողք։ Յանկալն
ևս ձգէ աստանօր տեսիլ զանցաւորն՝ ի զնին՝
յելանել նորա՝ ի նաւահանգստէն Պ՝ղիկառնայ
որ՝ ի Պ՝ոլիս՝՝ ի ցամաք կղզին Լ՝րիթրէ ընդ հա-
լաւ։ Օ՝ի զՀանապարհաւն, որոյ երկայնութիւն
ընդ գիծ ուղիղ ոչ ինչ աւելի է քան զիննհարիւր
ասպարէզս, կանգնեալ կան աստ անդ բազմու-
թիւն քաղաքաց՝ ի ծովեզերս ցամաք երկրին և՝ ի
մերձակայ կղզիս։ Զ՝ի այլ ուրեք բնութեանն
յայսքան անձուկ վայրի յաձախեալ այնչափ
բազում ազգի ազգի աջողութիւնս մնաց զար-
մանալիս և հանճարս վսեմս։ Լ՝րոդոտ ծնաւ Ա՝-
ղիկառնաս, Խպոկրատ՝ ի Կով, Թաղէս՝ ի Մ՝ի-
լետոս, Պլութարգոս՝ ի Սամոս, Պարրաս Լ՝ոփե-
սոս*, Ք՝ասենոփանէս**՝ ի Կողոփոն, Ք՝նակրէոն
՝ի Տէոս, Ք՝նաքսագոր՝ ի Կղազոմենէ, և Հո-
մերոս ամենայն ուրեք՝ ի նոսա. զի որպէս կան-

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 1. էջ 366։ Պլին. գիրք Բ. գլ. 9. հտ. 1. էջ 76։ Հիւսիք. ՝ի բառն Եւնսպ.

2 Պաւսան. անդ։

* Ի կողմանս յայսոսիկ ծնաւ և Ա՝պեղէս, ըստ ոմանց՝ ի Կով, իսկ ըստ այլոց Յ՝ոփեսոս։

** Ա՝ռաջնորդ հզէական աղանդոյն։

խաւն ասացի, պարծանք խանձարրոց նորա նա-
խանձընդդէմ միմեանց կացուցանեն 'ի վէճ զայս
ամենայն քաղաքս։ Ել զամենեսին, որ Յոնիա
կացին մատենագիրք անուանիք, յիշատակեմ
աստանօր. զի և ոչ 'ի Ճառս բնակչացն Ղլիմպեայ
սովորութիւն է զամենեսին մի ըստ միոջէ յի-
շատակել, այլ զվերհազոյնս և եթ 'ի դից։

Ի բնիկն Յոնիոյ անցաք 'ի Դորիա, որ է մասն
նախնեաց Կարիոյ։ Ընդ 'ի Կնիդոս, որ է մերձ 'ի
հրուանդանն Տրիոպիոն, ծնաւ Կտեսիաս վիպա-
գիր. անդ և Եւդոքսիոս աստեղաբաշխ, որ ե-
կեաց յաւուրս մեր. զորոյ և զտուն իսկ տեսաք
յանցանելն, ուր զաստեղագիտութիւնն առ-
նէր։ Եւ ահա հասաք հանդէպ բազմահռչակ Ա-
տրղկանն Պրաքսիտեղեայ. զետեղեալ կայ անդրին
'ի մէջ փոքրիկ մեհենի, յոր յերկուց հանդիպա-
կաց դրանց և եթ ծագէ լոյս, որպէս զի աղօտ
նշուլեցն յամենայն կողմանց երևելի առնել զայն։
Ակարեմ բանիւ յանդիման առնել զզարմանս
մեր ընդ նախկին տեսիլն, և զպատրանսն բեր-
կրալիս՝ որ հուպընդհուպ յաջորդեցին։ Դո-
ղովեաք ընդ վէնն², և թուէր մեզ լսել զհեծու-
թիւն նորա։ Երկուք յաշակերտաց Պրաքսի-
տեղեայ՝ այն ինչ եկեալք անդր յԱթենայ 'ի
զնին հրաշակերտին առ 'ի վարժս իւրեանց, ցու-

¹ Պլին. գիրք Լ.Զ. գլ. 5. էջ 411։
հա. 2. էջ. 726։ Ղուկիան.
յղ. սիրոյ, յոգ. 13. հա. 2.
² Դիոդ. Ծաղկաքաղ 'ի ԻԶ
գրոց, էջ 884։

ցին մեզ ինչ ինչ 'ի գեղեցկութեանց նորա զորոց զկայաք զաղգեցութիւն՝ առանց խելամուտ լինելոյ պատճառացն։ Զնդ ոմն 'ի տեսողաց հիացեալ, ասէր. Թողեալ Զբտղկան զՊղնմպոս, 'ի միջի մերում եկեալ բնակէ։ Զայլ ոք անդուստ. ԶԹէ Հերա և Զ.Թենաս այժմ զսա տեսանէին, ոչ ևս ընդ դատաստան Պարիսի գժգոնէին։ Զայլ ոք դարձեալ. Զբբեանն աստուածուհին բացաւ երեսաք յանդիման լեալ Պարիսի Զնքիսեայ և Զ.գոնիսի, իցէ Թէ նոցն և այժմ Պրաքսիտելեայ, երևեալ իցէ անքօղ։ Զրում մի յաշակերտացն ետ պատասխանի. Զ.յո ամենևին, և երևի իսկ նմա 'ի դէմս Վրինեայ։ Զյ յիրաւի իսկ ընդ տեսանելն մեր զայն ծանեաք 'ի նմա զկերպարանս տարփածուին հռչակաւորի. զի նոցն նորին տիպք կերպարանացն և հայեցուածք էին 'ի պատկերին։ Զկատէին 'ի նմա համբակքն Ձարտարքն և զՀրապուրող ժպիտ զայլոց ուրումն սիրուհւոյ Պրաքսիտելեայ, որում անուն էր Կրատինէ[4]։

Զանգի նկարիչք և անդրիադործք զտարփաւորս իւրեանց կալեալ նախատիպ, կացուցանեն զնոսա 'ի պաշտօն հասարակաց 'ի դէմս այլ և այլ դից. նոքին և զՁ.ևիբիադ 'ի դէմս Հերմեայ յանդիման կացուցին[5]։

1 Ծաղկաբաղ. գիրք Դ. գլ. 12. էջ 323։
2 Նոյն անդ. էջ 324։
3 ԱԹԵՆ. գիրք ԺԳ. գլ. 6. էջ 591։
4 Կղեմ. աղէքս. յորդոր առ հեթ. էջ 47։ Ղուկիան. յդ. սիրոյ, յոդ. 13. հա. 2. էջ 411։
5 Կղեմ. աղէքս. անդ։

Կնիդացիք խրոխտացեալ պանծան ընդ գանձն ընդ այն, որ ոչ միայն զօգուտ վաճառականութեան՝ այլ և զվարս յաճախել նոցա։ Օ՛ի առ աղգս նանպահաւատս և ցանկացողս արուեստից, շատ է՝ զի իցէ ուրեք պատգամաւորեալ կամ արձան ինչ հռչակաւոր՝ առ՝ի ձգել անդր զտարաշխարհիկս։ Յորոց բազումք հատանեն անցանեն ընդ ծովս՝ դիմեալք՝ի Կնիդոս, առ՝ի տեսանել զգեղեցիկագոյնն՝ի ձեռակերտս Պրաքսիտելեայ՝[1]։

Իսկ Լիսիս ոչ կարէր զաչս իւր՝ի բաց դարձուցանել, այլ ևս քան զևս յաւելեալ՝ի զարմացումն, երբէք երբէք գոչէր. Ձիք ուրեք բնութեան գործ այսպիսի ամենակատար։ Լաւ ես ասեմ. Լաւ ուստի՞ գիտես, զի յանչափ բիւր ազգի ազգի կերպարանսն՝ զորս բաշխէ նա մարդկան՝ չիցէ որ գեղեցկագոյն քան զոր տեսանեմքս։ Ո՞յր ուրուք տեսեալ իցէ զամենայն նախատիպս՝ որ եղեն, որ են և որ լինելոց իցեն։ Լիսիս ասէ. Ա՛յլ հաւանիցիս արդեօք, զի արուեստն յաճախէ զնախատիպս զայսոսիկ. և զի զգեղեցկութիւնս՝ սիրեալս յայլեայլ ոմանս՝ պատշաճեալ ինամով՝ի մի[2], հնարի ընուլ զամենեսեանցի թերին բնութեան։ Ո՞չ ապաքէն ազգ մարդկան շքեղ և մեծավայելուչ ևս երևի՝ի գործարանս ճար-

1 Պլին. գիրք ԼԶ. գլ. 5. հա. 2. էջ 726։

* Դրոշմածք հատեալք՝ի Կնիդոս յաւուրս ինքնակալացն հռոմայեցւոց, թուին բերել զոմիս Աստղանն Պրաքսիտեղէս։

2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 781։ Կիկերոն. յՍ. գիրս. գիրք Բ. գլ. 1. էջ 75։

տարաց մերոց քան 'ի տունս առ հաստատակ Յղլա-
դայ։ Սեմ։ Հաջի բնութեան չէք գեղեցիկ ինչ
և ոչ տգեղ, այլ ամենայն ինչ ըստ կարգի է։ Ամ-
ինչ փոյթ է նմա, զի յանբաւ արգասիս դիպաց
պատահիցէ ինչ կերպարան՝ որ զամենայն յին-
քեան բարձեալ բերիցէ որ ինչ կատարելու-
թիւնք թուին մեզ կամ թերութիւնք 'ի մարդ-
կեղէն մարմնի. այլ 'ի մի ինչ ուշ ունի, 'ի պա-
հել զմիաբանութիւն՝ որ անեղեւոյթ շղթայիւքն
զօղեալ ընդ միմեանս զկարի իսկ տրուպս յէից
ընդ բոլոր տիեզերս, ածէ զնոսա խաղաղու-
թեամբ 'ի նպատակ անդր իւրեանց։ Յարգեսջիր
ապա զգործս նորա. զի այնպէս գեր 'ի վերոյք
են, որ թէպէտ և վեր 'ի վերոյ միտ եղեալ՝ նկա-
տիցես բազում յոյժ գեղեցկութիւնս ՀՀմարիտս
յանարգ որդան քան 'ի պատկերիդ։

Հանրացասումն եղև Լուսիս ընդ հայհոյու-
թիւնսն՝ զոր յերեսս իսկ աստուածուհւոյն խօ-
սէի, և ասէ ցիս զայրագին. Ոչ ինչ պէտք միտ
դնելոյ, ուր հարկ է տպաւորութեանցս ազգոլա-
կանացն տալ տեղի։ Սեմ։ Այլ ոչ այդպէս ազ-
դէին 'ի քեզ՝ եթէ էիր դու միայնակ, և կիրք 'ի
ներքս չմտանէին, և չգիտէիր դու զանուն
Հարտարին։ Ի միտ առ զկարդ զգայմանց քոց.
զարմացար ընդ նախկին տեսիլն, և զգօնու-
թեամբ զզարմանս քո յայտ արարեր. ապա զար-
թեան՝ 'ի քեզ յիշատակք բերկրալիք, և իղձքսկսան
բարբառել 'ի շրթունս քո. իսկ իբրև համբակքս

գՀարտարութիւնս ինչ արուեստին ցուցին, կամեցար յաւելուլ 'ի բանս նոցա, և առաւելագոյն խանդիւքդ ցրտացուցեր 'ի սպառ զսիրտ իմ։ Յոյժ առաւել զովելի զտաւ անկեղծութիւն պատանեւոյն ամենացուս, որոյ դիպեալ 'ի գտութիւն՝ ուր էր բազմահռչակ Հելլինեայ պատկերն գործ Հարտարին Օ՝ Լքսեայ, և նկատեալ զայն վայրիկ մի, և առաւել քան ընդ գեղեցկութիւն նկարուն զարմացեալ ընդ հիացումն միոյ նկարչայ՝ որ անդն կայր, ասէ. Մնձ ոչ այնչափ չքնաղագեղ կինդ այդ թուի։ Յա նկարիչն ասէ. Օ՝ի աչք քո աննմանք էն իմոցս։

Յղեալք 'ի մեհենէն՝ անոյաք ընդ անտառն դիցանուէր, ուր ամենայն ինչ ակնարկէր 'ի պաշտօն Յստղկան։ Մնդ թուին վերակենցաղեալ յանծերանալի մանկութիւն մայրն Յոնեայ 'ի կերպարանս հրաեւոյ, մատաղ օրիորդն Լաւինէ 'ի կերպարանս սարգենոյ[2], և չքնաղագեղն Կիպարիս 'ի կերպարանս նոՀՀոյ[3]։ Յմենայն ուրեք բաղեղն պատաղեՀ կռուեալ զկողերքք ծառոց, և ուրեք ուրեք որթ ողկուզալից գտանէ իւր անդ նեցուկ պատկանաւոր։ Մնդ դալարագեղ կամարքք, զորովք ամբարձուղէշ սօսեաց սաւառնէին ստուերքք, տեսաք երախանս բազում կնիդացոց՝ որք կոչունս անդ շինականս առնէին յետ պաշ-

1 Պրպտ. առ Սոսոր. Հառ. գոն. գիրք Ա. գլ. 16. էջ 61. էջ 394։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. էջ 47։

2 Փիլոսոր. 'ի վերս Աղոս. 19։ Վիրգիլ. Ծաղկաքաղ 3. տող 63։

3 Փիլոսոր. անդ։

տամն զՀին[1]. նուագէին զսեր, և հեղուին ստէպ 'ի բաժակս զծաղկահամ գինին՝ զոր երկիրն բերեր բարեբաստ[2]։

Լաւ ընդ երեկս իբրև դարձաք յօթևանն, համբակքն ուղեկիցք մեր բացին զթղթեանն իւրեանց, և ցուցին մեզ 'ի ծրագրութիւնսն՝ զոր ա-բարեալ էին՝ զուրուականս ձեռակերտից Ճարտարաց ոմանց հռչակաւորաց[3]։ Ցեսաք 'ի նոսա և վարժս բազումս՝ զոր ըստ հրաշակերտիցն տեսեալոց արարեալ էին, և մանաւանդ ըստ գերահռչակ Պողնկլետեայ ձեռակերտին՝ որ Կանոն կոչէր[4]։ Լինդ իբրեանս կրէին նոքա և զգիրս Ճարտարին, յորում ցուցանէր զՀամեմատութիւնս պատկերին[5]. և զՀառս Լաւիրանոցի նկարչի դեռ ևս 'ի լոյս ածեալ զլափակցութենէ և զերանգոց[6]։

Խնդիրքն բազումք անդ 'ի մէջ անկան զգեղեցկութենէ, հասարակաբար և յիւրաքանչիւր ոք յէիցս նկատեալ զայն։ Համարէին գեղջ 'ի զգայութիւնս մեր միայն էանալ, և պատրանս և զարմացումն միանգամայն ներգործել 'ի մեզ և առաւել կամ նուազ ազդել 'ի մեզ ըստ կազմածոյ զգայարանացս և ըստ հանգամանաց հոգւոյս։

1 Ղուկիան. յղ. սիրոյ, յօդ. 12. հտ. 2. էջ 409։

2 Սարաք. գիրք ԺԴ. էջ 637։

3 Պլուտրն. յերգիծ. էջ 311։ Միշտ. բանաս. կաՃառ. հտ. 19. էջ 260։

4 Պլին. գիրք. ԼԴ. գլ. 8. հտ. 2. էջ 650։ Ղուկիան. յղ. մահ. նժդեհ. յօդ. 9. հտ. 3. էջ 331։

5 Գալէն. յղ. Հարպակր. և Պլատ. վարդապետ. գիրք Ե. էջ 288։

6 Պլին. գիրք ԼԵ. գլ. 11. հտ. 2. էջ 704։

Ա.յլ յաւելուն, զի որովհետև ոչ յար և նման են կարծիք գեղեցկութեան Յ.ԷՐՈՊԱ, և Յ.ՀԻ-ԲԻԿԿ, և զի ամենայն իսկ ուրեք զնեալ ընտրեն ըստ տիպոց և ըստ սեռից մարդկութեանս, չէ մարթ բովանդակել զամենայն տիպս կերպարանացնորա 'ի մի Ճշգրիտ սահման։

Ա'ի ոմն 'ի մէնջ, բժիշկ և իմաստասէր, եցոյց նախ՝ զի մարմնոյս մերոյ մասունք 'ի սկզբանա-կան տարերաց՝ են խառնեալ. և ապա վերՃեալ պնդեր՝ զի առողջութիւն 'ի կրիս խառնուածոյ տարերացս կայ, իսկ գեղեցկութիւն 'ի յօդուած մասանցս[1]։ Պատասխանի ետ մի յաշակերտացն Պրաքսիտեղեայ, և ասէ. Ա.յլ ոչ երբէք 'ի կա-տարելութիւն անդր ժամանեսցէ որ ծառայաբար հպատակեալ օրինաց՝ 'ի նմանութիւն և եթէ մա-սանցն միտ դիցէ և 'ի Ճշգրիտ համեմատութիւնս։

Ա.ՀԱ հարցեալ՝ եթէ Ճարտարն ումեք անդրիա-գործի, որում առաջի կայցէ առնել զպատկեր վերհագուտին դից կամ զաստուածուհւոյն տար-փանաց, զոյս պարտ իցէ ունել նոցին նախա-տիպս, ասէ. Ոչ այնոսիկ զորս ինքն իւր կաղմէ յետ աշակերտելոյ բնութեան և արուեստին, և յորս իբրև 'ի գանձարանի մեթերեալ պահին տիպք վայելուչք ըստ իւրաքանչիւր ազգի ազգի գեղեց-կութեան։ Ա.ՀԱ Ճարտարին զանն 'ի մի 'ի նախա-տիպաց աստի պիշ ունելով, գուն գործէ երկար

[1] Գալէն. յղ. Հարպոկր. և Պղատ. վարդապետ. գիրք Ն. հատ. 1. էջ 288։

վաստակաւ գաղափարել զայն 'ի պատկերին[1], Պատանայ յղկէ զայն և ողորկէ անդադար. մերթ զկնեմութիւն մտացն 'ի նմա տպաւորէ, և մերթ զզուարթութիւն երևակայութեանն. և ոչ զձեռն իւր ամիտքէ, մինչև ածեալ զմեծվայելչութիւն զողիմպիականն Պրատանզդաւ, կամ զգեղ զօշոտիչ զկնիդական Պտղկամբն։

Պ.յլ գժուարին այն է, ասեմ, զի նախատիպքդ այդոքիկ գեղոյ՝ զորս դուդ ասես, պատկերքդ այդոքիկ անէակք՝ յորս Ճշմարիտն պարզ Ճոխանայ մտացածին Ճշմարտութեան[2], չեն ինչ հաստատուն և միօրինակ. այլ իւրաքանչիւր օք 'ի Ճարտարաց այլազգ յանդիմանն առնէ զայն։ Պպա ուրեմն ոչ է պարտ 'ի յեղյեղուկ օրինաց աստի առաւել քան այլուստ խնդրել զգեղեցկին Ճշգրիտ կերպարան։

Պղատոնի չգտեալ զայն երբէք ուրեք անսխեղծ և անայլայլակ, ամբարձաւ առ 'ի գիւտ այնորիկ մինչև 'ի նախատիպն՝ զոր հաստիչն տիեզերաց, 'ի լուծանել զհամապարփակ զաշխարհակալ մէգն, կալաւ իւր առաջի[3]։ Օ.ի 'ի նմա անՃառաբար և վսեմապէս գծագրեալ կան* ամենայն ազգի ազգի տեսակք էիցս զգալեաց 'և ա-

[1] Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 707։

[2] Կիկերո. Ճարտ. գլ. 2. հա. 1. էջ 421։ Յուն. յղ. Նախնի Նկարչաց, գիրք Ա. գլ. 2. էջ 9։

[3] Տիմ. յղ. հոդոյց տիեզերք. առ Պղատ. հա. 3. էջ 95։ Պղատ. 'ի Տիմ. անդ. էջ 29։

* Տեսցեն խնդրողք 'ի Դ. Թ. գլուխ գրոցս։

[4] Պղատ. յղ. օր. գիրք Ժ. հա. 2. էջ 597։

մենայն գեղեցկութիւնք՝ զորս մարթի է մարդկեղէն մարմնոյ յայլևայլ տիս կենաց իւրոց բերել յինքեան։ Լրթէ ոչ նիւթն ապստամբ անտեղիտալի էր աստուածեղէն ազդեցութեանն, երևելիս այս աշխարհ հանգոյն իմանալեոյն գտանէր ամենակատար։ Լուրաքանչիւր ուրուք գեղխուն ինչ արդեօք ազդէր 'ի մեզ յայնժամ, նոյն յամենեսին երևեալ 'ի համանոտիս։ այլ յոյժ առաւել ազդողագոյն և երկարատև ներգործէին 'ի մեզ տպաւորութիւնք 'ի տեսիլ պարառութեան անբաւ գեղեցկութեցն, որ միշտ յստակ և անխառն 'ի թերութեանց, և միշտ թուէին նոր՝ նոյնք միշտ գոլով։

Հոգիս մեր, յորում՝ աղօտ ինչ ճառագայթ աստուածութեանն նշողէ, հառաչէ արդ անդադար զհետ էական գեղջն', և զնշմարանս նորին հետազօտէ 'ի տիւրուս էից զմեզ, և յիւրմէ իսկ ցայտէ նշոյլս՝ որ փայլին 'ի հրաշակերտս արուեստից, որպէս զի հուր աստուածային 'ի ճարտարսն և 'ի քերթողս կարծել բորբոքեալ։

Լս իբրև կէսք զարմանային ընդ վարդապետութիւն նորա, և կէսք զդէմ ունէին, խօսել կալաւ Փիլոտաս և ասէ. Լբիստոտել որ ոչն երբէք 'ի ցնորս մտացն բերի, այնու իսկ թերևս՝ զի Պղատոն կարի իմն անճնատուր լինի 'ի նոյնս, ասէ ևեթ՝ զի գեղեցկութիւն ոչ այլ ինչ է,

1 Պղատ. յզ. խրախճ. հտ. 3. էջ 211։ Նոյն. 'ի Փեդր. էջ 251։

բայց կարգ 'ի մեծութեան[1]։ Լ. յիրաւի իսկ. զի չէր կարգ առանց համեմատութեան և պատշաձ'ից և յարմարութեան, և ոչ մեծութիւն առանց պարզութեան և միութեան և շքոյ։ Լ. ամենեքին միաբանեցին, զի սահմանս սոյս բովանդակէ զրեթէ զամենայն տիպս նկարագրի գեղեցկութեան՝ առ հասարակ և յիրս իւրաքանչիւր նկատեալ։

Ի Կնիդեայ չոգաք 'ի Մ'իղասա, որ է մի 'ի մեծամեծ քաղաքաց Կարիոյ։ Լ. նորա երկիր բարեբեր, և մեհեանք բազումք. յորոց ոմանք վաղեմիք յոյժ, շինեալք առ հասարակ 'ի գեղեցիկ կձ'է՝ որ 'ի մերձակայ քարհատաց հատանի[2]։ Մտրատոնիկոս յերեկոյէ յայտնեաց մեզ՝ զի կամէր 'ի լուր ժողովրդեան հարկանել քնար, և ոչ յետս եկաց 'ի խորհրդոյն՝ Թէպէտ և պանդոկապետն պատմեաց մեզ դէպս ինչ դեռ ևս 'ի կողմանսն յայնոսիկ դիպեալ 'ի Յասոս քաղաք։ Զի ամբոխին խուռն ընթացեալ 'ի հրաւէր քնարահարի ուրուք, իբրև սա հանդէս առնէր ձարտարագոյն հնարից արուեստին՝ փող ազդ արար զվաձառս ձկան. և ամենայն բազմութիւնն դիմեաց 'ի շուկայն, բաց 'ի միոջէ 'ի քաղաքայնոց՝ որ ծանրալուր էր լսելեաւք։ Լ. իբրև մատուցեալ առ նա երաժիշտն շնորհ ունէր զմտադիւրութե-

[1] Յուն. յղ. Նկարչաց. գիրք Դ. գլ. 7. հա. 2. էջ 49, Նոյն յղ. քերթ. գլ. 7. գիրք Ա. 4. էջ 23.

[2] Արիստոտ. յղ. յիշատ. հա. 2. էջ 658։

նէ նորա 'ի լուր, և գովէր զկիրթ ախորժակս նո-
ցա, ասէ ցնա այրն. Լաւ զինչ իցէ, մի թէ փոխս
հարաւ։ Լրաժիշան ասէ. Ա՛յո։ Լաւ միւսն 'ի
վերայ ածէ. Փութամ ասա, մնա խաղաղու-
թեամբ[1]։ Ի վաղիւ անդր Սորատոնիկոս 'ի
հրապարակամիջի անդ, ուր շուրջանակի մե-
հեանք էին, սակաւ սոմանս տեսանելով զիւրև ուն-
կընդիրս՝ սկսաւ գոչել 'ի ձայն բարձր. Մե՛հեանք
մեհեանք, լուարուք ինձ[2]։ Լաւ սուղ ինչ նախեր-
գանս արարեալ, 'ի բաց եկաց. վրէժս իմն այս-
պէս խնդրելով զարհամարհանացն, որով Յոյնք
կարիացիք արհամարհէին զաջողութիւնս մնաց։

Ա՛նասակարագոյն եհաս նմա վտանգ 'ի Կաւ-
նոս։ Լ՛ուերրի է երկիրն, այլ 'ի տօթոյ նահան-
գին և յառատութենէ մրգաց յաճախեն անդ
տենդք։ Մ՛ինչդեռ ասէրեալ կայաք ընդ բազմու-
թիւն ախտաժետացն՝ որ տժգոյն դիմօք և հի-
ւանդաքայլ ոտիւք գնային ընդ փողոցս, Սորա-
տոնիկեայ ուշ 'ի կուրծս անկեալ՝ զհոմերական
տողն 'ի մէջ երէր, յորում քերթողն տերևաց
զկեանս մարդկանն նմանեցուցանէ[3]. և աւուրք աշ-
նայնոյ էին յայնժամ, և ծառք դեղնատերև։ Լաւ
'ի դժկամակել բնակչաց քաղաքին ը կատականն
ասէ. Վա՛ւ լոցի ինձ վնասակար ասել զօդս եր-
կրիդ, ուր և մեռեալք ձեմեն խաղաղութեամբ[4]։

1 Սորաբ. գիրք ԺԴ. էջ 658։

2 Ա՛թէն. գիրք Ը. գլ. 9. էջ 348։

3 Հոմեր. Եղիակ. գիրք Զ. տող 146։

4 Սորաբ. գիրք ԺԴ. էջ 651։ Եւսեբիոս. 'ի Դիոնիս. առ աշխարհագիրս, հատ. Ա. էջ 101։

Հարկ եղև մեզ վաղվաղել մեկնել 'ի քաղաքէն. և իբրև մեղադրեաք Սարատոնիկեայ, նա ծի-ծաղելով պատմէր մեզ և զայլ հանգոյն սմին յանդգնութիւնս իւր՝ որովք 'ի Կոստանդ զայրա-յուցեալ էր զքաղաքացիս։ Յայնմ վայրի կին մի պառաւ պրուցեալ հայէր 'ի դէմս նորա։ Սարա-տոնիկոս ասէ. Օ՛ի հայիս։ Պառաւն ասէ. Հարմ զարմացեալ, զի եթէ օր մի քաղաքս այս չկարաց կրել զքեզ 'ի ծոցի իւրում, և իբր մայր քո զամիսս ինն կրեաց զքեզ յարգանդի'։

## ԳԼՈՒԽ ՀԳ.

Շարայարութիւն նաւարկութեանն, և զՀռոդոսէ, զԿրետեայ և զԿով կղզեաց, և վասն Խոզկրատայ բանք։

Ի ԿԱՒՆԵԱՑ մտաք 'ի նաւ. և 'ի մօտեալն մե-ռում 'ի Հռոդոս, Սարատոնիկոս երգեաց մեզ զգեղեցիկ տաղն՝ յորում Պինդարոս ընդ այլ գո-վութիւնսն կոչէ զկղզիս զայս գուստր Աստղկան և հարսն արեգական[2], ակնարկելով թերևս 'ի զրգանսն՝ զորս բաշխէ անդ աստուածուհին, և 'ի խնամսն՝ որովք այց առնէ նոցա հանապազ Աստղն. զի ասէն թէ չիք օր՝ յորում գէթ վայրիկ մի չծագիցէ անդ արեգակն[3]։ Հռոդա-

1 Ա՛թէն. գիրք Ը. գլ. 9. էջ 349։
2 Պինդ. ոդիսկ. 7. տող 25։
3 Պլին. գիրք Բ. գլ. 62. հա. 1. էջ 104։

ցիք Համարին զնա վերհագոյն 'ի դիս իւրեաց', և յամենայն զրան իւրեանց զպատկերն Նոյա տպաւորեն։

Հռոդոս յառաջ ժամանակաւ կոչէր Ռիփուսա[2], այս ինքն է Ոճակղզի։ Այսպէս կոչեցան և այլք բազումք 'ի կղզեաց, յորս էին օձք բազումք 'ի գնալ մարդկան անդր 'ի բնակութիւն։ Այս առ հասարակ իսկ գիտելի է, զի վայրքն բազումք 'ի գտանելն՝ կոչեցան յանուն կենդանեաց, ծառոց, բուսոց և ծաղկանց յաՀանելոց անդ։ Զի ասէին. Զնամք յերկիրն լարամարգեաց կամ նոՀեաց կամ սարդենեաց, այլոքն հանդերձ[3]։

Յաւուրս Հռոմերոսի զկղզիս զայս բաժանէին յիւրեանս Յաղիս, Կամիր և Լինդոս քաղաքք[4], որ կան անդ ցայժմ՝ կապտեալք 'ի նախնի պայծառութենէն։ Յառաջ քան զաւուրս զայսոսիկ բազմագոյնք 'ի բնակչաց նոցա խորհուրդ կալան 'ի միումուրեք վայրի գալ բնակել՝ համախմբելով զզօրութիւնս իւրեանց[5], և հիմնեցին զՀռոդոս քաղաք* ըստ օրինակին՝ զոր կազմեաց Ճարտարապետ ոմն անուն Թենայի[6]։ Այնդր փոխեցին զանդրիս՝

1 Դիոդ. գիրք Ե. էջ 327։
2 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 653։ Սանփ. 'ի բառն Τοῖδ.
3 Եւստաթ. 'ի Դիոնիս. տող 453. էջ 84։ Սփանհ. յոգրամ. հտ. 1. էջ 320։
4 Հոմեր. Եղեակ. գիրք Բ. տող 656։ Պլինդ. ողնմպ. 7. տող 135։
5 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 655։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 196։ Արիստիդ. Ճառ. յՊանաթն. հտ. 2. էջ 398։
* Յառաջնումն ամի ինն ընդ Ներորդի Երրորդի ողնմպիադին 408 կամ 407 ամաց Ն. Ք։
6 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 654։

որովք զարդարեալ պՀնէին նախնիք բնակու-
թիւնք իւրեանց[1], և յորոց կէաք էին արդարք
հսկայաձևք[2]*։ Ի ձև կրկիսայն շուրջ տեսանե-
լեաց շինեցաւ քաղաքն նորակերտ[3] 'ի զառ 'ի վայ-
բին՝ որ մինչև 'ի ծովեղը իջեալ հասանէ։ Լա-
ւահանգիստք նորա, զինարանք, պարիսպք բար-
ձրաբերձք՝ խիտ առ խիտ աշտարակօք ամրա-
ցեալք, տունք քարակերտք և ոչ աղիւսեայք, մե-
հեանք, պողոտայք և տեսարանք, ամենեքին
առհասարակ զդրոշմ մեծութեան և գեղեցկու-
թեան տպաւորեալ բերեն յիւրեանս[4]։ և ամե-
նայն ինչ անդ 'ի դէմս ածէ զախորժակս ազգին՝
որ ցանկացողն արուեստից, և փարթամ Հոխու-
թեամբքն կարող 'ի գործել զմեծամեծս։

( )դք երկրին յորում բնակէ, ջինջ են և
պարզ[5]։ և են անդ անդաստանք բերրիք, խաղող
և գինի աղնիւ, ծառք չքնաղագեղք, մեղր պա-
տուական, շտեմարանք աղի և քարահատք կՀի։

1 Պլինդ. գրքք Լ. գլ. 7. տող 95։
2 Պլին. գրքք ԼԻ. գլ. 7. հա. 7. էջ 647։
* Ընդ հսկայաձև անդրիս չյիշատակեցի զԿողոսն հռչակաւոր, որոյ եօթանասուն կանգուն էր բարձրութիւն ըստ Պլինեայ. զի սա կանգնեցեալ վաթսուն և չորիւք ամաքք յետոյ քան զուղղորութիւն Ալեքսանդրեայ 'ի Հռոդոս։ (Մեծարս. 'ի Հռոդ. գրքք Ա. գլ. 15։) Ալլ յաւելումն զայն ասասանօր, առ 'ի ցուցանել որպիսի ինչ սխորժակք մեծագործութեան էին հռոդացւոց 'ի ժամանակին յայնմիկ։
3 Դիոդ. գրքք Ի. էջ 811։
4 Սարաք. գրքք ԺՋ. էջ 652։ Դիոդ. գրքք ԺԹ. էջ 689։ Պաւսան. գրքք Դ. գլ. 31. էջ 356։ Դիոն. ոսկեբ. Հատ. 31. էջ 354։
5 Սուետ. 'ի Տիբեր. գլ. 11։

և ծուխն որ վնասաւ, բերէ ձուկն առատ[1]։ Բ. յս ամենայն և որ սոցին սակի բարեմանութիւնք, ետուն քերթողաց ասել՝ թէ անձրև ոսկի տեղան անդ երկինք[2]։

Հարստութիւն անդ օգնական եղև բնութեան։ Այս քան զսկիզբն ողիմպիադից հռոդացիք պարապեցին 'ի նաւաստականութիւն[3]։ Կղզի նոցա 'ի բարեբաստ տեղւոջ բնակեալ[4], հմանդրուան է նաւաց՝ որ Այգիպտոսէ Այլեադա, և Այլեադայ Այգիպտոս երթևեկեն[5]։ Ցաբածեցան տակաւ 'ի բազմագոյնս 'ի տեղեաց, յորս ձգէին զնոսա վաճառականութիւն։ Ինդ բազմագունդ գաղթականս նոցա 'ի դէպ է համարել զՊարթենոպէ*, զՍաղասպիա Այտալիա, զԼկրագանդ և զՊեղա 'ի Սիկիլիա, զՀռոդոս** 'ի ծովեղերս Այբերիոյ առ ստորոտովք պիրենեան լերանց, այլովքն հանդերձ[6]։

Օգարգացման գիտութեանց առ նոսա այլ և այլ եղեն դարք։ Ի վաղ ժամանակս ուսան յօտարականաց ոմանց, որ տեղբինացիք կոչին, զթէբի ինչ արդեօք արուեստ գործելոյ զհրահալ.

1 Մեհրս. 'ի Հռոդ. գիրք Բ. գլ. 1։
2 Հոմեր. Եղիակ. գիրք Բ. էջ 670։ Պլինդ. ողիմպ. 7. տող 89։ Սարաբ. գիրք ԺԴ. էջ 654։
3 Սարաբ. անդ։
4 Պողիբ. գիրք Ե. էջ 430։ Ուլ. Գելլ. գիրք Ի. գլ. 3։
5 Դիոդ. գիրք Ե. էջ 329։ Դեմոսթ. ընդդէմ. Դիոնիս. էջ 1121։
* Որ է Նէապոլիս։
** Որ է Հռոդա 'ի Սպանիա։
6 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 654։ Մեհրս. 'ի Հռոդ. գիրք Ա. գլ. 8։

այլ կասկած մոգութեան եղև զբարերարացն[1]։ Այս ալք զիմնագոյնք ուսուցին նոցա ինչ ինչ զընթացից աստեղաց և զարուեստ գուշակութե. և սոքա արևորդիք կոչեցան[2]։ Յետ ամենեցուն ալք հանձարեղք արկին զնոսա ընդ օրինօք, ո. ըոց իմաստութիւն վկայեալ է յամենեցունց[3]։ Ալք 'ի նաւաստականութիւն պատկանին օրէնք՝ կացին զնոսա մինչև 'ի սպառ բարգաւաճն, և ամենայն ազգաց վաճառականաց լինին յօրինակ[4]։ Հոգացիք նաւարկեն անկասկած ընդ ծովս ամենայն և ընդ ամենայն ծովեզերս. զիք ինչ համեմատ արագութեան նաւաց նոցա, հրահանգացն՝ որ 'ի նոսա պահին, և Ճարտարութեան զօրավարացն և նաւապետաց[5]։ Այս մասն առաջնորդութեան յանձն է 'ի ժիրաժիր իմաստ խիստ դատաւորաց, որք 'ի մահ պատուհասեն զմտեալսն անհրաման 'ի տեղիս ինչ ուրեք զինարանին[6]։

Այսոքանօր ինչ ինչ 'ի քաղաքական և 'ի պատժական օրինացն նոցա առասիկ զոգեմ։ Այս 'ի չանարգելոյ որդւոց զյիշատակ ծնողացն, հրամայեն օրէնք՝ հատուցանել նոցա զպարտս հարցն, թէպէտ և հրաժարիցեն 'ի հայրենի ժա-

1 Սարաբ. գիրք ԺԳ. էջ 654։ Դիոդ. գիրք Ե. էջ 326։
2 Սարաբ. անդ։
3 Նոյն անդ, էջ 635։
4 Արիստոտ. 'ի Հոդ. գիրք Ա. գլ. 21։
5 Դիոդ. 'ի Ծաղկաբաղ Վաղեսի, էջ 402։ Լիս. գիրք Լէ. գլ. 30։
6 Սարաբ. գիրք ԺԳ. էջ 653։

ռանգութենէ՝։ Յաթէնս 'ի դատապարտել ու-
բուք 'ի մահ, նախ անուն նորա ջնջի 'ի դպրութէ
քաղաքացոց. որպէս զի մի ոք իբրև աթենացի
գոցի մահապարտ, այլ իբրև օտար ոք[2]։ Ի
նոյն միտս և հռոդացւոց հրամայեն օրէնք,
զմնրդասպանս արտաքոյ քաղաքին դատել. և առ
'ի սարտուցանել զնոսա և զս քան զևս յանօրէնու-
թենէն, դահճաց իսկ արգելուն չմտանել 'ի քա-
ղաքն։

Լչխանութիւն անդ 'ի սկզբանէ հետէ էր 'ի
ձեռս ժողովրդեան, այլ յառաջ քան զամն ինչ
բարձաւ 'ի նմանէ համախոհութեամբն կիսոց 'ի
քաղաքացոցն՝ որոց ձեռնտու էր Մաւսոլ արքայ
Կարիոյ[3]. և 'ի զուր եղև նմա կարդալ յօգնու-
թիւն զաթենացիս[4]։ Զոմանք հարստահարեալք
յառաջագոյն 'ի ռամկէն, առաւելագոյն խնամով
յանձանձեն զնա արդ՝ որպէս և ոչ ինքն անձամբ
անձին խնամ ունէր։ Մեղ ժամանակս ժամանակս
հրամայեն բաշխս ցորենոյ, և պաշտօնեայք 'ի
ձեռանէ նոցա կան՝ հայթայթել զպէտս կա-
ղաքացոյ, մանաւանդ որոց 'ի նաւատորմն և 'ի զի-
նարանս վաստակեն[5]։

Լինամք այսպիսիք հաստատուն կալցին աներ-

1 Սկբստ. Եմպեդոկլ. պիւ-
ռոնական կարգադր. գիրք Ա.
գլ. 14. էջ 38։
2 Դիոն. ոսկեբ. Ճառ. 31.
էջ 348։
3 Արիստոտ. յղ. հաս.
գիրք Ե. գլ. 3. հատ. 2. էջ
388։ Թէոպոմպ. առ Աթեն.
գիրք ժ. գլ. 12. էջ 444։
4 Դեմոսթ. յղ. ազատ.
հռոդ. էջ 143։
5 Սարաբ. գիրք. ԺԴ. էջ
652։

բայապէս զսակաւապետութիւն առ նոսա մինչև 'ի սպառ*. և ցոյցափ սահմանադրութիւնս այս անեղծ կայցէ առ նոսա, խնդրեսցի նիզակակցութիւն ժողովրդեանն՝ որոյ զօրավարքն լիցին ծայրացեալք իմաստութեամբ, և զօրք անվեհերք քաջութեամբ[1]։ Այլ նա ոչ յաձախեսցէ 'ի նիզակակցութիւն[2], այլ որքան է հնար՝ կացցէ սպառազէն 'ի վնին, ոչ ունելք լեալ ձեռնտու։ Լիցին նմա տորմիղքն նաւաց կազմք միշտ 'ի պաշտպանութիւն վաձառականութեան, որպէս զի վաձառականութեամբն գանձեսցէ մեծութիւնս, և մեծութեամբքն կալցի նաւատորմիղս կազմ։

Որոնք հռոդացւոց ազգէն 'ի նոսա սաստիկ նախանձ ազատութեան, և արձանք վսեմք տպաւորեն 'ի սիրտս նոցա իմաստս մեծախոհս։ Յարկածս ահաւորագոյնս ոչ անկանին 'ի յուսոյ, և ոչ վերջանան 'ի նախնի պարզութենէ հարց իւրեանց 'ի բազմագնած ձոխութիւն**։ Այլք նոցա ընկալան երբէք երբէք հարուածս մեծամեծս, այլ այնպէս պատկառ կան կարգաց ինչ և պատշաձից, զի հարուածոցն այնոցիկ հարևանցի ևեթ եղեն վնասակարութիւնք։ Պարկեշտք 'ի զգեստս և հանդարտք 'ի գնացս երևին 'ի քաղաքամիջի. ոչ

* Սակաւապետութիւն հաստատեալ 'ի Հռոդոս յաւուրս Արիստոտելի, և մինչև 'ի ժամանակս Սուրաբոնի կանգուն կայր։

1 Պողիբ. գիրք Ե. էջ 428։ Նոյն, ծաղկաք. հրեշտ. էջ 924։ Դիոդ. գիրք Ի. էջ 820։

2 Դիոդ. գիրք Ի. էջ 809։

** Յեսոկրատ մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԴ։

պրշաւեալս տեսցէ զք զնոսա 'ի փողոցս, և ոչ ընդհարեալս ընդ միմեանս։ Լռութեամբ կան 'ի զնին 'ի տեսարանս, և 'ի կոչունս՝ ուր բարեկամութիւն և զուարթութիւն յանձախեն զհանարձակութիւն, նոքա յանձանց իսկ պատկառեն[1]։

Ը ըստ ցաք մեք ընդ արևելեան կողմն կղզւոյն, ուր հնակայիցն ասեն երբեմն բնակեալ[2]. տեսաք բրեալ ոսկերոտի անհեթեթ[3], որպիսի և այլ ուրեք ցուցին մեզ 'ի Յունաստան։ Այլ թէ ի ցեն լեալ մարդիկ այնպիսի մեծամեծք, անգիտանամ։

Ի ինդոս աւան է մեհեան Աթենասայ, երևելի ոչ հնութեն միայն և առ 'ի թագաւորաց ընծայեալ նուիրեալ, այլ և երկոքումբք իրօք՝ որ ձգեցին զմեզ 'ի զնին։ Օ ի տեսաք մեք անդ արձանագրեալ ոսկեգիր զՊինդարեայ տաղն, զոր երգեաց մեզ Սոտատոնիկոս[4]։ Ոչ ինչ հեռի 'ի տեղւոջէն տեսաք զկենդանագիր Հերակղեայ նկարագրեալ 'ի Պարրասայ, որ 'ի ներքնագիր պատկերին վկայէ՝ տեսեալ բազում անգամ զաստուածն յանուրջս, և յար և նման ըստ տեսլականն նկարագրեալ[5]։ Այս և այլ ևս նկարք նորին Ձարտարի արկանէին նախանձ 'ի պատանեակ մի կանեցի, զոր ծանեաք իսկ. և էր անուն պատանւոյն Պրո-

1 Դիոն. ոսկեբ. Ճառ 31. էջ 359։
2 Դիոդ. գիրք Ե. էջ 327։
3 Փղէ գ. յոբ զարման. իրաց. գլ. 16։
4 Գորգ. առ պարապ. Պինդ. ոդիմն. 7. էջ 76։
5 Պլին. գիրք Լ.Ե. գլ. 10 էջ 694։ Աթեն. գիրք ԺԲ գլ. 11. էջ 543։

տոգենէս։ Ել անյիշատակ առնեմ զսա, զի 'ի նախակրթական նկարուցն զուշակէին՝ հաւատար Պարրասեայ կամ 'ի վերոյ իսկ քան զնա յաւուր միում անցանել կալ նմա։

Այսպէս քան զամենայն արս գիտնաւորս որ կացին 'ի Հռոդոս՝ դասեմ զԱղէքսանդրոս, զմի յիմաստնոցն Լեռադայ. և ասա զՏիմոկրէոն և զԼնաքսանդրիդէս, որ երկոքին իսկ հռչակաւորք են կատակերգութեամբքն։ Տիմոկրէոն էր ըմբիշ և քերթող, որ զորովայն իւր բազմակերութեամբ և զայլս դառն ծանականօք երգիծուցանէր։ Ի կատակերգութիւնս իւր և 'ի տաղս կեղեքեաց անինայ զԱմէմիստոկղ և զԱիմոնիդէս. և 'ի մեռանել նորա, Աիմոնիդէս արար նմա արձանագիր 'ի վերայ գերեզմանին զայս. Կեցի յուտել և յըմպել և 'ի չարախօսել զայլոց[1]։

Լնաքսանդրիդէս հրաւիրեալ յարքունիս Թագաւորին մակեդոնացւոց, քերթութեամբն իւրով յաւել զպայծառութիւն տօնիցն՝ որ անդ յօրինեին։ Այս յանձն եղև յաթենացւոց յօրինել զերկգոնեանին տաղ, զոր պարտ էր նոցա երգել 'ի պաշտաման ուրեք դից։ Իսկ նա պարագլուխ կալով երգեցողացն՝ հեծեալ 'ի ձի, գիսակք վարսիցն անկեալ զուսովքն, և զգեցեալ ծիրանիս 'ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ, երգէր իւրովի զառ 'ի յինքեանէ յօրինեալ զտաղն[2], համարելով

[1] Աթեն. գիրք ժ. գլ. 4. էջ 415։ Եպիան. զան. պատմ. գիրք Ա. գլ. 27։

[2] Սուիդ. 'ի բառն Ա'նաքսանդր.

[3] Աթեն. գիրք Թ. գլ. 4. էջ 374։

զարմանումն ածել ամբոխին զայն ամենայն սպասս զարգուցն յաւելեալ 'ի չքնաղկերպարանսն։ Ա. յլ մնափառութեամբն գժպտի էր ամենեցուն. կաստակերգութիւնս վաթսունևհինգ յօրինեալ էր նորա, և տասնեկի կալաւ գյաղթութիւն. այլ ամենայն մրցանակք ոչ հաճոյ թուէին նմա, յորժամ հայէր 'ի պարտութիւնս իւր. և փոխանակ կատարելոյ զթերութիւնս քերթութեանն՝ յորս չէրն յաջողեալ, յղէր զնոսա 'ի սրամիտն իւրումառ գեղարարս՝ 'ի կիր արկանել զայնոսիկ 'ի ծրար գեղոց[1]։

Ա. յլ մի ոք 'ի սոցանէ զբարս աղգին գուշակեսցէ. զի Տիմոկրէոն և Ինաքսանդրիդէս կեցին հեռի 'ի հայրենեացն, և զիւրեանցն ևեթ ինդրեցին զփառս։

Արետէ* կղզի ընդարձակագոյն է յոյժ քան զՀռոդոս. երկաքանչիւր զարմանալի թուեցան ինձ։ Հռոդոս գերազանցեալ քան զբարութիւնսն զորս ժառանգէ, իսկ Արետէ ստորև մնացեալ։ Յաջողութեամբ մեծաւ անտի այսր նաւարկեալ, իջաք 'ի նաւահանգիստն Կնոսեայ՝ հեռի 'ի քաղաքէն ասպարիզաբ քանևհինգ[2]։

Յաւուրս Մինովայ Կնոսոս մայրաքաղաք էր կղզւոյն Արետեայ[3]։ Յանկալի էր բնակչաց ժառանգել զփառսն անկորուստս, իւրեանց զայն անկ

1 Ա.թէն. գիրք Թ. գլ. 4. էջ 374։
2 Սարաբ. գիրք ժ. էջ 476։
3 Սարաբ. անդ։ Հոմեր. Ոդիս. գիրք. ժԹ. տող 178։
* Որ արդ կոչի Քանտիա։

համարեալ՝ ոչ վասն այժմու ինչ զօրութեանն, այլ վասն պարծանաց նախնեացն', և վասն՝ որ մեծ ևս էր յաչս նոցա՝ շիրմին Աբրահամայ, հուչակաւոր այրին՝ ուր զնա ասէն թաղեալ։ Աստորոտով Ադայ լերին, ոչ ինչ հեռի 'ի քաղաքէն, կայ փորուած այրին. և ստիպեցին զմեզ գնալ տեսանել զայն, և Գնոսացին ևս՝ առ որում վանս կալեալ էաք՝ կամեցաւ գալ ընդ մեզ։

Հարկ էր մեզ անցանել ընդ հրապարակ քաղաքին, և լի էր այն ամբոխիւ մարդկան։ Եւ ասացաւ մեզ՝ զի հանդերձեալ էր մի յեկաց ներբող ինչ զկրետացւոց առնել. և ոչ ինչ զարմանք թուեցան մեզ, զի տեսեալ էր մեր բազում ուրեք Յաչլադա Ճարտարախօսաց և իմաստակաց յօրինել կամ արտասանել 'ի լուր ամենեցուն զգովասանութիւն Ժողովրդեանկամ զմիոյ ուրուք 'ի դիւցազանց կամ յաւագ արանց ականաւորաց[2]։ Եւ յայժ ընդ այն հիացեալ զարմացաք, յորժամ տեսաք զեկն 'ի բեմի, զի էր ինքն Պորատոնիկոս։ Բանզի յերեկոյէ միաբանեալ էր զանխուլ 'ի մէջ ընդ գլխաւորս աւագանւոյն, որոց ծանօթ իսկ էր յառաջնմէ ուղևորութենէն։

Յետ յանդիման առնելոյ զվայրենութիւն և զագիտութիւն նախնի բնակչաց կղզւոյն[3], 'ի

[1] Դիոդ. 'ի ծաղկաբ. Վաղեսի. էջ 353։

[2] Խոսկր. համաթ. հտ. 1. էջ 120։ Պլուտ. առակ. լան. հտ. 2. էջ 192։

[3] Երոդոտ. գիրք Ա. գլ. 173։ Դիոդ. գիրք Ե. էջ 334։

վերայ էած։ Ի ձէնջ ամենայն սրուեստից կա-
ցին հնարագէտք, և դուք զերկիրս զայս Հոխա-
ցուցէք։ Լցուսնաս եղ 'ի ձեզ գնահատանձ արդարու-
թեան և զանկեղծութիւն սրտի, որով Հանա-
չիցք[1]։ Լցատե ուսոյց ձեզ կառուցանել տունս, և
Պիսիդոն նաւս։ Լեմեսարեայ շնորհք են ձեզ
վարեցան ցորենոյ, Լխոնիսեայ՝ այգեգործու-
թիւն, և Լթենասայ՝ մշակութիւն ձիթենւոյ[2],
Լբանազդ զհսկայսն կորոյս որ խորհէին ծա-
ռայեցուցանել զձեզ[3]։ Հերակղէս զերծոյց զձեզ
յօձիցն և 'ի գայլոց, և յայլոցն ևս ազգի ազգի
վնասակար գազանաց[4]։ Լարբերարք այսպիսիք
ազգի մարդկան, ձերով իմաստիքդ դասեալք 'ի
կարգս դից, 'ի գեղազան երկրիս ընկալան զայս.
և ոչ այլ ինչ հոգ է արդ նոցա՝ բայց բարեբաս-
տութիւն սորա։

Լյօսեցաւ ապա զպատերազմնայն Լինովայ, և
զյաղթութեանց նորա ընդդէմ աթենացւոց, և
զայլանդակ տուիանացն Պասիփայեայ, և զայլան-
դակագոյն առ 'ի նմանէ ծնեալ ցլագլուխ մար-
դոյն՝ որ Լինոտաւրոն կոչեցաւ։ Լյ զամե-
նայն աւանդութիւնս նոցա հակառակս միմեանց
և զկարի իսկ անտեղի առասպելս հաւաքեալ
Լտրատոնիկեայ, ոչ Հնմարտուիս կարևորս և ան-

1 Դիոդ· գիրք Ե· էջ 334։
2 Նոյն անդ, էջ 336։
3 Նոյն անդ, էջ 338։
4 Նոյն, գիրք Դ· էջ 225։
Պլուտ· յոլ· օգտակ· թշնամ·
հա· 2· էջ 86· Եղիան· կեն-
դանաբ· գիրք Գ· գլ· 322։

ժխտելիս 'ի ներքս ած։ Լաւ այնպէս ծաղրալից ձառքն էին, զի յահ և յերկիւղ ըմբռնեալ կայաք վասն վտանգին՝ որ 'ի վերայ կայր նմա. այլ ամ բոին արբեցեալ կուտական գովութեամբքն, չդադարէր յընդմիջելոյ զանս նորա ծափաձայն ցնծութեամբ։

Ի լուծանել ժողովոյն, դարձաւ նա առ մեզ. և իբրև հարցաք, թէ 'ի զլուսնուլն քո 'ի ծաղր ժողովրդեանն՝ ՀերկնՀիր 'ի ցասուցանելոյ զնա անպատկանաւորն գովութեամբքն, ասէ. Մինչև ոչ, քանզի հեզութիւն ազգաց՝ հանգոյն իւրաքանչիւր ուրուք հեզութեանն. է առաքինութիւն այնպիսի բարեհամբոյր, զի օրէն է անվնասանգ խաղ առնել զնովաւ։

Ո՛անապարհն որ երթայ յայրն Լրամանազդայ, զուարճալի է յոյժ։ Լրկուստեք ծառք ամ բարտաւանք, և առ նոքօք արօտք հրաշագեղք, և անտառ նոՀեաց զարմանալեաց բարձրութեամբ և գեղով՝ որ էր նուիրեալ աստուածոյն, և մեհեան նմին առընթեր[1]։ Ի մուտս այրին նուէրքք բազումք կախեալ կան։ Յոյցին մեզ անդ որպէս զչքնաղ իմն զմի 'ի սեաւ կաղամախեացն, որ ամի ամի բերէն պտուղ. և ասէին՝ թէ հանգոյն նոցին և մերձ առ աղբիւրն Սաւրոս առՀեն կաղամախք[2]։ Լրկայնութիւն այրին է իբր երկերիւր ոտնաչափ, և լայնութիւն քսան։ Ի խորս այրին

[1] Պղատ. յղ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 625։

[2] Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 5. էջ 124։

տեսաք աթոռ մի, զոր կոչեն գահոյս Լ՚բասանզ-դայ. և յորմէ անդ էր արձանագիր վաղեմի տառիւք գրուեալ, Լ՚սդ է ֆէրէզման Օ՚ասնէ[1]։

Լ՚ւ քանզի համբաւէր յայտնել աստուածոյն յայրի անդ սրբու

բուց, և տոյժք ծանուանք 'ի վերայ նորա եղան'։

Լ՝ծին զմեզ 'ի բլուր մի ընդ ափափայս մինչև 'ի բերան այրի միոջ, յորում՝ 'ի քայլատիսիս իւրաքանչիւր ընդ առաջ լինէին մեզ խոռոչք և պտոյտք հետոց անհամար։ Լ՝ընդ է տեսանել զվերտանգն ահագին, զոր նախաշաւիղն զհետ ձգէ վերիպակ. զի վայրիկ մի սխալել՝ անդգոյշ ուղևորին 'ի վերայ ածէ մահ։ Լ՝ռաջնորդք մեր, բազմաժամանակեայ փորձովն հմուտք ամենայն ծերպից աղջամղջին շաղացն, ջահ 'ի ձեռին գնային։ Ղոգաք զհետ նոցա ընդ անցս իմն ոչ յոյժ անձուկ՝ ընդ որ արանց երկուց կամ երից մարթէր գնալ առ երի. և էր ուրեք ուրեք բարձրութիւն նորա իբր եօթն կամ ութ ոտնաչափ, և այլուր երկու կամ երեք։ Լ՝ընդ ասպարէզս իբր հազար և երկերիւր քայլից գնացեալ կամ սողեալ՝ հասաք 'ի սրահս երկու բոլորաձևս, որոյ քսանևչորք ոտնաչափք էին տրամագիծք. և չէին նոցա այլ եթէ՝ բայց ընդ որ մտաքն, երկաքանչիւր հատեալք 'ի քարաժայռին, որպէս և մասն ինչ ուղևոյն՝ ընդ որ անցաքն։

Ուղեցոյցք մեր վիճեալ սկսէին՝ զի այրն այն ընդարձակ նոյն ինքն էր հռչակաւոր բաւիղն, ուր Թեսէոս սպան զմարդացուն՝ զոր Մինոսայ անդ արգելեալ էր։ Լ՝ռ յաւելուին, զի բաւիղն այն

1 Եղեան. զան. պատմ. դիւք ժԲ. գլ. 12։

2 Թուինքիսիս, ուղևոր. հատ. 1. էջ 65։

'ի սկզբանէ առ 'ի բանտ սահմանեալ էր[1]*։

Ի գաւառս լեռնայինս առ 'ի չգոյէ տեղա-
գիծ պատկերաց, հարկ լինէր մեզ ստէպ ելանել
'ի բարձունս՝ առ 'ի դիտել զդիրս վայրաց։ Որպէս
լերինն կատար դիպող յոյժ էր առ այս. և ա-
ռեալ ընդ մեզ պաշար աւուրց ինչ պարէնս, զկէս
ձմանապարհին հեծեալ և զկէս հետեւակ ու-
զեւորեցաք[2]։ Յետաք 'ի վերելս անդ զքարան-
ձաւսն, յորս նախնի կրետացիք բնակէին[3].
անցաք մեք ընդ անտառս կաղնեաց եղեւնա-
փայտից և մայրեաց, և ապշեալ կայաք ընդ նո-
ձեացն ստուարութիւն և ընդ բարձրութիւն
խմորկեացն և չմենեաց[4]։ Որ ստ յառաջադէմն
գնալ դժուարանայր ուղին և երկիրն ամայանայր.
դէպ լինէր մեզ գնալ ուրեք ուրեք զատիամբք
վախից գահավիժութեանց, և այն ևս ծանրա-
տաղտուկ՝ հարկ էր մեզ լսել զասպնջականին
մերոյ զանհամ զրոյցս։ Զի համեմատէր նա
զգահաւանդս լերինն մերթ այլևայլ տիոց, և
մերթ վտանգաց աւագութեան և յեղյեղուկ
բախտին։ Լերինս մեծի, ասէ, որոյ նիստ շրջա-
բերի 'ի միջոց կղզւոյս ասպարէզս վեցհարիւր[5],
և յորում տեսաք զանտառսն վսեմս, զհովիտս և

1 Փիլոք. առ Պլուտ. 'ի Թես. հտ. 1. էջ 62։
* Յետոյս մասանէիս 'ի տե-
ղեկութիւնն. Թիւ ԺԵ։
2 Թուրնէֆոր ուղեւոր. հտ. 1. էջ 52։
3 Դիոդ. գիրք. Ե. էջ 334։
4 Թէոփր. բուսաբան. գիրք Գ. գլ. 3. էջ 121։ Մեօրա. 'ի Կրետ. գլ. 9։
5 Սարաբ. գիրք Ի. էջ 475։

զմարգս զուարճալիս[1], զերկ վայրի և զզգոն կենդանեակս[2], և զաղբիւրս յորդառատս՝ որ գնան 'ի հեռաստան ոռոգանել զդաշտս մեր, կարծէիք բնաւ աւարտել սմա 'ի սեպս ժայռից հողմակոծեալս անդադար, ձիւնախառաղս և ծածկեալս սառամանեօք[3]։

Օ կրետէ ընդ մեծամեծս 'ի ծանօթ կղզեաց դասելի է[4]։ Լրկայնութիւն նորա ձգի յարևելից յարևմուտս, որպէս ասեն, ասպարէզս երկու հազար և հինգ հարիւր[5]. և լայնութիւն նորա 'ի միջավայրսն չորս հարիւր ասպարէզ[6], իսկ յայլ տեղիս անձկագոյն յոյժ։ Ի հարաւոյ զեզերս նորա լիբիական ծովուն բախեն ալիք, և 'ի հիւսիսոյ եգիպտական Թանայ գնա ծով. յարևելից մերձ կայ նմա Լսիա, և յարևմտից Լբրոպէ[7]։ Լերինք խիտ առ խիտ ամբառնան 'ի նմա, յորոց կէաք Թէպէտ և խոնարհագոյնք քան զԼդաս, այլ բարձրաբերձք են յոյժ. և յարևմտից ձգին գօտիք Ասիտակալերանցն ընդ ասպարէզս երեքարիւր[8]։

Ի ծովեզերս և 'ի միջերկրայս ծածկին արօտք

1 Թէոփր. յՂ. հողմ. էջ 405։ Դիոդ. գիրք Ե. էջ 338։
2 Մէօրս. 'ի Կրետ. գլ. 8. էջ 100։
3 Դիոդ. գիրք Ե. էջ 338։ Թուրնէֆոր ուղևոր. հտ. 1. էջ 53։
4 Սկիւլաքս առ աշխարհագիրս. հտ. 1. էջ 56։ Եւսեբիոս. 'ի Դիոնիս. տող 568։
5 Սկիւլաքս, անդ։ Դիկէարքիս առ աշխարհագիրս. հտ. 2. էջ 24։
6 Պլին. գիրք Դ. գլ. 12. հտ. 1. էջ 209։
7 Սորաբ. գիրք Ի. էջ 474։
8 Նոյն անդ. էջ 415։

պարարտք 'ի յաձախագունդ անդէոց ձարակաւորաց. և դաշտք քաջ միակեալք մատուցանեն ըստ յեղանակաց հունձս առատ ցորենոյ, և կութս գինւոյ, ձէթ և մեղր և զամենայն ազգի ազգի պտուղս'։ Բանջարս ախտաբոյժս բազում յոյժ բերէ կղզին. ծառք անդ յաղթք և հաստատմատք են, և երկիրն սիրելի յոյժ նոձեաց. զի ասեն աձել նոցա 'ի մէջ ձեանցն միտնջենաւորաց որ պսակեն զերինս, յորմէ Այպիտակաղերինքն առին անուանակոչել[2]։

Արեւտ բազմամարդ էր յոյժ յաւուրս Հոմերոսի, և էին 'ի նմա քաղաքք ութսուն կամ հարիւր[3]. իսկ յետ այնորիկ յաւելան թէ նուազեաց թիւ քաղաքացն, չունիմ ասել։ 'Լ,ախնի բնակչաց կղզւոյն 'ի կողս լերանցն ասեն կառուցեալ զքաղաքս, և ապա 'ի սաստկանալ և յերկայնել ձմերայնոյ իջեալ 'ի դաշտս[4]։ Բնչացի իսկ 'ի պատմել զուղևորութիւնն իմ ընդ Ալեսանդրիա, զի տրտնջէին լարիսացիք զյաձախելոյ ցրտոյ երկրին տակաւ*։

Բանզի լեռնային է երկիրն և առապար, վարժք և ս 'ի հետի ընթացս են բնակիչքն քան 'ի

1 Սորաբ. գիրք ժ. էջ 415։ Հոմեր. Ոդիս. գիրք ժԹ. տող 173։ Դիոդ. գիրք Ե. էջ 343։

2 Թէոփր. բուսաբան. գիրք Գ. գլ. 2. էջ 118։ Պլին. գիրք ԺԶ. գլ. 33. հա. 2. էջ 25։

3 Հոմեր. անդ, տող 174։ Նոյն, Եղիակ. գիրք Բ. տող. 3649։

4 Թէոփր. յղ. հոլմ. էջ 405։

* 'Ի Լէ գլուխ գրոցս։

ՀԻարշաւ. և վասն անդստին 'ի մանկութենէ հանապազօր հրահանգացն յաղեղնաւորութիւն և 'ի պարսաքարել, նշաւակք էն 'ի նեռաձգութիւն և աջողակագոյնք 'ի քարընկէց քան զամենայն ազգս Յունաց[1]։

Դ. Ժուարամտոյց է կղզին[2], բազումք 'ի նաւահանգստիցն նորա անպատսպարք 'ի հողմակոծութենէ[3]. այլ զի 'ի հնչել աջողակ հողմոյ՝ դիւրին էն ելք անտի, մարթ է կազմել անդ չուտարադէմ ընդ ամենայն կողմանս երկրի[4]։ Դ. Լաւք մեկնեալք 'ի հրուանդանէն, որ մերձաւորագոյն է յարևելս, յերիս կամ 'ի չորս աւուրս հասանեն յԱ. գիպտոս[5], և 'ի տասն աւուրս 'ի Ա. Էովտեան ծովակն 'ի վերքան զեւբսիկեանն Պոնտոս[6]։

Ա. այր բնակութեան կրետացւոց 'ի մէջ ծանօթ ազգաց, բազմամարդութիւն յոյժ և արգաւանդութիւն երկրին նոցա յայտ իմն առնեն՝ ընութեանն սահմանեալ զնոսա առ 'ի բոլորումն իշխել Ա. ղլադայ[7]։ Դ. Լախ քան զտրոմական պատերազմն նուաճեալ էր նոցա զկէս 'ի կղզեաց եգեան ծովուն[8], և կալեալ սահմանս ինչ 'ի ծով-

1 Մեօրա. 'ի Կրետ. գիրք Դ. գլ. 11. էջ 177։
2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 10. հա. 2. էջ 333։
3 Հոմէր. Ոդիս. գիրք ԺԹ. տող 189։ Եւսեբիոս. 'ի Հոմէր. Ոդիս. հա. 3. էջ 1861։
4 Դիոդ. գիրք Դ. էջ 225։
5 Սարաք. գիրք Ժ. էջ 475։
6 Դիոդ. գիրք Դ. էջ 167։
7 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. էջ 332։
8 Մեօրա. 'ի Կրետ. գիրք Դ. գլ. 3. էջ 128։

եզերս Լիբիոյ և Լեւրոպայ՝։ Ի սկսանել մարտին Լոդոմենէ և Մերիոն զօրավարքը նոցա հասին ուեթսուն նաւաք յԼոզիոն[3]։ Լաւ ասպա վաղ շինեալ ի նոսա ցանկութիւն աշխարհակալութեան, և ի յետին ժամանակս փոխանակեցին ընդ այնր իղձք՝ զորս դժուարին է անբասիր առնել։ Ի ժամանակի արշաւանացն Լսեբքսեայ հնարեցան առնուլ հրաման պատասխանւոյ ի Հարցկէն Լսղոզնի, լինել ազատ յօգնականութենէ համազգեաց իւրեանց[5]. և ի պեղոպոնեսական մարտին յորդորեալք, ոչ ի սիրոյ արդարութեան՝ այլ յարծաթքաղցութենէ, վարձկանեցին աթենացւոց զունդ մի պարսաւորաց և աղեղնաւորաց՝ զորս ինդրեալ էր նոցա յօգնականութիւն։

Ոչ այսպիսի ինչ ուսուցանէին օրէնքն նոցա, այն չափ ևս առաւել հռչակաւորք՝ որչափ զի չքնաղագունից օրինաց էին մարք։ Լաղ, զի չկարեմ ստանօր յիշատակել զամենայն օրէնսդիրս նոցա՝ որք ի մեծս յայս պարապեցին գործ. այլ գէթ զՇուադանաս յիշատակեցից զպաշտելի անուն՝ որ զՀին օրինաց նոցա սրկ[6], և զՄինոսս՝ որ զշինուածն ի վերայ նորա կանգնեաց։

Լիկուրգոս ի կրետացւոց անտի ի կիր էառ զՀաւաղ հասարակաց, զիսիստ կարգս աշխարհահոգ

1 Մեօրա. ի Կրետ. գիրք Դ. գլ. 5. էջ 210։
2 Հոմեր. Եղիակ. գիրք Բ. տող 645։
3 Երոդոտ. գիրք Է. գլ. 169։
4 Թուկիդ. գիրք Է. գլ. 57։
5 Էփոր. առ. Սարար. գիրք Ժ. էջ 476 և 482։

դաստիարակութեան, և բազում այլ ինչ՝ ոլովք օրէնք նորա զկրետականացն բերեն լիով զնմանութիւն։ Յչ ընդէր ապա կրետացիք վաղագոյն քան զսպարտացիս և ամենայն զառաջանօք 'ի սահմանադրութեանցն իւրեանց վերջացեալ գտան։ Հաւասիկ, թէ ոչ սխալեմ, այսոցիկ գլխաւոր պատճառք։

Ա. Յերկիր շուրջ պատեալ 'ի ծովուց կամ 'ի լերանց՝ որք բաժանեն զայն 'ի մերձակայ գաւառաց, պարտ է ժողովրդոց իւրաքանչիւր հրաժարել 'ի մասնէ ինչ ազատութեան իւրոյ՝ առ 'ի պահել զբոլոյն, և միաբանել նոցա 'ի նոյն խնդիր հասարակաց օգտի՝ առ 'ի պաշտպանել միմեանց։ Սպարտա քաջութեամբ բնակչացն կամ սահմանադրութեամբքն Լիկուրգեայ մայրաքաղաք եկաց Լակոնիոյ, և դուն ուրեք յարեան աղմուկք 'ի գաւառին։ Ա. Յ 'ի Կրետէ, Կնոսոս, Գորտինա Կիդոնիա, Փեստոս, Լիկտոս և այլ ևս քաղաքք բազումք, կան ինքնիշխանք, նախանձընդդէմք միմեանց և ոսոխք, և զնուորին հմտապազ հակառակ իրեարց։ Ի գրգռել մարտիկնդ կնոսացիս և ընդ գորտինացիս նախանձորդս միմեանց, պառակտին, առհասարակ բնակիչք կղզւոյն. իսկ 'ի միաբանել նոցա՝ վտանգ ծառայութեան 'ի վերայ կայ ամենեցուն։

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 328։ Պլուտ. յղ. Եղբայրսիր. հա. 2. էջ 490։

2 Սորար. գիրք Ա. էջ 476 և 496։ Պոլիբ. գիրք Դ. էջ 319։

Բ. Պատուոյրք տան, որ Կոսմոսքն կոչին[1]*, իշխանք կացեալ հասարակապետութեան միոյ միոյ 'ի քաղաքացս՝ յանձանձեն զկրս նորա, և զօրավարեն 'ի պատերազմի։ Խորհրդակցին նոքա ընդ աւագանւոյն, և զՀրովարտակս ընդ նոսա կազմեալ՝ ածեն 'ի ժողով ամենայն ժողովրդեան, որում անկ է հաստատել և եթ զայն[2]։ Զ. Ինչ դժպատեհ 'ի սահմանադրութեան յայսմիկ զի Կոսմոք ընտրին 'ի միոջէ 'ի կարգաց քաղաքացոց, և զի յետ տարեւոր իշխանութեանն՝ նոցա և եթ անկ է փոխանակել 'ի տեղի պակասելոցն յաւագանւոյն, սակաւուց ոմանց ազգատոհմից գրաւեալ զիշխանութիւնն՝ հեստեն օրինաց. բռնանան 'ի միաբանեալն, և 'ի պառակտելն 'ի միմեանց յարուցանեն դժնդակագոյն ազմուկս[3]։

Գ. Օրէնք Իկուրգեայ սահմանեն հաւասարութիւն ընչից 'ի քաղաքացիս, և պահպանեն զայն խափանմամբ վաճառականութեան և Ճարտարութեանէ արուեստից. իսկ կրետացւոցն օրէնք թողացուցանեն զանձել իւրաքանչիւր ինչս։ Զ. Ոչինչ արգելուն զկցորդութիւն ընդ օտար ազգս, զոր օրէնսդիրքն կրետացւոց ոչ խորհեցան զՀան-

1 Զիսհուլ. հնախօս. ա. սիայցւոց, էջ 108։

* Կոսմոք. զոր Յոյնն մերթ Κόσμοι գրէ և մերթ Κόσμιοι, են հրամանատարք կամ խորհրդականք։ (Զիսհուլ. անդ. էջ 123։) Նախնի մատենագիրքն հանեմատեն զնոսա ընդ պարեկս սպարտացւոց։

2 Արիստոտ. յզ. հտ. գիրքն Բ. գլ. 10. հտ. 2. էջ 333։

3 Նոյն անդ։ Պողիբ. գիրքն Զ. էջ 490։

Ճարեալ զգուշութիւն զայս։ Արեամբ անխափան 'ի մուտս վաճառականաց և ուղևորաց՝ որ յամենայն աշխարհէն զիմիէն անդր, էառ 'ի նոցանէ զապականարար գանձն և զօրինակս չարեաց միանգամայն։ Ի հաստատագոյն նեցուկ թուէր Իկուրգեայ հաստատեալ զայս, յուղղութիւն բարուց քան 'ի գեղ օրինացն։ Զի զինչ եղեալ ի-բացն պատահեցին. ոչ ուրեք երբէք որպէս 'ի Սպարտա մեծարեցան օրէնք յաւագանւոյն և 'ի քաղաքայնոց։ Սակ օրէնսդրացն Արեայ թուէր յօրէնս քան յուղղութիւն բարուց յուսացեալ, զի 'ի պատուհասել զյանցանս առաւել միտ եդին քան 'ի խափանել զայս։ Զի ահա եղեալ իրացն եղեն անիրաւութիւնք աւագանւոյն, և ժողովրդեանն զեղծումն։

Համակրետական անուանեալ օրէնք, որ հրամայեն գումարել բնակչաց կղզւոյն առ հասարակ ընդդէմ հինից օտար ազգաց, չպարսպեն զնոսա ոչ 'ի հերձուածոց և ոչ 'ի զինուց թշնամեաց[2]։ Զի ոչ շինջուցանեն զատելութիւն, այլ նահանջեն առ ժամանակ մի, և 'ի հասարակաց նիզակակցութեանն թողուն բազումայլեայլ ինդիրս իւրաքանչիւր օգտի։

Ուրաք և զկրետացւոց բազմաց, ակամաւորաց

1 Պոլիբ. գիրք Զ. էջ 490։ Մեծրս. 'ի Կրետ. գիրք Դ. գլ. 10. էջ 231։ գիրք Բ. գլ. 10. էջ 333։ Պլուտ. յղ. եղբայրսիր. հա. 2. էջ 490։

2 Արիստոտ. յղ. հաս.

'ի քերթուէս և յարուեստս։ Այսպիսինիդէս, որ խոստանայրն պաշտամանբ ինչ կրօնից անցուցանել զցաւումն երկնից, անուանի եղև յոյժ քան զԱիսն՝ որ ընդ իմաստունս ևեթ դասեցաւ[1]։

Խազում ուրեք Յոլաղա պահին մեծարանօք աւանդք, հանդերձեալք վաղեմի յոյժ։ Ի Բերոնեա գաւառանն Լցամենեայ աբբունի[2], և այլոք լախտրն Հերակղեայ[3], և Աքիլլեայ նիզակն[4]։ Այլ ինձ ցանկալի ևս էր հետազօտել և գտանել յիմաստս և 'ի սովորութեսազգայ զաւանդս նախնի իմաստուն նոցա։ Արեւտայիք չառնուն երբէք զանուանս դից յերդմունս իւրեանց[5], և առ 'ի պարսպել զանձինս իւրեանց 'ի պատրանաց Ճարտարութեսուն, չտային երբեմն մուտս վարժապետաց հռետորականին 'ի կղզի անդր[6]։ Բայց Թէպէտ և այժմ նեարեն նոցա մնանել, այլ դեռ ևս հանգոյն սպարտացւոց լաւ կրնական Ճշդութեամբ բարբառին, իմաստից առաւել քան բառից միտ եդեալ[7]։

Դէպ եղև ինձ տեսանել զկաղ երկուց կնոսաց, և մի 'ի նոցանէ զայրագին ասէ ցմիւսն. Ձարաց լիցիս կենակից։ Եւ զայս ասացեալ, մեկ

1 Մեսրոպ. 'ի Կրեան. գիրք Դ. գլ. 11։
2 Պաւսան. գիրք Թ. գլ. 40. էջ 795։
3 Նոյն. գիրք Բ. գլ. 31. էջ 185։
4 Նոյն. գիրք Դ. գլ. 3. էջ 211։
5 Պորփիւր, յոլ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 16։ Մեսրոպ. 'ի Կրեան. գիրք Դ. գլ. 1. էջ 195։
6 Սեքստոս Էմպիրիկ. ընդ. Ճարտ. գիրք Բ. էջ 292։
7 Պլատ. յոլ. որ. գիրք Ա. հատ. 2. էջ 641։

նեցաւ 'ի բաց. և ապա գիտացի, զի համարէր այն առ նոսա յանէծս դառնագոյնս, որով անիծանէին զԹշնամիս[1]։

Այն ոչք զարեբաստ և զչարաբաստ աւուրց իւրեանց ունին զՀամար. և զի զժամանակ կենացն ըստ բարօրութեանց չափեն, տան արձանագրել զչիրմաւ իւրեանց զայս ձև նորանշան. "Այստ գնի այս անուն, որ եկաց զամն այսչափ՝ այլ եկեաց այսչափ"[2]։

Ի՛ 'ի վաճառական նաւաց, և միւս ևս նաւ պատերազմիկ եռաթի, հանդերձեալ էին 'ի նաւահանգստէն Կոսեայ[3] ծովել վաղ ընդ փոյթ 'ի Սամոս։ Բաջինն վասն բոլորաշէն ձևոյն յամբ-ընթաց էր քան զերկրորդն. այլ մեզ այն ընտրելի թուեցաւ, զի հանդերձեալ էր մատչել 'ի կղզիս՝ ուր ցանկայաքն իջանել։

Կմբի ուղևորացս այնպիսի էր միաբանութի, զի ոչ յագէաք կալով 'ի միասին։ Այլ զի առ ափամբք քերեալ՝ զարմանայաք ընդնմանութիւն և ընդ այլակերպութիւն տեսարանաց, և էր զի ոչ ևս 'ի զնին իրաց զբաղեալ, վիճէաք սաստկապէս ընդ միմեանս՝ խնդիրս 'ի մէջ առեալ, թէպէտ և ոչ ինչ կարևորս, մերթ յիմաստասիրական, մերթ 'ի բանասիրական, և մերթ 'ի պատմական վէճս զբօսեալք։ Միւմ աւուրց ճառք անկան զկարեաց

[1] Վաղ. Մաթ. գիրք Ի. Դ. գլ. 9. էջ 230։ գլ. 2։
[2] Մեսրոպ. 'ի Կրեա. գիրք 476։
[3] Սարաք. գիրք Ա. էջ

որով ստիպիմք յայտնել զյոյզս սատանիս որ 'ի մեզ կրից. և մի ոմն 'ի մէնջ զԱբիտայ իմաստասիրին 'ի մէջ եբեր զասացուած. Յերկինս, ասէ, եթէ ոք ածիցէ զքեզ, զարմացիս ընդ մեծութիւն և ընդ գեղ տեսարանին. այլ կրից զարմացման յաջորդեսցէ հուսալ ի հուսալ մտրմաք՝ չկարելով քո յայտնել ումեք զզարմանդ[1]։ Ի Հաւից անտի և այլ տեղեկութիւնս ինչ նշանակեցի։ Զոր այն՝ զի 'ի Պարսս[2] ոչ է օրէն խօսել զկրաց, զորս չէ օրէն գործել. և զայն՝ զի ծերք յիշատակաւ կեան քան յուսով[3]. և զի դարձեալ. բազումք յոյժ 'ի վաստակոց հոչակեալք յառաջագոյն և նեբբողեալք, պատրեցին զակնկալութիւն ամենեցուն[4]։

Ի միւսում աւուր եղէն պարսաւանք զաթենացւոյն՝ որ զԱրիստիդէս դատապարտեաց թըւարկութեամբ, զի դժկամակեր ընդ կոչել նորա արդար[5]. և ասէ Պլոտոսիղաս. Օ՞նոյն և ես 'ի սրտմտել իմում առնէի, այլ ասէի նախ 'ի համախուսմբ ժողովի անդ. Արդար է Արիստիդէս, այլ և ես իսկ և այլք գտանիմք արդարք. և ընդէր նմա միայնոյ պահիցի մեծարանաց անուանդ որ վերհագոյն քան զնմա վարձս է առաքինութեան։

1 Պիկեր. յՀ. բարեկ. գլ. 23. հա. 3. էջ 349։
2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 138։
3 Արիստոտ. Հարա. գիրք Բ. գլ. 13. էջ 565։
4 Խոսկ. 'ի Դիոկոկ. հա. 1. էջ 54։
5 Պլուտ. յԱրիստոտ. հա. 1. էջ 322։ Դիոգոս ՅԱրիստոտ. գլ. 1։

Բնձատեր զանձինս կործանէք 'ի վատնել զգովեստս. շուայլութիւնդ այդ չքեղ զեղծուցանէ զառաքինութիւնս երևելիս, և սրատաբեկ առնէ զանտեսս։ Մնձ մեծարոյ է յոյժ Բլիստիդէս, այլ գոտապարտեմ զնա, ոչ զի մեղապարտ զնա դատիմ, այլ զի անարգանօքդ ստիպէք զիս յանիրաւութիւն։

Բայց զմարդատեացն Տիմոնէ եղէն բանք. զի յեղանակաւ ինն 'ի Ճառս բարոյականին պատկանին իրք նորա։ Ոչ ուրուք 'ի ժողովոյս մերմէ տեսեալ էր զնա, այլ ամենեցուն 'ի հարց իւրեանց լուեալ զպատմութիւն նորա այլազգ 'ի միմեանց։ Կէսք զեղապանծ զնկարագիր նորա յօրինէին, այլք նսեմագոյն[1]։ Ի հակաճառուիս յայսոսիկ 'ի մէջ ածաւ ձև ամբաստանութեան հանգոյն այնմ՝ որ յատեանս աթենացւոց մատուցանին, և էր ամբաստանութեն օրինակ այս. "Օ Տիմոն, վասն ատելոյ նորա զմարդիկ առ հասարակ, ամբաստանէ Սորատոնիկոս. պատուհասեսցի ատելի՝ամ մարդկան"։ Սելի եղև դատաստան նորա, և Փիլոտաս կացուցաւ ջատագով Տիմոնի։ Բստանօր համառօտեցեալ որ ինչ երկուստեք ածան փաստք։

Խօսեցաւ Սորատոնիկոս, և ասէ. Բնեմ յատեան ձեր զայր մի վայրագ և անիրաւ. բարեկամաց ոմանց նորա չգիտեմ որպիսի ինչ ապախ-

[1] Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 14. էջ 74։

տիս ընդ երախտեաց նորա հատուցանելով[1], առ հաստարակ ամենայն ազգ մարդկան եղև նշաւակ վերէժինդրութեան նորա[2]։ Զվերէժ այնոցիկ խնդրէր ամենայն ուրեք՝ եպերելով զգործս պետութեան և զիւրաքանչիւր ուրուք։ Որպէս այն թէ ամենայն առաքինութիւնք ընդ նմա վախճանելոց էին, ոչ այլ ինչ ուրեք տեսանէր՝ բայց պատրանս և ոգիս. որով ատեայր յայտմ հետէ զբարեձեւութիւն աթենացւոց, և ախորժէր արհամարհել՝ի նոցանէ քան մեծարել։ Արիստոփան որ ծանաչէրն զնա, յանդիման առնէ զնա շուրջ պատեալ՝ի փշոց անմատչելի. և յաւելու՝ զի դժպհի եղև նա՝ ամենեցուն, և համարէր շառաւիղ կատաղեացն դժոխոց[3]։

Այլ ոչ այսչափ միայն, այլ և հայրենեացն իւրոց եղև նա մնտնիչ։ Այլ հաւատիք, զի հանդիպեալ նորա Ալկիբիադեայ՝ մինչ էրանէր նա՝ի համախուռմբ ժողովոյ, հաւանեցուցեալ անդ զնորհուրդսն փնատակարս աշխարհին, ասէր ցնա. Աքաղաղերեաց որդեակ, ինդամ ընդ յաջողութիւնս քո. արա, և կործանեացես զպետութիւնն[4]։ Ո՛վ սոսկումն. և ո՞ այնպիսում ուրեք ժպրհեսցի կալ ջատագով։

1 Ղուկիան. ի Տիմ. հա. 1. յօդ. 8. էջ 114։
2 Պիկեր. տուսկուլ. գիրք Դ. գլ. 11. հա. 2. էջ 338։ Նոյն, յղ. բարեկ. գլ. 23. հա. 3. էջ 349։
3 Արիստոփ. ի Լիսիսդր. տող 810։ Նոյն, ի Հաւան. տող 1548։
4 Պլուտ. յԱղկիբ. հա. 1. էջ 199։ Նոյն, յԱնտոն. էջ 948։

Լսեսեցաւ ապա Փիլոտաս և ասէ. Լնձ վիճակեցաւ Ջատագով կալ Տիմոնի, և ահաւասիկ վասն նորա առնեմ պատասխանի։

Գիտելի է նախ՝ թէ որպիսի՛ ինչ թուեցան բանք նորա բաղմագունից յաթենացւոց անտի, որ էին ընդ Աղկիբիադեայ։ Այդեն արդարև 'ի նոցանէ ոմանք որք թշնամանեցին զՏիմոն. բայց այլք սկսան ծեծաղել ընդ բանս նորա, և խոհաւ կանագոյնք կարկեալ կացին որպէս 'ի լուր հանձարեղ խրատու։ Օ՛ն նախատեսեալ Տիմոնի զվասանգն՝ զեկոյց զայն, այլ չեղև լսելի։ Օ՛Ա-բիստոփան 'ի ներքս ածէր առ 'ի չարահամբաւել և եւս զՏիմոն, ոչ ածեալ զմտաւ՝ զի վկայութիւն նորա բաւական է արդարացուցանելոյ զամբաստանեալն. զի այսպէս իսկ ասէ քերթողն. "Սա ինքն է Տիմոն անիծապարտ զաւակ կատաղեացն, որ զգայուէ անէծս հանապազ ընդդէմ անօրինաց։" [1] Լսիցէս Սոքրատոնիկէ, չիք այլ մեղք Տիմոնի՝ բայց զի կշտամբէր զանօրէնս։

Աղկացնա 'ի ժիրկի՝ յորում նախնի բարք մաքաւէին դեռ եւս ընդ սխտս, միաբանեալս յեղծումն նոյ։ Բաղմավստանգ է ժամանակն. զի յայնժամ որք միանգամ գայթ 'ի գայթի կան յօրէնս և սիրողք են հանգստեան, թողանան յառաքինութեանց և ըստ իրաց ժամանակին կենցաղավարին. իսկ օրինապահք յաւելուն 'ի խստութի,

[1] Պլուտ. յԱղկիբ. հա. 1. էջ 199։

[2] Արիստոփ. 'ի Լիսիստրատ, տող 816։

և է զի ատելի լինին անողոքելի սնդութեամբն։ Տիմոն ընդ բազում հանձարոյ և լաւութեան բերէր յանձին և զիմաստասիրական գիտութիւն՝. այլ դառնացեալ արդեօք յարկածից, թերևս և յարագարագ ձարակելոյ ապականութեանն, կարի խիստ խստութիւն՝ ի բանս իւր և՝ ի կերպարանս երբեր, և սարտոյց զսիրտս ամենեցուն։ Օնոյն պատերազմ մղէր նա, զոր և Սոկրատ ժամանակակից նորա, և Պիոգենէս՝ որում բազում իրօք նման գտանի[2]։ Լուրաքանչիւրոց այլևայլ եղէն բախտք ըստ այլևայլ տարազու յարձակմանցն։ Պիոգենէս ծաղու պատերազմեցաւ ընդ սիրտս, և մեք ծիծաղիմք ի նմա։ Սոկրատ զինուք բանին հաղածեաց զնա, և մահուամբ ետ զվրէժ։ Իսկ Տիմոնի անհամբոյր բարուք մարտուցեալ ի նմա՝ չեղև ինչ ահարկու, այլ համարեցաւ մարդատեաց. և նորալուր յորջորջանօքն արհամարհեցաւ՝ ի սպառ առաջի ամբոխին, և առ ապագայս իսկ թերևս արհամարհեսցի[3]։

Ինձ ոչ բնաւ կարծիք՝ թէ Տիմոն զամենայն ազգ մարդկան ատեայր, զի սիրէր իսկ նա զկայնայս[4]։ Սարատոնիկոս՝ ի վերայ էած. Գ. յլ և ոչ գիտայ նա զսէր, զի անծանօթ իսկ էր նմա բարեկամութիւն. չգիտիցես զինչ ասայ ցաթենացին,

[1] Պլին. գիրք Ի. գլ. 19. հա. 1. էջ 385. Սուիդ. ի Տիմ.

[2] Պլին. գիրք Ի. գլ. 19. հա. 1. էջ 385։

[3] Ծաղկաքաղ. գիրք Գ. էջ 218։

[4] Արիստոտ. ի Լիւսիսաբ. տող 820։

զոր թուէին սիրել։ Օ՛ի՛ Ճաշել երկոցունցն՝ի միասին, գոչելով աթենացւոյն. «Քանի՛ քաղցր էն ինձ ընթրիքս, ո՛ Ցիմոն. նա զԹշնամանալից պատասխանին ետ. «Ինձ իսկ արդարև քաղցր, եթէ չէիր ընդ իս Ճաշակիլ՝»։

Փիլոտաս ասէ. «Խաղոյ իցեն բանքդ անդ առ ետեղ զուարճախօսեալ։ Մի՛ զՑիմոնէ՝ ի՛ վարկ-պարազի համբաւոյ դատիր, զոր ՝ոսոիք նորա հաստատեն, այլ ըստ սրտառուչ բանից նորա՝ զոր առաքինութիւն ծանրացաստումն տայր նմա բարբառել, և որոց անմարթ է գոլ անհաճոյ կիրթ ախորժակաց՝ բերելով տիպս կերպարանաց անօրինակս։ Օ՛ի առն կարի իմն հայրենասիրի կծանողք են և հանձարաբանութիւնք, համարձակագոյն մերկանալով զիմաստսն։ Այլ նա՝ի միումաւուրց՝ի բեմ. և ժողովուրդն զարմացեալ ընդ անակնկալ իրսն, կայր անշշունջ՝ի խոր լռութեան. և նա ասէ. «Զոր աթենացիք, ածու փոքրիկ է իմ՝, և տուն՝ի նմա խորհիմ կառուցանել։ Այ՛ է անդ թգենի մի, զոր պարտ է ինձ խլել՝ի բաց. բազումք՝ի քաղաքայնոց կախեցան զնմանէ, եթէ իցեն դեռ ևս ումեք կամք՝ փութասցի վաղագոյն. ազդ առնեմ ահաւանիկ՝»։

Իրքս այս՝ որ չևևս յսկանջալուր եկեալ էին՝ այնպէս հաճոյ թուեցան Սորատոնիկեայ, զի ոչ ևս յաւել յամբաստանութիւն։ Այ՛ ժողո-

1 Պլուտ. յԱնասն. հա. 1. 2 Ելոյնդ անդ։

էջ 948։

վականացն տուեալ զիւրաքանչիւր վարկ, միա-
բանեցին՝ զի Ցիմոն վասն զառնութեան նա-
խանձուն իւրոյ չկարաց լինել պատուպարան ուղ-
ղութեան բարուց, այլ քան զառաքինութիւն
անհամբոյր՝ յոյժ առաւել է վնասակար վատ
մարդահաճութիւն. և եթէ բազմագոյնք յա-
թենացւոց հանգոյն Ցիմոնի խորշէին յանօրի-
նաց, հասարակապետութիւնն յառաջին պայծա-
ռութեանն իւրում կայր։

Լ. յետ այսր վճռոյ, զարմանք թուէին բազ-
մաց չկանգնել աթենացւոց մեհեանս բարեկա-
մութեան։ Իսկ Լիսիս ասէ. Զառաւելագոյն ևս
թուին ինձ զարմանք չկանգնել նոցա մեհեան
սիրոյ. բա՛ռ, երիցագունին ժամանակաւ և
չքնաղագունին 'ի դից ոչ տօնք են և ոչ զոհք
կատարին՝։ Զնդ բացաւ ասպարէզ, ընդ որ դաշ-
ճադարձ եղեն երթևեկք։ Զ. 'ի սահմանել
զսէր՝ ածան 'ի նեղքս աւանդութիւնք նախնեաց,
և արդեաց այլևայլ կարծիք։ Զ'ի ինչ ասէին լի-
նել զայն, և 'ի բազումս զանազանեալ[2]. երկուս
'ի նոցանէ ընդունելի համարէին, զերկնայինն
անապակ, և զերկրայինս թանձր[3]։ Զ. սիրոյ
անուամբ իմանային զպատճառն՝ որ յարդ և 'ի
կերպարան էած զմասունս նիւթոյն, որ 'ի տիե-

1 Եսիոդ. ծննդ. գլց. տող 120։ Արիստոփ. 'ի հաւ. տող 701։ Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ. 177, 178։

2 Պիկկր. յղ. բն. գլց. գլուք Գ. գլ. 23. հա. 2. էջ 506։

3 Պղատ. անդ, էջ 180։

զերագրաւ միգին օցտեալ երթևեկէին[1], զբա-
ղեյարմար կարգ տիեզերացս, և զզգացումն՝ որ
ընդ միմեանս կցորդէ զմարդիկ[2]։ Իսկ իմ պար-
տասեցան միտք յայնչափ 'ի բազում հմտութիւն
վիճողացն, և 'ի դժուարիմաց բանից նոցա, և աղաչէի
զնա համառօտել ինձ զերկայն վէճն 'ի սուղ բանս,
և ասէր. Պա՛ս ուրեմն աստուա՛ծ զոմն համարիցիք
զսէր։ Ատրատոնիկոս ասէ. Ոչ աստուած, այլ
մուրող զոք՝ որ խնդրէ ողորմութիւն[3]։ Յե՛ իբրև
սկսանէր մեկնել զզօրութիւն բանին, ահ և դո-
ղումն կալաւ զնա. զի էր մրրիկ սաստիկ, ապրս-
տամբ յամենայն հնարից արուեստին՝ զոր նա-
ւապետն 'ի կիր արկանէր։ Յայնժամ Լուսիս,
զոր ոչն դադարէր Ատրատոնիկոս տագնապեցու-
ցանել հարցուածովքն, պարապ առեալ՝ եհարց
զնա և ասէ. Յո՞րս 'ի նաւաց նուազագոյն է վը-
տանգ, 'ի բոլորաշէ՞նս եթէ յերկայնս։ Յե՛ նա
ասէ. Յայնոսիկ՝ որ 'ի ցամաքի կան[4]։ Յե՛ ոչ
յամեցին իրՁք նորա ընուլ, քանզի մրրիկ հողմոյ
վարեաց զմեզ 'ի նաւահանգիստն Կովայ. և իջաք
ընդոստ 'ի ծովեզրն, և հանաւ նաւն 'ի ցամաք։
Փոքրիկ է կղզեակն, այլ գեղեցիկ յոյժ։
Բաց 'ի լերանց ինչ որ պատսպարէն զնա 'ի սաստ-
կաշունչ հողմոց հարաւոյ հարթ է երկիրն և բերրի

1 Պրուքք. հա. 1. էջ 416։
2 Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 179, 186։
3 Նոյն անդ, էջ 200։ Յե. շատ. բանաս. կաճառ. հա. 6. էջ 280։
4 Ամեն. գիրք Ը. գլ. 10. էջ 350։

յոյժ[1]։ Ի սատանուէ երկրի՝ որ զմանն ինչ նախնոյ քաղաքին կործանեաց[2], և 'ի պառակտելոյ յետ այնորիկ քաղաքացոցն, բազմազոյնք 'ի նոցանէ յառաջ քան զամն ինչ եկին բնակել առ ստորոտով սարաւանդակին՝ որ հեռի է 'ի ցամաք երկրէն Ասիոյ ասպարէզս քառասուն։ Զիք ինչ քան զվայրն զայն բազմատեսիլ, և ոչ մեծագործ ինչ քան զնաւահանգիստ նորա, քան զպարիսպս, և քան զառ 'ի նեղքս նորակերտ քաղաքին[3]։ Ամենահռչակ մեհենին Ասկղեպեայ, որ կայ յաբուարձանս քաղաքին, ծածկին որքն արգաղիր նուիրօք զոհութեան ախտաժետաց, և արձանաւ զրութեամբ՝ յորս դրոշմեալ կան իւրաքանչիւրոցն ախտակրութիւնք, և դեղք որովք՝ ապաքինեցանն[4]։

Ի վերադոյն ինչ անդանօր միտք մեր գրաւեցան. զի 'ի կղզեօջ անդ ծնաւ Հիպոկրատ յառաջնումն ամի ութներորդի ողիմպիադին[5]։ Եւ էր նա յազգէ ասկղեպեանց[6], որք դարուց 'ի դարս պահէն զուսումն աւանդեալ Ասկղեպեայ՝ զոր նախահայրն ազգատոհմին իւրեանց համբլին[7]. և էն նոցա դպրոցք երեք, 'ի Հռոդոս, 'ի

1 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 657։

2 Թուկիդ. գիրք Ը. ԳԼ. 41։ Սարաբ. անդ։

3 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 386։

4 Սարաբ. գիրք Ը. էջ 374. գիրք ԺԴ. էջ 657։

5 Ֆիբերկ Ջատագով. ժամանակագր. էջ 121։ Քորնելիոս տարեգր. ատտիկ. հտ. 3. էջ 199։

* Ն. Ք. 460 ամք։

6 Պղատ. 'ի Փեդր. հտ. 3. էջ 270։

7 Սորան. վարք. Խիպոկր. Փաբրիկ. մատենագ. Յուն. հտ. 1. էջ 841։

Մնիդոս, և 'ի Կոմ[1]։ Սկզբեպիսս 'ի հօրէն իւմէ 'ի Հերակղիդեայ գնախակրթութիւնս գիտութեանց ընկալաւ. բայց վաղ խելամուտ լեալ, զի առ 'ի գիտել զէութիւն մարմնոց իւրաքանչիւր հարկ էր հետազօտել զբաղկացու մասունս տիեզերաց[2], այնու մտադիւրութեամբ պարապեցաւ 'ի բնագնութիւն առ հասարակ՝ զի ընդ երևելագոյնս 'ի բնագիտաց դասեցաւ փառօք[3]։

Բժշկականին յայնմամ արուեստի աւանդապահք էին կրկին դասք արանց, որք զանխուլ 'ի միմեանց գուն գործէին կազմել նմա պայծառ յաղթանակ։ Սոյն խմաստասէրքդ պարապեալք 'ի հետազօտութիւն էից առհասարակ՝ չկարէին անտես առնել զմարմին մարդկեղէն, և քաջանել զպատճառս որ 'ի նմա ներգործեալ ստէպ յեղափոխութեանցն. և անդ զաւակն Սկզբեպեայ դարմանէր զախտս ըստ կարգաց հաստատելոց 'ի բժշկութենէ բաղմաց, և երբեակ դրպրոցք նորա պանծալին նախանձընդդէմ իրեարաց 'ի հնարագիտութիւս իւրեանց բաղումս[4]։ Մինչդեռ խմաստասէրքդ ճառէին, և ասկղեպեանքդ գործէին, Խոկրատ զշմանութիւնս երկաքանչիւրոցն յանձին բերելով, երկնեաց զմի 'ի մեծա-

[1] Գալէն. եզանակ. բժշկ. գիրք Ա. հտ. 4. էջ 35։

[2] Պղատ. 'ի Փեդր. հտ. 3. էջ 270։ Թէոփր. յղ. պատճ. բուսոց, գիրք Գ. գլ. 2. էջ 266։ Գալէն. անդ, էջ 36։

[3] Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 554։

[4] Գալէն. անդ, էջ 35։

մեծացն և 'ի կարևոր խորհրդոց՝ որ թուականութիւնս նորա 'ի վերպս հանձարոյ սահմանեն. քանզի պատճառաք պայծառացոյց զփորձ, և զտեսութիւնս գիտութեն գործովք հաւաստեաց[1]։ Բ.յլ 'ի տեսութիւնս յայսոսիկ այլ ինչ ոչ 'ի ներքս խառնեաց՝ բաց 'ի պատճառաց ազգի ազգի կրից, որ երևին 'ի մարդկեղէն մարմնի՝ նկատեալ ըստ հիւանդութեան և ըստ առողջութե[2]։

Սովին ոձով ամբարձեալ արուեստն 'ի փառս գիտութեան, անսայթաքելի ևս յառաջ խաղաց ընդ ուղին այն ինչ բացեալ առաջի. և Խպոկրատ կատարեաց խաղաղութեամբ զնորաձևութիւնն, որ զբժշկականն կերպարանափոխ արար զարուեստ։ Ռեմ աստանօր զնորանոր դեղոցն յաջողութեան զհանդէս, և զզարմանալիսն գործեցեալս ուր և հասանէին ոտք նորա. մանաւանդ 'ի Թեսալիա, ուր և կեցեալ բազում ժամանակս՝ վախճանեցաւ սակաւ ինչ յառաջ քան զհասանելն իմ ՅԱղլադա։ Բ.յլ զայն ոչ լռեցից, զի ոչ ինդիր ինչ շահու, և ոչ իղձք համբաւու ածին զնա 'ի տար աշխարհս, այլ յամենայնէ՝ որ ինչ յաղագս նորա պատմեցաւ ինձ խելամուտ եղէ, զի մի ինչ էր նորա ցանկութիւն՝ սէր բարւոյ, և մի յամենայն կեանս նորա պարապումն՝ խնամել զախտաժետս[3]։

1 Գալենոս. պատմ. բժշկ. գիրք Գ. գլ. 1։
2 Խպոկր. յղ. սկզբ. հա. գիրք Թ. հա. 1. էջ 334։
3 Գալենոս. յղ. սահման. 1. էջ 112։

Լ՝Թողնա բազում գիրս. յորոց կէսք օրագիրք են ախտիցն դարմանելոց 'ի նմանէ անընդհատ, այլք բովանդակէն որ ինչ 'ի փորձոյ իւրմէ և անց ցելոց դարուց լեալ արգասիք. և կէսք դարձեալ Ճառէն զպարտուց բժշկի, և զյոգունց մնասանց բժշկութեան կամ բնաբանութեան։ Լուշի մնաք արժան է զամենայն գիրս նորա ընթեռնուլ, քանզի բազում ուրեք զսերմանս և եթ վարդապետութեանն արկանէ 'ի նոսա՝, և ամենայն իսկ ուրեք հմտառօտագոյնս Ճառէ, այլ 'ի սուղ բանս զն բազում ինչ բովանդակեալ. ոչ երբեք զարտուղի յառաջարկեալ նպատակէն, և 'ի դիմելն անդր՝ Թողու զհետ իւր նշոյլս առաւել կամ նուազ լուսատու ըստ կորովութեանն մնայ ընթեռնելեացն։ Օ՝ի այսպէս սովոր էին նախնի իմաստասէրքն յաւելուլ նորանոր հմտութիւնս քան յաձախել Ճառս զյայտնեաց։

Պ՝ատեանք առնս մեծի զմատենագրին բերէն յիւրեանս զնկարագիր։ Զ՝ի ինչ սիրելի քան զանկեղծութիւն, որով խոստովան լինի զարկածս և զվրիպակս իւր։ Տեսցես անդ զցուցակ զոր 'ի Ճարակել ժանտախտին դարմաներ, և յորոց բաղմագոյնք 'ի վերայ բաղկաց իւրոց անշնչացան[2]։ Լ՝ս այլուր տեսցես զնա առընթեր թեսաղացւոյ ուրումն հարուածելոյ 'ի գլուխ իւր

1 Գաղէն. եղանակ. բժշկ. գիրք Է· հա· 4· էջ 106։

2 Խպպողք· յղ· փոխադր· ախտ· գիրք Ա, Բ, Գ։

քարամբ։ Եւ՝ ի դէպ թուի նմա՝ ի սկզբան անդ ձեռնարկել՝ ի հատուցն. այլ ապա՝ ի դժնդակ նշանացն՝ ի միտ առեալ զսխալանս իւր, անագան՝ ի հնգետասանեերորդում՝ աւուր ձեռն՝ ի գործ առնէ. և՝ ի վաղիւ անդր մեռանի վիրաւորեալն[1]։ Օ այս ամենայն ինքնին խոստովան լինի, և զեր՝ ի վերոյ արշաւեալ ամենայն ըղձից անձնասիրութեանն զսխալանս իսկ իւր աւանդէ առ՝ ի խրատ։

Եւ ոչ շատ համարեալ նուիրել զկեանս իւր՝ ի սփոփումն վշտացելոց, և աւանդել՝ ի գիրս իւր զվարժս գիտութեան՝ որոյ ինքն եղև հաւակ, եթող և կանոնս՝ ի հրահանգս բժշկաց, զորոց աստանօր՝ ի հարևանցի տամ զտեսութիւն։

Կեանք սուղ, և արուեստ որով վարիմքս՝ այնքանեաց կարօտ վարժից, զի անդստին՝ ի մատաղ տիոց պարտ է կրթել մեզ՝ ի նոյն[2]։ Եթէ առաջի կայցէ քեզ վարժել զոք՝ ի համբակաց, քննեա յուշիկ զյարմարութիւն նորա. զի եթէ իցէ նորա՝ ի բնէ քաջ ընտրութիւն և ողջամիտ դատումն, հեզութիւն հանդերձ անյողդողդ հաստատութեամբ, աշխատասիրութիւն և առ՝ ի պատշաճն յօժարութիւն[3], յուսալի է քեզ։ Իսկ եթէ վըշտանայ ընդ վշտացեալս, և սիրտ նորա բարեգորով ախորժէ կարեկից լինել մարդկան, զի-

[1] Խպոկր. յղ. Փոխագր. ախտ. գիրք Ե. յօդ. 14. հտ. 1. էջ 778։

[2] Նոյն. յղ. օր. յօդ. 2. հտ. 1. էջ 41։

[3] Խպոկր. յղ. օր. յօդ. 2։ Գալէնք, պատմ. բժշկ. գիրք Գ. գլ. 29։

տասջիր զի կապեսցի ոգի նորա ընդ արուեստին՝ որ ուսուցանէ օգնել նոցա՝։

Ուստ՝ի մանկութենէ զձեռս նորա՝ի դարմանս վիրաբուժութեան*, այլ ոչ՝ի հատումն. զի զայն՝ի ձարտարս արուեստին պարտ է ապաստան առնել[2]։ Զ՝ոծ զնա ընդ կարգս գիտութեանց, և ուսցի՝ի բնաբանութէ զաղդեցութիւն նահանգին՝ի մարմին մարդկեղէն. և եթէ կամիցի շրջել ընդ քաղաքս առ՝ի յաւելուլ՝ի հմտութիւն[3], խրատեա զնա զնել զգուշութեամբ զդիրս վայրաց, զյեղմունս օդոց, զջուրս երկրին ըմպելիս, և զբերս՝ որովք բնակիչք երկրին կերակրին. և համայն ասացեալ, որ ինչ այլայլէ զկազմած կենդանւոյ՝։

Յուցցես նմա որ ինչ նշանք ախտից իւրաքանչիւր կարապետք լինին, և որով զգուշութեամբ մարթ է խուսափել՝ի նոցանէ, և որպիսի ինչ դարմանով բժշկել զնոսա։

Լ՝ս իբրև՝ի միտ առցէ զվարդապետութիս քո պարզաբանեալս՝ի կարգ զբուցատրութեանց, և համառօտեալս՝ի քէն՝ի վՃիռս գիւրընկալս յիշողականին[4], ուսուցես նմա զի բազմավտանգ է գիտութիւն արուեստին առանց փորձոյ, քան

1 Իպպոկր. ՝ի պատուէրսն, յոգ. 2. հա. 1. էջ 43։

* Զի այսոքիկ էին՝ի սկզբանէ մասունք բժշկականին։

2 Նոյն, յզ. երդմ. յոգ. 2. հա. 1. էջ 43։

3 Նոյն, յզ. օր. յոգ. 3. հա. 1. էջ 42։

4 Նոյն. յզ. օդոյ ջրոյրի տեղեաց, հա. 1. էջ 327։

5 Նոյն, յզ. երդմ. յոգ. 1. հա. 1. էջ 43։

փոքՃն ինքնին միայնակ՝. և զի ժամ է այնու-
հետև զօրէնսն հանրականս բաղդատելոյ ընդ
դէպս իւրաքանչիւր, որոց հանապազ փոփոխելով՝
պատրեն յաՃախս զաժիշկս վեր՝ի վերոյ նմանու-
թեամբքն[2]. և զի դարձեալ ոչ՝ի փոշոջ դպրո-
ցաց և ոչ՝ի գիրս իմաստասիրաց և օրէնսգիտաց[3]
է ուսանել զարուեստ հարցանելոյ զբնութիւն,
և զդժուարին և արուեստ՝ առնելոյ՝ի նմանէ
պատասխանի։ Այլ և ոչ Ճանաչէ նա զբնութիւն,
զի մինչև ցայսմայր նկատեաց զնա՝ի զօրութեան
և անխափան յընթացս իւր[4]։ Այլ ծցեռ զնա յօ-
թևանս ցաւոց, ուր բնութիւնն ծածկեալ՝ի ըս-
տուերաց մահու, նշաւակ հինից թշնամւոյն սաս-
տիկ յարձակմանց, անկեալ, և կանգնեալ առ՝ի
վերստին անկումն, յանգիման առնէ ակն զնոս-
զի զկարօտութիւն իւր և զզօրութիւն։ Այ տեսիլ
մարտին համբակն ահաբեկ՝ տեսցէ զքեզ դէտ
կացեալ առ՝ի գտանել պարապ կանգնելոյ զյաղ-
թութիւն, և սահմանելոյ զկեանս ախտացելոյն։
Այթէ վայրիկ մի հասցէ քեզ մեկնել՝ի Ճակա-
տուն տեղւոջէն, հրամայեսցես նմա կալ անդ և
դիտել, և տալ ապա զհամար անցիցն և զփոփո-

1 Խպպոկր. ՝ի պատուէրսն, յօդ. 1 և 2. հա. 1. էջ 60։ Արիստոտ. բնազանց. հա. 2. էջ 839։

2 Խպպոկր. յլ. փոխադր. ախտ. գիրք Զ. յօդ. 3. հա. 1. էջ 805։

3 Նոյն. յլ. սկզբ յօդ. 1. հա. 1. էջ 112։ Նոյն. յլ. ժուժկալ. կերակր. յօդ. 1. էջ 179։

4 Նոյն. յլ. փոխադր. ախտ. գիրք Զ. յօդ. 5. հա. 1. էջ 809։

խուԹեանց՝ որ դիպիցին 'ի կալ քո 'ի բացեայ, և որ ինչ դեղ դարմանոյ 'ի դէպ Թուիցի նմա առնել՝։

Վասանզի կացուցանելով զնա ստէպ 'ի զնին աՀաւոր և հրահանգիչ տեսարանին, ընծայեսցես զնա ըստ կարի 'ի խորհուրդս Թագաւոր բնութեան։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և զի յաշակերտել քո զնա խուն ինչ վարձու՝ երդուաւ նա 'ի պահել 'ի բարս իւր և 'ի պաշտամանն ուղղութիւն անցեղլի[2], մի զուխտն զայն շատ համարեսցի. զի առանց առաքինութեանց, որ իւրում պայմանին են անկ, ոչ երբեք ընուլ կարասցէ զպարտն։ Այլ ոչ այն առաքինութիւնքն իցեն. ոչ 'ի բաց առնում գրեԹէ և ոչ զմի ինչ, քանզի այն իսկ է պատիւ պաշտամանն նորա՝ զի ինդրի առ այն պարառութիւն ամենայն բարեմասնութեանց մնաց և սրտի[3]։ Զի եԹէ ոչ 'ի զգուշութիւն և յիմաստութիւն նորա արժան իցէ վստահել, ո՞ 'ի տանուտեարց 'ի կոչելն զնա չերկնչիցի՝ Թէ գուցէ լրտես զոք կամ նենգաւոր 'ի տուն իւր մուծանիցէ, կամ ապականիչ կնոջ իւրոյ և դստերաց՝։ Այլ զիարդ մարԹի վստահել 'ի մարդասիրութիւն նորա, եԹէ անպատկանաւոր զուարԹութեամբ մատիցէ առ ախտա-

1 Խալոնկ. յղ. վայելչ. յօդ. 12. հա. 1. էջ 59։

2 Նոյն, յղ. երդմ. յօդ. 2. հա. 1. էջ 43։

3 Նոյն, յղ. վայելչ. յօդ. 5. էջ 55։

4 Նոյն, յղ. երդմ. յօդ. 2. էջ 43։ Նոյն, յղ. բժշկ. յօդ. 1. էջ 45։

ժէտս, և կա խստութեամբ ինն և դաժանութեամբ[1]։ Օ Լսարդ 'ի հաստատութիւն մտացն, եթէ ստրկաբար մարդահաճութեամբ զգուիցէ զդժկամակութի նոցա, և զիջանիցի յանձնահաճ կամն նոցա[2]։ Օ Լսարդ 'ի խոհականութիւն ներ, եթէ զարդուց պարապիցի, և իւղովք անուշիւք օծանիցի, և հանդերձս շքեղս զգեցեալ շրջիցի քաղաք 'ի քաղաքէ, արտասանել 'ի պարծանս արուեստին իւրոյ ձնառս՝ յեղյեղելով վկայութիս 'ի քերթողաց[3]։ Օ Լսարդ 'ի գիտութիւնս նորա եթէ ընդ արդարութեան հատարակաց՝ որով այր լաւ վարի առ ամենայն մարդիկ՝ ոչ ուղղիցէ և զայն, որով այր խնամտուն վարի ընդ անձին իւրում· և որ ուսուցանէ նմա, զի և բազմահմուտ որթէ իցէ՝ կարօտ գտանի քան առաւելեալ գիտութեամբք[4]։ Օ Լսարդ 'ի գիտաւորութիւնս նորա, եթէ իշխէն նմա խօլ ամբարտաւանութիւն և նախանձ՝ որ ոչն երբէք եղև բաժին առն մեծախոհի[5], եթէ զամենայն աղնուական մտածուիս փոխանակեալ ընդ շահուց՝ մեծատանց և եթէ սպաս մատուցանիցէ[6]· և եթէ օրէն համարեալ զսովորութիւնն յառաջագոյն սակ արկանելոյ բժշկութեան, յամառիցի 'ի կատարել զդաշնա-

1 Խպոսկր· յղ· վայելչ· յոգ· 10 և 11· հա· 1· էջ 58։
2 Նոյն անդ, յոգ· 2· էջ 52։ Նոյն, 'ի պատուէրսն, յոգ· 9· էջ 66։
3 Նոյն, յղ· բժշկ· յոգ· 1· հա· 1· էջ 45։
4 Նոյն, 'ի պատուէրսն, յոգ· 7· հա· 1· էջ 65։
5 Նոյն անդ, յոգ· 7· էջ 64։
6 Նոյն անդ, յոգ· 5 և 6·

դրութիւնն՝ թէպէտ և հիւանդին ժամ 'ի ժամ զայրանայցէ ախտն'։

Յոռութիւնքս այսոքիկ և թերութիւնք ըզ-տգէտ և զյանդուգն մարդկանն բերեն Աչգրիտ զնկարագիր, որովք լի է Լաչադա. որք անարգեն զաչնուականագոյնն յարուեստս, վաճառականք լինելով կենաց մարդկան և մահու. խաբեբայք ճնասակարագոյնք ևս այնու, զի օրէնք ինչ նոցա ոչ ստնանեն, և ոչ նախատինք կորացուցանեն զնա[1]։

Լաւ որ այն բժիշկ իցէ, որ պատուէ զարուեստ իւր։ Լ.յն որ ըստ արժանւոյն մեծարի յամենեցունց ներհուն գիտութեամբն, բազմաժամանակեայ փորձով, արդարակորով ուղղութեամբ, և անստգիւտ վարուք[2]։ Լ.յն որ յամ վշտացեալս հաւասար գթով ակնարկէ, որպէս ած 'ի մարդիկ. հասանէ 'ի կարդալ նոցա յօգնութիւառանց ակնառութեան[3], խօսի ընդ նոսա քաղցրութիւ, լսէ նոցա մտադիւրութիւ, երկայնամտէ կարճմտութեան նոցա, և ազգէ 'ի նոսա արիութիւն իմն՝ որ բաւական է երբեմն դարձուցանելոյ զնա 'ի կեանս[4]։ Լ.յն որ կարեկից լեալ չարեաց նոցա, սնդագոյնս հետազօտէ զպատճառս և զզայրացումն նոցա, որ 'ի յեղակարծ պատահարաց ոչ ամբոխի[6], և որ պարտ անձին վարկանի կոչել

1 Խպոկրն. 'ի պատուէրսն, յօդ. 2. էջ 62։
2 Նոյն. յղ. օր. յօդ. 1. հա. 1. էջ 40։
3 Նոյն. յղ. բժշկ. յօդ. 1. էջ 44։
4 Նոյն, 'ի պատուէրսն, յօդ. 5. էջ 63։
5 Նոյն անդ. յօդ. 4. էջ 62։
6 Նոյն յղ. վայելչ. յօդ. 9. էջ 57։

զՀամարուեստս իւր յօդնութիւն 'ի կարիս՝ խորհրդակից լինել ընդ նոսա[1]։ ԼՀ այն դարձեալ, որ ամենայն զօրութեամբ մաքառեալ ընդ ախտին, գտանի հաճ և անպարծ 'ի յաղթանակեն. իսկ 'ի չյաջողելն՝ ուրախ լինի դարձեալ, զի գէթ վայրիկ մի դուլ արար ցաւոցն և սփոփանս ախտացելոցն։

ԼՀա բժիշկն իմաստասէր՝ զոր Խպոկրատ ՚ՁՀ նմանեցուցանէ, զանձին իւրոյ յանգէտս ցուցեալ այնու զնկարագիր։ ԼՀրք բազմահանճարք, գերազանցուն հանճարոյ նորա խելամուտք, լուայ բազում անգամ զի ասէին՝ թէ մինչև 'ի սպառ մեծարեսցի նա 'ի բժշկայ որպէս նախասկիզբն և ճարտարագոյն օրէնսդիր նոցա, և զի վարդապետութիւն նորա ընդունելի լեալ առ ամենայն ազգս՝ գործեսցէ բիւրս բիւրուց բժշկութեանց ընդ բազմահոլով պարագայս դարուց[2]։ Լթէ գուշակութիւնս այս լցցի, ինքնակալութիւնք լայնատարածք ոչ հաւասարեսցեն ընդ փառս անձուկ կղզւոյն՝ որ ետ զայրն օգտակարագոյն մարդկան, և յայլս իմաստնոց խոնարհեսցին անուանք աշխարհակալաց հզօրաց առաջի անուանն Խպոկրատայ։

Լս շրջեալք ընդ ոմանս 'ի կղզեայս շուրջանակի մերձ 'ի Կոս, դէմ եդաք 'ի Կամոս։

1 Խպոկր. 'ի պատուէրսն, յօդ. 3 և 7. էջ 63 և 64։
2 Կելսոս, 'ի յառաջաբ. Պլին. գիրք Ի. գլ. 37. հա. 1. էջ 395։

# ԳԼՈՒԽ ՀԳ.

Նկարագիր Սամոս կղզւոյ, և վասն Պոլիկրատեայ։

Ի ՄՈՒՏՍ նաւահանգստին Սամեայ Երևի յաջմէ հրուանդանն Պիստեայ, և մեհեան նորա կառուցեալ 'ի բարձու. և յահեկէ մեհեանն Հերայ, և շինուածք բազումք հոյակապք աստ անդ 'ի մէջ ծառոցն՝ որ 'ի գետեզերս Իմբրասեայ առնեն հովանի. և 'ի հանդիպոյ քաղաքն կառուցեալ, մնան նորա 'ի ծովեզրն, և մնան 'ի զաւվայր լերինն՝ որ ամբառնայ 'ի հիւսիսոյ[1]։

Ալեց հարիւր և ինն ասպարէզ շրջապատ է կղզւոյն[*]։ Դաց 'ի գինւոյ՝ ամենայն բերք երկրին ազնիւք են[2], և կաքաւուց և ազգի ազգի ոլոսոց վայրի գիւտք են անդ առատ[3]։ Լերինք ծածկեալք 'ի ծառոց և յանթառամ դալարւոյ, բղխեն 'ի ստորոտս իւրեանց կարկաջահոս աղբերս՝ որ արգասաւորեն զմերձակայ դաշտս[4]։

Ինման է քաղաքն այլ ամենայն քաղաքացն Յունաց և այլոց ազգաց, որ են 'ի մերձակայ ցամաք երկրին[5]։ Քաղաքացիքն փութացան

[1] Սարաբ. գիրք ԺԴ. էջ 637։

[*] Յեակոյս մատենիս 'ի սեղկուԹիւնն. Թիւ ԺՋ։

[2] Սարաբ. անդ։

[3] Թուրնըֆոր, ուղևոր. հտ. 1. էջ 412։

[4] Պլին. գիրք Ե. հտ. 1. էջ 287։ Թուրնըֆոր. անդ, էջ 414։

[5] Երոդոտ. գիրք Գ. ԳԼ. 139։

ցուցանել մեզ զՀրաշակերտս նորա, և կառեան աչք մեր 'ի զնին ջրմիին և ամբարտակի նաւա-հանգստին և մեհենին Հերայ։

Ուր ինչ հեռի 'ի պարսպացն ընդ հիւսիսի է քարանձաւ հատեալ կողմանէ 'ի կողին լերին, ձեռագործ մարդկան երկայնութիւն անձաւին եօթն ասպարէզ, և բարձրութիւն նորա հաւասար լայնութեանն՝ ութ ոտնաչափ. և ընդ ամենայն երկայնութիւն նորա ձոր հատեալ երեք ոտնաչափ 'ի լայնութիւն, և քսան կանգուն 'ի խորութիւն*։ Լոտղովակք զետեղեալք 'ի խորս ձորակին ածեն 'ի Սամոս զջուր յառատահոս աղբերէ, որ 'ի թիկանց լերինն բղխէ[1]։

Ամբարտակն է թումբ ամբարձեալ առ 'ի պատսպարել զնաւահանգիստն և զնաւս 'ի հարաւային մրրկալից հողմոց. բարձրութիւն նորա իբր քսան զրկաչափ, իսկ երկայնութիւն աւելի քան զերկուս ասպարէզս[2]։

Յաջմէ քաղաքին յարուարձանս է մեհեանն Հերայ, կառուցեալ որպէս ունին զրոյցք՝ առ ժամանակօք տրովական մարտին[3], և 'ի յետին ժա-

* Երևի քարանձաւս այս գործեալ 'ի սկզբանէ յարաւելեա ճանապարհն. և ապա առ 'ի բերել 'ի Սամոս ջուր յաղբերէն՝ որ խոնարհագոյն քան զանձաւն բղխէր. յօգուտ արկեալ մարդկան զառաջնոցն վաստակ, և զձորակն ևեթ հատեալ 'ի նմա, զորմէ քանքս են։

1 Երոդոտ. գիրք Դ. գլ. 60։ Թուրնբիոր. ուղևոր. հտ. 1. էջ 419։

2 Երոդոտ. անդ։

3 Պաւսան. գիրք Է. գլ. 4. էջ 530։

մանակս վերստին 'ի Հռեկեայ դորայի կարգաւ Ճարտարապետեալ'։ Ել ուրեք մեհեան ընդարձակագոյն քան զայն տեսի[2]. այլ գտանին հոյակապք քան զայն*։ Ել ինչ հեռի 'ի ծովէ կառուցեալ կայ յերզը Իմբրասեայ գետոյ, 'ի տեղւոջէ յորում աստուածուհին ետես զլոյս. զի անդ զնը-մանէ ասեն ծնեալ ընդ միով 'ի հաղնեացն, որ բազում յոյժ են առ գետեզերբն։ Մեհեանս այս անուանի և մեծարեալ յոյժ, յամենայն ժամանակի եղև ապաստան յանցաւորաց անբըն-նադատելի[3]։

Ի պատկերն Հերայ տեսաք զնախկին վարժս քանդակագործութեան. զի է այն ձեռագործ Օ միղեայ, միոյ 'ի հնագունից Ճարտարաց Եղա-դայ[4]։ Բուրմն որ առաջնորդէրն մեզ, ասէ. Կանուխ ժամանակաւ գերան մի փոքրիկ 'ի սուրբ տեղիս յայսոսիկ պաշտեր 'ի սամեցւոց[5]. և եմ իսկ ուրեք յայնժամ կոձեղք ծառոց կամ վէմք քառակուսիկ և կոնաձևք յանդիման առնէին զդիս[6]։ Պատկերք այսպիսիք անկերպարանք կան

1 Վիտրուվ. յառաջաբ. գիրք Ի. էջ 124։

2 Երոդոտ. գիրք Գ. գլ. 60։

* Կան մինչև ցայժմ աւերակք միոյ 'ի մեհենաց 'ի Սամոս, այլ երևին անհետ լեալ աւանդեալքն Յերոդոտեայ։ Տես 'ի Թուրնըֆոր ուղևոր. հտ. 1. էջ 422։ Փոքրք. գիտող. հտ. 2. մասն 2. էջ 27։

3 Կիկերո. 'ի Վերր. արար. 2. գիրք Ա. գլ. 19. հտ. 4. էջ 165։ Տակիտ. տարեգր. գիրք Դ. գլ. 14։

4 Պաւսան. գիրք Է. գլ. 4. էջ 531։

5 Կաղլիմ. առ Եւսեբ. 'ի պատարագ. աւետ. գիրք Գ. գլ. 8. էջ 99։

6 Տակիտ. պատմ. գիրք Բ. գլ. 3։ Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579։

իսկ ցարդ, և մեծարին բազում ուրեք 'ի նախնի և յարդի մեհեանս, սպասաւորեալք 'ի պաշտօնէից տգիտաց հանդոյն սկիւթացւոց վայրենեաց՝ որք պաշտեն զսուսեր։

Իսկ իմ թէպէտ և յոյժ ընդ յարացոյցն զայրացեալ, հեղուլեամբ ասեմ. Զյլ կոձեղք ծառոց և վէմք ոչ ուրեք ինքեանք պաշտեցան, այլ ըստ կամի կանգնեալ նշանակք՝ առ որովք ժողովէր ազգն ուղերձել զուխտս իւր դից։ Զուրմն ասէ. Զի այդ բաւական, այլ պարտ է երևելն ոչ մարմնաւորս ըստ մեզ՝ այլ 'ի վեհափառ և յահաւորագոյն կերպարանս։ Ցէս քանի մեծարանօք երկրպագին պատկերք ողխմպեանն Զրամազդայ և աթենականին Զթենասայ։ Զրկնեալ անդրէն ասեմ. Զե ընդէ՞ր առաւել մեծարիցին, բայց զի ոսկւով պատեալ էն և փղոսկերք։ Պարտ էր ձեզ 'ի ձևացուցանել զդիսն մերակերպ՝ հնարել ամբառնալ 'ի վեր զմիտս երկրպագուաց. իսկ դուք զզայութիւնս նոցա զօշոտէք. նմին իրի և պաշտօն նոցա ըստ գեղջ, ըստ մեծութեան և ըստ ձոխութեան պաշտելեացն սահմանի։ Զթէ գեղաշարդեալ էր քո զպատկերդ զայդ Հերայ, թէպէտ և զանհարթ, տեսանէիր քանի յաձախէին դմա նուէրք։ Զե քուրմն ասի 'ի բերան եղև։

Զպա հարցաք զնա զերկուց սիրամարգացն պղնձեաց որ առ ոտս դրօշելոյն կային [1], և ասէ.

1 Ի դրօշմածս սամոսատեան։

Լիսորժելի է հաւուցս բնակել 'ի Սամոս, նմին իրի և նուիրեալք էն Հերայ, և 'ի դրսամ յարդունս տպաւորեալք՝ որք աստի տարածեցան Յելլադա[1]։ Հարցաք զնա և ասեմք. Օ՞ինչ է արկղդ այդ, յորում Թուփդ ամբառնայ[2]։

Ասուրն ասէ. Սա է հաղնին, որոյն լեալ աստուածուհւոյն. դալարագեղ զսա տեսանէք, այլ ծերագոյն է քան զձիթենին որ Լեթէնս, քան զարմաւենին որ 'ի Դեղոս, քան զկաղնին որ 'ի Դոդոնէ, քան զձիթենին վայրենի որ յԱղիմպիա, քան զսօսն ձեռատունկ Լգամեմնեայ 'ի Դեղիս[3], և քան զամենայն ծառս դիցանուէրս՝ որ 'ի բազմանհոլով դարուց պահին յայլ և այլ մեհեանս[4]։

Լաւ հարցաք՝ թէ ընդէր աստուածուհին զգեցեալ էր հանդերձ հարսանեաց, և ասէ. Օ՞ի աստ 'ի Սամոս հարսնացաւ նա Լբամանդրայ. որ անտի իսկ յայտ է, զի մինչև ցայժմ կատարեմք զտարեկան հարսանեաց նոցա[5]։ Սորատոնիկոս ասէ. Օ՞այդ և կնոսացիք կատարեն 'ի Կրետէ. և քուրմք սոսացին ցիս, անդ յեզը Լմե-

1 Ընդ Ալիսիան. և Մենոդ. առ Ալթեն. գիրք ԺԴ. գլ. 20. էջ 655։

2 Ի դրոշմածն Գորգիա. նոսի 'ի Թանգարանն ազգային։

3 Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 14։ Պլին. գիրք ԺԶ. գլ. 44. հմ. 2. էջ 40։ Պաւսանի. գիրք Ը. գլ. 23. էջ 643։

4 Ի ծառոյն որ 'ի Սամոս՝ համարձակիմ գուշակել, զի և այլքն առ հասարակ յարկեղս անկեալ էին։ Ի դրոշմածն 'ի վեր այսր նշանակեալ՝ տպաւորի անկեալ յարկեղ յասոլոնեանս բակի մեհենին։

5 Վարր. առ Լակտանտիոյ. մեռոնապաշտ. գիրք Ա. գլ. 17. հմ. 1. էջ 75։

բոն գետոյ զՀարսանիս նոցա լեալ։ Լաւ քրմուհիք արդիացիք, գիտասջիր զի նոքա հնարին յապիշտակել 'ի սամեցւոցդ զսարծանս ծննդեանն աստուածուհւոյն[1], ոչ այլք 'ի քաղաքաց վիճին ընդ միմեանս զխանձարրոց Աբրամազդայ[2]։ Լաւ եթէ երգել առաջի կայր քնարիս իմում զծնունդ նոցա կամ զՀարսանիս, հասանէին ինձ վարանք։ Ասուրին ասէ. Լաւ ընդէր էր վարանել, ըստ աւանդումն երկրին անկ էր քեզ երգել. չէ իսկ քերթողաց երկիւղածութիւն այդքան։ Իսկ ես ասեմ. Աչալ պաշտօնէից բաղնին երկիւղածագոյնս պարտ էր գոլ. տգիտութեան է բերել կարծիս անիրաւս և անտեղիս, իսկ ընդդիմաբանս և անհանգէտս իրերաց՝ այս խօթամտութեան իսկ է։ Լաւ այնուհետև չիցէ օրէն եպերել զսկիւթացիս, զի երկրպագէն սուսերի։

Ասուրին ասէ. Լաւի ինձ եթէ խելամուտ լիցես դու հանձարոյ, յայտնեցից քեզ զգաղտնիս մեր։ Յորժամ ծննդեանն դիցն ձառուիք, իմանամք զմուտս պաշտաման նոցա ուրեք լեալ. և Հարսանեաքն նոցա զժամանակն՝ յորում պաշտօն ուրուք 'ի դիցն ընդ այլում կցորդեցաւ[3]։ Սորատոնիկոս ասէ. Լաւ զինչ մանրամասն նոցա իմանայցէք, քանզի տեսի ես զշիրիմ Աբրամազդայ 'ի Արեւեալ[4]։

1 Սորաբ. գիրք Թ. էջ 413։ 2 Պաւսան. գիրք Դ. գլ. 33. էջ 361։ 3 Երոդոտ. գիրք Բ. գլ. 146։ Յիշատ. բանաս. կամ. Ճառ. հա. 18. էջ 17։ 4 Կիկերո. յղ. բն. գից. գիրք Գ. գլ. 21. հա. 2. էջ 504։ Ուրոգեն. ընդդ. Կելս. գիրք Գ. հա. 1. էջ 475։

Բուրմն ասէ. Յայլ ինչ ապաստանիմք իմաստ. իբր զի երևին երբեմն դիք ըստ մերումն կերպի, և կացեալ առ ժամանակ մի ընդ մարդկան՝ պա-ռուսցանելոյ զնոսա, ապա անտես լեալ՝ դառ-նան յերկինս[1]. և զի 'ի Պրետէ յաձախէին եր-բեմն ինքանել, և անտի անցեալ շրջէին ընդ եր-կիր[2]։ Այլ իբրև ոչ դադարէաք 'ի ստիպելոյ զնա, խոյս ետ իմաստութեամբ։

Հայեցեալ ապա տեսաք բազմութիւն ան-դրեաց, որ կային շուրջ զմեհենատն. և զարմա-ցեալ կայաք 'ի զնին երից հսկայաձև անդրեաց դրօշելոց 'ի գերարհուչակն Միւռոնէ[3], որք 'ի միում խարսխի կային՝ բերելով զպատկեր Բրա-մազդայ Աթենատայ և Հերակղեայ*։ Տեսաք և զպատկեր Պլոդոնի, ձեռագործ Ճարտարացն Տելեկղեայ և Թէոդորի, որք Այգիպտոս նա-խակրթեալ 'ի վարժս արուեստին, ուստն 'ի վարժապետաց իւրեանց՝ 'ի մի ինչ վաստակել երկուց։ Տելեկղէս կայր 'ի Սամոս, և Թէոդոր Այգիպտոս. միաբանեալ նոցա զչափուց համա-մնտութեան պատկերին, մին զվերին մասն նորա յանձն էառ, և միւսն զստորին։ Եւ ապա այնպէս քաջայարմար առ միմեանս պատշաճեցան երկաւ-

[1] Դիոգ. գիրք Ա. էջ 20։ Ցիշատ. բանտ. կամառ. հատ. 36. էջ 292։

[2] Դիոգ. գիրք Ե. էջ 344։

[3] Սարաք. գիրք ԺԴ. էջ 637։

* Մարկոս Անտոնիոս ետ ածել զնոսա 'ի Հռոմ. և յետ ժամանակաց ինչ Օգոստոս զերկուս 'ի նոցանէ յղեաց 'ի Սամոս. պահեալ զԱբրամազդայն։ (Սարաք. գիրք ԺԴ. էջ 637։)

քանչիւրոյն ձեռագործք, զի միոյ ուրուք թուէր գործ[1]։ Բայլ խոստովանելի է, զի պատկերս այս ըստ Հիգրիտ համեմատութեանն քան ըստ գեղեցկութեան մասանցն իւրաքանչիւր էր գովելի, չև ևս յայնժամ արուեստին քանդակագործութեան բաւականապէս զարգացեալ։

Սամեցին, որ պատմեաց մեզ զհանգամանս զայս չև ևս յականջալուր եկեալ, յաւել. Ի վերջկոյս պեղոպոնեսական մարտին՝ Բ.ելկիբիադեայ երթևեկելով ընաւատորմին աթենացւոց մերձ 'ի ծովեզերս մեր, կուսակից եղև ժողովրդեան. և ժողովուրդն կանգնեաց նմա զանդրիս զայս, զոր տեսանէք[2]։ Յետ սակաւ ժամանակի Լիսանդր զօրավար նաւատորմին սպարտացւոց կալեալ զՍամոս, հաստատեաց անդրէն զիշխանութիւն մեծատանց. և սոքա յողնմպիական մեհենին կանգնեցին նմա պատկեր[3]։ Բայց երկոքին զօրավարքն աթենացւոց Կոնոն և Տիմոթէոս հասին հզօրագոյն զօրութեամբ, և ահա պատկերքն նոցա կանգնեալք 'ի ժողովրդենէ[4]։ Իսկ 'ի տեղւոջդ զոր պատրաստեմք, կանգնեացի պատկեր Փիլիպպեայ յառնուլն զկրզիս զայս։ Մնչել պարտ էր մեզ ընդ վատութիւն մեր, այլ բնակչաց ամենայն կղզեացս շուրջանակի, և յոլովագունից յազգացն Յունաց բնակե-

1 Դիոդ. գիրք Ա. էջ 83։
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 3. էջ 460։
3 Պլուտ. 'ի Լիս. հա. 1.
էջ 440։ Պաւսան. անդ. էջ 459։
4 Պաւսան. անդ. էջ 460։

լոց 'ի ցամաքի, և աթենացւոց իսկ հասալակաց են արդ նախատինքս այս։ Լսելութիւնն որ է կաց միտ ընդ մեծատունս և ընդ աղքատս, եղծ յամենեսին զիմաստս պատուոյ և առաքինութեան։ Լս վախճանեալ զբանս իւր, ասէ. Լզգիր որ ընդ ամն երկերիւր սպառեաց զարիւն իւր և զգանձս առ 'ի ստանալ վայրկ մի զաղատութի ծանր քան զծառայութիւն՝ ներելի է խնդրել զհանգիստ իւր, մանաւանդ ուր յաղթողն աւելի ինչ քան զարծաթ և քան զանդրի չպահանջիցէ։

Սամեցիք փարթամագոյնք են և հզօրագոյնք քան զամենայն ժողովուրդս միաբանեալս 'ի յունիականնիզակացութիւնն[1]։ Հանձարեղք դարձեալ և հնարագէտք են և ժիրք. որով վէպք նոցա յաւելուն բազում ինչ ցանկալի և կարևոր 'ի պատմութիւնս բանասիրութե և արուեստից և վաճառականութեան։ Ընդ արս ականաւորս ոչք կացին 'ի Սամոս, 'ի դէպ է յիշատակել և զԿրէոփիզ. այն՝ որում Հոմերոս ընդարհապարտ գտաւ, ժողովեալ 'ի նմանէ 'ի կարօտութեանն՝ որպէս պատմեն. և որում ընդարհապարտ գտանին յետինք, զի նա զՀոմերական գիրսն պահեաց մեզ[2]. և զՊիւթագոր դարձեալ 'ի դէպ է յիշատակել, որ և զգերապանծ դարուց և զմեծաս

[1] Պլուտ. 'ի Պերիկլ. հտ. 1. էջ 167։

[2] Սորաբ. գիրք ԺԴ. էջ 638։ Կալլիմ. հտ. 1. էջ 188։

զոր ինքնակալութեանց բաւական է յաձախել զպայծառութիւն։ Օ հետ սորա, այլ յոյժ ստորև քան զսա, դասեմ զերկոսին ժամանակակիցս նորա զՀռոմոս և զԼովոդոր անդրիադրծս՝ ձարտարս ըստ այնմ ժամանակի. որք ոչ միայն զկանոն և զհարթաչափ և զայլ պիտանի գործիս ածին 'ի կատարումն[1], այլ և պատկերս երկաթիս հնարեցան դարբնել, և նորագիւտ ձարտարեցին հնարս 'ի ձուլել զպատկերս պղնձիս[2]։

Լրկիր Սամոսի ոչ միայն առ 'ի բժշկութիւն յատուկ բերովքն է պիտանացու[3], այլ և լմեալ ընդ ձեռամբ բրտին՝ կազմի անօթ ցանկալի ընդ ամենայն երկիր[4]։

Սամեցիք վաղ 'ի նաւատականութիւն պարապեցին, և բնակութիւն իսկ կալան երբեմն 'ի վերնագաւառս Լգիպտոսի[5]։ Յառաջ քան զամն իրբ երեքարիւր, մի 'ի վաճառական նաւաց նոցա՝ որ գնայր Լգիպտոս՝ վարեցաւ 'ի մերկաց անդր քան զՀերակղեայ արձանսն 'ի Տարտեսոս կղզի մերձ 'ի ծովեզերս Լբերիոյ, որ մինչև ցայնժամ անծանօթ էր Յունաց։ Ասկի առատ էր 'ի կրզզւոջն, և բնակչացն ոչ գիտէրով զյարգ նորա՝ շռայլեցին զայն հիւրոցն. որք փոխանակ վաճա-

1 Պլին. գիրք Է. գլ. 56. հտ. 1. էջ 414։
2 Պաւսան. գիրք Ը. գլ. 14. էջ 129։ Պլին. գիրք ԼԷ. գլ. 12. հտ. 2. էջ 710։
3 Պլին. անդ. էջ 711։
4 Կիկերո. 'ի Մուր. գլ. 36. հտ. 2. էջ 233։ Պլին. անդ։
5 Երոդոտ. գիրք. Գ. գլ. 26։

ռաց ածին 'ի Հայրենիս Իսրեանց գանձս իբր վաթսուն քանքար, որ ըստ այնմ ժամանակի կարի ինն էր, և դժուարին 'ի գանձել 'ի կողմն ուրեք Յունաց։ Հանաւ անտի տասանորդ 'ի նուէր մեհենին Հերայ խառնարան մեծ պղնձի, որ կայ ցարդ։ Ի շրթունս նորա քանդակեալ կան առ 'ի զարդ գլուխք կորձից, և ամբառնան զայն անդրիկ երեք հսկայաձևք 'ի գուռն, դրօշեալք ըստ եօթնկանգնեան բարձրութեան, անդստին 'ի նմին նիւթոյ պղնձիք։

Ել դադարեաց Սամս և յետոյ կրթել 'ի նաւաստականութիւն, և յաձախել զլօրութիւն իւր ընդ ծով։ Տրմիզք նաւաց ահարկուք չու արարին յաձախ 'ի նաւահանգստից նորա, և պահ կալան ազատութեան նորա առ ժամանակ մի ընդդէմ ձգանցն Պարսից և պետութեանց Յունաց՝ որք ցանկային նուաճել զնա[2]։ Ել հերձուածք ստէպ 'ի նոսա անկեալ, յետ ընդ երկար վրդովմանց՝ կատարեցան 'ի հաստատուն բռնակալութեան. և այս են անցք աւուրցն Պողիկրատեայ։

Պողիկրատ աջողութիւնս մնաց մեծամեծս 'ի բնութենէ ընկալեալ, և գանձս բազումս 'ի հօրէն իւրմէ յԱկեայ ժառանգեաց։ Ակեայ զգեղարդոյն իշխանութիւն յափշտակեալ, և որդի ներեդ 'ի մոի յինքն զրաւել զայն[3]։ Յայտնեաց

[1] Երոդոտ. գիրք Ե. գլ. 152։

[2] Սուրբ. գիրք ԺԴ. էջ 637։ Պլուտ. առակ. լակոն. հա. 1. էջ 232։

[3] Երոդոտ. գիրք Գ. գլ. 39։

նա զխորհուրդս իւր երկոցունց եղբարց իւրոց, և նոքա միաբանեալք նմա 'ի չարիս գործի եղեն նմա։ Յաւուր յորում տնէր Հերայ կատարին, համախուռնք նոցա դարանեալք յիւրաքանչիւր յանձնեալ պարսն՝ կէսք յարձակեցան 'ի վերայ սամեցւոց խռնելոց շուրջ զմեհենաւ աստուածուհւոյն՝ և սպանին 'ի նոցանէ զբազումս. և կէսք տիրեալ միջնաբերդին, զդէմ կալան օդնականութեամբ զօրաց՝ զորս Լիդդամիս բռնաւորն 'Լաքսեայ յղեաց նոցա։ Լաժանեցաւ կղզին յերեսին եղբարս, և ապա վաղ կալաւ զայն բռնադակ Պողիկրատ, զմի յեղբարցն դատապարտեալ 'ի մահ, և զմիւսն յաքսոր[2]։

Հնարքն, որովք Պողիկրատ յետ բռնակալութեանն վարեցաւ, այսոքիկ եղեն։ Զբ 'ի հնազանդութեան ունել զժողովուրդն՝ մերթ տօնս և տեսարանս[3], և մերթ զբռնութիւն և զանգթութիւն[4] 'ի կիր արկանէր։ Ունայր նմա պարապ խոկալոյ յաղէտս իւր, ածելով զնա 'ի գերապանծ աշխարհակալութիւնս. և ոչ յիշելոյ զզօրութիւն իւր, վարելով զնա յաշխատութիւնս ծանուցս[5]։

1 Պողիեն. 'ի մարթանան, գիրք Ա· գլ· 23։
2 Երոդոտ. գիրք Գ· գլ· 39։
3 Ամեն. գիրք ԺԲ· գլ· 10· էջ 541։
4 Դիոդ· գիրք Ա· էջ 85։
5 Արիստոտ· յդ· հաս· գիրք Ե· գլ· 11· հտ· 2· էջ 407։

* Արիստոտէլ ասէ թէ միահեծան պետութիւնք վարեն զժողովուրդն 'ի գործ աշխարհին, առ 'ի հնազանդութեան ունել զնա· և ընդ այլ օրինակս ածէ զՊողիկրատայն, և զմագաւորացն Եգիպտացւոց՝ որք զբրդունան եառուն կառուցանել։

Յինքն գրաւէր զգանձս աշխարհին[1], էր զի և զԺառանգութիս իւրաքանչիւրոց։ Ոչ էր զնուրև թիկնապահս, և գունդս այլազգի զօրաց[2]. և առ կասկած վտանգի ամենայր 'ի միջնաբերդն։ Պատրէր զմարդիկ, և դրժէր ուխտից կարի իսկ անլուծանելեաց[3]։ Որպէս զի զպատմութիւն տիրապետութեան նորա մարթէր մակագրել ա-լուեստ բռնաւորական տեսչութեան։

Պանձուցն յոլովութեամբ բաւական եղև 'ի սպառազինել հարիւր նաւս պատերազմիկս, ո-րովք տիրեաց ընդ ծով, և հնազանդեցան նմա բազումք 'ի կղզեաց շուրջանակի և 'ի քաղաքաց բնակելոց 'ի ցամաքի[4]։ Օրավարացն իւրոց պա-տուէր տուեալ էր ածել առ ինքն ոչ միայն զա-ւար թշնամեաց, այլ և զկողոպուտ բարեկամաց. որպէս զի խնդրեալ նոցա 'ի նմանէ զայնոսիկ, ընկալցին 'ի ձեռաց նորա որպէս առհաւատչեայ սիրոյ և գթութեան, և որպէս պարգևս յառա-տութենէ նորա[5]։

Ի ժամանակի խաղաղութե՛ բնակիչք կղզւոյն խառն ընդ գերեալս 'ի պատերազմի կամ ուրոյն վաստակեալ, յաւելուին զամրութիւնս մայրա-քաղաքին, փոսս զպարսպօքն հատանէին՝ և կան-

1 Երոդոտ. գիրք Գ. ԳԼ. 142։

2 Նոյն անդ. գլ. 39։

3 Պլուտ. 'ի Լիս. հա. 1. էջ 437։

4 Երոդոտ. անդ. գլ. 39 և 122։

5 Նոյն անդ. գլ. 39։ Պոլիէն. 'ի մարթանան. գիրք Ա. ԳԼ. 23։

գնեին 'ի նեղքս 'ի քաղաքին զձեռակերտս՝ որովք զարդարի Սամոս, որոց վերակացու եղեն Ճարտարք՝ հրաւիրեալք անդր 'ի Պողիկրատեայ առաստաձեռն վարձուք՝։

'Այս և 'ի բարգաւաճութիւն բանասիրութեան փոյթ կալեալ, ձգեաց առ ինքն զպարապեալս 'ի նոյն, և ժողովեաց 'ի մատենադարան իւր զընտիր ընտիր արդասիս մարդկեղէն հանճարոյ՝։ Զոր էր տեսանել յայտ յանդիման զիմաստասիրութիւն ընդ քերթութեան 'ի դիմի հարեալ· զի ուստի Պիւթագոր չհանդուրժեալ 'ի տեսիլ գոռոզ բռնաւորին՝ խոյս տայր 'ի նուաճեալ հայրենեացն՝, Զնակրեոն ածէր անդր 'ի Սամոս զհաճոյս և զզրգանս։ Այգիտ նա անդէն շնորհս առաջի բռնաւորին՝, և պանծացոյց զնա 'ի քնար իւր՝ զեղմամբ խանդիոյ՝ որպէս զառաքինագոյն ոք 'ի թագաւորաց նուագելով։

Պողիկրատ խորհեցաւ բազմացուցանել 'ի տերութեան իւրում զաղնուագոյն սեռս ընտանի կենդանեաց, և ետ ածել շունս Լակիրոսէ և 'ի Սպարտայ, խոզեան 'ի Սիկիլիոյ, այծս 'ի Սկիրոսէ և 'ի Լաքսեայ, և խաշինս 'ի Մ'իլետեայ և

1 Ա.թենն· գիրք ԺԲ· գլ· 10· էջ 540։

2 Նոյն· գիրք Ա· էջ 3։

3 Արիստոքս, առ Պորփիւր· յղ· վարուց Պիւթագոր· էջ 13։ Յամբղիկ· յղ· վարուց Պիւթագոր· գլ· 2· էջ 8։

4 Երոդոտ· գիրք Ա· գլ· 121։ Եղեան· զան· պատմ· գիրք Թ· գլ· 4· գիրք ԺԲ· գլ· 25։

5 Սարաբ· գիրք ԺԴ· էջ 638։

ՄԹԵՆԱՅ[1]։ Մայլ զի առ 'ի ցոյցս ևեթ առներ զուղղութիւն, եմոյծ և զզեղխութի և զասիա-կան զեղծմունս 'ի ժողովուրդ իւր։ Պիտելով զի 'ի Պարգիս մայրաքաղաք Լիւդիոյ կանայք ոմանք ընտիրք գեղով 'ի մի վայր ժողովեալ՝ պարապեին 'ի գիւտս համադամոց և ամենայն ազգի ազգի փափկութեանց[2], զնոյն ժողով և 'ի Սամոս հաստատեաց. և ծաղկունք սամոսականք հանգոյն լիւդականացն եղեն հռչակաւորք։ Օր այսպէս կոչէին ժողովքն այնոքիկ, յորս երկաքանչիւր սեռք մանկտւոյն 'ի տուրևառս վարժիլ անհամեստութեամբ պարապեին զտիւ և զգիշեր 'ի խնջոյս և 'ի զեղխութիւնս։ Ցարաձեցաւ ապականութիւն 'ի քաղաքացիս առ հասարակ, և եղև աղիտաբեր յետնոց նոցա։ Այս զիւտից չարեացն ասեն ա-ծանցեալ տակաւ 'ի սամեցւոց առ ամենայն ազգս Յունաց, և ամենայն ուրեք եղծեալ զամբծութիւն բարուց[3]։

Այս 'ի բողոքել բազմաց 'ի քնակչաց կղզւոյն զվնասակար նորաձևութեանցն, եհան զնոսա Պողիկրատ 'ի նաւատորմն՝ որ երթայր գումարել ընդ զօրս Կամբիւսեայ արքային Պարսից դիմեալս Այգիպտոս։ Յուսայր բռնաւորն կորընչել նոցա 'ի մարտի, կամ Կամբիւսեայ արգե-

1 Կղէիս. և Ղէքս. առ ԱԹԵՆ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 540։

2 ԱԹԵՆ. գիրք ԺԲ. գլ. 12. էջ 545։

3 Հերակղ. ԱԹԵՆ. գիրք ԺԲ. գլ. 4. էջ 525։ Կղէարք. առ Նմին, գիրք ԺԲ. գլ. 10. էջ 540։

լուլ զնոսա 'ի զօրս իւր մինչև 'ի սպառ։ Ոչ՝ քա իրազեկ լեալ, խորհուրդ կալան կանխել աղա-տել զՀայրենիս իւրեանց յամօթալից ծառայու-թենէն. և փոխանակն աւելոյ Յոգիպտոս, դարձան անդր 'ի Սամոս 'ի պատերազմ. այլ վանե-ցան 'ի բաց։ Յետ ոչ բազում ժամանակի ան-դրէն երևեցան հանդերձ զօրօք սպարտացւոց և կորնթացւոց, և ոչ առաւել քան զառաջինն յա-ջողեաց նոցա մարտն[1]։

Պողիկրատեայ ամենայն իղձքն թուէին լը-ցեալ. ամի ամի, և գրեթէ յամենայն պատերազ-մունս կանգնէր յաղթութիւն[2]։ Յոտղովուրդք որ ընդ նոսաւ՝ ընդելանէին ընդ լուծն, և բա-ղբեբաստութիւն իւրեանց համարէին զյաղթու-թիւնս բռնաւորին և զպերճութիւն և զշինուածս հոյակապս կանգնեալս 'ի նմանէ տուժիւք իւ-րեանց։ Պատկերք մեծութեան յարեցուցանէին զնոսա յիշխեցողն իւրեանց, և 'ի մուտացոնս ար-կանէին զոձիր եղջերաստանութեանն նորա, զան-օրէնութիւն յափշտակութեանն, զանգթու-թիւնս և զուխտազանցութիւնս նորա։ Իսկ ինքն Պողիկրատ ոչ ևս յիշէր զիմաստուն խրատս Մ-մասեայ արքային Եգիպտացւոց, ընդ որում զօ-գիս ասմնջականութեան կցորդէր՝ կացեալ ընդ նմա առ ժամանակ մի։ Յղեաց առ նա Մասիս, և ասէ. Յոյժ խիթալի են ինձ յաջողութիւնք

[1] Երոդոտ. գիրք Գ. գլ. 44։
[2] Վաղ. Մաքս. գիրք Ե. գլ. 9։

քո. սիրելեաց իմոց խառն ընդ ձախողակս ցան-
կամ բարիս, զի է զբ 'ի դից յաջողկոտ ընդ յա-
ղթատեակ բարեբաստութիւն մատչցուաց։ Լաւատ
տամ քեզ պատրաստել քեզէն վիշտս և արկածս
անձին քում ընդդէմ պարգևաց յամառեալ
բախտին։ Պողիկրատ խռովեալ 'ի բանից ոստի՝
խորհուրդ կալաւ յապահովել զբարօրութիւն
իւր, վայրկեակ մի զվիշտ յանձն առեալ։ Ցանկը
'ի ձեռին մատանի զմրուխտ յեռեալ յոսկի.
յորում Լաէոդորի, զորմէ 'ի վեր այսր եղէն մեզ
բանք, չգիտեմ զինչ 'ի նմա քանդակեալ էր*.
այլ պատուականագոյն յոյժ էր այն, որչափ զի
արուեստ քանդակելոյ 'ի գոհար ական չէ ևս
զարգացեալ էր առ Յոյնս։ Լչ նա յեռաթի,
նաւարկեաց 'ի խորս և արկ զմատանին 'ի ծով,
այլ յետ աւուրց դարձոյց նմա զայն մի 'ի սպայից,
գտեալ զայն 'ի փոր ձկան։ Փութացաւ Պողիկ-
րատ զեկոյց Ամասեայ զերսն. և նա յայտմհետէ
եղոյծ զբարեկամութիւն'։

Լրկիւղն յորմէ խիթայր Ամասիս, ոչ յա-
մեաց պատահել. զի մինչ դեռ Պողիկրատ խոր-
հէր նուաճել զՅոնիա և զկղզիս եգէական
ծովուն, մարզպետ սահմանակից կողմանցն՝ նա-
խարար արքային Պարսից՝ ձգեաց զնա հնարիւք
'ի սահմանս իւր. և չարատանջ մահու սպանեալ

* Յեռակոյս մատանիս 'ի տե-
զեկութիւնսն. թիւ ԺԷ։

1 Երոդոտ. գիրք Ա. դլ. 40։ Պլին. գիրք ԼԴ. դլ. 1.
հտ. 2. էջ 605։ Պաւսան.
գիրք Բ. դլ. 14. էջ 629։

զնա՝, եւ զդի նորա բեւեռել՝ ի փայտի՝ ի կա-
տար Մ՚ԻԿաղէայ լերին՝ դէմ յանդիման Սա-
մեայ*։

Յետ Պոլիկրատեայ մեռանելոյ զամենայն
ազգի ազգի բռնաւորութեանց զփորձ առին
բնակիչք կղզւոյն, զմիոյ ուրուք, զմեծատանց,
զռամկին, զՊարսից, եւ զպետութեանց Լիդ-
դայ. եւ ՚ի պատերազմունս սպարտացւոց ընդ ա-
թենացիս, մերթ ազնուաց եւ մերթ ռամկին զօ-
բանայր առ նոսա պետութիւն[3]։ Զմնուկ իւրա-
քանչիւր զմիոյ կողման յայդեցուցանէր զվրէժ-
խնդրութիւն, եւ զմիւսոյն պատրաստէր։ Զմե-
ծագոյն քաջութեան իւրեանց ցուցին զՀանդէս
՚ի հռչակաւոր պաշարմանն, որում ժուժկալեցին
զամիս ինն ընդդէմ միահամուռ զօրութեան
աթենացւոց՝ զորս գումարեաց Պերիկղէս՝ ի վե-
րայ նոցա։ Զխմակալութիւն նոցա եղև անխոս-
նարհելի, և տոյժք գրեթէ ոչ էս ստանալիք.
յանձն առին կործանել զպարիսպս իւրեանց,
տալ՝ ի դուրս զնաւս, յղել պատանդս, և տու-
ժել զամենայն վրէժակս մարտին[5]։ Պաշարօղք
և պաշարեալք ոչ ինչ ընդհատ՝ ի միմեանց հան-
դէս արարին անպթութեան իւրեանց ընդ գե-
ղեալս՝ ի մարտին. սամեցիք բու՝ ի Ձակասս նո-

1 Երոդոտ. գիրք Գ. գլ. 125։ Սարաք. գիրք ԺԴ. էջ 638։ Կեկեր. յղ. կասար. գիրք Ե. գլ. 30։ գիպի 522 ամք Ն. Ֆ։
2 Թուկիդ. գիրք Ը. գլ. 73։
3 Նոյն, գիրք Ա. գլ. 117։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 89։
* Մահ Պոլիկրատեայ հան-

ցա դիրամէին, և աթենացիք զցռուկ նաւու՝ *։

Յետ այսորիկ կանգնեցան նոքա, և դարձեալ անկան ընդ ձեռամբ սպարտացւոց՝ որք աքսորեցին զամենայն կուսակիցս պետութեան ռամկին [2]։ Լուսապա աթենացիք տիրեալ կղզւոյն, յառաջ քան զամս ինչ լարաբաժին արարին զերկիրն 'ի կալուածս երկու հազար, և բաշխեցին զայն վիճակաւ ժողովրդեան 'ի միջակութիւն [3]։ Լիսոկղէս 'ի թիւս ժառանգաւորացն էր, և եկն 'ի վիճակ իւր հանդերձ Վերեստրատեաւ կնաւ իւրով՝։ Որք թէպէտ և չէին մեծատունք, բռնադատեցին զմեզ ազատել անդ առ իւրեանս. և ինամքն նոցա և այլոց բնակչաց յամենցուցին զմեզ 'ի կրզզւոյն։

Մերթ անցեալք ընդ կիրճ ծովուն՝ որ բաժանէ ընդ կղզին և ընդ երկիր Ասիոյ, սթափեալք յորս էրէոց 'ի վերայ Միկաղէայ լերին [5]. և մերթ զբաղէալք 'ի ձկնորսութիւն առ ստորոտով լերինն, 'ի տեղւոջ հռչակաւոր յաղթութենէն Յունաց ընդդէմ նաւատորմին և բանակին Խսերքսեայ, որով խաղաղութիւն անշարժ Հելլադա հաստատեցաւ **։ Զ. ահս գիշերային բորբոքեալք

1 Պլուտ. 'ի Պերիկլ. հա. 1. էջ 166։

* Դրամք աթենացւոց գրեթէ առ հասարակ բերեն զպատկեր բուոյ, իսկ սամեցւոցն ցռուկ նաւու։

2 Պլուտ. 'ի Լիսս. հա. 1. էջ 440։

3 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 638։ Դիոդ. գիրք ԺԸ. էջ 563։ Քորսինի, տարեգր. ատտիկ. հա. 4. էջ 26։

4 Դիոդ. Լայերտ. գիրք ա. յօդ. 1։

5 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 636։

** Ն. Ք. 479 ամաւ։

և խարոյկս խիտ առ խիտ[1]. և բազմութեան ձրկանցն զիմաստ՝ի պայծառութիւն լուսոյն Ճառագայթեալ յալեաս, մերձենային՝ի նաւակս մեր, և ըմբռնէին՝ի ցանցս կամ՝ տեղւոյ տային զինուց։

Ընդ Սարատոնիկ զՀակատամարտն Միկաղեայ նուագէր քնարաւն, այլ խափանէին ստէպ զերգս նորա նաւավարքն մեր՝ յամառեալք՝ի պատմել մեզ զՀանգամանս Հակատամարտին։ Ամենեքեան՝ի միասին բարբառէին. և թէպէտ չէր մարթ՝ի մթան զիշերոյ տեսանել զվայրսն, ցուցանէին մեզ. և զձեռս մեր և զաչս ուղղէին այսր և անդր՝ի ծիր տեսութեան։ Ասա նաւատորմն Յունաց կայր, անդ Պարսիցն։ Յոյնք՝ի Սամեայ գային. և՝ի մօտել նոցա առ միմեանս, նաւք փիւնիկեցւոց դարձան՝ի փախուստ, և պարսիկք ամրացան ընդ հրուանդանաւդ առ մեհենաւն Դեմետրեայ՝ հանդէպ մեր[2]։ Յոյնք՝ի ծովեզերդ ինքեալ, պակուցեալ կային՝ի տեսիլ ամբաւաւ զօր գնդացն Պարսից և նիզակակցաց նոցա։ Տիգրան ոմն անուն զօրավարէր նոցա[3]. նա զգունդ մի սամեցւոց, որ զենուորէին ընդ նովաւ, կապտեաց՝ի զենուց[4] առ կասկած երկիւղն։ Ասի ամենայնքիք յարձակեցան, և սպարտացիք այտի[5]. առաւ քանակն, առաւելագոյնք՝ի խժիցն փախեան, այրեցան նաւք նոցա, ջրք բիւրք՝ի զօրացն սպա-

1 Պղատ. յիմատ. հտ. 1. էջ 220։
2 Երոդոտ. գիրք Թ. գլ. 97։
3 Նոյն անդ, գլ. 96։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 27։
4 Երոդոտ. անդ, գլ. 99։
5 Նոյն անդ, գլ. 102։

նան, և Տիգրան ընդ նոսա՝։ Սամեցիք ստիպե-
ցին զՅոյս հետամուտ լինել նաւատորմին Պար-
սից[2]. սամեցիք 'ի ժամ մարտին զէնս անդրէն
զլուսամբ ածեալ, անկան 'ի վերայ Պարսից[3]. և
սամեցիք դարձեալ, ետուն Յունաց զպայծառա-
գոյնն 'ի յաղթութեանց, կանգնեալ ընդդէմ
Պարսից։ Եւ զայս ամենայն պատմելով մեզ
Թիավարացն, կայթս հարեալ ոստնուին, զնոյ-
ըս իւրեանց 'ի վեր ընդ օդս ձգէին, և զաղա-
զակ ցնծութեան հարկանէին։

Այլոյ ազգի որսք են ձկանց։ Կէսք 'ի ձկնորսաց
կարթիւ որսան, 'ի ծաղ երկայն եղեգան կամ կար-
թնձողոյ կապեալ զձար, և 'ի ծայր ձարին Ճանկ
խայծիւ պատեալ[4]։ Այլք երկայրի կամ եռա-
սայր զինու հարկանեն զնոսա աջողակի, որ երեք-
արձէնն կամ երկժանի զէնքն այն կոչին։ Եւ
այլք դարձեալ արձոյլ և Թակարթ և ցանցս
պէսպէս 'ի կիր արկանեն[5]. 'ի քաղանցս կիսոց
գունդք կապարեալք կցեալ կան՝ որովք սուզա-
նին ստորոտք ցանցիցն 'ի խորս, և բեկորք անկոյ
'ի շրթունսն հաստատեալ՝ յերեսս ջուրցն 'ի վեր
ունին զնոսա[6]։

Ճանկալի յայժ Թուեցաւ մեզ տեսիլ որսոց

1 Երոդոտ. գիրք Թ. գլ. 102։
2 Նոյն անդ. գլ. 90։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 28։
3 Նոյն անդ։
4 Պղատ. յիմատս. հտ. 1. էջ 220։ Թէոկրիտ. 'ի գէղջնան
21. տող 11։ Պոլիտեկ. գիրք Ա. գլ. 9. յօդ. 97։
5 Պղատ. անդ։ Ոպպիան. յդ. ձկնորս. գիրք Գ. տող 72։
6 Պլինդ. պլիթ. 2. տող 146։

ձկան։ Ալուկան լայն և երկայն արկեալ կայր ընդ ծովեզերն. և կանխեցաք մեք ընդ առաւօտն 'ի տեղի անդր։ Որ ինչ դէռ խաղաղութեանն պատեալ էր զամենայն, և մի 'ի ձկնորսաց ընկողմանեալ 'ի մերձակայ վիմին՝ ' դէտային ունէր յալիսն Թափանցիկս, ետես երամակ մի դռնից՝ որքերեալ մեղմիկ ընդ խորշս ծովեզերն, մնա- նէր 'ի ԹակարԹն՝ ընդ բերան նորա Թողեալ առ 'ի մուտս։ Ա՝ աղվաղակի ազգ արարեալ որսա- կցայն, երկնդեցան կացին երկուստեք. և 'ի ձգել կիսոց զուռկանն, այլք Թիակօք զալիսն հարկա- նէին՝ որպէս զի մի բանտարգելքն փախչիցեն։ Խազում՝ յոյժ էր Թիւ ձկանցն ըմբռնելոց, և բազումք յայնցանէ մեծամեծք յոյժ. յորոց մի 'ի նոցանէ կշռեալ, գտաւ իբր հնգետասան տա- ղանդաց[3]։

Այլ շրջեալ առ ժամանակ մի ընդ ծովեզերն Ա- սիոյ, 'ի գառնանն մերում գտաք զԱՎՕԿՂԷՍ պա- տաղեալ 'ի պատրաստութիւն կոչնոց։ Որանզի Որերեստրատեայ էնոջ նորա ծնեալ էր նմա ա- ւուրբք յառաջ որդի մի, և այն ինչ անուն մանն- կանն էր եղեալ Այպիկուրոս[4]։ Այլ յաւուրսն

[1] Արիստոտ. յԱսպէտան, տող 313։ Պարապ. անգ։

[2] Աբբեսար. առ Ամէն. գիրք Է. էջ 301։ Արիստոտ. կենդանաբ. գիրք Ը. գլ. 30. հմ. 1. էջ 921։ Պլին. գիրք Թ. հմ. 1. էջ 505։

[3] Սա է անուանեալն Եպիկուրոս ծնեալ առ Սոսիպենեան իշխանաւ, (Դիոգ. Լայերտ. գիրք ժ. յոգ. 14.) յերրորդում ամի 109 ողիմպիադին, յեօթներորդում աւուր դա- մեղմնի, որ հանդիպի 'ի 11 յունուարի 341 ամին Ն. Փ։ Ի նմին ամի ծնաւ և Մենան- դրոս։

յայնոսիկ սովորութիւն է Յունաց տալ ընթրիս բարեկամաց իւրեանց. և բազմութիւն յոյժ էր կոչնականացն, և ես բազմեալ կայի յանկեան սեղանոյն, աստի կայր ինձ առընթեր աթենացի ոմն շատախօս, և անտի սամեցի ոք՝ որ չխօսէր բնաւ։

Ա. յլոց 'ի բազմակամաց թանձրանայր աղաղակ զրուցատրութեանցն. իսկ 'ի մերում անկեան զանաջինն տարտամ զրոյցք ինչ եղեն, և ապա բարձրապատումք և կարևորք։ Զգիտեմ՝ որպէս ճառք անկան զաշխարհէ և զմիաբանութէ մարդկան. և յետ բանից ինչ սովորականաց՝ հարցաւ սամեցին, և նա ասէ. Շատ համարիմ զՊիւթագորայն երկրորդել, զի նա զտեսարան աշխարհիս ոչ զնմանկականացն նմանեցուցանէր, յորս կէաք 'ի մրցումն, կէաք 'ի շահավաճառ և այլք 'ի զնին գնան[1]։ Օ. 'ի փառամոլք և աշխարհակալք ըմբիշք մեր են, և յորովք 'ի մարդկանէ փոխանակեն զժամանակ իւրեանց և զվաստակս ընդ ընչից. իսկ իմաստունք անխռով 'ի զնին կացեալ տեսանեն զամենայն և լռեն։

Այլ մինչ զեռ նա զայս ասէր, ուշ եդեալ հայէի 'ի դէմս նորա. զի էին երեսք նորա անժպիտք, և տարազ բանիցն զգօն և հանդարտ։ Այլ էր զգեցեալ հանդերձ սպիտակ և մաքուր[2]։ Ա-

1 Կիկերք. տուսկուլ. գիրք Ե. գլ. 3. հտ. 2. էջ 362։ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 8։ Յամբղիկ. վարք Պիւթագորայ։

2 Արիստոտ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 19։ գոր. գլ. 12. էջ 44։

տուցի նմա գինի և ձուկն, միս եզին և բակլայ, և հրաժարեաց յամենայնէ. զի ջուր ևեթ ըմպէր, և բանջար միայն առնոյր 'ի կերակուր։ Այս ասէ ցիս աթենացին յունկանէ. Դա 'ի պիւթագորեանցն է, և խստակրօն յոյժ։ Այս ապա ամբարձեալ զձայն իւր ասէ. Ոչ էր պարտ ուտել մեզ ձուկն, զի 'ի սկզբանէ ջրակենցաղք իբրև զձկունս էաք. այո, հարքն մեր ձկունք էին, չիք երկբայել ընդ այս, Անաքսիմանդրոս վկայէ[1]։ Հաւատք մարմնափոխութեան չթողացուցանեն ինձ լինել անխտիր 'ի կերակուրս, և խղճեմ իսկ թէ գուցէ մարդակեր գտայ 'ի ճաշակել 'ի մսոյ այտի։ Իսկ բակլայդ առաւելքան զամենայն գոյացութիւնս հաղորդ է կենդանակիր նիւթոյ, յորմէ հոգիք մեր յօղին[2]։ Օ՛ի եթէ զծաղիկս բուսոյդ՝ 'ի սկսանելն նոցա թխանալ՝ առեալ դիցես յանօթ, և թաղեսցես զայն ընդ երկրաւ, յետ հինգուն աւուրց 'ի բաց առեալ զխուփ անօթոյն՝ գտցես 'ի նմա գլուխ մանկան[3]։ Պիւթագոր զփոյձ իրացն էառ։

Այս ապա զքրքիջ բարձեալ՝ ծիծաղէր անհեթեթս 'ի վերայ սամեցւոյն. այլ նա լուռ ևեթ կայր։ Սեմ ցնա. Լուռն է քեզ 'ի դմանէ։ Այս նա ասէ. Գիտեմ և ես, այլ ոչ տաց նմա պատասխանի, զի յանիրաւութիւն համարեացին ինձ

1 Արիստոտել. առ Դիոգ. Ը. գնդ. 8. հտ. 2. էջ 730։ Լայերտ. գիրք Ը. յօդ. 20։
2 Պլուտ. խրախճ. գիրք յօդ. 24։
3 Դիոգ. Լայերտ. գիրք Ը.

արդ իրաւունք, և հերքել փաստաբանութեամբ զծաղը՝ ծաղու իրք են։ Լ.ՍԼ ընդ քեզ չիք ինձ վտանգ. քանզի ուսեալ 'ի Լեոկղեայ վասն որոյ իրաց 'ի տար աշխարհս ուղևորիսդ, գիտեմ զի սիրելի է քեզ ՀՀմարտութիւն, և ոչ հրաժարեցայց յասելոյ քեզ զայն։ Լու իմ յօժարեալ ընդ այն մտադիւրութեամբ, յետ ընթրեացն արբաբաք զզրուցատրութիւնս՝ զոր աւասիկ զոդեմ։

## ԳԻ ՅՈՒՍ ՀԵ.

*Զրուցատրութիւն Ամաքարսեայ ընդ սամեցւոյ ուսմանն զաղանդոյն Պիւթագորայ։*

Սամէին. Զհաւատայցես արդեաք թէ Պիւթագորայ իցեն առասպելքն, զոր իբրև 'ի նմանէ ՀՀառին։

Ամաքարսէս. Յոյժ իսկ զարմացեալ էի ընդ այն։ Ցեսանէի զայրն գերահանճար, զի մեծացուցանէր զազգ իւր գիտութեամբք այլոց ազգաց, և յերկրաչափութիւնն յաւելուր գիւտս՝ որ հանճարոյ ևեթ են արգասիք. և 'ի վարժարանն դարձեալ հայէի հաստատեալ 'ի նմանէ, ուսսի արք այնպիսիք մեծամեծք ելին։ Լ.ՍԼ հակառակ այսոցիկ տեսանէի զաշակերտսնորա յաՀախ 'ի տեսարանս գուսանաբար երևեալ, և յամառեալ 'ի ՀՀղՀիմ խտրանս՝ զորս պատՀառանօք մնոտու�ք և բռնազբօս այլաբանութեամբք հաստատէն։ Ինքեր.

ցայ զմատենագիրս ձեր, հարցի զպիւթագորեանս և ամենայն ուրեք գտի բարբառ առակաւոր և խորհրդաւորէն պարունակող բանից։ Հարցի զայլս իմաստասիրաց, և թուեցաւ ինձ Պիւթագոր երազագիտաց ոմանց աղանդապետ, վարդապետութիւնք նորա անիմանալիք, և խորանք անհասանելիք։

Սոմեցին. Պարժպհի նկարագիր։

Հարցաբան. Լուր մինչև 'ի սպառ զպատասխս իմ։ Մինչ էի ես 'ի Եմիսիս, գիտացի զաղբիւրն՝ ուստի վարժապետն ձեր զիմաստ օրէնս առեալ աւանդեաց ձեզ. քանզի քրմացն եգիպտացւոց յար և նման ձերոցդ են օրէնք։ Պիւթագոր ընկալաւ 'ի նոցանէ զայնոսիկ, ոչ ածեալ զմտաւ՝ զի պահեցողական կարգաց պարտ է ըստ նահանգաց և ըստ կրօնից պատշաձել։ Զրինակ իմն. Քուրմք եգիպտացւոց գարշին յոյժ 'ի բակլայէ, և ոչ ուրեք սերմանի այն Յունգիպտոս. և եթէ դիպեսցի նոցա յանկարծ ուրեք բոյսն այն, իբրև 'ի պղծոյ իմեքէ զաչս 'ի բաց դարձուցանեն։ Քրմացն պարտ իսկ էր, վասն ճնաստակարութեան ընդոյդ Յունգիպտոս, տարագրել զայն 'ի բաց. այլ Պիւթագորի ոչ էր պարտ նմանել նոցա, և առաւել զի պատճառս զգուշութեանն ածէն զնանրահաւատ կարծիսն։ Այլ նա աւանդեաց ձեզ զայն. և ոչ երբէք տեսարան այնպիսի աղետաւոր գործեցին խորանքն 'ի տեղւոջ սահմանադրութեան իւրեանց որպիսի առ մեօքս գործեցաւ։

Քանզի Դիոնեսիոս արքայ Սիրակուսայ ցանկացաւ խելամուտ լինել խորհրդոյ ձերոյ։ Հետազօտեցան պիւթագորականք 'ի սահմանս նորա, և ծածկեալ կային 'ի Թագստի։ Հրամայն ետ Թագաւորն ածել զայլս Յոտալիոյ. և գունդ զինուորաց հասեալ անդր, եգիտ տասն այր 'ի նոցանէ՝ որ գնային խաղաղութիւն 'ի Տարենտեայ ի Մետապոնտոս, և հետամուտ եղև նոցա որպէս երէց վայրի յորսս։ Նոքա առնապարեցին 'ի փախուստ. այլ 'ի տեսիլ անդոյ բակլայից, որ ընդ առաջ եղև նմ, զկայ առեալ՝ պահ կալան անձանց. և յանձն առին կորնչել 'ի սրոյ հալածչաց, քան պղծել զանձինս իւրեանց կոխելով զունդն անհպելի։ Օ՞ զրապետի զնդին սակաւիկ մի ետոյ 'ի վերայ հասեալ երկուց 'ի նոցանէ՝ որ ոչ կարացին ժամանել զհետ ընկերացն, կալաւ զնոսա։ Լսէին Սիլ լիաս և Կրոտոն, և կին նոր Տիմիքա սպարտուհի՝ որ յղի իսկ էր մերձ 'ի ծնանել։ Գնան նոքա 'ի Սիրակուսա. և Դիոնեսիոս ցանկայր գիտել վասն որոյ իրաց ընկերքն նոցա յանձն առին զմահ քան կոխել զանդ բակլայիցն. այլ ոչ խոստմունք նորա և ոչ սպառնալիք կարացին որսալ ինչ բանս 'ի բերանոյ նոցա. և Տիմիքա էհատ ատամամբք զլեզու իւր, առ ահի լուծանելոյ զլեզութիւն 'ի բռնութենէ տանջանացն պատրաստելոյ նմա։ Տես լինէ զարդասիս նանրահա-

1 Խպլոր. և Ղէանտ, առ Յամբլիկոսի, վարք Պիւթագոր. Գլ. 31. էջ 158։

հաւատ նախանձայուզութեան, և անհանձար օրինաց՝ որ պատսպարան լինին նոցա։

Ամենեքին. Լաւագոյն զբաղեալ եղկելեացն. վասն զայրանալոյ արդեօք խօթամիտ նախանձումն նոցա 'ի խստութենէ՝ որ 'ի ժամանակաց ինչ հետէ հալածէրն զնոսա, պարտ համարեցան պնդագոյնս 'ի կարծիս իւրեանց կալ վասն փութոյ պնդութեան այլոց 'ի հերքել զայն։

Ընաբարոխ. Լաւ մարթէր նոցա անցանել անդատապարտ զպատուիրանսն Պիւթագորայ։

Ամենեքին. Պիւթագոր սակաւ ինչ, մանաւանդ թէ և ոչ ինչ գրով եթող՝։ Մատեանք որ 'ի նմանէ համարին գրեալ, աշակերտաց նորա են գրեթէ առ հասարակ[2]։ Զոքա յաւելին 'ի սահմանադրութի նորա խտրանս բազումս։ Զուիցես արդեօք ասելոյ բազմաց, և առ յետինս իսկ ասասցի 'ի սպառ, Պիւթագորայ սրբութիւն մեծ համարեալ չհաշակեալ զբակլայ[3]. այլ զի ինքն յաճախ ևս քան զայլ կերակուրս ճաշակէր զայն, հաւաստի իսկ է։ Զի զայս ևս 'ի մանկութեան լուայ 'ի Վասենոտիլեայ, և 'ի բազմաց այլոց ծերունեաց՝ որք գրեթէ ժամանակակից կացեալ էին Պիւթագորայ[4]։

1 Պլուտ. յզ. զօրութեան. Ազեքս. հա. 2. էջ 328։ Պորփիւր. վարք Պիւթագ. էջ 52։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յոգ. 7։

3 Նոյն. անդ. յոգ. 24։

Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 24. էջ 92։ Պլին. գիրք. ԺԸ. գլ. 12. հա. 2. էջ 115։

4 Արիստոքս. առ Ռէ. Գենք. գիրք Դ. գլ. 11։

Ընդարձակ. Լաւ յումմէ՝ ապա արգելաւ ձեզ այն։

Ասէին. Պիւթագոր չարգել զայն, զի օգտակար իսկ համարեցաւ. իսկ աշակերտք նորա արգելին զայն վասն փքոյն՝ որ 'ի նմանէ ներգործեալ 'ի փորի, և վասն այլոց փնտակարութեանցն[1]։ Լաւ կարծիք նոցա, համանձայնք բանից հմտագոյն բժշկաց, զօրացեալ կալան[2]։

Ընդարձակ. Ապա ուրեմն քաղաքական ինչ համարիս կարգ զպատուիրանդ և խրատ միայն։ Այլ իմ լուեալ է այլոց պիւթագորականաց, որք օրէնս սուրբս համարին զայդ, և մասն գաղտնեաց բնութեան և կրօնից և կարգաց իմաստուն քաղաքավարութեան[3]։

Ասէին. Որպէս առ ամենայն ուխտս, և առ մեզ օրէնք քաղաքականք սուրբք են. զի դրոշմն սրբութեան տպաւորեալ 'ի նոսա, դիւրագոյն զպահպանութիւն նոցա գործէ։ Պարտ է հնարս 'ի կիր արկանել ընդ ապախտիս մարդկան և ընդ ախտս. կարգք ժուժկալութեան լուծանին հանապազօր, 'ի պահպանութիւն առողջութեան և եթէ սահմանեալ արգասիք նոցա։ Որ առ 'ի խնամս առողջութեան իւրոյ չհրաժարէ և ոչ 'ի

1 Կղեմ. աղէքս. յաՃախասպ. գիրք Գ. էջ 52։ Անոնիմ. առ Փոտայ, էջ 1316։

2 Իպոկր. յղ. ժուժկալ. կերակր. գիրք Բ. յօդ. 13. հա. 1. էջ 218։

3 Արիստոտ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 34։ Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 24. էջ 92։ Պորփիւր վարք Պիւթագ. էջ 43։

միոջէ ինչ 'ի Հաճոյիցն, բազում այն է զի զնէ զանձն իւր 'ի վտանգ առ 'ի պահել զպաշտամունս ինչ կրօնից, զորս պաշտէ՝ անգէտ զիտաւորութեան նոցին։

Նոյեմբերի. Այսպա ուրեմն մկրտութիւնքն և ժուժկալութիւնք և պահք, որոց երկիւղածութեամբ պատկառ կան քուրմք եգիպտացւոց, և որ խստիւ հրամային 'ի խորհուրդս Աղլադայ, ոչ այլ ինչ էին 'ի սկզբանէ՝ բայց դարմանք բժշկականք և ընդդէմ որկորատեանն մնասակարութեց զգուշութիւնք։

Մարդին. Մնձ այդպէս թուի. և ոչ ոք անգիտանայ, զի քուրմք եգիպտացւոց յօդտակարագոյն դարմանս բժշկութե պարապեալք՝ 'ի խափանել զախտս քան յապաքինել, երկայնակեացք յամենայն ժամանակի գտան և քաջառող ջք[1]։ Պիւթագորս 'ի նոցանէ զբժշկութիւնս զայս ուսեալ՝ աւանդեաց աշակերտաց իւրոց[2], և ընդ Ճարտարագոյն բժիշկս Աղլադայ արժանապէս դասեցան[3]։ Աչ քանզի խորհեր ածել զհոգի 'ի կատարելութիւն, պարտ էր նմա զերծուցանել զնա 'ի կապանաց մահկանացու մարմնոյն որ կաշկանդէն զնա, և պղծութեանցն իւրոց առնէ զնա հաղորդ։ Ալին իրի մերժեաց 'ի բաց զկերակուրս և զամ-

1 Խոսկր. 'ի Բուսիր. հա. գլ. 34. էջ 196. գլ. 35. էջ 212։
2. էջ 163։ Դիոգ. Լայերտ. գիրք Դ. յօդ. 7։
3 Յամբղիկ. վարք Պիւթագ. 3 Կուռնելէ. Կելս. յղ. գլ. զոր. գիրք Ա. յառաջաբան։

պելիս, յորոց մարմինն ամբոխեալ մթացուցանէ և հակէ զմիտս[1]։

Ընդդարձակ. Համարէր ուրեմն զի գինի և միս և ձուկն գործիցեն զգժնդակ արգասիսդ, որով խստագոյնս արգել զդոսա[2]։

Սահեցին. Զի՞ որպակ են կարծիքդ զի նա զզեղխութիւն ևեթ զգինւոյ արգել[3], և խրատ միայն ետ հրաժարել յայնմանէ[4], և ներէր աշակերտաց իւր ըմպել յընթրիս գինի՝ այլ չափով[5]։ Այլ զի և միս 'ի զոհից տայր մատուցանել նոցա 'ի սեղան, այլ ոչ զեղին և զնոխազաց։ Զնչ իսկ չհրաժարէր 'ի ճաշակելոյ զմիս[6], թէպէտ և սովորական կերակուր նորա էր սակաւիկ մի մեղր և ունդք սակաւ։ Արգել նա զձկունս ինչ, զորոց աւելորդ է ասել զպատճառս. այլ զազգ բանջարոց առողջարար քան զամենայն կերակուրս համարէր։ Սակ չճաշակել բնաւ միս, նկրտելոց ևեթ 'ի գերագոյն աստիճան կատարելութեան պատուիրեր։

Ընդդարձակ. Այլ որ զմարմնափոխութիւն հոգւոց եդ, զի՞նդ էր նմա ներել այլոց զճաշակումն մնոյ[7] զի որպէս աթենացին այն սակաւիկ մի յա-

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 16. էջ 55։

2 Ամենն. գիրք Է. գլ. 16. էջ 308։ Յամբղիկ. անդ. գլ. 30. էջ 156։

3 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 9։

4 Կղեմ. աղեքս. յղ. դաստիարակ. գիրք Բ. էջ 170։

5 Յամբղիկ. անդ. գլ. 21. էջ 83։

6 Պորփիւր վարք Պիւթագ. գլ. 21. էջ 83։ Արիստոքս. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 20։

7 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 13։ Անոնիմ. առ Փոտայ, էջ 1316։

ռաջ ասէր, վասնզի է ձեզ հանապազօր հայրա-
կերս և մայրակերս լինելոյ։

Սոմեղին. Արքեր ինձ պատասխանել առ այդ,
զի 'ի սեղան մեր 'ի զոհից ևեթ մատչի միս, և
այնոքիկ ևեթ 'ի կենդանեաց զոհին՝ յորս հո-
գիք մեր ոչ մնանեն[1]. այլ է ինձ համառօտա-
գոյն ևս պատասխանի, զի Պիւթագոր և առա-
ջինք յաշակերտաց նորա ոչ դնէին փոփոխումն
հոգւոց 'ի մարմնոց 'ի մարմին։

Ընդդարձակ. Լաւ որպէս։

Սոմեղին. Տիմէոս լոկրեցի, մի յերիցագունից
և յականաւոր աշակերտաց նորա, խոստովանի
զայս։ Զանգի ասէ՝ թէ զի մարդկային օրինաց
անսաստեր ամբոխն, հարկ եղև ահացուցանել
զնա մտացածին սպառնալեօք պատուհասից, իբր
թէ մեղապարտք յետ մահու այլակերպեալք 'ի
գրաստս անարգս կամ՝ 'ի գազանս վայրենիս՝ կրեին
զամենայն աղէտս նորոյ կենացն պայմանի ան-
կաւորս[2]։

Ընդդարձակ. Դու վեր 'ի վայր դղորդես զամե-
նայն 'ի միտս իմ. ոչ ապաքէն Պիւթագոր հեր-
քեր զարիւնահեղ պատարագս, և արգելոյր չըս-
պանանել զկենդանիս. և զի փոյթ էր նմա 'ի
պահպանութիւն կենաց նոցա, եթէ ոչ հոգի
հանգոյն մերում համարէր գոլ 'ի նոսա[3]։

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 18. էջ 71։
2 Տիմ. առ Պղատ. հատ. 3. էջ 104։
3 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 13. Յամբղիկ. անդ. գլ. 24. էջ 90։

Աստեղն։ Զարդարութիւն զրդէր զնա՝ի փոյթ. զի զինչ իրաւունք իցէն մեզ բառնալոյ զկեանս էից՝ որք իբրև զմեզ յերկնից ընկալան զայն պարգև՝։ Զաջինք՝ի մարդկանէ, յօժարագոյնք՝ի լուր բողոքոյ բնութեան, ոչ այլ ինչ մատուցանեին զից՝ բայց պտուղս, մեղր և կարկանդակս, որովք կերակրեին[2]։ Եւ որ իշխեր հեղուլ զարիւն կենդանեաց, մանաւանդ զպիտանեացն մարդոյ։ Զանդութիւն զառաջնոյ մարդասպանին արհաւրօք հասոյց մեզ զայիշատակ՝. նոյն և՝ի պահել զանուանս այնոցիկ, որք յանկարծակի կամ՝ի գրգռել ցասման իւրեանց սպանին նախ զազգի ազգի կենդանիս, ցուցանել և զապշութիւնն և զսոսկումն՝ զոր լուր սպանութեան նոցա ներգործեաց՝ի միտս։ Պատճառանաց ապա պէտք եղեն, և թուեցան նոքա խափանիչք երկրի, և համարեցաւ լեալ պատգամ՝ իշխանութիւն տալով մեզ յաղթել խորշելոյ բնութեանս։ Հնազանդեցաք նմա, այլ առ՝ի խաղաղել զնիզակ մտաց՝ խորհեցաք գէթ զհաւանութիւն՝ի զոհելոյ անտի առնուլ. նմին իբրև ոչ մատչին զոհք, մինչև լուացմամբք և այլովք հնարիւք սատարեալ զնոսա խոնարհել զգլուխս իւրեանց՝ի նշան հաւանութե՛։ Յետ ինձ քանի անպատեհ խաղ

1 Եմպեդոկլ. առ Աբիս. տաս. Ճարտ. գիրք Ա. գլ. 13. հտ. 2. էջ 541։

2 Պղատ. յդ. օր. գիրք Զ. հտ. 2. էջ 782։ Թէոփր. առ Պորփիւր, յդ. ժուժկալ. կերակր. գիրք Բ. էջ 137։

3 Պլուտ. ի Հռոմուլ. հտ. 1. էջ 39։

4 Պլուտ. խրախճ. գիրք Ը. խնդ. 8. հտ. 2. էջ 729։

ատնէ բռնաւորութիւն զտկարութեամբ։

Նշաւաբեռ. Կարևոր էր ապաքէն բռնութիւնս այս. զի 'ի բազմանալ յոյժ կենդանեաց, լիզա-ջինք ատնէին զՀունձս։

Ամէջն. Բազմածնունդք 'ի նոցանէ սակաւա-կեացք են. և բազմագունից 'ի նոցանէ կորնչէին սեռք, անխնամ 'ի մարդկանէ թողեալ[1]. իսկ յայլոց գայլք և անգեղք ինդրէին զվրէժ մեր։ Բ. Այլ զի գիտասցես՝ թէ ոչ աւարառուիք նոյ զի-նուորեցին զձեռս մեր, աղէ՝ ասա ասպատակիցսն 'ի դաշտս մեր ձկունք՝ զորս հալածեմքն 'ի տարա-սահման աշխարհ իւրեանց[2]։ Ղէր և չէր ինչ հարկ շաղախելոյ արեամբ կենդանեաց զբազինս. զի եթէ չէ օրէն զպտուղս երկրի այլոց յափշտա-կեալ՝ նուիրել երկնից, պարտ էր ինչ զոհել ըզ-կեանս այլոց[3]։ Դարձեալ զի և որ այն աստու-ածահաճոյ զոհ իցէ, երկպառակին կարծիք ժողովրդոց և քրմաց. կէսք զենունն զգաղանս վայրենիս ինասակարս, և կէսք զվաստակակիցս մեր կենդանիս։ Յանկութի շահու ընտրոյն տէր կացեալ, այնպէս պատասպարան եղև անիրաւու-թեան՝ զի յամպարշտութիւն համարի Յ[ի]գիպ-տոս զոհել զկով, և 'ի բարեպաշտութիւն զե-նուլ զուարակս[4]։

1 Պորփիւր, յղ. Ժուժկալ. կերակր. գիրք Դ. էջ 344։
2 Պլուտ. խրախճ. գիրք Ը. խնդ. 78. հա. 2. էջ 730։
3 Պորփիւր, անդ, գլ. 124։
4 Երոդոտ. գիրք Բ. գլ. 45։ Պորփիւր, անդ, գլ. 120։

Յայսքան վարանս խորհեցաւ Պիւթագոր, զ
չէր հնար իրել առժամայն զչար սովորութիւն կան-
խամուտ՝ հաստատեալ 'ի բազմահոլով դարուց։
Հրաժարեաց նա յարիւնահեղ զոհից, և առա-
ջին աշակերտք նորա հրաժարեցին և նոքա։ Իսկ
այլոց առ հարկի կենակցութեան ընդ մարդկան
օրէն էր զոհել սակաւս 'ի կենդանեաց, և առ-
նուլ զնաշակ մոյ նոցա քան ուտել զայն[1]։

Այլ այս ներելով և եթ տուաւ ազատութիւն,
զոր մեծարանք սովորութեան և կրօնից թուէին
առնել օրինաւոր։ Բաց յիշխանութենէ աստի,
ամենայն ինչ հասարակաց է մեզ ընդ կենդանիս
զգօնս և հեղս, և ոչ փոքու իւիք օրէն է մեզ
ինասակար լինել նոցա[2]։ Պարշիմք ըստ օրինակի
վարժապետին մերում՝ յամենայն արուեստից, որ
'ի սպանութիւն նոցա սահմանեալ են[3]։ Յոյժ
իսկ քաջայայտ է 'ի փորձոյ, զի յաճախութիւն
արիւնհեղութեան նոցա կրթէ զսիրտս 'ի վայ-
րենութիւն։ Որ ոք արգելեալ են մեզ[4]։ Հրաժա-
րեմք 'ի հաճոյից. այլ մարդասիրագոյնք եմք և
հեզք և բարեգութք քան զայլս 'ի մարդկանէ[5],
թող զի և առաւել քան զնոսա կուսահարեալք։
Օ՛ինչ ոչ արարին մախանք առ 'ի քակել զմիա-

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 28. էջ 126։
2 Պլուտ. յղ. հանճար. կենդան. հատ. 2. էջ 964։ Յամբղիկ. անդ, գլ. 21. էջ 84։
3 Եւդոքս. առ Պորփիւր վարք Պիւթագ. էջ 9։
4 Յամբղիկ. անդ։
5 Պորփիւր. յղ. ժուժկալ. կերակր. գիրք Գ. էջ 263։

բանութիւն երկիւղածաց և գիտնոց՝, որ հրաժարեալ յամենայն բերկրութեանց պարապեն բոլորովին 'ի բարեբաստութիւն մարդկան։

Ղեսարիոս. Ազատեմ զքեզ տալ ինձ հանուստիւ տեղեկութիւն զաղանդոյ ձերմէ, քանզի անտեղեակ եմ։

Սամեշին. Դու ինքնին գիտես, զի Պիւթագոր 'ի դառնալն իւրում յուղևորութենէ, բնակեաց Յոտալիա։ Յորդորեալ 'ի նմանէ ազգք Յունաց բնակեալք 'ի բարեբեր երկրին՝ եղին զղէնս իւրեանց առ ոտնորա, և զնոսանս օգտի իւրեանց 'ի ձեռս նորա. և նա իրաւարար 'ի միջի նոցա կացեալ՝ ուսոյց նոցա խաղաղութիւն առնել ընդ անձինս և ընդ այլս, և զոք և կանայք առհասարակ մտադիւրագոյն յանձն առին զկարի իսկ դժկամակս։ Այս յամենայն կողմանց Աչլադայ և Յոտալիոյ և Սիկիլիոյ դիմէին առ նա անբաւ բազմութիւն աշակերտաց. և յանդիման եղև նա բռնաւորաց առանց մարդահաճութեան, և ստիպեաց զնոսա ի՞նքանել կամակար յաթոռոյ. և 'ի տեսիլ մեծամեծ յեղափոխութեանցն աղաղակեր ժողովուրդն, աստուած զոմն երևեալ յերկրի առ 'ի փրկել զնա 'ի չարեաց՝ յորոց նեղէին[2]։

Ղեսարիոս. Այլ նա կամ աշակերտք նորա ո՞չ ստեցին ինչ առ 'ի հաստատել զպատրանս զայս։

1 Ապուլ. առ Պրոբք. հա. 1. էջ 633։

2 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 6. էջ 23։ Պորփիւր. վարք Պիւթագ. էջ 25։

Յուշ լեցին քեզ սքանչելիքն համբաւեալք զնմանէ[1], 'ի բարբառ հրամանի նորա ծովուն հանդարտել, մրրկին ցրուել, և ժանտախտին դադարել մոլեգութեանն[2]. արծուոյն կոչեցեալ 'ի նմանէ իջանել յերկնից, և գալ հանգչել 'ի ձեռին նորա. և արջոյն զգօնանալ 'ի ձայնէ նորա, և ոչ ևս յարձակել 'ի վերայ չքոտի կենդանեաց[3]։

Ասդեղն. Հաւատալն ինձ վերադիր նորանշանք, զի ոչ երբեք համարեցաւ Պիւթագոր ունել իւր իշխանութիւն հրամայելոյ բնութեան։

Ընտարսխ. Այլ ոչ ժխտեսցես՝ զի խոստանայր նա գուշակել զհանդերձեալս[4], և 'ի հարցկէն Պեղիեայ ասէր ուսեալ զաղանդ իւր[5]։

Ասդեղն. Արդարև հաւատայր նա հմայից, որպէս և այլ խմաստունք ժամանակին և կրտսերագոյնք քան զնա, և Սոկրատ ինքնին մոլորեցաւ, սակայն թէ իցէ այս մոլորուն[6]։ Պարձեալ եթէ 'ի յանցանս համարեսցի նմա այն, զի 'ի հարցկէն Աստղնի ասէր ընկալեալ զաղանդ իւր, հարկ է զՀինովս և զ Իկուրգոս և զրեթէ զամենայն իսկ օրէնսդիրս խոտել. զի և նոքա պատճառեցան 'ի դիցն ընկալեալ զօրէնս իւրեանց, առ 'ի

1 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 17։
2 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 28. էջ 114։ Պորփիւր, վարք Պիւթագ. էջ 31։
3 Յամբղիկ. անդ. գլ. 13. էջ 46։
4 Պորփիւր, անդ, էջ 34։ Կղեմ. ազէքս. յաձախապ. գիրք Ա. էջ 399։
5 Արիստոքս. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յոդ. 21։
6 Կիկերո. յոդ. ըստ. գիրք Ա. գլ. 3. հա. 3. էջ 5։

տալ նոցա զօրութիւն[1]։

Նախարարքն. Երեա ինձ եթէ թուիմ յամանել, զի ոչ դիւրին ինչ է 'ի կանխակալ մտահաճութեանց 'ի բաց կալ։ Զոգէր իմաստասիրութիւն նորա թանձրամած խաւարաւ է պատեալ. այլ՝ որ ոչն արժանի համարեցաւ զանձն կոչել ի մաստուն, այլ իմաստասէր զանձն իւր անուանէր[2], զի է զի ոչ իրաւասուեաց քարոզել հանրաձակ զճշմարտութիւն։

Սոֆեղն. Օ զաղանիսդ ընդ որս զարմանաս, զոցեա զնոցն և 'ի խորհրդատուս Շլեսեայ և Սամեթակեայ, և առ քուրմն եգիպտացւոց, և առ ամենայն իսկ կրօնս։ Չէ զինչ ասեմ կրօնս. այլ և իմաստասիրացդ իսկ աղանդոց չիցեն ինչ գաղանիք պահեալք 'ի գիտութիւն զգուշագունիցն և եթէ 'ի դասուց աշակերտացն[3]։ Չքաւ ամբոխն տկար էին յոյժ երբեմն, և չկարէին հայել 'ի լոյս. և զարդիս իսկ ո իշխեսցէ խօսել հանրաձակ յԼեհնս զընութեանէ գից, և զգրժպատեհութեանց ռամկապետութեան։ Ոչն ապա ճշմարտութիւնք՝ զորս պարտ է իմաստնոց ունել 'ի պահեստի, և տակաւ իբր շիթ առ շիթ կայլակել։

1 Դիոդ. գիրք Ա. էջ 84։ Կիկերո. յդ. ըստ. գիրք Ա. գլ. 43. էջ 36։

2 Կիկերո. տուսկուլ. գիրք Ե. գլ. 3. հա. 2. էջ 361։ Վաղ. Մոպա. գիրք Ը. գլ. 7։

3 Կիկերո. յդ. կատար. գիրք Ե. գլ. 5. հա. 2. էջ 200։ Աբլ. Գելլ. գիրք Ի. գլ. 4։ Կղեմ. ազէքս. յառնախապ. գիրք Ե. էջ 680։

Ընդդէմս. Բ.յլ զոր պարտն էր լիաձեռն զեղուլ զբարոյականին Աշնարտութիւնս, դուք ծածկէք զնոսա անհաղորդելի։ Օ՛ի ուր փոխանակ խրատելոյ՝ մի դատարկապորտս լինել և մի զրգռել զցասումն առն բարկացողի, ասիցէք՝ մի՛ ի վերայ գրուոյ բազմել և մի սուսերաւ զհուր արծարծանել՝, յայտ է զի՛ ի դժուարութիւն կատարելոյ զխրատս յաւելուք և զիմաստիցն դժուարութի՝։

Ասեցին. Բ.յլ դժուարութիւնն այն տպաւորէ զնոսա՛ ի միտս. զի որ դժուարաւն ինչ ստացանի, զգուշագոյն պահի։ Բ.յլաբանութի՝ շարժէ զմիտս՛ ի խնդիր, և նորաձևէ զիմաստս սովորականս, և զի այլաբանութեանցն նշանակք յաՀախագոյն ընդ առաջ լինին զգայուն՝ քանզի նշանակս խորհրդոց մտաց, յաւելուն զզօրութի՝ օրինացն՝ զորս բովանդակեն։ Օ՛ի ոչ է մարթ զինուորի կալ առ հրով, և երկրագործի առ զրուանաւ, և չգիտել զպատուէր օրինացն։

Ընդդէմս. Բայց սակայն յոյժ սիրելի է ձեզ գաղտնութի՝ որպէս զի մի ոմն յառաջնոց անտի աշակերտաց Պիւթագորայ զաշակերտակիցս իւր առ հասարակ ասոյս յանձն իւր ձգեաց՝ լուծանելով խնդիր ինչ երկրաչափական՝։

Ասեցին. Կարծիք էին երբեմն հասարակաց, զի և գիտութի՝ հանգոյն պատկառանաց պարտ է

1 Պլուտ. ի՛ նում. հա. 1. էջ 69։ Դեմեթր. բիւզանդ. առ Ամեն գիրք ժ. գլ. 19. էջ 452։

2 Յամբղիկ. վարք Պիւթագորայ գլ. 34. էջ 198։

3 նոյն անդ։

արկանել զանձամբ քող, որ ցանկալի և առնէ զգանձան ծածկեալս ընդ իւրև, և զբաւոր զժամանագող նոցին։ Պիւթագոր յօգուտ 'ի կիր էարկ զկանխակալ կարծիսն. յաւելից եթէ ախորժէս, զի ըստ օրինակի օրէնսդրաց ոմանց և դաւով իմն սրբով վարեցաւ՝ առ 'ի հաւատարիմ լինելոյ ամբոխին[1]։ Օ՛ի ինձ ոչ գովութիւնքն առաւելագանցք զնմանէ, ոչ դժնդակ պարսաւքն թշնամանագիրքն նմին, թուին արժանահաւատք։ Բ՛այլ անկապուտ նորին փառք այն էն[2], զի երկնեաց զիորհուրդն մեծ զմիաբանութեանն, որ մինչև 'ի սպառ աւանդապահ լեալ զիտութեանց և բարոյականին՝ լցցի բերան Հնմարտութեան և առաքինութեան, յորժամ բաւական լցցին մարդիկ հասու լինել միութեան և զմիւսն կատարել։

Բ՛ազմութիւն աշակերտաց ընկալան զնոր ազանդն[3]. և ժողովեալք 'ի նմանէ 'ի բնակարան մի մեծ, կային 'ի միասին՝[4] բաժանեալք 'ի դաս։ Կէսք 'ի տեսութիւն երկնայնոցն իրաց պարապեալք, այլք 'ի զարգացումն գիտութեանց և մանաւանդ երկրաչափականին և աստեղաբաշխութեան[5], և կէսք դարձեալ տնտեսքն անուանեալք կամ քաղաքավարք՝ որ զկէս տանն յանձ

1 Երմիպպ. առ Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յօդ. 41։
2 Պղատ. յղ. հաս. գիրք ժ. հա. 2. էջ 600։
3 Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յօդ. 15։ Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 6. էջ 22։
4 Յամբղիկ. անդ։ Պորփիւր վարք Պիւթագ. էջ 25։
5 Ամմիմ. առ Փոտայ. էջ 1313։ Աբլ. Գելլ. գիրք Ա. գլ. 9։

ձանձէ՛ին և որ ինչ առ՝ի նոյն պատկանեալ իրք[1]։

Եւ ամենեցուն էր անխտիր խառնել՝ի Թիւս աշակերտացն. այլ քննէր Պիւթագոր զբարս նոցա, զսովորութիւնս, զգնացս, զիսօս, զլռութիւն, զտպաւորութիւն զգալեացս՝ի նոսա, և թէ զիարդ իւրաքանչիւր ուրուք ընդ ծնողս իւր և ընդ բարեկամս լեալ։ Այլ ընտրեալքն աւանդէին առաջմանայն զամենայն ինչս իւրեանց՝ի տնտեսս[2]։

Համանակ հանդիսից քննութեն տեւէր զամն բազում, այլ համառօտէր զարգացելոյն վաղ՝ի կատարելութի[3]։ Որոնծայեալն զերեամ՝ մի՝ի միաբանութեան խոտան և արհամարհ կայր նշաւակ նսեմատանաց։ Այլ ապա զամն հինգ դատապարտեալ՝ի լռութիւն[4], ուսանէր նուաճել զընդվայրաքնին խոյզս, հրաժարել յաշխարհէ և յաստուածայինս պատաղել[5]։ Ի մկրտութիւնս և՝ի պէսպէս հրահանգս կրօնից պարապէր[6]. և երբէք երբէք լսէր զբարբառ Պիւթագորայ՝ որ յետ կուսէ թանձր վարագուրի խօսէր ընդ նմա, և՝ի բանից նորա՝ի միտ առնոյր զհանգամանս նորա։

Որ քաջ զարգանայրն, մտանէր յուսումն սրբբազան գիտութեանն. իսկ որ զյոյս վարժապետացն՝ի դերև առնէր, արձակէր՝ի բաց՝ առեալ

[1] Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 17. էջ 59։
[2] Նոյն անդ, էջ 58։
[3] Առ. Գ. Լ. գիրք Ա. գլ. 9։
[4] Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յոգ. 10։ Յամբղիկ. անդ, էջ 59։
[5] Յամբղիկ. անդ, էջ 58։ Կղեմ. ազէքս. յաՃախապ. գիրք Ե. էջ 686։
[6] Յամբղիկ. անդ, էջ 61։

զինչս իւր անդրէն հանդերձ բազմապատիկ տո-
կասեաց՝ ։ Եւ յայմմ հետէ ընդ մեռեալս հա-
մարեր, և 'ի տան անդ շիրիմ կանգնէին նմա, և
աշակերտակիցք նորա իբրև յանծանօթ ոք հայ-
էին 'ի նա 'ի հանգիպեալն նմա։ Եւ ոչն պատուհաս
'ի վերայ կայր և որոց յայտնէին արտաքնոց ըզ-
գիտութիւնն սուրբ[1]։

Ամենեքեան դասու աշակերտացն օրէն էր հրամանն
առեալ՝ 'ի վարժապետէն, կամ մանաւանդ հրա-
մայեալ՝ 'ի նմանէ, դառնալ յաշխարհ, իշխա-
նութիւնս յանձն առնուլ, և պարապել յառ-
անձին իրս, առանց հրաժարելոց յուխտիցն։ Ի
սոցանէ ոմանք՝ արք և կանայք՝ 'ի տունս տունս
յարեալք[3], անցուցանէին անդ զաւուրս՝ պարա-
պեալք 'ի գործս իւրաքանչիւր։ Եւ արք առա-
քինիք՝ բնակեալք 'ի տար աշխարհս՝ աշակերտե-
ին աղանդոյն, գուն գործէին 'ի յառաջադիմու-
թիւն նորա, վաստէին 'ի նախանձ նորա, և զգու-
շանային կարգաց նորա։

Արք 'ի միասին կային աշակերտքն՝ վաղայա-
ղոյցք լինէին ընդ առաւօտս, և երկու ինչ ընդ
յառնելն զմտաւ ածէին. որ ինչ յերեկն խօսե-
ցեալ էր նոցա կամ գործեալ, և որ ինչ զայն օր
պարտ էր նոցա առնել. զառաջինն 'ի հրահանգս

1 Յամբղեկ. վարք Պիւթագ. գլ. 17. էջ 60։
2 Կղեմ. ադեքս. յաճախագ. գիրք Ե. էջ 680։ Յամբղեկ. անդ. էջ 62։
3 Յամբղեկ. անդ. գլ. 36. էջ 214։ Պորփիւր վարք Պիւթագ. էջ 25։

յիշողականին զերկրորդն յուղղութիւն վարուց՝։ Զբկեալ զիւրեամբք հանդերձ սպիտակ և մաքուր ամենևին[1], առնուին քնար, և երգեին օրհնութիւնս[2] մինչև յարևածայրս, և ապա երկրպագեալ արեգական՝[3]*, գնային իւրաքանչիւր առանձինն ՝ի ծառատանս գալարագեղս կամ՝ի զուարճալի վայրս ամայիս։ Ցեսարան և անդորր գեղեցիկ վայրացն ներգործէր ՝ի նոսա խաղաղութիւն, և կազմէր զմիտս նոցա ՝ի գիտնական խօսակցութիւնս յոր ապա դառնային[3]։

Վրեթէ միշտ ՝ի մեհենի խօսակցութիւնքն լինէին, և Հաւք նոցա զչափական գիտութեանց և զինղրոց բարոյականաց[4]։ Ա՝ արժապետք քաջահմուտք նախակրթէին և ածէին զհամբակս ՝ի տեսականն բարձրագոյն ծայր արուեստին։ Ա՝ռաջի դնէին նոցա ստէպ ՝ի մտածութիւն իմաստս բազմաբեղուս և առաձս պարզս։ Պիւթագորա՝ որ ՝ի քթթել ական տեսանէր զամենայն, և ՝ի մի բարբառ բացատրէր, յաւուր միում ասէ ցնոսա. Օ՝ինչ էն տիեզերք, բայց

[1] Դիոգ. ՝ի ծաղկաբանն. Վալերիոս, էջ 245։ Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 29. էջ 140։

[2] Աբիստոտ. առ Դիոգ. լայերտ. գլ. 8. յօդ. 19։ Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 32։

[3] Յամբղիկ. անդ, գլ. 25. էջ 85։

[4] Նոյն անդ, գլ. 35. էջ 206։

* Երևի և Սոկրատայ ըստ օրինակի պիւթագորեանցն լեալ սովորութիւն, ՝ի ծագել արևուն երկրպագելնեմս։ (Պղատ. ՝ի խրախճ. հատ. 3. էջ 220։)

[5] Յամբղիկ. անդ, գլ. 20. էջ 81։

[6] Նոյն անդ։

կարգ։ Օ՛ինչ է բարեկամութիւն, բայց հաւատարութիւն[1]։ Սահմանքս այսոքիկ վսեմք, և ըստ այնմ ժամանակի նոցք, խելամուտ առնէին զլսօղս և ամբառնային զմիտս նոցա։ Որոց այնպէս հաճոյ թուեցաւ առաջինն, զի փոխանակեցին զայն ընդ անուանն՝ որով մինչև ցայսժամ նախնի նոցք կոչէին զսիրեղեալս։ Հրահանգաց մնաց յաջորդէին կրթութիւն մարմնոյ, ընթացք և գօտեկռիւ, այլովքն հանդերձ. և մրցութիւնքս այսոքիկ մեղմանկանք կատարէին 'ի ծառաստանս կամ 'ի պարտէզս[2]։

Խաշնեբ նոցա հաց և մեղր առ 'ի ճաշ, դուն ուրեք և գինի[3]. բայց նկրտեալքն 'ի կատարելութիւն սովորաբար հացիւ և ջրով շատանային[4]։ Լո՛ յարուցեալք 'ի սեղանոյ, պարապէին 'ի զորձրս յանձնեալս իւրաքանչիւր յօտարաց[5]։ Լո՛ ապա զոյգ զոյգ կամ երեք երեք միաբանեալ դառնային 'ի ճեմ, խօսակիցք լինելով զվարժիցն՝ զոր ընկալեալ էր նոցա առաւօտուն[6]։ Բայց 'ի խոսակցութեանց նոցա հեռի էին չարախօսութիւնք և թշնամանք, խեղկատակութիւնք և դատարկաբանութիւնք[7]։

Դարձեալք 'ի տուն՝ մնանէին 'ի բաղանիս.

1 Յամբղեկ. վարք Պիւթագ. գլ. 29. էջ 138։ Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յօդ. 10։
2 Յամբղեկ. անդ, գլ. 21. էջ 81։
3 Նոյն անդ, էջ 82։
4 Աբեբոխս. առ Ամեն. գիրք Դ. էջ 161։
5 Յամբղեկ. անդ, էջ 82։
6 Նոյն անդ։
7 Նոյն անդ, գլ. 30. էջ 145։

և 'ի բաղանեացն ելեալ՝ մեկնէին 'ի սրահս, յոր պատրաստեալ կայինսեղանք՝ 'ի միում միում բաղ մականք տան։ Այլ էին նոցա ընթրիք գինի և հաց. ունդ եփեալ կամ հում, էր զի և մսան 'ի զոհից կենդանեաց, դուն ուրեք և ձուկն։ 'Այսպէս քան զընթրիս խունկս արկանէին դից և ազգի ազգի բուրմունս անուշից. և պարտ էր կատարել ընթրեացն յառաջ քան զմուտս արևու'։

Բայց անցեաւ զիս սովորութիւնն այն, զի յաւուրս ինչ 'ի տարւոջ պատրաստէր առաջի նոցա ճաշ բազմախորտիկ և մեծածախ. և նոցա պարարեալ առ վայր մի զաչս իւրեանց 'ի տեսիլ համադամոյն, ապա բաշխէին զայնոսիկ ստրկաց. և յառնէին 'ի սեղանոյ, անճաշակք 'ի սովորականացն և ելս կերակրոց [2]։

Այլ յետ ընթրեացն դարձեալ հեղուինն։ և կրտսերագոյնն 'ի նոցանէ ընթեռնոյր 'ի լուր նոցա զգիրս՝ զոր երիցագունքն անկ էր ընտրել։ Այս և նախ քան զարձակել զժողովն՝ յիշեցուցանէր նոցա զկարատս զայսոսիկ կարևորս. Պատուեա զդիս, զհոգիս և զդիւցազունս, մեծարեա զծնողս քո և զբարերարս, և հաս 'ի վրէժխնդրութիւն օրինաց։ Այլ առ 'ի յորդորել զնոսա 'ի հեղութիւն և յարդարութիւն՝ յաւելեալ. Օ գոյշ լեր չխոսել զծառ կամ զտունկ օգտա-

[1] Յամբղկ. վարք Պիւթագ. գլ. 21. էջ 83։ Յամբղկ. գլխ. էջ 245։ Յամբղկ. գլ. 31. էջ 137։

[2] Դիոդ. 'ի ծաղկաքաղն վ.

կար մարդկան, և չապանանել զկենդանի՝ որ չի-
ցէ նոցա վնասակար[1]։

Այլ առանձնացեալք՝ դատէին զանձինս, քան-
նել զամենայն և յանդիմանել որ ինչ գործեալ
էր իւրաքանչիւր, և զորով իւիք 'ի պարտեացն
զանց արարեալ[2]։ Այլ յետ քննութեանն, որոյ
անխափան կատարումն նա միայն կարող է ուղ-
ղել զմեզ, առնուին դարձեալ զքնարս իւրեանց
և նուագէին օրհնութիւնս դից։ Այլ առաւօտուն
դարձեալ 'ի զարթնումն՝ նուագաւք սթափէին 'ի
քնոյ, և ընդ երեկո նոսաւ զամբոխումն զգայու-
թեանցն ցածուցանէին[3]։ Կաղաղութեամբ մե-
ռանէին. և դի նոցա դնէր, որպէս ցարդ, 'ի դա-
գաղս սաղարթապատս մրտենեաւ, ձիթենեաւ և
կաղամախեաւք՝. և 'ի յուղարկաւորութեան նոցա
պաշտէին արարողութիւնք, զորս ոչ է օրէն պատ-
մել[4]։

Զամենայն աւուրս կենաց իւրեանց երկու
կամ մանաւանդ մի ինչ հոգ 'ի մտի էր նոցա, միա-
նալ 'ի նեղբուստ ընդ դիս, և կատարելապէս ընդ
մարդկան։ Կարևորագոյն պարապումն նոցա էր
յաստուած[5], ունել միշտ զնա առաջի աչաց, և

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 21. էջ 84։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յոգ. 22։ Յամբղիկ. անդ. գլ. 35. էջ 206։

3 Պլուտ. յղ. Խոսի, հտ. 2. էջ 384։ Կուինտիլ. յղ. Ճարտ. գիրք Թ. գլ. 4։

4 Պլին. գիրք Լ.Ե. գլ. 12. հտ. 2. էջ 711։

5 Պլուտ. յղ. գիրն Սոկր. հտ. 2. էջ 586։

6 Պլուտ. 'ի Նումա. հտ. 1. էջ 69։ Կղեմ. ազգաս. յա-Ճախապ. գիրք Ե. էջ 686։

ըստ կամաց նորա ուղղել զամենայն[1]։ Լմին իրի և երկիւղածք էին, մինչև չառնուլ զանուն նորա յերդմունս. ամբիծք էին վարք նոցա՝ արժանիք աչաց նորա. յորդորէին հանապազ զմիմեանս՝ մի մերժել յանձանց զՀոգի աստուծոյ, որ հանդչէրն 'ի սիրտս նոցա, և մնա դիւրագոյնք պարապէին 'ի գուշակութիւնս, որովք միայն է մեզ գիտել զկամն նորա[2]։

Ոստի յառաջ գայր սէրն, որ կցորդէրն զնոսա ընդ միմեանս և ընդ այլս[3]։ Ոչ ոք հանդոյն Պիւթագորայ ծանեաւ և եբեր յանձին զբարեկամութիւն. նա նախ ասաց զբարբառն քաղցր և գեղեցիկ քան զամենայն բարբառս, Ա՛հա՝ ես զբարեկամն կոչելով[4]։ Լս յիրաւի իսկ. զի յորժամ ոք 'ի բարեկամաց մերձ կայցէ ինձ, ոչ ևս եմ միայնակ, և ոչ երկուք ոմանք եմք։

Լս որ 'ի բնաբանութեան և 'ի բարոյականին զամենայն 'ի մի ինչ ածեալ ժողովէր, կամեցաւ զի և աշակերտք իւր 'ի մի խորհուրդ և 'ի նոյն կամս իցեն հաստատեալ[5]։ Լս էին նոքա հրաժարեալք յամենայն ընչից[6], այլ ազատք յուխտս իւրեանց, անտենչք ընդունայն պերճանաց և մնափառութեան[7] և տուրեւառիկ շահուց՝ որ սո-

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. էջ 115։ գլ. 28։
2 Նոյն անդ, էջ 116։
3 Նոյն անդ, գլ. 33. էջ 193։
4 Պորփիւր վարք Պիւթագ. էջ 37։
5 Յամբղիկ. անդ, էջ 186։
6 Նոյն անդ, գլ. 30. էջ 143։
7 Նոյն անդ, գլ. 31. էջ 165։

վոր են գԺտութիւնս 'ի մէջ արկանել. և երկնչ-
ին միայն 'ի նախանձընդդէմ հակառակութենէ
առաքինութեան և 'ի ներհակակիր բուսոց բա-
ղուց. նմին իրի և անդստին 'ի նորընծայութե-
նէ զամենայն փոյթ 'ի մէջ առնուին յաղթել
խափանացս։ Այնքանութիւն նոցա յօդեալ
ցանկութեամբ հաճոյիցն աստուծոյ՝ յոր զամե-
նայն ինչ ուղերձէին, տայր նոցա յաղթանակել
առանց մնասարծութեան, և նախանձել ընդ
միմեանս առանց չարակնութեան։

Լսանէին անտես առնել զանձինս, խոնար-
հել 'ի կարծիս միմեանց, չվշտացուցանել զբա-
ղեկամութիւն կասկածանօք կամ ստութեամբք
թէպէտ և դուշնաքեօք, կամ տարադէպ կատա-
կանօք, և կամ աւելորդ խոստմամբք[1]։ Լսա-
նէին դարձեալ երկնչել և 'ի թեթև ինչ ցրտու-
թենէ սիրոյ։ Լինէ 'ի զբուցատրութիւնս անդ
իմաստասիրականս դառնութեան ինչ բան ելա-
նէր 'ի բերանոյ ուրուք, ոչ թողոյր մնանել ա-
ղեգական մինչև տուեալ աջ հաշտութեան[2]։
Այ 'ի ոմն 'ի նոցանէ 'ի հանդոյն իմն դէպս դիմեալ
առ բարեկամ իւր, ասէ. Գիտցուք զցաստումն 'ի
բաց, և լեր դու դատաւոր խնդրոյս մերոյ։ Լոյ
միւսն ասէ. Լոկեց մնադիւր, այլ լի ամօթով. զի

1 Յամբակ. վարք Պետ. գլ. 30. էջ 145. գլ. 33. էջ 187։
2 Պրուտ. յղ. եղբայրսիր. հտ. 2. էջ 488։

երիցագոյն գոլով հասակաւ, յեռանեալ գտայ քան զքեզ՝։

Ասանէին նուաճել զյեղյեղուկ բարս, որ աշխատ առնէ և լքուցանէ զբարեկամութիւն։ Օ՛ի եթէ արիւն նոցա եռայր՝ի սրտի, կամ տրըտմութիւն ինչ կամ դժկամակութիւն առաջի կայր նոցա, մեկնէին՝ի բաց, և խաղաղէին զակամայ աղմուկն՝ իմաստասիրութեամբ կամ նուագօք ըստ պատշաճի կրից հոգւոյն[1]։

Ի դաստիարակութենէ անտի էր նոցա հլութիւն մտաց և համբոյրք բարուց, որովք միաբան էին ընդ միմեանս։ Փոյթ էր ամենեցուն չդառնացուցանելոյ զբարս նոցա անդստին՝ի մանկութենէ. դաստիարակք արգոյք և հեզք ածէին զնոսա յուղղութիւն, տալով նոցա՝ի դէպ ժամու և առանձինն խրատս քաղցուցանս՝ որ աղերսութիւն էին քան յանդիմանութիւն[2]։

Պիւթագոր, որ իշխէին ամենեցուն նոցա հայրենի գթով այլ միապետական իշխանութեամբ, կեայր ընդ նոսա որպէս ընդ բարեկամս։ Այնամէր զնոսա՝ի հիւանդութեան, սփոփէր՝ի վիշտս։ և խնամք նորա յաւելեալ՝ի գիտութիւնսն՝ գերէին զմիտս նոցա, մինչև զանկարկուութիւնս նորա համարել նոցա պատգամս, և ոչ այլ ինչ պա-

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 27. էջ 107։

2 Նոյն անդ, գլ. 31. էջ 163։

3 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 23։ Յամբղիկ. անդ, գլ. 25. էջ 93։

4 Պորփիւր վարք Պիւթագ. էջ 37։

տասխանեալ առարկութեանց՝ բայց թէ ինչն ասաց՝։ Սովաւ և զսիրելութիւնն զայն վեհ և չքնաղ տպաւորեաց 'ի սիրտ աշակերտացն, որ ապա յառակս պատշաճեցաւ[2]։

Ողջոյնք մեծի ազգատոհմիս սիրեալք 'ի տար աշխարհ, անծանօթք միմեանց՝ ճանաչէին զիրեարս 'ի նշանաց ինչ[3], և անդէն ընդելանէին ընդ միմեանս որպէս անդստին 'ի մանկութենէ ծանօթք իրերաց. այր զընկերին օգուտ համարեր իւր շահ։ Որպէս զի բազումք 'ի նոցանէ հատին զծովս, և զաստ իւրեանց եղին 'ի կղեր, առ 'ի կանգնել զթշուառութիւն եղբարցն անկելոց 'ի տառապանս և 'ի կարօտութիւն։

Լ. Թէ քանի վստահք էին յիրեարս, լուր զհաւաստին՝ որ գորովէն զսիրտ։ Մի 'ի մերոցս ճանապարհորդեալ հետի, և մոլորեալ ընդ անապատ, հասանէ պարտասեալ 'ի պանդոկի մի, և հիւանդացեալ գնի անդ 'ի մահիճս։ Լ. 'ի շունչ վախճանին չուսնելով ինչ 'ի հատուցանել ընդ խնամոցն՝ զոր առնէր նմա պանդոկապետն, էառ տախտակ և գծեաց 'ի նմա գողգոթտ ձեռամբ նշանագիրս ինչ, և ասաց գնել զայն 'ի տեսիլ յարահետ ճանապարհին։ Նոց ժամանակ բազում յետ մահու նորա, և այլոց ումեմն պիւթա-

1 Կիկերո. յղ. բն. գից, գիրք Ա. գլ. 5. հմ. 2. էջ 400։ Վաղ. Մաքս. գիրք Ը։

2 Բամբղեկ. վարք Պիւթագ. գլ. 33. էջ 186։

3 Նոյն անդ, էջ 191։

4 Դիոգ. Ծագկաբաղ Վաղեսի, էջ 243։ Բամբղեկ. անդ. էջ 192։

գորականի դէպ եղև 'ի հեռաւոր կողմանն յայ-
նոսիկ անկանել։ Որոյ 'ի տեսանել զնշանա-
գիրսն՝ գիտացեալ զարկածս աշակերտակցին,
զկայ էառ. և հատուցեալ զծախս պանդոկապե-
տին հանդերձ տոկոսեաքն, անց գնաց զանա-
պարհ իւր[1]։

Նեստորիոս. Ոչ ինչ զարմանք են ընդ այդ. այլ
դու լուր որ ինչ պատմեցաւն ինձ 'ի Մոսուլ։
Ասանաչիցես զ Յիսուս։

Սոֆեին. Յիսուս զպարծանս կարգիս մերոյ
յաձախեաց. և մանուկ դեռ ևս գոլով, եգիտ
հնարս զերծանելոյ 'ի հալածանացն՝ որ զայնչափ
երևելս 'ի պիւթագորականաց կորոյս[2]. և յետ
ամաց ինչ երթեալ 'ի Մոսուլ, դաստիարակ Լ-
պամինոնդայ եկաց[3]։

Նեստորիոս. Որքան Յիսուս մեռաւ, պիւթա-
գորեանքդ իտալացիք զմտաւ ածեալ՝ թէ գուցէ
ոչ ըստ արարողութեանն ձերոց թաղումն նորա կա-
տարեսցի, առաքեցին զՄՀանոր 'ի Մոսուլ՝ խըն-
դրել զմարմին նորա, և տալ վարձս որոց զնա ծե-
բատածեալն էին։ Լա գիտաց ՄՀանոր՝ զի Լ-
պամինոնդայ, որ 'ի խորհուրդս ձեր ընծայեալն
էր, տուեալ էր թաղել զնա ըստ ձերոց կարգաց.
այլ չկարաց ընդունելի առնել նմա զարծաթն ա-
ւանդեալ իւր[4]։

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 33. էջ 192։
2 Նոյն անդ, գլ. 35. էջ 200։
3 Նեստոս Լեպամինոդ. գլ. 2։
4 Պլուտ. յլ. գիւմն Սոկր. հա. 2. էջ 585։

Սոմեղէն. Յուշ լինէ ածելոյ զիրս ինչ Լիւսեայ։ Օ՛ի յելանելն նոր երբեմն 'ի մեհենէն Հերայ, ելեալ առաջ եղև նման 'ի գաւթին Աբրիփեմոս սիրակուսացի մի յաշակերտակցաց նորա. և աղաչեալ զնա ճնալ իւր անդ վայրիկ մի, եմուտ երկրպագել աստուածուհւոյն։ Եւ խորասուզեալ յանդգաստից 'ի մտաւոր տեսութիւնս, ել ապա ընդ միւս դուռն մեհենին և գնաց։ Ի վաղիւ անդր տարաժամ 'ի ժողովն աշակերտակցացն հասեալ՝ եգիտ զնոսա խռովեալս, զի Լիւսիս չէր 'ի միջի։ Յիշեաց յայնժամ Աբրիփեմոս զխոստումն նորա ճնալոյ իւր առ դրան մեհենին, և ընթացեալ եգիտ զնա 'ի գաւթին բազմեալ խոհաղութեամբ 'ի վերայ վիմին՝ ուր յերեկն թողեալ էր զնա։ Եւ ոչ ինչ զարմացիս ընդ հաստատութիւն նորա, եթէ խելամուտ լիցիս խիստ և անսչառ զօրութեան օրինաց մերոյ կարգիս. զի ոչ միայն չթուլացուցանէ ինչ 'ի հրամանացն, այլ և կէտ կատարելութեան զպահպանութիւն խրատուցն որպէս զհրամանաց առաջի դնէ։

Նաստարսիս. Բայց են և կարգք ինչ առ ձեզ դուշնաքեայք և մնոտիք, որ ձղձիմ և կցիր զմիտս կացուցանեն. որպէս չարկանել ոսն զոտամբ[1], չհարթել զերնգունս յաւուրս ոտնից, դագաղս 'ի նոձեոյ մի առնել[2], այլովքն հանդերձ։

1 Պլուտ. յզ. անարժան յօդ. 10։ Յամբղիկ. վարք ամենի. հտ. 2. էջ 532։ Պիւթագ. գլ. 28. էջ 131։
2 Դիոդ. լայերտ. գիրք Ը։

Սոֆեյն. Թմոզ անդր 'ի բաց, և մի ըստ բազմախուսն խտրանացդ առներ զմէնջ զատաստան. որ գրեթէ առ հասարակ 'ի խոտակրծնից ոմանց յաւելեալ էն, որք զբարեկարգութիւն և եւ բարեկարգել հնարեցան յաճախելով զխստութիւն՝ յորոց կէաք առ բարձրագոյն կարգ ճշմարտութեանց պատկանին, և առ հասարակ սահմանեալ էն 'ի վարժս համբերութեան և այլոց առաքինութեանց։ Ա՛յլ զզօրութիւն սահմանագրութեանս մերոյ 'ի դէպս ծանուցս է 'ի միտ առնուլ. զի աշակերտ Պիւթագորայ ոչ արտօսր արկանէ և ոչ բան մի տրտունջ հանէ 'ի բերանոյ յարկածս թշուառութեան, և չզանգիտէ և ոչ լքանի 'ի վտանգս. եթէ իրք ինչ իցեն նմա յատենի՝ ոչ խոնարհի յաղաչանս, զի զարդարութիւն խնդրէ, և ոչ մարդահաճէ, զի սիրելի է նմա ճշմարտութիւն։

Ա՛նոփարսոս. Ա՛յ աշխատ լինիր մանրապատում առնել զամենայն. գիտեմ որչափ ինչ աղանդք և իմաստասիրութիւն ներգործէն 'ի ջերմն և 'ի նկուն երևակայութիւնս. այլ և այն ոչ ինչ զանխուլ է յինէն՝ զի և բազումք այնոքիկ են, որք զփոխարէն սխոտիցն յորոց հրաժարեն՝ ընուն մնացորդաքն։ Ցեսի մանաւանդ միաբանութիւն պարապեալ յուսումն և յաղօթս, հրաժարեալ մնադիւր յամենայն հաճոյից զգայութեց և 'ի

1 Յամբլիկ. վարք Պիւթագ. գլ. 32. եկ 174. գլ. 33. եկ 188։

բերկրութեանց կենաց, և յանձն առեալ յօժարութեամբ զառանձնութիւն, զժուժկալութիւնս և զխստութիւնս[1], վասն զի նոքօք իշխեր աղգաց և թագաւորաց։ Օ՛քրմանցն ասեմ զեղիպտացւոց, որոց աղանդ յար և նման ձերումդ թուի[2]։

Առեցին. Այսու ևս ևեթ ընդհատ 'ի մերմէն, զի ոչ բարեկարգութիւն ազգին է նոցա պարապումն, և ոչ այլ ինչ խնդրեն օգուտ՝ բայց զիւրեանցն։

Նաւաբոխս. Այլ զձէնջ նոյն ստգտանք են. ո՞չ ապաքէն բամբասիք, զի գերեալ զմիտս ձեր 'ի հնազանդութիւն աղանդապետին ձերոյ և մոլեանախանձ սիրով աղանդակցացդ՝ խոտէք զայլս 'ի մարդկանէ որպէս նախիրս անարգ զրաստուց[3]։

Առեցին. Այո՛, և մի՛ լիցի խոտել մեզ զմարդիկ, որք առանց բարերարութեան անմարթ համարիմք մերձենալ առ աստուած[4], որք ոչ առ այլ ինչ վաստակեմք՝ բայց 'ի հաստատել կարևոր կցորդութիւն ընդ երկինս և ընդ երկիր, ընդ քաղաքացիս միոյ քաղաքի, ընդ ընտանիս միոյ տան, և ընդ ազգի ազգի սեռս կենդանեաց առ հասարակ։ Այուրմբ եգիպտացւոց զփառս ևեթ սիրեն և զշիխանուն, նմին իրի և պաշտան

1 Երոգոտ. գիրք Բ. գլ. 37։ գլ. 35. էջ 208։
2 Քերեմ. առ Պորփիր, յդ. ժուժկալ. կերակր. գիրք Դ. էջ 308։
3 Յամբղիկ. վարք Պիւթագ. էջ 185։
4 Ընտիր. առ Փոտայ, էջ 1313։
5 Յամբղիկ. անդ, գլ. 33.

կան Թագաւորի, և Թագաւորն նոցա՝. իսկ Պիւթագոր խանդակաթ էր 'ի սէր մարդկան, քանզի ցանկայր լինել ամենեցուն ազատս և ազատաբինիս։

Հարցարան. Բայլ ոչ 'ի դէպ էր նմա կարծել զի և այլք առ հասարակ ցանկային այնմ՝ 'ի սրտէ, այլ մանաւանդ պարտ էր նմա կասկածել՝ զի խլրտեալ նոցա կործանէին զշինուած օրինաց և առաքինութեանց։

Պատասխան. Պարեցիկ էր և զհիմունս շինուածոյն արկանել. և յաջողութիւնք անդէն 'ի սկզբան յուսացուցին զնա ամբառնալ զայն ոչ սակաւ 'ի բարձրութիւն։ Պատմեցի իսկ եթէ որպէս 'ի հատանել նորա Իտալիա կերպարանափոխ եղեն բարք։ Յեղափոխութիւնն այն տակաւ սփռեալ տարածանէր, եթէ ոչ արք հզօրք պղծեալք անօրէնութեամբք փառասիրէին մտանել 'ի կարգ նորա։ Երժեցան 'ի նմանէ, և մերժումն այն եղև նմա 'ի կործանումն. զլուս 'ի վեր ամբարձ զրպարտութիւն, այն ինչ գտեալ իւր զօրավիգն։ Յղեաք մեք ատելիք ամբոխին 'ի խափանել զընտրութիւն աւագանւոյն վիճակաւ, և մեծատանց 'ի սահմանել զայն 'ի վարձ վաստակոց։ Խրատք մեր փոխեցան 'ի խռովայոյզ խրախուսանս, և ժողովք մեր 'ի գումար-

1 Դիոգ. գիրք Ա. էջ 66։ գլ. 35. էջ 210։
2 Յամբլիկ. վարք Պիւթագ. 3 Նոյն անդ, էջ 204։

տակս դաւակցաց՝։ Պիւթագոր հալածեալ 'ի Կրոտոնէ, չեգիտ ապաստան առ ազգս՝ զորս ե-բանաւետեանն էր. և ոչ մահ նորա վախճան ա-բար հալածանացն։ Յաղուամբ յաշակերտաց նո-րա, որ ժողովեալ կային 'ի տան ուրեք, տուան ձարակ հրոյ, և կորեան զրեթէ առ հասարակ։ Այլք ցրուեցան 'ի բաց. բայց կրոտոնացւոց 'ի վերայ հասեալ անմեղութեան նոցա, յետ սա-կաւ ժամանակի կոչեցին զնոսա անդրէն. այլ եղև յայնժամ պատերազմ, և առաքինացեալ նոցա 'ի միում ուրեք ձակատու՝ սպակեցին զանպարտա-կան կեանս իւրեանց գերապանծ մահուամբ[2]։

Այլ թէպէտ և յետ արկածից պատահա-ցաս մերձ էր միաբանութիւնն 'ի քակել, հա-նապազորդեաց ընդ ժամանակս ինչ կացուցանել իւր տեսուչ[3]։ Որոգոր մի 'ի յեանոց 'ի տեսուչս, հակառակ հրամանին՝ զոր Պիւթագոր սաստիւ պատուիրեաց մեզ զգենուլ կազմիկս, եբեր յան-ձին բարս խստագոյնս, զձև անյարգալ, և զգես-տս խարազնագոյնս։ Յղեն նորա կուսակիցք, և հերձան նորաձևութեանն հետևօղք 'ի նախ-նի սիւթագորեանցն։

Այս արդ սակաւք ոմանք մնացորդք աղանդոյն, ցրուեալք 'ի միմեանց, ոչ 'ի նախանձ շարժելով զոք և ոչ 'ի գթութիւն, կատարեմք լռելեայն

1 Յուսթին. գիրք Ի. գլ. 4։
2 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 35. էջ 212։
3 Նոյն անդ. գլ. 36. էջ 213։
4 Երմիպ. Տիմ. և Սոսիկր. առ Աթէն. գիրք Դ. էջ 163։

զՀրամանս կարգապետին մերոյ։ Ա.յլ դու յայժմս զօրութենէ մերմէ 'ի միտ առ զայն՝ որ 'ի սկզբան սահմանադրութեանս մերոյ. մեք զԱ.պամինոնդ կրթեցաք, և Փոկիոն օրինակաւս մերով վարժեցաւ։

Ա.ելորդ է ինձ ասել, զի յաղանդոյ աստի ելն օրէնսգիրքք բազումք, երկրաչափք, աստեղաբաշխք, բնաքննիք, և որք երևելիք յամենայն կարգի'. և զի սա եմոյծ յԱ.ղաղա զգիտութիւն, և 'ի մատենագրաց մերոց 'ի կիր առին արդի իմաստասէրքք զբազմաղոյնս 'ի գիւտից՝ որ փայլեն 'ի գիրս նոցա։

Փառք Պիւթագորայ և ս քան զեւս սոքօք պայծառացան, և ամենայն ուրեք գերագոյն ընդ իմաստունս է նմա տեղի[2], և 'ի քաղաքս ուրեք Ի.տալիոյ դիւցական առնու պաշտօն[3]. և չէն ինչ ընդ այս զարմանք, զի և 'ի կենդանութեանն իւրում պաշտէր[4]։ Տես զի ազգք իւրաքանչիւր, և իմաստասէրքք իսկ զիմարդ մեծարեն զօրէնսդիրս և զուսուցիչս ազգի մարդկան. ոչ և ս թուին նոքա մարդիկ՝ այլ աստուածք ոմանք[5], հոգիք գերաշխարհիկք ի՛ջեալք 'ի յերկինից 'ի սանդարամետս

1 Յամբղիկ. վարք Պիւթագ. գլ. 29. էջ 132։ Պրուքք. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 1101։ Փաբրիկ. մատենագ. Յուն. հտ. 1. էջ 490։

2 Երոդոտ. գիրք Դ. գլ. 95։

3 Յուստին. գիրք Ի. գլ. 4։

4 Պորփիւր վարք Պիւթագ. էջ 28։ Դիոն ոսկէք. Ճառ 17. էջ 524։ Փիլոստր. վարք Ապողոն. գլ. 1։

5 Կղեմ. ազէքս. յաՃախապ. գիրք Ա. էջ 355։

յոր բնակեմք, և յանձն առեալ զկենսուլ մարմին մահկանացու, և կցորդել վշտաց մերոց, առ 'ի հաստատել 'ի մեզ զօրէնս և զնմանատասիրութիւն'։

Նաւաբոխ. Սակայն խոստովանելի է, զի հոգւոցս այսոցիկ բարեբարաց վաղանցիկք եղէն յաջողութիւնք. և բարեկարգութիւնն արարեալ 'ի նոցանէ ոչ համատիւռ տարածեցաւ, և ոչ յաւէժաբար եկաց։ Ինձ այսպէս թուի՝ թէ մարդիկ կացցեն մնասցեն անիրաւք և ախտաւորք մինչև 'ի սպառ։

Սոֆոն. Զայդպէս իցէ՝ եթէ ոչ, որպէս Սոկրատէսն ասէր, յայտնագոյնս ինչ խօսեացին երկինք, և գթացեալ աստուծոյ 'ի տգիտութիւն նոցա՝ առաքեսցէ պատգամաւոր զոք թարգման կամաց իւրոց[2]։

Ի վաղիւ անդր յետ զրուցատրութեանս մեկնեցաք գնալ Լեթէնս. և յետ ամսոց ինչ նաւեցաք 'ի Ռեղոս 'ի տօնսն։

1 Պղատ. առ Կղեմ. աղէքս. յաձախապ. գիրք Ա. էջ 355։
2 Պղատ. պատասխանատ. Սոկր. հա. 1. էջ 31։ Նոյն, 'ի Փեդ. հա. էջ 85։ Նոյն, ՅԱՂ կիր. 2. հա. 2. էջ 150։

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

---

Ա. Վասն որ Պոլիսոյ սասանել հինգուրեանն։ (էջ 144։)

Զհինգնութիւնէն Սոկրատայ ոչ երկայնեցի զբանս, զի ոչ այնպէս յաճախ և գառն՝ որպէս համարի Պղատոն՝ վարեր նա նովաւ։ Առ ի խելամուտ լինելոյ այսմ, շատ է ընթեռնուլ զզուցաբերութիւնս Սոկրատայ աւանդեալս ի Քսենոփոնէ և ի Պղատոնէ։ Զի յուսաջինն այնու մեղմական զգօնութեամբ բարբառի Սոկրատ, որպէս զի բազում ուրեք խնդրել զայն ընթերցողին յերկրորդումն և ոչ գառանել։ Երկաքանչիւր աշակերաբք նորին կացուցանեն զնա ի պայքար ընդ խպիպայ իմաստակի 1. այլ որ զորամախաստութիւնն զայնոսիկ համեմատել կամիցի, գտցէ զնոսիր զանազանութեանս այսորիկ։ Սակայն Քսենոփոն ականջալուր եղև իրացն, զորս աւանդէ։

Բ. Յաղագս որ զանինայոցն սասանելոց որբնոցն ընդ մահ Սոկրատայ։ (էջ 176։)

Մատենագիրքդ գարուք բազմաք կրասերագոյնք քան զՍոկրատ, վկայեն՝ զի ամենայնիք խակ և խակ յեւ մահուս նորա նեղեալ ժամանակաւ, ի միս առնն զանիրաւութիւնն 2, և կանգնեցին նմա պատկեր. և զի ամբաստանողաց նորա և ոչ տեղի տուեալ պատասխանւոյ՝ զՄելիտոս սպանին, և զայլս ազատեցին 3. և զի Անիտոս քարկոծեցաւ յԱրակլիս, ուր և ընդ բազում ժամանակս կայր շերիմ նորա 4։ Իսկ այլք ասեն, զի չարախօսացն Սոկրատայ չհանգուրժեալ ասելութեան հասարակաց, առ յուսահատութեան ինքնաձեռն խեղդամահ սատակեցան 5։ Այլ աւանդութիւնքս այսոքիկ ոչ միաբանին ընդ լուութեան Քսենոփոնի և Պղատոնի, որք բազում ժա-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 804։ Պղատ. հատ. 1. էջ 363. հատ. 3. էջ 281։

2 Նախագր. ի Բուսիր. խասկ. հատ. 2. էջ 149։

3 Դիոգ. գիրք ԺԴ. էջ 266։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 43։

4 Թեմիստ. Ճառ 20. էջ 239։

5 Պլուտ. նախանձ. հատ. 2. էջ 538։

մանակաւ յետոյ քան զվարդապետ իւրեանց վախճանեցան, և ոչ ինչ զարթանցն ամենեցուց յիշատակեն, և ոչ զգաստասալիցն նորա պատուհասուելոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ Քսենոփոն՝ որ յերկարակեաց եղև քան զԱնիտոս՝ վկայէ զմանէ, զի չէր բարեհամբաւ առ ամենեցին վասն անկարգութեանց որգուոյն՝ զորոյ անիծոյթ արար զդաստարակութիւն և վասն այլանգակութեան իւրոյ բարուցն 1։ Յորմէ երևի հաւատամ, եթէ ոչ սխալեմ, զի ոչ երբէք ամենեցիք խնդրեցին յԱնիտոսէ զվրէժ մահուան Սոկրատայ։

Գ. Թէ յորմամ ելոյրի յԵլեւսիս արարողութիւնք գոնիցն և գեղարանն խոգրեին։ (էջ 190։)

Զայսմանէ, աղօթ ինչ կարեմ տալ տեղեկութիւն։ Դարձեալ մատենագիրք այնպէս ասան իմանալ՝ զի խորհրդատուքն Դեմետրեայ ձգէին երբեմն յԵլեւսիս երիս բիւրս նուէրելոց 2, թող զբաղմութիւն եկաւորացն ի զնին։ Բայց յերից բիւրուց ասի ոչ ամենեքին ամենայն արարողութեանցն ականատեսք լինէին. զի ի գաղտնագոյնսն նուազունք արգելք ընկալեալ լինէին, այսինքն նորընծայեալքն ամի ամի՝ որք զքաւութիւն ընծայութեանն առնէին, և ոմանք յերիցագունից ընծայելոցն։

Մեհեանն, մի ընդարձակագունեցն Ելլադայ 3, կառուցեալ կայր ի բակ մի զքջաւատեալ որմով, երեքարիւր և վաթսուն ոտնաչափ յերկայնութիւն ձգեալ ի հիւսիսոյ ի հարաւ, և երեքարիւր և մի ի լայնութիւն յարևելից յարևմուտս 4։ Ընդ, թէ ոչ սխալեմ, խորհրդականքն կամ նուիրեալք ջահ ի ձեռին յօրինեին զպարան և զքջանս։

Յետ կոյս մեհենին յարևմտից կայ ցայգ բարձրաւանդակ մի հատեալ ի ժայռեն, առաւել քան զութ ոտնաչափ ամբարձեալքսն զյատակ մեհենին, երկայնութիւն նորա իբր հարիւր և եօթանասուն ոտնաչափ, և լայնութիւն ուրեք քառասուն և չորք։ Ի հիւսիսային ծայր նորա նշմարին հետք խորանի, յոր ընդ բաղում ասասիանս են եկք 5։

Ինձ թուի զի ի բարձրաւանդակի սոյ կատարէին տեսարանքն, զորոց յայս գլուխ գրոցս ասացի։ և զի բաժանեալ էր այն ընդ երկայնութիւն յերիս երկայնաձիգ ճեմելիս, յորոց

1 Քսենոփ. ի պատասխանատ. էջ 707։
2 Երոդոտ. գիրք Ը. գլ. 65։
3 Պարաբ. գիրք Թ. էջ 395։
4 Խորհրդ. գիրք Ը. գլ. 65։
5 Ղոյն անդ։
Ը. էջ 125։
4 Ձենալրբ. ուղևոր. ի Յունաստ. գլ. 42. էջ 190։
5 Ղոյն անդ։

երկուք էին վայրք փոքձուԹեանցն և գԺոխոց, իսկ երրորդն ծածկեալ հողով ընծայէր ի տեսիլ անտուտս և արօտս. և զնոսի ի խորանն երանէին, ուր էր անդրին՝ յորոյ ի փայլակնացայտս լուսոյն չանային Նորընծայեալքն։

Դ. Ի Բ—ՆԱ ԿՕՂՇ, ԾՄՊԱՇ, ԸՐԸ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԷՐ Ի ԽՈՐՀՈՒՐԴՆ ԴԻՏԵՑԻՍ ՈՒՆԷԼ (ՀՂ 190։)

Մեկնութիւն։ Համաբերեցաւ բանիւս այսուիկ արձակել հանդիսին։ Հիւսիքսս 2, որ զբաւեալս զայսոսիկ աւանդէ, յաւելու ևեթ զի էին բարբառք ցնծութեան առ նուիրեալսն։ Զարաբի ինչ զայցանեի յիշատակ, զի չկիսեմ իսկ՝ ի սկզբանն Թէ ի մէջն կամ Թէ ի կատարածի պաշտամանն արտասանեին։

Քէլէր համարի Թէ նշանակիցն գԹ։ Ն ՀԼՐ ՈՒՂՂ։ Ուստից հերքելոյ հակադատութեամբ զմեկնութիւն նորա, շատ համարիմ ածել այսր զպատասխանին՝ զոր յամին 1766 եւոտ առ անարգամեծար հարցուածն, զոր բազմահմուտ կաՃառակիցն իմ Լարշէ տարար ինձ 3։

«Զի բաւեալ այսոքիկ ԿՕՂՇ և ԾՄՊԱՇ ոչ են հեղինք, այն յայսոսիկ է. այլ յոր բարբառ ի գէպ իցէ խնդրել զայնոսիկ։ Ինձ հաՃոյ Թուի յեգիպտականն. զի խորհրդաստեղ Նշանակեալ յԵգիպտոսէ անգր երևին ածեալ։ Աբդ առ ի գիտել զնշանակութիւնս նոցա պարտ է նախ անդեակ լինել։ Հին զլուսին եգիպտացւոց, որոց հաղիւ հետք ինչ յայժմու եգիպտականն նշմարին. և երկրորդ՝ զի երկոքին բառքդ չիցեն այլոյլեալ յանցանեալն ի միջէ յայլ բարբառ, և ոչ ի ձեռս ընդօրինակողաց վրիպեալ ի բեկիկ ուղղագրութենէն։

Մարթ է դիմել և ի փիւնիկի բարբառ, որ բազումիւք ընդ եգիպտականին բերէ նմանութիւն. որպէս առնէ Քէլէր, ըստ օրինակին Պոչարայ՝ զամենայն ինչ ի փիւնիկեցին խնդրելով։ Այլ ըստ այսմ գէպ լինեալ բազումս այլեայլ մեկնութիւնս տալ երկուց բառիցն, պատշաՃս առ հասարակ, զի առ հասարակ անասոյգս։ Զակասուլոցն ի սուտգաղանութիւնն ոչ ինչ աւանուել քան զարևելեան բարբառս է ձեռնտու. և գրեթէ միշտ այսու դասանին մնալոցեալ պարապալքն յայս ազգ երկաւիրելեան։

Յայս ուրեմն է՝ զի չկարեմ ասել ինչ հաւաստաւս, և զի յոյժ վերջացեալ դասանիմ յարժանաւորութենէն ակնկալութեանդ՝ որով հարցասիրութիւնդ քո մեծարէ զիս։ Ընդ այս

1 Մեսրս. Յեղեւս. գլ. 11։
2 Հիւսիք. ի բառն Կօղշ.
3 Յաւել. պատմ. ի վերայ փիլիսոփայութեան, էջ 373։

*ինձ ապա այլ ինչ ընծայել հարցողիդ, բայց զնոսաւանութիւն ոգիսուութեան խոշ։ . . . .*

Ե. Յաղթ. արքան գիրքն։ (էջ 191։)

Ուստարարդքն այսպէս համարի՝ զի դաղանիք խորհրդատուին ոչ այլ ինչ էին, բայց վարդապետութիւն միութեան աստուծոյ։ Ի հաստատութիւն կարծեացն իւրոց ածէ հատուած ինչ քերթութեան յիշատակեալ ի բաղմաց ի սրբոց հարց, որ որպէս կան վերերգութիւնն կոչի։ Եւ է սկիզբն հատուածոյն, զոր ի խորհուրդս անդ սովորութիւն էր նուագել, այս. Ի Բ-ոյ դիշ-ոյ։ Եւ ապա գաւանէ զմի աստուած ինքնագոյ, աբարիչ ամենայն եղանութեանց, զոր ոչ ոք տեսանել կարող է, և ի նմանել ծածկի և ոչ ինչ։

Արդ եթէ արդարև կատարողապէսն զայս ամենայն վարդապետքն ընծայեալոցն, ոչ էա՞ ի գէպ էր երկրայել վասն որոյ իրաց սահմանեալ էին խորհուրդքն. այլ այսմ ընդ առաջ ելանէն գժուարութիւնք բազումք։

Զէ՞ ինչ փոյթ եթէ ասոցքն այնոքիկ Որիգէայ էին կամ այլոց ուրուք քերթողի. այլ զայն կարևոր է գիտել՝ թէ էին երիցագոյնք քան զբրիստոնէութիւն, և թէ արտասանէին ի պաշտօն ընծայութեանն։

Ա. Եւսեբի՝ և կիր առնու զայն ի Հրէէ ուսմունէ Արիստաբուղեայ, որ եկաց յաւուրս Պղտղեմէայ 2 արքային եգիպտացւոց, այս ինքն իբր երկերիւր ամաւ նախ քան զՔրիստոսանութիւն փրկչին. այլ ընթերցուած աւանդելոց ի նմանէ առանցն այլազգ ունի քան զաւանդեալսն ի սրբոյն Յուստինեայ ըստ կարևոր մասին 3։ Զի ի սրբայն գաւանի մի աստուած ամենատես արարիչ ամենայն էից. և անուն նմա կոչի Արտամազդ։ Իսկ աւանդեալն Յեւսեբեայ թէպէտ և զնոյն բերէ գաւանութիւն՝ կերպարանաց եթէ բանիցն փոփոխուի, այլ յիշատակին ի նմա Մովսէս և Աբրահամ։ Ուստի քաջահրամուա քննիչք առնուն գուշակել, զի հատուածն այն Արիստոբուղեայ կամ յայլմ ումեքէ ի Հրէից է քերթեալ կամ այլայլեալ 4։ Բարձցուք ապա զյաւելուածն, և ընթերցուք զընթերցուած սրբոյն Յուստինեայ. և գոցի քերթող ասղիցն

1 Կղեմ. աղեքս. յորդոր. էջ 64։

2 Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք ԺԳ. գլ. 12. էջ 664։

3 Յուստին. յորդոր. առ Յոյնս, էջ 18. և զմիապետ. էջ 37։

4 Փաբրիկ. մատենագ. Յուն. հտ. 2. էջ 281։

հանգոյն իմն բազմաց ի հնոց մատենագրացն խօսեցեալ զգեբարուն էին։ Կիսատելի է մանաւանդ, զի կարեւորագոյն մասունք վարդապետութեանն աւանդելոյ ի վերերգն գոսանին յորմէնութիւնն Կղէանթեայ՝ որ Ժամանակակից է Արիստաբուղեայ, և ի քերթածն Արատոսի՝ որ ի նմին ժամանակի եկաց, և յորմէ թուի ածեալ Պոզոսի զվկայութիւնն յԱրիստոտելի 1։

Բ. Ալ նուազեր արդեօք ի ժամ նուիրանացն որփկական վերերգութիւնն։ Ապաքէն Ցատիանոս և Ամենագորաս կցորդեն իմն զայն ընդ խորհուրդն 2. այլ ոչ առ այլ ինչ ի նեղբաս ածեալ զայն, բայց առ ի հերքել զբազմաստուածութեանն անտեղութիւնս։ Եւ զնոյնդ սոքա երկոքին և այլ հաւաք եկեղեցւոյ, ի ցուցանել զմիութիւն աստուծոյ ի սկզբանէ հետէ ծանօթ լեալ ազգաց, անտես առնեն յաւելուլ զի խոստովանութիւնս այս հաւատոյ յեկեղեցական խորհուրդն անդ դասաներ։

Ի բառնալ յՍուորպերդինէ զհզօր պատասպարանս զայս. ոչ կամիմ մարանելոյ ընդ կարծիս նորա յաղագս գաղտնեաց խորհրդոյն. այլ մանաւանդ յոյժ հաւանելի թուի ինձ այն։ Զի գիտուարին է թէ միաբանութիւն կրօնական որ զպաշտօն դիցն եղծաներ, որ աւանդապաշն էր վարդապետութեան պատժոց և վարձուց անսի կենացն, որ պահանջէր յիւրոցն պատրաստութիւն մեծ և ազօթս և պահս հանգերձ անարատ սրբութեամբ սրտի, չուներ այլ ինչ խորհուրդ՝ բայց ծածկել ընդ թանձր քօղով զհին աւանդութիւնս զ լինելութենէ աշխարհի և զարդասեաց բնութեան և զսկզբանէ արուեստից և զայլոց ինչ իրաց՝ որոց նուազ ինչ էր ազդեցութիւն ի բարս։

Ասիցէ ոք, թէ զմարմնափոխութեան հաւատս անդանօր աւանդէին, այլ և հաւատքս այս, զոր խմստասէրքն աներկիւղ ի գիրս իւրեանց վարդապետէին, զնե տեսան դատաստանի զնին մահու՝ առ ի սահմանել հոգւոց զբարեբաստ կամ զթշուառ պայման կենացն հանգերձեալ նոցա։

Դարձեալ նկատացի և այս. զի ըստ Եւսեբեայ 3 ի պաշտամունս ընծայութեանն կատարողսէն՝ ի կերպարանս արարչագործին երևէր, և երբեմն քուրմքս կրէին նշանակս զա-

1 Արատ. նշանք օդ. տող ԹՏ։ Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք ԺԳ. գլ. 12. էջ 666։

2 Ցատիան, Ճառ առ Յոյնս, էջ 33։ Ամենագ. Ջատաբով.

քրիստ. հաւատ։

3 Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք Դ. գլ. 12. էջ 117։

բեգական, զլուսնի և զՀերմեայ։ Թերեւս և սաղարակայ պաշաս-
նեալք զյորեսին զայլ մոլթաւոր ի գէմս ածէին։ Կայցի զայս
որպէս օր և ախորժէ, այլ մի՛ ապաքէն յանդիման լիներ անդ
արարչագործն յանդնգոց զսիրելեբս ի վեր բերելով. և ոչ այս
այն պատկեր ելցէ լինելութեան աշխարհի, զոր Պղատոն նկա-
ռագրէ ի Տիմէին։

Հանձարեղ են կարծիք Ուռպալբրգնի, և չէր մարթ առա-
ւելագոյն խմաստութեամբ և կոլոմամութեամբ մեկնել զեր-
սին. այլ զի են ի նմա ինչ ինչ գժուարալոյծ, խորհեցայ եր-
բեւ գուշակութիւն ինն ի ներքս ածել զայն։

## Զ. Զ[illegible]ՆԵՐԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՆՔԵԱՆ, ՍՓՈՒՆՔ Ի ԵՐԻՊԻԴԵՍ.
(էջ 240։)

Եպիփեայ կեսք եօթանասուն 1, այլք ինանուն ողբերգու-
թիւնս ասեն արարեալ 2։ Անանուն գրէչ կենացն Սոփոկղի
հարիւր և երեքտասան ողբերգութիւն, ասէ, արարեալ ի նմա-
նէ, Սուիդաս հարիւր քսանեւերիս, և այլք բազմագոյնս յոյժ 3.
իսկ Սամուէլ Քրթի վեթասուն և վեց միայն 4։ Եւրիպիդեայ
եօթանասուն և հինգ կամ ինանուն և երկու ողբերգութիւնս
արարեալ ասեն այլեայլ մատենագիրքք 5. յորոց ինձ առաջինն
հաւանագոյն երևի Թիւ 6։ Դարձեալ և զԹուոյ մրցանակաց
նոցա այլափոխս տան պատմիչք։

## Է. Յ[illegible] ՈՐՊԱՍԱՆԷԻՆ Ի ՆՈՒՈՒՔ ԱԾԷԻՆ ԶՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ.
(էջ 264։)

Ազատ ինչ զայսմանէ սանգէն նախնիք, և արդի քննաբանք
պառակտին ի լուսաբանել զայն։ Կէսք համարին նուագել
գուսանաց զզուռացարութիւնսն, այլք արտասանել ևեթ. և
ոմանք դարձեալ ըստ խաղից առնել նոցա զարտասանութիւնն։
Ասացեալ համառօտիւ որ ինչ ինձ Թուի ըստ խուզարկութեանցն
իմոց։

Ա. Բ[illegible]ՆԻ այն էր, զի ՈՐՊԱՍԱՆԷԻՆ ՊՈՒՆՔ ՂՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ։
Քանզի Արիստոտէլ ի խօսել զազգի ազգի նմանական քերթու-
թեանց, ասէ՝ Թէ երկդանենին տաղք և օրհնութիւնք Աստուծոյ
և ողբերգութիւն և կատակերգութիւն ի կիր արկանէին զՀիւ-

1 Անոնիմ. ի վարս Եպիփ։
2 Սուիդ. ի բառն Αἰσχύλ.
3 Նոյն ի բառն Σοφοκλ.
4 Պետիս. օր. ատտիկ. էջ 71։
5 Սուիդ. ի բառն Εὐριπ. Վարդ. առ Աբել. Գեղ. գիրք ժէ. գլ. 4։
6 Վարքեր. քննաբան. Եւրիպիդ. էջ 9։

զնուագ և զսաղ. այլ այս ընտրութիւն կայր ի մէջի, զի առաջինք զերեսին միանգամայն ի կիր առնուին. իսկ տղբերգութի և կատակերգութիւն զատ ի զատ 1: Եւ ստորև գարձեալ ասէ՝ զի ողբերգութիւն ի նմին քերթութեան մերթ առղիւք և եւ մերթ կցորդէ նոցին զնուագ 2:

Դարձեալ յայտ է, զի զուցատրութիւնք դերասանացն մեծաւերջ առղիւք յօրինեին. զի սա գիպողագոյն է խօսից: Արդ Պլուտարքոս, ի խօսելն զմեծաւերջ առղից ի նուագ ածելոյ, ասէ՝ թէ յոյբերգութիւնս մերթ արտասանին նուագգարանաւ, և մերթ նուագին 3: Ապա ուրեմն ընդունելի էր և արտասանութիւն ի տեսարանս:

Բ. Էր զի Ն նուագէին գուսան զրոյցագրութիւնս: Ի հաւատս վկայութեանն Պլուտարքեայ, զոր ի վեր այսր ածի, յաւելցում և զայսոսիկ: Արիստոտէլ վկայէ, զի ստորագրականն և ստորաբերեալացի նուագք կամ ասոյնանք վարեին ի զրուցատրութիւնս գուսանաց, թէպէտ և ոչ ի պարս 4: Եւ Ղուկիանոս ասէ. Ներելի է Եկովբայ և Անդրոմաքեայ նուագել ի տեսարանի. այլ Հերակղեայ այնպէս ստարանալ յանձնէ մինչև երգս առնուլ, այս գժոխմքեր է 5: Ապա ուրեմն գիւցազունք ողբերգութեանն ուրեք ուրեք նուագէին:

Գ. Աւրաստոնութիւն լուեալ ի հանգիստս փէլի, այլ նոցին անդ պարն հաճոյին: Զեր զի որ այսմ հակառակիցն:

Դ. Էր զի Ն խառն ընդ զրոյցագրութիւնս գուսանաց նուագէր պարն: Այսմ վկայէ Պողիտեւկիս յասելն. Յորժամ փոխանակ ջրբերգի գուսանին ոմն ի պարուէն նուագիցէ, և այլն 6: Եւ Ովիտա գարձեալ յասելն. Մի ինչ ի հանգիստս նուագեսցէ պարն, որ չիցէ վիպացն քաջ պատկանաւոր 7: Վկայեն գարձեալ և օրինակք բազումք, յորոց շատ լիցին այսոքիկ. Անգամեմնոն Եպիդեայ ի 1099 տարէ մինչև ի 1186. Յիպպոլիտոսն Եբիպիդեայ ի 58 տարէ մինչև ի տարն 72. և Յովրեատէան նորին ի 140 տարէ մինչև ի տարն 207. այլովքն հանդերձ:

1 Արիստոտ. յլ. քերթ. գլ. 1. հտ. 2. էջ 653:

2 Նոյն անդ, գլ. 6. էջ 656:

3 Պլուտ. յլ. երաժշտ. հտ. 2. էջ 1141: Յիշատակարան. կանոնաւ. հտ. 10. էջ 253:

4 Արիստոտ. առաջարկ. պլակ 19. յօգ. 48. հտ. 2. էջ 770:

5 Ղուկիան. յլ. պարու, յօգ. 27. հտ. 2. էջ 285:

6 Պողիտեկ. գիրք Դ. գլ. 15. յօգ. 110:

7 Ովիտա. յլ. արհեստի քերթ. տող 194:

Ե. Պարն իմ մանաւանդ դարձուցին, խօսելիք երբեմն ընդ գուսանս արքայանիւղ Եղեն վասն։ Յաճախագոյն դէպ ըներ այս ի հարցուածս զոր մատուցանէր զք նմա կամ ինքն ուսեալ ի գլխաւորացդ գուսանացն. և հմտաւօրիւ ասացեալ ուր ուրեք անընդ մէջ կցորդեր ընդ արարուածոյն։ Որպէս է տեսանել ի Մեգեանն Եւրիպիդեայ, տող 811. Յաղաչաւորս նորին, տող 634. Յիփիգենեայն նորին Յաղոլս, տող 917, և այլն։

Իսասյն Սոփոկլի առաջին տեսիլքք, թէ ոչ սխալեմ, բաւական են առ ի ցուցանել զնաւնումն արտասանութեան ընդ նուագս ի տեսարանի։

Տեսիլ առաջին. Ամենա և Ոդիսեա։ Տեսիլ երկրորդ. Նոյն և Իսս։ Տեսիլ երրորդ. Ամենա և Ոդիսեա։ Յերիս յայսոսիկ փոփոխմունս տեսանեցաց յայտնի առաջարկութիւն ողբերգութեանն։ Ամենաս յայտնէ Ոդիսեայ, զի կատաղութեան ի խելն անկեալ Իսասյ՝ սպանեալ էր զչօսան և զչոմվիս, համարելով Ցարակ վեհ ժիր ընդրութեանն տալ զարագ զբրաւարս բանակին։ Արդ զի մասն է արարուածոյն, և ի մեծավերջ տողս պատմեալ, յայս է զի արտասանէր անոնուագ։

Մենելին Ամենաս և Ոդիսեաս, հասանէ պարն գուսմբեալ ի սաղմիներգացդ՝ որ ողբան զաղէտս Թրգաւորին իւրեանց, լուեալ զկատաղութիւնս նորս։ Վարանին, ինչգրեն զբոյս զնմանէ, ոչ ի տողս մեծավերջս, այլ ի տաղս ներդաշնակաւորս։ Մինայնակ է անդ պարն, և յօրինեալ զկցուրդն և զոխս յար և նման և համաձիւ տողիւք։ Ապա այս այն է, զոր Արիստոտել կոչէ նախաբարբառ զուցաստրութիւն պարուն 1, որ և նախկին հանդիսամ՝ նուագեալ համաձայնութեամբ բոլոր պարուն։

Եւ յետ հանդստեանն տեսիլ առաջին. Տեկմեսա և դարն։ Այս տեսիլ, որ ի տողէն 200 ձգի մինչև ի տողն 347, է իրր երկմասեալ յառաջնումն մասին, որ ունի տողս վեցասուն և երկու, Տեկմեսա հաստատէ զհամբաւ կատաղութեանն Իսասյ. և ապա ողբք ի գիմաց նորա և պարուն ի տողս վերջասանիս։ Եւ է անդ կցուրդ մի պարուն. և փոխ նորին համանման ի թիւն ի յօրինուած տողից՝ զոր, որպէս ինձ թուի, նուագէին։ Իսկ զերկրորդ մասին արտասանէին անշուշտ, զի մեծավերջ տողիւք է յօրինեալ. յորում Տեկմեսա հարցանէ զպարն, և նա մանրապատում առնէ զիրս Իսասյ. լսելի լինի գոչիւն Իսասյ. բանայ գուռն խորանի նորա, և երևի նա ի միջի։

Տեսիլ երկրորդ. Իսս. Տեկմեսա, և դարն։ Ի սմա, որպէս

1 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 12. հտ. 2. էջ 662։

և յառաջնումն տեսլեան, արտասանութիւն խառն ընդ Նուագս էր։ Իսս (տող 348.) Նուագէ կցուրդս չորս հանդերձ անդրադարձ փոխիւքն։ Ցեկմեսս և պարն պատասխանեն նմա երկուք կամ երիւք մեծավերջ տողիւք, զոր Նուագէին՝ որպէս ցուցցէ ընդ հուպ։ Եւ զկնի յետին փոխոյն և պատասխանւոյ սկսանին ՝ի տողն 430 մեծավերջք, որ ձգին մինչև ՝ի տողն 600 կամ մանաւանդ 595։ Ամդ Իսասայ ուշաբերեալ, զգայցուցանէ Ցեկմեսայ և պարուն զնորհուրդ անձնասպանութեանն. Նոքա գուն գործեն շրջել զնա ՝ի խորհրդոյն. ինդրէ նա զորդի իւր, և առեալ զնա ՝ի գիրկս իւր՝ խօսի ընդ նմա խանգաղատելի բանս, և այս ամենայն արտասանութեամբ վՀարին։ Ցեկմեսա մեկնի ՝ի բաց, և մնայ Իսաս միայնակ ՝ի տեսարանին. այլ լուռ եւեթ կայ, Նուագելով պարուն զերկրորդ հանգիստն։

Արդ ըստ այսմ վերլուծութեան, զոր մարթէր ինձ անդր ևս յառաջ ածել, յայտ է՝ զի պարն ՝ի կրկին յայլ և այլ դէմս նկատէր, ըստ երկուց պաշտամանցն՝ որ անկ էին նմա։ Ի հանգիստս, որ էին իբրև զմիջոցս արարուածոց իւրաքանչիւր մերոց թատերախաղցս, պարն համբէն Նուագէր. իսկ ՝ի փոփոխմանս տեսլեանցն ՝ի խառնել նորա յարարուածն՝ պաշտօնին եւեթ զդէմս բովանդակ պարուն յինքն բերէր։ Սմին իրի Արիստոտել և Ովիդաս ասեն զմիոյ ուրուք պաշտել պարուն զգործ [1]։

Զ. Ի՞՝ ոգս մարի էրն ընթրել ՝ի մասուն թաթերգոնինանց որ ինչ նուագիչքն և որ ինչ արքաստանք։ Զկարեմ տալ օրէնս անվրէպ ամենայն ուրեք պահեալ. այլ մինձ թուի զի ուր ուրեք գուսանաքը առանց ՝ի նեռքս խառնելոյ պարուն, զառաջարկեալ արարուածն յուսաջ մատուցանելով, զուցատրեն ընդ երկար ՝ի տողս մեծավերջս, յորոց ՝ի սկիզբն մակագրեն հին մեկնիչքն զբառս ՀՁՆՈՎԵՐՔ, այնուրիկ արտասանէին անմուգ. իսկ այլ տողք, որպէս մինձ հաւանելի թուի, Նուագէին. այլ ոչ հաւաստեաւ ասեմ զայս։ Մարթի է հասարակաբար եւեթ հաստատել՝ զի ՝ի Նուագաւոր տաղս առաւել պարապեցին նախնի քերթողք քան յաշորդք նոցա [2]. և յայտնի իսկ են պատճառքն։ Քանզի թատերական քերթածք սկիզբն առին ՝ի խմբից խաղաղական ծաղրածուաց՝ ոլոր չրջէին ընդ Աստիկէ,

[1] Արիստոտ. յդ. քերթ. գլ. 18. հա. 2. էջ 666։ Տասիկ, անդ. էջ 312։ Ովիդաս. յդ. արհեստի քերթ. տող 193։

[2] Արիստոտ. առաջարկ. պրակ 19. յօդ. 31. հա. 2. էջ 766։

Նմին իբրև և կարևորագոյն մասն ողբերգութեան 'ի սկզբան անդ համարեցաւ երգն 1։ Վասն այսր արդեօք առաւել յա-ճախեալ 'ի քերթուածս Եսքիղեայ և Ժամանակակցի նորա Փրինիքեայ 2 քան 'ի քերթութիւնս Եւրիպիդեայ և Սոփոկղի։

Որպէս վերագոյն ասացեալ է՝ ըստ վկայութեանն Պլուտարքեայ ասա-ցաք, էր զի և զսոցա մեծավերջս նուագէին 'ի բերել պարսուն զդէմս ուրուք։ Զի գտանեմք սոցա մեծավերջս և 'ի տունս փոփոխական յարմարեալս առ 'ի նուագ։ Եսքիղոս 'ի կիր արկանէ զնոսա և 'ի տեսիլս նուագաւորս, որպէս ՅԱղաջաւորսն 'ի տեսիլ Թագաւորին արգիացոց և պարսուն (տող 352)։ Ուր պարն երգէ կցուրդս հանդերձ անդրադարձ փոխիւք, և Թա-գաւորն հնգիցս պատասխանեալ նմա 'ի նուագս իւրաքանչիւր 'ի հնգեակ տողս մեծավերջս. որով յայտ է, զի Թէ ոչ սխա-լեմ՝ 'ի նոյն եղանակ զպատասխանիսն երգէր։ Հանդոյն սմին և այլ օրինակս է տեսանել յողբերգութիւնս նորին քերթողն-որպէս ՅԷօմն զօրավարսն 'ի տողն 209 և 692. 'ի Պարսիկսն 'ի տողն 256. ՅԱգամեմնոն 'ի տողն 1099. և ՅԱղաջաւորսն 'ի տողն 747 և 883։

Է. Ըստ խաչէն արդեօք զարգասանութիւնն առնէին։ Տիւպոյ համարի այսպէս 3. այլ կարծիք նորա եղծան 'ի գիրս յիշա-տակաց բանասիրական կաճառոյն 4։ Յորում ցուցաւ, զի նուագարանն ոչ առ այլ ինչ կցորդէր ձայնի գուսանին՝ բայց յօգնել նմին երբեք երբեք, և չտալ նմա Թոյլ կարի բարձրա-նալ և կամ խոնարհել յոյժ։

Ը. Յաղթութեանն, որ 'ի Խաբէրս ծածկեալ։ (էջ 268։)

Վիրաբվնոս աւանդէ, զի ընդ ասորիճանօք գիտակ տեղեաց տեսարանին Ճարտարապետք Յունաց կազմեին նկուղս փոքրիկս կիսաբացս, և զնոսա անօթս պղնձիս, ընդունել 'ի գոգաձև ծոց իւրեանց զձայնս՝ որ հնչէին 'ի տեսարանէն, և ազդոզագոյն յստակ և քաղցրալուր 'ի լսելիս ունկնդրացն հա-սուցանել։ Քանզի անօթոցս այսոցիկ հնչմունք գերատաս-ճանեալ ամբառնային 'ի քառեակսն, 'ի հնգեակ և յութեակ 5, բերելով զնոյն համեմատութիւն լարից քնարին՝ որ կցորդէրն ընդ ձայնին, այլ ոչ զնոյն արգասիս։ Զի քնարն ցուցանէր

1 ԱՄԹԵՆ. գիրք ԺԴ. գլ. 7. էջ 630։ Դիոգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 56։

2 Արիստոտ. առաջարկ. պրակ. 19. յօդ. 31։

3 Տիւպոյ, խելամտ. քննութեան. հտ. 3. էջ 54։

4 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 21. էջ 191 և 209։

5 Վիտրուվ. յՁ. Ճարտարապետ. գիրք Ե. գլ. 5։

զատիճան ձայնին և օգնէր նմին, իսկ անօթքն կրկնէին եւեթ զայն և երկարէին։ Եւ զինչ օգուտ ի մշտամուտս արձագանգացն գործէր, առանց այլոց իրիք զհնչումն նոցա յեղանգիլոյ։ Անգիտութիւն իրացն արգել զնս, չտիշատակել զայն ի բնագրիս։ Դարձեալ և այլ ինչ լուսնեանս է պատճառ. զի չէ իսկ ուստէք յայտ՝ թէ ամենացիք զհնարս զայս ի կիր արկանէին։ Արիստոտել խնդիր առնէ՝ թէ ընդէր քաջահնչողք են տունք այն ինչ բռնալք, կամ ուր անօթք դատարկք ծածկեալ կացցեն, և կամ ջրհորք և խոռոչք ի նոսա գործեալ [1]։ Աւելորդ է զպատասխանին նորա յաւելուլ ասա. այլ յիշատակեր արգելջք և զանօթս թատերաց, եթէ էին նմա ծանօթ։ Մուսմիոս եգիտ յայնցանէ ի Կորնեթոս ի տեսարանին, այլ երկերիւր ամք յետոյքան զժամանակ ուղղորութեանն Աստքարսեայ։ Եւ ապա յաճախեաց սովորութիւնն ի բազում քաղաքս Եղլադայ և Խաղիոյ, և բազում ուրեք փոխանակ անօթոց պղնձեաց խեցեղէնս ի կիր արկանէին թերեալս [2]։ Հռոմայեցիք ոչ ընկալան զսովորութիւնն, խելամուտ արգելջք լեալ Ճարտարապետացն Նշ, զի թէպէտ և քաջահնչող այնուիկ տեսարանն պատրաստեր, այլ յաճախագոյն քան զօգուտն զայն գժպատեհութիւնք իրացն էին։

Թ. Զկաւլիդէս։ (էջ 273։)

Դուսանս այս այնպէս ամբարտաւանեալ ի յաջողութիւն իւր՝ իշուցանելով յաչաց ամենայն հանդիսականացն արտասուս [3], զի հանդիսեալ ուրեք Ագեսիլայոսի՝ յառաջ մատեաւ և ողջունեաց զնա. և խառնեալ ընդ ուղեկիցս նորա, մնայր լսել գրուատս ի թագաւորէն։ Եւ իբրև վերկեցաւ ի յուսոյն, ասէ ցնա. Աբքայդ լակեդեմոնացւոց, իցէ՞ թէ չճանաչիցես զիս։ Իսկ թագաւորին ակնարկեալ ի նա, ասէ. Ո՞չ գուն ինքն իցես Կալլիպիդէս խեղկատակ։ Եւ այլ ինչ ոչ յաւելը զի ամբարեալ հանճարոյ կատակագուսանին հանցոյ գալ սպարտացւոյն։ Նոյն ինքն Ագեսիլայոս հրաւիրեալ երբեմն ի լուր երգողի՝ որ յարենման զդայլայլիկս սոխակի յորիներ, ասէ. Իմ՝ զսոխակ լուեալ իսկ է [4]։

1 Արիստոտ. առաջարկ. պրակ 11. յօդ. 7, 8, 9. հտ. 2. էջ 736։

2 Վիտրուվ. յղ. Ճարտարապետ. գիրք Ե. գլ. 5։ Պլին. գիրք ԺԱ. գլ. 51. հտ. 1. էջ 643։

3 Քսենոփ. ի կոչումն, էջ 880։

4 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 607։ Նոյն, առակ. լակոն. հտ. 2. էջ 212։

Ժ. Յուլիոս Գիմոյ։ (էջ 280։)

Ոչ բազումինչ ամբ են, զի գտաւ յԱթենս բազմութիւն յոյժ արծաթի գրոշմածաց. յոլովիցն ի նոցանէ մի ի գիմացն գոգեալ էր, գործած անհարթ, առանց ինչ գրոց։ Սակայն ոչ սակաւս ի նոցանէ վասն թանգարանիս ազգայնոյ։ Յայլ և այլ տպաւորութեանցն՝ որ ի նոսա գուշակելով, հաստատակիմ ասել գրոշմեալս զնոսա յԱթենս և կամ ի մերձակայ ուրեք սահմանս նորա. և ի կազմածոյ նոցա գուշակեմ, զսմանս ի նոցանէ յաւուրս Եպիփանեայ, և զայլս յառաջ քան զաւուրս նորա կոփեալ։ Երկուք ի գրոշմածաց ասամ բերեն զոմիս անհեթեթ գիմակացս, զորոց խօսեցայ ի բնագրիս. ապա գիմակքս այսոքիկ անդէն ի ծնանել թատերախաղիցն ի կիր առան։

ԺԱ. Զգեղոյն գեսարանին, որ Էաս ըստ վերուվին։
(էջ 307։)

Բազումք յարդի քննարանից համարին, զի յողբերգութեան Սոփոկլի Էաս յանդիման բազմութեան տեսողացն սուր ի կող իւր ձգիցէ. և ի հաստատութիւն կարծեաց իւրեանց ածեն զվկայութիւն հին մեկնչին, որ ազգ առնէ ի տեղւոջն՝ զի գուն ուրեք ի տեսարանի դիցազունցք անձնասպանք գտանին 1։ Այլ ենձ թուի, զի ատասնոր անլոյծ պահին օրէնքն. և առ ի խելամուտ լինել այսմ, շատ է միտ դնել կարգի արարուածոյն։

Ազգ լեալ պարուն՝ զի Էաս ոչ էր ի խորանին 2, սփռի յայս կոյս յայն կոյս տեսարանին՝ ինդրել և ածել զնա 3, իսկ դիցացքն ի տեսարան անդր դառնայ. և յետ ազիողորմ մեղանչասութեանն՝ անկանի ի սայր սուսերին, յառաջագոյն ընդ երկիր մեռեալ զերբախալն 4։ Դառնայ անդրէն պարն 5. և յողբալ զընդունայն հետաքրքրութիւն իւր, լսէ զձիւն Ցեկմեսեայ՝ պատահելոյ գիական առն իւրոյ 6, և յառաջ մատչի տեսանել զողորմ տեսիլն 7։ Ապա ուրեմն ոչ ի յայտնի տեղւոջ տեսարանին երթեալ էր զիւրովին։

Հատարիմ զի առ խորանաւն Էասայ ի խորս տեսարանին

1 Պարապ. Սոփոկլ. Էաս, տող 826։
2 Սոփոկլ, Էաս, տող 805։
3 Նոյն անդ, տող 824։
4 Նոյն անդ, տող 826։
5 Նոյն անդ, տող 877։
6 Նոյն անդ, տող 900։
7 Նոյն անդ, տող 924 և 1022։

էին եւ լաք ի գաշան, ծածկեալ վարագուրաւ՝ որ բացաւ յելանել պարսուն ի բաց։ Ի խորս անդ երեւեալ էաս, յայսմ արար զՔրիստոս մեռցն։ յայն սակս իսկ սատակաձայն բարբառոյ ասէն ունել պէտս գուսանի՝ որ զդէմս էասայ բերիցէ 1։ Ասեմ քայլից ինչ մինչոցաւ հեռի յեսակոյս խորանին ցցեալ էր յերկիր զսուսերն, որով երեւէր բազմութեանն և լսելի առնէր զձայն իւր ի խօսելն, այլ մահուն նորա ոչ ականատես լինէին նոքա։

ԺԲ. ԹԷ ՀՐԴԷ ԵԳԷՂԵՑԻՆ ԳՈՒՍԱՆ ԶԻ Ի ԳՈՂԻՆ ԵՐԻԳԻՊԻՏԻՍ ՍՐԳՍԱՆԷՍ։ (էջ 345։)

Ի հելլէն բարբառ գալոյղ նշանակէ հանգարաւութիւն ծովու, իսկ գալի կատու։ Արդ ի տողն յայն Երիպիդեայ պարտ էր գուսանին արտասանել գալոյղոյ օրն այս ինքն է՝ տեսանեմ հանգարաւութիւն։ և բառքն երկոքին այնպէս հընչէին, զի վերջին ձայնաւոր տառ առաջնոյն և սկզբնատառ երկրորդին միանգամայն լսելի լինէր։ Բայց Եգեղբեայ ի սպառել հնչոյն հարկ եղև զկայ առնուլ ի հնչել գալոյղ. որով զվերջին ձայնաւոր նորա կրճատեալ հնչեայ գալոյ.. օրն, այս ինքն է՝ տեսանեմ զկատու 2։

ԺԳ. ՕՐՀՆԵԱՆ ԱՐԵՒԵՍ՝ ՈՐ ՅԵՓԷՍ, Ի ՀՐՈՒՆԻՆ ՆՈՐԱ։ (էջ 391։)

ԱմՔ356Նախ քան զԹուականուն փրկչին հրաշք եղև մեհեանն Արտեմեայ Յեփեսս Յերոստրատեայ 3. և յետ ոչ բազում ամաց վերստին չինեցին զայն եփեսացիք։ Երեւի ոչ համարէն զմեհեանն ծախեալ հրդեհին, այլ զյարկ նորա և յոր ինչ բոցն ազդել կարէր։ Զայսմանէ Ճառս հրաշազանս սեպուհն Բոլենի արար, որ ընդ այլս ի Ճառից կամՃառոյն Կորտոնայ քաջաբի յեռեալ կայ 4։ Արդ ըստ նորին կարծեաց, նոյն չափ էր մեհենին յառաջքան զԵրոստրատ և յետ նորա. որ ըստ Պլինեայ 5 չորեքարիւր քսանեհինգ ոտնաչափ էր յերկայնութիւն, երկերիւր և քսան ի լայնութիւն, և վաթսուն ի բարձրութիւն։ Որ թուին հելլէն ոտնաչափք։

1 Պարապ. Սոփոկղ. յԱյաս, տող 875։

2 Եւրիպիդ. յՈվեսս. տող 279։ Պարապ. անդ։ Արիստոփ. ի Գորտս, տող 306։

3 Պլուտ. յԱղեքս. հտ. 1 · էջ 665։

4 Ճաշակք Ճառից, հտ. 1 էջ 21։

5 Պլին. գիրք ԼԶ. գլ. 14. հտ. 2 · էջ 740։

Ի սկսանել եփեսացւոց չինել վերսին զմեհեանն, Ղուկասանգր խոստացաւ Նոցա ընուլ զծախս չինուելեանն, եթէ միայն զիւրն գիցէ ի նմա արձանագիր։ Զոր ոչ յանձն առին եփեսացիք, այլ ներելի եղև Նոցա մերժումն այն։ զի պատգամաւոր յերեսաց Նոցա երթեալ առ Թագաւորն, ասէ. Զէ՞ ի Հաճ ասուածոյ զայլոց ուրուք ի գից յօրինել զատ Ճար։

Շատ համարեցայ ցուցանել զգլխաւոր զարդս պատկերին, զի օրինակք Նորա որ կան կրասերագոյնք քան զժամանակ ուղղորդութեանն Աստաբասեայ՝ անհնամանք են միմեանց. և մարթի իսկ է զի ոչ ի տիպ Արտեմեայն Եփեսոսի բնաւքն իցեն գրոչեալ։ Կայցի զայս որպէս որ և ախորժէ, բայց վերին մասն մարմնոյն կամ կոթողին՝ որ զնորին ունի զտեղի՝ ստեամբք ծածկեալ է. և ապա կարգ ըստ կարգէ իշանեն ծնօտք, բերբերով ի միջոցսն մանր քանդակեալ ձեւս յաղթութեան, մեղուաց, եզանց, եղջերուաց և այլոց կենդանեաց կիսամանեայս, և յոտանս առաւնջք բոլորաքանդակք ի վերայ բազկացն գրոչեալ կան 2։ Դրուագքս այսոքիկ ի պատկերի անդ քանդակեալք, որպէս ինձ թուի, ոսկեղէնք էին։ Քսենոփոն, որոյ ի մի հեղեանն իւր ի Սկիղն էր նուիրեալ պատկեր Արտեմեայ հանգոյն եփեսականին, ասէ զի փեսականն լինել ոսկեղէն, իսկ զիւրն նոՃի 3։ Եւ քանզի ի բանից այլոց մատենագրաց թուի՝ թէ պատկերն Արտեմեայ եփեսացւոց էր նոՃի, ի գէպ է կարծել թէ Քսենոփոն զզարդուցն ասիցէ գրուագելոց զնոսաւ։

Ասատնօր ներեսցի ինձ առնել զբացատրութիւն պատկերին ոսկւոյ փոքրկան. որ ի հինն Լակեդեմն գտաւ, և զոր Կայիլոս եւս քանդակել յերկրորդումն մատենի հաւաքածոյ հին աւանդիցն 4։ Ոսկի նորա ոչ է զուտ՝ այլ խառն ընդ արծաթոյ, գործած անհարթ և վաղեմի յոյժ։ Բերէ զկերպարանս եղին, կամ մանաւանդ զեղջերուի բազմելոյ։ Ծակին որ ի նմա՝ յայտ առնէ, զի ի սաւառազդոյն ինչ մարմնի գրուագեալ կայր. և համեմատեալ զայն ուրուք ընդ այլ և այլ գրուագս եփեսականին Արտեմայ, գիւրահասաւ ևս գոյցի՝ զի էր այն գրուագեալ ի պատկեր Արտեմայ. զի և կշիռ նորա է ունկի մի և գրամ և հատք վաթսուն, և առաւելագոյն եր-

1 Սարաբ. գիրք ԺԴ. էջ 641։

2 Մենեսար. Նշանք անդրայն Արտեմ. Եփես։

3 Քսենոփ. յոլ. արշաւ.

4 Հաւաքածոյ մատեան հին աւանդ. հտ. 2. էջ 42. պատկ. 11։

Կիւր. գիրք Ե. էջ 350։

կայնութեան նորա երկու մասնաչափ և գիծ մի։ Էր արդեաք նոյն երբեմն ի Լակեդեմոն ածեալ, և կամ թէ անդ միւսմ ի պատկերաց Արտեմայ յորմէնէր զարդ, և կամ նմին իսկ պատկերին Ապոլոնի՝ որ կայր յԱմիկլա։ զի ամենայն ոսկին, զոր յղեաց Կրէսոս առ լակեդեմոնացիս, ի պատկեր անդր ի կիր արկաւ 1։

Թէպէտ, զի որչափ բազմազարդք էին պատկերք էփեսականն Արտեմայ՝ այնչափ կրասէ բազդիք են ժամանակաւ։ Չի պատկեր նորա ի սկզբանէ այսպէս էր դրօշեալ։ գլուխ և բազուկք և ոտք, և իրան ի ձև պատուանդանի։ Ապա յաւելան ի նա նշանակք այլոց դից, և մանաւանդ Խեայն, Կիւպելեղէան և Դեմեթրեայն, այլովքն հանդերձ 2։

Չօրութիւն ասասուածուհւոյն և պաշտան նորա յաճախեալ օր ըստ օրէ ընդ ստորոգելին, ի կնոց պաշտէր իրր նոյն ինքն բնութիւն ամենաբաւական, և յայլոց իրրև զմի ի վերհագունից դիցն Ոլիմպեայ։ Պաշտն նորա ի բազում ժամանակաց մուծեալ յաշխարհս հեռաւորս 3, տարածեցաւ ընդ փոքրն Ասիա, ընդ Ասորիս 4, և ընդ բնիկն Եկեղաց 5։ Յաւուրս առաջնոց ի կայսերացն հռոմայեցւոց ի պայծառագոյն փառան էր։ ի նմին ժամանակի և այլոց դիցն յաճախելով պաշտամանց հնարեցան պատկերքս այսոքիկ ամենագից՝ որ պահին ի Թանգարանս, բերելով յիրեանս զամենայն զբազմաստուածոցն նշանակս։

## ԺԴ։ Հռոդոս։ (էջ 412։)

Չնկարագիր բարուցն հռոդացւոց ըստ բազմապատիկ վկայութեան նախնի մատենագրաց յերիւրեցի, և մանաւանդ ըստ մեծարանացն՝ զոր վասն այնորիկ ընկալան յԱղէքսանդրէ 6, և ըստ հռչակաւոր պաշարմանն՝ որում մեծաւ քաջութեամբն ժուժկալեցին ընդդէմ Դեմետրեայ Պաշարողին երեսուն և ութ ամաւ յետոյ քան զուղևորութիւն Ալեքսանդրեայ ի կղզի անդր 7, և ըստ հզօր օգնականութեանցն՝ զորս ետուն հռոմայեցւոց, և առ ի նոցանէ շնորհակալութեանցն 8։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 10. էջ 231։

2 Մենեսթր. նշանաքանդրուոյն Արտեմ. էփես։

3 Սորբ. գիրք Դ. էջ 179։

4 Սփանչ. յլ. գրամ. հատ. 1. էջ 507։

5 Պաւսան. գիրք Բ. գլ. 2. էջ 115։

6 Դիոդ. գիրք Ժ. էջ 809։

7 Նոյն անդ, էջ 810։

8 Լիւ. գիրք ԼԱ. գլ. 15. գիրք ԼԷ. գլ. 12։ ԱՀ. Դեպ. գիրք Է. գլ. 3։

## ԺԵ. Ի ԲՈՒՆ ԸՆԴ ԿՐԵՏԷ։ (ԷՋ 421։)

Ջկրետական բազմահազար բուղէն սուղ ինչ ատացի, և զայն պարա է ինձ հաստատել։

Երոգոս նկարագրէ զոր յԵգիպտոս զՄերսեան ընՀուն տեսեալ էր. երկոտասան տարեանս ասէ մեծամեծս կցորդս միմեանց կառուցեալ անդ, սեռեակս երեք հազար բերելով միահամուռ, յորոց հազար և հինգ հարիւր էին ստորերկրեայք 1։ Սարաքան, Դիոգոր սիկիլիացի, Պլինիոս և Մելա հանգոյն Երոգոտեայ մեծաս զարմանալեօք զչինուածոյս զայսմանէ խօսին 2. այլ ոչ ոք ի նոցանէ ասէ՝ թէ առ ի մոլորեցուցանել զմտեալսն անգր էր այն կառուցեալ. բայց յայտ է, զի որք անառաջնորդ չջէին ի նմա՝ նոցա վտանգ էր մոլորելոյ։

Ուրեմն է երկբայելի. զի ի վտանգէ ասսի պատճառս էառ առ Յոյնս բառն լաբիրինթոս Λαβύρινθος, այս ինքն է բաւիղ։ Որ ըստ գրոյն ցուցանէ զվայր չջնջափակ, ուղիս յինքեան բերելով բազմահեռս՝ յորոց կէաք յամենայն կողմանս ստերիւրեալ ընդ միմեանս խառնին որպէս ի քարահատս և ի բովս, և կէաք չջնջոս աւելի կամ նուազ զսկզբնական կիսիւն գործեն, որպէս խընջուներքն գալարաձև ի շէշտուսն անկեալք 3։ Իսկ այլաբանաբար կարաս նշանակել զնիգիրս նսեմս և խաբէական, զպատատսխանիս երկդիմիս և պատ ի պատս 4, և զմեռա՝ որ զարտուղի յածեալ չջնջալ, և ապա գառնան անգր՝ ուսոյ ելիցեն 5։

Ցեսցուք ապդ նախ՝ թէ որպիսի ինչ էր բաւիղն կրետական։ Դիոգորոս սիկիլիացի աւանդէ ելը կարծիս, և Պլինիոս որպէս հաւատասիս, Դեդալեայ կառուցեալ զբաւիղս զայս ըստ ձևոյ Եգիպտականին՝ այլ փոքր քան զնա 6։ Եւ յաւելուն զի Մինոսայ հրամայեալ կառուցանել զայն՝ անդ զմարդացուլն արգելեալ պահէր, և զի յաւուրս իւրեանց ոչ ևս գոյր այն՝ կամ

1 Երոգոս. գիրք Բ. գլ. 148։

2 Սարաք. գիրք ԺԷ. էջ 811։ Դիոգ. գիրք Ա. էջ 55։ Պլին. գիրք Լ.Ջ. գլ. 13. հա. 2. էջ 779։

3 Հիւսիք. Սուիդ. տուգաբ. մատեան, ի բառն Λαβύρ.

4 Դիոնիս. աղեկ. յղ. Թուկիդ. գաստատ. հա. 6. էջ 913։

5 Պղատ. յԵւթիդ. հա. 1. էջ 291։

6 Դիոդ. գիրք Ա. էջ 55. գիրք Դ. էջ 264։ Պլին. գիրք Լ.Ջ. գլ. 13. հա. 2. էջ 739։

ի ժամանակէ եղծեալ, և կամ քանդեալ յումեքէ [1]։ Որով Դիոդոր սիկիլեացի և Պլինիոս համարէին զբաւիղս զայս շինուած մեծակառոյց, ուր այլք ի մատենագրաց նկարագրեն քարանձաւ իմն լի բազմապակի ուղեղք [2]. և երկաթանչիւք ածին այլեայլ աւանդութիւնս, յորոց մեայ ընտրել զհաւանելին։

Եթէ բաւիղն կրեսական ի Դեգաղեայ էր կառուցեալ յաւուրց Մինովայ. ընդէր չդիտատակիցէն զայն ոչ Հոմերոս՝ որ բազում ուրեք զՄինովս և զկրեսէ յիշատակէ, ոչ Երոդոտ՝ որ զեգիպտական բաւիղն նկարագրէ, գերի ի վերոյ քան զՅունացն համարելով զդաստակերպս եգիպտացւոց, ոչ Նեմնի աշխարհագիրքն, և ոչ ոք ի մատենագրաց բարենշան ժամանակացն Ելլադայ։

Ճարտարապետ շինուածոյն համարէր Դեդաղոս, և այս ևեթ բաւական է եղծանելոյ զհաստատութիւն աւանդութեանն։ Զի անուն նորա, որպէս զհերակղէսն, տպաւէն է ազգութեան յիրս վաղնջուց ժամանակաց։ Քանզի զամենայն գործս և որ ինչ քաջութեան են արգասիք քան հանճարոյ, համարին նա հերակղեայ. իսկ որ ինչ արուեստից արգասիք. որ հանճարոյ կարասին ի կատարումն, համարի Դեդաղեայ։ Յուշ լիցի որ ինչ յառաջագոյն ի գիրս յայս՝ նշանակեցի հը. նորս արուեստից և ձեռագիտութեան, զորոց զպարծանս Դեդաղեայ ուսմամն համանուան տան նախնիք։

Ըստ Դիոդորի և ըստ Պլինեայ՝ ոչ գոյին առ նոքաք ի կրեսէ հետք բաւղին, և ժամանակ իսկ աւերեալ ոչ նոր ի մոռացմանն անկեալ էր. սակայն աւանդի՝ աշակերտաց Աղոլոնիոսի տրանացւոյ, որ ժամանակակիցն էր մատենագրացս, երթեալ ի տես նորին [3]. ապա ուրեմն չև ևս կրեսացիք համարէին յայնժամ զբաւիղն անհետ լեալ։

Ա՛յլ աղաչեմ զընթերցօղս մեր գնել բանիս, զոր ածեմ ի Սարաբանէ. «Ի Նաւակլիս մերձ ի հին Սրգոս, ասէ հանճարեղ մատենագիրն, կան ցարդ խոռոչք ընդարձակք՝ յորս բաւիղք են կազմեալ ի Պիկզոսպոյցն, որպէս ունին զոյգք [4] **։

1 Դիոդ. գիրք Ա. էջ 56։

2 Եւսեբի. յՊղիս. գիրք ԺԱ. էջ 1688։ Սուռգաբ. մատեան, ի բառն Λαβύρ.

* Ի գլուխն ԼԷ. ի յոգուածն Սիկիոնի, և ի տեղեկութեանն որ զնմանէ։

3 Փիլոսոփ. վարք Աղոլոնի. գիրք Գ. գլ. 34. էջ 174։

4 Սարաբ. գիրք Ը. էջ 369 և 373։

** Զորմէ ասացաւ ի ԾԳ. գլուխս գրոցս։

Որով ոչ այլ ինչ ցուցանէ, բայց զի ուղիք ձեռագործք հաստատելք ի Ժայռի խառնէին ընդ միմեանս աղամանելք, որպէս ի քարահատս գործին։ Արդ թէ ոչ սխալեմ, և զկրեատական բաւէն զնոյն է խմանալ։

Էին արգեալք բաւիղք բազումք ի Կրետէ։ Նախնի մատենագիրք զմիոջէ առնէն յիշատակ. բազմաց գնելով զայն ի Կնոսոս, և սակաւուց ոմանց ի Գորտինա 1։

Պելոն և Թուրնըֆոր 2 նկարագրեն քարանձաւ մի առ ստորոտով Իդայ լերին ի հարաւոյ, փոքր ինչ հեռի ի Գորտինայ. առաջինն յաւելու՝ զի էր այն քարահատ, իսկ երկրորդն համարի զայն բաւիղ։ Զորոյ և իմ զհետ երթեալ ի նմանէ համառօտեցի ի բնագրիս զպատմութիւնս։ Որք միանգամ ի քենաբանից յաւելին տալ զեկուցմունս զգրոց նորա, բաց ի բաւղ ասասի՝ գնեն և միւս այլ ի Կնոսոս, ի հատատութիւն բանիցն ածեալ մանաւանդ զգրոշմանս քաղաքին՝ որ զնորին տպաւորեալ բերեն զպատկեր, ըստ պէսպէս գծագրելոյ զայն ճարտարաց։ Չի յոմանս երևի քառակուսի, յայլս բոլորակ. են՝ որ զնշմարսնս ևեթ տան զնորին, և են՝ որք զմարդացլուն ևս բերեն ի միջի զգլուխ 3։ Չմի յայնցանէ ետու քանդակել ի գիրս յիշատակաց բանասիրական կաճառոյն, որ Թուի ինձ իբր հինգ հարիւրովք ամաք նախ քան զԼուսականութիւն փրկչին գրոշմեալ, և բերէ ի մի կողմն զմարդացլուն զպատկեր, և ի միւսումն զտեղագիծ բաւղին վեր ի վերոյ 4։ Այսպա յայտ է, զի կնոսացիք անդստին յաւուրց անսի համարէին յերկրի իւրեանց զքարայրն զայն, և գորտինացիք չկարէին Թափել ի նոցանէ զպարծանսն, զի ոչ ուրեք ի դրամս նոցա երևի այն գրոշմեալ։

Զվայր բաւղին որ ի Կրետէ, համարիմ ըստ Թուրնըֆորի 5 ոչ ինչ հեռագոյն ի Գորտինայ քան զիարսսին մի գաղղիական, զոր Սարաբոն 6 հեռի ի Կնոսեայ ասէ ուեալի քան զվեց փարսախ։ Այլ ասասի ոչ այլ ինչ է ի միտ առնուլ, բայց զի սահմանք Կնոսեայ մինչև հուսլ ի Գորտինա քաղաք տարածանէին։

Եւ առ ինչ պիտանացու էին խառուչքս այսոքիկ, որ բա-

1 Մեօրս. ի Կրետ. գիրք Ա. գլ. 2։

2 Պելոն, քննութիւնք, գիրք Ա. գլ. 6։ Թուրնըֆոր, ուղևոր. հտ. 1. էջ 65։

3 Դրոշմածք ազգային Թանգարանին։

4 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 24. էջ 40։

5 Թուրնըֆոր, ուղևոր. հտ. 1. էջ 65։

6 Սարաբ. գիրք ժ. էջ 476։

ելեալքն կոչէին։ Ինձ այսպէս թուի, զի ի սկզբան անձեռագործք ի բեռ այսոքիկ ձեւացան, և զի ուստեք ուստեք հաստատարքինք ի շինուած քաղաքաց, և զի ի հնումն բնակարանք էին այնոքիկ կամ ապաւէնք օրոց էին նշանակ յաճախաւոր հինից ասպատակաց։ Ի վերս ուղղորդութեանն Ազաքարեայ ի Փովկիս յիշատակեցն զերկոսին անձաւսն մեծամեծս Պաղեստինայ, յորս ամրացան ազգք բնակելոք շուրջանակի, ի մին առ Ջրհեղեղատն Դեկալոնի, և ի միւսն յարաւեալ անդր Գաբերքանայ 1։ Յաւելումն ասասցուք, զի ըստ Դիոդորի սիկիլացւոյ նախնի կրեսացիք բնակէին յանձաւս Իդայ լերին 2։ Բնակիչք վայրացն համարեին զբաւիղն զայն բանտ ի սկզբանէ լեալ 3։ մարթի իսկ, զի և բանդարգել անդ երբեմն զյանցաւորս արարեալ իցեն. այլ վասն այն եթէ զայնչափ անշնարին գործածան առնել չհաւատալն թուի։

## Ի Զ. Զընդարձակութենէ Սամոսի։ (էջ 450։)

Զչափոյ շրջաբերութեան Սամոսի այլափոխս ի միմեանց ասան Սոսրարան, Ագաթեմեր, Պլինիոս և Խոքոր։ Սոսրարան համարի զայն վեց հարիւր ասպարէզ 4. որ են քսան և երկու փարսախք գաղղիական, և հազար եօթներեարիւր ձողաչափք, համարեալ երկու հազար և հինգհարիւր ձող զիարսախն։ Ագաթեմեր համարի վեցհարիւր և երեսուն ասպարէզ 5, որ են քսաներեքք փարսախք, և երկու հազար երեսուն և հինգ ձողաչափք։ Պլինիոս համարի ութսուն և եօթն մղոն հռոմէական 6, որ են քսանվեց փարսախք, և երկերիւր եօթանասուն և երեկու ձողաչափք։ Իսկ Խոքոր 7 հարիւր մղոն հռոմէական, որ են ութհարիւր ասպարէզք, կամ երեսուն փարսախք գաղղիականք և վեցհարիւր ձողաչափք։ Այս անհաւասարութիւն չափուց յաճախ է առ նախնիսն մատենագիրս։

## Ի Է. Զմոգանոյն Պաղեստինայ։ (էջ 466։)

Ըստ Կղեմայ ազգասանդրացւոյ, մատանիս այս բերեր զիսպ քնարի 8։ Զէ ինչ այս կարեւոր, այլ դու տես ինձ քանի զգու-

1 Տես ի Ի։ գլուխ գրոցս։
2 Դիոդ. գիրք Ե։ էջ 334։
3 Փիլոք. առ Պլատ. ի Թես. հատ. 1. էջ 6։
4 Սոսրար. գիրք ԺԴ. էջ 637։
5 Ագաթ. գիրք Ա. գլ. 5. առ աշխարհագիրս, հատ. 2. էջ 17։
6 Պլին. գիրք Ե. գլ. 81. էջ 286։
7 Խոքոր. առ Պլին. անդ։
8 Կղեմ. ազգասանդրացի. գաստակ։

շուրթեամբ պահէին հռոմայեցիք զնշխարս հին աւանդից։ Յաւուրս Պլինեայ գրոյ 'ի Հռոմ 'ի մեհենին միաբանութեան Եղեգնաբար, զոր իբր անն մատանւոյն Պողիկրատեայ 'ի տեսիլ ածէին. և էր այն փակեալ 'ի տուփ ոսկի, պարգև Օգոստեայ 1։ Սոզինոս կոչէ և սարգիսն զանն մատանւոյն Պողիկրատեայ 2. այլ ըստ վկայութեան այլոց մատենագրաց, մատնաւանգ ըստ Երոդոտեայ, թուի թէ էր այն զմուխտ 3։

1 Պլին. գիրք ԼԷ. հտ. 2. էջ 764։

2 Սոզին. գլ. 33. էջ 63։

3 Երոդոտ. գիրք Դ. գլ. 41։



| | | | |
|---|---|---|---|
| 13 | 2 | խաղս | խաղուց |
| 57 | 11 | զվՃիՃաս | զվՃիՃաս |
| 85 | 21 | Նոցա | Նորա |
| 116 | 12 | 'Ի հրապարկն | 'Ի հրապարարկն |
| 180 | 8 | սահմանէին | սահմանեին |
| 193 | 3 | Նմա | Նոցա |
| 236 | 16 | առաւելագոյ | առաւելագոյնք |
| 246 | 22 | Նորա | Նոցա |
| 255 | 22 | կազմեցան | կազմեցաւ |
| 273 | 24 | բսա | ընդ |
| 286 | 9 | Թեսէս | Թեսէոս |
| 308 | 8 | Թաթաւելագ | Թաթաւելագ |
| — | 16 | և զմարց | զմարց և |
| 339 | 2 | մեծարեր | մեծարեր |
| 341 | 8 | կիր առնուլ | 'Ի կիր առնուլ |
| — | 13 | ցիւ ազանցն | գիւցազանցն |
| 351 | 15 | Նախկին | Նախնին |
| 399 | 10 | մոյ Նկարչաց | մոյ 'Ի Նկարչաց |
| 405 | 3 | փոխ հարաւ | փոշ հարաւ |
| 406 | 8 | Հաիմ | Հայիմ |
| 408 | 14 | ցանկացողն արուեստից | ցանկացողն է արուեստից |
| 412 | 4 | Նիզակակցուցութիւն | Նիզակակցութիւն |
| 413 | 20 | Նկարբեալ | Նկարեալ |
| 439 | 19 | ուՄնեբոլդի | ուՄանեբոլդի |
| 442 | 22 | զցուցակ զոր | զցուցակ ախտաժեստաց զոր |
| 445 | 2 | և կա | և կամ |
| 450 | 11 | 'Ի զառվայր | 'Ի զառ 'Ի վայր |
| 452 | 20 | քառակուսիկ | քառակուսիք |
| 473 | 13 | գասոյ | գասոյց |
| 474 | 19 | յաւելուր | յաւելցոյր |
| 475 | 5 | խմաստասիրաց | յիմաստասիրաց |
| 476 | 15 | էասոյ | յէասոյ |
| — | 7 | կարծիքդ զի | կարծիքդ · զի |
| 484 | 20 | Որ զք | Որք |